




00047265



00047265

The Book of Histories

Relating the occurrences in Armenia and in
the province of Ararat, and partly in that of
Goulttha, commencing from the Haxian era 1054,
and ending with this Historical work, some
collections also of remains.

By the Reverend Arakiel of Tauris.

Printed at the press of Holy Etschmiatsin and
Saint Sarkis -

In the Patriarchship of His Holiness Jacob
Catholics of Holy Etschmiatsin -

And under the superintendance of the Rev.
Woskan of Irvan.

Amsterdam.



1st January (old style) Anno Domini 1669.
29 Sahanee, Haxian Era 1118.

Գ Ի Ր Վ
ՊԵՏՄՈՒԹԵԼՆՆՑ

Շարդրեալ

ՍԵՐԴԵՊԵՏԻՆ

ԱՌԱՔԵԼՈՅ ԴԱՎՐԵ

ՃԱՑԻՈՅ

Սակս դիպրճածոց հայաստանեայց՝ և
ևս դաւառին արարատոյ՝ և մասին գողթան
գաւառի, սկսեալ ՚ի թոճոյն հայոց. 1054. էն.
մինչև յաւարտ պատմագրութեա. այլ
՚ի յիշումն ածեալ մասնաւորա
բար. աստի և անտի:

47265

Տպագրեալնէր Տղարմնա՝ Սրբոյն Լ՝ Ընծոմնի.

և Սրբոյն Սարգսի չորավարի:

Ի հայրապետութե Տեառն Յակոբայ Կաթու.
դիկոսի Սրբոյ Էջմիածնի:

Եւ վերակայութի Տեառն Սոփանայ Երեւան
ցոց քանի սպասարի:




ՅԱՄՍԹԵԼՈՒՄՈՒՄ:

Իեր թոճոջ փրկչին 1669. էն. Յուն
վարի. 1:

Իսկ ըստ հայոց. 1118. էն.

Սահմի. 29:



Նախադրութիւն Մ. ռաջի կայ
Գրոցս Պատմութեան :

229



ՆԱՏՄՈՒԹԻՒՒՆ
անցից հարունածոց որք եկին իվե
րայ աշխարհիս հայոց 'ի յետին
ժամանակիս 'ի թագաւորէն շահաբառ
կոչեցելոյ և 'ի նորին ազգէն որք են
պարսիկք :


Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ
աթոռոյն յԵմիածնի . և նորին Սա
թուղիկոսացն :

Մ. յլև վաճառ աղաւաղելոյ կրօնիս
քրիստոնէութեան :

Ի նդ սոցին այլևս բանք Պատմու
թեան դիպունածոց քաղաքաց և գաւա
ռաց . որք պատահեցան 'ի թագաւո
րաց և յիշխանաց . և 'ի Սաթուղիկոսաց .
և յայլոց : գտցես աստ բաժանեալ
գլուխս գլուխս ըստ բերման ժամա
նակին :

4

Ընկ ըստ պահանջելոյ հարկին պատանօր եդաւ Թոճականն Վեր զհիմն • և ապա յարեալ 'ի նոյն զարմալու Թին որպէս զշինոճածս • ըստ օրինի պատմագրաց : Ի այց քանզի ազգս մեր յաւարառոճաց և 'ի գերջաց • և 'ի հարկապահանջողաց ցիրեցանք եղեն • և կաշկանդեալք, տառապեալք, և կապեալք յաղքատութե որպէս յերկաթս՝ ըստ ռազմոսին • հաղիւ ամ ոք զապրուստ իւրոցն կենաց հայթայթէ : վնորոյ ոչ գտաք զգիտող այնպիսի զի ընդ Պատմութեն • և զԹոճականն էր ծանօցեալ : Ի այց մէք յողով աշխատութի խոյզ արարեալ զորս կարացաք գտանել կարգեցաք ընդ Պատմութեանն զԹոճականն ևս : և զորս ոչ կարացաք առանց Թոճականի պատմեցաք : իսկ դու ընկալ զայս այսպէս առանց մեղադրելոյ • և յիշեա յաղօթս քո զաշխատոյս 'ի ամս :



Պատմութիւն յամանակաց Հայաստանի
 քեալ իւմեմն Վապեալ անունամբ Որ
 դասկերտն իւր ողորմեսցի :

Լ:



ՍԻՆՍ ՅՈՐՈՒՍ ԿՈՒՆ
 ցամազք, որք էին բրիստոնէականի Հաստատոյս

տոյս պաշտօնեայք: և զօրացան ազգքն որք էին մասմետականօք կրօնիւք: և ՚ի կողմանս պրկելեան Պարսիկք. և ՚ի կողմանս արևմտեան Սամանցիք. որք առին զհռչակուսեաց քաղաքն զկոստանդնուպօլիս յազգէն հոռոմոց. ջբ. Թոռնին հայոց:

Եւ յետ առնելոյ Սամանցւոցն զկոստանդնուպօլիս և ևս մեծացան, և զօրացան. և ձգեցաւ իշխանութի նց յարևելս կոյս՝ և էհաս մինչ ՚ի Թաւրէզ. քանզի Սամանցւոց փաշայք նստէին ՚ի Թաւրէզ՝ և յերևան՝ և ՚ի գանջայ՝ և ՚ի շամախի՝ և ՚ի դամուրղափուն. և մինչև ՚ի խուրափրինն ունէին ընդ իշխանութեն իւրեանց:

Եւ ևս զՍրացտուն աշխարհն լը ձեռամբ և հարկատու էին արարեալ:

Եւ ՚ի Ժամանակս յայս եր կլթղկս սրբոյ աթուոյն Եղիաթնի տէր Մարտեալ ՚ի նոյն գեղջէն Եղիաթնի: այր բարեւեր՝ և պահաջօղ՝ և պարկեշտ. և բարեձև յամ իրս. ՚ի գործս՝ և ՚ի բանս՝ և ՚ի հանդերձս որոյ վարեալ զկլթղկսութին ՚ի կեանս իւրոս ելաւ առ Տր:

Ետ սորա էկաց կլթղկս սբ Եղիաթնի տէր Դաւիթ. և սա ևս ՚ի նոյն գեղջէն Եղիաթնի առեալ պա զկլթղկսութին վարէր ըստ բերման Ժամանակին. և ըստ իւրում կարի. որ և յամս ինչ վարեաց: Ի այց մինչդեռ եր կենդանի, և յիշխանութե կլթղկսութե, ձեռնադրեաց ինքն միւս ևս կլթղկս որոյ անունն եր Սեբեխեթ. որ եր ՚ի գառնուոյ. ՚ի գեղջէն, որ ասի աղջոց վանք: զսա ձեռադրեալ այնու յուսով ուղ զի լիցի ինքեան օգնակախակ նա եղև խոջընդակն՝ և հակառակ նա. ուղ և զկնի պատմութեքն ցուցանեն:

Կաթուղիկոսաց :

Եւ յաւիթ կթղկան՝ որ զՍԵԼՔԻՍԵԹՅԱՆ ձեռնադրեց կթղկաւսն ասն ասեն երկուս պատճառս : Սմանք ասեն յաղագս օգնելոյ՝ և ընկերելոյ ինքեան օրհնեաց . քանզի հարկապահանջութի այլագգեաց ծանրացեալ էր ի վրքրիստոնէից՝ որք կեղեքէին զկեանսնս . որք և ՚ի կթղկսեն ևս պահանջէին ինչս յորովս . և նա զորս կարէր տայր . և զորս ոչ կարէր՝ հալածական լինէր . և թաքչիւր ՚ի պահանջողաց : և այսպէս հալածական և գաղտագողի կենօք կացեալ ՚ի Ժամանակս ինչ . որոյ ձանձրացեալ ՚ի տառապելի կենաց . որ հանապազ փախչիւր և թաքչիւր . մտախոհ եղև ՚ի սրտի իւրում առնել զոմն ինքեան ընկեր՝ զի լիցին միմեանց օգնական , և վշտակից . զի թերևս կարիցեն երկոքեանն ոմն յայս կողմն , և ոմն յայնկողմն շրջագայիլ և պատրաստել ինչս . առի բաւական լինելոյ կարեաց և պակասութե կթղկսարանին : (Սմանք ասեն թէ այսու պատճառաւ օրհնեաց յաւիթն զՍԵԼՔԻՍԵԹՅԱՆ կթղկս՝ զի լիցի օգնական ինքեան :

Իսկ այլք ասեն թէ ՍԵԼՔԻՍԵԹ կթղկան էր այր փայտամոլ և հեղուօղ նախագահ իշխանութե . յորոյ պատճառէ բաշխէր առատութիւնս ամենեցուն . և զամենեսեան առնէր ինքեան բարեկամ ըստ նմանութե ՍԵԼՔԻՍԵԹՅԱՆ մայ . ոպ զի օգնեօցեն ինքեան , և կամակիցք լինին լինիլ նմա ՚ի կթղկս . որ և ետ ինչս բազումս իշխանի տեղւոյն առի լինիլ կթղկս : Իսկ իշխանն յետ առնլոյ ընչիցն բռնադատեաց ըզ՝ Կաւիթ կթղկան հարկիւ զի օրհնեաց զՍԵԼՔԻՍԵԹՅԱՆ . իսկ յաւիթն անձարեղեալ թէ կաւիթն և թէ յոչկամայ . օրհնեաց զՍԵԼՔԻՍԵԹՅԱՆ կթղկս : Եւրդ՝ թէ այսպէս և թէ այնպէղեն երկու

Երկու կթղկաք միոյ աթոռոյ 'ի միում ժամա նակի :

Յաղագս գալտեան Սրապին վարդապետին 'ի սբ աթոռն Եջմիածին և լինելոյ կաթուղիկո՞ւ :



Ի :

ՄԵՊԵՏ ԵՂԵՆ ԵՐԿՈՒ
կթղկաք ույ ասացաւ , զի Թերևս Թե
Թևացուսցեն զպարտան . և ևս առաւ
ել բազմացուցին . զի մինչև ցարդ՝ մի էր կա
թուղիկոս՝ և մի էր մխաղ . իսկ այժմ եղեն եր
կու կթղկաք և երկու մխաղք : Եւրդ՝ եթէ
'ի ծախելոյն նց . և Թէ 'ի հարկապահանջու
Թէ ժամանակին . և Թէ յայլինչ պատճառէ ,
բազմացաւ , դիզացաւ պարտքն ձեռամբ նց
իվր սրբոյ աթոռոյն Եջմիածնի . և ասեն Թէ
մինչ 'ի յիսուն հզար դուռ ուշն է հաս պարտքն՝
և ոչ կարէին վճարել : Եւ յորժամ լինէր զի
գային տունօղք պարտուցն , և խնդրէին զիւ
րեանց տու՛եալ պարտան . նաև Թգրկան , և
իշխանական հարկահանքն պահանջէին զդիմն
սական հարկան . և կթղկաքն , զի ոչ ունէին գոյս
առի վճարելոյ , վս որոյ հասանալ 'ի հոսս
տեան և 'ի Թաքստեան կային . և ոչ կարէին 'ի
միում տեղու զկալ աւուրս՝ երկուս կամ երես .
և կամ լուսով տունջեան 'ի շինէս յայսմանէ
'ի միւս շէնն երթալ . այլ 'ի գիշերի երթային ,
և յոյժ ողորմելիք էին կեանք նց յայնմ ժամա
նակի . ույ և պատմեն տեսողքն : որոց անձն
լեալ 'ի նեղութէ վշտացն և 'ի ծանրութ
հարկացն : հանապազ 'ի տարակուծի կայի
զի Թերևս հնար լիցի փրկութե : Եւ 'ի բ
զում ժամանակս խորհելոյ՝ և մտայոյզ լինէր
յաղագս խորհրդոյս այսմիկ . երկուքն կթղկա
կամօ :

կամօք իւրեանց և ամ խորհրդակցաց իւրեանց առնէն եզրակացու թի խոկման իւրեանց այս պիտի իմն եղանակաւ . ուր զի գրեցեն նամակ մեծարանաց առ մեծ վրդապետն Արապիօն . որ էր առաջնորդ քաղաքին տիգրանակերտու՝ զի եկեալ վճարեցէ զպարտոն : Ալ էր գրեալ ՚ի նամակին՝ թէ ահա մեք մերովք կամօք իբացկամք ՚ի կթիկսու թէս . եթէ գաս և վճարես զպարտոն , քեզ լիցի աթոռն և կաթուղիկոսու թին :

Ալ էր վարդապետն Արապիօն տեղեալ ՚ի քաղաքէն ուրհայոյ . բարեպաշտ ծնողաց և յոյժ մեծատան զաւակ . որոյ զկնի մահու ծնողացն մնացին ինչք բազումք և ստացուածք յովք : Ի այցնա սիրեալ զկեանս սբս , և զվարս առաքինիս . հեռեցաւ սբ գրոց ընթերցման . և եմուտ յաշակերտու թի մեծ վրդապետն զուկասայ կեղեցւոյ՝ որ էր գլուխ ամ վրդապետց ժամանակին : Ալ կացեալ յաշակերտու թի նր եղև այր կատարեալ ամ իմաստու թէ և ամծաշունչ գրովք . զորոյ արժաւորութիւն տեսնելով զուկաս վրդապետին և ժողովրդոց վրայեցին առաջնորդ կասու վրդապետին . վն որոյ ետ նմա գաւազան վարդապետն ՚ի յամիթ քաղաքի . ՚ի մերում թուականիս , հազարերեսուն և հնգին . ՚ի փետրվարի ամսոյ քսանին : Ար ՚ի քարոզել բանին կենաց աղբիւրաբար ուղղանէր զպատքեալ ոգիս ժողովրդոց : և ողովորդքն ամքն հաճեալք և հաւանեալք ցուցանեն զնա առաջնորդ քաղաքին իւրց : և նա ըստ բանի առաքելոյն զպաշտօնն իւր սուաւոր առնէր . քանզի ըստ հանդիսի երկնոցն էր ժամակարգութի նր՝ գեղեցիկ և աշաճաւոր կարգաւորութի . երգօք և

եղանակօք՝ գանձիւք և մեղեդիւք՝ թողորօք
 և ալելուիւք: Իսկ դաս և քարոզ՝ իբր շովո
 ռական գործ արարեալ ինքեան. հանապազօր
 թարց իմիք հեղգու թե ասեր զդասն և զքա
 ռոզն: Ի յլև ժողովալու թէ և պահօք ան
 ցուցանէր զկեանս իւր իբր զանապատուորս:
 Որոյ իմաստու թե և առաքինու թե համբաւե
 լեալ հռչակեցաւ ընդ թմտեղիս. վնորոյ դի
 մեալ գային առ նա յամ աշխարհաց ցանկա
 ցօղք իմաստու թե առի յուսումն սք գրոց.
 և նա իբրև զջուր աղբեր կենդանւոյ զգաս
 քու մն ամենեցուն զովացուցանէր: Բանգի
 կարգեաց զգասատուն գրոց աշակերտաց, և
 սուսուցանէր զամենեսեան որք մտանէին յա
 շակերտութի նորին: յորոյ աշակերտացն բա
 զու մք եղէն արք երևելիք և անուանիք:

Յորոց էր կեանքացի գրիգոր վարդապետն.
 այր գեանական նրբից և արտաքնոց. և յաղ
 թօզ ասոյեան ընդդէմ մաքաւողաց ճշմար
 տու թե եթէ մերասերից՝ և թէ այլոց ազդաց:

Իւ Բարսեղ վարդապետն մեծահոգի. որ
 զկնի Արապիոն վարդապետն նա առ առաջնորդ
 քաղաքին տիգրանակե շամ թայ:

Իւ Յօհաննէս վրդապետն Ուրհայեցի. որ եղև
 ուրհայոյ առաջնորդ: որ աստեղաբաշխու թե
 և ամ համարողական արհեստի էր քաջ հմուտ:

Իւ Թաթևաբեցի Բրիտակէս վարդապետն որ էր
 կատարեալ գիտօղ երաժշտական երգոց և
 եղանակաց:

Իւ Յօսէփ և Յօհաննէս վարդապետն
 հզուոյ:

Իւ միւս Յօհաննէս վարդապետն՝ ի քաջբեւ
 նւոյ՝ այսինքն յարձիշոյ:

Եւ Սժմաս կլթղկան ՚ի սիւնեաց աշխարհէն : որ երկ լուսաւորից արեւելեայ մասին աշխարհիս , և նորոգող նբոյ Եւջմիածնի . զորոյ զարդեանց զպատմութիւն առնելոցեմք յառաջեկայդ :

• Եւ զի ևս երկարեցից , էր նբ վարդապետն Սրապիօն երեւելի և փառաւոր յաջս ամենեցուն՝ ոչ միայն իմէջ մերոյ ազինս հայոց . այլև հռոմ մոց . և ասորւոց , և մահմետականաց . զի ոչ տկարանայր առ նա գործ , զորինչ և կամէր կենցաղական : Յաղագս որոյ գրեցին առ նա երկորին կլթղբն նամակ ողջունի և սիրոյ . և ասեն , ահաւասիկ մեք տկարացաք՝ և ոչ ևս կարեմք վճարել զբաղմութի պարտուցս յորս խորասուզեալ ընկղմեցաք . վնորոյ մեք մեզէն մերովք կամօք իբացկամք ՚ի կլթղկսութի և ՚ի տիրութի սրբոյ աթոռոյս . արդ . բեզ շնորհեալէ ամենայնն ույ և ետգ արժան՝ կլթղկսութիւն և աթոռն : Եւրդ՝ ինդրեմք ՚ի բէն միանփոյթ առնիցես գալ ՚ի փրկութի մեր . և մանաւանդ ՚ի վերականգնումն ծեր և հոգևոր ծնողին բոյ սրբ . աթոռոյս Եւջմիածնի :

Իսկ վարդապետն Սրապիօն իբրև լուսաւ զանունն նբ Եւջմիածնի յօժարեցաւ ՚ի գալ . ոչ թէ յաղագս կլթղկսութե և փառաց . քանզի նա փառաւորեալ էր յԵՅ և ՚ի մարդկանէ . այլ վն փրկութե լուսասփիւռ աթոռոյս : Եւ նզի ցաւեաց նմա իբր որդւոյ հարազատի իվր ծերացեալ ծնողի : վնորոյ ելեալ ՚ի տիգրանակերտու՝ և ճանապարհ արարեալ իվր Եւջմիածնի վանայ եկեաղ հասանէ ՚ի վերին աշխարհս հայոց ՚ի գիւղաբաղաքն Զուղայ . որ ել մեծ և երևելի ՚ի Ժամանակին յայնմիկ իմէջ արեւելեայ աշխարհիս : զի տակաւին ոչ էին

էին վարեալք յաշխարհն պարտից. եկեալ անդ
 'ի ջուղայ դադարի: և համբաւ գալստեանս
 նր հռչակեցաւ ընդ ամ տեղիս: Սոր վնճեալ
 կլթիկսացն երկոցունց առ ին զոմանս յիւրեանց
 խորհրդակցացն զմանուն էլ եպկպսն Սորվերա
 պայ. և զմիւս մանուն էլ եպկպսն հաւուց թա
 ուայ. և զամատուր եպկպսն գեղարդայ. և
 զոմանս 'ի մարմնաւոր աղգականաց իւրեանց
 եկեալ հասին 'ի գիւղն ջուղայ. յորում և
 վրդայտն Սրապիոն եկեալ կայր: Եւ յետան
 ցանելոյ աւուրց ինչ յառաջարկին բանս յա
 ղագս գործոյն որոյ սակս և բերեալ էին ըզ
 վարդայտն, և այն ինչ մինչդեռ 'ի խօսան կայ
 ին. և բանն իմէջ նց յառաջանայր. Թշնա
 մին արդարութե, և հակառակն ճշմարտութե
 բանսարկուն. որ հանապազ վեռեկտե զեկեղե
 ցիս Վն. յանկարծակի էարկ իմէջ նց զերկպա
 ուակութիս և զխաւովութիս: Քանզի արքն, որք
 կլթիկսեանք էին ոչ հաճեցան ընդ սուղ ինչ
 եպերական բանս վրդայտին. վնորոյ և արարին
 շփոթ և աղմուկ. որև հաւուց թառայ մանուն
 էլ եպկպսն իւրովի իսկ յոտին կացեալ 'ի հան
 դիսի անդ բարձրաձայնս զարեալ արեւել
 շփոթի էարկ իմէջ նց 'ի անգարեաց զարեւն
 և զլսելն. յորոյ անհետեթեթեաներգործեալ իրա
 կութեց վերայ խոթողեալ ամենեցուն՝ որք
 նստեինն՝ տաղտկացեալք իբաց լբան ամենե
 քեան. և իբրև զատելիս միմեանց երևեալք իւ
 րաբանչիւրոր ըստ կամաց անձին իւրոյ գնաց:

Ստոր յարուցեալ կլթիկսունքն, և արք
 իւրեանց գնացին 'ի գաւառն սիւնեաց
 վանքն տաթևու:

Իսկ վարդայտն Սրապիոն անդէն 'ի ջուղայ
 կացեալ աւուրս ինչ՝ իբրև զբարձրաբարբա
 ուի

աւետարանիչ նորոյ սիօնի հանապազօր ուսուցանէ՝ և լուսաւորէր զամենեսեան լուսասփիւռ վարդապետութիւն : Եւ որ հաճեալ և հաւանեալ ջուղայեցւոցն և ամ արեւելեայց ուրախացեալք զօրհնութի ՚ի բարձունս վերառաքելին :

Արոց առեալ զվարդապետն ածին ՚ի բարձրագահ ակթուն ՚ի սբ Եղիաժինն . և ժողովեալ զամ ժողովուրդ երկրին զեկեղեցականս և զաշխարհականս եղև սիւնհոդոս մեծ . և այնպիսի մեծախումբ հանդիսիւ ձեռնադրեցին զվարդապետն սրապիոն կթղկս ամենից հայոց . և յաջորդ սրբոյ ակթունյն Եղիաժինի : ՚ի թուականութե մերում հազար յիսուն և երկու յօգոստոսի ամսոյ տասնևչորս : Եւ յառուր ձեռնադրութե նր մակադրեցին զանուն նր Գրիգոր՝ ըստ կոչման սրբոյ լուսաւորչին . զի թերևս աղօթիւք նորին և սա ՚ի վերջինս արփիաւորեսցէ զհայազունս ոսկ և նա ՚ի նախկինն . որ յառուրս մեր կատարեցաւ այս խորհուրդ և մտածութի :

Յաղագս գալատեան Հասարակ Թգլին պարսից յաշխարհս հայոց , և ունեւոյ զամ . և վարդապետն Արապիոնի գառնայոյ անդրին ՚ի տեղե իւր :



Գ :

ՍԿ ԿԼԹՈՒՂ ԻԿՈՍԻՆ
երկորին Գաւիթ և Սեւքիսեթ և արքն որք ընդ նոսա , իբրև տեսին թէ ոչ եղև Թառանութի իմէջ ինքեանց և Արապիոն վարդապետին . և մանաւանդ փոխանակ միաբանութիւն խուովութի և սանկաւ : Եւ լեալք ՚ի ջուղայոյ գնացին ՚ի վանքն տաթևու . և անդէն զտեղե

զտեղի առեալ առուրս տասն, խորհեմն, խո
կային, երկնէին, զի գոնեայ Տնարիմն գոնանի
ցին՝ զի մի՛ ՚ի կթղկուութեն զրկիցին՝ ալ մնաս
ցէ կթղկուութին՝ ՚ի ձեռս իւրեանց՝ և այլ
իմն կերպիւ զերծցին՝ ՚ի ձեռաց պարտատուաց։
Խորհեցան խորհուրդ և ոչ տերամբ, ըստ գրե
ցելումն. ՚ի կորուստ անձանց իւրեանց. կոր
ծանումն և ՚ի տապալումն աշխարհին. և ՚ի
ջնջումն ազգին իւրեանց։ Քանզի սասմա
նեցին հաստատութիւն ՚ի միջի իւրեանց զի
գնասցեն ՚ի սպահան առ թագաւորն պար
սից։

Եւ սքստառ գնալոյ սոցա այս էր. զի
հաւաստեալ և սոյոգ գիտէին թէ շահն
պատրաստեալ է գալ ՚ի յաշխարհս հայոց։
քանզի յառաջ քան զսոսա՝ բազումք ոմանք
յաշխարհէս ատրպատականի իշխանք և կող
մակալք. մահմետականք՝ և քրիստոնէայք
գնացեալ էին առ թգւրն պարսից։ Ասանզի
յոյժ չարաչար նեղութիւն նեղէին զնս՝ ազգն
()սմանցոց ծանր հարկապահանջութիւն. և կե
ղեքմամբ զրկէին և կողոպտէին. և հաւատոց
կուռէձութի առնէին. և այլ քաղաքս տա
ռապանօք չարչարէին. ոչ միայն զազգս հայոց.
այլև զազգն վրաց՝ և զմահմետականաց։ և վն
այնր նեղութե գնացին առ թգւրն պարսից.
զի թերևս նովաւ զդիւրութիին ոչ գացեն
զերծեալք ՚ի ծառայութեն ()սմանցւոց։

Ազիխան անուն ոմն յազգէն քրդոց՝ որ
էր մեծ իշխան և կողմնակալ աշխարհին մա
րաց. նեղեալ յազգէն ()սմանցւոց՝ զի կամէին
սպանանել զնա ()սմանցիքն, և յինքեան
գրուել զիշխանութիւնն. առաքեաց զհաւա
տարիմն իւր որ խանաւդալ ասէին առ շահն
եկեալ.

եկեալ վերկեսցէ զինքն. և ինքն լնիցի՝ ի կողմն շահին:

Սոյն գէտ և միւս իշխան յազգէն մարաց. որում ասեին ուրամայ օղլի Տայբաթ բէկ. սա ոչ թէ զայլ առաքեաց՝ այլ ինքնին գնաց առ շահն:

Վա և թգլըքն վրաց ունեին կամք. զի պարսիկք ունեցին զաշխարհս, քանզի ոգւով չափ վշտացեալք էին յ()սմանցւոց. ոչ միայն վննեղութեցն ()սմանցւոց՝ այլ մանաւանդ վն ըմբռմանն մեծ Սիմոն խանին, թգլըքին իւրց. զոր ըմբռնեալ ()սմանցիք տարան՝ ի ստամբօր և անդ սպանին: այլև զթոռն սր ևս խաբով տարան՝ ի ստամբօր և զնա ևս սպանին: Մյլև թգլըքս վրաց յօլով պատանդք կային առ թգլըքն Վարսից. որ էր դուստր և որդի վերոյ ասացեալ Սիմոն խանին թիֆլիզու: Վա և որ դի Մղէքսանդր թգլըքին կախեթու. որում անուն էր Վոստանդին: Վա և եղբայր Մթաբէկ իշխանին սօմխեթու. որոյ անունն էր թիաճմազղուլի: Եւ այլք յօլովք կային յազգէն վրաց առ թգլըքն Վարսից:

Իսկ յաշխարհէն զուրանից և յազգէն Տայոց գնացին: Սարսնբէկն և իւր եղբայր Վազարն՝ ի յոսկանէն ստգեղջէ: ()ղլանքե շին և իւր եղբայր՝ Վալբէկին. ի Տաթերք գեղջէ: Սալաբէկն, իւր եղբօր որդւովքն ի խաչենոյ: Մեւիք սուջումն ի դեղահայ: Մեւիք փաշինն ի բօջիզ գեղջէ: Մեւիք բաբէն ի բրեախս գեղջէ: Մեւիքիսեթեպկպան ի վերին օղակամայ ի մեւիքղատայ գեղջէ: Մեւիք Տայկազն ի բշտաղս երկրէն ի խանս գեղջէ: Մյլև չորս գեղ ի դիզակայնն միաճաղոյն չուեցին, և գնացին յերկիրն Վար

Պարսից • և Շահն բնակեցոյց զնն 'ի քաղաքն
 ասպազան: Եւ է պատճառ դիպակեցոյց և
 դաշտեցւոց գնալոյն ծանր հարկապահանջու
 թին. կեղեքելն, և կողոպտելն, և կողուեճու
 թի առնելն. և անխնայ սպանանել լքերխտո
 նեայսն. և եղեալք էին ամբն յոյժ չքաւորք և
 պարտատեարք. մնացեալք էին անճարք. վնորոյ
 փախուցեալք գնացին յերկիրն պարսից: Օս
 նունանս արանցս զորս յիշեցաք ամբն էին արք
 նշանաւորք. սորա և առաւել քան զսոսա յո
 լովք գնացեալք էին առ շահն, զորս գիտէին
 կթղկաքն: այլև տեղեկացեալք էին թէ շահն
 հաւաստեաւ գալոյ է յաշխարհն հայոց. վն
 որոյ և նորա ևս կամեցան գնալ. թերևս դիւ
 բու թի և օգտու թի ինչ գտանիցեն նեղու թեց
 և պարտուց իւրեանց:

Յայնմ ժամանակի 'ի զրաւ ամխորհրոցոյ՝
 Դաւիթ կթղկան և խորվիրապայ մանուէլ
 եպկպոն մնացին յաշխարհս հայոց: Իսկ մէլ
 քիսէ թ կթղկան. և հաւուց թառայ մանուէլ
 եպկպոն. և գեղարդայ ամատուր եպկպոն
 երեալք 'ի տաթևու պատճառանօք իմն գնա
 ցին յաշխարհն պարսից: Երկրէ իբրև նորա
 ճողոպրեցան 'ի մասն բնակեցին պարսից.
 և անյապաղ փութացան զմեզ մինչև հասին
 'ի քաղաքն ասպազան՝ և երևեցան շահաբաս
 թագաւորին. և զեկուցին նմա զխորհուրդս
 իւրեանց: Իբրև զայն լուաւ շահն և ծա
 նեաւ. ցնծացաւ յոգի. բերկրեցաւ 'ի միտս.
 զուարթացաւ 'ի մարմին. զի մեծ եղև նմա
 ուրախութի յաւուր յայնմիկ քան զմամաւուրս
 կենաց իւրոց: Եւ ըստ խորամանկ բարոճ
 իւրոց շահաբասն սկսաւ մեծարել և պատո
 զնոսա. տրօք և պարգևօք երևելէօք:



Եւ օրն օրէ կօչեալ զնս առ ինքն խօսէր ընդ նս ըստ մտաց նց. և զսիրտս նց յինքն յանկուցանէր և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձեացուցանէր, և խոստանայր մեծաց բարեաց հասուցանել զնս: Եւ այնքան սնտի և պատիր խաբէութի կեղծաւորեալ զինքն նոցին մտերիմ ցուցանէր՝ մինչ զամ խորհուրդս սրակց նոցա յինքն գողացաւ, և զամ ոպխութի աշխարհացնց զել և զմուտ, և զաշխարհակալ արանց իմացաւ:

Եւ երբև գիտաց թէ ճշմարտիւ և սիրտք նց այնն է ոպ բերանով խօսին, ապա հրամանս ետ զօրավարաց իւրոց. պատրաստել զզօրսն առ ի գնալ, և իսկոյն վաղվաղակի կատարեցաւ հրամանն: Սաղայ այնուհետև ամ զօրօքն գալ՝ թաւրէզ իվր զօրացն () սմանցւոց, որք անդէն բնակեալք էին, և ունէին զթաւրէզ և զդաւառսս նր:

Եւ յորժամ շահն ել՝ ի սպահանայ գալ ՚ի թաւրէզ, զ՛ի վերոյ յանուանէ յիշեցեալ զարսն զամնն ընդ իւր է առ, և փութագնայ և օդապարիկ երիվորօք, ելեալ ՚ի սպահանայ վաղվաղակի ՚ի սալաւուրս հասին ՚ի թաւրէզ: Բնաւ ոչ գիտ զօրացն () սմանցւոց զգալն Վարսից՝ բաւրի ոչ թէ ՚ի բազում, այլ ՚ի սակաւ աւուրս է հաս ՚ի թաւրէզ:

Իսկ ՚ի հասանիլ շահաբասին ՚ի թաւրէզ՝ յաջողակ գտաւ գործն առաջի նր, վն զի տէրն թաւրիզու՝ որում անունն էր ալիփաշայ, զօրաժողով արարեալ արանց իբրև քսան հազարաց գնաց ՚ի գաւառն Սարմատայ՝ իվր նախկի յիշեցեալ քուրդ պարոնին զազիխա նի, վն զի յայտնի եղեալէր () սմանցւոցն զի նախանն բաժանեալէ ՚ի միաբանութենէ

(Սամանցւոցն՝ և միաբանեալէ ընդ Պարսից .
 և զՏաւատարիմն իւր զխան աւդալն առ զբեալ
 է առ շահն : վասն այսորիկ ժողովեցան զօրքն
 (Սամանցւոց՝ և գնացին՝ ի սալամաստ իվերայ
 դազի խանին : Իսկ դազի խանն , Նախ քան
 զՏասանիլ զօրացն (Սամանցւոց՝ ել ՚ի սալա
 մաստայ և գնաց յորմի գաւառ . և էմուտյան
 առիկ բերդն՝ որասի գօկարչին դալասի՝ որէ
 իմէջ ծովակին որմոյ՝ և անդ ամրացաւ :

Իսկ ալիպաշէն և զօրքն (Սամանցւոց ել
 կեալ ՚ի սալամաստ տեսին զի դազի խանն
 գնացեալէր յորմի . իսկ նք ոչ գնացին յորմի ,
 զի կամեցան Նախ երկիրն սալամաստու և
 զբերդն ընդ իւրեանց ի խանութն գրաւ
 ել . և ապագնալ յորմի իվր դազի խանին . և
 զիէր ամուր բերդ մի յերկրին սալամաստու՝
 որում ասեն դառնիեարուխ , և շուրջ զնովա
 յարդարեցին զպատերազմ , և մինչև ցերես
 ամիսս կացին անդէն զօրքն (Սամանցւոց . և
 պատերազմեալք ընդ բերդին ոչ կարացին
 առնուլ :

Յաւուրս յայսոսիկ յորս (Սամանցիք իվր
 դառնիեարուխ բերդ պատերազմեին , եկն
 շահն և էհաս ՚ի թաւ . և թող զքաղաքն՝
 և անցեալ եկն ընդ դէմ զօրացն (Սամանցւոց :
 Իսկ (Սամանցիք եբրև զգացին զգալն պարսից՝
 և իմացան ստուգիւ թէ շահն ինքն է՝ քանզի
 յառաջ Տամարեցան թէ զօրապետ ոմն իցէ) :
 իսկոյն թողեալ զպատերազմն բերդին , դար
 ձան և եկին մերձի գիւղն սօփիան . և անդէն
 ՚ի դաշտին սօփիանու խմբեցան ՚ի պատերազմ
 յանդուգն բախմամբ : Եւ ՚ի նմին պատե
 րազմի երևելի քաջութիս գործեաց ուլախայ
 օղլի Տայբաթբէկն , զի զքոսն գլուխ էր զ
 առաջի

առաջի շաճին յայնմ պատերազմի . և իբրև զգիշախանձ և անյագուրդ գազան յաւել ևս մտանել 'ի պատերազմ . և վասն առաւել արշաւ անախն խոնջեալ երիվարին լքաւ . և զօրացն Ս) ամանցւոց պատեալ շուրջ զնովաւ ըմբօս փակ արարին զնա իմէջ իւրեանց ' և անդէն հարեալ սպանին զՏայբաթբէկն : Իւ զայն տեսեալ զօրացն Պարսից երկիւղակիր լեալ զանգիտէին , որով սուղինց և պարտեալ երև իւրկողմն պարսից : Իւ իսկոյն կոչեալ շաճն առաջի իւր զմեծ խանն զը լՖիդար ' և քաջա լերեալ արիացոյց զնա ' և հրաւ իրեաց ' ի պատերազմն . իսկ նա ' ի քաջալերանաց շաճին զօրացեալ էմուտ ' ի հանդէսն իմէջ պատերազմին . և հարեալ խորտակեաց զօրեղ զօրութի զզօրսն Ս) ամանցւոց : Իւ զայն տեսեալ զօրացն Պարսից առհասարակ յիմ կողմանց դեմեալ իվր հարեալ ' ի սուր սուսերի ջնեալ ջնջեալ առհասարակ զիման տապաստ դալ տացն արկանէին , և մնացեալ քն փախստեամբ կորնչեին :

Իսկ արիփաշէն իբրև էտես զպարտութի իւրոյ կողմանն , և զքան յութ ստուգիւ շաճն ինքնէ , էառ ընդ զօրդին իւր ' և եկեալ անկաւ յոտան շաճին , և աղաչէր վն ազատութե : Իսկ շաճն սիրով և գթով ընկալաւ զնա ' և մեծաւ պատուով պահէր առ ինքն , և ընդ իւր տարաւ ' ի սպահան :

Իւ յետ վանելոյ պատերազմին եկն շաճն ' և էմուտ ' ի թաւրէղ . և կալեալ տիրեաց քաղաքին և իմ գաւառացն : և զբերդն որ էր իմէջ քաղաքին քարայատակ արարեալ քակեաց ' ի հիմանց . կացեալ անդէն աւուրս ինց արև . իմ երկիրն նուաճեաց ընդ ձեռամբ ,

կարգեաց իշխանս և գործակալս յամ սաս մանս նր :

Իսկ մնացեալ զօրքն (Սամանցւոց որք 'ի քաղաքէն Թաւրիզու փախեան : և որք 'ի պատերազմէն զերծան, գնացեալ ժողովեցան 'ի քաղաքն նախչունան : և ընդ զօրացն նախչունան խորհեցան զխորհուրդ, թէ թգւրն պարսից վս այսմ աշխարհիս եկեալ է, և զհարդ և իցէ վերջն այն է, որ նա առնչոց է զաշխարհս զայս 'ի ձեռաց մերոց : Մորդ նախ քան զգալն նր մեք կողոպտեալ և աւարեալ յափշտակեսցուք 'ի գեղորէից գաւառիս որքան կարեմք և առեալ գնացուք : Եւ այս խորհուրդ յայտնեցաւ գեղականաց գաւառացն, և մնաւանդ ջուղայու . զի յաւէտ վասն ջուղայու էր խորհուրդն այն, վս որոյ ամբն ելեալք 'ի բնակութեց և 'ի շինամիջէ փախեան, և ելին 'ի լերինս՝ յայրս՝ և յամուր վայրս տեսանել զվերջն թէ ոպ լինելոց է :

Եւ լուրս այս հասեալ եղև առ շահն 'ի Թաւրիզ, յաղագս որոյ կարգեաց զօրավար զչրաղ սուլթանն՝ և բազում զօրօք առաքեաց 'ի պահպանութն գաւառականացն նախչունանու : և նա եկեալն սս 'ի ջուղայ : Եբրև զայն տեսին (Սամանցիքն խափանեցն 'ի խորհրդոց իւրեանց : Իայց թէպէտ ոչ առաւել այլ գորինչ կարացին (Սամանցիքն կողոպտել 'ի մերձակայ գեղորէիցն, կողոպտեալ աւարեցին՝ և ժողովեցան 'ի նախչունան :

Իսկ բնակիչքն նախչունանայ եթէ սպայս զօրք, և թէ ուամիկք՝ Եբրև լուճան զառումն Թաւրիզու՝ և զվանումն որ անդէն զօրացն, և զայն ևս զի հանդերձեալք են պարսիկքն գալ իվր ինքեանց, Եբրև զջուր լեալ յերկր

խանին ցնա, թէ զգուշութիւնս պատահեալ զքեզ
 զի մի Սամանցիք թփանքով հարցեն զքեզ:
 Արոց արարեալ պատասխանի ժպտելով և
 զՍամանցեօքն եպերանս ազնւով, թէ
 թփանք նց յաչս իմ պատահեցի: Այս յա
 ուրն երկրորդի առաքեաց պատգամս առ
 իշխանս քաղաքին նախչունառ, թէ մի ձգէք
 թփանք կամ նետ, զի ես սակաւ արամբք դամ
 առ ձեզ խօսիլ ընդ ձեզ բանս ինչ երաւամբ
 և դատաստանաւ: Այլ տուեալ ընդ իւր արս
 քան՝ ելեալ՝ ի բանակէն հետևոտս դնաց՝ ի
 քաղաքն, և հասեալ ի դուռն քաղաքին նրս
 առ անդէն, իբրև ժողովեցան առնա իմ
 իշխանք քաղաքին, յայնժամ զը լիզար խանն
 սկսաւ ասել իշխանացն Սամանցւոց: Արդ
 որոյ յուսոյ և կամ որոյ աւուր սպասկալեալ
 մնայք, զի ոչ թէ ես եմ եկեալ պատերազմիլ
 ընդ ձեզ, և կամ թէ նման ինձ խան մի, այլ
 ինքնակալ թիւր բազմօք զօրօք եկեալ զհայրե
 նի աշխարհն իւր խնդրէ: Այլ դուք որով զօ
 բութի կարէք ընդդեմակայիլ և պատերազ
 միլ ընդ նմա: Արդ բանս քփրեկամի ասեմ ձեզ,
 զի ինձ այսպէսն գող բարի թուի, և թէ
 ձեզևս բարի թուի՝ արդ ինչ ելէք դուք
 իմքն ձերովք ընտանեօք և ընչիւք խաղաղութի
 գնացէք, և մի յամուտեալ դիմադարձիք և
 պատերազմիք, զի մի գուցէ յաղթեալ պար
 տիցիք՝ և սնանկիցիք դուք՝ ի սպանումն, և ըն
 տանիք ձեր ի գերութի, և ինչք ձեր յաւար:

Յայնժամ հաւանեալ բանից նր իշխանքն
 և ազգն Սամանցւոց, խնդրեցին ի նմանէ առ
 ուրս ժամադրեալս՝ յորս ելանիցեն ի քաղա
 քէն, և խանն արար այնպէս: Այնուհետև
 սկսան իմազգն Սամանցւոց ելանել ի քաղա
 քէն

քէն Վախչոճանայ՝ և բանակ եղին՝ ի կողմն
 Ինչ քաղաքին՝ մինչ ամբն ժողովեցան անդ :
 Եւ մինչ ելանէին (Սամանցիքն՝ ի քաղաքէն ե-
 կին զօրակնք՝ ի զօրացն) զըլլաչի և կացին
 ՚ի դրան քաղաքին, միայն զԹֆանք եղեալ զէնն
 առնուին : (Սամանցւոց՝ և ոչ այլ ինչ, և բոց յայն
 մանէ զամ ինչս և զգէնս իւրց՝ առեալ) (Սաման-
 ցւոցն գնային : Եկին բաղումք արք. ՚ի զօրակա-
 նաց քաղաքին առ խանն զԼֆիղար, և ասացին.
 սք որք ելանեն՝ ՚ի գնալ՝ ոչ են բնիկ բնական՝ ՚ի
 քաղաքէ աստի՝ վս որոյ և գնան . իսկ մեք բնա-
 կան՝ ՚ի քաղաքէ ս եմք, և ոչ կամիմք գնալ աստի,
 մինչև ցարդ տէրութի և իշխանութի խոնդ-
 քարին էր նմա ծառայեաք՝ արդ որով հետև
 եղև տէրութի և իշխանութի շահաբասին՝
 կամիմք աստէն կալ և մնալ՝ և նմա ծառայել :
 Եւ առ այս բան յոյժ հաւանեցաւ խանն, սի-
 րով և գթով ընկալաւ զնոսա՝ և հրամայեաց
 այնպէս լինիլ, որք եկեալ զինուորացն վաղ
 վաղակի հասնին զ(Սամանցւոց ձևն յինքեանց-
 և հարթեցին զերկայն մօրուսն իւրեանց՝ և
 զգեցան զկերպս) զըլլաչի, և եղեն ուղ-
 զբազմաժամանակեայ) զըլլաչք : Եւ յի-
 հրամայեաց խանն՝ ելանել մուսեաիկ՝ և բար-
 ձրաձայն քարոզել ՚ի Եջ քաղաքին, թէ այ-
 սուհետև եղև տէրութի և իշխանութի և
 աշխարհակալութի շահին, ովոր սիրէ զշահն
 կացցէ աստ անհոգութի, և ովոր կամի գնալ
 գնացէ խաղաղութի զճանապարհս իւր : և
 կացին այսու աւանդութի մնացեալք արք. բա-
 ղաքին . մինչոր եկն շահն ինքն՝ ՚ի նախչոճան :
 Եւ ինքն շահն մինչ էր՝ ՚ի Թաւրէզ յոյժ
 շողափոյթ ճեպով յարդարեաց զամ որպի-
 սի թի կողմանցն այնոցիկ : և իսկոյն հրամայ-
 եաց

եաց սպայապետաց իւրոց զի չուարարեալ
գնացեն դէպ ուղիղ 'ի քաղաքն նախնուան :

Եւ 'ի գալն յորժամ հասն 'ի գիւղաքա
ղաքն Ղուղայ, ամ բնակիչքն Ղուղայու բա
զում, և զանազան, և պէսպէս յօրինութեամբ
պատրաստութիս հոգացեալ էլին ըստաջ շա
հն ու վայելէ թգւրի : Եւ խանք ' և ծերբ, և
երիտասարդք ' ի զարդ և ' ի զէնս ոսկէհուան
սխրատեսիլ հանդերձից ոչնազարդեալք ը
տաջ ընթանային : Եւ նորա բողբոջ դեռա
հաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ
և զազնիւ գինի մատուցանէին : Եւ ցեալ
մոմեղնօք և խնկօք և կնդրկօք քահանայք
և մարմնաւոր երգեցիկք առաջի ընթանալով
յարմարական ձայնիւ նուագէին : Եւ զճանա
պարհս անցից արքայի զարդարեցին, և յեղե
րէ գետոյն մինչև ցապարանս խօջայ խաչիկին
արկին փայանդազ առաթուր թգւրին, պա
տուական և վայելուչ կուռնչս, որոց վերայ է
անց թգւրն ' և գնաց ' ի տուն խօջայ խաչիկին :
Եւ ' ի տան անդր, խօջայ խաչիկին զոսկի սկու
տեղ լըցեալ ոսկեով եղեգլ ' ի ձեռն որդւոյ
իւրոյ մատոյց առաջի թգւրին նոյնպէս և ամ
մեծամեծքն Ղուղայու մատուցին զընծայս, ու
վայելէ թգւրի : և զաւուրս երեք էկաց անդ
շահն, և Ղուղայեցիք պատուեցին զնա հա
մարտամ կերակրօք և ծաղկէհամ գինեաւ :

Իսկ վիշապն անդ ընդային շահաբաս ' որ ' ի
սկզբանէ զբարս օձի ունիւր բնաւորեալ յին
քեան ընդդէմ քրիստոնէից, իբրև տեսանէր
զայնքան հարստութիւն ' և զբարեվայելու
թիւնն քրիստոնէից ' մախայր ' և զգայուէր ' ի
սրտի ' թէ զհարդ պատճառ և ժամ գտցէ ձեռն
գել ' նց : Ի այց առ ժամն ծածկեալ զթոյնն
առերեսս սրտահաճուկ ընէր :

Եւ յետ երկց աւուրց ելեալ 'ի ջուղայոյ գնաց 'ի նախշուհան. և մտեալ 'ի քաղաքն տիրէ նմա առանց պատերազմի. և բնաւին իսկ թարց աշխատանաց, և կացեալ անդէն աւուրս սակաւս կարգեաց իշխանս և դործակալս յամ սահմանսնր:

Եւ ինքն շահն յառաջելեալ ամ բանակաւն իւրով զեռալ խաղալ գնալ իվր քաղաքին երևանու: Եբրև է հաս յերևան: պատեալ պաշարեաց զբերդն շուրջանակի: և ամենևն առանց իմիք վտանկի և աշխատանաց նրս տեալ կայր իվր նր, քանզի զշրջակայ երկիրն ընդ իւրով իսկ հրամանաւն ունէր գրաւեալ որ էր շէն և լի ամբարեօք՝ ուստի լցեալ լինէր ամ պիտոյք բանակին պարսից, մարդկան և անասնոց, և այսպիսի հանդարտութի վտեղի առեալ կայր: Եր զի երբեմն խստա գոյնս պատսերազմէր, և էր զի թուլագոյնս. և էր երբեմն զի բանս խաղաղութե դաշանց և ուխտի՝ սուտ երդմամբ և պատիր բանիք ի ներքս 'ի բերդն առաքէր, զի զբերդն միայն նմա տայցեն, և ինքեանք առեալ զստացուածս իւրեանց խաղաղութի գնացեն յաշխարհն իւրեանց: Եւ այց իւրն Սամանցւոց ոչ առնուին յունկն զբանս շահին, այլ տակաւին տեէին յուսով՝ զի դուցէ ուստիք ժամանիցէ փրկութի նց:

Եւ յաւուրսս յայտոսիկ հրամայեաց շահն զորացն պարսից գնալ յերկիրն արարադու՝ և յամ շրջակայ գաւառս նորա, հանել յամ տեղեաց արս՝ որ ասի ուղաթ, եթէ 'ի քրիստոնէից իցէ, և եթէ 'ի մահմետականաց, ժողովել և բերել 'ի բանակն պարսից, զի զորսն պարսից մարտակից լիցին, զսիբայն բշել

Պաշարումն երևանայ

և այլ գործակցութիւն օգնական լինիլ զօրացն պարսից: Եւ 'ի ժամ պատերազմին յորժամ երեշտունէն և կամ զսիբայն 'ի վեր քշէն, զքրիստոնեայնս յառաջ խաղաղուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէն, որովք կոտորեալք լինէն ազգն հայոց յերկուց կողմանց յառաջուստ յ()սմանցւոց և յետ ուստ 'ի Պարսից:

Եւ յորժամ էառ շահն զԹաւրէզ և մինչ ինքն անդ էր, անտի առաքեաց զամիրգուհայ խանն 'ի գանջայ՝ զի կացեալ անդ զդէմ ունիցի ()սմանցի զօրացն, զի մի յանկարծակի եկեալ վտանկ ինչ հասուցանիցեն բանակին պարսից: Եւ նա գնացեալ 'ի գանջայ էկաց ամիսս երկուս 'ի բրև գետաց թէ տկարք են ()սմանցիքն և ոչ կարեն զայն առնել՝ յայնժամ զերկիրն գանձակայ՝ ուր և կարաց հասանիլ հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ: զորս կոտորեաց՝ և զորս աւարեալ գերեաց աղխուք և ընտանեօք և բերեալ էած յերևան 'ի լիութի և 'ի յղփութի բանակին պարսից:

Եւ և մինչ նստեալ էր շահն ի վեր երևանայ բերդին և պատերազմէր. յայնժամ ետ զերևանայ երկիրն ամիրգուհայ խանին և զնա կարգեաց խանս երկրին այնորի:

Եւ յորժամ եկն շահն յերևան՝ ամ բնակիչք երկրին եկին յերկրպագութի և յողջոյն թիւրին, և ընծայաբերք լինէն ըստ կարի իւրեանց: Որ և կլթիկան սրապիոնս եկեալ ընծայիւք երևեցաւ առաջի Թագաւորին, և 'ի հարցանելն շահն թէ ովոր է, և ուտի է, պատասխանեալ եղև թէ կլթիկս է հայոց՝ և է յերկրէն համթայ: Իսկ շահն անտես արար զնա՝ և ոչ խօսեցաւ ընդ նմա:

ԳԼ

զի ոչ ընկալաւ զնա, զի կամէր զմեւքիսէ թն կարգել կթղկս զոր ընդ իւր ունէր : Իսկ սրա պիտն եբրև էտես թէ ոչ ընկալաւ զինքն շահն, ելեալ յերևանայ գնաց 'ի ջուղայ՝ զի անտի գնացէ 'ի տեղի իւր :

Եւ յաւուրսն յայնոսիկ հանձարեղն 'ի խորհուրդս չարեաց շահաբասն, կոչեաց զդաւեթ կթղկսն, և զմեւքիսէ թ կթղկսն առաջի իւր՝ և ասաց : Սովորու թի է թ գւրց և կարգ, նա և յայտնի է ձեզ թէ ույ երկիրս յառաջն () սմանցւոց էր, և այժմ՝ մեր եղև, սոյնս և ամ ինչք և ստացունածքնց՝ որ անտեր մնացեալ է, պարտի լինիլ արքունական, այս ինքն միրիմալի : Եւրդ առ ձեզ գոն բազումք գանձք () սմանցւոց՝ զորդուք պարտք առեալ էք 'ի սոցունց, և պարտիք վճարել առանց իմիք պատճառի, քանզի պարտքն և վճար գանձուցդ 'ի գանձարանս արքունի պարտի լինիլ զև ստացունածք () սմանցւոց են : Ինչ գեր կիրնց կալաք, սոյնս և ամ ինչքնց միրիմալի պարտի լինիլ : Եւ յորժամ դուք վճարէք 'ի գանձարանս արքունի, ես տաց ձեզ զթուղթ ազատութե դիւատաւ և դատաստանաւ՝ թէ ես առ ի զամ գանձարանս զոր պարտէին դոքա, և միոք լիցի պահանջող 'ի սոցունց զի ինձ վճարեցին :

Եւ յս կթղկսքս վս պարտուցն փախեան և ապաւ ինեցան 'ի շահն, զի թերևս շահն զնոսս ազատեցէ 'ի պարտատեարցն : Եւրդ այժմ՝ շահն ինքն յառաջ ածեալ պահանջէ 'ի սոցունց զպարտան՝ արդ այսէ օգնութի շահին յոր ապա ինեցան նորա : Եւ կթղկսքն գիտացին զի ոչ խորժանին 'ի ձեռացնր, քանզի ծանեան զպահանջութի նր, թէ կամայ և թէ ոչ, վճարեցին :

ցին զամ պարտոն շահաբասին ուսմուքք և պարտէին: Եւ 'ի պատճառս այս յիշեալ եղև և սրապիոն կթղկսն, վնոյ ասաց շահն ընդ կթղկսն, ահա ես զոմն 'ի ծառայից իմոց այժմ անուսն առաքեմ զկնի այսմ կթղկսին, և դուք ևս պատրաստեցէք զոմն այր 'ի ձերմէ կողմանէ, զի ընդ իմոյ առաքեալ առնն երթեցեն՝ և հասցեննմա. և որքան անկ է նմա առեալ բերցեն: և 'ի պատճառս այս, կթղկսն զոմն 'ի պաշտօնէից իւրեանց ուղև որեցին ընդ թգլրահան ծառային զկնի սրապիոն կթղկսին: Եւ նոքա գնացեալ 'ի ջուղայ գտին զսրապիոն կթղկսն, ըբռնեցին զնա, և արարին 'ի կալանի, և պահանջէին 'ի նմանէ գանձս յոլովս: Իսկ նա թէպէտ ըստ կարին տայր, նոքա այնուոչ շատանային, այլ բարս տմարդիս և անագորոյնս յինքեանս բերեալ, ածեալ զսրապիոն արկին 'ի վտանկս չարչարանաց՝ հարուճածոց և գանից: Եւ զպատուելին զայն այր՝ արարեալ յոյժ անպատիւ, մինչև 'ի գուէհե և 'ի հրապարակի կախեալ յոտից բրածեծ առնէին զնա ուժգին աւուրս յոլովս: Իբրև ետես սրապիոն թէ ոչ ուստեքէ գոյ ակնկալութի փրօկութե, բաղում գանձս իւրեալ փոխ և ետնց, մինչև լցան աչքնց գանձիւք և կաշառօք ըստ նմանութե յուղայի՝ և ապա թողին զնա: Եւ նա զերծեալ 'ի նոցունց իբրև զգառն 'ի բերանոյ գոյրոց, հազիւ ուրեմն ձողոպրեալ 'ի ձեռացնց, էլեալ 'ի ջուղայոյ գնաց 'ի վանքաղաք, թախծեալ ոգւով, և տրտմեալ սրտիւ, անմխիթար սգով, և դառն Ֆեծեծանօք: և անտի 'ի քաղաքն ամիթ: Եւ էկեաց տարի մի, և յերկրորդ ումն տարւօջ վախճանի աստի մահուանբ՝ և յաւելու 'ի ՏԵՏ հանգստեամբ:

տեամբ : Եւ եղև վաղձան սորա 'ի մերում
Թուականիս, ոճե, ին. ապրիլի ամսոյ, Խգ.
և հանգուցին զնա 'ի տապանի անդէն յամիթ
քաղաքի : որոյ յիշատակն օրհնութիւնցն և
աղօթիւքնր Տրմեզ. ողորմեսցի, ամէն :

Իսկ շահն մինչ նստեալ ի վր բերդին երևա
նու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ
զաշխարհս, և գերելոյ զազգս հայոց . քան
զի առաքեաց զօրագլուխս բազում զօրօք 'ի
կողմն արզրումայ՝ որք գնացեալ աւերեցին
զերկիրն բասնու, և զխնուսայ՝ և զդաշտն ար
զրումայ՝ զայս ուրև կարացին հասանիլ, քան
դեալ՝ աւերեալ՝ այրեալ՝ և ապականեալ զեր
կիրն և զէնսն, և զինչս և զստացուածս կողոպ
տեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զման
կունս գերացուցեալ բերնն յերևան 'ի բա
նակն իւրեանց :

Սոյն և յերկիրն արձիշու առաքեաց զօրս՝
որք գնացեալ արարին ըստ վերոյ ասացելու մե
զաւար և զգերութի և զապականութի ազգին
հայոց 'ի Ժամանակս ձմերայնոյ :

Եւ յիստի մինչ նստեալ շահն
ի վր բերդին պատերազմէր, եկն ալահվեր
տի խանն 'ի շիրազայ յերևան առ շահն, յորոյ
զալստենէ բազում օգտութի եղև ազգին
Պարսից : և շահն առաքեաց զալահվերտի
խանն ի վր քաղաքին արծկէոյ, և պատճառ
առաքելոյ զսա յարծկէ այս է :

Յորժամ էր Թուականն հայոց ուխթ. մեծ
սիմնն խանն Թաղերն վրաց ապստամբեցաւ
յ () ամանցուոց տերութենէն, և կոտորեաց
զբիրդապան () ամանցիսն . որք կային յեր
կիրն վրաց : վսորոյ հրաման եղև 'ի սուլթան
մահմատ խօնդքարէն ի վր ջաֆարի աշային՝ որ
իշխա

Դպստամբելին Դրժկէոյ

Եղևանէր Թաւրիզու, Ժողովել զօրս բա
 զուան և գնալ Եվր սիմոնխանին: Աւ ըստ
 Տրամանաց Թգւրին գնաց ջաֆարփաշէն բա
 զում զօրօք Եվր սիմոնխանին: Եւ եղև զի ըմբռ
 նեալ եղև սիմոն խանն 'ի ձեռս ()սմանցւոյ,
 և ջաֆարփաշէն ետ զսիմոն խանն փաշայի միոյ
 որում անուանն էր մահմէտ փաշայ, տանել 'ի
 կոստանդնուպօլիս առ խոնդքարն. և Եբրև
 հասոյց այն մահմէտփաշէն զսիմոն խանն առ
 խոնդքարն, և խոնդքարն պարզեաց նմա
 խիլայ, զփաշայութին արզրումայ, և զվանայ
 փաշայութին ևս նմա արփալղ: և ըստ հրա
 մանաց Թգւրին եկեալ մահմէտ փաշէն յար
 զրում վարէր զփաշայութին: Իսկ քաղաքն
 վան և այլ շրջակայ դասաբէքն, ոչ հաճեցան
 յայս գործ, քանի ծանր Թոճեցաւ նոցա Թէ
 վանքաղաք եւրովք բերդորէ եւք այնքան նոճ
 աստացաւ որ լիցի արզրումայ արփալղ, վն որոյ
 և ոչ կամէին հնազանդել մահմէտ փաշային:
 Իսկ մահմէտ փաշայն ելեալ յարզրումայ եկն
 'ի վանքաղաք, և հաւանեցուցեալ զնոսա 'ի
 կամս իւր հնազանդեցոյց: և ելեալ անտի զի
 և զշրջակայ դասաբէքն հաւանեցուցէ, և
 շրջելով կարգաւ մինչև Էփսս յարժկէ: Իսկ
 Եղևանն արժկէոյ որում անուանն այլոճի մահ
 մէտ փաշայէր, ոչ կամեցաւ հնազանդել, այլ
 յորժամ լուաւ զգալն նր ժողովեալ զօրս բա
 զումն, և կերակուրս յոլովս, և մտեալ 'ի
 բերդն ամրացաւ, և ոչ հնազանդեցաւ զի
 բերդն ամուր էր: Իսկ եկող մահմէտ փաշայն
 պաշարեաց զբերդն և մարտեղեալ ընդ նմա
 հզօրեղապէս մարտնչէր: և միւս մահմէտ
 փաշէն որ էր Եմեջ բերդին, յաղագս զպատե
 ըազմն իբաց մերժելոյ յինքենէ խորհուղ

արարեալ ընդ համախոհս իւր . և առաքեաց զարս ոմանս յիւրոց հաւատարմաց՝ զի գաղտա գողի գնացիւք հասանին առ շահն . որ յայն աւուրսն շուրջ զբերդիւն երեւանայ նստեալ պատերազմիւր : Առ որ հասեալ արքն ասէնցնս՝ Թիւր յաւիտեան կեաց, մահմէտ փաշայն՝ որ կայ՝ ի բերդին արծկէոյ կամի շահխտեւան լինիլ և տալ զբերդն շահին . իսկ վանայ փաշէն ոչ կամի զայս . այլ եկեալ պատեալ է ըզբերդն, և կամի յինքն գրաւել : Վտորոյ առաքեաց զմեզ մահմէտ փաշէն առ տէրուԹի քո . ինդրէ ՚ի քէն . զի զզօրս առաքեսցես յօգնուԹի ինքեան . զի փրկի ինքն, և զերկիրն . և զբերդն տացէ զօրավարին քում :

Իսկ հանձարեղն՝ ի խորհուրդս չարեաց շահաբաս, հրամայեաց ալահվերտի խանին առնուլ զօրս բազումս և գնալ յայն գործ : և պատուիրեաց նմա . Թէ տացեն զբերդն և զերկիրն քեզ . բարւոջ է, տիրեսցես երկիրն և նստցիս ՚ի բերդին . ապա Թէ խաբէուԹի ինչ առնիցին ընդ քեզ . և դու զորինչ մնաս կարեցես առնել նոյ, արսացես : և յետոյ զերկիրն գերեցուցեալ դարձցիս այսրէն : Իսկ ալահվերտի խանն ելեալ յերեւանայ գնաց յարծկէ . և մահմատ փաշէն որ զբերդն պատեալ էր ի բերք լուաւ զգալ խանին . չուեալ անտի գնաց յերկիրն մշու : Իսկ խանն եկեալ յարծկէ սպասէր Թէ բերդի միջի եղեալ մահմատ փաշէն եկեալ առ ինքն զխոստմունսն կատարեսցէ : Իայց նա ոչ եկն առ խանն՝ և ոչ ետ զբերդն . այլ և պատրաստեցաւ ընդ խանին ՚ի պատերազմ և խանն երիշ արար իվերայ բերդին . և փաշէն զօրօք ելեալ ՚ի բերդէն փախստականս արաբին զօրս խանին՝ յառաջնումն ուճաղին .

Եւ յերկրորդ ում նուազին՝ յորժամ կամէին երչաունել ի վրբերդին, կացոյց խանն դարա նակալս՝ և սրտոն իրեաց դարանակալացն. Թէ դուք զօղեալ կացջիք՝ ՚ի դարանկայդր. և մեք գնացեալ կոռնիմք ընդ բերդին՝ և յեւանել բերդականացն մեք փախատական լինելով առաջի նց՝ հեռացուցանեմք՝ ՚ի բերդէն: Յայն ժամ դուք յարուցեալ յետուստ կողմանէ և մեք յառաջուստ իմէջ առեալ կոտորեսցուք զնս: Իբրև այսպէս արարին, իմէջ առեալ կոտորեցին զելեալ զօրսն՝ ՚ի բերդէն: և մնացեալ զօրքն որք իմէջ բերդին էին փակեցին զբերդըն և ոչ ետուն խանին:

Իբրև ետես խանն զամուր միտս բերդակա նացն Թէ ոչ տան զբերդն. դարձաւ ՚ի բերդէն՝ և յարձակեցաւ ի վր գաւառաց աշխարհին. և զամ երկիրն արծկէոյ հաւասար աւերեաց. և հրդեհ արկեալ այրեաց: և զամ արու արս կոտորեաց՝ և զինչս, և զստացունածս՝ զուստերս, և զդատերս և զկանայս յաւար և ՚ի գերու թի առեալ: Եւ ելեալ անտի եկն յարձէշ՝ և ՚ի բերկրի, և ՚ի վան. և յամ գաւառս նց արար այն պէս: Եւ ոսկ տէր և իշխան գաւառին՝ որ առանց ասի և կասկածատոյ շրջի ՚ի գաւառի իւրում, սոյնպէս և սա ջրջեր, և քանդէր, և աւերէր զաշխարհսն, յորս և հասանէր: և բազում աւուրս կացեալ ՚ի տեղինս. վասն զի ոչ զբէր, որ կարէր ըդ իմի հարկանել նմա: Եւ զորինչ կամեցաւ՝ և կարաց առնել՝ արար: և ժողովեալ զամ գերեալսն, և հօրանս անդէոց. և ջոկս ոչ խարաց. և երամակս ձիոց. Իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամնս վարեալ ածեալ բերեալ հասուցին յերևան ՚ի լիու թիւրման կին պարսից: Լ՛րդ՝ յայսպիսւոյ պատճառէ գնաց

ալաճվերտի խանն յարծկէ. որով գերեցան այս քան անձինք. քրիստոնէից. զորոց թիւն. Եգուստեն գով թող զսպանեալն :

Բայց զօրքն () ամանցւոց որք էին իմէջ բերդին երևանու. որոց գլուխ էր Սայխա փաշէն. և սուլէյման փաշէն որդի խտրփաշային. քաջու թէ զդէմ կալեալ արքային, և զօրացն Պարսից պատերազմեին: Այլ դիմակաց եղեն յամիսս ութն. և ինն երրորդում ամսեանն. անձար մնացեալ էտուն զբերդն: քանզի մտախոճ եղեալ () ամանցւոցն տեսանէին զի ոչ ուստեքէ գոյ նց ակնկալու թի օգնութե. ոչ 'ի քաղաքացն որք շուրջ զԵրեւանք են. և ոչ 'ի դրանէ թգւրին իւրց. քանզի դուռն թգւրին խառնակ էր: () ի սուլթան մահմէտ խոնդքարն մեռաւ 'ի նոյն ամի. և սորին որդին սուլթան ասմատն՝ զոր թգւր կարգեցին՝ էր տղայ Տասակաւ երկոտանից ամաց. թգւրն էր նոր, և այն ևս տղայ: Այլ և իշխանքն ոչ ունէին ընդ միմեանս զսէր և զմիաբանութի, և ընդ տան թգւրին զմտերմուի: այլ ապստամբք ջալալիք բարձրմբ և յովք էին յարմարեալք իմէջ աշխարհին՝ որք աւերէին զքաղաքս և զերկիրս թգւրին: և նորա այնու էին պատանդեալք՝ և ոչ կարէին օգնել զօրացն՝ որք յերևան: () այս ջալալոց անունն քն յիշեալեմք յարձըն կայդ իմէջ ճառին. որ վստովին գրեալեմք. և զորպիսութի ջալալոցս գիտացե՛՛ զայն ճառն ընթեռնելով: Այլ հանդերձ վերոյ ասացելովք պատճառօրդ. և այլևս յովովիցն եղութեց զոր կրեցին զօրքն () ամանցւոց. որք պաշարեալք կային իմէջ բերդին երևանու. ներեալ և անյոյս լեալք յօգնողաց և 'ի վերջոյ էտուն զբերդն զօրացն Պարսից: Այլ յորժամ էառ շահն զբերդն. հրամանս

ետ մունեդկաց քարոզել և հրատարակել է մէջ բանակին Պարսից և Սամանցւոց: Հրաման է 'ի մեծ արքայէն շահաբատայ. որոք սերէ զայս աշխարհս և զշահն. և կամիցի կալ 'ի հայրենիս եւր' սերով կացցէ. և 'ի շահէն պատիւս և ընդունելութի գտցէ ըստ արժանոյն. և որոք գնալ կամիցի յազգ. և 'ի ժողովուրդ եւր. խաղաղութի երթիցէ եւրովք ընչիւք և ստացունձա՞ծ ուլք: Եւ սայնտ փաշէն եղև շահի սեվան և խնդրեաց 'ի շահէն զիշխանութի և զվերակացութի նմամուղին. և ընկալաւ 'ի նմանէ զխնդրելին եւր. և գնաց 'ի խորասան 'ի սպասաւորութի նմամուղին: և սուլէ յման փաշէն խնդրեաց 'ի շահէն գնալ յազգ եւր. որև հրամայեաց շահն գնալ նմա: և նա ել 'ի գնալ և ընդ նմա հինգ հազար հեծեալ և բազում ևս ժողովուրդ: Իսկ դիւս նման զորքն Պարսից գունդս գունդս ընթացեալք զհետ նց գաղտագողի գնացիւք ժամանեալք բախէին իվր նց. զորս հարեալ սպանանէին. և զորս փախուցեալք ցրո՛ւէին և զինչս նց կողոպտեալ դառնային 'ի բանակն եւրց:

Ըրդ այս ամ որ գործեալ 'ի թգլրէն պարսից. և լուեալ ազգին Սամանցւոց և թգլրի նց որ 'ի կոստանդնուպոլիս: միաբանեցան և նորա՝ շարժեցան 'ի գործ արութե ելանել և զթշնամեաց 'ի դիմի հարկանել: որև կարգեցին զոմն գլուխ և սարդար անունամբ սինան փաշայ՝ զոր մակ անունամբ Ջղալօղլի կոչէին. որ գումարեաց զորս բազումս՝ որովք ելեալ 'ի կոստանդնուպոլիս դիմեալ գայր յաշխարհս արևելեան:

Ըլև յետ առման բերդին՝ հասկեաց շահն թէ որքան ժողովիք որք զարկականք են.

են և պանդուխտք և այնք ևս որք՝ ի գերութե
ազատեալք են. եթէ քրիստոնեայք իցեն.
եթէ մահմետականք. եթէ եբրայեցի: զորս
բերին խաներն. որք գնացին յասպատակութի
և յաւարատութի յիւրաքանչիւր գնացեալ
տեղին: եթէ ամիրգունա խանն որ էբեր ՚ի
գանջացու երկրէն: եթէ ալաշվերտի խանն որ
էբեր յարծկէոյ, և յարճիչոյ, ՚ի բերկրու, և ՚ի
վանայ: եթէ միւս խանքն, որք միւսանգամ բե
րին յարճու, ՚ի մանազկերտու, յալաշկերտու,
՚ի մակոճայ: եթէ միւս խանքն որք բերին ՚ի
կարսայ, ՚ի կաղզվանայ, ՚ի բասենու, յար
զրումայ, ՚ի խնուսայ: և զայլս զամենեսեան՝
որք յայլ ուստեքէ լեալքէն. զսոսա զամենե
սեան հրամայեաց զի խոյզարարեալ գտցեն յեր
կրին երևանու. զամնն վարեացեն յաշխարհն
Պարսից: որև փութով կատարեցաւ հրամանս
այս. զի որքան կային այնպիսի ժողովուրդք
զամնն վարեալք քչեցին յաշխարհն Պարսից:

Եւ յորժամ շահն էառ զթաւրէզ և մինչ
անդ ՚ի թաւրէզ էր. հրաման արար զանդ
եղեալ զարիպական քչէլ յաշխարհն Պար
սից. և արարին այլպէս:

Եւ յորժամ ել ՚ի թաւրիզու եկեալ էանց
ընդ նախչոճան և եկն յերևան. լոճան զարի
պականքն նախչոճանու թէ շահն զզարիպա
կանն թաւրիզու քչեալ տարաւ ՚ի Պարսից աշ
խարհն: Եւ ևմն գործ զայն ինքեանց համա
րեցան. ոմնք ՚ի նոցանէ եկին յերևան և ծա
նուցին շահն թէ մեք ևս շահեստ վան էմք և
կամիմք գնալ յաշխարհն Պարսից: Եւ շահն
վարս հաճելոյ զմիտս նց և զնոցին նման ան
մոյս պատրելոյ. հրամայեաց զխլղաթ տալ և
ետուն զՏինգ խլղաթ. և կարգեաց իվրնց վա

բիչս՝ որք տարան զնն ևս յաշխարհն Պարսիցս :
 Եւ այս ամբողջալէ իմէջ երկուց ամաց . վա՛ր
 զի գալն սրապիտոն կլթիկսին յԱջմիածին և լի
 նելոյ կլթիկս . և ՚ի նոյն ամի գալն շահին և
 ունելոյ զթաւրէզ՝ և զնախչօ՛ւան՝ և զերեւան .
 և դառնալոյ սրապիտոնին ՚ի տեղի իւր . և այլք
 բանք՝ զորս յայսմ ճառի պատմեցաք . իմէջ
 երկուց ամաց եղեալէ . որ էր թուականն մեր .
 ԽԾԲ , և . ԽԾԴ :

Յաղագս առաջին գալոյ Չ զալօղլւոյն . յորոյ պատճառէ բռնաց
 շահն զբոլոր բովանգակ զերկիրն արարադու . և զնօրին
 մերձակայ ոահմանակից երկիրն ընդ նմին :



Ե ԵՆՏ ԿԵՏԵՐԵԼՈՅ

այսց ամենից գործոց և իրակութեց՝ զորս
 արար շահն չնուէալ այնուհետեւ յերևա
 նայ ամբանակաւն իւրով յառաջ խաղաց գնալ
 իվր քաղաքին կարսայ առնուլ զայն ևս : Եւ
 իբրև էհաս՝ ի գաւառն շիրակ վանայ . և ընդ բա
 զում համբաւոյ գալոյ Չ զալօղլւոյն , անդ էն ե
 կին այլևս լրտեսք՝ և բերին զստոյգ համբաւ թի
 տհաւասին եկեալ Չ զալօղլին էմուտ ՚ի գաւ
 առն կարնոյ՝ որ է արզրում Վերել լուաւ շահն
 զայս համբաւ . դարձոյց զերեսս իւր՝ և եկն յե
 լրճանդակերտն հին . որ այժմ ստի աղջաղալայ :

Եւ զոր ՚ի վաղուց ժամանակաց ունէր ՚ի
 մտի զբռնէն ազգին քրիստոնէից՝ և զաւերելն
 աշխարհին հայոց՝ անդ յայտնեաց խորհրդակ
 ցաց իւրոց : Վանզի գիտէր ՚ի մեաս իւր թի ոչ
 կարէ պատերազմաւ զդէմ ունել սինանս փաշ
 ային՝ այսինքն Չ զալօղլի սարդարին : Վա՛ր որոյ
 հրամայեաց զամբանակիցս աշխարհին հայոց .
 եթէ քրիստոնէայ , եթէ հրէայ , եթէ հուս
 մետական բռնել յաշխարհն Պարսից : զի ե
 կեալ

կեալ (Սմանցւոցն անբնակ գտանիցեն զեր
կիրն՝ Եմարդկանէ : Աւ ոչ գտցի կերակուր և
ուճիկ և այլ ինչ պետոյքնց՝ և անասնոցնց՝ և
առի չգոյն Տարկաւորաց վտանկեացն զօրքն
(Սմանցւոց : Աւ և տարեալ ժողով իդքն լինի
ցիննմա անզերծանելի Տարկատուք՝ ծառայք .
և Տողագործք մինչև ցյաւ հոտեան : Աւ նամինչ
՝ Եվարանս խորհրդոց կայր . լուաւ Թէ ջղալ
օղ լին ել՝ Ե կարնոյ . յայնժամ կոչեաց առաջի
Էւր զմեծամեծս երկրին Տայոց՝ և զինքն կեղ
ծաւորաբար ցաւկից ցուցանելով ազգին Տայ
օց . ասէր ընդ մեծամեծս և ի աւագան Տայոց :
Լուաք Թէ եկեալէ ջղալօղ լին՝ և ահաւասիկ
գայ մտանէ յերկիրս ձեր անհուն զօրօք : Աւ և
՝ Եմերս կողմանէ անթիւքեն զօրք . և գետէք, զե
բազուժք գոն՝ Ե սոսա յերկոսին կողմանս յայսպի
սում ժամանակի արք գառնացօղք հոգւով
ելուզակք և աւազակք և սրիկայք . զորոց ոչ
գետեմք զովս և զուստին : Աւ ոչէ ոմանք՝ Ենո
ցունց անփոյթ արարեալ իցեն զկենաց Էւ
բեանց՝ և զհրամանաց Էլիսանաց . յանկարծակի
Եվ ի բախեալ հարկանիցեն զմասն ինչ երկրի՝ և
զժողովրդեան ձերոյ՝ կամ ստացունածոց՝
կամ ընտանեաց աւարուան արարեալ առեալ
Էբացձո ղոպրիցինս և լինիցի ժողովուրդն ձեր
՝ Ե կորուստ և ՝ Ե գերութի : II ասն որոյ ողոր
մեալ ձեզ՝ հնարիմ փրկել զձեզ այսու կեր
պիւ . զի գաւառականք՝ և բնակիչք երկրի
ձերոյ ելեալք՝ Ե տեղեաց Էրեանց սակաւ ինչ
յառաջ խաղացեալ գնասցեն աւուրց ինչ ճա
նապարհ . և մեք աստէն զդեմ կայեալ պա
տերազմիցիմք ընդ (Սմանցիսն : Աւ եթէ
մեկտայ Տր . յայնժամ դարձիք՝ Ե տեղես
ձեր և լինիցիք մեզ՝ Ե ժողովուրդք . և եթէ

նց տացէ ՏՐ. մեք զանց արարեալք գնամք, և դուք դառնայք 'ի տեղիս ձեր' և լինիք նց 'ի ժողովուրդք: (Օ այս իբրև ասաց շահն ընդ աւագանիսն Հայոց՝ որոց գլխաւորի անունն էր տէր յովանէս՝ որ պերճական մակողրու թէ անունն էն աղայ տէր տէր: և նորա ծանեան զդաւաճանեալ նենգութին, և ոչ հաճեցան 'ի բանս նր. այլ պատճառելով պատճառս, մատուցեալ առ նախարարս շահին ասացին: Մտ ժամանակս աշուն է. բանդի յետ տօնի սրբոյ խաչին էր յորժամք շեցին զերկիրն: ամբնակիչք երկրիս չունին զպատրաստութի ճանապարհի, գրաստ և այլ բեռնակիր. առի բառնալ զստացուն՝ ածս և զմանկունս. զի թէ պէտ ժիրքն և կարողքն հետիոտս գնայցեն. իսկ ծերքն և մատաղ մանկտիք ոչ կարեն գնալ:

II Են որոյ խնդրեմք յարքայէ այժմ' ներել մեզ՝ այլ զայդ հրաման յաջողելովն Մ. Մ' ի գարունն կատարեսցուք: զայս ասէին, զի թերևս անցցէ ժամն 'ի նոցանէ:

Իսկ աւերիչն աշխարհաց՝ և վատնիչն բրիստոնեայ ազանց՝ բնակարանս 'նեսարայ' թիւրն շահաբաս ոչ անսաց բանի Հայոց: Մ. Մ. կոչեաց զնախարարս իւր Թուաջի իւր. և կարգեաց 'ի նոցանէ վերակացուս՝ և վարիչս բնակչաց երկրին. իւրաքանչիւր՝ գաւառաց՝ իւրաքանչիւր իշխան իւրովք զօրօք վարող և բշող ժողովրդեանն: Եւ զամիրգունայ խանն՝ յատուկ քաղաքին երևանայ և երկրին արարատու, և նորին մերձակայ մասնաւորաց գաւառացն: Եւ հրամայեաց նց շահն. ոճր և կարացեն ձեռն արկել. արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցուն ամենեւնի չունկենդանի. եթէ բրիստոնեայ և թէ մասնատական

տական, զՏաւանօղան բանիւ . և զոչ Տաւանօղան և զստուռնգանօղան հրամանաց թգլրին սրով և մահոճամբ և գերութի :

Եւ զօրապետացն՝ յեա ընդունելոյ զայս պիսի զաշխարհակործան և զսաստիկ հրամանս ՚ի թգլրին : ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառան աշխարհին հայոց . իբրև հողմախառն հուր ընդ եղէգն ընթացեալ : Հաս ճեպ տագնապաւ վաղվաղակի զամբնս կիցս գաւառացն կորդեալք յիւրաքանչիւր բնակութեց . և արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց . իբրև զջոյլիրս բազմութե հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ բռնութի վարեալ՝ ածեալ հասուցին ՚ի գաւառն արարատու . և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէիծագ : Քանզի ՚ի ստորոտէ լեռանցն գառնոյ մինչ ՚ի յեզրն երասխայ մեծի գետոյն լայնութին էր բանակին . իսկ զերկայնութին դովիմբ կշռեաց դու՝ բայց ես սսեմ աւուր միոյ ճանապարհ . և յայլուր տեսի որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ : Եւ էր նոր փոխեալ թգլականն հայոց և մտեալ ՚ի ուճդ . յառաջնում անեանն հայոցն աւասար գի . որ քշեցին զեջկերն : Եւ Պարսիկ զօրքն որք գնացին ՚ի քշել զերկերն . ուստի և հանեալ զժողովրան քշեին , եթէ ՚ի գեղորեից և թէ ՚ի քաղաքաց , զամ շէնս զտուռնս և զբնակութիս . հուրք այրեալ անխնայաբար հրկեզ առնէին : Եւ զհամբարս խոտոյ և զյարդի՝ ցորենոյ և գարւոյ՝ և այլոց պիտոյից՝ զամայրեալ վատնէին : այսպէս աւերեալ թափուր արքայն զաշխարհն վս զօրացն () սմանցւոյ զի մի քնասցէ ինչ ուռձիկ նց , և վտանկեացին նք :

այլև ելեալ ժողովուրդքն զայն տեսեալ սրբ
տակառուրք լիցին, և մի դարձցին յետս:

Մարտառու զօրքն Պարսից որք կարգեցան վա
րիչք ժողովրդեանն. մինչ վարեալ զժողո
վուրդսն բերեալ հասուցին 'ի դաշտն Մ. Չ.
միաժնի. շահաբասն 'ի յաղջաղալէն էր: և
սարդարն Սամանցւոց ջղալօղլին եւրովք զօ
րօքն էհաս. 'ի կարս: Եւ շահաբասն գիտեր
զի ոչ կարէր գէմյանդիման պատերազմաւ
գիմակայիլ Սամանցւոցն. զանգիտեալ 'ի
բազմաթէնց դարձուցեալ զերեսս իւր չո՛ւ
եաց ամբանակաւն իւրով հետեւեալ զհեաբա
նակի ժողովրդեանն գէպ յերկիրն Պարսից:
նակ զօրք Սամանցւոց չո՛ւարարեալ հետեւե
ցան զկնի բանակին Պարսից: և եղէն երեք բա
նակք մեծամեծք և անհունք. առաջին բա
նակ ժողովրդեանն: երկրորդ բանակ Պար
սիցն: երրորդ, բանակ Սամանցւոցն: Եւ
այսպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ
չո՛ւէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանա
կէր 'ի հանգրո՛ւանս նոցա շահաբասն զօրօքն
Պարսից: և 'ի չո՛ւեղն նոցա բանակէր 'ի նոյն
տեղին ջղալօղլին զօրօքն Սամանցւոց, և
այսպէս զհեա միմեանց կրնկնակոխ գնայով
գնային, մինչև հասին ժողովուրդքն և Պար
սիկքն 'ի գեղն Ջուղայ, և Սամանցիքն հասին
'ի նախչո՛ւան: Եւ այնուհետև ոչ թողացու
ցին Պարսիկքն ժողովրդեանն զկայ առնուլ և
ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապաւ նե
ղէին զժողովրդն, զոմանս մահու հարո՛ւածով
գանելով, և զոմանց զունչս և զականջս հառա
նելով, և զոմանց գլուխն կտրեալ 'ի ձող ցցե
լով. ոպ զեղբայր կթղկսին առաքելոց որոմ
անուան էր յօհաննաւս, զտրաւ և զայլոյ ումեմն
զգլուխսն:

զգլուխան կտրեցին , և 'ի ճող ցցեցին յեզր
գետոյն երասխայ : զայսոսիկ և առաւել քան
դոտա խոշտանգանս կտտանաց ածէին իվր
ժողովրդեանն , 'ի յահ և յերկեղ ժողո
վրդեան և տեսողացն , զի փութանակի անց
ցեն զգետն : Օ այս ամ վտանկս ածէին իվր
ժողովրդեանն խորամանկ ազգն Պարսից յա
հ (Սամանցւոց , որք զկնի նց գային , վնդի
հայեին Պարսիկքն 'ի բանակ ժողովրդեանն
զի անթեւք էին , նոյնպ և յիւրեանց բանակն
հայեին զի յոյժք էին , և մինչ յանցանել այս
քան բազմութեա ընդ գետն , աւուրք բա
զումք իվր անցանեն : Նրկնչէին 'ի զօրացն
(Սամանցւոց թէ մի գուցէ յայկքան աւուրնս
յանկարծակի բաղխեալ իվր բանակին Պար
սից բեկումն ինչ և վնաս առնիցեն . և կամ զժո
ղովուրդն յափշտակեալ 'ի նոցանէ յետս դար
ձուցանիցեն . և չար առաջարկութե նց խա
փանումն լիցի : Ս որոյ տագնապու ստիպե
ին զժողովուրդն անցանել զգետն : և 'ի բազ
մութեն ոչ բաւէր նոցա նաւ կամ տուփ որով
անցցեն զգետն , թէ պէտ և յայլ տեղեաց այլևս
նաւս բերին , և այդէն ևս յոլով տուփ շինե
ցին սակայն բանակ ժողովրդեանն՝ և բա
նակն Պարսից յոլովք էին : և տակաւին ոչ
լինէր բաւական : Նա 'ի զօրացն Պարսից որք
վարիչք էին կարգեալք ժողովրդեանն , շրջ
ապատեալ զժողովրդեամբն պահէին՝ զի
միոք փախիցէ , այլ և փայտիւ գանեալ հա
րեալ՝ բեկեալ՝ մղեալ 'ի գետ անդր ըսուին :
և այսպէս վտանկ և վիշտն՝ սաստկանայր ի
վերայ ժողովրդեանն :

Իսկ զորս լին ժողովրդեանն հայեցեալ
յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև բզ
ժով

Ժով՝ որ խեղդէր, և յետուստ զսուրն Պար
ոնց որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ
գտանիւր: Որք առհասարակ աղեղորմ
ողբս, և յորդ արտասուս յաջաց Տեղեալ առ
նէին զերկրորդ երասխ: և ձայն լալեաց և հա
ռաչանաց, ճանաց, վայոց, կսկծանաց,
մորմորանաց, բնդ միմեանս խառնեալ գոչե
ցուցանէին ուժգին աղաղակաւ: Իսկ ողոր
մնութի և փրկութի ոչ ուստեքէ էր:

Իստանօր կարի հարկիւ պիտոյեղև մերում
Ժողովրդեանն հինն մովսէս՝ և նորին աշա
կերտն յետուստի փրկել զնորս իէլ՝ ի ձեռանէ
երկրորդիս փարաւօնի, և կամ դադարեցու
ցանել զուղիս յորդահոսան և լայնատարած
դետոյն մեծի. և ոչ եղև գտեալ, քանզի յոր
դութիք մեղաց մերոց փակեցին ընդ դէմ՝ մեր
զդուռն ողորմութե գթածին ԻՆՅ:

Եւ անողորմ զօրացն Պարսից վարեալ զԺո
ղովուրդն ընդհին՝ ի դետն, և նոքա իմէջ գե
տոյն ևս քանզևս բազմացուցանէին զձայն աղա
ղակացն և ողբոցն՝ ի վտանկէնս: և ոմանք՝ ի նոցա
նէ կալեալ զեզերսն աւուցն, և ոմանք զտիոցն,
և ոմանք զագիս ձիոց՝ և զեկանց, և զգօւնոց,
և ոմանք իւրովի լողեալք անցանէին: և որք
անհմուտք էին լողելոյ և սնորք, ծերք և պա
ռաւունք, տղայք և աղջիկնք, և մատաղ
մանկտիք լցեալք էին յերեսս ջրոյն. և գետն
առեալ տանէր զնոսա իբրև զխուի՝ ի Ժամա
նակս գարնանոյ. և գետատար մարդով ծած
կեալէր երես գետոյն, և թէ պէտ անցին, որք
անցինն, այլ բազումք այնք էին՝ որք Տեղձ
մամբ ջրոյն մեռան:

Եւ հեծեալք ոմանք՝ ի զօրացն Պարսից՝
որք ունէին զուժեղ ձիս, և ինքեանք արբ արիք
և կա

և կարող ք, շրջելով հմէջ քրիստոնէից տեսեալ
 նկատէին զուստերս և զդասերս քրիստոնէից,
 և որոց հաւանեալ սերտք իւրեանց, եթէ կա
 նանց, եթէ տղջկանց. և եթէ տղայոց: Ս ր
 զի խաբէին զտեսարան թէ տուր՝ զի վասնքոսն
 ցուցից ընդ գետն յայն կոյս, և իբրև անցու
 ցանէր, ոչ դնէր անդէն՝ ի գետնի, այլ առեալ
 երթայր յո և կամէր: Ս ւ այլ ք գողութեա
 ռեալ տանէին: և այլ ք յափշտակութե և սպա
 նութե առեալ՝ ի տեսարցն տանէին: և բազումք
 մարդիկ ք զտղայս. և տեսարք զհւանդս՝ ի
 ճանապարհին ընկեցիկ արարեալ և թողեալ
 գնային, վասն անհանդուրժելի և անըմբե
 րելի վտանկին որ ժամանեալէր ի վրձնոցա: Ս ւ
 միանգամայն ասեմ՝ զի թշուառութիք՝ և
 արհաւիրք անտանելիք հասին ի վրձնոցս մե
 րոյ, և ոչ բաւեմ թէ որով տարազու հիւսեցից
 ողբս դամբանականս և աշխարանաց ի վրձն բեկ
 ման հայկական սեռես՝ որք այսքան չարակրու
 թեց եղեն ընդունակք: Օ ի թէպէտ ըստ
 սարատի հնոյն ինչի լինէին վարեալք գերի
 ձեռամբ երկրորդիս Ռաբելացւոյ, այլ ոչ
 գոյր երեմիայ որ կիրատեր, և ոչ եղեկիէլ որ
 լուսաւորեր, և ոչ յեսու կամ զորաբարեւ ի որ
 զդարձն առաջնորդէր, այլ եղեալք իբրև
 զհօտս անհովիւս ցրուեալք և հալածեալք
 առաջի գայլոց պատառողաց և գիշատող գա
 զանաց, որք վարէին բռնութե: Ս ւ նոքա
 երթալով երթային, և լային. որք բարձեալ
 տանէին զսերմանս իւրեանց: Ռակ յաջորդ
 սորին, Ռջ եղև տեսանելի՝ զոր ասէ, գալով
 եկեացեն, և ցնծացեն, վն զի ոչ եկին և ոչ
 եղև ցնծութի, այլ անդէն մնացին ուր և տա
 րեալ արդելին այսինքն յաշխարհն Պարսից :
 Ս ւ

Եւ եղև զի Կոմիտասն էսնց զգեան, էանց ընդ նոսին խառն և բանակն Պարսից: և մինչ ցայս վայր ամիրգուհայ խանն էր քշող ժողովրդեանն, և յայնմ վայրի շահաբասն հրամայեաց նմա գնալ ընդ եւրում բանակին: և կարգեաց վարող ժողովրդեանն զխալիֆալու էլիազ սուլթանն, և հրամայեաց նմա փութով և ճեպով վարել զժողովուրդն և հեռացուցանել 'ի զօրացն (Սամանցւոց' և հասուցանել յերկիրն Պարսից: Եւ ինքն շահն Կոմիտասն Պարսից ընդ արքունի ճանապարհն, այս ինքն ընդ ջադահն ուղի անկեալ գնացին 'ի քաղաքն Թաւրէզ: Բայց զժողովուրդն ոչ ընդ նոյն արքունի ճանապարհն տարան 'ի Թաւրէզ վասն երկիւղին (Սամանցւոց' զի միգուցէ զինի ժամանեալ յալիշտակեցեն յինքեանց: Եւ հրամայեաց շահն էլիազ սուլթանին զի ընդ նեղ և նուրբ և ընդ դժուարին վայրս տարցէ՝ ընդ որ ոչ կարացեն գնալ բանակն (Սամանցւոց զինի նոցա: և նա չունեցուցեալ զժողովուրդն տարաւ ընդ ճանապարհս ձորոյն՝ որով գեան երասխ գնայ զգնացս իւր, ընդ դժուարին ել և էջս լեբանցն, և ձորոցն, և ընդ կածան տեղինս: և բազմօք տառապանօք և քարակրութիւնսն զդժուարին վայրս լեբանցն: և անցուցեալ զժողովուրդն զդժուարին վայրօքն, տարան յերկիրն, որասի Թարուսխալխալ, և ահար, և մուշկուն, և 'ի մերձակայ վայրս սօցա, և անդէն զետեղեցուցին զնոսա ամիսս ինչ վասն սաստկասառոյց և գառնաշունչ ցրտոյ ձմեռան՝ որոյ սակս ոչ կարէին գնալ:

Իսկ 'ի հասանիլ քաղցրաշունչ քարսնայոյ, զայլ ոմն իշխան կարգեցին վարիչս ժողովր

ղովրդեանն՝ որուժանունն էր արութուրաբէկ, որվերտին սկսաւ վարել զժողովուրդն մինչև տարեալ հասոյց՝ ի քաղաքն ասպահան : Եւ անդէն ոգք քաղաքացիք էին, ՚ի նմին քաղաքի զետեղեցուցեալ բնակեցուցին, և որք շինականք էին և գեղականք՝ ի շրջակայ գաւառան քաղաքին ասպահանու բնակեցուցին, ՚ի լնջան, և յալնջան, ՚ի գանդիման. և ՚ի ջղախօռ, ՚ի փարիայ, և ՚ի բուրվարի : Բնդէն բնակեցան, և մնացին մինչ և ցայսօր : քանզի արքն հինք, որք յաշխարհէն հայոց էին գնացեալ. և գիտէին զվայելչութի աշխարհին հայոց, նք մեռան անդէն. և որք անդ ծնան, և սնան, և վարժեցան. նոյն աշխարհին հաճեցան և ընդելացան, զի նովաւ վարժեցան. զն որոյ անդէն կացին, և մնացին մինչև ցայսօր :

Բյլ և յայսմ ժողովրդէնէս հայոց զոր տարան ՚ի ասպահան, հինգ հարիւր տուն բաժանեցին և տարան յերկիրն շիրազու, և անդ բնակեցուցին : քանզի ալաս վերտի խանն, որ էր տէր շիրազու՝ խնդրեաց ՚ի շահաբասէն շնորհել նմա մասն ինչ յազգէն հայոց վն բարեմտութե և հաւատարմութե ազգին հայոց, զի լիցին նմա ՚ի ժողովուրդ, և թգէրն շնորհեաց նմա զխնդիրն, և նա տարեալ բնակեցոյց ՚ի գաւառն շիրազու :

Ի արձեալ դարձցուք ՚ի սկիզբն պատմութեանս մերոյ. զի յորժամ հրամանաւ թգէտ ըին հանդերձեցաւ ամիրդունայ խանն բշել զերկիրն արարատու, առայբեաց զմասն ինչ ՚ի զօրացիւրոց ՚ի գաւառն գառնուոյ. զի զնն ևս չունեցուսցեն, աճցեն խառնեցեն ՚ի չուս ժողովրդեանն : Իսկ գնացեալ զօրքն նախ մտեալ ՚ի նոյն ինքն ՚ի գիւղն գառնի, և ոչ
ըստ

ըստ հրամանաց Թգւրին առնէին, այլ ուն զգե-
րեվարս և աւարառուս սկսան յափշտակել
զինչս և զզաւակս քրիստոնէից: և զայն տե-
սեալ բնակչաց գեղջն ճայն տունեալ մի մեանց՝
և արարեալ ամբոխ մեծ, սրով և բրով քա-
րիւ և փայտիւ հարեալ վերաւորեալ կառափ
նասեցին զնս՝ և ՚ի բաց վարեցին յինքեանց, և
կնքեանք անդէն կացին անհոգ կբբ ՚ի ժմնակս
մօրկայ, և ոչ փախեան յայլուրէք. և ոչ գնացին
առ խանն ծանուցանել զյափշտակութիւնց:
Իսկ հալածական զօրացն գնացեալ առ ամիր
գունայ խանն սկսան ամբաստանլինիլ զժողո
վրդէնէն՝ և մեծամեծ վնասս իվրնց յօդել:
որոյ սրամտեալ բարկութիւն մեծաւ, առեալ
ընդ իւր զօրս յոլովս եկն ՚ի գաւառն գառ-
նուոյ, և նախ զնոյն գառնուոյ գեղջ զարնս
ըմբռնեալ էարկ ՚ի խոշտանգանս չարչարա
նաց հարմամբ գանից, և համամբ յօդից. և
կակոյն չուէցուցեալ ետ ՚ի ձեռս զօրականաց
եւրոց տանիլ խառնել զնս՝ ՚ի չուս ժողովր
գոցն ՚ի մեծ բանակն: զօր և տարեալ խառնե-
ցին ՚ի չուս ժողովրդեանն, որք ընդ նոսին
գնացին յաշխարհն Պարսից:

Իւր անդէն ՚ի գառնի ազդեցին ամիրգու-
նայ խանին Թէ կան և այլգիւղք ՚ի գաւառիս
գառնուոյ. որք ամրացեալք են յամուր վայրս
լերանց երկրիս՝ յայրս և ՚ի ծերպս քարանձաւ-
աց: Իւր յանուճանէ յիչեցին զմանուճել եպս
կիզոն հաւուց Թառայ վանիցն, և զՄծատուր
եպսկիզոն գեղարդայ վանիցն, Թէ մտեալք են
յայսնիչ այրս և անդ ամրացեալք բաճղի սորա
երկողին եպսկիզոնս, յորժամ լուճան գբչէն
երկրին. հոգացին զպէտս կարեաց կարևոր
կրաց կերակրոց և ըմպելեաց, և առեալ զնրս
ոմանս

ովանս 'ի մերձաւորաց եւրեանց կարգաւորս
 և աշխարհականս : և նորումքք ելեալք գնա
 ցին 'ի ձորն գեղարդայ՝ և մտեալ յայրմի քա
 րանձաւացն դատարեցին : քանզի բազումք
 գոն 'ի ձորն գեղարդայ փորոճած ու այրք և
 ամրոցք 'ի հին ժամանակաց : Եւ լսելն զայս
 ամիրդուռնայ խանին առեալ զգորսն՝ որք ընդ
 եւրն էին՝ եկն 'ի ձորն գեղարդայ . և ինքն ե
 կեալ էկաց առաջի այրին յորում էին եպսկո
 սոսքն . և ձայնեալ 'ի բարձունս խօսէր ընդ նս
 խաղաղութք գալ 'ի հնազանդութի հրամա
 նաց թգւրին : Իսկ նորս բանս տգեղս անար
 գանաց , հայհոյանաց , և եպերանաց , 'ի բարձ
 անց անտի ձայնեալ ստէին խանին , այլ և զքար
 և զնետ , արձակեալ ձգեցին դէպ առ խանն :
 Իսկ խանն իբրև էտես թէ խաղաղութք ոչ
 գան 'ի հնազանդութի , յայնժամ հրամայ
 եաց իւրոց զօրացն՝ զորինչ կարեն առնել արաս
 ցեն : և 'ի զօրականաց խանին արք ոմանք քա
 բադնացք ելին 'ի գլուխ լերինն . յորում էր
 այրն . և ունելով զժայռս քարանցն իջին մինչ
 'ի կողմն ինչ գրան այրին հնարաւոր գնացիւք :
 և եկեալ ոմն 'ի քարադնաց տաճկացն էկաց 'ի
 դուռն այրին՝ յորում էր մանուէլ եպսկոպան ,
 և հայեցեալ 'ի ներքս էտես զեպսկոպան նստել ,
 և բառբառով տաճկաց նախ զողջոյն ետ
 եպսկոպին , իսկ եպսկոպան ոչ կարաց պատաս
 խանել ինչ՝ այլ ասիչեալ մնաց , և տաճիկն
 արեացեալ սրտով և գործով եմուտ 'ի յայրն ,
 և իսկոյն զվաղակաւորն՝ որ զվիջով իւրով ա
 ծեալ ունէր , արտաքարչեալ էհար՝ և սպան
 զեպսկոպան անդէն . և կտրեալ զգլուխն էարկ
 'ի վայր առաջի խանին : և ապա այլոց ևս զօր
 ացն Պարսից արեացեալ փութանակի ելին
 յայրն

յայրն, և զայլ ևս ընկերս եկակնացն կալեալ
 եջուղին 'ի վայր առաջի խանին, և սպանին՝
 զամանն անդէն: Եւ ապա 'ի նոյն ձորն մեծաւ
 յուզմամբ խոյզարկեալ որոնեցին՝ և զաման
 գաղթականսն որք 'ի խոռոջս և 'ի ծակս վի
 մացն թաքուցեալ քէ կն զաման գտին, զինչս նց
 աւար հարին, և զոմանս 'ի նոցանէ կոտորեցին.
 և զորս թողին կենդանի տարեալ խառնեցին
 'ի չուս բուն բանակի ժողովրդեանն:

Երբ աստանօր յայտնի իսկ երևեցաւ ար
 դար գատաստանն Մ. Ե՛ որ բաժանէ մինչև ցո
 ըռոռնն շնոյ՝ և ուղղոյ՝ և օդոյ իվի՞ երկուց
 այսց եկակնացս, որք գնացեալք՝ 'ի տղահասն բեր
 ին զաղգնսպարսեց՝ որք աւերեցին զաշխարհս
 հայոց, և ինքեանք ևս նոցին սրովն սատակե
 ցան, զի յորս յուսացան նորին եղեն ինքեանց
 սատակիչք: ըստ գրեցելունն յօրէնսն, որով
 և մեղանչէ որ, նովիմբ և տանջեսցի: Ոչինչ
 օգտեալք յունայն առաջարկութեց իւրց, և
 յամբարիշտ գործոց իւրեանց, այլ մնացին պար
 տական Մ. Ե՛ արդար գատաստանին, յաղագս
 աւերման աշխարհիս հայոց՝ և կործանման
 ազգիս, և կորստեան անմեղ անձանց. և այն
 քան անպարտ արեանց հեղմանց, և խաւար
 ման սրբոց եկեղեցեաց. և այլ աղգի աղգի
 չարաչար պատահմանց, և զկնի ամի ինքեանք
 ևս սատակեցան սրովն Սպարսից:

Յետ այսմ ամի ժողովեաց խանն զամ՝ զորս
 իւր՝ և գնաց իվի՞ այլոց ևս գաղթականաց 'ի
 նոյն գաւառին գառնուոյ. և զորս ոչ կարացին
 առնուլ՝ թողեալ իբացգնացին. և զորս կա
 րացին առնուլ ավարհարին, և սպանին՝ և վա
 րեալ տարան ընդ իւրեանս: Եւ զմաղով գնա
 ցին մինչև հասին 'ի մեծ ձորն՝ զորոյ անուռնն

քաղաքայ ասէն, և թէպէտ բազումք
 կային անդէն՝ ի ձորն այրք և ամրոցք յորում
 թաքուցեալք էին քրիստոնեայք, թողեալ
 զայլն զնմ դեմեցին ի վերայ անուանի այրին՝
 որում եախշխան այր ասէին, զի վն ամրու
 թէնորին բազումք էին անդ ժողովեալք արք
 և կանայք քրիստոնեայք, անձինք իբրև հա
 զարք: և զճանապարհս այրին զգուշութի
 պահէին քրիստոնեայքն: Իսկ զօրացն Պար
 սից թէպէտ բազում ժամս մարտ եդեալ
 կռուէին նետաձգութի և թփանքով. սա
 կայն ոչ ինչ կարացին ստնանել, քանզի յոյժ
 բարձր էր՝ ի ներքուստ կողմանէ: և ապա չա
 բահնար ազգն Պարսից հնարեցին զայլիմն
 հնարս, և բաժանեցին ՚ի զօրացն իւրեանց
 արս երկերեւրս, ելին ՚ի ձորէն, և գնացին ՚ի
 գլուխ քարափանն, վն զի և քարափունքն և վէմք
 ձորոյն էին ի վր միմեանց գօտի գօտի: Իւր կա
 պեալ զբազում պարանս ընդ իրեարս ի ջուցա
 նէին զմիմեանս. և այսպէս ի ջուցաներով զմի
 մեանս՝ ՚ի գօտի ՚ի գօտի, մինչև հասին ՚ի գլուխ
 գօտուոյն յորում էր այրն, և անդ բերեալ
 ագուցին չորս մարդոյ երկաթի զրահս՝ և արա
 ըն զնս երկաթապատս յոտից մինչև ցգլուխս,
 և իմէջս իւրաքանչիւրոցն կապեցին չորս և
 հինգ թիւր, ուն զի ՚ի բեկանել միոյն պատ
 րաստ լիցի միւսն, և եդին ՚ի ձեռսնց սուսերս
 մերկս, և կապեցին իմէջս իւրաքանչիւրոց նց
 երկու և երեք պարանս զի ՚ի հատանել միոյն
 կալցէ զնա միւսն: Իւր ապա յանբաւ բարձրու
 թէնէն ՚ի վայր կախեցին զնս՝ մինչև եկեալ
 հասին յայրն, և մտին իմէջ յայրին և դիմեալ
 ի վր արանց և կանանց մերկ սուսերօքն սկսան
 անխնայ կոտորել զնս՝ ուն զգայլս որ մտեալ ՚ի

մակաղատեղս խաչանց կոտորէ թարց անխայե
 լոյ: և ողորմելի քրիստոնէիցն տեսեալ զանո,
 զորմ սուրն Վարսից 'ի կոտորել զինքեանս .
 սկսան 'ի ձայն բարձր աչխարանաց գուժի, ա
 ղաղակի, կականաց, լալ և ողբալ և կոծել զկո
 թուստ անձոնց իւրեանց: և ամբոխեալ և աղ
 մկեալ իբրև զխռովեալ ծով յուզմամբք զմի
 մեամբք ելևելս առնէին, և 'ի կողմանէ 'ի կողմն
 դիմեալ զերժանիլ հնարէին, և տեղի փախս
 տեան ոչ գոյր: և արանցն, որք պահէին զձանա
 պարհս դրան այրին, լո՛ւեալ զաղաղակն, և գի
 տացեալ զեղեալն, թողեալ զպահպանութիւն,
 և առ գուժս ընտանեացն դիմեցին 'ի ներքս 'ի
 յայրն՝ առ ի փրկել զընտանիմն: Եւ յարտա
 քուստկուսէ Վարսիկքն իբրև տեսին զգնալ
 պահպանացն, ժողովեալք իմիասին մտին 'ի
 յայրն, և սկսան ստուակել զքրիստոնեայսն մար
 դախող խող սրովն, 'ի դրանէ այրին մինչև
 ցբուն իսկ ներսի անկիւնս այրին, իբրև զխո
 տահար զամնն ջարդեալ 'ի վայր թափեցին: վն
 զի զարուսն և զպառաւուռնսն և զոչհաճոյսն
 իւրեանց սպանին, և ծովացաւ յատակ այրին
 արեամբ քրիստոնէից՝ և ամբարինքն ներկե
 ցան: և զստնդիայ մանկուսն 'ի գրկաց մարցն
 խլէին և յայրէ անտի 'ի վայր ձգէին: Եւ ոմանք
 կանայք՝ և տղայք՝ և աղջկուկք՝ որք մնացին 'ի
 սպանմանէն, իբրև տեսին զինքեանս մատ
 նեալս 'ի ձեռս անիրաւ մարդաղէմ գազանաց՝
 որք վարեն զնս՝ 'ի գերութի և պէսպէս աղտե
 դութք ապականեն զսրբութիւնց: վն որոյ լու
 համարեալ զսրբութք մահն իւրեանց քանզա
 պրուստ սուղինք ժամնակեայ կենաց, այն ևս
 մեղօք և չարակրութք, բազումք՝ ի նոցանէ պա
 տիին զերեսս փակեղամբ և ձորձով իւրեանց
 և յան

և յանբաւ բարձրութիւնս՝ ի յայրէ անտի՝ ի վայր արկանէին զինքեանս, և մեռանէին: Եւ վնդի իմէջ ճորոյն էր մայրի անտառախիտ ծառոց: և ոմանք յայնց որք զինքեանս՝ ի վայր արկանէին յայրէ անտի՝ եկեալ պատահէին ծայրից ոստոց ծառոց և արգելանէին ի նս՝ ոմանց ևս ընդ փորն մտեալ ի քամակն երանէր ճուղն, և ոմանց ի սրիտն մտեալ ի թիկունս երանէր: Եւ ևս սյս պիտի տաժանելի և դառն մահունձաք վարեցան: Իսկ զմնացեալս՝ ի նոցանէ գերիարարեալ տարան, և զինչս և զստացունձս նց աւարեալ յափշտակեցին, և բաժանեցին յիւրեանս ի լիութի: և զօրացն Պարսից ելեալ անտի առեալ ընդ իւրեանս զամ գերիան եկին ի բուն բանակն Պարսից:

Եւ զայս ամ լսելով և գրելով մեր, ճմլին սիրոք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասունաց թորեալ ի ջուցանէն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեւս ժողովրդեանս մերոյ: և ոչ բաւեմք աստանօր՝ թէ որով օրինակաւ և կամ որով տարազուողքս առեալ աշխարհացուք ի վրէկման ազգին և աշխարհին մերոյ, յաղագս որոյ ել հրաման մահաբեր ի բերանոյ երկրորդ սաբիւռոսին և շունչ հրախառն յուրնկացնորին՝ և եկեր զեղևնափայտս լիբանանու, քանզի անմարդաբնակ արար միահաղոյն զամենայլի և զյուր թի աշխարհս հայոց: Եւ ն զի ի քչէլն զերկերս՝ ոչ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստուն, այլ զբազումս ակետալ ի սահմանացն նախնունու և անցեալ ընդ եղեգաձոր, առ եզերք գեղամայ, և լոռոյ, և զհամգաջիման գաւառն, զպարան, զբարախանէն, զշիրակունան, զգարիշատ, և մասնս

մասն ինչ՝ ի գեղորէիցն կարսայ, և զձորն կաղզ վանու բնաւին, և բովանդակ զերկիրն ալաջ կերտու, և զգեղորայսն մակունայ, և զերկիրն աղբակու, և զսալամաստու, և զխօյայ, և զոր մւոյ, և որինչ պանդուխտք և զարկականք մնացեալք էին ՚ի քաղաքն և ՚ի գեղորայսն թաւրիզու, զդաշտն արարադու բովանդակ, և զերեւան քաղաք, զերկիրն զրիբուլխայ, զճաղկնուց ձոր, զգառնու ձորն, զուրծաձորն : Եւ յառաջ քան զայս զգաւառն կարնոյ, և զբասենու, և զխնուսայ. և զմանազ կերտու, և զարծկէոյ, և զարձշոյ, և զբերկրու, և զվանայ, աւարով և գերու թէ բերեալք էին յերեւան, և ընդ սոսա քեցին և տարան :

Երդ՝ զայս ամ գաւառ քս՝ և որք ընդ սոքօք էին, հրամայեաց շահն, զորս քեցին և տարան յաշխարհն Վարսից, և արար աւերակ և անմարդաբնակ զվայելուց աշխարհս հայոց :

Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի զհող զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գեղորէիցն և զմեծասնատ աւանացն :

Եւ և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանառիկ և զամուր և զհաստահեղոյս վիմարդեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդորէիցն :

Եւ սառաւել զմեծափառ և զհռչակաւ որ վանորայսն, զտեղի և զհանգստարան սբց Մ. Մ.

Եւ զերկնանման և զբարձրաբերձ և զգբէ թաշէն կոփածու և հաստահեղոյս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս հայոց : յորում յօրինեալ զանազան և պէսպէս նկարս և տեսակս շուշանաց և կենդանակերպից, գեղեցիկ յօրինուած ովքանդակեալք՝ ի վիմապէս պէս

պէս հնարակերտուք: որոց ձեն և դեր շինուճա
ծոյն և սիւնքն և ախաւաղագէսք կամարացն
աղգի աղգի, և լուսանցոյցքն և գրուանքն, և ամ
ինչ խորհրդանկան:

Եւ և զբարեհամ և զականակիտ զմշտահո
սան աղբերակոմնս ջուրցն:

Եւ զկարկաջահոս ծիծաղախիտ յաւէտ
ընթաց յառաջ խաղաց վտակս ջուրցն, որ ՚ի
գլխոց ձիւնաբարդ ոպիտակափայլ բարձրա
բերձ լերանց առի ստորև հոսեալ իջանի ՚ի
դաշտանդր եզ շինութի նոցին մատակարարի:

Եւ և զբաղցրաշունչ և զառողջարար և
զկենդանապարգև զօդ և զհողմն սորին: և
զայլ ամ վայելչութիս սորա տեսանելով հեղ
ձամղձուկ եղեալ փղձկիմք՝ և հարեալ յար
տասուս որբամք և աշխարեմք՝ զի անապատե
ղև վայելուչ և բաղցր աշխարհս մեր: Եւ ազգ
և ժողովուրդ մեր խլեալք ՚ի տեղեաց և անջա
տեալք ՚ի հայրենի և ՚ի բնիկ ժառանգութեց,
և յօրհնեալ յերկրի, որ լի է նշխարօք սրբոց
ԻՅ, և ուղեեալ արեամբ սքց վկայից՝ և օրհ
նեալ քարոզութի սրբոց առաքելոց՝ եղին վտա
րանդեալք և տարամերժեալք յերկիր օտար
և յազգ այլատեր և այլալեզու, որ և թշնամիք
հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մար
մնոյ: որք և անդէն օրաւուր առ սակաւ սա
կաւ նուազին, ոմանք մահուճամբ և կորս
տեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութի, որք
դառնան յանօրէն օրէնս պղծոյս անապատի:

Եւ յաղագս երկնամման և ադինասարաս
եկեղեցեաց զինչ ասացից՝ որք ՚ի խաւարի մնա
ցեալ և ՚ի բնակչաց թափուր եղեալ մերկա
ցեալ ՚ի զարդուց՝ եղեալ հանգրուանք համ
բարուաց և ջայլամանց ը եսայեայ տեսանողի

որջք աղոճխուց և նապաստակաց, մակաղատեղք խաշանց և անդէոց, բոյնք թռչնոց և աւերաբնակ բուճաց: փոխանակ օրաւուրնորոգ ման, օր զհետաւուր խարխալեալ և քայքայեալ աւերեալ փլուզանի. փոխանակ բուրման խնկոց անուշից՝ լցեալ ժլբովք՝ լռեալք ձայնք փառաբանչաց, և կատարմունք տօնից տարեկանաց, և մատուցմունք փրկական պատարագաց:

Լ՛րդ՝ պիտոյէ մեզ աստանօր հինն երեմիաս, զհողբացէ զնորս իսրայէլ, վն՝ զի ըսաքերթողահօրն մովսէսի ողբերգակի, ոչ ևս դառնայ առ մեզ փեսայն, այլ անդարձ գնացիւք հեռացաւ ՚ի մէնջ: արդ՝ կարդասցուք զանուն ազգիս մերոյ վայքաբովթ քանզի բարձեալք են փառք յիսրայիլէ ըստ ՚ի հնումն ասացելում:

Կարձեալ դարձցուք յոճ՝ նախկնի պատմութե մերոյ, ՚ի բանն՝ զոր հասուցաք զՂալօղլին՝ ՚ի նախչունան, և զշահն տարաք ՚ի թաւրէզ: Լ՛րդ շահն գնաց ՚ի թաւրէզ՝ և անդ ձմերեաց զօրօքն. Պարսից, քանզի հեռացաւ ՚ի նմանէ ահն () սմանցւոց:

Իսկ Ղալօղլին՝ որ գայր զկնի բանակին Պարսից. յորժամ է հաս ՚ի նախչունան՝ լուաւ թէ շահն զտարեալ ժողովուրդան անցուցեալ ընդ գետն երասիս տարաւ յաշխարհն Պարսից: Իսկ զՂուղայեցիսն զամ՝ վարեալ և տարեալ է, և զչինոճածմն հրդեհեալ: և մեծազարմացմամբ հիացեալ ապուշ մնաց, թէ զի արդ վաղվաղակի՝ ի սուղինչ աւուրն զայդ քան մեծամեծ գործ կարացին կատարել Պարսիկք: 1) ս որոյ պատրաստեաց լրտեսս երկուս՝ և հրամայեաց նոցա գնալ մինչ ՚ի Ղուղայ տեսա նել և

նել և իմանալ զիսկն բանից՝ և բերել նմա զհամբաւ ճշմարիտ : Իսկ լրտեսացն գնացեալ տեսին զամբստ ասացելոյ բանին զրաւեալ, նա և շինուածքն ջուղայու հրդեհեալք, զի տակաւին ծխելն խանձողքն, և անտի դարձան առ ջղալողլին թէ ստոյգք են ամպացեալքն : և անդէն մտախոհ եղեալ ջղալողլին 'ի սրտի իւրում, ոչ գնալ ընդ ճանապարհն ջուղայու և անցանել ընդ գետն երասխ և մի տել զհետ Պարսից : Եւսն՝ զի կասկած կրեալ և երկուցեալ 'ի հնարիցն Պարսից, մի գուցէ դարձցին ընդ կրունկն և յանկարծակի բաղխեալ իմր (Սմանցւոց փակեցեն ընդդէմ երասխայ և ձորոցն՝ և կտորեցեն : Երկրորդ՝ զի զտարեալ ժողովուրդսն լայլ ճանապարհ ուղևորեցին, ընդ որ ոչ կարեն գնալ ծանր բանանկն (Սմանցւոց՝ թէ կամեցին : Երրորդ՝ զի նշանաւոր օր դարձինց՝ զոր դասում գունի ասեն՝ մերձեալէր : զայսոսիկ և որ սոցին նման խորհեալ ոչ գնաց յայնժամ 'ի թաւրէզ, այլ չունեալ 'ի նախընտանայ, և մերձ գեղջն աստապատու էանց զերասխն՝ և գնաց 'ի քաղաքն վան ամիւ բանակաւն իւրով և անդ ձմերեաց մինչ 'ի գարունն :

Յողագոքելոյ բաննպարթամ գիւղաքաղաքն ջուղայոց յերկին Պարսից :



Ե :

Ե Լ Բ Գ Զ Է Տ Ը Թ Ս Յ

ամենից զորս պատմեցաք՝ որ գործեցաւ 'ի շահաբաւ թգրէն լայնարհս և ընդ ազգս հայոց՝ զորս վարեաց յաշխարհն Պարսից :

Սամէ այսուհետ և պատմել մեզ վնմեծի և 7 4 անունանոյ

անուճանոյ գիւղաքաղաքին ջուղայոյ, զի զնախ
կի ամբարեալ դառնութիւն թոյնան և զչարակ
նութիւն որ վն ջուղայու քողաբորբեալ ունէր
'ի սրտի իւրում շահն, ասանցօր պատճառ
գտեալ արտայայտեալ երեւցոյց քզի բերեալ
յինքեան զխորհուրդն նախահաւոյն իւրոյ
սաբաւուոսի: Վնզի ուն պատմեցաք 'ի նախկին
ճառին՝ թէ կարգեաց շահն 'ի զօրացն Պարսից
չունեցուցանօղս ազգին Հայոց, և առաքեաց
յամբերկիրն Հայոց որք հանին և չունեցուցին,
սոյնպէս և արար ջուղայու:

Բանզի կոչեաց առաջի իւր զհանիս Թաճ
մազդուլիբէկն, որոյ վն յառաջագոյն պատ
մեցաք թէ եղբայր է աթաբէկին. և տունեալ
էր սա պատանդ յաղգէն վրաց, թգլրցն
Պարսից, որ առնոսին սնեալ ուրացաւ զհաւ
ատն: Եւ այժմ շահն կոչեաց զայս Թահմազ
դուլիս առաջի իւր, գրեաց նմօս հրամանի և
ետցնա, և հրամայեաց նմա գնալ 'ի ջուղայ
և միահաղոյն բշել զնս՝ և ոչ թողուլ 'ի նաբնա
կիջ՝ և ոչ զմի: Եւ Թահմազդուլին ելեալ յե
րեսաց արքայի, սրնն թաց արշաւամբ շեշտա
կի աճապարեալ 'ի ջուղայ, և կոչեալ զաւա
գանիսն մեծաւ ցարմամբ սպառնացաւ նց,
սարսուելի և տաժանելի մահունամբ կորուսա
նել զնոսա՝ թէ ոչ առժամայն և վաղվաղակի
զհրամանս թգլրին կատարեսցեն: այլ և զնո
մոս հրամանաց թգլրին հանեալ առաջի յամ
ժողովրդեանն ընթերցան, յորում գրեալ էր
թէ՝ հրաման է 'ի թգլրութենէս մերմէ ձեզ
ջուղայեցւոցդ ելանել 'ի տեղեաց ձերոց և
գնալ 'ի Պարսկաստան աշխարհ:

Եւ յետայնորիկ՝ հրամայեաց Թահմազդու
լիբէկն ելանել մունեղիկ՝ որ է ջառջի, և կան
էլ

չել իմէջ շինին ջուղայու յամ տեղիս: Տրաման
 է 'ի մեծ թագաւորէն շահաբասայ, ձեզ ամ
 բնակչացդ ջուղայոյ ելանել 'ի բնակութենէ
 ձերմէ և գնալ յաշխրասն Պարսից: Երդ
 մինչև ցերիս աւուրս ձեզ ներու մն լիցի որ ելա
 նէք, և ովոք յետ երից աւուրցն աստ գտցի,
 զինքն սպանանեն և զընտանիս և զինչո նորա գե
 ընն, այլև թէ ոք փախիցի կամ թաքիցի,
 որոք զայնպիսին ցուցանիցէ, ասպրանքնք՝ ցու
 ցողին լիցի և գլուխն թգւրին: Եւ զայս Տրա
 ման միշտ Տրատարակեալ գոչէր մուշեղիկն,
 և ահացուցանէր զամնն, և յահէ սպառնա
 լեաց մահունն ոչինչ գանդաղեցին ջուղայե
 ցիքն՝ այլ առժամայն կատարեցաւ առ նն Տրա
 ման թգւրին և սլատրաստեցան յելանել:
 Եայց վն փութով և յանկարծակի ելանելոյն
 ոչ գտանէին զգրաստ և բեռնակիրանասուն,
 յոյժ վտանկեին ժողովուրդքն, զի ինչք և
 ստացունաճքնց ցրոճեալ և անկեալ կայր առա
 ջի իւրեանց. և ոչ կարէին բառնալ 'ի տանել
 առ ի չգոյէ գրաստուց: և զորինչ կարացին
 բառնալ բարձցին, և զորոչ կարացին բառ
 նալ՝ իւրաքսնչիւրոք պահուստ և թաքուստ
 արարեալ թաղեցին: Եայց ընչից նց յով վն
 'ի կորուստ և յափշտակութի գնաց, քանզի
 ոչ միայն այն զօրքն՝ որ ընդ թահմազղու լիբէ
 կին էին եկեալ՝ նոքա միայն հարկէին զժողո
 վուրդն վն փութով ելանելոյ, այլև բազումք
 'ի մահմետականացն որք 'ի շրջակայ գեղո
 ընկցն գային, և որք 'ի զծրացն Պարսից՝ որք 'ի
 բուն բախակէն իւրեանց յառաջեալ գային և
 խառնեալ լինեին ընդ զօրացն թահմազղու
 լիբէկին, և օրաւուր յաւելանային Պարսիկքն
 իմէջ ջուղայու: և գումարեալ մահմետակա
 նացն

նացն 'ի միասին, էր որ, տամն. էր որ, քսան. էր որ
երեսուն մտանէին 'ի տունս քրիստոնէիցն. զնա
ստիպէին ելանել և գնալ, հարկանէին սաստիկ
հարուճածով, այլ և յընչիցն և 'ի կարասեաց
ինքեանք յափշտակէին, որոց միտք իւրեանց
հաւանէին՝ և զայլն ցրուէին, զորս այլք
յափշտակէին, և այսպէս յափշտակումն. և
կորուստ էր ընչից քրիստոնէից:

Իւր 'ի դառնագոյն չարեացն Պարսից, զորս
ածէին ի վր ժողովրդեանն, հարկանել և կեղծ
քել և հարստահարել, անձարակ լեալ ամենից
բանակ չացն Չուղայու յականայ կամօք իւրա
բանչիւրոք ելին 'ի գնալ: և թէպէտ կարողքն
մարմնով և կամ որք ունէին գոյք ստացուած
ծոց, նոքօք հանդերձեին 'ի գնալ, բայց որք
էին տկարք, այսինքն տնանկք, և այրիք, և ծերք
նչ կարէին 'ի գնալ, զաղաղակ բարձեալք աղի
ողորմ ձայնիւ արտասուօք և աշխարհանիւ
կականիւ առհասարակ ողբային: ոմանք
զտունս և զյարկս, ոմանք զբնակութիս և զհայ
րենիս, ոմանք զեկեղեցիսն, ոմանք զնախնիհարց
գերեզմանս և զդամբարանս, և ոմանք զանկա
րութի մարմնոյ առ ի գնալ լային և ողբային.
և յորդարտօսր յաչաց հեղուին. ոչոք էր, որ
ողորմէրնց և օգնէր՝ քանզի փակեալ էր գուռն
ողորմութե գթածին Մ ընդ գէմնոցս:

Իւր զբանայի եկեղեցւոյն՝ զոր վերին կա
թան ասէին՝ առին քահանայքն, և յորժամ
ելին ընդ գուռն Պարսպին Չուղայու, և 'ի
հասանին առաջի եկեղեցւոյն, որ անուամբ
Մ ծածնին կայ շինեալ արտաքոյ Չուղայոյ.
Երբ և հայեցան, և տեսին զՄ ծածնին եկեղե
ցին, և բազումք քրիստոնեայք եկեալ խառ
նեցան ընդ քահանայսն. որև նոքա ևս բերին
զբանս

զբանալիս տանց իւրեանց, և 'ի միասին զաղաղակ բարձին աղիողորմիւ ձայնիւ փղձկեալ սրաիւ և արտասուճալի աջօք դուռային՝ և լային, և աղաղակելով կանչէին ը դէմ Մծածնին և ասէին. Սվ սբ Մծածնին այսոքիկ բանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ յանձին լիցի. և դու դարձուսցես զմեզ՝ ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին: և զայս ասացեալ արկին զբանալիսն՝ ի գետն, և մոր մորթալով յողով ժամս ձայն բարձալ լացին. և ապա գնացին:

Եւ այսպէս ժողովուրդքն ջուղայոյ հարուստք և չքաւորք ելին՝ ի ջուղայոյ՝ և գնացին յեզր գետոյն երասխայ առ ի յանցանել զգետն, և անդէն բանակեալ զետեղեցան մինչև ամ ժողովուրդքն ելին՝ ի գեղջէն՝ և ժողովեցան՝ ի ժողովետոյն յեզր գետոյն: և յոր ժամ սպառեցաւ գալն ժողովրդեան: յայն ժամ հրաման եղև ի Վարսիցն առ ժողով վուրդն թէ անցէք զգետն: Եւ յաւուրսս յայսոսիկ թգւրն շահաբաս հասեալէր՝ ի ջուղայ և բանակեալ յամին գետոյն երասխայ, և յայնմ ժամու իբր թէ առ ի յողորմիւ և յօգնել ժողովրդեանն ջուղայեցւոց, թգւրն շահաբաս հրամայեաց զբրապետաց իւրոց զի և նորա հրամայեցեն իւրեանց զօրացն՝ զի օգնեսցեն ժողովրդեանն՝ և անցուսցեն յայնկոյս գետոյն երիվարօք և ուղտուք: և ի յանցուցանելն հեծելոցն Վարսից զժողովուրդան քրիստոնէից, որոց և հաւանէին սիրտք իւրեանց, եթէ կանանց՝ եթէ աղջկանց՝ եթէ տղայոց՝ եթէ աղբանաց, որոց և հաւանէին առեալ գնային ուրև կամէին, և տեարք նց ոչ կարէին գնալ զկնի նց՝ և նորա գնային ի կորուստ և ի գերութի:

բուծի : և որք տկարք էին թափեալք լինէին
 'ի ջուրն և ծփալով և ճչալով գնային ընդ
 երես ջրոյն . և յովովք հեղձնուէին 'ի ջուրն՝
 և մեռանէին : և յերկու կողմէ յեզերս գետոյն
 ցրուեալք էին գեղք և գ.ի.ք մարդ կան խեղդե
 լոց 'ի ջրոյն : և այսպն առաւապանօք անցին ժո
 ղովուրդքն զգետն երասխ , և սակաւ ինչ յա
 ռաջ գնացեալ բանակեցան մինչև ամենեբեան
 ժողովեցան 'ի բանակետոյն :

Եւ 'ի նմին 'ի տագնապելի առուրսն հան
 ճարեղն 'ի խորհուրդս չարեաց շահաբաս , նո
 բագոյն չարիս խորհեալ վն ջուղայու , կոչե
 աց առաջի եւր զնոյն հանիս թահմազողուլի
 բէկն և հարցանէր՝ թէ յետ հանելոյ քո զբնա
 կիչսն ջուղայոյ՝ այրեցերդ շինուածսնր՝ իբրև
 պատասխանեալ եղև 'ի նմանէ՝ թէ ոչ էր հրա
 մայեալ մեզ 'ի թգւրէն՝ վն ըոյ և ոչ այրեցաք :
 և անդէն յետ բազում մեղադրանաց՝ հրամայ
 եաց իսկոյն դառնալ յովովք զօրօք և այրել զամ
 շինուածս ասնց և այլոց յարկաց : ըրոյ շեշտակի
 հասեալ 'ի ջուղայ բազում հրոսակօք և առեալ
 'ի ձեռս իւրց ջահս լուցեալս և դամբարս եղե
 գանց , և նաւթիւ կազմեալ լապտերս , և սկասն
 այրել և հրդեհել , և քանդել զառաստաղս , և
 տապալել զշինուածս արեոց : և ոչ բնաւ թո
 դին յարկ ծածկեալ կամ շէն , այլ յաւեր և
 յապականութի դարձուցին : իբրև կատարե
 ցին զչարեաց գործս իւրց , դարձան և եկին
 'ի բուն բանակն՝ և յանդիմանեղեալ արքայի
 պատմեցին թէ եղև տէր զօր հրամայեցեր :

Եւ յու հետև հրամայեաց շահն թահմազ
 ողուլի բէկին թէ մի ևս թողուցուս զժողովիւն
 ջուղայու նստիլ , այլ վարեալ և տարեալ հա
 սուրացես 'ի թաւրէզ , և նր եկեալ իսկոյն չուէ

ցոյց զժողովուրդն յետեղէն յորում բանա կեալ կային : և 'ի յօրն և 'ի ժամն յորում բառ նայր իւրաքանչիւրոք զբեռն իւր , երկինք և օդք իւր 'ի միասին խռովեցան իվր ժողովրդեան քրիստոնէից՝ քանզի խառնակեցան ամպք՝ և խռովեցան օդք, և մթացան երկինք, հնչեցին հողմք ուժգնակի, փայլատակեաց կայծակն մեծաւ ճայթմամբ, տեղացին ձիւ նախառն անձրեք, և հարեալ տանջեցին զքրիստոնէայսն : Եւ որք էին կարողք մար մնով կամ գրաստիւ գնացին , խկտկարքն յետ աւուրց տպա եկեալ հասանէին բազում տառապանօք և չարակրութիւնք : և բազում վրշտիւք և տաժանամամբ բերեալ հասուցին 'ի քաղաքն դավրէժ՝ որ է թաւրէզ :

Եւ անդէն 'ի թաւրէզ չարք ոմանք 'ի չար գանձուց սրտից իւրեանց խօսեցան զբանա չարս վն ջուղայու չարին թահմազողութիւնն , վն զի յեղեցին թէ տակաւին կան 'ի ջուղայ մնացեալք ժողովուրդք, զի յողովք ոմանք փախստականք եղեալք 'ի լեւրինս և 'ի ձորս , և այլք պատճառեալք են զտկարութիւն , և ոմանք զժերութիւն , ոմանք զաղքատութիւն , և այլք յայլինչ պատճառանօք ոչ եկին՝ այլ անդէն մնացին՝ և այժմ կան 'ի ջուղայ : և 'ի լսեին զայս թահմազողութիւն զայրացաւ յոյժ սաստիկ բարկութիւնք , բայց ոչ կարէր չարինչ առնել՝ զի ոչ էր ձեռնհաս , և թողին մնալ մինչ 'ի գարունն : և 'ի սկսանել գարնանն՝ պատրաստեաց զայր ոմն երեւելի յիւրոցն արանց՝ որում անունն կոչէին հախաւամաղայ , յողով զօրօք , այլ և զհրով արտակ հրամանի առեալ 'ի թգւրէն ետ 'ի ձեռսնր և առաքեաց 'ի ջուղայ բերել զմեռցեալ ժողովուրդն : Եւ եկեալ համգամադէն զօրօք

զօրօք 'ի Չուղայ կոչեաց զմնացեալ Ժողո
վուրդն առաջիւիւր՝ և խօսեցաւ ընդ նս
տիւ և բռնութիւն, թէ հնազանդեալ անսաք
հրամանաց թգլբին ելէք ձերովք ընտանեօք
և ստացունձովք զի 'ի միասին երթիցուք, և
թէ ոչ կամիք գնալ, զարուս և զկարօղս ձեր
սրով կոտորեմք՝ և զինչս և զընտանիս ձեր 'ի գե
րութի առնումք : Բայլ գնացեալ 'ի լերինս
և 'ի ձորս 'ի տեղիս փախստեիցն գտին զփա
խուցեալսն, և բերին 'ի Չուղայ, և յինանց
երկրորդում կիրակէի երկու շաբաթօրն
չունեցուցին 'ի Չուղայոյ՝ և ուղևորեցին դէպ
'ի թաւրէզ : և անցուցեալ զայնու բերեալ հա
ուցին առաջին բանակին Ժողովրդեանն 'ի
քաղաքն զազբին : և ընդ նս զետեղեցուցին
անդէն 'ի քաղաքն զազբինու և 'ի գեղոր
եայս նր վն ցրտոյ ձմերան : Եւ 'ի շնչել հող
մայն գարնայնոյ վերստին վարեցին զնս մինչև
տարեալ հասուցին 'ի քաղաքն սպահան՝ և ան
դէն բնակեցուցին զնոսա՝ տունեալ նց զտեղի
շինութեորք շինեցին զյարկս և զբնակութիս
ինքեանց հրաշարի յօրինունձովք, կամարա
կապ փողոցօք, թեաւոր ապարանօք, և ամա
րասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայ
ակերպ շինունձօք, զարդարեալ և յօրինեալ
'ի ծաղիկս ոսկոյ և լաջ վարդի՝ և պէսպէս
երանգաց ակնախաղիտ տեսողաց : Սոյնպէս
շինեցին և զեկեղեցիսն հրաշազան յօրինուն
ձովք ըստ արժանոյն փառացն Բ. Երկնա
նման խորանօք, և գերամբարձ կաթուղիկէ
ւք . բովանդակ ծաղկեալ պէսպէս երան
գովք ոսկով և լաջ վարդով, տնօրինականօք
հն և պատկերովք սրբոց : և 'ի գլուխ կա
թուղիկէից նմ եկեղեցեաց կառուցեալ
զնչան

զնչան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն 'ի պակ' և 'ի բարձանս քրիստոնէից :

Եւ ժողովուրդքն ջուղայունաւ և ամ հայա զունք՝ որք գնացին 'ի քաղաքն ասպասան . և անդէն բնակեալ մնացին՝ զբազում սունիպատա ճառս . վն զի ԹԳԷրն շահաբաս էր բազմա հանճար՝ և խելացի, և նախահոգակ . հնարեցաւ բազում և պէսպէս հնարս վն ազգին հայոց՝ զի մնացեն յաշխարհն Պարսից . զի Թէ ոչ էր այնպէս հնարեալ՝ ոչ մնային : Եւ իս զի ինքն շահաբաս առնէր սէր Է ազգին հայոց՝ և մեծարանս նց . և մանաւանդ ընդ ջուղայեցւոց . որոց գլխաւորի անունն էր խօջայ սա ֆար . և սորին եղբօրն խօջայ նազար . և որ դւոց սոցին մէլիքաղայ . և սուլթանոււմ . և սարֆրազ : և հանապազ ինքն շահն գայր 'ի տունս նց . ուտէր և ըմպէր ընդ նոսա առանց խորելոյ . ուպ սովորութի է Պարսից առնել խորութի ընդ քրիստոնէից . այլ և ինքն շահն կոչէր զնս 'ի տուն և 'ի սեղան իւր . և պատուէր ընդ մեծամեծս իւր . այլ և պատուի բեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել : Եւ զորորդ՝ զի զԹԳԷրական հարկն, զոր տային քրիստոնէայքն, Թէթ և առնոյր՝ ուպ և քրիստոնէայք ախորժէին : Եւ զորորդ՝ եթէ դիպէր կագ և կռիւ և խռովութի ինչ քրիստոնէից Է մահմետականաց . և կամ այլ ինչ գործ դատաստանի՝ եթէ մեծ և եթէ փոքր . զքրիստոնէայս իրաւացուցանէր . և զմահմետականս դատապարտէր : Եւ զորորդ՝ յորժամ զքրիստոնէայս բերեալ հասոյց 'ի սպասան և 'ի գեղորայս նր . զբազում մահմետականս արտաքսեաց 'ի տեղեաց և 'ի բնակութեց իւրեանց . և ըզտունս և զանդատանս նց ետ քրիստոնէից :

Ինգ

Հինգերորդ՝ յօժար կամօք հրամայեաց եկեղեցիք շինել յսմ տեղիս . 'ի ջուղայ՝ և 'ի գեղորայս . նա և իմէջ բերդի քաղաքին՝ մեծա նիստ և բարձրաչէն . և այն քան յօժարու թէ մինչ զի և ինքն յորդորէր զքրիստոնեայսն շինել գեկեղեցի : Եւ յաւուրսս մեծամեծ ասո նից՝ յարու թե և համբարձման և յայլն . գայր յեկեղեցիսն՝ և ուրախանայր ընդ քրիստոնէից : Ս եցերորդ՝ զսմ կարգ և զաւանդութիս քրիստոնէական համարձակութի կատարէին քրիստոնեայքն . զկոչնակ հարկանել զժամ կոչել . և զջրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել . այլ և ինքն շահն և սգայր 'ի ջրօրհնէքն և խրախանայր 'ի տեսութիս : Եւ զմեռեալն խաչվառով և ճայնիւ շարակա նաւ հանեալ 'ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ և տանէին 'ի թաղել՝ և ոչ ոք 'ի Պարսից ազգէն եպերանաց և հայհոյանաց քանս ասէր : և այսու օրինակաւ բազում և պէսպէս կերպիւ հաճեցուցանէր շահն զմիտս քրիստոնէից՝ որովք մնացին յաշխարհն Պարսից : Եւ այնքան զհամարձակութի ետ շահն քրիստոնէից մինչ 'ի հրապարակս և 'ի շուկայս . թէ հանդիպէր կագ և կոխ քրիստոնէից ընդ մահմետականաց . համահաւասար զմիմեանս հարկանէին՝ և հայհոյէին առանց երկիւղի : ընդ որոյ վշտանային ազգն Պարսից՝ և նոցին կարդացողքն և մեծամեծքն . մինչ զի ընդ շահին ասացեալք էին թէ ընդ էր այնքան թոյլ տաս քրիստոնէից համարձակիլ . և կամ ընդ էր ոչ դարձուցանեսս 'ի մուլաք օրինացն այն , 'ի ճշմարիտ օրէնս մահմետի :

Իսկ 'ի տեսանել շահին զվշտանալն օրտից նց՝ յայանեալէր՝ զխորհուրդս սրտի իւրոյ նց՝

և ասացեալքր. դուք ընդ սուղինչ սնտոի սերն իմ, գոչ առնեմ ընդ նոսա, մի վշտանայք և մեղադրէք ինձ. զի ես բազում ծախիւք ջանիւք և հնարիւք հազու կարացի բերել զնոսա յայս յաշխարհ. ոչ թէ վն օգտի նց՝ այլ վն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի՝ և ազգն մեր յաւելցի: և այժմ եթէ զմարդիկս ազգին քրիստոնէից՝ որք յաշխարհէն իւրեանց եկեալ են՝ և այժմ կան. եթէ զաման զնս մասն մասն կոտորեալ յօդ յօդ բաժանէք. ոչ որ ՚ի նոցանէ դառնայ յօրէնս մեր. Վաւ այլքն խրտուցեալ սկսանին մի մի թաքնաբար փախչիլ՝ և դառնալ յաշխարհս իւրեանց. և վաստակն մեր լինի ընդ ունայն: Ալ վն այնորիկ առնեմ ես զայս սերս ընդ նոսա. զի այսու կապեալ մնայցեն յաշխարհս մեր. և նոցին հինք մարդիկքն որք յաշխարհին հայոց ծնեալք են և եկեալք աստ՝ ամքն մեռանին. և ՚ի նոցանէ ծնեալքն՝ որք յայս աշխարհս ծնանին, նոքա ամքն առանց մեր կոչելոյ ինքեանք ինքեանց յօժարութի գան յօրէնս մեր: Արդ՝ եթէ դուք ևս կամիք զօգուտն ազգին մերոյ՝ դուք ևս արարէք ուն և ես առնեմ: և ապա նոքա հաճեալ ՚ի բանս շահին, և գովելով զիմաստութի նր գնացեալք են իբաց:

Ալ այս բանս շահաբասին՝ զոր ասացեալք ընդ ծամեծս իւր՝ այժմու ժամանակիս լցեալ կատարի յաւուրս մեր. վն զի արքն հինք՝ որք յաշխարհին հայոց ծնեալք էին, և անտի եկեալ յաշխարհս Պարսից՝ մեռան ամքն. և թէ պէտ զնէին ՚ի մտի դառնալ յաշխարհս իւրեանց և ոչ կարացին. վն վերոյ ասացեալ պատճառացն, նաև ոչ թողուին պարսիկք: Իսկ ՚ի նոցանէ ծնեալքն՝ որք յաշխարհին

Պարսից ծնան, անդէն և սնան և այնմ աչ
խարհին հաճեցան. վերորդ կա՛ր 'ի նմին' և
մնան. և թէ պէտ ոմանք 'ի նոցանէ' քերկիւ
ղածք և բարեբարոյք կամին գնալ յաշխարհն
Հայոց. ոչ թողուն գնալ Պարսիկք: Եւ ու
մանք 'ի նորաժաման զաւակացն քրիստոնէից'
թողեալ զուսապայծառ հաւատս քրիստո
նէութե դարձան' և տակաւին ևս դառնան
օրէնս մահմետի վասն թերահաւատութե
և գողութեան' և բողութե իւրեանց. և
միաբանեալ ընդ Պարսից 'ի նեղ արկանեն
զքրիստոնէայս բազում և պէսպէս հնարիւք:
Եւ մանաւանդ այնու զի տան կաշառս մահ
մետականաց' և կայուցանեն սուտ վկայս. և
բարչեն զքրիստոնէայս առ դատաւորս մահ
մետականս 'ի դատաստան. և պահանջեն 'ի
քրիստոնէից զօրինչ և հնարել կարեն: յո
մանց թէ պարտք պարտիս ինձ, հատո ըզ
պարտանք: և յոմանց թէ ազգականքո եմ
եմ ինչք և ստացուածքք թո ինձ հասանի' տուր
ինձ: և այլ զրպարտուի զօրինչ կարեն հնարել:
Եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց
իրաւացուցանեն զբանս ուրացողացն. թէ
որովհետեւ նա եկեալէ յօրէնս մահմետի, նմա
հասանի եմ ինչք իւրոց ազգականաց: և այսպի
զրկեալ զողորմելի քրիստոնէայս՝ յափշտա
կեալ զամ' ինչս տան ուրացողացն այնոցիկ: Եւ
ոչ թէ զթեթեւ ինչս, այլ մինչ 'ի հինգ հարիւր
թուամանի տունս անիրաւ իրաւամբս այսուիկ
իրաւացուցեալ զբանս ուրացողացն յափշտա
կեցին զժառանգութիս քրիստոնէից և ետուն
ուրացողացն, զոր մերովք աչօք տեսաք: Եւ յլև
'ի մեռեալ քրիստոնէից ազգականացն ոմանք
ուրացողք. յետ գրաւելոյ յինքեանս զտունս
և զամ'

և զամ ինչս քրիստոնեայ մեռելոյն: Եկին տի
րեցին ինքեանց. զորդիս և զդասերս և զաղան
նայս մեռելոցն: և ժողովուրդքն ջուղայե
ցնոց Թէպէտ բազում աշխատեցան 'ի դրունս
իշխանաց դեգերելով վն փրկու թէ տղայոցն,
նչ եղև. վն զի ամբն մահմետականք գուրով 'ի
կողմն իւրեանց հակէին: Եւ դու այսու եր
կու բանիւս՝ զորս վասն օրինակի գրեցի քեզ՝
զամ կիրս վտանկիցն 'ի միտ ածեալ գիտաս
ցես՝ զոր կրեն քրիստոնեայքն 'ի յօձաբարոյ
ազգէն Պարսից:

Եւ ուր ասէ գիրն Թէ վախճանե
ցաւ յօսէփ և ամ եղբարք նր և ամ ազգն այն.
Եկաց այլ Թգլը՝ որ ոչ ճանաչէր զյօսէփ. և
ասէ ցազգն իւր. եկայք, հնարեսցուք ինչ
ազգին ինչի: Ըն այսմ օրինակի պատահեցաւ և
մերոյս ազգի՝ զի Թգլըն շահաբաս Թէ որքան
վտուք տարեալէր զազգն հայոց յաշխարհն
Պարսից. գիտէր զայն ամ վիշտն զորինքն հաճ
իվր ազգին հայոց յաղագս որոյ և գթայր,
և ողորմէր իվր հայոց՝ և զսէր ցուցանէր.
Թէպէտ սուա և սնոտի և ոչ ճշմարտութիւն.
սակայն սէր ցուցանէր. վախճանեցաւ նա, և
ամ իշխանք և արք ժամանակին այնմիկ:

Եւ զկնի շահաբասին Թգլըրեաց Թուն նորին
շահսէֆի, և նա ևս՝ միջակօրէն անցոյց ընդ
ազգին քրիստոնէից. քանզի ոմանք 'ի նախա
րարաց շահաբասին կային տակաւին առաջի
նր՝ որք յուշառնէին նմա զվարիլն շահաբա
սին ընդ հայոց ազգին. այլ և զբարեմտութիւն
հայոց՝ որք ունէին ընդ նախնիս նր. և յայսմ
պատճառէ Թեթև կային ազգն հայոց 'ի
վշտաց. վախճանեցաւ և շահսէֆին և ամ արքն
նախնիք: Իսկ զկնի շահսէֆոյն Թգլըրց նորին
որդին՝

որդին՝ զորոյ անուն կոչեցին դա՛ձեալ շահա
բաս ըստ անուն հաւոյն իւրոյ. վնորոյ զսա
կոչեմք երկրորդ շահաբաս: սա թէպէտ լսէք
զերակութիս՝ որք անցին ընդ ազգին չայոց,
այլ ոչ էր աջօք տեսեալ. նա և ոչ սորին նախա
րարքն՝ որք կային գործակալք թգլրութե սո
րա: վնորոյ ոչինչ փոյթունէին զազգէն չայոց՝
կամ հոգալ՝ կամ գործիլ՝ այլ այն միայնէրնց
փոյթ զինչև իցէ պատճառանօք դարձուցա
նել զչայս՝ ի կրօնս մահմետի: Վնորոյ յարեան
իվք քրիստոնէից արք արեանարբուք. անօ
րէնք, զեխք, և շուայտք արք. որք զմարմնոյ
ցանկութի և զփափկութի բարերջանիկ
կեանս համարին. ոմանք, որք յազգէն չայոց
ուրացեալք էին. և ոմանք, որք բուն պարսիկք
էին նեղէին և բռնադտէին, գարչեցուցա
նէին և բռնութք վարեին ընդ քրիստոնէից:
Վսկ ՚ի ղաւակացն քրիստոնէից, որոք և հա
ճոյ թունէր աջացն Պարսից՝ եթէ տղայ՝ եթէ
աղջիկ՝ եթէ հարսն՝ բռնութք յափշտակէին
և տարեալ ՚ի տունս թգլրին. և անունն էին
թգլրկան ծառայ. և ոչ ևս դարձուցանէին
առ տեսարս իւրեանց: և դարձուցանէին ՚ի
հաւատոցն քի ՚ի հաւատոն մահմետի: Վսխ
վն պիղծ գործոց իւրեանց: և երկրորդ՝ զի
յաւելումն լիցի թգլրական ծառայից և ազգին
Պարսից: և երրորդ՝ զի զկնի ժամանակաց
՚ի պատճառէ այսց տարեալ զաւակացս. գե
րումն և գերփումն և յափշտակումն լինէր
աանց և տեղեաց՝ ընչից և ապրանաց յեանս
մնաց ընտանեաց նց քրիստոնէից:

Վւ մինչև ցայս ժամանակս յորում հասաք
ոչ գիտէին ջուղայեցիքն. նա և ամենայն
չայազուն ազգն այն՝ որք կային յաշխարհին
Պարսից:

Պարսից, զօճաբարոյ նենդ ժոտու թի ազգին
 Պարսից, զբառ ինքեանս: և արդ ծանուցեալք
 Տեժեն, յոգւոց հանեն, հաշին, և մաշին, զի
 թերևս զերծցին յաշխարհէն Պարսից՝ կամ
 յայտնի և կամ՝ ի ծածուկ գնալ յաշխարհն
 հայոց՝ ոչ կարեն: քանզի և ոչ տանթոյլ Պար
 սիկքն ելանել յերկրէն իւրեանց ուր եգիպտոս
 ցիքն զազգն իէլի: Միթէ նոյն բարձրեալն
 բազուկ՝ և հզօր ձեռն Տն և զսոսա հանցէ աս
 տի ուր զնս անտի մաղթանօք մեծաց նախնի նա
 հապետացն և մօսէսի մարգարէի • և մեծի լու
 սաւորչին մերոյ սրբոյն գրիգորի:

Վասն երկրորդ անգամ գալոյն Չղալողլի սարգարին • և
 պարտեալ լինելոյն և դառնալոյն:



Չ Ղ Ա Ղ Ո Ղ Լ Ի Ս Ա Ր Գ Ա Ր Ի Ն ' Ի Վ Ա Ն • Ե Ղ Ե Մ Ե Ղ Ե
 Գ Ա Ա Ն Դ Ե Ն Ի Լ Ե Ր Ո Վ Բ Ղ Ր Ր Ք Ն • Բ Գ Ի Ղ Ի Մ Ի Մ Ի Ն

Չղալողլի սարգարն՝ ի վան • և զեմեղե
 ցաւ անդէն իւրովք զօրօքն • քզի զամսն
 զօրսն իւր հրամայեաց զ զ շլախ տալ իվր բնակ
 չաց երկրին • և բաժանեցին զամսն զօրսն յեր
 կիրն վանայ և յամ շրջակայ գաւառս նր: Իսկ
 զօրքն, որք նստան զ շլախ իվր երկրին, իբրև ըզ
 գազանն տեսլեն դանիելի կերին, և մանրեցին,
 և զմնացորդսն ոտից կոխանարարին • փոխանակ
 շինելոյ զերկիրն աւերեալ քայքայեցին՝ և ի
 վերջին թշուառութին հասուցին • Թէ անո
 զորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութք:

Եւ Չղալողլին իբրև ետես թէ շահն յե
 րևանայ երկրէն դարձաւ ի թաւրեղ և երկերն
 երևանայ անտէր մնաց • զոմն ի նշանաւոր ա
 րանց որում անունն էր օմար աղայ կարգեաց
 գլուխ և ընդ նմա զօրս բազումս • և առա
 քեաց յերկիրն երևանայ՝ զի տիրեսցէ երկրին •
 և նա

70 Իւրաքունն Իմիրգունայ խանին .

և նա եկեալ բնակեցաւ 'ի նախնուան' և պա
հեր զերկիրն : Իսկ շահն' որ էր Թաւրէզ ,
իբրև լուաւ զայս գործ' և նա ևս առաքեաց
զամիրգունախանն բազմօք զօրօք իվր' օմար
ղային . որ եկեալ մտրտեալ ընդ օմար աղային
և սպան զնա' և կոտորեաց զզօրս նր' . և զբն
գունն 'ի զօրացն ձերբակալ արարեալ կենդա
նի . և զայսօսիկ զկենդանի կալեալսն' և զգլուխս
սպանելոցն առաքեաց 'ի Թաւրէզ առ շահն .
և ինքն արձանացեալ նստաւ 'ի տեղի օմար
աղային 'ի նախնուան' և պահեր զերկիրն ոմ և
հրամայեալ էր նմա շահն :

Իւր ջղալօղ լին կալով 'ի վան քաղաքի , այն
գէն անցոյց զցրտասառոյց եղանակս ձմերան ,
իբրև էհաս 'ի ժամանակս գարնայնոյ . էհասն
զամ' երամնկս երիվարաց , զիւրն և զբանա
կին եւրոյ յարօտ իվր' կանաչի' զի զգարնացն
Թալէին առցեն երիվարքն : Իսկ հանձար
եղն 'ի խորհուրդս չարեաց շահաբաս' որ
յայնմ ժամանակի նա 'ի Թաւրէզ էր , կազմեաց
զալաճվէրտի խանն զօրօք բազմօք' և առա
քեաց 'ի վան 'ի խնդիր երիվարաց սարդարին ,
այլև զորինչ առնել կարիցէ արասցէ : և ալաճ
վէրտի խանն երեալ 'ի Թաւրիզու յանկաս
կած և յանկարծելի իմն աւուր էհաս 'ի գաւ
առն վասպուրականի' այսինքն վանայ : և նախ
քան զամ' գործ' էհաս իվր' ժողովոյ երիվա
րացն (յամանցւոց' և' ինոցանէ զորս 'ի յարձակի
էգիտ աւար հարեալ տարաւ 'ի բանակն իւր ,
և զորս էգիտ 'ի չղթայս և յոռնակապս զաման
ջլատեաց և կոտորեաց' և ինքն իմ' ջ երկրին
բանակեդեալ և արձանացեալ նստաւ :

Իբրև ետես ջղալօղ լին էթէ ալաճվէրտի
խանն եկեալ զայսինչ գործեաց , հանդեր
ձեալ

Ճեալ պատյաստեաց և նա զօրս բազումս՝ և կարգեաց նց զօրագլուխ զվանայ փաշէն: և յորժամ Տաս օր մարտին, ելին ընդ դէմ մի մեծոց պատեքազմիլ իմէջ դաշտին յանդի մանավանայ բերդին, որ և ջղալօղ լին ինքն նստեալ իվր պարսպին հայեր իվր մարտկացն՝ զի ոչ կարի հեռի եր՛ի բերդէն տեղի պատեքազմին: Իբրև խառնեցան երկոքեան կողմանքն՝ ի մի մեանս, եղև անդէն սաստիկ գործ դառնութե և անհնարին կոտորուած, զի իբրև զհող և գլխար անկեալ կայր դի մարդկան ընդ երեսս դաշտին: և պարտեցաւ կողմն () սմանցոց՝ և զօրացաւ կողմն Պարսից, և արարին փախստական զօրսն () սմանցւոց մինչ ՚ի դուռն վանայ բերդին: որև ՚ի հալածելն զ() սմանցիսն, երկուքսմանք Պարսիկք զհետ մտեալ () սմանցւոց և վարելով հասուցին մինչ ՚ի դուռն բերդին, և ՚ի մտանելն () սմանցւոցն իմէջ պարսպին. մտին և Պարսիկքն. և անդէն իմէջ երկուց պարսպացն՝ զօրս ասէն սիրհաճ, զմի Պարսիկն կալան () սմանցիքն և տարան: Իսկ միւս Պարսիկն անդէն սպան զայր մի () սմանցի՝ և հառ յինքն զգլուխ () սմանցւոյն: և ապա հառ նոյն Պարսիկն ինքն զդաստառակն իւր՝ և ձգեաց ընդ երկինս ՚ի վեր, և ՚ի ներքուստ կողմանս՝ ածեալ ինքն զսուսերն իւր՝ և հատեալ յերկուս բաժանեաց զդաստառակն իւր առաջի զօրացն () սմանցւոց՝ և առաջի ջղալօղաւոյն, զոր իւրով աջօքն հտես ջղալօղ լին. քան զի նստեալ կայր իվր պարսպին մերձ տեղւոյն այնմիկ: և ՚ի տեսանելն զայն ջղալօղւոյն, զդաստառակն իւր եղեալ իվր սչաց իւրոց յարտասուս հարեալ էլաց, քան զի ծանեաւ յոգի իւր զբեկումն իւրոյ ազգին

72 Ս Երստին զորս ժողովն ջ ջղալոլ լուն: /
գին՝ և զյաջողութին Պարսից: և զպարսիկն՝ որ
հարեալ թրովն իւրով է հատ զգլխատաւակն
իւր, ելեալ՝ ի սարսպէն գնացեալ խառնեցաւ
՝ ի գունդն իւր՝ ի զօրսն Պարսից:

Եւ յետ վանելոյ ալահվերտի խանին ըզ
զօրսն (սամանցոց, ելեալ այնուհետև իմէջ
Երկրին յաւարել և յապականել, ըստ ասացե
լումն Տն թէ նախ զհզօրն կապիցէ՝ և ապա
զտուն նորա աւար հարկանիցէ, սոյնպէս և սն
արար, քանզի զամ համբարս ցորենոյ և զայլ
պտղոց, զխոտոյ և զյարդի, և զշինոճածս
տանց զամ՝ այրեցին հրով: և ուր կարացին
հասանիլ զբնակիչս գաւառացն՝ որք և անկան
՝ ի ձեռս՝ զարխան կոտորեցին՝ և զայլսն գերեցին:
և մեծ բանակ արարեալ եթէ զմարդ և եթէ
զանասունս, միահաղոյն վարեալ ամեալ բե
րեալ հասուցին՝ ի թաւրէզ՝ ի լիութի ազգին
Պարսից:

Իսկ ջղալոլին իբրև ետես զայսպիսի մեծ
բեկումնս: Ելեալ ՝ ի վանայ էմուտ՝ ի նաւ և ծո
վու գնաց յարծկէ՝ և անտի ՝ ի խնուս՝ և անտի
յարդրում, և նստաւ անդ: Եւ կոչեաց աւ
կնքն զամ շրջակայ իշխանս, եթէ զկողմանցն
վրաց, եթէ զկողմանցն մարաց, ընդ՝ որս էր և
մեծ իշխանն ազգին Սարաց՝ որոյ անունն էր
միրջարաֆ. և այսպէս զառնեսայն կուսակալս և
զկողմնակալս սահմանացն այնոցիկ ժողովեաց
՝ ի քաղաքն կարնոյ՝ այսինքն յարդրում: Եւ
հրամայեաց նոց զի իւրաքանչիւրոք իւրոց զօրօքն
պատրաստք լիցին ամբումբք կազմոճածովք
և պատերազմականօք գործեօք, զի յորժամ
կնքն ջղալոլին ՝ ի վան հասանիցի, և որք ևս
անդ ըգտանիցին զի խառնեալ ՝ ի մասին գնա
ցեն ՝ ի թաւրէզ պատերազմիլ ընդ Պարսից:

Ի պա ե թ ա շ ջ ղ ա յ ղ լ ի ն ' ի կարնոյ ե կեալ ' ի տիգրանակերտ , որ է համիթ . և անդ և ս զկայ առեալ հոգայք զպատրաստութի պատերազ մն , և ժողովէր ինքեան զգօրս ամ միջերկրեայ դսւառաց , Օ ասիոյ և զ Ս ի ջ ա գ ե տ ա գ :

Յորում ժամանակի մեծ : և սնուանի փա շայն զոր նասիֆ փաշայ ասէին՝ որ էր ինքն ' ի քաղաքէն բերիոյ՝ որ է հալապ , և սա ևս եկն ' ի համիթ առ ջղալօղ լին . և ' ի միասին հոգային զհոգս պատերազմն , զի և սա համապատիւ էր ջղալօղ լոյն : սոքա երկոքեան ժողովեցին իվերայ ինքեանց զամ զօրս աշխարհին (Սաման ցւոց՝ և ելեալ ' ի տիգրանակերտու եկին միւս անգամ ' ի վան , և անդ ևս ժողովեցին զքրք դաստանայ՝ և զարգրումայ կողմանցն զօրսն իվր ինքեանց . և եղէն մեծ և անթիւ բանակ : Ելեալ ' ի վանայ ուղղեցան դէպ ' ի թաւրէզ , և հասին ' ի սահմանսնր մերձ ' ի գիւղն զոր սօ ֆիան ասեն , և անդ ' ի դաշտին յարդարեցին զպատերազմ , և պարտեցան զօրքն (Սաման ցւոց :

Բանզի բազմահ նարն շահաբաս , զօրսն Պարսից բաժանեաց ' ի չորս գունդս , զգունդն առաջին ետ ' ի ձեռս ալահվերտի խանին , և հրամայեաց նմա , զի դեմ յանդիման և ակն երև ելցէ ' ի պամերազմ ընդ բանակին (Ս մանցւոց : Իսկ զայլ երիսն ետ երից նախարա ըաց եւրոց , զմինն զառչղայ խանին , և զերկ ըորդն զՖիղար խանին , և զերբորդն , փեր պուտաղ խանին : և սոցա հրամայեաց զի թաք նաբար դարանակալք լիցին յերից կողմանց : Իսկ նքն շահն իւրովք ծառայեւքն ' ի գլուխս հեռի լեղանց զօղեալ դարդարեալ կայր :

Եւ յով ժամ է հաս պայմանեալ օր մարտին ,
 Է 5 ելեալ

Ելեալ աւաճվերտի խանն իւրով գողուն երևեցաւ դէմ յանդիման զօրացն (Սամսուղոց, և 'ի տեսանել զնս (Սամսուղոցն, կարծեալ յինքեանս թէ միայն այն է զօրքն Պարսից՝ որք երևինն, վասն որոյ ուրախութե՛ք իվր դիմեցին՝ և սկսան 'ի պատերազմիլ : Յայնժամ կողմն Պարսից վաղվաղակի ըստ պայմանելոյն իւրց բարձրացուցին զծուխնշանին, և 'ի տեսանել դարանամուտ Պարսիցն զծուխնս. փութանակի ելեալք յիւրաքանչիւր տեղեաց դիմեցին իվր զօրացն (Սամսուղոց՝ և 'ի չորից կողմանց իմէջ փակեալ կրտորեցին, դիւթաւալ արարեալ զամենեսեան տապաստ արկին դաշտին : Է եղև անհնարին աղէտ և օր դառնութե :

Եւ սարդարն իմէջ իւրում բանակին կայր, բայց վշտագին ցաւօք եբր զկին ծննդականս պաղատաւոր երկօք ոչ առնոյր ժոյժ և դադար 'ի միում տեղուջ, այլ վարանեալ սրտիւ հայէր, և դիտէր զճանապարհս մարտիկ զօրացն՝ գուցէ գտանիցի որք որ եկեալ բարի համբաւբեր նմա լիցի՝ և ոչ գոյր :

Կայր և մերձ սարդարին մեծ պարոնն քուրդ միրչարաֆն՝ զոր կանխաւ յիշեցաք : Եւ նա գիտաց յոգի իւր թէ պարտեցաւ կողմն սարդարին, վասն որոյ ոչ եկն համբաւ և ջանայր, և հնարէր, զի կերպիւ ինչ հեռացի 'ի սարդարէն՝ զի թերևս փախիցի : Եւ սկսաւ ասել ցսարդարն կեղծաւոր բանիւ և գթով, խնդրեմ 'ի վեհական տերութե՛ք ումմէ, զի և ինձ տացես հրաման մտանել 'ի պատերազմի՝ զի թերևս պատահեցայց 'ի պատերազմի անդ շահին : և 'ի բազում խնդրելոյն հրամայեաց գնալ, իսկ միրչարաֆն եբրև հեռացաւ 'ի բանակէն, գարձոյց զերեսս գէիլ ուրիշ յաջ

Ս անուամն և փախուստ Չ զալօղւոյն : 75
 յաշխարհսն իւր , ուր և գնաց անդառնալիւ
 Լ Է զորքն Պարսեց յաղթեցին զորացն (Ս
 ժանցւոց և դարձուցին՝ ի փախուստ դէպ՝ ի բա
 նակն (Սամսուգւոց՝ և ինքեանք զկնի Տալածելով
 և կոտորելով , մինչ բերեալ լցին իմէջ իսկ
 բուն բանակին՝ որև իմէջ այնմ բանակին մտին
 Պարսիկքն և կոտորէին զ (Սամսուցեանս , և զառ
 ջղայ խանն գնացեալ մերձ առ վրանն սարդա
 րին և զարկ թրով զշրջապատ վրանի սարդարին
 և Տաա՝ և լիմէջն անցեալ գնաց . և ոչոր կարաց
 ընդդէմ ելանել նմա : Եւ մինչև ցերեկոյ ոչ
 դադարեցաւ գործն արևնասեղութե , զորս
 կոտորեցին , և զորս փախուցին , և զորս ձերբա
 կալ արարին՝ և ածին առաջի շահին , բանզի
 ասէին , երեսուն և չորս անուանի իշխանք ըմբո
 նեալք եղեն : փաշայ , քէՏիսայ , զուլար ա
 ղասի , սանջախբէկի : և այլք յոյովք :

Իբրև էառ գործն զկատարումն իւր ըստ
 ասացելումն օրինակի , և տեսեալ Չ զալօղւոյն
 թէ պարտեցան զորքն իւր՝ և ոչևս կարէ
 միւսանգամ կազմել ուազմ և պատերազմիլ ,
 նաև մնացեալ զորքն իւր դադտագողի յետս
 փախչէին : ՍտախոՏ եղեալ թէ միգուցէ և
 նքն ըմբոնեացի՝ ի ձեռս Պարսեց՝ խորհեցաւ
 զի դարձցի անդրէն՝ ի վանքաղաք : և յայնմ
 գիշերի ելեալ սարդարն և ամ զորքն իւր սկսանս
 յետս դառնալ , և իբրև այս այսպէս եղև ,
 ամ որ զապրուստ անձին իւրոյ ջանայր , և փռ
 թայր Տապ ճեպ տագնապաւ՝ զի ինքն քան
 զընկերն իւր կանխաւ փախեցէ , մի գուցէ զի
 յետոյստ ժամանեացէն Պարսիկք՝ և կոտորես
 ցեն ինքեանս : և յայսմ տագնապելի փախաւ
 որս պատճառէ թողին զամ ինչս իւրեանց ,
 զկահ և զկարասիս , զուղոս և զգրաստա ,
 զմթերոյ

76. Ս անուամն և դարձ Ս ղալոյ լուն :

զմթերս կերակրոց , և զգանձս սրն կով և սա պատով , քանդի զճրագունան վառեալ թողին և զվրանան կառուցեալ ուն կանխաւ կառուցեալէր , և զամ կնչ զոր ունէն յինքեանց եբաց լքին , և դարձուցեալ զերեսս 'ի յետս ճեպէն 'ի փախուստ , և մինչև ջրուսանալ այգուցն ոչ մնաց և ոչ մի : Իսկ 'ի լուսանալ առաւօտին ծանուցեալ եղև զորացն Պարսից փախուստն (Սամանցւոց , եբրև զեկուցին շահաբասին , յայն ժամ հրամայեաց զորացն Պարսից մտանել 'ի բանակն (Սամանցւոց և աւար հարկանել 'որք և առ ժամայն յափշտակեալ իւրացուցին 'ի լիութի անձանց իւրեանց . և դարձան ուրախութե 'ի թաւրէզ . և անդ զետեղեցան շահն և զորքն իւր : Իսկ սարդարն ելեալ 'ի սօփիանայ գնաց փախստեամբ մինչ է հաս 'ի վանքաղաք , և անդ մտեալ 'ի նաւ էանց զԾոնն և գնաց 'ի համիթ և անդէն մեռաւ : պատերազմն 'ի հոկտեմբերի , քօանկահնգն եղև , և ինքն գնաց 'ի յամիթ և մեռաւ 'ի Փետրվարի ամսոյ վեցն : Ըսի ևս յոմանց թէ ինքն զինքն դեղակուր արար վն ամօթոյ պարտութեն :

Ըրդ՝ գալն Ղալոյ լի սարդարին , երկու տնդամ եղև , առաջին դալն յըսկզբան հազար յիսուն և չորս թունին , յջրում 'նոր էր մուտ Ի աւասարդի ամսոյն՝ որ եկն 'ի նախչունան , և անդի գնաց 'ի քաղաքն վան : և երկրորդ գալն այս է՝ որ եկն 'ի սօփիան և յաղթեցաւ և դարձաւ , հազար յիսուն և հինգ թունին , 'ի սկիզբն տարեմտին 'ի ժամնակս առաջնոյ աշնան :


Ըլ 'ի շարժմանէ այսց երկուց տիեզերակա յացս՝ որք զարթուցեալք են 'ի պատերազմէ թէ՛ սարդարն՝ որ եկն յարեմտից , և թէ շահն՝ որ 'ի կողմն արևելից՝ թէ որքան աւերուին և քան դուռն

դումնեղն աշխարհի, թէ 'ի գալն և թէ 'ի դարնայ: Թէ որքան ծանրաբեռն հարկա պահանջութիեդեալ իվ ը Ժողովրդեանն բռնութեառին, նոյնպէս և զսուրսաթն՝ որ զկնի զօրացն բերել տային, և թէ զօրքն՝ որ 'ի ձմեռն երկվարօքն իւրեանց զղշլախ տային, կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայ սերմանեաց, և աւարումն, և յախշտակումն ընչից և ստացունածոց, զուստերաց և զդաստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս 'ի յայտնի և զորս 'ի գաղտնի, և զայլ ամ չարիսն զոր ամին իվ ը աշխարհի մեզ ոչ գոյ կար թուէլոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութի աստեղաց, և ստեղծ զայնքան անձինս՝ որք մատնեցան անողորմ և մարդադէմ գազանացն այնոցիկ:

Յաղագս յայտնելոյ ջալոցն. և սատիկ ոսկուն. և մարգակեր դալոցն. և այլևս աւարառութեցն՝ որք ժամանեցին իվերայ աշխարհի:

Ի ՍՄԵՆՆԵՐԿՈՒՅ

Ետիեղերակալացս այսոցիկ այսինքն շահին և ջղալոզլուն ամայի մնաց երկիրն արարադու իւրովք մասնաւորօք գաւառօքն. քանզի շահն գնաց 'ի թաւրէզ՝ և ոչ էր ձեռն հաս. և սարդարն () սմանցուոց մեռաւ՝ և ինքեանք իմէջ ինքեանց 'ի խուովութե կային, զի ոչ էին միաբանք: Վն որոյ պարոնայք ոմանք՝ որք խրախուսեալ յուսային 'ի զօրութիս անձանց իւրեանց. գային և տիրէին երկրին արարադ՝ այսինքն երեանայ: ոսկ պարոնն՝ զորք և մահմատ ասէին եկեալ տիրացալս:



Այլ զկնի տրաւ այլոմն Չալախի քաշայ՝ զոր
 թօփալ օսման փաշայ ասէին : որ էր զիալ
 փաշայի որդին . սա եկեալ մարտեաւ ընդ քա
 նաքուլու մահմատին՝ ի գաւառին կոտէից . որ
 այժմ ասի զրիբուլախ՝ մերձ ՚ի գիւղն առինձ .
 և փախոյց զքանաքրլու մահմատն : և ինքն
 օսման փաշէն հաւաքեալ առ ինքն զբազում
 արս սրիկայս արար իւր զօրս իբրև հազարաց .
 և կալեալ իւր կայան զգիւղն կարփի՝ և անդ
 նստեր . և զձմեռն զայն անդ ձմերեաց : ուստի
 առաքէր զօրս իւր ՚ի շրջակայ գաւառս և
 ՚ի գիւղս բերել ինքեանց և անասնոց իւրեանց
 կերակուր : և գնացեալ արքն յոր շէն և մտա
 նէին ոչ շատանային բաւականաւն , զի յետ
 հոգալոյ զբաւականն աւելորդաց ձեռնար
 կանէին , քանզի կալեալ զարսն կախէին . զո
 մանս յտից՝ և զոմանս ՚ի բազկաց . և զոմանս
 յերկուճորեաց . և անողորմ գանիւ հարեալ
 բրածեճառնէին՝ մինչ անշունչ լեալ իբր զմե
 ռեալս դառնային . և ոմանք ևս ՚ի տանջանս
 մեռանէին : ոմանց զականջս կտրէին . և
 ոմանց ընդ քիթն նետ հարեալ շրջեցուցա
 նէին : և այսպէս չարաչար տանջանոք չարչա
 րէին ցուցանել նոցա համբարս ցորենոյ և
 գարւոյ . դարանս և պահարանս գանձուց և
 ստացունաճոց : Այլ զյատնկս տանց և զայլ
 շինուճածոց փորեալ բրբրէին վն գիւտի ըն
 չից . և փլուցեալ զորմն և զճածկոյթս յար
 կաց յուզէին՝ և որոնէին ինչս . և յայսմ պատ
 ճառէ աւերութիս բազումս գործէին : և
 նախ զգիւղն կարփի այսպարարին . և զայր մի
 ՚ի նոյն գեղջէն՝ վն պանհանջեղոյ ընչ . բա
 ղում աւուրս ՚ի բանտի և ՚ի կապան
 ցին . յորով օրինակաւ տանջեցին . և

նին՝ և ընդ մէջն յերկուս հերձեալ կախեցին
 ցորմով իշի ճանապարհին յաս և երկիւղ տե
 սողաց գաւառականացն:

Եւ գնացեալ ոմանք՝ ի Չալալոցս այսց՝ ՚ի մե
 ծափառ ուխտն յօհանավանք. յորոց տեսլենէ
 բնակիչք վանիցն ամբն փախեան. բայց զտկար
 և զհիւանդաբեղայ մի կալան՝ և խնդրէին ցու
 ցանել դարան և պահարան: և յաւուրս երիս կա
 խեալ զաբեղայն ՚ի բազկացն ծեծէին. իբրև
 ոչ եցոյց պահուստ ինչ՝ զայրացեալ Չալալոցն
 ուր զգազան հնտաղի իջուցեալ ՚ի բազկացն
 յերկունորեացն կախեցին և չարաչար տանջէին.
 նա անձօր մնացեալ եցոյց նոցա զդարանն. և
 մտեալ ՚ի ներքս ՚ի դարանն կողոպտեալ յափշ
 տակեցին զամ ինչսն. և զկնի զաբեղայն ևս
 սպանին՝ և արկին ՚ի խոր մի վանիցն. Եւ անտի
 ՚ի դարանէն հանին բազում ինչս. եթէ շորե
 դէն, եթէ պղնձեղէն, եթէ անօթք՝ խաչ՝
 սկիճ՝ շուրջառ՝ բուրվառ՝ և գրեանք, որք
 էին ամբն պատուականք գրեանք վրդպտիկք:
 Եւ յլէին ՚ի դարանի աստ սրբութիք վանիցն.
 որ եր վարչամակ երեսացն քի, և մասն ինչ ՚ի
 փուշպսակէն քի. և աջ սրբոյն ստեփաննոսի
 նախավկային: և այլևս սրբութիք և սբ նշանք.
 զորո առեալ զաման Չալալիքն՝ և տարեալ կո
 բուսին. և զանուն գլխաւորի սոցա արդու
 ուղմար մուսալիմ ասէին:

Եւ ՚ի գիւղն ուշական կալեալ զայլ ոմնայր
 կախեալ յերկունորեացն տանջէին ցուցասել
 պահուստ. և զայն տեսեալ միւս գեղակա
 նացն՝ առեալ զընտանիս իւրեանց փախեան
 ՚ի գաղան գեղարքունի: Եւ այսպէս արա
 թին ^{որ} զՊակայ զգիւղսն և զգաւառսն կար
 սրանու երկիրն. զզրեբուլխայ
 երկիրն:

80 Ո՛ր շտաց Մարամտից յասէ ջալալոց՝
երկիրն . զԾաղկուց ձորի երկիրն՝ զգառնու
ձորն՝ զուրԺայ ձորն՝ և յայնկոյս գետոյն երաս
խայ՝ զասհաթայ երկիրն՝ զկոխբ՝ և զաղջա
ղալէն :

Ոմանք յայտմ ջալալոցս գնացին՝ ի գաւառն
գառնուց և գտին փորածու այրմի . յորում բա
զում բրիստոնեայք յասէնոցա փախուցեալք
և թաքեալք կային : և էր այրն այն գետնափոր
և մեծ . որք միայն մի մուտ կայր , և ոչ յայլ ուս
տեքէ ծակ կամ շնչահասն կամ հովամուտ . և
՛ի վաղեմի ժամանակաց յիշխաբաց փորեալ և
կազմեալ էր վն իւրց ինչ պիտոյից . և արդ սք
մտին անդ և թաքեան յասէ ջալալոցն . իբրև
եկին ջալալէքն և գտին՝ և ՛ի բազում մաւուրս
մարտնչէին , և ոչ կարէին առնուլ զայրն զայն :
ապա արարին հնարս . զի բերին հուր , և վառե
ցին առաջի դրան այրին . ուր զի ծուխ հրոյն
մտեալ ՛ի յայրն վտանկեցէ զնս , որք ՛ի ներքս
իցեն . և ի վր հրոյն արկին ժահահոտ գեշ ինչ՝
որոյ զհոտն տանէր օդն ՛ի ներս ՛ի յայրն : և
էին յայրին մարդեկք բազումք իբրև հինգ
հարիւր կամ ևս աւելի . և վն իաւարչտին և
նսեմութե այրին ճրագունք էին վառեալ :
և ՛ի ժահահոտուէ գիշոյն զոր արկեալէին ի վր
հրոյն՝ որ ՛ի յայրն մտանէր՝ սկսաւ ապականիլ
օդն , որ իմէջ այրին . և քարինքն ամբրտնեցան
և հոսէին ՛ի քարանցն . բրտունքն ուր զլուր .
և ճոագունքն ամ սկսան նուաղիլ մինչև ամե
նակն շիջան . և մարմինք մարդկանցն սկսա
ուռիլ և բշտիլ և դեղին ջուր հոսիլ . և ամքն
շնչարգելք եղեալք նուաղեցն . և թուլացեալք
թալկացեալք անշնչացան իւրաքանչիւր յիւ
րում տեղուղ առհասարակ արք՝ և արք
ծերք և տղայք՝ մատաղ մանկտի .

և ՚ի նոցանէ ոչոր եւ արտաքս : Եւ ջալալիքն , որք զդուռն այրին պահէին . գետացին թէ ոչ հնազանդեցան նոյ գաղթեալ արքն՝ որք իմէջ այրին երկմիտեղեալք ՚ի տարակուսի կային : և յայնժամ կայան ջալալիքն զայլոմն այր ՚ի նոյն գաւառէն՝ և բռնադատէին ցուցանել զասպրանս . և նա յահէ սպանմանն ասաց՝ եկայք ընդ իս զի գնացուք ՚ի բոռադարէն՝ և անդ ցուցից ձեզ զասպրանս : Իբրևնորս գնացին , յայնժամ նախախնամու թէն ՎՆյ արք ոմանք՝ որք ՚ի նոյն դարանէն ելեալք էին յառաջագոյն , և վն իւրեանց ինչ գործոյ գնացեալք էին յայլուրեք , ՚ի նմին ժամու եկեալ ՚ի հեռատանէ դիտեցին թաքնաբար զդուռն այրին՝ զի ոչ կայր անդ որ . ապա եկին ՚ի դուռն այրին , տեսին զայս ամեղեալ և փութացեալ զհուրն ՚ի բաց ցրուեցին . և վառեցին ճրագ՝ և մտին ՚ի ներքս ՚ի յայրն . և տեսին զամեն իբրև զմակաղեալ ոչխարս իւրաքանչիւր տեղիս մեռեալ՝ հայր զորդուով՝ և մայր զդստերք՝ և եղբայր զեղբարք՝ զմիմեամբք գիրկս ամեալ և մեռեալ : Եւ փութացեալ նոցին նախ զընտանիս իւրեանց արտաքս քարշեալ ձգեցին ՚ի դուրս ՚ի յայրէն . և ապա զայլս որքան կարացին արտաքս բերին : և զորս արտաքս բերէին , և հոգ տարեալ սպասաւորէին զձիւն և զջուր իվր հեղուին , շնորհօքն ՎՆյ կենդանանային , և այսպէս զբազումս արտաքս բերեալ ասպրեցուցին ՚ի դառն մահուանէն : բայց զորս ոչ կարացին արտաքս բերել ամբն մեռան այս պիսեալ մահուանբ : և որք ելեալ ՚ի դարանէն ոչևս կարացին կալ ՚ի տեղին յահէ ջալալոցն , այլ անակի մեկնեալք ՚ի տեղոյն փախուրեք ասպրեցուցանել զանձինս :

Եւ այսպէս զամեն գեղորայս գաւառացն արարադու յաւեր և յապականութիւն դարձացին. և ՚ի կերակրելեաց սերմանեաց և ՚ի բնակչաց թափուր արարին:

Եւ ապա խորհեցան ջալալիքն գնալ յերկիրն գեղամայ՝ որ է գեղարքունի. բանդի գիտէին թէ անդէն համբարք ցորենոյ և գարւոյ. և ջոկք աչխարաց և անդէոց. որ է պախըն՝ յորովք գոն: Վն որոյ յորովք ՚ի զօրացն ջալալեաց ելեալ գնացին յերկիրն գեղամայ. և զբազում գիւղս կողոպտեալ աւարհարին: և բացեալ զհամբարս նոցա ցորենոյ և գարւոյ. և նոցին տեարց ձեռօք բարձին նոցին անասնոցն. և զնոսին կալան պահակ՝ որ է կոռ. վարօղ և քշօղ բեռնակիր անասնոցն. որովք բերէին զցորեանն՝ ՚ի բնակարանս իւրեանց: Եւ յլև զկանացս, և զտղայս գերացուցեալ բերին ընդին բեանս. ուն զի տեարք գերեացն արծաթ և ոսկի վն նոցին գնոցն բերեալ դորձուսցեն զգերիսն: Եւ իբրև ըստ բաղձանաց սրտից իւրոյ զորինչ և կամեցան արարին. և ապա չոճեցուցեալ զգերեալ կանայս և զտղայսն. և պահակ կալեալ արամբքն բարձեալ նոցին գրաստուցն և եզանցն զամեն բեռինսն: և զբազմութիւն անասնոցն՝ որք էին ջոկով ոչխարք՝ և պախրէք. և երամով ձիք վարեալք բերէին: Իբրև եկին երկուց աւուրց. ճանապարհ՝ և զի էր գործ առնութիւն այն՝ ՚ի ժամանակս ձմերայնոյ այլև ձմեռնն այն ծանրաձմեռն և ձիւնամեծ էր. վն որոյ բեռնակիր անասունքն ամբն վաստակեալք մնացին ՚ի ճանապարհին. և ՚ի թանձրութեանն ոչ կարէին գնալ: յաղազս որոյ զմնացելոց գրաստուց բեռինսն բաժանեցին ի շալակ. և շարակեցուցին գերեացն:

կանց և տղայոց: և այսպէս անցուցեալ զսարն
 հասաւ ցին յի կարփի գիւղն: Բայց թէ որքան
 դառն աղէտիւ վտանկ էր ողորմելի ժողովր
 դեանն՝ որք սքստահեցան այսմ գործոյ. զի ու
 մանց զձեռս՝ և զոտս՝ և զունչս տարաւ ցուրտն.
 որք յօդաթափք եղէն՝ ՚ի մասանց մարմնոյ.
 և այլք ՚ի շնչմանէ ցրտասառոյց օդոյն սառու
 ցեալք անդէն իսկ ՚ի ճանապարհին մնացին՝ և
 մեռան: Եւ այսպէս որք մեռան ՚ի ճանապար
 հին. մեռան, իսկ որք մնացին՝ զաման բերեալք
 հասուցին ՚ի կարփի. զոմանս վաճառէին ար
 ծաթոյ. և զոմանս պահէին ՚ի ծառայութի
 գործոց իւրեանց: և Չալալիքն կացին այսպէս
 մինչ ՚ի գարունն՝ և հասին մերձ յաւուրսն
 համբարձմանն. և ապա ելեալք անտի գնացին
 յերկիրն ախլցիսու. և մնդ. և ս զայն գործ կա
 տարէին:

Եւ ոչ միայն այս Չալալիքս այսպէս առնէին.
 գոյին և այլք Չալալիք՝ ոմանք յոլովք՝ և ոմանք
 սակաւք. որք ՚ի տեղիս տեղիս զկայառեալ և որ
 ջաղեալք էին՝ զայսպիսի գործս գործէին:
 Եւ յլև ՚ի բրիստոնէից ազգէ՝ արք ոմանք, որք
 ոչ ունէին զերկիւղն Վ. Մ յինքեանս. իբրև տե
 սանէին թէ այլ ազգիքն այսպէս առնեն. ին
 քեանք և սկսան այսպէս առնել. վն զի աչօք
 տեսին և սրտիւ յօժարեցան. եթէ յայտնի
 յայփշտակութիւն և թէ գնդտնի գողութիւն
 այնպէս առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի
 էր յաշխարհակալ բռնաւորաց. և ի՞մ որ զա
 խորժակս կամաց իւրոց կատարէր: Եւ որ ու
 պատմէն տեսողք ժամանակին. զի բնաւ ոչ
 գոյր նախ բարութե յաւուրսն յայնոսիկ բաց
 ՚ի թաւրութեցն. ուն պատմեցաք, և տակա
 ին վերցեմք: վն զի թագաւորն ա
 ղ 2 րկելից

ընեւից շահաբաս զորօքն Պարսից զբաժին արեւելեայ աշխարհիս յաւերդարձոց : այնք և ջալալիքն որք մասին բաժնի արեւելեայ երկրիս գերագոյն քան զնաեղեն աւերիչք և ապա կանիչք : Վշ սարդարն () սմանցւոց նոցին զորօքն իմէջ երկրայս սկսեալ 'ի հոստանդնու պօրէ մինչ 'ի յերեւան քաղաք աւերեցին : սոյնսք և ջալալիքն, որք էին յաւուրսն յայնսոսկ 'ի կողմանս երկրին () սմանցւոց գերագոյնք քան զնաւերիչք : Վշ սքէին արքանունսնք և յաղթօղք և քաջ պատերազմօղք և անպարտելիք : Վշ զի էին ջալալիքս այնոքիկ բազումք, վսորոյ հարկաւոր համարիմ շարադրել զանունսնս նց . որով մարթացիս վերահասու լինիլ աւերման աշխարհաց որ 'ի նոցունց եղև . թէ որքան եղեալէ : և զորինչ լուաք յակահատես պատմողաց, զայն գրեմք :

Վախ դարայ եազիչին բազումօք հեծելօք . որ 'ի հազարքառասուն և եօթն թոճին ապստամբեցաւ 'ի թգւրէն . և եկեալ յուրհայ քաղաք եմուտ 'ի բերդն , և ամրացաւ : և հրամայեցաւ 'ի թգւրէն իվք սորա սարդար գալ . և սարդարն եկեալ քառասուն հազար մարդկամբք ոչինչ կարաց ստնանել և դուրձաւ : և ապա եազիչին ելեալ 'ի բերդէն և այլևս զորս ժողովեաց իվերայ իւր . և նոքօք սկսաւ աւերել զաշխարհ . նախ զուրհայ քաղաք և ապա զայլս զթօխաթ զսեբաստիայ զբուրսայ զանկիւրիայ և այլ ուրև հանդիպեցաւ : և վնարաջն զոր հանապազ թգւրէն ստանոյր 'ի ժողովրդոց . այս եազիչիս զերկու տարւոյ խարաջն ինքն էաւ . և իւրոց զօսցն ու ճիկս բաժանեաց :

Նուսէին վաշայ հազարքաց թոճին ապստամբեցաւ 'ի թգւրէն :

Քուսայսափար հազարքառասունևութն
թուին ապստամբեցաւ :

Մնատիաշայ հազարյիսուն թուին ապստամբեցաւ :

Ինջաղան հազարյիսունևերեք թուին ապստամբեցաւ :

Յուլարդստին հազարյիսունևչորս թուին ապստամբեցաւ :

Թաւուլն տասնևերկու հազար մարդով հազար և յիսունևերկու թուին ապստամբեցաւ :

Եւս թաւուլոյ եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք :

Սահմատիաշայ քսան հազար մարդով :
Սանողլի : Սանփոլատողլի ալիփաշայ :

Սորին եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք :
Քուսողլի այս այն քօրողլին է որ բազում խաղէ ասացեալ զոր այժմ աշղներն եղանակեն :

Գլիբողլի մօտաֆայրէկ հազար մարդով և սա ևս ընկեր է քուսողլոյն՝ զոր յոլով տեղիս իմեջ իւր խաղին յիշեալ է :

Միւս մուստաֆայրէկ : Պարաղաշ :

Իալունասիպ : Իօլայ սրղմազ :
Թանդրի թանիմազ : Գօհապախան :

Չրփլախ : Քեասուրեաս : Քուլու :
Պարասահաթ : Եղաջգանփիրի :

Սորս ամբն ջալալիք էին որք ոչ հնազանդ էին թղլրին և ոչ՝ ի տեղե ուրեք զկայ առեալ բնակէին և այլ աշխարհաւերք և աշխարհա կործանք : ուրև յսէին զհամբաւ շնութե, դիւքալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշնուճաճան հրդեհեալ այրէին :

Ի մերձակայից կոստանդնուպօլսի՝ մինչև յերկանք քաղաք Ի բաղդատայ մինչև ցրտ մեքրիփուս և զսպիտակ ծովու մեջն և ըզսեալ

սեաւ ծովու մէջն. այսորիկ եզերքս՝ զորս ծրու
գրեցի. զոտցա մէջն զայսքան աշխարհս յաւեր
և յապականու թի դարձուցին :

Եւ յայսմանէ պատճառէ հորսգործք և երկ
րագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին յեր
կիւղէ և յահէ սոցա փախուցեալք՝ ՚ի բերդս
և ՚ի դղեակս. և ՚ի փապարս լերանց ամրա
նային. և ոչ կարէին առնել զերկրագործու
թի. վն որոյ սերմանել՝ և հնձել՝ և կալ՝ և
կուտ բարձաւ ամենեին : և սկսաւ լինիլ սղո
թի հացի և ամենից ուտելեաց իրաց և ոչ գտա
նիւր. և թէ ուրեք ուրեք և ս գտանիւր. և այն
և ս ծանր գնոյ : Եւ ՚ի ժամանակի սղու թես
այս եկն մարախ յընդհանուր միջերկրայս. և
էհար միանգամայն զամ երկիրս. և եկեր զխոտ՝
զբոյս՝ և զայլ կանաչ՝ որ երևիւր : Սրոյ հետա
գայ եղև սով սաստիկ : և բնաւին ոչ երևիւր
հաց և կերակուր և այլ ինչ ուտելի :

Եւ յայսմ ժամանակի եղեն ջիր և ցանս ազգն
հայոց. և գնացին իւրաքանչիւրք հանդէպ
երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ :
ոմանք յուռու մէլի. ոմանք ՚ի բուղղան.
ոմանք ՚ի լէհ. ոմանք ՚ի կափայ. ոմանք ՚ի ծովե
զերսն Կոնստոսի. ոմանք ՚ի թաւրեզ և յա
տաւէլ՝ և ՚ի գաւառս սոցա : զի յազգէն հ
ոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գ
առսս. յայս ժամանակիս և յայսմանէ
ճառէս են գնացեալք : Եւ շահաբ
որն՝ որ ՚ի հայոց ազգէն զայնքան ք
այս քչեաց և տարաւ յերկիրն սահան
րա պատու. նորա ամբն յայս ժա
նին եկեալ՝ զոր շահն տարաւ :

Եւ ըստ ասացելու մն ՚ի ժամանակիս
որք ցրուեցան և գնացին, գնացի

ցին 'ի միջերկրեայս • 'ի չգոյէ հացի սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս՝ և զոջխարս: և 'ի սպառել սքց կենդանեացն՝ սկսան ուտել զանսք կենդանիս՝ զձի, և զջորի, և զէշ • և զայլ անսք կենդանիս • մինչև զշուն, և զկատու, և այլ ինչ որ 'ի ձեռս անկանէր վն կարեաց կերակրոյն: Եւ իբրև այլ առաւել սաստկացաւ սոյն • սկսան ուտել զմեռեայս՝ և ոչ թաղէին՝ այլ ուտէին • քանզի զօրացեալ էր իվր աշխարհի սոյն: Եւ բազումք 'ի բազում տեղիս զկենդանի մարդն ըմբռնէին և ուտէին:

Արպէս պատմեցին մեզ թէ յերկիրն արարողու 'ի գիւղն որ կոչի ուշական • այր ոմն արարեալ էր վիճ ինչ իմէջ տան իւրոյ թաքնաբար • որ զայր դարիպական խաբեալ բերէր 'ի տունն իւր և սպանեալ պահէր 'ի վիճն յայն՝ և օրըսօրէ սակաւ սակաւ ուտէր • զոր յետոյ իմացան բնակիչք գեջն՝ և հարածեալ փախուցին 'ի գեղջէն:

Եւ 'ի գիւղն՝ զոր բջնի ասեն • ճանապարհորդք ոմանք ընդ այն անցանելով տեսանէին զի ծուխ ելանէր 'ի տանէ միոյ • և նիշ ուրարեալ գնացին 'ի տունն՝ տեսին զկանայս երիս 'ի տանն՝ որ բկառուցեալք էին զպոյտն և եփէին զկերակուր • իբրև 'ի վերառին զխուփն տեսնողձեռս և զբազուկս և այլ միս մարդոյ • զոր եփէին զի կերիցեն • իբրև բռնադատեցին զկանայսն խոստովանիլ զայն յայն ժամնք զստոյգն ասացին • թէ վասն հարկի սովուն՝ զի ոչ ունիմք զինչ զի կերիցուք • վն օրոյ զանցորդ մարդ ի կսխաբեալք բերեմք 'ի տունն՝ և սպանեալ եփեմք և ուտեմք:

Եւ յարգում քաղաքի ամին օրինակաւ պարտիս զործ եղեալ էր՝ զոր տեսողքն պատմեցին

մեցին ինձ. թէ կանայք չորք միաբուեալք էին, և ՚ի տան միում արարեալ ինքեանց բնակուէ թի, որ մի և երկու ՚ի նոցանէ աւուրց յաւուրս ելեալ արտաքոյ շրջէին և խաբէին զմարդիկ պատրողականիւք բանիւք և բերեալ ՚ի տուն, ըմբռնեալ զմարդն սպանանէին. եփէին և ուտէին : Եւ եղև ՚ի միում աւուր զեզայր ոմն տարան ՚ի տունս և մինչ կամէին ըմբռնել զայրն՝ և այրն իմացեալ զխորհուրդս նց փութանակի ՚ի բաց ոստեալ : զերծաւ ՚ի ձեռաց նց և փախուցեալ էլ ՚ի տանէն : և գնացեալ աւ փաշայն, որ իշխան էր քաղաքին՝ ծանոյց նմա. և իշխանն Տրամայեաց զինուորաց գնալ ընդ առնն՝ և ըմբռնել զկանայսն. և զինուորացն գնացեալ ըմբռնեցին զկանայսն : ապա սկսան խուզել զտունն. իբրև մտին ՚ի ներքսագոյն տունն, տեսին քսան և չորք գլուխք մարդոյ՝ զորս սպանեալ և կերեալ էին. և զինուորքն բռնադատեալ խոշտանկէին զկանայսն ասել ստուգիւ զգործս իւրեանց. և նորա պատմեցին թէ վնջտանկի սովուս խաբանօք բերեմք զմարդիկս աստ՝ և սպանեալ ուտեմք : և կալեալ զկանայսն տարան առ փաշայն. և փաշայն Տրամայեաց սպանանել զչորեսին կանայսն :

Եւ մերձ բասենոյ երկցին է գաւառ մի. զորոյ անունն խալիագի ասեն՝ որ այժմս անբնակ է գաւառն այն. ուստի էր այր ոմն հաւատարիմ՝ և բանագէտ. սա պատմեաց թէ ՚ի ժամանակս այս սովուս տղայք երկուք առ մեզ բնակէին՝ զի մեզ գոյր ցորեան ուտելոյ : և եղև որ ինչ, զի ոչ երևացան տղայքն. և եկն առ իսկարծիք՝ թէ մի գուցէ անկան ՚ի ձեռս մարդակերաց արանց՝ և կերեալք եղեն. և վնջտանկի մարդակերաց արանցն առ ի ընդ իսարս երկում և և քան

քանզի և ես երկնչեի միայն գնալ առ նոսա. և գնացի ՚ի կարծեցեալ տեղին, ուրէին ժողովեալ բարում սովալ լուկ մարդիկ բարք և կանայք՝ յորոց գոյր կարծիք մարդակերութե: իբրև մտի՛ի տունն հարցի ցնն՝ և նորա յուրաստեղեն. և էր թոնիրն ՚ի վառ և պոյտն իվն, յորում եփէին զկերակուր. և առեալ իբաց զխուփն հայեցայ իմէջ պուտկին՝ տեսի զտան տղային. ապա եկեալ եղբայր տղային ասաց՝ թէ զեղբայրն իմ մորթեցին և կերին. և այդ նորին ոտն է: և ես յետ բազմաց կսկծանաց՝ առեալ զմնացեալ տղայն տարայ ՚ի տունս մեր՝ որ ապրեցաւ: Եւ յլեսոյն այր ասէր՝ թէ տեսի զի երկու պառաւ կանայք՝ որք կալան զփոքր աղջիկ մի. խեղդեցին և կերին. և ես զայս ծանուցի սարգիս անուճաւբ առն միոյ. և նասպան զերկոսին պառաւսն: Եւ բազումք ՚ի բազում տեղիս այսպէս արարեալք էին. որսացեալք զմարդիկ և կերեալք:

Եւ ոչ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլ և արք և կանայք զզաւակս իւրեանց կերեալք են: ում լուճաք թէ յերկիրն սեբաստիոյ ոմանք զզաւակս իւրեանց կերեալք են: Եւ յայլում գաւառի կին ոմն զիւր զերեկու որդին և զմի դուստրն կերեալ է:

Եւ ոմանք հարկեալք ՚ի կարեաց սովուն ելանէին՝ և շրջէին ՚ի շինամիջին և վն պակասելոյ զօրութե ճնշեալ՝ և մաշեալ, և նբողեալ ոչ կարէին գնալ, անկանէին ՚ի շինամիջի և յանցս ճանապարհաց և յանկիւնս որմոց մուրնչելով և նուճալով մեռանէին:

Եւ ոմանք եկեալք միաբանէին արք տասնքոսն՝ և երեսուն և գնային ՚ի գեղջէ՛ն գիւղ ի յերկրէ յերկր խնդրել զկերակուր և ոչ կարէին

կարէին գտանել, զի եբրեւ զՄ. Տառաք պատու
Տաս իվ ընդ Տանուր աշխարհի ափուեայէր
սողն, ըբանի մարդարէն կոչեաց սով յերկիր
նց և զամ զօրութի Տացի էբեկ: Էր զի ոմանք՝ ի
նոցանէ Տասանէն՝ ի շէնս, և էր զի մեռանէին:

Եւ ՚ի դիականց մեռելոցս այսոցնկ կերին
վայրի գազանք և անընդելք կենդանիք, ման
աւանդութի գայլք. և ուտելով զմեռեալս,
սովորեցան և զկենդանի մարդն ևս ուտել զոր
մարդագայլ ասէին: և այնքան սովորեցան և
Տամարձակեցան գայլք իվ ը մարդոյ մինչև զկեն
դանի մարդս օրատառէին և ուտէին: Եւ
յայսմ պատճառէ երթ և եկութի գնացից ճա
նապարհաց խափանեցաւ. յաճէ մարդագայ
լոցն: Եւ այնքան վատահացան գայլք իվ ը
մարդոյ՝ որք գային իմէջ շինին և մտանէին՝ ի
տունս, որում և պատահէին եթէ յանկողնի
ննջեալ տղայի. և թէ իմէջ որորոցի, և թէ
՚ի գերկս մարցն, իվ ը արձակէին և բռնութի
կորզեալ ՚ի գրկացն և յորորոցէն յափշտակեալ
փախչէին՝ և տարեալ ուտէին: Եւ յամ գոր
ծոյս տեսողք յոլովք գոյնն՝ որք զեւրաքան
չիւր տեսեալն պատմէին գործս զարմանա
լիս և սարսուելիս: Արև այսմ ժամանակեան
գայլատար մանկանցն բազումք գոն այժմ՝ որք
եղեալք են արք կատարեալք և ճերացեալք,
որոց ՚ի գլուխն և յերեսն և յայլ տեղիս մար
մնոցն տեսանի սպի վիրացն պատառոտեալ և
գիշատեալ զոր արարեալք են գայլքն՝ որոց ՚ի
Տարցանէլն մեր վասն գիշատելոց տեղեացն,
պատասխանեն թէ գայլն յափշտակեալ տա
րաւ զիս յուտել՝ և ժողովեալ արանց բազմաց
խորատեցին զիս ՚ի բերանոյ գայլոյն:

Եւ եղև սովս այս իմէջ երկոյց մեծոց

Թ ով ունի այսինքն սպիտակ ծ ով ուն, և սեաւ ծ ո
 վ ուն 'ի մեղ ճ ի կայ գաւառացն կոստանդնուպոլ
 սոյ մինչև 'ի գաւառսն Թաւրիզու, 'ի բաղդատայ
 մինչև 'ի դամուրղափուն, այսքան եզերացս
 մէջն եղև սոյն և սաստկացաւ: Աւելի սկիզբն
 սոյնու 'ի հազար և յիսուն և հինգ Թ ուն, յո
 ռումամի Թոյլ էր սոյն և ոչ էր խիստ, իսկ 'ի
 մտանէն, հազար և յիսուն և վեց Թ ուն. և 'ի
 հազար և յիսուն և եօթն կարի սաստկացաւ. և
 'ի մտանէն հազար և յիսուն և ութն, Թ ուլա
 ցաւ. և 'ի հազար և յիսուն և ինն բարձաւ
 բնաւն ողորմութիւն Այ ամենախնամողին՝
 որ ոչ իսպառ բարկանայ ստեղծ ունոց իւրոց՝
 և ոչ յաւիտեան սլահէ զոխս, որում փառք
 յաւիտեանս ամէն:

Յաղագս առման Բաղարացն գանձայու և շամխու:

ՅԱՏ ԵՐԱՐՈՐԴԻ ԳՒՆՍ

Յ աեան և դունայոյ ջղալօղ լի սարդարին,
 որ եկն 'ի սօֆիան և պատերազմեցաւ Ը
 Պարսից և պարտեալ դարձաւ 'ի համիթ և մե
 ռաւ Թ ուն Պարսից շահաբաս ամենիւք զօրօքն
 իւրովք կայր 'ի Թաւրէզ քաղաքի զձմեռն զայն՝
 իսկ 'ի ճնչել հողմոյն հարաւոյ 'ի Ժամնակս գար
 նան Ժողովեաց զամսն զօրս իւր և գնաց ի վ ը զօ
 րացն (սամանցոց՝ որք տակաւին էին 'ի քաղա
 քին գանձակայ՝ որ է գանձայ, յորում ամի էր
 Թ ուն ակունն մեր հազար և յիսուն և հինգ, և 'ի
 հասանին անդր շրջապատեալ զբերդն
 նստու ի վ ը: և զերկիրն ամ գրաւեալ ընդ իւ
 ր ի խախուութիւն և պահէր 'ի խաղաղութե,
 զհրաման արարեալ իւրոց զօրոցն մի զըթ խոնել
 և մի

և մի զորք բռնադատել 'ի բնակչաց Երկրին, ուստի լցեալ լինէր Խամ պիտոյք նոցա մարդկանց և անասնոց: և ինքն շահն ուշ եդեալ գործոյ պատերազմին՝ զի առցէ զբերդն պէսպէս հնարիւք: Երբեմն զսիրայ բարձրացուցեալ 'ի վերուստ ծեծէին: Երբեմն 'ի ներքուստ զյատակս պարագացն փորեալ զնաղմն առնէին, և զայն ընճին բարութով և հրդեհէին, և զպարիսպն ի վերառեալ լը երկինս ցնդէին: և երբեմն սուտ երդումն և դաշն խաղաղութ գրէր շահն՝ և առաքէր իմէջ բերդին, Թէ դուք Խամքն ձերովք ընչիւք և ամենիւք ընտանօք ելեալ գնացէք յաշխարհն ձեր՝ և մեք ձեզ ինչ ոչ մեղանչեմք, միայն Թէ զբերդն սուք մեզ Ղակ զօրքն () սմանցւոց ոչ տային՝ այլ երկայնս մտեալ համբերէին, և քաջութիւն պատերազմեալ դիմակայէին: Ղակ Պրսիկք զօրքն ոչ ինչ կրէին վտանկ՝ կամ կերակրոյ կամ ցրտոյ և կամ 'ի շրջակայ Թշնառեաց՝ և կամ յայլ երաց, այլ կային առանց պակասութե և հանապաղ պատերազմէին: Այլ մինչ ետես շահն Թէ սակաւինչ երկարի գործ պատերազմին՝ ձուլեաց անդէն երկուս Թօիս մեծ ամեծս հզօրս և ուժգնաբաղխս, որոց 'ի ձգելն կարի փլուցանէր զպարիսպ բերդին. և սովաւ յոյժ վտանկ լինէր () սմանցւոցն: 'ի վերջոյ Խամ պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն () սմանցւոց հայէին շուրջ զինքեամբք զի ոչ ուստեքէ գոյր նոց օգնական՝ ոչ յերեանց շրջակայից քաղաքացն. նա և ոչ 'ի դրանէ Թագաւորին իւրեանց զի ջարայիք բազումք կային իմէջ երկրին () սմանցւոց՝ զորոց զանոճանսն յանցեալ ճաւիղ յիշեալք. և յորա այնու էին պատաղեալք: այլ փաշայն զանջայու անկեալ էր 'ի պատերազմին՝ որոյ

անուան էր զնջիլղուան ալիփաշայ: այլև նոր ձու-
լեալ Թօփն կարի փրուցանէր զպարսպն. վս-
որոյ յամենից կողմանց 'ի նեղանկեալ քետուն
զբերդն Պարսից: Եբրև էառ շահն զբերդն
գանձակայ՝ տիրեաց անի երկրին՝ և կարգեաց
անդէն իշխեցօղ զոմն՝ որում անուանէր աղ-
սաղ մահմատխան:

Իւ մինչև ցայժմ առ ինքն ունէր շահն
զթուան աղէքսանդրու Թագաւորին կախե-
թու զԹամրազն. և այժմ արձակեաց զնա
գնալ յաշխարհ եւր հայրենի, տունեալ նմա
զհրաման իշխանութե տիրել եւրոյ հայրենի
աշխարհին՝ և վարել զգործ Թագաւորու-
թե եւրոյ: Բայց կալ 'ի միաբանութե և 'ի
հնազանդութե Թագաւորութեն Պարսից. և
Թամրազն գնացեալ 'ի կախեթ 'ի հայրենիս
եւր վարէր զիշխանութե Թագաւորութեն,
և կայր 'ի հնազանդութեն Պարսից:

Ի յիւ ամանք ասացին Թէ յետ առնլոյ շահին
զգանջայ. կային 'ի գաւառին գանջայու մահ
մետականաւ հաւատով ազգ մի. զոր ինքեանք
էլ անունանեն, և զանունն այս էլիս ջէկեր
լու ասէին. որք էին գաւանութք և կրօնիք
Սամանցւոցն՝ զորսունի ասեն: զհրաման արար
վասն սոցա շահն ժողովել զամենեւեան 'ի մի
վայր 'ի տեղի ինչ՝ որ էր տեղի հեղեղատի, որոյ
մուտննեղ էր զոր պահէին Պարսիկք. և որքան
դէպ 'ի ներքս երթայր լայնանայր. և շուրջա
նակի բարձրփուլ. յորմէ ոչ կարէին ելանել
և փախել: հրամայեաց շահն զնոսա զամենե-
սեան անդէն 'ի սուր սուսերի մաշել զարս և
զկանայս զծերս և զտղայս. և մինչև ցմատար
մահուանս կոտորեցին, և բնաջինջ արարին:

Իսկ Թագաւորն շահաբաս յետ առնլոյ ըզ-
զբերդն

զբերդն գանձակայ և տիրելոյ ամբերկրին, ըսկ
 սաւ ճանապարհ ելանել և գնալ 'ի կողմնս
 վրաց 'ի քաղաքն Թիֆլիս : Էառ ընդ եւր և
 զմնացեալն 'ի զօրացն և յաղգէն (Սմանցւոց'
 որք մնացին 'ի կոտորմանէ բերդին : Խաբեաց
 զնսպատրողականիւք բանիւք տոճեալնց յոյս
 սնոտի ասելով՝ եկայք դուք զկնի բանակի իմոյ,
 զի մի գուցէ ելուզակք մարդիկք ջնաս ինչ առ
 նիցեն ձեզ, այլ 'ի մերոց զօրացս կարգեցից
 ձեզ զօրս պաշտպան զի խնամելով և հովոճե
 լով տանիցեն զձեզ մինչև հասուցանիցեն 'ի
 սահմանս երկրին ձերոյ : և այսպիսի պատրա
 նօք առեալ տարաւ զնս ընդ եւր • և հասեալ
 'ի գաւառն ախսուևու բանակեցաւ 'ի ձորն
 զոր ինջայու ձոր ասէն իվր ջրոյն : և անդէն
 հրամայեաց զօրացն Պարսից կոտորել զմմնս
 մնացեալն յաղգէն (Սմանցւոց' և աւար արա
 բեալ զինչս և զստացունածս՝ և զկանայս և զման
 կունս նց : և արարեալ կատարեցին ըստ հրա
 մանաց շահին զամենայն :

Յեապսորիկ շահաբասն ամիւ բանակաւն
 իւրով չոճեալ յերկրէն ինջայու գնաց 'ի քա
 ղաքն Թիֆլիս, խաղաղութեմուտ և խաղա
 ղութեմեալ գնաց զի միաբանութի եր իմէջ
 Պարսից և Ղրաց :

Ելեալ շահն 'ի Թիֆլիսու գնաց 'ի գաւ
 առն գեղամայ • և բանակեցաւ անդէն բանակ
 արքունի • և ինքն շահաբասն իջավանեցաւ 'ի
 տան մէլիք շահնազարին՝ որ էր 'ի գիւղն մա
 զրայ՝ բնական 'ի նոյն գեղջէն : Եւ էր մէլիք
 շահնազարս յաղգէն հայոց՝ և հաւատով քրիս
 տոնեայ • Իշխան հզօր և փառաւոր • որ արար
 ի իւր ընկալու թի շահին ուց վայելե թագաւո
 յիբ՝ և էր ինքնս բարեկամ և մտերիմ և ար

դոյ առաջի թագաւորին : վնորոյ և թագաւորն
պապոճական և ասնիւ զգեստուք շքեղացու
ցեալ խիւլայեաց . և պարգևեաց նմա զիշխա
սութի մէլիքութե գաւառին . և այլևս դաս
տակերտս և գեղորայս նմա և եղբարց նր : և
զհաստատուն նոմոս գրեց և կնքեաց թագաւո
րականաւ կնքով . և ետ նց զի անփոփոխ լիցի
Ժառանգութիւն այն նց և զաւակի նց յազգէ
յազգ մինչև յաւիտեան :

Իւ անտի յարուցեալ կամնար գնացիւք է
հաս'ի թաւրէյ ամենիւք զօրօքն իւրովք , եկաց
մինչև եմուտ'ի միւստարին . յորում էր թոճա
կանն մեր հաղար և յիսուն և վեց . ապա տուեալ
զամ զօրս իւր գնաց իվերայ շամախոյ' և նստաւ
իվերայ բերդին , շրջապատեալ և պաշարեալ
զնա : և ուց պատմեցաք վասն գանջայոյ' նովին
օրինակաւ պատերազմեալ ընդ շամախոյ էառ
զնա յ () ամանցւոց : և զզօրան () ամանցւոց սրով
կոտորեաց . և զընտանիս և զինչս աւարեալ
յափշտակեաց : և կարգեաց 'ի նմա իշխան ըզ
զ լճիլար խանն . և ինքն չուարարեալ բանա
կաւն իւրով գնաց 'ի թաւրէյ : Իւ 'ի մտանելն
'ի թոճականն հաղար և յիսուն և եօթն . գնաց
շահն 'ի սպահան քաղաք :

Թե որպիսի պատճառանց՞ կոչեաց շահբաս զթագաւորն
Վրաց առ ինքն . և հնարիւք գրուեաց զնոսա :



Թ :

Թ . Բ . Ս . Բ . Ե . Կ . Ս . Թ . Բ .
գաւորութե շահ թահմազին՝ որ էր թա
գաւոր ազգին () արսից : և եղև զօրանալ
այս շահ թահմազիս և բռնանալ իվր այլոց ազ
գար՝ որք շրջաբնակք էին զինքեամբ , որ և բռ
նացան իվր ազգին () ըաց և էառ զպանտանդս
'ի թա

Ջ Աստանդ- և կոչումն Մ ըաց :

'ի Թագաւորաց նց : 'ի Թագաւորէն Թիֆլիս
սու՝ որ էր մեծ սիմոնխանն՝ զդուստրնք և զէզ
բայր նր : և 'ի Թագաւորէն կախէ Թու . որ էր
աղէքսանդրն՝ զորդի նորա , որու մանուկն էր
կոստանդին : և գոյն այս աղէքսանդր Թա
գաւորն այլևս որդիք երկու՝ դաւիթ և գօր
դի սղբա երկոքնս կային առ հայրն իւրեանց
յաղէքսանդր : Իսկ կոստանդինն , որ տուեալ
եղև պատանդ Թգւրին Պարսից շահ Թահ
մազին մնաց անդէն՝ և մնաւ առ նս , մեծացաւ՝
և եղև այր երեւելի 'ի դրան Թգւրին . քանզի
դարձուցին զնա 'ի քրիստոնէականաց հաւա
տոցն 'ի կրօնս մոլար առաջնորդին : Մեռաւ
շահ Թահմազն՝ և Թգւրեաց որդի նորա շահ
խամայէխ ստարի և կէս՝ և սոյանին զնա : յետ նր
Թգւրեաց եղբայր նորա շահ խուսաբանտայ
ինն ստարի : յետ սր Թգւրեաց սորին որդին աշ
խարհաւերն շահաբաս : և կոստանդինս այս
մնաց մինչ 'ի Ժամանակս այս շահաբասիս , և
յորժամ եկն շահն 'ի Թաւրեզ՝ և 'ի նախ
չուան՝ և յերեւան : և գրաւեաց զնս ընդ իւրով
իշխանու Թքն , այս կոստանդինս լէ շահին էր :

Եւ յաւուրսն յորս էր շահն յերեւան և
պատերազմէր ընդ () սմանցիսն՝ որք կային
իմէջ բերդին երեւանու . հարուստն 'ի խորհ
ուրդս չարեաց շահաբաս խորհեցաւ զի և
զԹգւրսն վրաց ածցէ առ ինքն , վս որոյ առա
քէ նց կոչնականս զ'ի նոցանէ տուեալ պա
տանդսն՝ յորոց մի էր այս կոստանդինս՝ զոր ա
ռաքեաց կոչնականս իւրոյ հօրն աղէքսանդրի :
և զհանիս Թահմազդուրին , որ էր եղբայր ա
թաբէկին , զոր նախագոյն յիշեցաք՝ առաքեաց
կոչնական գօրգի Թգւրին Թիֆլիսու : և գօր
դի Թմգւրս էր որդի մեծ սիմոնխանին , որ



յետ ըմբռման սիմոնխանին, զայս գորգիս կարգեցին՝ ի տեղի նր Թգր: Եւ շահն, որ առաքեաց կոչնականս առ Թգրցն Վ ըաց՝ յիշեցոյց նոցա և ասաց, եթէ Տաստատուն կայք ի վր կանխագոյն դաշանցն, զոր նախնիքն մեր պայմանեալ Տաստատեցին, պարտիք աշխատել և գալ յօգնութի մեզ՝ որ կամք՝ ի պատերազմիս Թշնամեաց:

Իսկ Թագրքն Վ ըաց առայսմ գործ վարանեցան, քանզի ոչ կամէին գալ, բայց զինի բազմի խոկման և մտածութե յանձնառին զգալն, ոչ յիւրեանց կամաց՝ կամ յանդիտու թէ, այլ յանձարակութի: Վասնզի ոչ են ինքնակալք զի ընդդէմ կարիցեն կալ () սմանցւոց և Վարսից՝ այլ են տկարք և անգորք: Վս որոյ հարկէ զի միոյ՝ ի սոցուսնց ընդ ձեռամբ լիցին: Եւ առաջ ընդ ձեռամբ էին Վարսից ի ժամանակ շահութամբն. իսկ լալափաշէն, որ էր () սմանցւոց սարդար՝ եկեալ կալաւ զբաղաքսն Վ ըաց՝ և շինեաց ի նս բերդորայս՝ և կարգեաց ի բերդսն ենկիչարիս. քանզի փախոյց զսիմոն խանն: և յետոյ միւս զօրավարն () սմանցւոց ջաֆար փաշէն եկեալ ըմբռնեաց զսիմոն խանն՝ և առաքեաց առ խոնդքարն՝ և անդ սպանին զսիմոն խանն, և զթոռն նորին. և այսպիսեալ պատճառաւ իբաց կացին Վ ըացիք յազգէն () սմանցւոց: Եւ արդ շահն պահանջէ ի սոցուսնց գալ ի հնազանդութի. և պատճառս յօդէ զկանխաւ դաշնադրութին՝ որ ի ժամանակս նախնեացն եղեալ է: և սորա ոչ թէ վս դաշնադրութեն՝ և ոչ թէ յանդիտութի. և ոչ թէ կամաւ՝ այլ յանձարակութի. զի մի գուցէ շահն աւարտեալ զպատերազմն () սմանցւոց. դառնայցէ ի վր Վ ըաց.

խորհեցան այնու հաճել զկամս նր՝ զի թերևս այնուհիկ դարձուցեն զնա յինքեանց. զի մնայցեն 'ի խաղաղութե. և զայն ոչ գետեին թե յապագայն նորին ձեռամբն է լինելոց կոբուստ և զրաւ ինքեանց՝ և ազգին իւրեանց:

Արդ երկոքին թիֆրքս Ա ըաց աղէքսանդր և գորգի ելեալ էկին յերևան տեսանել զշահն. իսկ շահն՝ ույ բնաւորեալ գոյ յազգն նց խորամանկութի. յառաջագոյն սիրով և մեծաբանօք ընկալլաւ զնս, և խիլայեալ պատուեաց՝ զի հաճեցուցե զմիտս նց և զտեսողացն յինքն. և խաղաղութք պահեաց մինչ որ՝ հառ զբերդն երևանայ:

Եւ ապա ըստ դիւթական և ըստ կախարդասար արհեստին իւրեանց դեղ ինչ մահաբար ջամբեցուցեալ է գորգի թիֆրին զի յետ սուղ ինչ աւուրց մեռցի. և գորգի թագաւորս առ ժամուն ոչ է գիտացեալ զայսպիօի հնարակերտութիս, զոր առ ինքն ներդործեալ է շահն: և զկնի այսմ իրագործութես սիրով և պարզօք արձակեաց շահն զգորգին գնալի տեղի իւր: Եւ նա ելեալ յերևանայ գնաց, 'ի սակաւ աւուրս կեցեալ մեռաւ. 'ի տիխիս 'ի քաղաք իւր, ըստ ներդործելոյ և ըստ բաղձանաց շահին: Եւ ազգն և իշխանք՝ որք տեղւոյն էին՝ թիֆորեցուցին 'ի տեղի գորգոյն զորդի նորին զլաւասափ մանուկ տեօք: արդ զրաւ գորգի թիֆրին այսպէ եղև ներդործութք շահին:

Իսկ զաղէքսանդր թիֆւրն կալաւ շահն առ ինքն և ոչ էթող գնալ. այլ ընդ իւր տարեալ շրջեցոյց այսր և անդր. և ինդրէր 'ի սմանէ պատանդս: և քակս այսորիկ աղէքսանդր յանհարս անկեալ էթի կամաւ և թէ յակամայ բերեալ զթոռն իւր, որում անունն էր թամրագ՝ մանուկ

մանուկ տիօք ետ 'ի պանտանդ-ս շահին , ապա շահն հրամանետ նմա գնալ . և աղէքսանդր արձակեալ 'ի շահէն գնաց 'ի տեղի եւր . և թուռն նորին թամրազ մնաց 'ի դուռն շահին . և թամրազս էր որդի դաւթին որդւոյ աղէքսանդրիս :

Միւս ևս պատմութի դաւաճանութե շահաբասին , զոր մեւանդամ արար ընդ թագաւորին Արայ :

Ժ :



Ե Ր Ո Յ Ա Ս Ը Յ Ե Ը Լ

Թգլորն կախէ թու աղէքսանդր եւրով կամաւն տունեալէր զթգլրու թինս եւր որդւոյ եւրում դաւթի , և դաւթին վարէր զիշխանութի թգլրութեն : Իսկ միւս որդին աղէքսանդրու գորգի ռիսցաւ ընդ այն ' և սպան զեղբայրն եւր զդաւթի զի ննքն լիցի թգլր : և աղէքսանդր հայրնոցն կենդանի էր ' ոչ ետ զթգլրութին գորգոյ այլ յինքն գրաւեաց ' և ննքն վարէր զթագաւորութին :

Օ այսու ժամանակաւ խորամանկն 'ի հնարս չարեաց շահաբաս , խորհեցաւ զնորինն հնարս կործանման և երկպառակութե արկանել իմէջ թգլրութեն քրիտոնէ ից : կոչեաց առաջի եւր զկանխաւ ասացեալ զուրացօղն կոստանդին զորդին աղէքսանդրիս ' որ առ շահն էր , և խօսեցաւ 'ի սիրտ նր ըստ ախորժակաց նր և ըստ հաճոյից , և ասաց նմա : Ի՞նչ ընդ քեզ զօրքաւ թագաւորն 'ի մերոց զօրացս ' զորս տամքեզ ' և գնա յերկիր քո հայրենի , և հնարեալ սպանցես զհայր քո զաղէքսանդր ' և զեղբայր քո զգորգի , զի դու լիցիս թգլր 'ի տեղի հօր քոյ ' և վարեսցես զքո հայրենի թագաւորութին :

Իայց այժմ եթէ իմէջ մերոյ աղգես և թէ անդ իմէջ Վրաց աղգին, մի ձևացուցես սակօ գնալոյդ. քո թէ գնամ յաշխարհն իմ զե անդ. կացից, այլ ձևացուցես զքեզ և երևելի պատճառ զայս խօսեսցիս առ իմ որ' թէ առաքեալէ զես շահն այսու զօրօքս՝ զի գնացից 'ի շամախի առնուլ զնա, և 'ի ժամանելն քո յերկիր. քո՝ որոր և յաջօղեսցի. քեզ զայն արացես, եթէ սպանուին հօր և եղբօր. քոյ՝ և թէ առունն շամախու :

Վրդ՝ զայսպեսի պատուէր ընկալեալ օձն դարանակալ, ելեալ զօրօք գնաց յերկիրն կախէթու առ հայրնիւր աղէքսանդր, և յայնմ ժամու ոչ կարաց դաւել՝ զի կարծես անկաւ 'ի միտս Վրաց տեսանելով զանուղղայ գործս նորս, որ և ինքն 'ի նմին ժամու պատրուէ կեաց զմթերեալ խորհուրդս սրաի իւրոյ : և յաղագս զինքն ուղիղ և աննենգ ցուցանելոյ, և հաճելոյ զմիտս Վրաց, 'ի զօրաց հօր իւրոյ յաղգէն Վրաց յոլով զօրս էառ ընդ իւր և ելեալ գնաց իմ ք շամախոյ և աղգն Վրաց յոյժ կամէին զկորուստնն, վնրոյ 'ի ժամ պատերազմին յետսյետս կային և ոչ հաւատարմաբար պատերազմէին, զի գուցէ յայնմ պատերազմի ձեռամբ (Սամանցւոցն լիցի կորուստնն) : Իսկ շարն կոստանդին ծանեալ զայս իրակութի յոգի իւր, և զայն ևս գիտէր թէ զօրօքն Պարսից ոչ կարէ յաղթել զօրացն (Սամանցւոց, և մինչ 'ի խմբի պատերազմին մարտնչէին ընդ (Սամանցւոցն, թողեալ լքեաց զգործս պատերազմին և փախեալ դէպուղիղ յաշխարհն Պարսից՝ և գնաց առ շահն : և (Սամանցիք առեալ իմէջ զմնացեալ զօրսն Պարսից իսպառ կոտորեցին զնս, և աւար հարին զիմ ինչս նց :

Իսկ

Իսկ շահն կրկինանգամ ետ զօրս կոստանդնին եբրև երեսունհազար . և կրկին առաքեաց 'ի հայրենի յերկիր եւր նովին դիտուորութի: և եբրև էհաս կոստանդին 'ի հայրենի յերկիր եւր, ձեացուցանէր զինքն եբրև զղջացեալ յուրացութի, և կամի վերստին դառնալ 'ի բրիտանիութի, վնրոյ եբր զբարեպաշտ որ յօժարեցաւ սրտիւ 'ի շրջագայիլ յեկեղեցիս և 'ի վանորայս Վրաց, և այսու հնարիւք ժողովեաց զբարեմանութս յեկեղեցեաց անտի, յիսաջ զօկիճ զբուրվաւ' և այլ գորինչ կամեցաւ և յետոյ զամ զանութան զայնոսիկ խորատկեաց, և բաշխեաց ոռձիկս զօրացն Պարսից որք ընդ եւր եկեալքէն: Եբրև զայն տեսին ազգն Վրաց 'ի սիրտ և յողի խոցեցան' և իսկոյն կամեցան բառնալ զնա 'ի կենաց. և խորհուրդ արարեալ ընդ աղէքսանդրի հօր նր զն ապանցեն զնա. իսկ աղէքսանդր յապաղէր յայս գործ, և տակաւին մտաւարժէր վն կատարման ելիցն: և մինչ աղէքսանդր յայսմ խոկման կայր' յայտնեցաւ այս խորհուրդ կոստանդնի, և կոստանդինս փութացաւ նախաժաման և սպան զհայր եւր զաղէքսանդր' և զեղբայր եւր զգորգի, և 'ի ձեռն եւր գրաւեաց զիշխանութին, և բռնացաւ ի վր երկրին:

Յետայսորիկ դարձեալ գումարեաց կոստանդին զզօրան եւր, և զերկրին' որ յազգէն Վրաց, և նորումբք ելեալ գնաց ի վր քաղաքին շամախու: Եբրև աւուրցինչ ճանապարհ գնացին, յայնժամ միաբանեալ զօրքն Վրաց' մինչ զճանապարհայն գնային յարեան ի վր կոստանդնի սրախող խող արարեալ կտոր կտոր յօշատեցին զնա' և բարձին զչարն 'ի միջոյ: Իսկ զօրքն Պարսից որք է կոստանդնու եկեալէն,

սաստիկ խոժ ուեալ ընդ այն , կամեցան յառնել 'ի պատերազմ ընդ զօրացն ॥ րաց : Իսկ զօրքն ॥ րաց ցուցին զԹուղթ ինչ գրեալ երթ թէ 'ի շահէն առաքեալ առ նն առնել զայն , որով պատասխանեցին ॥ րացիքն Պարսից թէ հրամանաւ շահին արարաք զայս , և ապա թուլացան կողմն Պարսից' և ոչ պատերազմեցան , այլ ցրուեալք 'ի միմեանց գնացին յազգն եւրեանց և 'ի տեղիս : Իւ եղև առաջին և երկրորդ գայն և սատակումն կոստանդնիս այսորիկ 'ի Թուլականութե մերում հազար յիսուն և չորսին :

Իսկ զիշխանութի թգրութեն կախե թուրնկալաւ յեւր հրաման հարսն աղէքսանդրուկինն դաւթի , և այս յղագօ երկուց պատճառաց : Եւսն զի այնպէ կամեցան իշխանք աշխարհին , զի կին էր դաւթի , որում առնեալ էր աղէքսանդր զթգրութին : և երկորդ , զի մայր էր Թամրազին' որ էր մնացեալ ժառանգ թգրութեն , երկ զաւանդապահ պահելով զթգրութին որդւոյիւրոյ Թամրազին' որ տակաւին 'ի պանդանդի կայր առ շահն : որև զկնի առ ման բերդին գանջայու ուն յառաջադոյնն շահակեցաք առաքեաց շահն զԹամրազ' 'ի կախե թ' որ եկեալ թգրեաց 'ի տեղի հարցիւրոց :

Իւ պատճառ առաքելոյ Թամրազիս 'ի կախե թ այս է , զի շահաբանս յորժամ իւրով հնարաւորիւ ներդործութէն սպանանելեալ պայն Թամրազիս երեքին որդւովքն նք երեքաց ձեռօք , և մնաց տեղին նյ ունայն և Թամրազս էր ժառանգ տեղւոյն և կայր առ շահն 'ի պանդանդի , վսրոյ զնա առաքեաց : Եւ լև քաջգիտեր շահն' զի թէ յազգէն Պարսից առաքեսցէ իշխող աշխարհին կախե թ ու ոչ ընդ

ԸՆԴՈՒՆԻՆ ԻՆԽԱՆՔԻՆ ԿԱԽԵԹՈՒ , ՎԻՈՐՈՅ ՂԵՄԱՄ
ՐԱԴՍ ԱՈՒՄՔԵԱՅ :

Պատմութիւն և պատճառ աւերման աշխարհին Արաց . և
մահուան Լուսաւի ԹՊՐՈՒՆՆՅ : որ եղև ձեռամբ
առաջին Հահարասին :

ԺԷ :



ՈՐ Ժ. ԱՄ Դ. Ա. ՉԱԿ

գորգի ԹՊՐՈՒՆՆՅ ՐԱՅ յԵՐԼԱՆՍՅ՝ Լ ԳՆԱ
ցեալ է՛ՏԱՍ՝ Ի ԹԻՓՆԻՍ՝ ոչ ապրեցաւ .
այլ փութով մեռաւ . քանզի դեղեալէր
զնա շահաբաճան ունի՛ Ի վեր անդր պատմեցաք :
Իւ ինխանքն ՐԱՅ կարգեցին՝ Ի տեղի գոր
գի ԹՊՐՈՒՆՆՅ զնորին որդին ԹՊՐՈՒՆ՝ որում ա
նունն էր լաւասափ՝ Ի տիս տղայութե՛ն : Իւ եղև
զի հրամանաւ լաւասափ ԹՊՐՈՒՆ կարգեցաւ
այր ոմն իվր՝ քաղաքին ԹԻՓՆԻՍՈՒՆ՝ Ի գործ մով
րովութե . որում այժմ տարուղայ ասեն . և
էր մովրով կարգեալ այրս , այր հանձարեղ բա
նիւ՝ և կորովի խորհրդով . և խելամուտ՝ Ի
գործս իւրայլև հսկայաձե՛ ուժ ընդակ՝ քաջ
պատերազմող՝ և անպարտելի ախոյեան . որ՝ Ի
կողմն յօրև միաբանէր՝ զմիւս ներհակ կողմն
յաղթէր . և զընդդիմակայ զօրսն իբրև զբան
ջար կոտորեալ ընդ երեսս դաշտաց Թափէր .
որոյ քաջութինն յառաջի կայդ՝ Ի բազում տե
ղիս լինի յիշեցեալ . յորոց զհաւաստինն իմանաս :
Ի յԱ այրս այս մովրով՝ ոչ էր ինքն ազնի որդի,
և կամ ինխանազուն՝ և յերևելի յազգէ՛ այլ՝ Ի
հասարակ և՛ Ի խոնարհ ազգէ՛ զօր ազգն ՝ ՐԱՅ
գլխի աքեն : Ի այր և քոյր մի այս մովրովիս
նորահաս կոյս՝ չքնաղ և գեղեցիկ՝ բարեաւե
սիւ և բարեյօդ դիրք մարմնոյն և հասակին :

Իսկ Թգլըն լաւասափ զարգացեալ է հաս
 'ի չափ հասակի հնդեռուսան և վեշտասան ամաց
 աւելի կամ պակաս . յորում ժամանակի շար
 ժումն ցանկական մասին զօրանայ 'ի մարդն
 և ընդ իւրով իշխանութի գրաւեալ յածե
 ցուցանէ : Ի սոյն ժամանակի Թգլըն լաւա
 սափ հաճեալ 'ի քոյրն մովրովիս մուլեգին շա
 ղաշարութի սիրէր զնա՝ և խաղայր լէ նմա 'ի
 ծածուկ . բայց ոչ էին զուգաւորեալք . այլ
 էին կոյք երկքեանն լաւասափն և աղջիկն :
 Եւ գործս այս թէպէտ 'ի ժամանակս ինչ
 մնաց 'ի ծածուկ՝ այլ յետոյ յայտնեցաւ . ըստ
 հրամանաց ՏՆ, թէ ոչինչ է 'ի ծածուկ որ ոչ
 յայտնեցի . որև յետոյ է հաս յակառջս մով
 րովին լուրս այս : Եւ յլև ոմանք՝ որք էին նա
 խանձաւորք և ռսակալք ընդ մովրովին . որ
 դիք չարեաց և յուզողք խռովութեց . յիշե
 ցին զայն առաջի մովրովին, և երեսժեծանք
 արարին նմա . և մովրովն յայտնանէ պատճառէ
 վշտացեալ ոգւով չափ և թախծեալ սրտիւ .
 զմահ անձին խողրէր և ոչ գտանէր : Եւ զկնի
 բազմաժամանակեայ տրանջանաց, որ 'ի ծա
 ծուկ . ապա յայտնի և համարձակ ընդ նման
 խօսէր, և ասէր . Թէ ես սպանելոց եմ զլաւա
 սափ . քանզի ոչ կարեմ՝ փանիլ զայսպիսի նա
 խատինս՝ զոր ընդ երեսս՝ իմ ասեմն . զի ամ
 թալի առակեղէ իմէջ աշխարհի : Իսկ իշխանք
 և մտերիմք Թգլըն լաւասափու իբրև լսէին
 զբանս մովրովին . երկուցեալ խուսափէին
 'ի նմանէ . քանզի գիտէին եթէ կարող է ար
 նել գործով . զորև բանիւ ասէ : վն որոյ 'ի
 դիպող և 'ի պատշաճաւոր ժամու աղաչէին
 զլաւասափ ողբքանօք և մաղթանօք իբաց
 կալ յայնպիսւոյ գործոյն, որ ոչ իսկ բնաւ
 վայելէ

վայելէ թգրակնի անուան : Կակ բանք սպառնալեացն մովրովին մի գուցէ թէ գործովք արդիւնասցին : Եւ 'ի բազմաց թախանձանաց իւրոցն քարեկամաց . լաւասափ ասաց , ոչ կարեմ' իբաց կալ 'ի կուսէն յայնմանէ . բան զի ոգւով չափ սիրեալեմ' ես զնա . բայց երով հետեւ այդպէս ասէք . ահա ոմ' և գիտակ իսկ էք զի ոչ ես զկեն արարեալեմ' և ոչ կոյսն այն զայր : արդ խօսեցարուք զնա օրինաւորօք կարգօք ինձ 'ի կնուի . և դիք զնշան զի արացուք հարսանիս . և բարձցի զտրաունջն 'ի ձէնջ : Եւ 'ի բանս լաւասափին հաճեցան իշխանքն ամբն . նա և մովրովն իսկ . և ուրախացեալ փառս մատուցանէին Մ' զի բարձաւ զխոռ վուծին 'ի միջոյ . և այսու բանիւ եդին զնշան աղջկանն այնմիկ վն կնութե լաւասափու : Իսկ եղբայր աղջկանն մովրով' յոյժ ուրախացեալ ընդ գործն այն' և գոհանայր զլաւասափէն . ասէր զենքն ծառայ և սլաշտօնեայ նմա . և թէ զանձն իմ' և զկեանս եդեալ եմ' 'ի ճա նապարհս և 'ի հրամանս նր' . որովհետեւ ոչ արհամարհեաց զանտոհմութիս իմ' , զի ինձ որ դի գլեխի ասէին . այլ այնչափ հաճեցաւ յիս' մինչ որ զքոյրն իմ' էառ 'ի կնութի և 'ի թա գուհութի ինքեան :

Իսկ բիրտ և հպարտ և ինքնասաճ ազգն Սրաց' որ զտոհմութիւնս և զնախնի հարցս եռս քննեն' և խուզեալ որոնեն . ոչ հաճեցան լէ այս բան : քանզի կանայք իշխանացն' և ազնիորդւորն' և թաւատացն . որք էին մեծազգիք և դատերք իշխանաց յառաջն . և արդեանս ամա նակի կին և մարք իշխանաց : լէ սոցին և արք ոմանք ևս : ոչ բնաւ հաճեցան' և ոչ եղեն կամա կից մյսմ գործոյ . քանզի երևելի կանայքն ասէին

ին արանց և որդւոց իւրեանց . թէ զհարդ մար
 թի մեզ՝ որ եմք դատերք այս անուն ազնիո՞ր
 դեաց . և կանայք և մարք այս անուն իշխա
 նաց՝ գնալ յերկրպագութիւն յողջոյն աղջկան
 միոյ՝ որ դուստր է գլխի առն միոյ շինականի :
 Ըրդ՝ եթէ հաւանեցուցանէք զթգլւրն՝ դառ
 նալ յայդմ՝ խորհրդեանէ՝ և առնուլ իւր զկին
 ՚ի դատերաց թգլւրց՝ բարւոք է . ապա թէ ոչ
 այսպէս՝ մեք ևս ոչ կամիմք գնալ յողջոյն և
 յերկրպագութի գլխի աղջկան միոյ . զի
 ծանր է մեզ գործդ այդ . և եթէ կամիք ար
 ձակեցէք զմեզ ՚ի կնութէ ձերմէ . և այլ կին
 ստացէք : Եւ եղև այս շփոթ և աղմուկ և խռ
 վութի մեծ և անփարատելի իմէջ ազգին
 Արաց զբազում աւուրս : և որքան հնարէին
 կողմն հաւամողացն ոչ կարէին ՚ի հաւանութի
 ւածել զանհաւան կողմն . վն որոյ յանհնարս
 անկեալ խաղաղասէրքն անկանեին յոտս
 լաւասափին , և աղաչէին . զի թերևս խա
 զաղութք արասցէ ելս իրացն : Իսկ թգլւրն
 ևս անձար մնացեալ առ այսմ . ասաց նոցա
 դուք գիտէք . և իշխանքն առաքեցին յեր
 կիրն դադիանու և զդուստրն դադիանու
 թգլւրին նշանեցին վն կնութէ լաւասափին
 և այսու պատճառաւ իրաց էկաց լաւասափ
 ՚ի մովրովի բռնեռէն :

Եւ մովրովս այս՝ որ յառաջնում նուագին
 զմեռնէր բնակեցուցեալ յինքեան ՚ի զօրացն
 չար այսու . և արդ՝ այսն այն առաջին զեթն
 այլ այսս չարագոյնս քան զինքն առեայ ընդ
 ինքեան , և եկեալ բնակեցաւ ՚ի մովրովս յայս .
 և եղև սորայս վերջինն չար քան զպառջինն :
 վն զի փրոնգայր իբրև զպատերազմասէր
 երիվար . և գոչէր իբրև զառիւծ . և շնչէր
 իբրև

Իբրև զհրաշուհ վիշապ իվր լաւասափու . և խնդրէր սպանանել զնա յաղագս երկուց պատ ճառաց : առաջին՝ վն նախկի խայտառականաց քեռն իւրոյ . և երկրորդ՝ վն վերջին անարգասացն նմին . և խնդրէր, թէ զհարդ՝ ՚ի դէպ ինչ գտցէ զի հարեալ սպանցէ զլաւասափն :

Իսկ իշխանքն մտերիմք՝ և ցաւակից քբարեկամքն զգուշանային, և պահէին զլաւասափն . և զգուշացուցանէին զնա՝ զի պահեսցէ զինքն ՚ի մովրովին : այլև խրատէին զնա զի սպանցէ զմովրով : Իւր իբրև հաստատեցին իշխանքն և լաւասափն իմէջ իւրեանց զխորհուրդ . սպան ման մովրովին : այսու դիտաւորու թք, յուուր միում՝ ՚ի գինարբու խրախու թե արբուցին բազում գինի մովրովին՝ զի գուցէ փոքր ինչ լուծցի ՚ի զօրութի, ուր զի դիւրաւ սպանցեն զնա . և իբրև էհաս ժամն՝ էլ թագաւորն արտաքս . և իշխանացն ովոր գիտակք էին նք ևս էլին մի մի արտաքս : և կոչեցին առ լաւասափ զոմն դահիճ, որ հրամայէր նմա լաւասափ գնալ ՚ի ներքս և սպանանել զմովրով : և ՚ի ժամունն մինչ նա ընդ դահիճին զայն խօսէր . լուաւ զայն բանն ոմն ՚ի ծառայիցն մովրովին . որ էր յառաջընթաց փայեկ նորին . զոր ասեն շաթր . և իբրև զթուչուն թռուցեալ ՚ի ներքս ՚ի տուն անդր ուր էր մովրով և ասաց նմա . ահաւասիկ գան առ ի սպանանել զքեզ . քանզի այսպէս հրամայեցաւ վասն քո ՚ի թագաւորէն : Իսկ մովրով իբրև լուաւ ՚ի սասախկ երկիւղէն այնպէս եթող նա զգինին ուր թէ ոչ եցէ բնաւ արբեալ զգինի : և էր յայնմ ժամու գօտելոյժ և գլուխ իբաց նստեալ . և ՚ի տագնապէն այնպէս բոկոտամք՝ և գօտելոյժ՝ և գլուխ իբաց ՚ի վերոստեալ ՚ի տեղւոյն ընթացաւ յախու

խոռ երիվարաց Թիւորին . ուր արքունի երիվարքն կապեալք կային՝ քանզի մերձ էր . և զի ինքն մովրով փորձիւ գիտէր Թէ յերիվարացն , որք է փութագնաց և սքընթաց՝ էարկ դանդանավանդ՝ ՚ի բերան երիվարին . և ՚ի ներքս՝ ՚ի յախոռի անդ հեծաւ իվր երիվարին ջլով միայն առանց Թամբի . վն երկիւղի մա հունան՝ զի մի ըմբռնեալ սպանցի . և այնպէս հեծեալ յերիվարն եւ արտաքս ՚ի յախոռէն ; Թոյլ տունեալ զերեօանսակ երիվարին և մտրա կեաց զնա՝ զի առեալ զինքն փախիցէ : Իսկ օդտ պարիկ երիվարն այն . իբրև զերկնագնայ Թրու շուն առեալ զնա ընթացմամբ գնայր ոչ եբրև իվերայ երկրի . այլ իբր ընդ երեսս օդոյ : Իւ Թէպէտ բազումք ՚ի զօրաց լաւասափին ելին յերիվար և ընթացեալ զհետ . ոչքք ՚ի նոցանէ կարաց հասանիլ՝ բաց յերկուց ոմանց : Իսկ մովրով խօսեցաւ ընդ նոսա կալ՝ և զտեղի ու նիլ պահ մի . իբրև կացին եկողքն . սկսաւ խօսիլ ընդ նոսա մովրով բանս մաղթանաց . ոպ զի մի ըմբռնացեն զինքն՝ այլ Թոյլ տացեն նմա գնալ . և այնքան խօսեցաւ մինչև էարկ զգութ և զողորմ՝ իսիրոսս նց՝ որք ոչ ըմբռնեցին՝ այլ Թոյլ ետուն : և նա անցեալ գնաց ՚ի քաղաքն Թիֆլիս . ՚ի գիշերին էմզաւ և ՚ի նմին գիշերին ել . էառ ընդ իւր զայր ոմն Թարգման . զի ինքն ոչ գիտէր զայլազգեաց լեզուն : գնաց ՚ի գաւառն ախատեռ առ սուլթանն զաղախաց՝ որնս տէր ՚ի նմին գաւառի . և ծանոյց նմա զամ անցունձս իւր՝ և խնդրեաց ՚ի նոցունց առաքել զինքն առ շահաբասն : Իւ նորա լլան անպատում ուրախութիւն՝ պատրաստեցին յինքեանց արօ յողովս . և առեալ զնա հասուցին առ շահն՝ որ էր յայնժամ՝ ՚ի զրգ լաղաճ՝ անունանեալ տեղին՝ որ է յերկրին շամխու :

Եւ զազախ զօրականքն՝ որք տարան զմովրով՝ յանդիման կացուցին շահաբասին. և շահն խօսէր ընդ մովրովին՝ և հարցանէր զոմն և զուստին և զվնէրն. և մովրով ամենայն հարցունածոց առնէր զպատասխանի կարգաւորօք խօսիւք: և ասէր, եթէ ընդ հովանեաւ տէրու թէ քոյ ընկալեալ ընդ ունիցիս զիս. ես բազմաց գործոց և իրաց պիտոյանամ՝ ՚ի ծառայութի քո: և կացեալ ժամանակս ինչ անդէն շահն իւրով բանակաւն. և ապա չոճեալ անտի դէպ՝ ՚ի սպասան. տարաւ ընդ իւր և զմովրովն. և օր աւուր յառաջ խաղալով հանդարտութի գնացին, մինչև հասին ՚ի սպասան: և յամի դիպօղ ժամու շահն խօսէր ընդ մովրովին և տեղեկանայր ՚ի նմանէ զորպիսութի աշխարհին՝ և ազգին ՝ ՝ ըաց, զամրութի երկրին, և զիմաստութի թգւրցն, և եշխանացն. զբազմութի ազգին, և զբաջութի զօրացն. և այլ զորինչ կամէր: Եւ կացին անդէն՝ ՚ի սպասան. էանց այն ամն՝ և մտին յամն երկրորդ. ասէ շահն առ մովրով. ահա անցին աւուրք յօլովք. արդ որով կերպիւ յօդեցուք զպատճառս՝ որպէս զի այնու պատճառաւ զօրածողով լեալ գնացուք իվր ազգին ՝ ՝ ըաց:

Իսկ մովրով յամի կամէր զայն քէնն առնուլ ՚ի լաւասափէն. որ վն վատանունութե և անարգանաց քեռն էր. որոյ սակս և եկեալն իսկ էր՝ ըստ նմին ճանապարհի և կերպի խօսեցաւ. և զտուն ետ շահաբասին՝ և ասաց: Եւ լաւասափէն քոյր մի թգւրագն նորահաս կոյս չքնազագեղ և գեղեցկատեսիլ. և ամիւ ունիսութի վայելուչ: որ վայելէ ոչումէք՝ բայց միայն տեսքն իմում օրքայի. արդ խնդրեա զնա քեզ ՚ի կնութի. և յետ գալոյ կուսին զմայրն ևս

ևս խնդրեսցես պատճառաւ կուօին. և յոր
 ժամ եկեսցէ մայրն՝ զմայրն ևս արգելցես
 աստ պատճառաւ կուօին. և նոքօք դիւրինէ
 որսալ զլաւասափ՝ ի կորուստ: արդ՝ եթէ այս
 խորհուրդ այսպէ՛ առցէ զկատարումն՝ բարւոք
 է. զի դիւրին է և հեշա. և եթէ ոչ լու՛իցեն.
 և ոչ տացեն զաղջիկն քեզ. յայնժամ չտալն
 նց եղիցի քեզ պատճառ. գնալոյ ի վերայ նց:

Իսկ անվթար կամարարն սատանայի՝ երկ
 րորդ սաբիւռոսս այս շահաբաս՝ յետ ընդու
 ներոյ զայսպիսի խրատս՝ ի մովրովին. գրեալ
 առ լաւասափ և առ մայրնը՝ վն քեռ լաւասա
 փին զթուղթ սերոյ և ողջունի. որ՝ ի վերոյ ու
 նէր բանս իբրև զկենաց. բայց՝ ի ներքոյ լիւ
 հրաւէր մահու: և գոյացու թի բանի թղթոյն
 էր ըստ այսմ օրինակի:

Կամիմք ճմարտութի՛ զի հաստատուն և
 անդրդու՛ելի լիցի թգլուութին մեր և ձերդ.
 և սեր և միաբանուի երկուցս ազոնց Պարսից
 և Ղրաց. և մեք զամ իշխանաց և աշխարհաց,
 կողմանցդ այդոցիկ զվերականցութի յանձնես
 ցուք՝ ի ձեզ. զի դուք հոգայցէք՝ և վարիցէք
 զթգլական զիշխանութի հիւսիսական կող
 մանցդ՝ իսկ մեք զայլևս կողմանս հոգացուք:
 Եւ սին այսմիկ միաբանութե նշան և պատ
 ճառ լիցի այս. զի զօրիորդ դուստրդ ձեր բե
 րիցէք առ մեզ: նախ զի լիցի կատարումն գոր
 ծոյս այսորիկ նշան և շաղկապ միութե երկուց
 ազանցս: Երկրորդ՝ դշխոյ և թուրուհի լիցի ամի
 ազգին արեաց: Եւ որ ըստ այսմ օրինակի գրեալ
 զթուղթն առաքեաց յաշխարհն Ղրաց՝ իբր
 դաբն տիխիս առ լաւասափ՝ և առ մայրննը:
 Իբրև ընթերցան զգիրն, ծանեան զի թելա
 դուրութի և թշնամութի մովրովին դուաճա
 նութի

Նուրթի էր ամ բան թղթոյն . Ոչ զինքեանց
 գնալն և ոչ զաղջկան տալն կամեցան . քանզի
 ասաց մայր լաւասափին . 'ի ժամանակին՝ յոր
 ում էիր յերևան քաղաքի 'ի պատերազմի . կո
 չեցեր զմեզ առ քեզ բարեկամութե պատճա
 ռաւ . և մեք անկեղծ սրտիւ իբրև 'ի ճշմարիտ
 բարեկամ և 'ի թգլոր եկաք առ քեզ և դու
 զգործ թշնամւոյ գործեցեր ընդ մեզ . զի դե
 ղով զայրն իմ սպաներ՝ և զիս խայտառակեցեր .
 արդ մեք՝ որ զայսպիսի գործս տեսաք 'ի քե՛ն . զի
 արդ վստահասցուք միւսանգամ գալ առ քեզ .
 արդ եթէ ստուգիւ զհաստատութի և զհան
 գիստն մեր կամիս, ուր ասացեր . մի նեղեր զմեզ՝
 և մի խռովեցուցեալ վրդովեր զխաղաղութիւն
 մեր . այլ թող զմեզ կալ 'ի հանդարտութե . զի
 այս փոքր իշխանութիս մեր բաւական է մեզ
 'ի պէտս կարեաց մերոց . ողջ լեր : Եւ պա
 տասխանիս այս եկեալ առ շահաբասն մինչ էր
 'ի սպահան . յորում ինքն և մովրովն խորհէին
 և խոկային զօրհանապազ զաւեր աշխարհին
 Որաց և զանկումն թգլորութե նց : Եւ զպատ
 գամն՝ զորնախ գրեաց առ նոսա շահն . երկիցս
 և երկիցս կրկնեաց . և առաքեաց առ լաւասափ
 և առ մայրն նորա . զի թերևս կամ զլաւասափ
 կամ զմայրն և կամ զքոյրն ածցէ յիւր ձեռն
 և ոչ կարաց :

Յետ երկց անգամ գնալոյ և գալոյ պատգա
 մացն իբրև ոչ եկին . այնուհետև զերեսս իւր
 գարձուցեալ շահն դէպ յաշխարհն Որաց .
 ժողովեալ զզօրս իւր չուարարեալ 'ի սպա
 հանայլ իւր ունելով զխրատատուն չարեաց
 և աշխարհաւերն զմովրով . ելեալ 'ի սպահա
 նայ կամկար և հանդարտ գնացիւք հասին
 մինչև՝ յերկիրն զարաբաղու 'ի քաղաքն գան
 Զայ .

Չայ. և անդէն զտեղի առեալ կացին զամառնս :
 Եւ ասէր շահն ընդ մով ըովին, արդ անցին Եվր
 ժամանակ ք բազումք՝ երբ լինիցի զի տարցես
 զվեզ 'ի Վ ըացտունս պատասխանեալ ասէր մով
 ըովն տակաւին համբերեա՝ զի արդ ևս ոչ է ժա
 մանակ, և յորժամ եկեսցէ ժամանակն, ես
 ինքնին յուշառնեմ քեզ գնալ անդ : Եւ զայս
 վսայն ասէր մով ըովն թէ ոչ է ժամանակ՝ զի
 ամառն անցցէ և ձմեռն եկեալ Եվր հասցէ՝ և
 ծառք մայրեացն տերև աթափք լիցին, զի դիւ
 ըին լիցի զօրացն Պարսից ձիով խաղալ մտանել
 յաշխարհն Վ ըաց : Եւ Եւ ազգն Վ ըաց՝ որք փա
 խուցեալք և ամրացեալք և գաղթեալք իցեն,
 յամուր վայրս և 'ի փապարս և 'ի դժուարին
 տեղիս աշխարհին, 'ի խստութենէ ցրտոյ և
 ձեան ձմերային ժամանակին, և 'ի նեղութե
 նէ սովու և այլ կարեաց, ոչ կարացեն տեւել
 ցրտոյն և կալ յամրոցսն, այլ դարձցին 'ի բնա
 կութիս իւրեանց 'ի ձիախաղաց տեղիսն, ուն
 զի դիւրին լիցի զօրացն Պարսից յափշտակո
 ղաց և աւարչաց խաղալ ձիօք և առնուլ յաւա
 ըի զնոսա : Որև առ յապայն կատարումն գոր
 ծոյն ըստ օրինակի նախագոյն խորհրդեան նր
 կատարեցաւ :

Իսկ ազգն Վ ըաց իբրև լուան զգալն շահին
 Եվր իւրեանց, նկասն մտախոհ լինել վն էլից
 իրացն, և խորհեցան զմիաբանութի առնել լ
 իրեարս երկոքին թգւրքն . լաւ ասափ՝ որ էր
 տէր թիֆլիսու և քաութլայ. և թամրազ, որ էր
 տէր կախէթու և գրիմայ, ուն զի իրեցաց օգ
 նականութք կարացեն դիմակայել Պարսից :
 Եւ 'ի պատաճառս այս առաքեցին լաւ ասափ և
 իւրքն 'ի կախէթ՝ և կոչեցին զթամրազ 'ի թի
 ֆլիս վն միաբանութե : Իսկ թամրազ՝ զի
 7 Է զմնաս

զմնաս բաժանման և դերկատութե՛ն, բազում
անգամ կրեալէր. նա և զվիշտ և զթշնամութե՛ն
ազգին Պարսից՝ որ յոլով անգամ արարեալք
էին նմա՝ գիտէր. հոգւով չափ յօժարէր՝ ի միա
բանութի : վսորոյ յարուցեալ էին՝ ի թիֆլիս.
որոյ գալն եղև ուրախութի անպատմելի լաւա
սափին և իւրոցն : որև արարին զուխտ և զդա
շինս լինիլ միաբան և միախորհուրդ. և զան
ճինս գնել ի վրձն երեւոյց՝ և մեռանիլ վս անու
անս Վի :

Յաւուրսս յայտոսիկ, որ էին թամրազ՝ ի տրվ
խիս. լրտեսքն շահին. զորինչ լուան և տեսին,
գնացեալ տարան զհամբաւն շահին : և կամա յօ
ժար կամարարն անկելոյ արուսեկին շահաբաս
առեալ զնիւթ՝ ի նմանէ զսորագիւտ հնարս
կործանման և երկպառակութե՛ն առնէ թգւո
րութե՛ն քրիստոնէից : քանզի մինչ էր՝ ի գան
ջայ քաղաք զետեղեալ իւրովն բանակաւ.
սկսաւ աստիւս առաքել զթուղթս պատրա
նաց և խաբէութե՛ն. ոսյ յառաջագոյն՝ ի սպահա
նայ. սոյնս և այժմ՝ աստի. որ ի վերոյ ունէր
զողջոյն զսէր և զխաղաղութի. և ի ներքոյ զպատ
րանս և զխաբէութի և զնենգութի. գոնեայ զի
յերիցն զմինն արկցէ՝ ի ցանցս իւր. կամ զլաւ
սափի. կամ զմայրն, և կամ զքոյրն, և ոչ կարաց :

Եւ սորագիւտ հնարն այս էր. զի զթուղթն
պատգամաց՝ զոր յայտնի առաքելր. ընդ նմին
ժածկաբար միւս այլ զթուղթ ժածկեցելոց
խորհրդոց և նենգութեց գրէր առ լաւասափ
և առ թամրազ ժածուկ՝ ի միմեանց : և առ
լաւասափ գրէր թէ մի հաւատար գու թամրա
զիդ՝ և մի միաբանիւր ընդ դմա՝ զի դա թշնամի
քո է՝ և կամի բարեկամութե՛ք դաւելլ և սպանա
նել զքեզ՝ և տիրել աշխարհին քում. ոսյ ինձ

Ծանուցեալ է զայս խորհուրդ. արդ մինչ դեռ
 չես սպաննեալ փութացեալ դու սպան զնա՝
 զի դու տիրեսցես երկրին քում և նր. նա և
 ես քեզ ոգնական եմ. եթէ զօրք պիտոյանան
 քեզ՝ և թէ գանձ. զի ննձ գոյ յօժարութի՝
 զի դու տիրեսցես երկրի նր: Սոյն և ըստ
 այսմ օրինակի գրէր և առ թամրազն ծածուկ
 ՚ի լաւասափէն. դու սպան զլաւասափ՝ և դու
 տիրեսցես երկու աշխարհին: Երեքանգամ
 առաքեաց առ նոսա զայսոսիկ թուղթս
 զյայտնին և զգաղտնին իմիասին. և լաւասափ
 և մայրն իւր ոչ ինքեանք գնացին, և ոչ զաղ
 ջիկն առաքեցին:

Իսկ զծածուկ թուղթան՝ զորո մն միմեանց
 ընկալեալ քէին թամրազ և լաւասափ պահեալ
 թւնէին առ ինքեանս. և տակաւին մտալարժ
 ջինէին իմանալ զճշմարիտն և զսուտն: և ՚ի
 իննամոյն Մ. Երկոքեան թգւրքն յայտնեցին
 զխորհուրդս զայս միմեանց. նաև ցուցին ըզ
 թուղթան՝ զոր առաքեալէր նց շահն: և ՚ի տե
 սանէն իմացան՝ և ծանեան ստուգել զթշնա
 մութի շահին՝ որ առ ինքեանս: և փոխանակ
 թշնամութեն զսէր անխղելի և զբարեկամութի
 անքակտելի հաստատեցին իմիջի իւրեանց: Ս
 զի լաւասափ զքոյրն իւր՝ զոր խնդէր շահն՝
 ետ ՚ի կնութի թամրազին. զի նախկին կինն
 թամրազին մեռեալէր: և արարին անդէն հար
 սանիս թամրազին և քեռ լաւասափին՝ որոյ
 անուուն էր փարի: Յետ հարսանեացն՝ թամ
 րազ և լաւասափ գնացին ՚ի մցխութալ՝ որ է
 աթոռ և պատրիարգարոն իւրեանց. և
 կրկնակի երդուան, միաբան և միախորհուրդ
 ընել և պատերազմիլ ընդ Պարսից: Եւ ՚ի լի
 նիլն այսմ ամի: Թղթաբերքն Պարսից որք
 յայտ.

յայտնի եկեալք էին. և լրտեսքն որք 'ի ծածուկ գնացեալ պատմեցին շահն. և նա 'ի խոր խոցեալ լինէր 'ի սիրտ և յոգի: զի ննքն քանիցս անգամ խնդրեաց զաղջիկն, և ոյսբան զօրօք վնսր եկն. ինքեան ոչ ետուն, այլ թամբազին:

Առջեաց շահն զմովրոյն և ասէ ցնա՝ այսոքիւք ամենիւք զօրօքս ածեալ բերեր զմեզ մինչև ցայս վայր. և զաղջիկն, զորմէ ասէ իր, ահա տեսեր զի ոչ ետուն ինձ՝ այլ թշնամուոյ իմոյ. որև ծառայից իմոց հազիւ թէ հաւասարի: Ըրդ ծաղը և այսն կատականաց արարեր զիս ամի աշխարհի. և եթէ ոչ տարեալ մուծցես զիս յաշխարհն յ ռաց. և 'ի ձեռս իմ գրաւեսցես՝ զերկիր նց. գիտեա դու յանձն քո՝ զի չես մնալոց կենդանի. այլ յօդ յօդ բաժանելոց է մարմին քո ամ: Եւ մովրով ետ զպատասխանն՝ եթէ ոչ տարայց զքեզ յերկիրն յայն՝ այդպէս առնես. և թէ տարայց զինչ առնես: Ըսէ ցնա շահն, ամ խորհրդական և նախկնաց նախարարաց իմոց բուն իսկ գլուխ՝ և նախապատիւ՝ և գերագոյն քան զամեն դու ես լինելոց: Եւ խրատովն մովրովի համբերեցին մինչև 'ի դեկտեմբերի ամիսն, մինչի յաւազ տօնսն. որ եկեալ է հաս ձմեռնային ժամանակն՝ և ցուրտն սաստիկացաւ. և եկեալ ձիւնն՝ կալաւ զգլուխս լերանցն՝ և զձանապարհս փախստեանն: և յամրոց մտեալ արքն նեղեալք՝ ի ցրտոյ իջին՝ ի շէնս և 'ի գեղըրայս. և տերեք ծառոցն թափեցան, որ ամ տեղի աջաց ակներև տեսանելի եղև: Ըպոս ասաց մովրով ցաշն. արդ ահա այժմ գնաս ցուք յաշխարհն յ ռաց՝ զի այժմ է ժամա նակն. և չուեալ 'ի գանձակ բաղաքէ եկին՝ ի սահմբնս կախեթու՝ որ է երկիր թամբազին:

Եւ ձանապարհ երկրին կախեթու իմէջ ձո

րոյ մտանէր՝ ընդ որ անցանէին՝ և ապա մտա
նէին յերկիրն. և էր այննեղ և նուրբ և դժու
րին վայր երկու. իսկ կողմունք ձորին բարձր և
բարավէժ լերինք. և մացառուտ և թաւ
մայրի. լեռ մարդ և ձի ոչ կարէին գնալ: Օ որ
թամրազ և լաւասափ եկին բազմօք զօրօք կա
լան զկիրձա ձորոյն՝ և կանգնեցին զպարեսպ
ամուր. քարիւ և փայտիւ. և ՚ի ներսին կողմա
նէ շինեցին զտեղի պատերազմի ուստի ՚ի ներ
քս կալով ինքեանք պատերազմեացին ընդ
թշնամեացն՝ որք արտաքոյ:

Եւ բանակն Սարսից յարձակ վայրի հան
դէպ ձորոյն բանակեալ էր: Իբրև տեսին թէ
Ս՝ րայիքն կալան զանցս ճանապարհին. ան
ձար եղեալ ՚ի տարակուսի մնացին: և շահն
դարձեալ կոչեաց զմովրով և սպառնացաւ
նմա զմահ. նաև մովրովն ինքն ևս մնաց ՚ի տա
րակուսի: Եւ յետ երկուց աւուրց ասէ մով
րովն ցշահն. խորհեալ իմ գտի զկողմն յուրէք
ճանապարհ. բայց երկուց աւուրց ճանապարհ
հեռի է աստի. այլև պիտոյէ կացնաւոր և բա
հաւոր և մրձաւոր. որ զմայրին կոտորեն և
զդժուճարին տեղինսն հարթել դիւրեն: Իբրև
լուճաւ զբանս զայս շահն մեծաւ ուրախութի
ցնծացաւ. և հրամայեաց զորաց իւրոց առնուլ
զբղմ կացին և զբահ և զայլինց գործի. և գնալ
՚ի տեղին և բանալ զճանապարհ. և նորա գնա
ցել կոտորեցին զմայրին՝ և դիւրեցին զդժուճա
րին տեղինսն՝ և բացին զճանապարհ. և եկեալ
ծանուցին շահին թէ եղև՝ զոր հրամայեցեր:

Եւ շահն հրամայեաց բանակին իւրոյ. զոր
օրինակ մինչ ցայնժամ կաղմեալ հարեալ կա
ռուցեալք էին վրանքն՝ և ուղտ և բեռնակիր
անասունքն. և օրտու բազարչիք՝ և այլ ամինց

նա յառաջն կային սոյնա կացցեն 'ի տեղիս
 իւրեանց. ուն զի համարեցին Վրացիքն թէ
 տակաւին անդ են զօրքն Վարսից: Յայց միայն
 մարտիկ զօրքն Վարսից իւրեանց պատերազմա
 կանօք զինուքն և երիվարօքն զանխուլ և թա
 քուն ելեալ գնացցեն. ընդ բացեալ ճանա
 պարհն մտցեն յերկիրն կախեթու: Յայն
 ժամ ելին պատերազմականք զօրքն Վարսից և
 գնացեալ ընդ նոր բացեալ ճանապարհն մտին
 յերկիրն թամրազին՝ և հասին 'ի շէնս և 'ի
 գիւղու և սկսան կոտորել զազգն վրաց անինայ:
 Իսկ թամրազ և լաւ ասափ որք նստեին զօրօքն
 Վրաց 'ի բերան ձորոյն ոչ գիտեին զարար
 մունսն Վարսից. մինչ յանկարծակի տեսին
 զայրմի գլուխն և մարմինն վիրաւորեալ և հա
 սակն նամ արեամբ թաթաւեալ. որ փախու
 ցեալ 'ի սպանմանէն Վարսից և եկեալ գուժ
 կան և համբաւաբեր վն գալոյն Վարսից և մտա
 նելոյն յերկիրն Վրաց: Եւ 'ի լսելն զայս թամ
 րազին և լաւասափին՝ և որոց ընդ նն. ափշեալ
 յիմարեցան՝ և ոչ այլինչ կարացին առնել. ոչ
 ստացուածք կամ ապրանք բառնալ՝ և բնաւ
 ոչինչ: այլ իւրաքանչիւրոք զընտանիս և զկա
 րևոր սիրելիս իւր առեալ ընդ ինքեանս հա
 զիւ թէ 'ի մեկնակի ձիով հեծեալ հապճեող
 տագնապաւ աճապարեալք իբացփախցեն զի
 մի անկցին 'ի ձեռս Վարսից: Եւ յայսմանէ
 պատճառէ թամրազն և լաւասափն աստի փա
 խուցեալք անկանէին 'ի Թիֆլիս. և անտի 'ի
 գօրի. և անդ ևս ոչ կարացին կալ. այլ ընդ
 ճանապարհն կօլբայու անցին զլեառն կովկաս՝
 որ է եալբուզ սարն. և գնացին 'ի պաշխաջու
 խի ախարհն: վասն զի մայրն լուսասափին
 դուստր էր պաշխաջուխի թգւրին. վն այսո

Ընկ թամրազն և կինն իւր՝ և լաւասափ և մայրն
 իւր . և այլ ընտանիք սոցա փախուցեալք ՚ի
 պաշխաչուխ զերծան ՚ի ձեռաց Պարսից :

Եւ զօրքն Պարսից՝ որ ՚ի միւս կողմանէ
 եկեալ մտին յերկիրն թամրազին . եկին մինչև
 ՚ի բերան ձորոյն , զոր կապեալք էին վրացիքն .
 քակեցին զկապն՝ և բացին զլայն և ընդարձակ
 ճանապարհ , ընդ որ եկին բանակն Պարսից՝
 մտին յերկիրն թամրազին . և անդէն բանա
 կեցան և կացին մինչև յաւուրս յիսուսն՝ և ոչ
 ելին յերկրէն : Եւ յայսբան աւուրս , զոր կացին
 անդէն թէ զինչ գործեցին . բերան ոչ բաւէ
 խօսիլ և ոչ լեզու ճառել . դու մտօքդ խոր
 հեալ խելամուտ լեր . թէ զօրքան զանպարտ
 զանձինս քրիստոնէից սրախող խող արարեալ
 վիրաւորեցին . կամ թէ գլխովին իսկ սպանին .
 և զոմեղան գերեցին և խայտառակեցին . և
 զինչս և զստացունաժս յափշտակեցին . և զշի
 նունաժս հրդեհեալ այրեցին և քանդեցին . և
 զեկեղեցիսն քակեցին . զսեղանն սք՝ և զնշանսր
 բոյ խաչին կործանեցին : Եւ զգերեալսն պահէ
 ին իմէջ բանակին առ իւրեանս՝ և պէսպէս վշ
 սոք սառապեցուցանէին՝ ցրտով և մերկուք՝
 քաղցիւ և ծարաւով և այլ բազումաւ կերպիւ :

Եւ յորժամ հմուտ շահաբաս յերկիրն կա
 խէթու և ետես թէ փախուցեալք են թամ
 րազն և լաւասափն . և մնաց երկիրն և ժողո
 վուրդքն ՚ի ձեռս իւր : Եւ յայնժամ հանձարեղն
 ՚ի խորհուրդս չարեաց , և այլևս աշխարհ
 աւեր հնարս ներգործեաց , քանզի հրամայ
 եաց յաման գաւառս և ՚ի գիւղս կախէթու
 մունեղեկք շրջեցին՝ և քարոզեացեն բար
 ձու ձայնիւ ՚ի բազում աւուրս՝ և ամասցեն
 թէ : Եւ իրամանէ ՚ի հօր և ՚ի խաղաղասէր և

յաջխարհաշէն թգլրէն շահաբասայ, զե
 յամքն բնակիչք աշխարհիս կախէթու, եթէ
 իշխանք եթէ հեծեալք, եթէ արուեստաւ
 որք, եթէ աւանկ ժողովուրդք, և ամոր, որ
 ելեալ ամրացեալէ՝ ի լերինս, և ի մայրիս, ի
 բերդս, և յամնն ամուր տեղիս. դարձցին, և
 եկեսցեն՝ ի տեղիս և ի բնակութիս իւրեանց՝
 և կացցեն խաղաղութեան. զերկիւղ և զկասկածանս
 ինչ ի զօրացն Վարսից՝ մի կրեսցեն, քանզի հրա
 մայեալէ նց թգլրն. մի զոր նեղել և մի զոր
 խուճել՝ ի ժողովրդէնէ աշխարհիս՝ որք գան
 ի հնազանդութի շահին՝ և լինին շահիսէւան,
 ոչ լինինց մնաս ամենեկին այլ կայ ի խաղաղու
 թէ : Իսկ որք յամուեալք դիմադարձ լինին
 հրամանաց թգլրին, առաքելոցէ թգլրն ի վր
 նց զօրս բազումն, որք զամրոցն նոցա աւեալ
 աւերեսցեն, և զինքեանս սպանցեն, և զըն
 տանիսն գերեսցեն, և զինչսն յափշտակեսցեն
 Լորդ ելէք ի յամրոցաց՝ և եկէք ի հնազան
 դութի, և լերուք շահիսէւան, և կացէք ի
 խաղաղութե : Եւ յիշխանաց և ի նշանաւոր
 արանց ավոր յառաջեալ վաղադոյն գայցէ,
 շնորհելոց է նմա թգլրն զփառս և զպատիւս՝ և
 զպարգևս բազումն, և զպետուի իշխանական
 Իսկ բնակիչք երկրին կախէթու. երբև լու
 ան զբանս քարոզութե մունեդկացն, Սմանք
 պատրեալք հաւատացին. եկին և եղեն շահի
 սէւան : Սմանք յերկիւղէ սպանութե և գերու
 թե եկին և եղեն շահիսէւան : Սմանք վր բազ
 մօրեայ կալոյն անդէն իմէջ երկրին Վարսից,
 անձար միացին, եկին և եղեն շահիսէւան :
 Սմանք փեխին զի զայս անուն ամրոց աւին, և
 զայն անուն ամրոց աւին, և արարին զսպանու
 թի և զգերութի ընդ բնակողաց ամրոցին ահա
 բեկ և

բեկ և երկիւղալիցք եղեն , մի գուցէ ինքեանց
ևս այնպսպատասխեցի , վնորոյ իջեալք յամրո
ցաց եկին և եղեն շահիսէւան :

Մյլև հրամայեաց շահն վն շահիսէւան եղե
լոցն զի բնակեցուցեն զնոսա յիւրաքանչիւր
շէնս և 'ի տեղիս , և յուսով և քաջալերութի
մեծաց բարեաց խօսեցին ընդ նս : և զանուն
անս նոցա արանց և կանանց , ուստերաց և
գաստերաց , և ամենից ընտանեաց գրեցեն 'ի
քարտիսի , և առ ինքեանս պահեսցեն Պար
սիկք : Մյլև կացուցին իվր նցպահասպանս 'ի
գորացն Պարսից յաման տեղիս՝ զի մի գուցէ որ
'ի նոցանէ փախիցի յայլուրէք : բայց խաբէին
զնս և ասէին , վն այնորիկ կարգեմք ձեզ զպա
հասպանս՝ զի մի որ 'ի Պարսից արանց զձեզ նե
ղիցէ , կամ զինչս ձեր յափշտակիցէ : և ովոր
եկն 'ի շահիսէւանութի , այսպս արարին ոսկ
պատմեցաք :

Եւ որք ոչ եկին , այլ մնացին յամուրս իւրց ,
եղին Պարսիկքն իվր ամրոցաց նոցա , և զբա
զում աւուրս պէսպէս հնարիւք մարտեղեալ
ընդ ամրոցացն մինչև յաղթեալ առնունին , և
զսուր իվր եղեալ անխնայ կոտորէին , երբև
պաշտօն բարի մատուցանել Մյլ համարէին ,
ըստ վկայութե Տն : ապա զինչս և զտացուն
ածս կողոպտեալ յաւարի առնունին , և զմնա
ցեալ կանայս և զմանկունսնց գերեալ ւժէին
'ի բանակն իւրեանց : Եւ ոսկասացի յաւուրս
յիսուն կացեալ անդէն ոչ մնաց ամրոց՝ զոր ոչ
առին , և կամ զտեղի , զոր ոչ աւերեցին , և միս
հաղոյն յաւեր և յապականութի դարձուցին
զամենալի և զյուութի և զբազմամարդ աշ
խարհն կախէթու և գրիմու :

Եւ եկեղեցեաց զանօթան և զսրբութիան
զխաջ

զթաջ՝ և զսկիհ՝ և զաւետարան՝ և զբուրլառ՝ և զբուրջառ՝ և զայլ անօթս և զսրբութիս որք էին մեծածախք և ծանրագինք, և զանազանիւք յօրինուածովք ակամբք և մարդարտովք յօրինեալք: Տրամայեաց շահն վն նցզի մի խորտակեսցեն. այլ տանիլ՝ ի քաղաքն յասպահան և դնել՝ ի գանձարանն արքունի. և կայ անդէն՝ ի գանձարանին արքունականի մինչև յայսօր. որք բազումք՝ ի մերոց ազգացս վկայեցին գոլով ականատեսք այնց սրբութեց: Եւ զանկար պատմուածանն Քննիչ այլոց սրբութեց անտի ատրեալք են. և կայ՝ ի նոյն գանձարանին յասպահան քաղաքի. որ դեռ ևս զլոյս վառեն առաջնք. և այսմ խօսիցս ասողքն. Ինքեանք իւրց աջօքն տեսեալք էին. և էին արք Տաւատարիմք:

Յետքազմաց աւերութեց աշխարհին այնորիկ չուէալ անտի և եկեալ ի սինսօռ երկուց աշխարհացն կախէ թու և քառ թլայ՝ և անդ բանակեցաւ շահն. և զՏրաման արարիւրոց զօրացն մի նեղել՝ և մի խուճել զորք ի բնակչաց աշխարհին քառ թլայ: և զօրացն Վարսից եթէ պիտոյասցի իր ինչ՝ որ կարիք է մարդկան և անասնոց. գնով գնեսցեն ի գաւառականացն. և ըստ կամաց վաճառողին տացեն զգինն: Եւ զՏրամայեաց շահն՝ զիւրցեն մուսնետիկք և շրջեսցին յաման գաւառսն քարթլայ՝ և աղաղակելով քարոզեսցեն. Թէ:

Տրաման է՝ ի մեծ և յաշխարհաշէն թգրէն շահաբասայ. զի աշխարհս քառ թլայ ամիւք գաւառսականօք իւրովք՝ իշխանօք և ռամիօք իւրովք՝ ի խազաղութե և յանդորրութե կացցեն. և ամբն որք ելեալք են ի բերդ. և յամուր տեղնս վն երկիւղի զօրացն Վարսից. այսու

Տեռև մի երկիցեն, և մի կասկած անս ինչ կրիցեն. այլ իջցեն՝ ի բնակութիս իւրեանց՝ և կացցեն՝ ի գործս իւրեանց և՝ ի շինարարութիս: և եղիցի սէր և խաղաղութի. և երթևէկութի իմէջ ազգին Պարսից և Վրաց. քանզի զաշխարհս քառթլայ իմ գիտեմ, և ոչ աւերեմ վն իմ և վն լաւասափայ թգլրին. վն զի զնա ինձ որ դե, և եղբայր և բարեկամ գիտեմ. և յորժամ գայցէ՝ նա զնորին աշխարհն յինքն յանձնելոց եմ՝ և ես գնամ յաշխարհն իմ: Վրդ՝ եթէ կամեցի լաւասափ թգլրն՝ և գայցէ այսպէս առնեմ. և թէ ոչ գայցէ ահաւասիկ մովրովն՝ որ է յաշխարհես քառթլայ և յազգէն Վրաց՝ որ և ահա ընդ մեզ է. զաշխարհս քառթլայ տամ մովրովին՝ և ես գնամ յաշխարհն իմ:

Վրլ և պատու իրեաց շահն մովրովին զի և նա յիւրոց ծառայիցն առարքեացէ յամսն տեղիս աշխարհին՝ զի լն ամին օրինակի խօսեսցին առ ամսն բնակիչս գաւառացն առ ի հաւատացուցանել զնս: Վաւ սնոտի և պատրողականաւ յուսով զմովրովն ևս խաբեաց ասելով. լաւասափն թէ գայցի և թէ ոչ. քեզ տամ զիշխանութին քառթլայ. որև ծառայք մովրովին այնպէս խօսէին ընդ գաւառականացն: Վրայս պիտեաւ օրինակաւ ստովք և պատիր բան իւր խաբեցին զամսն գաւառականսն՝ որոչ պատերազմաւ և ոչ խռովութի. այլ սիրով և խաղաղութի ամ ին զամսն գաւառականսն՝ ի հաւանութի և ի ջուրցին յամրոցացն. և բնակեցուցին ի գիւղորայսն: ուստի լցեալ լինէր ամ պեոյք բանակին Պարսից մարդկան և անասնոց: և յէտնչ կողմանէ ունէին վտակ ինչ զօրքն Պարսից: այլ յամէ կողմանէ կա ին ի խաղաղութե և յանդորրութե:

Ի այց բնակիչք աշխարհին քառթլայ երկիւղիւ կասկածանս կրէին՝ եթէ գուցէ ոչ գայցէ լաւասափն. և 'ի պատճառէ այնմքի նոյ. հրամայեցէ շահն իւրոց զօրաց աւարել և գերել զաշխարհ տերութե լաւասափու: և զայս բան զօրքն Վարսից ևս ասէին. և խօսէին ընդ գաւառականացն. այլ և ասէին՝ եկայք դուք ևս գրեցարուք շահխեհեան՝ զի մի մատնիցիք 'ի գերութի ուն զժողովուրդան կախեթու՝ զի որք գրեցան շահխեհեան ոչ մատնեցան 'ի գերութի: Իւլ յայսմանէ պատճառէ բազումք աշխարհէն քառթլայ եկին և գրեցան շահխեհեան. և որք գային 'ի շահխեհեանութի՝ իւրեանց և ամենից ընտանեաց զանունս գրէին 'ի քարտիսի և առ ինքեանս պահէին Վարսիկք: և զգրեալ շահխեհեանսն բնակեցուցանէին յիւրաքանչիւր տեղիս յուսով մեծագունից բարեաց և խաղաղութե:

Իւլ մինչ նստեալ կայր շահն իմէջ սահմանի երկուց աշխարհացն. արար միւս ևս զնոր հնարս. քանզի զմիոք յիւրոց խորհրդակցացն՝ որ էր մեծագոյն իշխան և փառաւոր նախարար՝ որոյ անունն էր Վարուխօջայ՝ կարգեաց զնա հրեշտակ խաղաղութե. ևսիրոյ նամակաւ առաքեաց 'ի պաշխաչուխ առ լաւասափ. և գիր պատգամացն էր ըստ այսմ օրինակի:

Իրեաց յարքայէ շահաբասէ բազմաւ սիրով ողջոյն հասցէ արքայիդ Սրաց լաւասափու: Բազում անգամ գրեցաք առքեզ սիրով և ցուցաք զմեր սրտի բարեկամութիւն, որսուքեդ: Բայց դու ոչ անսացեր և հաւատացեր բանից մերցարդ՝ ահա 'ի գործոյն 'ի միտ առ և հաւատոյ ուն և տեսանես՝ զի զերկիրն թամբա զին աւարեցի. իսկ զքոյն ահաւասիկ շէն և

ամ

ամբողջ պահեալ եմ վասն քո, և սպասեմ
 դալստեան քոյ: արդ մի դանդաղիր՝ ի գալ. և
 մի անմիտ և անհանձար խրատտունաց լսեր. և
 զքեզ՝ ի թփրու թփդ զրկեր. քանզի ոչ ունիմ
 զոխս և զնենգութի յիմում սրտի՝ ի քոյդ կող
 մանէ. ուր և դու ոչինչ բնաւ մնաս գործեալ
 ես առ իս: Այլ զգալն քո յաղագս այնորիկ
 խնդրեմ, զի ուր նախնեօքն մերովք էր միաբա
 նու թի իմէջ երկուց անգանցս. սոյնպէս կա
 միմ՝ զի և ՚ի մեր ժամանակս լիցի. և մէք զա
 մենայն կողմնս հիւսիսային՝ որ յայս կոյս է գե
 տոյն երասխայ յանձնեսցուք ՚ի քեզ. զի դու
 լիցիս վերակացու և հրամանատար ի վրամենից
 իշխանաց կողմանցս այսոցիկ. ուր զի քո զայս
 կողմնս հոգալով. և մէք անհոգ եղեալ զմեւ
 կողմանս հոգասցուք և թշնամեաց զդէմ
 կալցուք: ողջ լեր: () այս թուղթս գրեալ ետ
 ցարու խօջայն. և այլ բազում բանս և հնարս
 խարդախութե՝ զոր ամբարեալ ունէր յիւրում
 սրտին բանիւ պատուհիրեաց նմա. թի որով
 հնարիւք և իցէ հաւանեցուցէ զլաւասափ
 գալ առ շահն: Իսկ սարու խօջէն գնացեալ ՚ի
 պաշխաջուխ յանդիմանեղեալ լաւասափու մա
 տոյց զողջոյնն և զթուղթն. իբրև ընթերցան
 զթուղթն՝ գիտացին զի անքն բանքն պատրանք
 են. ոչ հաւանեցան թի լաւասափն թի մայրն՝
 թի քոյրն՝ և թի թամրազն: թի պէտ արու
 խօջայն բնազմաւ և զանազանիւ կերպիւ յոր
 դօրէր զլաւասափ. սակայն ոչ հաւատացին:
 () կնի աւուրց ինչ՝ զպատասխանի արարին
 բանից շահին՝ լը այսմ օրինակի: (Թի չմարիտ
 է բանքն քո՝ և ստուգիւ կամիս, որ ՚ի մեր մէջն
 բարեկամութի լինի. ահաւասափի նշան սիրոյ
 քո և խաղաղութե այն լիցի. զի դու շէն և
 ամբողջ

ամբողջ թողցես զաշխարհն մեր. և ժողովուրդքն մեր յիւրաքանչիւր տեղիս կացցեն. և դու փոխանակ քո 'ի քոյոց իշխանաց զմիոք թողցես այդ՝ ուն զի զամսեր և զմիաբանութի և զդաշնադրութի, զորդու կամիս, միջնորդու թէ նորին հաստատեցուք ընդ քեզ. և դու ելեալ յաշխարհէն մերմէ գնասցես. և մեք եկեալ տիրեսցուք աշխարհին մերոյ՝ և կացցուք ընդ քեզ 'ի սեր և 'ի միաբանութե: ողջ լեր:

Յետ բազմաց հնարաւորաց խօսից՝ սարուխօ ջայն իբրև ետես թէ ոչ հաւատացին. առեալ զթուղթն լաւասափու՝ և եկեալ առ շահնձա նոյցնմա զամնն բանս և զհաստատուն միտս նց:

Յետ լսելոյ շահաբասին զայս բան պատասխանուոյ. չուեաց ամիւ բանակաւն և եկեալի վերոյ քան զգօրի իվր ճանապարհին, որ գնայ 'ի պաշխաչուխ. և անդ իվերայ ճանապարհին բանակեցաւ:

Պատճառ յայսմ տեղուոջ բանակելոյն այս էր՝ զի թէ ոք յազգէն Վրացի խան կամ ուամիկ՝ թէ կամիցի փախել և գնալ 'ի պաշխաչուխ մի կարացէ գնալ:

Եւ աստի ևս առաքեաց շահն զսարուխօ ջայն կրկնակի առ լաւասափ բանիւ և գրով զի թերևս պատրեալ գայցէ՝ և ոչ եկն:

Յաւել երրորդ ամգամ առաքել զնոյն սարուխօ ջայն առ լաւասափ՝ և ոչ եկն:

Եւ 'ի բազում գալոյն և գնալոյն ճանճրացան լաւասափ և իւրքն. յայսմ 'ի վերջին նոճագիս գալոյն՝ արարին զգործ անարգանաց լսարուխօ ջային՝ զի միևս առաքեսցէ առ նոսա շահն հրէշտակ: Եւ անարգանաց զգործն, զոր արարի այս էր՝ զի զամնն ինչս նր յափշտակեցին, և գնաւ ին մերկացուցին 'ի զարդուց և 'ի զնուց, 'ի հանդերձից և յերիվարաց, մինչ զե և զ ջո

և զջորին ևս զոր ինքն հեծեալէր առին. և զինքն հետևակ արձակեցին 'ի գնալ. և պատուհրեցին մեծաւ սպառնալեօք միւս յաւելուլ առ 'ի գալ և այսպիսեալ. անարգութիւն սարու խօջայն նկն առ շահն. Եւ շահն երկայնա մտեալ համբերէր 'ի տեղւոջն. և մտալար ժեպ խոկայր 'ի խորհուրդս չարեաց' և նենգութե լաւ ասափին, և թամբազին:

Սինչ շահն այսպէս վարանեալ կոյր' և ոչ գտանէր գելս իրացն: Ի սոյն աւուրս այր ոմն 'ի քաղաքէն տփխիսոյ գործօնեայ չարեաց' և որդի անիծից' շարժեալ 'ի դիւաց ըստ ազդեցութեն սատանայի, ելեալ 'ի տփխիսոյ և եկն 'ի բանակն արքունի' և ծանոյց շահին թէ խնդիր է տերութիւն քո բերել զլաւ ասափ. արդեթէ ստուգիւ կամիս և մնաս ոչ առնես. ես գնացեալ ածից զնա առ քեզ և իվի՞ր այսմբանի առնն մեծ զարմացումն կալաւ զշահն. Էհարցցայրն թէ դու զկարդ կարես բերել զնա. և այրն ասաց մեք ազգականք եմք լաւ ասափին բանդին նա ինձ սան է 'ի կնքաւորութե կողմս նէ. և իմէջ մեր զմեծ հաւատարմութի ունիմք առ միմեանս. վնորոյ գիտեմ զինա հաւատայ բանից իմոց: Իսկ շահն իվերայ այսմբանի ան պատում ցնծութիւն լցեալ եղև. զի գործ զոր ինքն բազմաւ աշխատութիւն ջանայր' և ոչ լինէր. և որում 'ի յուլից ժամանակաց ցանկայր և ոչ հասանէր. արդիս յոյժ դիւրութիւն լինի. վնորոյ խոստացաւ առնն այնմիկ զբազում գանձս և զբազում զարգ. ևս' և բազում ևս փառաց հասուցանել թէ բերցէ զլաւ ասափն:

Իսկ չարաբաստ այրն այն վատաշունչէր' որ եղև պատճառ կործանման թգրութեւ. քրիստոնէից գնացեալ 'ի պաշտօնաւ առ լաւ ասափ և առ

և առ թամբաղ և յաւուրս բաղուան խօսեցաւ
 ընդ լաւասափին հաւանականաւ և մեղկացուց
 չաւ բանիւ . մինչ որ թուլացոյց 'ի սխտութի
 զմիտսնր : բայց թամբաղ և մայր և քոյր լաւա
 սափին և ամբն հաւատարիմքնց ոչ հաւանեին
 բանից առնն այլ քամահէին . քանզի գիտեին
 ստուգիւ թէ կախարդասար հնարքն է շահինս
 Բայց այրն սատանայբնակ ուր զօճն և այլի հա
 կեալ դարձոյց զմիտս լաւասափին գնալ առ
 շահն : Իսկ մայրն լաւասափին , և քոյրն , և
 թամբաղն և իշխանքն , և ամբն բարեկամքն լայ
 քն արտասոճօք և ողբային , և ասեին . մի մա
 տներ զբեզ 'ի ձեռս թշնամուց քոյ' զինա քո
 թշնամի է և ոչ բարեկամ . և 'ի կորուսանել
 զբեզ ջանայ : և թամբաղն ասէր մի հաւատար
 ան հաւատիդ այդմիկ և խորամանկ գազանիդ .
 զի դա՛ զկորո : ստն մեր ջանայ : Իսկ միտք լաւ
 սափին . բանից չարեաց արբանեակ առնն
 առաւել հաւանէր . քան թէ բանից բարեկա
 մաց իւրոյ : Իւ զայս առնէր ամենեցուն պա
 տասխանի' թէ ահաւասիկ շահն եկեալ և նրս
 տեալ կայ իմէջ մերոյ երկրին . և խնդրէ զիս
 առնել զխաղաղութի . և թէ ոչ գնացից զամ'
 երկիրս աւերեալ ապականէ . և զեկեղեցիսն
 քանդէ , և զքրիստոնեայսն սպանանէ , և
 գերէ . և այս ամ լինի 'ի պատճառս իմ : քան
 թէ կեցից 'ի ժամանակս ինչ խղճմտանօք' և
 այնքան անձանց պարտական լաւ է ինձ գնալ
 առ շահն և զաշխարհն ամ ազատել : զի մի լիցի
 իմով պարճառաւ աւերումն աշխարհի . յու
 սալով յձ գնամ առ նա ուղղութի . և անդ
 էն զինչ և պատահեսցի ինձ եթէ մահ և եթէ
 կեանք եղիցի կամք ամ օրհնեալ :

Եւ որ այսպիսի բանդագուշեալ խելօք ոչ
 լուաւ

լուճաւ լաւասափ բարեկամաց իւրոց այլ Տաւա
տաց բանից և երդման շահին. ելեալ ՚ի պա
շիաջուխէն գալ առ շահն. և յորժամ բերին
զաւետիս գալստեան նր առ շահն՝ ոչ գիտէր
թէ որով օրինակաւ ցնծասցէ սիրտ նր:

Եւ յորժամ եկեալ լաւասափ մերձ եղև
բանակին Պարսից շահն ինքն ելեալ ընդ ա
ռաջ նր ամիւր իշխանօք և զօրօք. և ՚ի տեսա
նելն միմեանց սիրով և խնդութբ և բզլմ շուրբ
դնելով զողջոյն տային իրերաց: Իսկ որ շահն
էր ցնծայր ՚ի սիրտ և յոգի իւր. զի մեծ եղև
նմաօրս այս քան զամեն աւուրս կենաց իւրոց.
զի կատարումն եղև չար կամացն՝ զոր ՚ի բազմաց
ժամանակաց բաղձայր: Եւ ուր սովորութի
է խորամանկ և օձաբարոյ ազգին Պարսից. և
մանաւանդ այս շահիս բազմահար վիշապիս
զառաջինն բազմաւ սիրով և մեծարանօք
ընկալաւ զնա. և հանապազ զսուտ և զանոտի
պատրողականիւր բանիւր ընհաճոյից կամաց
նր խօսէր. մինչև համբաւն այնպէս տարա
ծեցաւ յամ աշխարհն յրաց՝ թէ շահն որ
խնդրէր զլաւասափ. ոչ վն այլինչ պատճա
ռի էր. քան թէ վն սիրոյ և միաբանութե:

Եւ պաշուճեալ անտի իւրով բանակաւն շահն
գնաց ՚ի տփխիս. տարաւ ընդ իւր և զլաւա
սափ և պահէր զնա իւր հաւասար մեծաւ փա
ռօք՝ և հանապազ խօսէր ըստ ախորժակաց
մտաց նորա՝ զբանս հաճոյականս նմա. և զինքն
հաւատարիմ ցուցանէր նմա:

Եւ յաւասափ ՚ի ժամանակին յոգում նոր
նստեալ էր թիւր. և զկնի ամաց ինչ և չորս և
հինգ ամաւ յառաջ քան զշահի գալս: Եւ
եղև երբեմն ՚ի կարգս զրուցաց պատմութի
զպայպէն լաւասափիս զսիմօն խանէն. զոր ըմ
բռնե

բռն օտմանցիք տարան 'ի ստամբօլ սպա նին և անդէն թաղեցին , որոյ վրէժաց ա իւնն լաւասափին' և ըղձացաւ առ 'ի բերել զնշխարս պապուէն իւրոյ սիմոն խանին 'ի Տայրե նի գերեզմանատունս իւրեանց' թաղել ընդ այլոց ևս նախնեացն և ընտանեաց իւրեանց : Աւ իբրև տեղեկացեալ է գիտ զարս ոմանս՝ որք գիտէին զտեղին՝ յորում թաղեալ կայր նշխարք սիմոն խանին 'ի քաղաքին կոստանդնու պօլսի : և իսկոյն զգիտող զարսն զայնոսիկ առաքեաց առ ի բերել զնշխարս սիմոն խանին և նոքա գնացեալ 'ի կոստանդնուպօլիս Տանին զնշխարս նր և բերեալ Տասուցին 'ի Թիֆլիս : և 'ի գալ արանցն՝ որք բերին զնշխարս սիմոն խանին՝ պատահեցաւ յայսմ ժամանակիս զի շահն 'ի Թիֆլիս էր , որև գիտաց շահն թէ զնշխարս սիմոն խանին բերին : Աւ լցեալն խոր Տրդուլ և խարդախութի ստտանայի , որ այն քուն թշնամիէ քրիստոնէից մինչ զի և արեանս նց ծարաւի՝ որ սպանմամբ և գերութի կեն դանեացն ոչ շատացաւ , արդայժմ ընդ ոսկերաց մեռելոցն ևս արար զթշնամութի , վն զի սաստիկ հրամանաւ հրամայեաց իսկոյն բերել առաջի իւր : Աւ իբրև կատարեցաւ հրամանն , ասաց զսա ես աւուէլ պատուեմ և փառաւորեմ քան զձեզ , զի դուք ոչ գիտէք զարժանաւոր պատիւ թգլոց , և կամիմ առաքել զսա յիմամուզէն՝ զի ընդ նախնեացն մերոց թգլոց և պետաց փառաւորեցի : Արդ այսպիսի կա խարդաստրիւք բանիւք առաքեաց զոսկերսն սիմոն խանին 'ի պարսկաստան , և ոչ է թող թաղել 'ի Տոնն Վրաց , և ոչ որք գիտաց թէ զինչ արարին կամ ուր տարան . և այսպէս անյայտ արարեալ կորուսին :

Եւ յայսքան ժամանակս որ էկա Մ ըացտուն ընդ իւրով իշխանութիւն գրաւեաց զամ աշխարհս: Եւ այց զերկիրն թամրազին զբովանդակն՝ յայտնապէս արար զի լիցի ընդ իշխանութիւն Պարսից եբր թէ թրոյն իւրով առեալ զայն. վնորոյ առաքեաց զգորս՝ ի Պարսից՝ որք շինեցին յերկիրն թամրազին զբեր դորայս՝ և կացոյց՝ ի նոսա զգորս՝ ի Պարսից. և զսէլիմիանն. և զփէքարիսանն. և զբէքդաշխանն կարգեաց անդէն զիշխան և զգորս գլուխ՝ զի պահեսցեն զերկիրն ընդ իշխանութիւն Պարսից:

Եւ զբնակիչսն կախէ թու և գրիմայ սպառեաց. զոմանս սպանմամբ: զոմանս գերու թիւ. և որք մնացին և գրեցան շահսեւան զՏրաման արար վն նոցին զաման արտասահմանս առնել և բշել տանիլ՝ ի Պարսկաստուն: Եւ կարգեց իվ իր այսմ գործոյ զիշխանս և զգորս որ առաջին գրովն և թղթովն, զոր գրեցին զանունսն նոցա և առ ինքեանս ունէին. այն գրովն սկսանքննել զաման ընտանեօք իւրոց. և զամնն զնն իւրեանց ընտանեօք և ստացունածովք յիւրաքանչիւր տեղեաց հանել և զորս հանէին բերեալ բանակեցուցանէին յափն կուր գետոյն՝ ի տեղին որ անունն ի զաբրին. քանզի անդէն սահմանեցին զբանակետդայսպ արարին մինչև զամ շահսեւան գրեալքն հանին: և յորժամ եղև զրաւ հանելոյն՝ նոյն գրովն և մատենիւն չունեցուցեալ անտի և բշեցին տանիլ յաշխարհս Պարսից. և բերեալ հասուցին մինչ ի զազբին քաղաք. և անտի տարան ի քաղաքս Փահրապատ: յորժամ հասուցին ի Փահրապատ՝ զոմանս ի նոցանէ իմէջ Փահրապատուք պղաքին բնակեցուցին. թի՛ ի Մ ըաց և թի՛ ի յայոց. թի՛

Վեղու թի Վ րանցն Փահրապատու 131
 թի Վի մահ մեռականաց. թի ՚ի Չտաց. և զայլ
 բազումն ՚ի նոցանէ բնակեցուցին ՚ի գեղո
 րայսն. և ետուն սոցա ամցն զտեղիս տանց
 և այգեստանաց՝ և անդաստանաց: Եւ այսու
 կերպիւ աւերեաց զաշխարհն Վ րաց, կախե
 թու և գրիմու: և տարեալ էլից յերկիրն Փա
 հրապատու:

Բայց գնացեալ ժողովուրդքս այսոքիկ. ոչ
 աճեցան յաշխարհին յայնմիկ. վս զի ոչ էին
 ընդելք գէջ և դաժան շնչարգել և մգռահոտ
 օդոյ երկրին. նաև ոչ ուտելեաց և ըմպելեաց.
 և այլ կենցաղավարութե երկրին: վս որոյ
 սկսան կոտորել և մեռանիլ. և ՚ի սակաւ ժա
 մանակս այնքան կոտորեալ մեռան հազիւ թի
 ՚ի տասնէն մէկն մնաց: Եւ այնք որք մնացին՝
 յետ ժամանակաց՝ ՚ի հիւանդութեց և ՚ի ցաւոց
 ճնշեալք և մաշեալք և ցաւագարեալք եղէն.
 որ ոչ կարէին զգործ ինչ մարմնական գործել
 յօգնուտ կենցաղավարութե եւրեանց: Վաև ՚ի
 պանդխտութե և ՚ի նշդեհութե եղէն աղ
 քատք և չքաւորք՝ և զորինչ ունէին վաճա
 ռեալ կերին: Եւ ՚ի պատճառէ չքաւորութե
 զբողոք բարձին ազգն Վ րաց առ շահն. որ
 յաւուրսն յայնոսիկ ՚ի Փահրապատէր. վասն
 չքաւորութե և սովցն զորս կրէին: և շահն
 զպատասխանի արար նց. թի ուրացէք զձեր
 հաւատն. և լերուք օրինօքն մահմետի. և ես
 տամ ձեզ յոլով զինչս որով ապրիք՝ և ուտէք:
 և նոքա հարկեալք ՚ի կարեաց սովուն արարին
 զհրամանս շահին, և եղէն մահմետականք. և
 շահն ոչ էտ նց զինչս յոլովս ըստ եւրում խոստ
 մանն՝ այստեաց. քզի խափեաց զնս: Բայց եւրա
 քանչխարանձին է թի մեծաց է թի փոքունց եւս
 զմէն մի դահեկան, և արձակեաց ՚ի տունս եւրց:

Մոր որք գովեն զայս շահս թէ քրիստոնէ
ասեր և աշխարհաշէն և խաղաղարար թգրէր.
այս է նր քրիստոնէ ասիրութիւն, որ զամ աշ
խարհն քրիստոնէից զհայոց և զՈւրաց աւե
րեաց. և զամնն սպառեաց սրով և սովու և գե
րութիւն. և զմնացեալսն վարեալ տարաւ 'ի
Փահրապատ և 'ի սպահան, որ նոքա ևս օրաւ
ուր անդէն սպառին պէսպէս կերպիւ: և ովոք
որ գովել կամի զնա. թող յառաջ հայեցեալ
նկատեսցէ զարարեալ գործսնր, զոր արար ընդ
քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա:

Մոր որով օրինակաւ պատմեցաք, զոր արար
շահն ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահի
սէւան 'ի թամրազի երկրէն. սոյն օրինակաւ
և արար ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահի
սէւան 'ի լուսասափի երկրէն: Վնզի իվր նց
կարգեաց զգօրս և զգօրապետս՝ որք առաջին
գրովն և քարտեսիւն չունեցուցին յիւրքանչիւր
տեղեաց և վարեալ տարան 'ի Վարսկաստան:
Եայց զայս ժողովուրդս, որք էին յերկրէն
քարթլայ ոչ տարան 'ի Փահրապատ այլ տա
րան յասպահան. և բնակեցուցին 'ի սար գե
ղորայսն ասպահանու. ուր և զազգն հայոց
բնակեցուցեալք էին: Եւ այժմ յարդեանս
ժամանակիս՝ որի թունական մեր հազար և հա
րիւրէութիւն. յորում գրեաք զպատմութիւն:
այս վրացիքս ամքն դարձան 'ի հաւատոցն
իւրեանց 'ի կրօնս մահմետի. և այնքան կու
ռեճք և դահիճք են քրիստոնէից. որ 'ի պա
տահիլն մեր նց՝ ի ճանապարհի ուրեք զբարեն
մեր ոչ առնուն. մեղք համարելոյ իւրեանց
զբարե առնուն: այլև հայհոյեալ արարեան
զհարս և զնախնին իւրեանց՝ թէ նոքա անհա
ատք էին և անհաւատ մեռան: այլև իվր նորոյ
հաւա

Տաւտոյն իւրեանց գոհանան զԴ. Թէ այս է
 Քնարիտ հաւատ՝ զոր այժմ ստացար: Դ. յլև
 յայսմ: Երացի ժողովրդէնէս՝ ի ժամանակին
 յորում նոր բերին՝ ի սպահան. բաժանեցին
 զմասն ինչ և յառաջ խաղաղուցեալ տարան յեր
 կիրն շիրազու. և յերկիրն, զոր անուանեն ասու
 փաս. որև սորա ևս սպառեցան պէսպէս կեր
 պիւ. և մնացեալքն նմքն միահաղոյն դարձան
 յօրէնս մահմետի:

Օ այսու ժամանակաւ՝ յորում շահն՝ ի տրփ
 խնս էր և առ ինքն ունէր զլաւասափ. վնորոյ
 խնդայր և բերկրեալ զոճաճանայր՝ զի ըմբռ
 նեաց զնա՝ ի ցանցս իւր: Բայց վն Թամրազին
 տրամէր զի ոչ կարաց ըմբռնել. որև վն նր խո
 կայր՝ ի սենեակ սրտի իւրոյ՝ ի խշտին բեհեմով
 Թայ՝ Թէ զի արդ. կարասցէ կորուսանել զնա:

Եւ որոյ և յաղագս նր հնարէ այսպիսի իմն
 որոգայթ. զի հաւանեցոյց զայր ոմն և առա
 քեաց՝ ի պաշխաչուխ. եցոյց նմա զաման ճանա
 պարհս. հնարից՝ պատուհրելով պնտապ Թէ
 որով և իցէ օրինակաւ սպան դու զԹամրազն
 Թէ յայտնի և Թէ ի ծածուկ: և զայս այր, որ
 առաքեաց ի ծածուկ սպանանել զԹամրազն
 Թաքուն և գաղտնի յամենից նախարարաց իւ
 րոց արար՝ որ ոչոք գիտէր: Եւ այրս այս գնա
 ցեալ է հաս ի պաշխաչուխ. և յառուրս ինչ էլ
 և մուտ արար ի տեղինս ուր էր Թամրազն. և
 դիտեալ նկատեաց զամ ինչ. զճանապարհն և
 զաեղին ուր ի գիշերի ննջէր Թամրազ. քանզի
 տեղինէր վեքնատուն, զոր փայտեայ սանդխով
 էլանէին և իջանէին: Եւ յառուր միում ի
 ծածուկ և անգիտելի ումեք այրն այն զսպա
 կալեալ հսկեաց զգիշերայն. զի Թերևս գտանի
 ցէ զգիտող ժամ առ ի սպանանել զԹամրազն.

և 'ի հապարակել գիշերոյն գիտաց թէ անբն
 ննջեալք են • նաև գիշերապահ արքն զքէն
 քէշիկչիքն, ննջեալք են • եկեալ այրն այն զան
 խուլ և թաքուն • և ընդփայտեայ սանդուխն
 ել 'ի վերնատունն ուր ննջէր թամբազ • և
 ետես զի 'ի կողմն մի վերնատանն ննջեալք
 էին ոգիք երկու 'ի միում անկողնի • և 'ի
 միւս կողմն ննջեալք էին այլևս ոգիք երկու
 'ի միում անկողնի : և սորա որք ննջեալք էին
 'ի վերնատանն 'ի միում անկողնի էին թամ
 բազ և կինն իւր • և 'ի միւսում անկողնոջն
 էին երկու աղախնայք՝ որք վն սպասաւորու
 թէ մերձ առ նոսա ննջեալք էին 'ի միում ան
 կողնի : Իսկ այրն որ եկեալ էր վն սպանութե՝
 ոչ կարաց ստուգել վերահասու լինել թէ
 որոք 'ի նոցանէ եցէ թամբազն • վն որոյ ոչ հա
 մարձակեցաւ 'ի սպանութի՝ զի մի գուցէ սպա
 նեալն այլոք եցէ և ոչ թամբազն • վն որոյ
 խորհեցաւ թողուլ զգործ սպանութե՝ յայնմ
 գիշերի և գնալ • և յառաջիկայ աւուրսն գի
 տեսցէ՝ և ստուգել իվր հասցէ թէ որոք 'ի նո
 ցանէ եցէ թամբազն • և ապա եկեալ անվրէպ
 զնա հարեալ սպանցէ : Եւ զայս խորհուրդ Վճ
 եարկ 'ի սիրտ առնն այնմիկ՝ և դարձոյց զնա՝ ոմ
 զի մի սպանցի թգրն քրկատոնէ եց : Վյլ և զև
 րամանկ չարութի շահիմ յայտնեալ զնա խայ
 տառակեաց : Վրդ այսու խորհրդով այրն
 դարձաւ 'ի վերնատանէն • և սկսաւ իջանել
 ընդփայտեայ սանդուխն ընդօր երեալն էր •
 և մինչ իջանէր այրն, նորին ինքեան թիւրն
 որ զմիջով իւրով ամեալ ունէր այրն՝ հա
 բաւ 'ի սանդուխն յորմէ հնչեաց ճոյն • և 'ի
 ճայնէն արթնացաւ շունն քէշիկչոց՝ և սկսաւ
 հաջել առ այրն • և 'ի հաջելոյ շանն արթնա
 ցան

ցանկ պահապանքն . և տեսեալ զայրն և շրջապա
պենա ըմբռնեցին զնա . և որք տեսին զայրն
զահիճարեալ ապուշ մնացին ամբն : Եւ 'ի վա
ղեն թամրագն , և այլք յիշխանաց կոչեցին
զայրն առաջի եւրեանց՝ և հարցմամբ տեղեկա
նային . և այրն զամեն ստուգութի խոստովա
նեցաւ , թի շահն առաքեաց զիս թի գնա
ցեալ սպանցես զթամրագն :

Յայնժամ թամրագն 'ի խորոց սրտե հառա
ջելով ասաց : Եւր տեսէք եղբարք , զի շահն
զերկոսին որդիսն իմ՝ յինէն առեալ տարաւ
առ ինքն՝ և արար ներքինիս . և զմայրն իմ տա
րեալ կորոյս 'ի խորին պարսկաստան . և այժմ
զերկերն իմ բնաւին աւերեաց՝ և զամ ժողո
վուրդն իմ և զազգն գերեալ տարաւ . և ես
զգլուխ իմ միայն առեալ փախուցեալ կամ 'ի
պանդխտութես . և նա այնու ամիւ ոչ շատա
նայ . այլ դեռևս ջանայ 'ի հեռաստանէ սպա
նանել զիս . արդ նա որ այսքան ջանայ սպանա
նել զիս՝ և ես որով յուսով համարձակեցայց
գնալ առ նա : և ամբն որք տեսին զայն գործ՝ և
լուան զբանս թամրագին . իրաւացուցանէին
զխօսս նր : և թամրագ որդորմեալ առնն ոչ սպան
զնա . այլ արձակեաց՝ որ գնաց զճանապարհս
իւր : Ի այց ինքն ոչ ևս վստահացաւ կալ 'ի
պաշխառուխ , զի մի գուցէ այլևս որոգայթս
հնարեսցէ նմա շահն , այլ ելեալ անտի գնաց
յերկերն դադիանու՝ և հեռացաւ 'ի շահէն :

Եւր զորպէսն ամ չարահնարից գործոց ,
զոր արար շահն ընդ աշխարհին ॥ Րաց չէ կար
մեղ ճառել զի 'ի վերէ քան զճառ քաննց քան
զի զողջամի եկաց նա ամիւ բանակաւն ॥ ար
սից անէ յաշխարհին ॥ Րաց : և զկնի ամին խոր
հեցաւ ելանել յաշխարհէն ॥ Րաց և գնալ
յաշխարհն ॥ արսից : Ը 4 Ի այց

Բայց 'ի վարանս և յուզմունս խորհրոց
կայր շահն թէ զի արդ կարացցէ կորուստել
զլաւասափ : և յաղագս այսորիկ բանս եդ նա
խարարաց իւրոց ասել ընդ լաւասափու . թէ
որովհետև բարեաւ և յաջողմամբն Մ. Մ եկիր
դու 'ի տեսութի շահնն . և եղև սէր և միաբա
նութի իմէջ ձեր . արդ յաղագս հաստատու
թե սիրոյ և ուխտի դաշանցն : Եւ ակ վայելուց
է և պատշաճաւոր . որովհետև շահն ելանէ
'ի գնալ յերկրէն քունմէ . պատեհէ քեզ գնալ
ընդ նմա երից և չորից աւուրց ճանապարհ ոմ
զուղևոր մինչև 'ի սահմանս երկրի քոյ . և ապա
դարձցիս յաթոռ քո : Եւ զայսպիսի բանս
շահն ինքն ևս ասաց 'ի կարգս զրուցաց ընդ
լաւասափին . և լաւասափ քանզի ոչ ունէր
կեղծաւորեալ զխորամանկութի 'ի սիտի իւ
րում, ոմ յատուկ է քրիստոնէից . հաճեցաւ
առնել զասացեալն նոցա :

Եւ յորժամ չուեաց շահն 'ի քաղաքէն թի
Ֆլիզու : Եառ ընդ իւր և զլաւասափ ըստ յս
ուաջագոյն կարգեալ պայմանին իւրում :

Եւ յորժամ գնացին երից և չորից աւուրց
ճանապարհ . զնոր իմն բանս եդ շահն նախա
րարաց իւրոց ասել ընդ լաւասափու . Որով
հետև այս քան աւուրց ճանապարհ եկիր և յոյժ
բարւոք արարեր . արդ խնդրեմք զի մի թոճեա
ցի ծանր . այլևս յառաջել և գալ մինչև 'ի քա
ղաքն գանջայ . զի անդէն 'ի գանջայ եդեալ է
շահն 'ի մտի իւրում կոչել առաջի իւր զամնն
իշխանս կողմանցս այսոցիկ զչամփու և զե
րևանայ . և զամնն կամի կարգել զի կացցեն
ընդ իշխանութի քով . և զքեզ վերսկացու
և հրամանատար իվ ի ամցւն զի քո հրամանաւ
արացեն զամ, զոր ինչ և առնելի է : Եւ այսմ
ևս

Լա՛հաւանեցաւ լաւասափ և գնաց ընդ շահին մինչև 'ի գանձայ: Եւ անդէն 'ի գանձայ երբևանցին աւուրք յոլովք ոչ երևեցաւ նշան բանից ասացելոց նախարարաց շահին: այլև ոչ երևի նշան և նշմարանք արձակման իւրոյ: Եւ այնժամ գիտաց լաւասափ յոգի իւր թէ հնարիւք հանին զնա յերկրէն իւրմէ՝ և ոչ ևս թողուն գնալ յերկիր իւր: վնորոյ 'ի մեծի արտմուծեւ և 'ի վարանս խորհրդոց կայր լաւասափ. և թէպէտ խորհէր՝ այլ ոչինչ կարիք առնել զհնարս փրկուծե՛:

Եւ լեբազմարուեստ հնարագործ այրն շահաբաս. 'ի նենգաւոր կարծիս իւր խորհեալ թէ միգուցէ կամ 'ի գիշերի կամ 'ի տունջեան գիպող ժամ գտեալ հնարիւք իմն փախեցէ լաւասափ: և 'ի սակս այսմ կարծեաց արար զնոր ևս հնարս ըստ այսմ օրինակի. զի շահն պարգևեաց լաւասափին զմէկհատ ջղայ՝ զոր 'ի գլուխս իւրեանց հարուն իշխանք. և եր յոյժ ալնիւ և պատուական, գեղեցիկ և մեծագին: և ընդ պարգևել ջղային պատուիրեաց սիրով լաւասափին թէ յարածամ 'ի գալն քո առ իս եղիցի սա 'ի գլուխ քո. և լաւասափ ևս այնպէ առնէր հանապազ 'ի գալն իւր առ շահն:

Եւ զինի աւուրցինչ հրամայեալ է շահն գողոցն իւրոց՝ զոր հանապազ լէ ինքն պահէր՝ քանզի բազում արսոր բազմահնար գողք էին վն պէսպէս հնարից առ ինքն պահէր շահն. ունի և այժմ ահա արար. վնզի պատուիրեաց նց զանխոզ և թաքուն 'ի գիշերի մտանել 'ի վրանս լաւասափու և գողանալ յատուկ զայն ջղայն կ'զայլ ևս ինչս: և գողքն արարին ուն ուսան 'ի շահէն. զի գողացան զջղայն և զյոլովն յընչիցնր: Եւ յաւուր միուամ յորժամ կո
 թ 5 էցին

չեցին զլաւասափ առ շահն ըստ հանապաղօրէի
 կոչմանն. և ի գալն լաւասափու և ի բարեկամ
 ոչ էր ջղայն ՚ի գլուխնր ուր յառաջ լինէր: և
 ՚ի տեսանէն զնա շահին՝ իբր անդէտ գողով
 հարցանէր ընդէր զջղայն ոչ եղեալ ես ՚ի գլուխ
 քո. իբրև լու՛աւթէ գողացեալ քե՛ն. յայնժամ
 շահն՝ ի չքմեղս եղեալ և իբր բարեկամ և ցաւա
 կից զինքն ձեւացուցեալ մորմոքայր և ամիսոսայր
 լըւ ապա դարձուցեալ զբանս իւր առ նախ
 արարս իւր՝ որք անդն կային. բարկանայր նց
 և յանդիմանէր՝ և զմահ սպառնայր. և ասէր՝
 ընդէր ոչ բարւոք հոգաբարձութիւն և հպր
 տակութիւն արարիք ծառայութիւնսմա. և այն
 քան անհոգ և պղերգ էք մինչ զի գողք ևս
 մտանեն ՚ի վրան սորա և առնեն զգողութիւն. և
 մանաւանդ զայնպիսի երևելի և պատուական
 ինչ. և զայս ասէր վն ջղային: Լըւ ապա ասաց՝
 արդ միգուցէ միւսանգամ եկեալ գողոց գո
 ղանայցեն այլևս ինչ յրնչից սորա յաղագս ան
 հոգութե ձերոյ. և լինիցի մեզ կրկին ամօթ:
 արդ պատրաստեցէք դուք զարս քաջս և
 զգոյշս. զի յմի գեշերի գեշերապահք պահ՝
 պանութիւն պահեացեն զվրանս սորա շուրջս
 նակի՝ զի մի միտս ինչ պատահիցէ սմա. ապա
 թէ ոչ՝ զձեզ զամեն բնաջինջ առնեմ: Ետ
 ընդունելոյ նախարարացն զայսպիսի սաստիւ
 հրամանս. այնուհետև կաշուցին պահապանս
 շուրջ զնովաւ՝ որք ՚ի տունէ և ՚ի գեշերի պա
 հէին զնա զգուշութիւն:

Սայսպիսի հնարս գործեաց շահն և կա
 ցոյց իվր լաւասափին զպահապանս զի մի գու
 ցէ փախիցէ: և այսպիսի պահպանութիւն բե
 ղեալ հասոյց ՚ի թաւրեզ. և տարաւ ընդ իւր ՚ի
 զազբին, և ՚ի Փահրապատ, և ՚ի սպահանս և
անտի

անտի առաքեաց 'ի շիրազ քաղաք ունել զնա
 'ի Վասեստի. և անդէն ևս կարգեալ ի վր' նր
 պահապանս, որք պահէին զգուշութի:

Եւ եղև զի յետ յոլովից ամաց եկին դես
 պանք 'ի Ռուսաց թգրէն վստիւրոյ և բազմաց
 գործոց. և զնդ աւուրսն այնոսիկ գնացեալ
 էր շահն 'ի գաւառն սպահանայ' և նստեալ
 կայր ի վր գետոյն, զոր անունանէն աւիբուրան
 և կամէր զջուր գետոյն այնորիկ, բերել և
 խառնել 'ի գետն սպահանայ' քանզի ջուրն
 սպահանայ սակաւ է: և բազումք արուեստաւ
 որք և գործաւորք գործէին 'ի ճանապարհս
 ջրոյն. և ինքն ևս շահն յայտմանէ պատճառէ
 անդէն զետեղեալ կայր: Եւ դեսպանքն ռու
 սաց յայտմ' տեղուջ եկեալ հանդիպեցան տե
 սութե շահն' և ընդ յոլովից խնդրուածոցն.
 վստաւաստիկն ևս խնդրեցին. ուն զի դարձցե
 'ի տեղի իւր' և կացցէ 'ի հրամանն և 'ի հնազանս
 դութե շահն: Եւ խորամանկն խորհրդով շա
 հաբաս. խնդութի ընկալաւ զբանն զայն. և յս
 ժարութի և աչալ ըջութի յանձին կալաւ կս
 տարել զխնդիրն զայն՝ առաքել զլաւաստի 'ի
 տեղի իւր: և այսպիսեաւ կերպիւ հաճեցու
 ցեալ զդեսպանսն ուղևորեաց յերկիր իւրց:

Յետ անցիցս այսոցիկ կոչեաց շահն առաջի
 իւր զիշխանն առ որ յանձին կայր լաւաստի՝
 ասէ ցնա: Եւ կորստեան և սպանման արժանի
 գու' ընդ էր թողեալ ես զլաւաստի կեալ կեն
 դանի մինչև ցժամանակս այս. զի այժմ սքրո
 եկեալ ինդրեցեն զարձակումն նորա. արդ
 եթէ ոչ փութանակի եկեալ բերցես զհամ
 բաւ կորստեան նր: դու քոյովքն հանդերձ
 բնաջինջ լինելոց ես: Իսկ իշխանն առեալ
 զՎաստիսի հրաման վազվազակի հասանէր 'ի
 քաղաքն

քաղաքն շիրազ և ձեւացուցանէր զինքն առ լաւասափ սիրոյ և խաղաղութեան աղօթեալ եկեալ։


Եւ յաւուր միում ելին ՚ի միասին լաւասափ և իշխանն ՚ի զբօսանս յեզերս գետոց յորում և սկսան զձուկն որսալ և նախնապարսիկ իշխանն էառ ՚ի ձեռս զվարմն զի կազմեալ արկցէ ՚ի գետն յորս ձկանց և ինքն իւրով կամօքն անյարմար կազմեաց և թիւր և թեք ձգեաց ՚ի գետն Երևեցուցեալ զինքն ուր թէ ոչ գիտեմ։ Իսկ լաւասափ ոչ ունելով զկարծիս ինչ ՚ի մտի և ոչ ունելով զխիղճ զանձնէ։ յինքն էառ զվարմն ՚ի ձեռանէ իշխանին ուր թէ ինքն այլ և ս լաւագոյն արկցէ զվարմն ՚ի գետն և մինչ զգլուխն կորացուցեալ և խոնարհեալ ի վր վար մին յարդարէր զվարմն ՚ի ձեռին իւրում։ յետուս կողմանէ պարսիկ իշխանն հանեալ զսուրն զոր զմիջով իւրով ամեալ ունէր՝ ամեալ բախեաց յանկարծակի ի վր պարանոցի լաւասափին՝ յորմէ բախմանէ գլուխ լաւասափին անջատեալ յինքենէ թռուցեալ անկառ ՚ի բացեաց։ Եւ նոյն պարսիկ իշխանն առեալ զգլուխ լաւասափին բերեալ ՚ի նախկին ասացեալ տեղին յաւիքուռան կոչեցեալն և ՚ի բանակն արքունի և էբերառաջի շահին և շահն ՚ի տեսանելն զգլուխն և յիմանալն թէ լաւասափին է ՚ի գաժանութե արտին իւրոյ շարժեցաւ ՚ի ցասումն և ՚ի բարկութի ի վր գլխոյն անարգէր և հայհոյէր և քամահանօք հարեալ այսր և անդր ձգձգէր և յորով ժամն այնմ անցուցեալ ընդ գլխոյն ՚ի ցասմանէ արտին և ապա կալեալ զականջէ գլխոյն ձգեաց ՚ի բացեալ և գլուխն գլորեալ երթայր զառիվայր քանզի զառիվայր էր տեղին։ Եւ որ այսպէս եղև

եղ զրաւ կենաց լաւաամիու թագաւորին
արխը՞ զի չարահարն շահաբաս պսպի
սեաւ օրինակաւ կորոյս զնա . և զնորին աշ
խարհն գրաւեաց ընդ իւրով իշխանութիւն :

Պատմութիւնահատակութե մօր Թամրազի Թագաւորին
Կախեթու 'ի նոյն Շահաբասէ :

ԺԲ :

Մ Ի Ն Չ Կ Ե Յ Բ Թ Ե Ա Մ



րազ Թագւոյն յերկրի իւրում 'ի կա
խեթ' և վարէր զիշխանութի իւր
խաղաղութե , և կայր 'ի Տնագան
դութեն Պարսից , զի տակաւին չէր եկեալ
շահն յաշխարհն || րաց' և փախուցեալ զԹագ
որն և աւերեալ զաշխարհն զորինչ յանցեալ
ճառիդ պատմեցար : այլ կայր Թամրազն յիւ
րում երկրին' և շահն 'ի պարսկաստան . առա
քեաց շահն առ Թամրազ և խնդրեաց զպա
տանդ . և նա առաքեաց զմի յորդոց իւրոց :
յաւել շահն միւրանգամ խնդրել զպատանդ .
և Թամրազ առաքեաց զմիւս և սորդին : յաւել
շահն երրորդանգամ խնդրել զպատանդ . և
Թամրազ առաքեաց զմայրն իւր : Իսկ շահն
զերկոսին սորդին Թամրազին արար ներքինիս ,
զի մի ընծայեսցի 'ի նոցանէ զաւակ զի մի գու
ցէ լինիցի ժառանգ Թագւոյն Թե նոցա : Իսկ
զմայրն Թամրազին յեւ խորին պարսկիս առա
քեաց 'ի շիրազ քաղաք առ իմամդուլի խանն
ունել զնա 'ի պահեստի : և այսպէս Տրամանաւ
շահաբասին կայր 'ի պահեստի մայր Թամրազին ,
որիչ անունն էր մարիամ . բայց յետ ժամանա
կաց վկայեաց Քի Քութեն և նահատակու
թիւ կատարեցաւ վս' Բնականաց հաւատոցս 'ի
նոյն

142 Հարցումն Շ ահին՝ի Սպասաւորաց Ե

նոյն շահաբասէ. այսպիսեալ պատճառով եւ
Ս նդի կային այլեւ մեծ ազգի կանայք յազգէս
Ս րաց յերկիրն Պարսից՝ գերեալք ՚ի պար
սից: Սոյնպէս և որդիք սոցա գերեալք էին
՚ի Պարսից. և կարգեալք էին ծառայք Թգւ
րին մեծի և առաջնոյ շահաբասին. զի վսմեծ
ազգութե սոցա հանապազօրոյ սպասաւորք և
առաջիկայք կացուցեալք էին զսն Թգւրին:

Եւ յաւուր միում շահն զբանս ինչ խօսից
խօսեցեալ է ընդ ծառայիցս այսոցիկ. և իմէջ
փորձի փորձ խօսիցն ստացեալ է նց. Թէ ընդ
էր զմարսն ձեր Թողուք մնալ ՚ի բրիստոնէ
ութե՝ որոյ կատարումն է կորուստ. և ոչ առ
նէք հաւատով և կրօնիւքն մահմետի՝ որոյ կա
տարումն է վայելչութի արքայութե: և ծա
ռայքն ասեն, բազում անգամ ասեմք, և ոչ
դառնան՝ ասէ արքայ՝ ընդէր ոչ դառնան:
Իսկ ծառայքն, յերկիրդէն անձար մնացեալ ոչ
գիտացին Թէ զինչ պատճառս յօդեցեն, կամ
զինչ տացեն զպատասխանի: բայց ոմն ՚ի նոցա
նէ ասացեալէ, ոչ Թէ գիտութե այլ անգիտու
թե: յորժամ ասեմք մարց մերոց Թէ տաճկա
ցէք, նոքա ասեն մեզ՝ մայր Թամրազին բրիտոն
նեայ է՝ մեք ընդէր տաճկանամք:

Հայնժամ խորամանկն շահաբաս զայս
բանս ՚ի օրտի իւրում պարուրեալ յետաւուրց
ինչ զոմն յիշխանաց իւրոց առաքեալ է. զի
կամ դարձուցէ զդիւօփալն ՚ի բրիստոնէութե
Թէ յօրէնս մահմետի. և կամ չարաչար մահոճ
ամբ կորուսցէ: Եւ իշխանին գնացեալ ՚ի շի
րազ քաղաք. և մերձ կացեալ ՚ի դուռնս դիւօ
փալին կոչեաց զնա. և առանց երեմ երես տե
սանելոյ յետուստ կուսէ դրանն խօսեցաւ քա
նա՝ և ասէ:

Հրկման

Տրաման թգրին այսպէս է, զի հարկէ քեզ
տաճարնալ. եթէ յօժարիս յոյժ բարի է՝ և
թէ ոչ յօժարիս լեզունովդ սաս. և սրտովդ
պահեա զքո հաւատն. առ յաչս մարդկան.
ձևացո իբր թէ եղեր օրինօքն մահմեակի. և
Վիճածուկ պաշտեա զքո հաւատն. զի և մէք
մնասցուք ազատ ՚ի խղճմտանացն՝ որ ՚ի քոյդ
կողմանէ է. զայսպիսի բանս ասեր իշխանն.
և լայր նման դահճին հերօդի. որ գնաց դլխա
տել զյօհաննէս մկրտիչն :

Իսկ դիդօփալն ասաց ՚ի ներքուստ. դու իմ
եղբայր, և իմ որդի. ընդէր թաքուն խօսիս ընդ
իս՝ եկ յանդիման խօսեաց. զի ես թգրի դուստր
եմ. թգրի կին եմ. թգրի մայր եմ. և ես իսկ
անձամբ իմով զթգրու թի վարեալ եմ յետ
առնն իմոյ՝ մինչ որ տղայն իմ զարգացաւ. սա
կայն անցաւոր և ընդունայն է մեծու թի աչ
խարհիս. եթէ թգրն քո բովանդակ արարած
ոցս տեր լինի. և զամենեցուն թգրու թինս
ինձ տայ. ես ոչ ուրանամ զՎս Վճն իմ. և ոչ
փոխանակեմ ընդ սիրոյ նր՝ զոր ունիմ առնաս
և դու զորինչ առնելոց ես՝ դու գիտես :

Եւ այն ընդ դիդօփալիս երկու քահանայք
Որացիք. և այլևս ծառայք և աղախնայք. դարձաւ
դիդօփալն առ նոսա և ասաց. եթէ զիս
անդամ անդամ յօշեն՝ ես ոչ թուլանամ ՚ի
սիրոյն Վիճի և ոչ դառնամ ՚ի նորին հաւա
տոցն. իսկ զձեր օգուտն դուք ընտրեցէք. և
նորբա առ հասարակ գոռալով լային. և ողբային
զզրկու իջիւրեանց ՚ի բարեփառ տիկնօջէն :

Եւ ապա յետ բազմաց խօսից ողորանաց և
սպմունայեաց՝ իբրև ետես եկեալ իշխանն
հաստատուն միտս նր. հրամայեաց երկաթի
ձանկօք խզրատել զմարմին նր՝ և կարի վերաւ
րել :

բեւ. և նա գոհանայր զՄ. Յ և արտաստեօք
հայցէր ինքեան զհամբերութի 'ի ՏԵ

Յետ այսորիկ հրացուցին զսաղաւարտ պղծն
ձիւ եդին 'ի գլուխ նր. և ոչ այնու կարացին
հաւանեցուցանել զնա:

Եւ ապա բերին զերկաթեայ բաճ, որով զեր
կիր փորեն. և զայն բաճն սաստիկ հրացուցին
և եդին. իմէջ ստեանց դիդօփալին՝ իվերայ
կրծիցն և սրտին. և նա այնու աւանդեաց զա
նուշահոտ հոգին իւր առ Մ. Ծ:


Եւ մինն ևս 'ի քահանայիցն մարտիրոսա
ցաւ անդէն ընդ նմա. և այլքն ցրուեցան:

Մ. յս դիդօփալս յառաջագոյն պատուի
րեաց թէ յորժամ սպանանեն զիս. զմարմին
իմ մի ընկենուք արտաքս 'ի տեսութի ռամ
կաց. բայց յետոյ փոշիմանեալ ասաց. ես որ
վն. Բ. ի հաւատոցն մարտիրոսանամ. զմարմին
իմ զորինչ և կամին արտոցեն: Եւ յորժամ
սպանին՝ զպատուականն նշխար մարմոյն ըն
կեցին արտաքս կերակուր լինիլ շանց և գա
ղանաց: Բայց Մ. Ծ փառաւորեաց զնա երկ
նաւորօք նշանօք. վասն որոյ Փռանկք պատրիք
որք կային 'ի քաղաքին. գողացան զպատուա
կան մարմինն նր. զկէսն պատեցին մաքրօք
կտաւօք խնկօք և զմուսօք. և ուղարկեցին 'ի
Փռանկստան, որ անդէն պատուի մեծաւ փա
ռօք: Սոյնպէս և զմուս ևս զկէսն պատեցին մա
քրօք կտաւօք խնկօք և զմուսօք և տարան ան
որդինն նր թամրազ յաշխարհն Ս. րաց: և նա
անպատմելաւ խնդուութի լցեալ գոհութի մե
ծաւ փառաւորեր զԲ. ն Մ. Ծ նմեր, որ կրժանի
արար զմայրն իւր վկայականի մահուան: Եւ
ասաց, սորին բարեխօսութիւն զմեր թիւրք
թիւս Մ. Ծ հաստատուի պահեսցէ, և երբ պա
տուէր

առնով յեկեղեցին եւր : Որոյ յեշատակն օրհ
նութեան եղևի և աղօթիւք նր ողորմեսցի Տրամե
նից քրիստոնէից : Եղև նա հատակութի գիդօ
փալիս 'ի մերում թուականին հազարևեթա
նասուանւնչորից : 'ի փառս Վ. Ե. Լ. Մ մերոյ :

Պատմութի ներութեց՝ զորս կրեցին ազն Հայոց յա
ռաջնոյ շահաբաս թիւրէն :

ԺԳ :



ՉՊՍ ՀԼՅՈՅՆ ՈՐՎ

մատամբ և կամօքն եւրեանց կուրա
ցուցին զաչս եւրց , զի ննքեանք
կործանեցին զթագաւորութիւն եւրեանց՝ նեն
գութք և անհնաղանդութիւն եւրեանց , և
եղեն ոտից կոխան , և ծառայք , և գերիք
այլոց ազգաց և թիւրաց : և 'ի ժամանել նե
ղութեց իրիք ի վր ննքեանց իբրև ոչ գտանեն
զօգնութի յուստէքէ , անձար մնացեալ փա
խստական լեալ ճողոպրին այսր և անդր :

Ըրդ եթէ յայսմանէ պատճառէ , և թէ կան
խուս պատմեալ մեծի սովուն և ջալալոց պատ
ճառէն , ամ ազգն Հայոց ելեալք վտարանդիք
եղեն յեւրաքանչիւրոց տեղեաց և հայրենեաց
և բնակութեց և յաշխարհաց , և տարադէմ գնա
ցեալ ընդդէմ երեսաց՝ ցիր և ցան եղեալք
սիւսեցան ընդ ամ աշխարհ , 'ի Կիպրոս , 'ի Կոս
տանդնուպօղիս , և 'ի քաղաքս , որք շուրջեն
զնովաւ , յԱւուստիս , 'ի Իուդղան , յերկիրս
Իլլիսաց , ի Կիզիկս Կափայու , 'ի ծովեզերսն
Պոնտոսի : Ըյլ և բազումք յաշխարհն ըտր
ատականի , յերևան 'ի գանջոյ , 'ի թաւրէզ
պարտաւել : և 'ի շրջակայ գուառս սոցա :

Ե յազգէն Հայոց ժողովուրդք որք ե
կեալ զե

կեալ զետեղեցան յաշխարհն աարսատակա
 նի մեծ և առաջին շահաբանն Պարսից թիւն
 զամեն զնս վարեալ քչեաց, տարաւ յաշխարհն
 Պարսից՝ զկէս բաժին մի՝ ի Ֆահրապատ, և
 զկէս բաժին մի՝ ի սպահան քաղաք և ՚ի գաւ
 առս նր: Եւ զայս գործ որ զազգն Նայոց քը
 շեաց և տարաւ, ոչ թէ միանգամ կամ երկիցս
 և երեցս արար և եկաց, այլ գտի հաւաստեալ
 զբազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին՝ յո
 ըոց հարցեալ տեղեկացայ՝ նակ՝ ի յիշատակարա
 նաց գրոց՝ զորս ընթերցայ զի եօթն և ութն տն
 գամ որիչորիչ զկնի միմեանց քչեալ և տարելէ:
 Եւ զյոյովս ոմանս՝ ի սպահան տարեալ ժողո
 վրդենէս, առ ներկայ աւուրսն այնոսիկ զե
 տեղեալ բնակեցուցին՝ ի փութկայն՝ որ է քար
 վանսարայ, զոր և գէջգունի քարվանսարոյ
 անուանեն: Եւ այս ժողովուրդ ոչ իմիա
 սին եկեալ էին, այլ որիչք՝ ի միմեանց, վստորյկ
 երկու դասք էին, միոյ դասուն պետ և գլուխ
 կարգեալէր շահն զայր ոմն՝ ի նոցունց իվրնց
 մէլիք, որում անունն էր մուքատ, զոր մականուն
 ամբ զըրխեալան ասէին նմա: և միւսում դա
 սուն մէլիք էր կարգեալ յովսէփ անունամբ
 այր ոմն, զոր մականունամբ զարապուշ մէլիք
 ասէին:

Եւ ազգն Նայոց՝ որք եկին յասպահան,
 գատ՝ ի ջուղայեցւոց և յերևանցւոց ամբն չքաւ
 որեցան, վստղն ոմն յայտէ ամենեցուն զի յաս
 պահան քաղաքն ամ ինչ է թէ ուտելի և թէ
 զգենլի և թէ այլ ինչ, ամ ծանոթալաձառեկ
 թանկագին է, և յայսմանէ պատճառէ այս ե
 կեալ ժողովոս չքաւորեցան՝ զի զորինչ ունի
 վաճառեցին և կերին: Եւ մանաւանդ առա
 ել չքաւորեցան այս յիշատակեալ երկու

Ժողովուրդքս՝ որք վն ջքաւորելոյն և սովե
լոյն իւրեանց այսր և անդր գնացեալ որում
և պատահեալ ծանուցանելն զջքաւորու
թիւն իւրեանց : և մանաւանդ իւրեանց վերա
կացու Պարսիկ իշխանին, և զինուորացնորին,
վս զի շահն զմի որ յիւրոց իշխանացն նց վերա
կացու կարգեալէր առի գիտել և իմանալ
զմանն անցունած սբանից և գործոցնց, այլև մի
գուցէ թէ ելանիցեն յասպահանայ և գնաս
ցեն յերկիրն ատրպատականի՝ և կամ յայլուր :

Եւ է հաս համբաւ ջքաւորութե՛նց առ
շահն իձեռն վերակացու իշխանացն՝ որոց
էին անուննք աւագագուննին աղաշահաբ, և
երկրորդին ուղուրլուբէկ, զորս աղաչեցին
քրիստոնեայքն ծանուցանել զջքաւորու
թիւն իւրեանց շահն՝ և խնդրել՝ ի նմանէ ինչս
առի պարէնս պիտոյից կերակրոց և այլ կա
րեաց իւրեանց : Եւ իշխանքն ծանուցին, վս
որոյ շահն կոչեաց զերկու դասու ժողովր
դեանս մէլիքներն, և զայլս ոմանս՝ ի նոցունց,
ասաց նց տամ ես ձեզ զգանձս և զինչս՝ ի գան
ձարանէ թգլրկանէ, առի պատճառս կելոյ և
սպրելոյ ձեր : քայց զպայման դնեմ և այն պայ
մանաւն տամ : Եւ պայմանն այս է, զի զորինչ
և տամ, փոխտամ ձեզ երիւք ամօք ժամանակօք
զի յետ երից ամացն դարձուցանիցէք՝ ի մեզ :
և զայս փոխս ոչ թէ շահով և տոկոսեօք տամ,
այլ առանց շահի տամ զփոխ : զի դուք այնու
անեալ գանձիւն առ և տուր արարեալ շահի
ցէք : և նորո՞ւ շահն եղիցի ձեզ պարգևեալ
մի մնայցէք իմէջ նեղութեց, այլ պատճառ
զ առի և արի շահելոյ և կելոյ նովաւ : և զինի
յնն երից ամացն զգլուխ պարտուցն դարձու
ցանիցէք անդրէն՝ ի գանձարանս թգլրին. զի
Ժ 2 այդ

այդ թգլական գանձէ, որում ոչ է հնար որն
չելոյ և ոչ փողի միոյ . և յորժամ վճարեցէք
զամ, առէք ձեզ զգիր ազատութե և վճար
ման՝ այսինքն զդաբս :

Իրդ ամ որք ՚ի ձէնջ, որոք և առցէ ՚ի թգլըր
ական գանձէս . յորժամ բերցէ զառեալ
գանձն՝ և վճարեսցէ ՚ի գանձարանս թգլին,
եղիցի ազատ . և եթէ իցէ որ, որ ոչ վճարիցէ
զառեալ գանձն . այլ կերեալ և վատնեալ և կո
րուսեալ իցէ զդրամն . և ոչ ունիցի զինչ զի տա
ցէ : այնպիսին, փոխանակ գանձին, կամ դարձ
ցի յիւրոց հաւատոցն յորէնս մասմետի . և կամ
զորդին և զդուստրն տացէ առ իլինիլ թգլըր
ական ծառայ : Եւ զսոցին ևս զգինն յայտ
արար . զգինս ուստերաց չորս թուամն ասաց
և զգինս դատերաց երեք թուամն . զի որոք ոչ
ունիցի զդրամ առ ՚ի տալ՝ փոխանակ չորս
թուամնի զորդին տացէ, և փոխանակ երեք
թուամնի զդուստրն տացէ .

Եւ այսու պայմանաւ եւ շահն այսց երկուց
դասուց ժողորդեանս զչորս հարիւր թու
ման . զի մինչև ցերիս ամս առ և տուր արա
րեալ շահեսցին . և յետ երիցամաց դարձու
ցեն ՚ի գանձարանս թգլըրին :

Իսկ արբշեռ . և անագորոյն . և անիմաստ
և անասնաբարոյ ազգս հայոց՝ ոչ ՚ի սկիզբն
խորհեցան . և ոչ ՚ի վերջն հայեցան՝ թէ զինչ է
լինելոց վերջ գործոյս այսորիկ . այլ եբր անբան
և անմիտ անասուն գոյով՝ գնացին և առին
զթգլըրական գանձն . որ էր ուր զմասհարար
թոյն օձի, և պատճառ նոցին կորստեան .
ոչ եղեն մտախոհ թէ ուր զփուշ օձի է գան
այն մասհարուցանող : Եւ երկորին մէկը
բեանց ժողովրդոքն առին զթգլըրական գ
ան

Քրիստոս զարապաշ մէլիքի ժողովուրդէն առին զհիւրէք չարիւր թուման, և զըրխեայան մէլիքի ժողովուրդէն առին զչարիւր թուման, և լաւինն գիւտ բարւոյ համարեցան զայն անձանց իւրեանց :

Եւ յամին յորում ետ շահն զգանձս զայս ժողովրդեանն հայոց՝ էր թուականն մեր հազար և յիսուն և եօթն, և հասին մինչև ՚ի թուականն հազար վաթսու և երկու, և յայնժամ շահն, որ անմոռաց ունի զյիշատակս չարեաց ՚ի միտս իւր՝ յիշեաց զայն. և զինդ իրարար տուեալ գանձին : Իսկ առօրք գանձին եղնաբարոյ ազգն հայոց՝ ոչ միայն՝ ոչ շահեցուցին, այլև զգլուխն ևս կորուսին, զի ոմանք ՚ի չքաւորութենէ, և ոմանք յանհան ճարութենէ, և ոմանք յանտեղեկութենէ առի և տրոյ քաղաքին՝ կերին և վատնեցին, ցնցխեցին, և կորուսին զտուեալ գանձն թաղաւորին :

Եւ զուղուրուբէկն, որ վերակացու էր ժողովրդեանն, դարձալ կարգեաց շահն իվրնց, զի զթագաւորական գանձն առեալ ՚ի ժողովրդեանէն յանձնեացէ ՚ի գանձապանս թգլրին : Արոյ եկեալ զօրականօքն ստեալ իվր ժողովրդեանն ճշդիւ պատմեցր զգանձն : Իսկ ժողովուրդէն զեղեալ գործն պատասխանէին թէ ոչ ունիմք, զի չքաւորք և աղքատք էաք և առի վտանկէ սովուն զամենեսեան կերեալ վատնեցաք :

Եւ վերակացու իշխանն իւրովք զօրակաօքն հանապաղօր բռնադատէին զժողովուրդն, և չարբարէին, կախէին, հարկանէին, քանարգել առնէին, և էին ժողովուրդէն իսկ մեծի նեղութե : և թեպէտ զոչ ինչ ունէին,

նէին , և զորինչ ունէին , զայն ևս 'ի ծախս զի նորոքացն վասնեցին , զի զմասն ինչ տային 'ի ծածուկ կաշառս' և զմասն ինչ տային յայտնի մուհրաթանայ : և զմասն ինչ 'ի պէտս կերակրոց զինո՛րացն և երեվարացն , և այլ ևս ինչ պատ ճառէ վասնեալ սպառեցին , և եղէն խպառ աղքատք և չքաւորք :

Իսկ ուղուրուբէկն իբրև ետես թէ զոչ ինչ կարաց առնուլ 'ի Հայոց , ապա ծանոյց թղերին զ չքաւորութի ժողովրդեանն , վն որոյ հրամայեաց շահն կոչել զժողուրդնս Հայոց առաջի իւր : Խօսեցաւ ընդ 'նոսա' և ասաց . դուք մի համարիք և ամբաստանողք լինիք զլինէն թէ ես թգրականաւ բռնութի և իշխանութի ինդրեմ' և առնում' 'ի ձէնջ զգանձ , այլ դատաստանաւ և իրաւամբք խօսիմ' , զի ես ձեզ փոխ ետու զգանձն զայն , և այժմ' զնոյն փոխտու՛եալ գանձն ինդրեմ' 'ի ձէնջ , և ոչ թէ զնոր ինչ ինդրեմ' , այլ զիմ' տու՛եալ փոխն' և զայն առանց վաշխից և տոկոսեաց ինդրեմ' զգլուխնս ժայն : Երբեթէ այս բանք իրաւամբք թու՛ի ձեզ' տուք զառեալ փոխն ձեր ապա թէ ոչ' ահաւասիկ դատաւորք և դատաստանք գոն' ՚ի քաղաքի աստ , ես և դուք երթիցուք իմիասին 'ի դատատոյան առ դատաւորս , և զորինչ հրամայելոց է 'ի դատաւորաց ընդ ունելի լիցի ինձ և ձեզ : և յոր կողմն և խօսելիմ' կողմն Հայոց պարտեալ գտանիւր :

Եւ 'ի բազում աւուրս ժողովրդիքն Հայոց' զբազում իշխանս բարեխօս աղիեալ առ թգրն , արդայով և բազմօք աղաչանօք խորեցին 'ի թղերէն գլխալ 'ի ստաւապան չքաւոր և աղքատ ժողովրդեանն , և զնեքոսն առնել և թողուլ զպարտան զայն , և նա չքաւոր և չքաւորս իբրև :

Իբրև կարի ստորանկեալ խոնորհեցաւ
 կալնս Հայոց, ժողովեցին զամեն զուպտերս և
 զգաստերս և րեանց ժողովուրդքն, և ածեալ
 կացուցին առաջն թիւրին ասելով, վնզն ոչ
 ունիմք զդրամ զի տոճեալ՝ ի պարտս թիւրին
 վճարեսցուք. զուստերս և զգաստերս մեր տամք
 թիւրին ոսկ և յառաջագոյն սահմանադրեցաք:
 Ի նդ ուստերաց և դաստերաց՝ զորս հարք նց
 ածեալք էին՝ և առ գուծ աղէտի նց եկեալք
 էին ամբն ազգականք նոցին, մարք, և եղ
 բարք, և այլք, որք միագումար կային և բարձ
 բակականօք ողբովք և արտասոճօք լային՝ որ
 զտեսողացն ամցն զսիրտ և զաղիս մորմնքմամբ
 ձմլեցուցանէին: Օ որս տեսեալ թիւրն յայն
 պիսի յողբս և ՚ի հառաչանս հրաժարեցաւ
 յառնելոյ զողայսն: Բայց բարկացաւ ի վր ու
 ղուրլուբէկին, որ զնս ածեալ էր՝ և ասաց զինչ
 օգուտի մեզ յածելն քո զողայսն, զի կամիմ
 ես զամեն դարձուցանել ՚ի տաճկութի: Վն
 որոյ ասաց՝ եթէ վճարեսցեն զամ փոխն բա
 րի է, եղիցին ազատք՝ և թէ ոչ վճարեսցեն,
 դարձցին յեւրց հաւատոցն՝ և եղիցին հաւա
 տովն մահմետի, և ես զառեալ պարտսն նց՝ շնոր
 հեմ նց, և ի վր այնր այլևս ճիրս պարգևաց
 բաշխեմ նոցա: զայս վճիւ հատեալ ասաց, և
 ստիպեաց առնուլ զպարտսն:

Իսկ զինտոճորացն յետ ընդունելոյ զայս պի
 սի հրաման ՚ի թիւրէն, սկսան յոյժ ճշդիւ
 խնդրել զպարտսն ՚ի քրիստոնէից, կախէին,
 հարկանէն, բանտարգել առնէին, և բազ
 մաւ կերպիւ նեղէին. զի թերևս ՚ի վտանկե
 նեզութեն դառնայցեն ՚ի հաւատոցն՝ իսկ ժո
 ղովդքն տևէին, և տանէին ամենից վշտացն
 և հաւատոց ոչ դառնային: Իւր այնուհետև

ողորմելի ժողովուրդքն Հայոց որդւովք և ընտանեօք շրջեն 'ի սողոտայս և 'ի փողոցս քաղաքին առ ամօր լալով և ողբալով՝ զի թեր ևս յուստեքէ լիցի հնար ծգնուած կամ փոխով կամ ողորմութիւնք :

Եւ շրջադայելով գնացին 'ի վանորայս Ֆռանկաց, որք են իմէջ քաղաքին ասպահանու : և ոմն եպկպոս յողգէն Ֆռանկաց եկեալ էր յայնմ ժամանակի յասպահան , և բնակէր 'ի վանքն Ֆռանկաց՝ որոյ հուսէնիայ անունն կոչեն : Եւ էր այս եպիսկոպոսս այր երեւելի և փարթամ՝ զոր բազում անգամ կոչեալ զնա շահն առ ինքն և խօսէր՝ և զնէր առնէր ընդ նմա : և այս եպկպոս իբրև էտես զարտասունն Հայոց՝ և հարցեալ տեղեկացաւ ամի, խօսեցաւ ընդ նոսա յուսադրականօք բանիւք՝ և ասաց . մի երկնչէք , այլ հաստատուն կացէք ի վրքնականաց հաւատոցն ձերոց , և ես զորինչ ունիմ տամ ձեզ՝ ոչ թէ փոխ , այլ վն սիրոյն Քրի , և նորին հաւատոցն : և դուք տուք շահն , և վճարեցէք զպարտսն ձերե՝ 'ի հաւատոց ձերոց մի դառնայք : Իսկ ժողովուրդքն Հայոց արտասուէօք օրհնէին , զամ և զեպկպոսն և շնորհակալութիւն գոհանային զնմանէ զի ի մէջ անհնարելի նեղութեցն յօգնութիւն ժամանեաց նյ :

Որև ըստ իւրում խոստմանն ետ եպկպոսն զգանձս երկուց դասուց ժողորեանն : ձեռամբ զարապաշ մէլիքին նորին դասուն երկու հարիւր թուման զուտ արծաթի դրամ : Եւ միւսում դասուն , որոց էր գլուխ զրիւն լան մէլիքն , և այլ ոմն քահանայ բողդածար անուամբ՝ այր հանձարէղ և իմաստուն և հարտատուն ճշմօրտութիւն և հաւատոցն

Գնին

ՈՒՆՔԻ ՆՔԵՆՔԻ ԵՍՏՈՒՆ ԴԱՍՈՒՆԵՆ յԻՍՈՒՆ ԹՈՒՆ
 մեծ զուտ արծաթի դրամ: որ և երկոցունց
 դասուց ժողովրդացն տարեալ ետուն վերա
 կացու իշխանին՝ ի վճարս պարտուց իւրեանց:
 և վն մնացորդաց պարտուցն խնդրեցին զաւ
 ուրս ինչ ներել զի զայն ևս գտեալ յուստեքէ
 վճարեցեն:

Եւ ուն զՎն մատնիչ յուրայն, որ բաժա
 նեալ անջատեցաւ ՚ի գնդէ երկոտասանիցն.
 Վրք երկու յազգէն Հայոց՝ և յայսմանէ ժողո
 վրդէնէ՝ ՚ի դասուց զարապաշ մէլիքին. միոյն
 անունն բաղդասար և միւսոյն ախիջան, եղէն
 արբանեակք սատանայի և աման չարին. հակա
 ոակք եղէն քրիստոնէից և ասեն, եթէ տաք
 մեզ իւրաքանչիւրոցս տասն տասն թուման ՚ի
 գանձէդ, զոր ետ Ֆռանկ եպիպան, բարի է՝ ոչ
 ինչ ասեմք. և թէ ոչ տայք, գնամք առաջի
 իշխանացն նաև թգլրին իսկ, և ասեմք. սք
 գնացեալ Ֆռանկ դարձան, վն այսորիկ ետ
 սոցա եպիպան զգանձս. զոր բերեալ ետուն
 ձեզ: Իսկ միւս արքն աղաչէին և ասէին՝ այժմ
 ներեցէք մեզ՝ զի զայս գանձս տամք ՚ի պարտս
 թգլրին, Քրթահա ձերով իսկ աջօք տեսանէք՝
 թէ ուն կարի ճշդիւ պահանջեն յարդեան
 աւուրս, և յետոյ ՚ի մէնջ յամ ժողովրդէնէս
 ժողովեմք և տամք ձեզ՝ ուն և կամք ձեր հաճի:
 Եւ նորա ոչ եղէն ժուժկալք՝ և ոչ անսացին
 բանից և աղաչանաց նց, այլ ելեալք գնացին
 առ իշխանս մահմետականս: Սուտ խօսեցան
 զՀայոց Կասացին. թէ Հայք գնացին առ
 Ֆռանկան, և դարձան ՚ի հաւատս նց. առեալ
 զգանձս զայս և բերեալ վճարեցին ձեզ: Եւ
 թեանք մատնիչք արքն երկոքինս ամենիւք
 նստանեօք իւրեանց դարձան յօրէնս մահմե
 տի, և

տի, և անտուժի կալան զայն հաւատն, զի քե
նիւք ընտանեօք եւրեանց թլփատեցան:

Եւ ելլիք այսմ բանի յոյժ խոժոռեցան իշ
խանքն մահմետականք՝ և ասելով զբանն ընդ
միմեանս, մինչև էհաս բանն յունկն թագաւ
որին, որոյ կարի ծանր և դառն թունեցաւ:
Որև հրամայեաց բերել առաջի իւր զմէլիք
ներն, և նախ զղարարաշ մէլիքն գտեալ տա
րան յայնմաւուր, ընդ որում խօսեցաւ արքայ
և ասաց մեղադրանօք և սպառնալեօք: Ով
ազգ ապերախտ և չար, արժանի բնաջնջի
և կոտորման, ես ողորմեալ ձեզ ետուզայսքան
գանձ, և զայսքան ամաց շահն ևս շնորհեցի
ձեզ, և խոստացայ այլևս շնորհել եթէ դառ
նայք՝ ի հաւատս մեր, և դուք ասացիք վասն
դանձի ոչ դառնամք՝ ի մերոց հաւատոց: և
այժմ զհարդ դարձեալ էք՝ ի հաւատն Փռան
կաց և առ եպէք՝ ի նոցունց զգանձ, արդ եթէ
վն գանձի դառնայիք՝ ի հաւատոց՝ ի հա
ւատս, զինչ էր նունաստուծի և արատ մերոյ
հաւատոյ՝ յոր ոչ դարձայք: Պատասխանեալ
մէլիքն իւրովք ընկերովքն, Ով հրաշագան և
տիեզերակալ արքայ՝ բաւ լիցի մեք դառնալ
՝ ի մերոյս հաւատոյ, ոչ եմք դարձեալ, այլ
կամք՝ ի հաւատն մեր ոպ և էաք յառաջն. և
որք զբանս զայս ասացեալք են զմէնջ առաջի
բում ահրուժեդ՝ նորա զսուտ են ասացեալ և
զգանձն զոր՝ ի Փռանկաց առաք՝ զփոխ առաք,
զոր և բերեալ տունք՝ ի տեղն պարտուցն:
Պատասխանեալ ասաց արքայ, Եւ ճշմա
րեա խօսքդ ձեր, բանզի պատճառանօք եւ
փոխդ այդ, զի թէ ստուգիւ փոխ էր՝ յայլոց
ազգաց զհարդ ոչ առնունիք այլ միայն ի
Փռանկաց:

Եւ թէպէտ 'ի բազում աւուրս բազմաւ կերպիւ խօսեցան ժողովուրդքն. այնուհետեւ բնաւ ոչ ետ զտեղի բանից նց արքայ: այլ ուն նախէր ասացեալ. սոյնպէ և այժմ ասաց' եթէ դառնայք յօրէնս մեր յոյժ բարւոք առնէք. զի զորինչ և պարտիք զայն ամ շնորհեմ. և իվ ը այնր բազում և այլևս պարգևս և զձիրս բաշխեմ ձեզ: ապա թէ ոչ դառնայք. մատնեմ զձեզ 'ի տանջանս անղերժանելիս. զի իմէջ տանջանաց վատնեալ սպառեցցին ոգիք ձեր' և ընդ վայր սատակեսջիք: Օ որ և իսկոյն մատնեաց 'ի ձեռս դահճաց. զի թարց իմիք ներեոյ հանապաղ տանջեցեն մինչ կամ դառնանս կամ մեռանին:

Եւ այնուհետեւ եկն և էհաս իվ ը ողորմելի ժողովրդեանն մէգ՝ մառախուղ' և խաւար ան փարատելի, զի վաղվաղակի փութացեալ անօրէն դահճացն այսր և անդր գտին զամ արս 'ի ժողովրդեանէ անտի. կալան, և սկսան յանխնայ չարչարել. հարկանել և վերաւորել. 'ի կախաղանի և յորսայս. 'ի շղթայս և 'ի կոճեղս. 'ի բանտս և յարգելանս. սովու և ծարաւով զբազում աւուրս. և աղաղակ ժողովրդոցն. լալ և կոճ արանց և կանանց ընդ իրեար խառնեալ յերկինս հաւաներ:

Եւ զզարապաշ մէլիքն կախեալ գլխիւ այր այնքան բրածեծ արարին որ ոտաց ընկունքն թափեցան. և յարենէն ամ մարմինն թաթաւեցաւ և էղև անշուշ իբրև զմեռեալ. վն զի կարի յամտ անողորմ հարին յահ և յերկիւղ միւս քրիստոնէից ըմբռնելոց. և ընտանիք նրտարեալ ծածկեցին իմէջ փայլնի: և Պարտիք զօրականքն. որք չարչարելին զժողովուրդսն. վն խաբելոյ զայլ ժողովուրդսն համբաւ:

156 Բռնութիւն տաճկացուցանելն .

զհամբաւ հանին . թէ զարապաշ մէլիքն պաճկացաւ :

Եւ պորտիցն որ զայս ամ ամին ի վրնց՝ իմա ցան զհաստատուն միտս նց՝ և ծանեան եթէ մեռանիլ կամին և ոչ դառնալ յօրէնսն մահ մետի . այնուհետև բռնութիւն ի վայր կոխեալ թլփատելին . և ասել տային զդաւանութիւն հաւատոյն իւրեանց : և բազումք՝ ի քրիստոսն էինցն կաշառս ետուն զօրականացն , և թլփատողացն . և զերծան ի թլփատութիւն :

Եւ ապա գնացեալ ասացին շահին . թէ զարապաշ մէլիքն և իւր ժողովուրդքն կատարեցին զհրամանս թգրին . զի թլփատեցան , և դաւանեցին զմեր դաւանութիւն . և եղեն մուսուրմանք :

Եւ այնժամ զուարճացեալ շահն հրամայեաց . թէ դոցամիցան՝ որք եկին ի հաւատս , թողէք զառաջին պարտսն , զորս տալոց էին . զի շնորհեցի : և այլևս զպարգևս նորս այժմ տուք , զի մխիթարեցին ի վր վշտացն՝ զորս կրեցին : Եւ յայնմանէ հրամանէ թգրին լուծին զմզամենեսեան ի կապանաց , և ետուն նց զպարգևս իւրաքանչիւր տան առանձին երեք թուման դրամ : և առ սոսա այսպիսեալ կերպիւ վճարեալ զիրակութի գործոյն , դարձան ի տունս իւրեանց : զի երեկոյացեալ էր օրն :

Եւ զկնի սոցա էհաս կարգն ի զրխեալան մէլիքն՝ և ի ժողովուրդս նր . և յայնմ երեկոյին եկեալ դահճացն կալան զզրխեալան մէլիքն և տարան , որում հրամայեցաւ ի թգրին դարձիւր յօրէնս մահմետի . և առ քեզ զպարգևս , և զմեծութիւնս , և զմեծական իշխանութիւնս . և մի մատներ անմտաբար զանձն բոլոր ջանաց և ի կեր առիւծուց , և շանց . որևէ

զաննսն պատրաստական անդէն կապեալ ունէ
 իսկ Ղրխեալան մէլիքն եթէ յահարկութե
 և յամօթոյ թգլրական ատենին՝ և թէ յերկիւ
 ղէ տանջանացն. և թէ ՚ի պատրանաց խոստ
 մանց. յանձն է առ կատարել զհրամանս թգլո
 ըին՝ որ և անդէն իսկ դաւանեցուցին նմա զդաւ
 անութի հաւատոյն միսմետի՝ և տաճկացաւ :
 Իսկ իշխանքն և այլ մասմետականքն սկսան գո
 վել զնա և ասել : զայդ բարւոք արարեր՝ զե
 եկիր՝ ի ճշմարիտ հաւատս. և ի վրայդ մպարտե
 քեզ. զի և զժողովուրդսն քո զամեն բերցես՝ ի
 հաւատս յայս : Իսկ Ղրխեալան մէլիքն սկսաւ
 թիմաստ և անդէտ բարբանջելով խօսիլ. և լ
 խօսիլն զտէր բաղդասարն մատնել. բանզի
 առաց՝ զկարծիս ունիմ՝ թէ ժողովուրդքն
 ամբն դառնան և ոչ դիմադարձին. և թէ դի
 մադարձի բաղդասար էրէցն միայն. և թէ նա
 դառնայ ժողովուրդքն ամբն դառնան :

Եւ միսհա հրաւեր լուրս՝ և դառնահամբաւ
 բօթս այս յայնմ իսկ երեկոյի է հաս առ բաղ
 դասար էրէցն և առ ժողովուրդսն. որք և
 յահէն հասին ՚ի դրունս դժոխոց :

Իսկ քահանայն բաղդասար յայնմ գիշերի
 զյոյս և զհաւատ արիականաւ հաստատութե
 ժողովեալ առ ինքն. հաւաքեալ զամ ժողովիս
 քրիստոնեայս յաղօթմանոց տունն՝ զոր ՚ի քար
 վանսարայի անդ սահմանեալք էին : և սկսաւ
 քարոզել ժողովդեանն զմարդասէր գթութի
 և զողորմութիւն Մ. Ղրխեալ գիտեր. և յորդո
 ըեաց զնոսն յաղօթս և յաղաչանս բազմահա
 ռաչ և մեծակականօք ողբովք և աղբիւրս
 հոս արտօսուօք խնդրել ՚ի Տէ հեշտալոյ և
 անոխակալէ. զի դարձուցէ զցառումն բար
 Թե սրտի թգլրին ՚ի գութ ներողութե
 ընդ

158 Ր մբռնուամն տէր Րանդտասարին .

ընդդէմ նոյն և ամբն ժողովիքն մեծիւք պատշա
տանօք կային մինչև ցառաւօտն յաղօթանցի
անդ խնդրել 'ի Տէ զգութ և զողորմութի :

Եւ ինքն բաղդասար քահանայն . յերկօրեայ
սկսաւ ցայգազաշտօն սաղմոսերգութիք զգիշե
րային աղօթան կատարել . և անդէն զժողո
վուրդսն խոստովանեցուցեալ մատոյց զածայ
ին պատարագն՝ հաղորդեաց զարժանաւորսն
'ի պատուականէ մարմնոյ և յարենէ Որդւոյն
Մ. Յ. Եւ այգ առաւօտուն մինչև էր բաժա
նեալ զմութն և զլոյսն . ամենից աղօթականաց
կարգաց զաւարտումն արարեալ կատարեցին :

Իսկ ընդ լուսանալ առաւօտուն շէշտակի
ձիրնթաց արշաւամբ եկին զինուորք և զօրա
կանք իբրև զչարգազան պատեցան շուրջ զտէր
բաղդասարին . քարչեցին արտաքս : և ձգե
ցին առաջի երկվարացն՝ ընթացմամբ վարէին
փութանակի հասանիլ 'ի դիւան թիւրին :

Եւ 'ի հասանիլն՝ ի դուռն թիւրին շուրջ զնո
վաւ պատեալ մարդադէմ գազանքն կրճտեին
զատամուսնս . և խրոխտականիւք բանիւք
ջանային ատամամբք քանցել զմարմին նր :

Իբրև նստաւ թիւրն յատեան . տարան առա
ջի զտէրբաղդասարն . ընդ որում խօսեցաւ
արքայ վն դառնալոյ նմա՛կ Վնականաց հաւա
տոցն . և թէ յամառեալ ոչ հաւանիս շանց և
առիւծուց կերակուր լինիս . որև վն զնն ահա
ցուցանելոյ անդէն պատրաստական ունեին
զգազանսն :

Եւ անշուշտ խոստումն Տն մերձ Յն Վն
աստանօր կատարեալ ցուցաւ՝ որ ասաց . յոր
ժամ տանիցեն զձեզ առաջի դատաւորաց . և
թիւրաց՝ մի հոգայցէք . և մի զմտաւածիցէ
թէ զինչ պարտիցէ ձեզ խօսիլ . զի ասցի ձ



բան և իմաստութի 'ի ժամուն յայնմիկ՝ զոր
ինչ յարտիցէ խօսիլ : զի ոչ եթէ դուք իցէք
որք խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ խօսեսցի 'ի
ձեզ : Որով տունեալ պատասխանի բաղդա
սար քահանայն թիւրին՝ և ասաց : եթէ ասես
ինձ իմօք կամօքս՝ դառնալ յիմոցս հաւատոց
ես կամօք իմօք ոչ դառնամ : և թէ բռնութի
դարձուցանես . ոչ է այդպիսի հրամայեալ քեզ
որինադիրն քո : և թէ վստարտուցն քոց ասես և
խնդրես . զյորովն տունեալեմք . և որինչ մնա
ցեալէ . զայն ևս այսօր և 'ի վաղիւն վճարեմք :
Եւ զորորինակ ջուր ցուրտ հեղեալ իմէջ
եռանդնոտ կաթսայի . նոյն ժամայն նստու
ցանէ զնորին փրփրալի եռանդն . այսպի բանք
տեառն բաղդասարին ցածոյց զբարկութե
թիւրին : որոյ պատճառէ այլ ոչինչ ասաց ար
քայ . բայց միայն զայս՝ թէ դնացեալ տուր զմնա
ցեալ պարան քո :

Բոր Տրն Քն որ ասաց՝ ուր երկու և երեք
ժողովեալք են յանուն իմ, անդ եմ ես իմէջ
նց : նոյն ինքն և այժմս ևս նայեցաւ 'ի ժողովս
նց . և 'ի ցայգաշպաշտօն արտասուալի յաղօթս
նց . և ցածոյց զբարկութի թիւրին . յորմէ զեր
ծան տէր բաղդասարն և ժողովուրդքն յեր
կուց վտանկից , 'ի տանջանաց և յուրացութի :
այնուհետև վճարեցին զմնացորդս պարտուց
թիւրին : առին զգիր ազատութե . և գոհա
նալով զՏԷ կային խաղաղութի :

Իբրև այս ամ կատարեցաւ իվերայ ժողովր
դոցն՝ որք զման ինչ 'ի նոցունց և զմէլիքներն
գարձուցին 'ի դաւանութին մահմետի : այնու
հետև վերոյ ասացեալ Փռանկ եպիսն եկեալ
առ թիւրին շահաբաս ասաց : ունիմ ընդ քեզ
պատանաւ խօսք ինչ . զի դու խնդրեցեր
զտունեալ

զտոճեալ պարտանքո՛րի հայոց . և նորա զոչնչ
 ունեին զի տոճեալ վճարեացեն . և ես վն՝ Քն
 ականաց հաւատոցն ետու . նց զդրամ . զի տացեն
 ՚ի պարտանքո . և կացցեն ՚ի Վնական հաւատս .
 զոր և բերեալ ետունքեզ և վճարեցին ըզ
 պարտանքո : Իսկ դու յետ առնլոյ դրամին
 ոչ թողեր ՚ի հաւատս Վն . այլ դարձուցեր
 ՚ի հաւատն ձեր՝ որով հետե այսպէս արաւեր .
 իրաւունք դատաստանին վկայեն վասն իմոյ
 տոճեալ գանձին առ իս դաւնալ . արդ խընդ
 րեմ յարքայէ զի զդանձն իմ առ իս դարձու
 ցէ : Իսկ թգլրին մտախոհեղեալ ետես զի
 իրաւամբք էր բան եպկպսին . զերկու հար
 իւր թուման դրամն դարձուցեալ առ եպկպսն
 վճարեաց նմա :

Իսկ զարապաչ մէլիքն և ժողովուրդքն՝ զորո
 բունութք դարձոյց շահն յօրէնս մահմետի
 այն միայն էր զի յատենի այնդ ասացին զդաւա
 նութի տաճկաց . զկնի այնմիկ այլու՛ի կային իվր
 քնականաց հաւատոց . և ևս առաւել հաստա
 տունքան զառաջինն , վն խղճմատանաց ուրա
 ցութեն : Վնան զի զտղայսն մկրտէին . զվե
 րեալն քահանայիւք թաղէին . և յեկեղեցին հա
 նապազ գնացեալ աղօթէին՝ և խոստովանեալ
 հաղորդէին . և մահմետականացն ոչինչ փոյթ
 էր նոցին այնպէս առնելն . որոց վկնի որդիք
 նոցին ամքն բրիստոնեայքն են այժմ և ՚ի ժո
 ղովուրդս բրիստոնեից բնակեալք :

Իսկ խղճմտանք զրխեալան մէլիքին ա
 ռաւել սոգտեալ յանդիմանեացնա . որև
 զկնի ամաց ինչ անցանելոյ . էպու զկին իւր իրե
 ինչ պատճառանօք թէ գնամ ՚ի թաւրէզ . և
 անցեալ զայնու գնաց յեմ , կատարեաց գնմ
 ուխտ տնօրինականացն Վն : և մնացին



էն ինքն և կինն իւր: և վասնզի արուճեստիւ
քարագործ էր. վասն սրբոյ եհմի գործէր ա
ռանց վարձու. ակն ունելով 'ի Տէ վարձուցն
հատուցման զամ ժամանակս կենաց իւրոց՝
զորս եկեաց. և անդ էն 'ի քաղաքին յեհմ վախ
ճանեցան. և թաղեցան զրխեալուն մէլիքն և
կինն իւր. որոց արասցէ Տրն Վս զնեբու մն և
զթողութի իւրով անբաւ ողորմութբն՝ ամէն:

Միւսն պատմութի նեղութեց՝ զորս կրեցին աղբն Հայ
ոյ յառաջնոյ շահաբաս թգլբն:



ԺԿ
Ի ԵՂ ԵՒ ԵՆԻ ՅԱՆՈՒՐՈ

Ժամանակաց՝ յորում ամի էր թուա
կանն մեր հազարևվաթսուներկնն, զի
թգլբն շահաբաս մեծն և առաջինն, ելեալ 'ի
քաղաքէն ասպահանու գնաց յերկիրն փարե
այ և 'ի բուրվարի, յորում զագգն հայոց բնա
կեցուցեալ էր:

Եւ զի սովորութի էր այս շահաբասիս զի
երբեմն այլակերպեալ զինքն ձևանայր 'ի բրև
զմի 'ի զորականաց՝ և գնայր 'ի տեղին ուր գնա
լոյ էր, և ըստ այսմ սովորութե յայսմ նոճագի
ևս արար, զի ինքն միայն և իւր յառաջ ընթաց
փայելն, նախ քան զաման զորան եկին յառաջին
գեւղն երկրին փարեոյ՝ զոր դարբնի գեւղ ա
սեն: Որում հանդիպեալ կին ոմն՝ ինոյն գեղ
ջէն, և կինն ոչ գիտէր զնա թէ շահն իցէ, խօ
սեցաւ շահն ընդ կնոջն և ասաց՝ եթէ ունիս

հաւ վաճառեայ՝ բեր առ իս զի գնեցից: Երև
էբեր կինն զհաւն, և 'ի պատճառէ հաւին
բաղոմ խօսս և զբանս առաջ արկեալ փորձ
որձ ընդ կնոջն, խօսէր զնանրութի և 'ի

սիրտս իւր ժողովէր զանօրէնութի : Եւ ձի կարգս խօսիցն ասաց շահն , զտասն փող տամք քեզ ՚ի գինս հաւիս՝ և թէ դու սիրես . զշահն սուր մեզ զհաւս : և կինն ասաց՝ զինչ լաւագոյն բարիս և զերախտիս տեսաք մեք՝ ի շահն՝ որ վն սիրոյ շահնն տաց քեզ զհաւս : Եւ շահն ասաց՝ զինչ այլևս բարիս արասցէ ձեզ շահն , զի յայսպիսում լաւ և վայելուց երկրի բնակեցուցեալ յայգահով պահէ զձեզ յամենից նեղութեց . և քաղցրութի , և գթով վարի ընդ ազգեդ ձերում : և կինն ասաց , երանի թէ ոչ էր բերեալ զմեզ՝ զի վտարանդի արարեալ է հան զմեզ՝ ՚ի նախնւոյ աշխարհէն մերմէ , ՚ի բնիկ տեղեաց , և ՚ի հայրենեաց ժառանգութեց , և բերեալ աստէն յօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութի :

Իսկ այս բան կնոջն եբրե զերկայրի սուր պատահեցաւ ՚ի սիրտս շահին , վասնզի կարի ծանր և դառն թուեցաւ նմա , մինչև ՚ի սիրտ և ՚ի յոգի խոցեալ լինէր , և յառաւել բարկութենէն լռեալ կայր՝ և ոչինչ խօսէր : և ՚ի ժամս յայս եկին և հասին առ շահն նորին նախապատիւք և փառաւորք նախարարքն , սպանդիար բէկն և այլք , և ՚ի տեսանելն զնա այնպէ զայրագին բարկութի բռեալ զոչինչ խօսեցան , այլ լռեալ կային ՚ի բացեայ :

Եւ ահա գայր , և անցանէր առ նոքօք էրէց գեղջն այնմիկ՝ որոյ անուն էր տէր աւետիս . որ ՚ի հողագործութենէ անդին եկեալ գնայր ՚ի տուն իւր : եբրե հտես զնա շահն կոչեաց առ ինքն՝ էհարց , թէ ինչ մարդ ես , ասաց էրէցն չեյեմ , ասաց շահն՝ և զի վն երկայն է մորուսդ , ասաց էրէցն , գեղիս էրէցն եմ : ասաց շահն՝ եկ մուսուրման եղիր , ասա

էցն, ես այր գուեհիկեմ, և մանաւանդ ծերացեալ եմ, և ոչ կարեմ կատարել զարարարո ղութիս մուսուրման օրինաց : Եւ զայրագին սրտմտութիւն թգլրին կարի յորդեալ առաւելաւ՝ որև ոչ հանդուրժեալ՝ ի բարկութենէ իւրմէ շահն, այլ հառ ՚ի ձեռաց փայեկին զկացնակն, որ է նաջախն՝ և նովաւ ուժգին բախմամբ է հար զգլուխ երիցոյն և կարի պատառեաց : Որոյ վիրացն և բախմանն չհանդուրժեալ տեւիլ երիցոյն, այլ ուշաթափ եղեալ անկաւանչնչացեալ իբրև զմեռեալ : և ՚ի սաստիկ բարկութենէ իւրմէ շահն անդէն ՚ի նմին ժամու հրամայեաց մերձակայիցն թլխատել զնա, որ և վարվաղակի թլխատեցին, թէ պէտէրէցն իբր զմեռեալ անզգայ էր : և թողղեալ զէրէցն այնպէս ինքն անցեալ գնաց ՚ի բանակետոյն ՚ի վրանն իւր :

Եւ այնուհետև բարձաւ գութ և ողորմ ՚ի սրտէ թգլրին ընդդէմ հայոց, և կոչեաց առաջի իւր զվէզիւրն, ընդ նմին և զշէխն, որոյ անունն էր միր աւդուլոյ, և հրամայեաց նց զօրականօք մտանել ՚ի գաւառսն յայնոսիկ, և ծագ է ՚ի ծագ տաճկացուցանել՝ և թլխատել : Եւ որոք կամօք և յօժարուժք հնազանդեացի բարւոք է, և որոք ոչ հնազանդեացի, տանջանօք և բռնութք թլխատեցեն, և դարձուցեն ՚ի կրօնս մոլար առաջնորդին : բազմօք սաստիւք և սպառնայեօք զպատուէր տուեալ նոցա կատարել զամսն հրամանս իւր, և ինքն դարձեալ ՚ի փարիոյ եկն ՚ի քաղաքն ապպահան :

Եւ յայամօնէ հրամանէ թգլրին հալածումն մեծ եղև ի վր հայոց, զի թողեալ զտունս և զընտանիս, և զինչս, և ելեալք ցրուեցան իւրաքանչ

քանչիւրոք հանդէպ երեսաց իւրոց, 'ի լե-
րինս և յանապատս, և յանմարդաձայն փեղիս
և բազումք գնացեալք 'ի հեռաւոր գաւառս,
փոխեալ զանունս և զձևս, և այնպէս կային
անգիտելի ումեք: և ոմանք 'ի նոցանէ զբա-
զում աւուրս քաղցեալ և սովալլուկ լեալ
Թափառական շրջէին 'ի լեւրինս. և ոչ կարէին
'ի շէնս մտանել կամ ումեք երևել, վս ահի
Թագաւորին և Թլխատողացն:

Եւ իշխանքն, որք կարգեցան Թլխատողք՝
մտին ի գաւառան, և զորս գտին, սաստիւ և
սպառնալեօք տանջանաց՝ և բռնութիւն զամե-
նեսեան Թլխատեցին, եթէ աշխարհական
և Թէ էրէց:

Ի սոսաացելումն օրինակի առնելով հասին
'ի փառչիս գիւղն, և անդ ևս կատարեալ ըզ-
գործս իւրեանց անօրէնութիւն: Ելեալ անտի
կամէին գնալ 'ի գիւղն փահրան, և տանու-
տէր գեղջն փահրանու՝ որոյ անունն էր նու-
րիջան, ասաց ընդ իւրում գեղականացն: Ե-
կայք զինուորեացուք և միաբանութիւն զդէմ
կացեալ սրտերազմեացուք ընդ այլազգի
Թլխատողացն. և մի Թողուցուք մտանել 'ի
գիւղս մեր, և գիւղականացն ոչ լեալ միաբան
և ընկեր մին, այլ փախուցեալք ցրուեցան 'ի
լեւրինս: Իսկ նուրիջանն ինքն միայն ածեալ
զիւրեաւ սուսեր, և առեալ զնետ և զաղեղն, և
գնացեալ զկէս ճանապարհին, և ելեալ 'ի
գլուխ փոքր և բոլորակ բլրի միոյ, առ որոյ
ստորոտովն ճանապարհն անցանէր: Եւ Թլլ
փատողքն ելեալք 'ի փառչիւրց յուղիանկեալք
գնային 'ի փահրան, իբրև մերձ եղէն տու ստո-
րոտս բլրին, և ահա յանկարծակի ահագին
գոչմամբ զձայն արձակեալ նուրիջան՝ և իւր
ՏԼԱ

ու մ դ ար ան ե ա լ տ ե ղ ո ջ է ն ս կ ա ա ն ե տ ա ձ ի գ լ ի ն ի լ ա ու ն ո ս ա , և ա յ ն ա ի ս ե ա ա ն ե տ ա ձ գ ու Թ թ ար գ ե լ և կ ա ց ո յ ց զ ն ո ս ա ' ի գ ն ա յ յ : և ա պ ա ար տ ա ք ա ե կ ե ա լ ' ի դ ար ան է ն ս ս տ է պ ն ե տ ա ձ գ ու Թ թ և հ ա լ ա ծ ա կ ան ա ու ն ե լ ո լ յ ե տ ս դ ար ձ ու ց ե ա լ ան դ ր է ն ' ի փ ա ու չ ի ս է լ ի ց ի մ է ջ գ ե ղ ջ ն , և ի ն ք ն դ ար ձ ա ա ' ի գ իւ ղ ն իւր ' ի փ ա հ Տ ր ան :

Ի ս կ Թ յ լ ի ատ ո ղ ք ն ' ո ռ ք դ ար ձ ան ' ի փ ա ու չ ի ջ կ ա ց ի ն մ ի ն չ և ց եր ե կ յ յ ն , և ա պ ա ա ու ա ր ե ց ի ն լ ռ ա ե ս գ ի ս ե ն ա լ Թ է ուր ան օր ի ց է ն ուր ի ջ ան ն , և լ ռ ա ե ս ն ե կ ե ա լ պ ա տ մ ե ա ց Թ է յ իւր ու մ ն տ ան կ ա յ աւ ան ի կ : Յ ա յ ն Ժ ա մ ա մ ե ն ի ց Ա ր ս ի ց ն ս պ ա ու ա ղ ի ն ե ա լ ք զ գ ի ջ եր ա յ ն ե լ ե ա լ ք գ ն ա ց ի ն ' ի փ ա հ Տ ր ան և պ ա տ ե ց ի ն զ տ ու ն ն ն ուր ի ջ ան ն , և կ ար ե ա լ կ ա պ ե ց ի ն զ ն ա , և ' ի լ ու ս ան ա լ աւ ուր ն ար կ ի ն յ ո ռ ս ա յ ս և ս կ ա ան բ եր ա ծ է ծ ա ու ն ե լ զ ն ա , և ա յ ն ք ան հ ա ր ի ն ո թ ամ ե ն և է ն ո ղ ան դ ամ ո ջ մ ն ա ց ' ի մ ար մ ն ի ն ր ' և ե ղ և ի բ ե և զ մ ե ու ե ա լ , ո թ և ան դ է ն ա ու Ժ ա մ ա յ ն Թ յ լ ի ատ ե ց ի ն և ա պ ա ' ի բ ա ց ի կ ա ց ի ն ' ի ն մ ան է : Ի ռ գ ե ղ ա կ ան կ ան ա յ ք ն տ ար ե ա լ Թ ա ղ ե ց ի ն ի մ է ջ փ ա յ ի ն ի մ ի ն չ և ց եր ի ս աւ ուր ս , և մ ն ա ց ն ուր ի ջ ան ն ա յ ն ու ց աւ ո լ հ իւ ծ ե ա լ մ ար մ ն ո լ յ ան կ ո ղ ն ի ամ ի ս ս չ ո ռ ս , ո թ ո ջ կ ար ե ռ կ ան գ ն ի լ ի ը ո ս ի ց :

Ի ռ ա յ ս պ է ս Թ յ լ ի ատ ո ղ ք ի ջ խ ան ք ն չ ը ջ ե ց ան յ եր կ ո ս ի ն գ աւ ա ու մ ն , ' ի փ ա ր ի ա յ և ' ի բ ուր վ ար ի , զ ո ռ ս և գ տ ի ն Թ յ լ ի ատ ե ց ի ն Թ է ա ջ խ ար հ ա կ ան և Թ է էր է ց , և ' ի զ ռ աւ ե լ ամ ի դ ար ձ ան յ ա ս պ ա հ Տ ան ք ա ղ ա ք ' և պ ա տ մ ե ց ի ն Թ գ լ ի ն : Ի ռ շ ա հ ն հ ռ ա մ ան ար ար մ ն Թ յ լ ի ատ ե ա լ եր ի ց ան ց ն Թ է յ ար բ ու ն ա կ ան է գ ան ձ է իւր ար ան ջ իւր յ եր կ ց ու տ ա ց է ն զ ք ա ու ա ս ու ն ո ջ խ ար , և ար ար ի ն ա յ ն ա յ է ս : շ ա հ ն զ ա յ ս ո ջ խ ար ք ս մ ն ա յ ն ի տ եր ի ց ան ց ն , զ ի ո մ ան ք յ եր ի ց ան ց ն ա գ ա հ ե ա լ

յինչն հեշտասցին այնու տրօք • և մի գրգռեն
ցեն զԺողովուրդս իւրեանց դառնալ՝ ի տաճ
կութի : և ոմանք, որք կերեալք և վատնեալք
եցեն, յերկիւղէ վճարելոյն կացցեն՝ ի տաճկու
թեան :

Յետ այսորիկ խորհրդով նախաջարին լցեալ
շահն • առաքեաց այլևս զիշխանս զօրականօք •
և հրամայեացնոցա գնալ յերկոսին գաւառսն •
շրջիլ յամնն գեղորայս, և ըմբռնել զամնն
երիցունս՝ և սպառնալեօք ահացուցանել զնս •
և առնուլ զուխտ և զպայման՝ ի բերանոց նց •
զի մի պահեացեն զգիրս ինչ՝ ի գրեանց իւրց •
և թի եցի որ, որ պահեալ եցի • և որ որ զայն
յայտնեցի • գլուխն պահողին թգրական եղի
ցի • և ամքն ինչք և ընտանիքն ցուցողին եղիցին :

Օ այս հրամանս առեալ զօրականացն գնացեալ
շրջեցան յերկոսին գաւառսն • զգրեանսն և
զեկեղեցական անօթսն՝ զորս և գտին՝ բռնու
թիք յափշտակեալ ի բրիստոնէից • և առեալ
բերին յասպահան քաղաք՝ և ծանուցին շա
հն • և շահն ասաց պահել զամ :

Օ կնի այսորիկ առաքեաց շահն զբաղում
մօլայ յազգէն Պարսից ի փարիայ և ի բուր
վարի • զի անդէն կացցեն, և զօրէնս մահմե
տի ուսուսցեն Հայոց • և ժողովեացեն յամ ա
ուր ի մաջիդ առ ի յաղօթել • և զմանկունս
քրիստոնէից պարսկերէն կարգացուսցեն : Եւ
մօլայքն եկեալ ցրուեցան ի գեղորայս գաւա
ռացն ուր երկու և ուր երեք • և բռնաբարէին
զքրիստոնէայսն գալ ի մաջիթ և մտանել յօ
րէնս մահմետի մօլար առաջնորդին : Իսկ
քրիստոնէիցն դժուարեալ լինայն ողջն ազգն
դէին • այլ դեմագրաւեալ բանալիճ լինին •
և օր աուր առաւելեալ ի վէճս և ի բռնս
այն •

այնքան. մինչ զի 'ի մօլլայիցն զերես և զչորսս սպանին. և զայն տեսեալ այլոց մօլլայիցն երկուցեալք 'ի սպանմանէն փախստականք եղէն ամենեքեան՝ և գնացին 'ի տեղիս Էրեանց: Եւ ողորմելի բրեստոնէիցն կացեալ 'ի հալածանս և 'ի չարչարանս 'ի ձեռս Պարսից զամս երկու:

Եւ ապա այրոմն բրեստոնեայ՝ անունն գրեգոր. որ էր նախկին նա 'ի վայոյ ձորոյ՝ զոր եղեգաձոր ասեն, 'ի գեղջէն արփայու. և այժմ 'ի գաւառին փարևոյ գորով՝ բնակէր 'ի գիւղն զորն երբին խոյիկան ասեն: և էր սա մարմնովն պարթև և հասակ և յաղթանդամ. և սրտիւն արի, բանիւք և խելօքն հանձարեղ. և հաւատովն և սիրովն Վի հաստատա և ջերմագոյն: Եւս գրեգոր ելեալ շրջեցաւ 'ի գեղորայս գաւառին՝ և քաջալերեալ յորդորեաց զամսն ժողովուրդսն և եղև գլուխ և առաջնորդնց. էառ ընդ իւր զարսեօթն և եկն 'ի քաղաքն ասպահան: և գնացեալ էառ զբազում գանձս 'ի փոխ և բերեալ ետ իշխանաց շահին կաշառս. և հաւանեցոյց զամենեւեան զի 'ի պատեհ ժամու բարիս խօսեցին վն նց առաջի թգլրին:

Եւ պահնքն գրեաց զարզայ աղաջանաց և մատոյց առ թգլրն՝ ոչ թէ միանգամ կամ երկիցս. այլ հնգիցս և վեցիցս. այնքան խօսեցաւ յա տեան և 'ի դիւան թգլրին մինչև ձանձրանալ թգլրին և ասել թողի զձեզ 'ի կամս ձեր. գնացեալ պաշտեցէք զհաւատն ձեր, և գրեգոր աղաջէր, պաղատէր, 'ի ծունր իջեալ լալով խնդրէր 'ի շահէն՝ և ասէր. թէ զհրամանսդ զոր բանիւ ասեց. մատամբ միով թղթիւ շնորհեալ մեզ:

Եւ յառուր միում յորում շահն ելեալ յա պարսնից իւրոց գնայր 'ի հազարաջրիպ այգին.

Տնագանգամ եկեալ առաջի շահնն զնոյն
 Թուղթն խնդրեաց. յորոյ անձանձիր խնդրոյն
 ձանձրացեալ շահն, գրեալ զնոմնս Թագաւո
 ռականաւ կնքով ետ ցգրեգորն. Թէ զՏրաման
 ետու ամենից քրիստոնէից բնակելոց՝ ի գաւա
 ուն փարիոյ և ի բուրվարոյ՝ զի համարձիկ պաշ
 տեսցեն զքրիստոնէու թէ հաւատն իւրեանց:

Վլլև յետայսորիկ խնդրեաց գրեգորն ի
 շահնն. զի զայցելու թի արարեալ ողորմեսցի
 Թգւրն. և շնորհեսցէ նց զիւրեանց գրեանսն,
 զորս յափշտակեալ բերեալք են. և զայն ևս
 շնորհեաց նց արքայ: Վլ գրեգորն և ընկերքն
 իւր առեալ զԹուղթն և զգրեանսն իւրեանց
 ուրախու թեամբ գնացին յերկիր և ի ժողո
 վուրդ իւրեանց:

Յաղագս պատճառիս այսմիկ Թգւրն շահա
 բաս էարկ զտուգանս ի վր քրիստոնէիցն ոսե
 լով, որովհետև ոչ հնազանդեցան հրամա
 նաց Թգւրի, տացեն զտուգանս ի դիւանն
 Թգւրի հաղար Թուման: Վլ յերևելի իշխա
 նաց իւրոց առաջակայից զոմն՝ զոր խոսրով սու
 թան կոչէին, կարգեաց վերակացուս՝ զի ա
 ուեալ ի ժողովրդ ենէն յանձնեսցէ ի գանձա
 պահս Թգւրին: որև եկեալ խոսրով սու
 թանն բազմօք զօրականօք, արար և կատա
 բեաց զՏրամանս Թգւրինս:

Վլ ողորմելի քրիստոնէայքն վս քնակա
 նաց հաւատոցն, զայս հաղար Թումանս, և
 զայն պարտքն՝ զոր գրեգորն և ընկերքն իւր ի
 սպահան արարին: և այլևս զորինչ ծախք լեալք
 էին զամնս վճարեալ հատուցին, և եղեն չքա
 որք՝ և աղքատք կարի յոյժ, բայց կայով ի
 հաւատս Վր ուրախեն և գոհանան ի Վր:

Իսկ գրեգոր այս այս օրաւուր յաւերյոյր ի
 հաւատս

Տաւատս և 'ի բարեգործութիւնս, նաև հաստէր զայլս ի վրձնահատոցն Վրե' և նախան ճախնդիր լինէր վս. քնականաց օրինաց : առ որ նախան ճախնեկ լեալ արիւնարբու մահմետականաց, և զըպարտեցին 'ի մահ զգրեգորն՝ քան զի զոմն մահմետական յիւրեանց ժողովրդէնէն ինքեանք սպանին, և բերեալ 'ի ծածուկ արկին յանդէն գրեգորին, եկին դատախազք և բերեալ կացուցին զնուս վկայ թէ գրեգորն սպանեալ է զայս մեռեալս : Եւ առեալ տարան յանուղղայ դատաստանն իւրեանց առաջի դատաւորաց, որոյ վրձնահատն թէ որով հետև զայդ արարեալէ դորա՝ կամ ուրացի, կամ սպանցի : և այսու զըպարտութիւնս դատապարտեալ սպանին զքնասէր զայրն գրեգոր : և բազումք վկայեցին վս նր թէ Տր վառաւորեաց զնա երկնաւորօք նշանօք լուսոյ երկնից, որում տացէ Վս զխոստացեալ արքայութիւնս իւր, և զմեզ ևս ընկալցի 'ի մասնակցութի սքց եւրոց եւրով ողորմութիւնս : Եւ մէն :

Վաներ ոչ գոյ ոչխարաց բողաւ յաշխարհին, որ արարտան կոչի :

ԺԵ .

ՐՎԵՅՆ ԸԼՏԵԲԵՍ



առաջինն . յոյժ սիրեաց զքաղաքն Փահրապատ . վս որոյ յամենից աշխարհաց ժողովեաց զժողովուրդ և էած անդ՝ ուր զի մեծացի քաղաքն : և ինքն որքան լինէր յապահովս 'ի թշնամեաց պարտերազմէ զձմեռնային ժմանակս անդ գնացեալ ինքն զմեզնէր : Եւ ըստ հանապազորդ սովորութի իւրոյ շահաբաս, որ գնայր 'ի Փահ ժա 5 . ըապատ .

րապատ. եղև երբեմն մինչ գնայր եկեալ է հաս
'ի սահմանս զաղբին քաղաքին 'ի գաւառն' որ
ասի թարիմ : 'ի գիւղն' զոր կոչեն խոռամաբատ
և անդ * իջեվանեալ բանակեցաւ Քանական
արքունի :

Իսկ ինքն շահաբաս ըստ հանապազորդ սո
վորու թէ իւրոյ' որ այլակերպեալ զինքն ձևան
այր որպէս զմիոք 'ի զինուորաց' և գնայր իմէջ
արանց և ժողովրդոց իմանալ և գիտել զբան
ինչ : այսպէս արար և յայսմ' նուագի. զի ինքն
և իւր փայեկն յառաջ քան զամեն զօրսն եկին 'ի
խոռամապատ ասացեալ գիւղն իբրև զմիոք 'ի
զօրականաց հեծելոցն. ետես 'ի գլխաւորաց
գեղջն զարս ոմանս, որք կային 'ի փողոցի' և
ընդ հարկահանաց իշխանացն հոգային ըզ
հոգս կարեաց արքայի' և այլոց իշխանաց : խօ
սեցաւ ընդ նոսա շահն և ասաց. ես և ձիս և
փայեկս միայն եմք' և ոչ եմք յոլովք զի ծանրա
բեռն թուիցուք ձեզ. խնդրեմ 'ի ձէնջ վէ
սիրոյ շահին տուք մեզ զտեղի յայսմ' գիւղերի.
Իսկ արք գեղջն զոչինչ կալան փոյթ զնորին
բանէն. բանզի հոգովք թգրկանաց կարեացն
պատաղեալք էին :

Վպա կին ոմն բազմամեայ պառաւ, որ 'ի նոյն
գեղջէն էր' ասաց առ շահն. եկ որդեակ' եկ
զի երթիցուք 'ի տուն մեր' և լեր մեզ հիւր. և
առեալ կինն զշահն և տարաւ 'ի տունն իւր
եկաց անդէն շահն մինչև ցերեկոյ : Իսկ ըստ
նիք պառաւ ին ամենեքեան մեռեալք էին' և
ունէր միայն զմի որդի' որոյ անունն էր լալայ, և
այնևս վասն կարի աղքատութե իւրոյ նախ
որդ էր մտեալ գեղջն. և ընդ ժամանելէրե
կոյին. լալայն բերեալ զնախիրն էր ձիւն, 'ի դէպ
և ըստ սովորութե իւրում' 'ի տանց գեղջն
ական

սկսաւ ժողովել յիւրաքանչիւրոցն զմի մի Տաց. և ժողովեաց զտանն և հինգ Տաց՝ զորև ունէր իմր բարկաց իւրոց և էբեր 'ի տունն իւրց. իբրև ետնս թէ հիւր կայ՝ ի տանն զամնն Տացան բերեալ էարկառաջի հիւրին, որ էր շահն ինքն: Իսկ պառաւն բացեալ զթոնսն էհան պուտ կով եփեալ կորկոտապուր՝ զոր ոմանք վաօջ ասեն. և շահն այն Տացովն էկեր զայն կերս կուրն. խօսեցաւ և Տարցումն արար ընդ նն զբանս բազումս. և յերեկոյն 'ի մթանալ գիշերոյն ելեալ գնաց 'ի տեղի իւր:

Ի նստի չուէեալ շահն գնացեալ էհաս 'ի Փահրապատ. և յորժամ դարձաւ 'ի Փահրապատայ, և էհաս 'ի նոյն գեղն՝ վերստին այլակեր պեաց զինքն՝ և խնդրեաց զիջեվանս՝ ի գեղա կանացն՝ և ոչ ետուն: Իսկ նոյն պառաւն դարձեալ եկեալ առաջի նր ասաց. դու մեր ես ծանօթ և հիւր՝ որդեակ՝ էկ և այժմ զի էր թիցուք 'ի տունն մեր. և գնաց շահն 'ի տունն պառաւին. և պառաւն կերակրեաց զնա ըստ օրինակին ուր և նախ պատմեցաք. մնաց անդէն շահն մինչև յերեկոյն՝ զբազում բանս՝ որինչ ունէր 'ի մտի, էհարց 'ի նոցանէ:

Ի պա ասաց շահն ցնոսա. բան ինչ կամիմ՝ հարցանել 'ի ձէնջ թե սիրէք զշահն զստոյգն ասացէք ինձ. ահաւասիկ այս տունս ձեր յոր ըում նստեալեմք. ինքն և որք զիւրև յարկք են լայն և ընդարձակ և մեծաշուք երեկն. սոյն պէս և ձեր խօսք՝ և բանք՝ և շարժմունք իբր զմեծատան երեկ. բայց տեսանեմ զձեզ կարի չքաւուր՝ և զտունս բնաւին դատարի: զսորին պատճառն խնդրեմ, զստոյգն ասացէք ինձ: Իսկ պառաւն յոգւոց հանեալ հառաջեաց մեծասէս՝ և սկսաւ ասել. տեսանես որդեակ զայս

զայս ամսոյդ է ասացեալն 'ի բէն . թէ տունս ,
 և որք ընդ սովաւ յարկք են մեծաշուք երևին .
 ստուգիւ էաք մեծատունք և ընչեղք որ բա
 զումք կարօտեալք և պանդխտականք յայս ամս
 բըս հովանաւորեալք ապրէին . և քաւորք , և
 աղքատք սովաւ լինեին ստացունածոց և գոյից
 տեարք . և ունէաք ջոկով զոչխարս , զհազար
 և զհինգ հարիւր գլուխս . և զերամակս մատակ
 ձիոց . և զբազում անդեայս զլծկան և զկթան .
 զարտ , և զայդի , և զըրաղաց . զոսկի և զարծաթ . և
 զտան կահս և զկարասիս յոլովս . և այն ամ
 մերժեալ 'ի մէնջ գնաց' և ոչ մնաց և ոչինչ . բան
 զի զմասն ինչ վաճառեալ տունաք յարքունս
 կան հարկն . և զմասն ինչ վաճառեալ տունաք
 պարտատունաց : և զմասն ինչ 'ի պէտս կարեաց
 մերոց' և եղեաք յոյժ չքաւորք : և յետոյ այրն
 իմ և իւր եղբարքն , և այլք ընտանիք , և որ
 դիք նոցին ամբն մեռան . և մնացեալք եմք
 ես և որդիդ իմ . որոյ մերձ է գոլ երեսնամեայ'
 և վս աղքատութե ոչ կարեմածել դմա զկին .
 և յայլմէ ուստեքէ ոչ ունիմք ապրելոյ զձար .
 վսորոյ զորդիս իմ արարի նախորդ գեղիս . որ
 յամ երեկոյի ժողովեալ զհաց վարձու իւրոյ
 բերեալ կերակրիմք ույ և տեսեր . և այսպէս
 անցուցանեմ զաւուրս իմ սպասելով մահու
 զի թերևս նա հանգուսցէ զիս 'ի տառապանաց
 իմոց :

Օարմանք մեծ կալաւ զշահն իվերայ ասա
 ցեալ բանից պառաւին . բայց ասաց շահն ,
 զայդ զոր ասացեր . թէ այրն իմ և ամբն ընտա
 նիքն մեր մեռան . այդ 'ի ձեռին Լ. Մ. է' զինս
 պահէ և մեռուցանէ : այլ վս ձերոյ ընչիցն զոր
 ասացեր թէ գնաց 'ի ձեռաց մերոց' և չեաք
 չքաւորք . սորին զինչ է պատճառն :

Լ. Մ. է

Ի սաց պառաւն ոչխարի քօղաւն է . զոր
 թգրական հարկահանքն եկեալ ոչխարաց զքօ
 դաւ տոնուն . զի տարեաց տարի գնալով զկնի
 միմեանց յորքան գնաց , ծանրացաւ քօղաւն .
 և այնքան ծանրացաւ , որ զնոյն ինքն զոչխարնս
 զամ վաճառեալ տոնաք ՚ի քօղաւն . և այնու
 ոչկարացաք զերծանիլ . զպարտս ևս առաք
 և տոնաք զքօղաւ . և ապա զինչս և զստացո՞ւծս
 օր աւուր վաճառելով զորս ՚ի քօղաւն տոնաք ,
 և զորս պարտատեարցն վճարեցաք՝ ոչինչ մնաց .
 քան զի կարի յոյժ ծանր է հարկ քօղաւին :
 և զայս ոչ գիտէ արքայն , և նորին նախարարքն՝
 այլ գրեն զորքանու թի քօղաւին և տան ՚ի
 ձեռս զօրականաց . և նորա եկեալ թէ կամայ
 և թէ յակամայ բռնու թք առնուն , ասելով .
 ՚ի դիւանէն թուղթն այնպ գրեալ և տոնեալ
 և հրամայեալ եղև մեզ . վնորոյ այսպ առնու մք
 և ոչ պակաս . զի թէ պակաս առնու մք մեզ
 տան վճարել զպակասն՝ ասելով թէ դուք գո
 ղացեալ էք : Եւ յայսմանէ պառաւն է չբաւորե
 ցաք . ոչ միայն մեք զոր տեսանես . այլև բա
 զու մք մեծատունք այսպ եղեն . ոմանք ՚ի մեր
 գեղ ջէս՝ և այլք յայլոց գեղորէից գաւառիս :
 որև սկսաւ պառաւն զայնոսիկ զամենեսեան
 յանունսն յիշել :

Ի սաց շահն ընդ էր ոչ գնան գիտուն և ճար
 տարախօս մարդիկ . ք յաշխարհէս ձերմէ՝ և ծա
 նուցանեն շահին . և ես գիտեմ յորժամ վերա
 հասու լինի շահն այդոցիկ՝ բառնայ զծանրու
 թի հարկիդ այդմիկ . քանզի շահն աշխար
 հաշէն թգլր է՝ և ոչ կամի թէ ու մեք զրկանք
 մնի : Ի սաց պառաւն բազու մանգամ գնա
 ցեալ անդողակեղին . այլ ոչ կարացին հանել ՚ի
 դիւանականաց մատենից զորքանու ՚ի քօղաւ
 ին :

174 Հրաւիրակ Վալաբէկին՝ Ի Շաշէն.

ին: Եւ մնաց շաշն՝ ՚ի տուն պառաւին մինչեւ
ցառաւօտն. և յառաւօտուն՝ ՚ի մթին ժամակ
ելեալ գնաց ՚ի վրանն իւր:

Եւ յետ առուրց ինչ առաքեաց զբնիցս յեր
կիրն յայն՝ զի զամ՝ ուրեթի աշխարհին գիտա
ցեն ստուգութիւն. որոց գնացեալ տեսեալ և
եկեալ պատմեցին շաշին թէ կարի առաւել
նեղուե միջի կան բնակիչք աշխարհին այսորիկ
վն պէսպէս պատճառի. և մանաւանդ վն քօ
դաւին: որով գտաւ իրաւ գոլ ամասացեալն
՚ի պառաւէն յայնմանէ: Եւ այս եղև պատ
ճառ զի անկաւ գութ և ողորմ՝ ՚ի սիրտ շաշա
բաս թգլրին՝ որով և եբարձ զքօդաւն՝ ոչ մի
այն՝ ՚ի զազբինու աշխարհէն. այլև յամարադ
ըստան աշխարհէ՝ ոչ գոյ այժմ քօդաւ յամ
աշխարհ, որ արադստան անուանի:

Եւ լև առաքեաց զիշխանս ՚ի գիւղն խօռա
մապատ. առ ՚ի սպանանել զարսն, որք ոչ ըն
կալան զնա. և առ ինքն ածել զպառաւն, և
զորդին իւր զլալայն. և իշխանն գնացեալ ա
րար ըստ հրամանաց շաշին՝ զի յարանց գեղջն
զերինն սպան. և զլալայն և զմայրն առեալ
էած առ շաշն: Իսկ շաշն ետ լալային զփառս
և զպատիւս՝ և զպետական զիշխանութիս. և ՚ի
դրան իւրուսմ մեծապատիւ և հաւատարիմ
նախարար կարգեաց. որ յետ այնորիկ կոչեցաւ
լալաբէկ: այլև յետ սորա որդիքն իւր էին
հաւատարիմք և նախապատիւք ՚ի դուռն թա
գաւորացն Վարսից: որև միուս յորդուոց սորա՝
որոյ անունն էր մահմադուլի բէկ. ետ թա
գաւորն զիշխանութի խանութե՝ որ կոչեցաւ
մահմադուլի խան. և առաքեաց ՚ի քաղաքս
յերևան, որ եկեալ տիրեաց երկիրս յամսինչ:

Եւ ՚ի պատմութի վասն այս լալաբէկիս թէ
ոմանք

ոմանք յառաջակայից շահաբասին 'ի պատ
 Քճառն նախանձու զչարախօսութի արարին վն
 լալաբէկին առաջի շահին. և շահն կամեցաւ
 կողոպտել զնա՝ և յառաջին աղքատութիւն
 իջուցանել. Արև շահն ինքն եկեալ 'ի տուն
 լալաբէկիս սկսաւ զաման գոյսան գրել և յինքն
 գրաւել: և 'ի գրելն տեսին զանդուկ մի ոսկի
 կողոպտայ իվր եդեալ և փակեալ. որոյ ասացին՝
 թէ բաց և լալաբէկն ոչ է բաց. այլ ասաց շա
 հին զայդ ամ, զոր գրեցեր՝ և զոր տակաւին գրե
 լոցես. բովանդակ ամենեքեան քոյք են՝ և ոչ
 իմ. իսկ այս միայն է իմ. քանզի 'ի հայրենի տա
 նէ իմմէ բերի զայս: Արդ խնդրեմ, զի զքոյն
 յորժամ առցես՝ զիմս ինձ շնորհեսցես: ապա
 հարկիւ բանալ ետուն զանդուկն և տեսին զի
 ոչինչ կայր 'ի նմա բայց միայն մէկ ջուխտ մնա
 շեալ և չորացեալ տրեխ՝ որ է չարուխ. և հնո
 տի և պատառոտեալ հեսկիք. և ամենեքեան
 եղեն զարմացեալք առ այն: Այնորոյ հարցա
 նէին թէ զինչ է այս: ասաց լալաբէկն. այս
 այն տրեխն է, որ 'ի հայրենի տան իմում զգե
 նուի. և արդ եդեալեմ աստ՝ և հանապաղ
 եկեալ տեսանեմ, և յիշեմ, և ասեմ. դու այն
 ես՝ որ զայս միայն ունեիր. և շահն բերեալ
 զքեզ յայդպիսւոյ յարքատութի յայսքան մե
 ծուծի հասոյց: Արդ զգոյշ լեր մի գուցե
 գտցի նենգութի 'ի սիրտս քո վն շահին. և
 այլոց չարախօսաց զմանէ մի լիցիս համաձայն.
 և մի մոռանայցես զերախտիս նր. զի մի այս ամ
 դառնայցէ քեզ հարամ. և լինիցիս սևերես
 առաջի Այլև մարդկան: Իբրև լուաւ և ետես
 այս շահն՝ իմացաւ թէ վն նախանձու չարա
 խօսայցիս լուա զմանս ինչս նր ոչ էառ՝ այլ շնոր
 հեսաց իւրն. և ևս առաւել պատուով փառաւո
 ղեալ

ըեալ շքեղացոյց զնա. և գերագոյն հաւա
տարիմ ունէր՝ի դրան իւրում զնա՝ առաւել
քան զամնն, զամ աւուրս կենաց իւրոնց:

Պատմութի վնշխարաց որբուհւոյ կուսին Հրիփսիմեայ Թէ
նոյ գտեալ և հանեալ եղև նա՝ի Փռանկաց. և Թէ
նոյ տարեալ եղև յասպահան քաղաք:



Ժ. Թ. :

Ժ. Բ. Մ. Բ. Ն. Բ. Կ. Ս. Բ. Ռ. Բ. Բ.

Նորդութե մեւքիսեթ կթղկսին. յետ
մեծի սուրդունին. եկին ՚ի Փռանկաց
աշխարհէն Փռանկք պատրիք յաշխարհս
Հայոց՝ և մտին ՚ի գաւառն արարադու: և
սկսան շրջիլ ՚ի վանորայսն Հայոց՝ որք կան ՚ի
գաւառին: Եւ պարզամիտ ազգն Հայոց. ոչ
գիտէին Թէ զինչ գիտաւորութիւն շրջին նորա.
բայց նորա ըստ մարդելուզ և երեսահաճ և
խաբուսիկ բարոյից իւրեանց զամենեսեան հա
ճեցուցանէին յինքեանս: որք և պատահեցան
կթղկսին մեւքիսեթի՝ և ետուն նմաաղերս
զոսկի դահեկանս՝ զի մի լեցի հետաքրքիր և
կամ վրէժխնդիր գործոց նոյ. զոր առ յա
պայն առնելոց էին:

Ունէին պատրիքն ընդ իւրեանս զգիրս մի
որպէս զաշխարհացոյց իւրեանց գրովն և լե
զուաւն. որ հաւաստեալ և անվրէպ ցուցա
նէր Թէ ուրանօր իցէ գերեզման և գամբարան
սրբոցն՝ որք կան ՚ի վանորայս Հայոց. և զոր
պիտութի շինուճածոց մատրանացն. և Թէ յոր
կողմն իցէ դուռն և լուսամուտն: և ՚ի շրջին
իւրեանց ՚ի վանորայսն. այն գրովն գտանէին
զնշխարս սրբոցն. և տային ինչս թնակաց վ
նիցն՝ և զնշխարսն առնուին:

Եւ ՚ի շրջագայիլն իւրեանց եկին՝ զիւր
Ժն կար

կարենիս, իջին 'ի վանքն առաքելոյ, որ իմէջ
 ձորոյն է շինեալ, և այն գրոյն գտին զգլուխն
 անդրի առաքելոյն, որ մինչև ցայնժամա
 նակն ոչ գիտէին բնակիչք վանացն նաև ամբն
 գաւառակոյն, թէ ուրանօր իցեն գերեզ
 մանք առաքելոյն: այլ միայն աւանդութիւն լո՛ւ
 եալք էին որդիք'ի հօր է և'ի հաւուց' թէ անդ
 էն կան գերեզմանք սրբոյ աւետարանչին մա
 թէոսի և անդրէի առաքելոյ, բայց զտեղին
 բնաւ ոչ գիտէին: Իբրև գնացին պատրիքն'ի
 վանքն, և փորեցին'ի ներքոյ բեմին զտեղի ինչ
 ուր գիրն իւրեանց տայր զնշան. և ահա տեսին,
 բացեալ և յայտնեալ եղև գլուխ անդրէի ա
 ռաքելոյն ու՛յ և գիրքն տայր զնշան յաղագս
 գլխոյն: և ընդ հանել գլխոյն, սոսկումն և
 զարհուրումն իմն անկեալէ իվր պատրեացն:
 Իբրև հանեալ եղև գլուխն, նոյնժամայն
 եպիպս վանացն յափշտակեալ է զգլուխն 'ի
 ձեռաց պատրեացն և ոչէ տո՛ւեալ, այլ զնս գա
 տարկ արարքս առաքելայէ'ի վանացն: Եւ սք
 գլուխն անդրէի առաքելոյն կայ այժմ'ի նոյն
 վանքն, որ բազում անգամ ուխտարարեալ և
 համբուրեալ եմք զնա:

Իսկ պատրիքն զկնի շրջագայութեց յոլովից
 կամ սահաւուց եկին'ի սք աթոռն Եջմիածին,
 և անդ օթեմանս կալեալ կացին զբազում աւ
 ուրս, և ըստ մարդելուզ հնարից իւրց հաւա
 տարիմք երևեալք յաչս վանականացն և գեղա
 կանացն՝ հաճեցուցեալք են զնս յինքեանս: Եւ
 յամաւուր գնային և գային պատրիքն'ի տա
 Քար սքց կուսանմցն գայեանայ և հռիփսիմեայ.
 և երեքին տաճարքս այտրիկ, եթէ Եջմիածին,
 եթէ գայեանայ, և եթէ հռիփսիմեայ, էին աւե
 րեալք խախտեալք և խարխարեալք և անչբա
 ժք. ցեալք,

ցեալք, երև զտաղաւար յայգւոջ մրգատոջ հազ
 և երև զհովանի իմէջ սեխնեաց ըստ մարգար
 րէին եսայեայ : և յՂմիածին կային միայն
 միաբանք սակաւք, և այնք ևս յոյժ տգէտք
 և գոեհիւք : Իսկ գայիանայ և հուփսիմեաց
 ամենեին անբնակ և անպարիսպ, նա և դրունք
 ևս ոչ գոյին եկեղեցեացն և խորանացն, և յար
 տաքուստ կողմանէ տանիսն բովանդակ և ե
 րեսք որմոյն քանդեալք, և հիմունքն խարխա
 շեալք և խրամատեալք : և 'ի ներսի կողմանէ
 բեմն և յատակ եկեղեցւոյն քանդ քանդեալք,
 և բովանդակ եկեղեցին և խորանքն աղբովք
 անասնոց լցեալք, վնդի յաւուրս ամարայնոյ և
 ձմերայնոյ անասունք ուն թէ եզինք և ոչխարք
 մակաղէին իմէջ եկեղեցեացն, և գայիանայի
 տաճարի տանիքն բովանդակ իջեալէր, և
 որմունքն միայն կային կանգնեալք և ոչ այլինք :

Իւ ըստ սովորութե իւրեանց պատրիքն
 անխափան երթային և գային 'ի տաճար սրբու
 հոյ կուսին հռիփսիմէի : և մատուռն գե
 րեզմանին հռիփսիմէի խոր իմէջ գետնոյն
 շինեալ կայր 'ի ներքոյ աւագ բեմին, և զբեմն
 'ի վերուստ կողմանէ իվերայ մատրանն կա
 ուուցեալ կազմեալք էին 'ի տեղոջ իւրում
 իմէջ աւագ խորանին : Իսկ զդուռն կամ զլու
 սամուտ մատրանն ոչոք էր տեսեալ զի ոչ էր
 յայտնի, քանզի շինող մատրանն և եկեղեցւոյն
 իմաստութիւն էր արարեալ զառնէն իւր, զի
 զդուռն մատրանն և զնորին ճանապարհն 'ի
 կողմանէ էր թողեալ իմէջ հիւսիսային խո
 րանի եկեղեցւոյն : և ըստ ճափու երկայնութե
 և լայնութե դրան մատրանն մեծ և
 անշարժելի վէմ մի, զոր ոչոք կարէր շար
 ժել, կոփեալէին և սահմանեալ իմէջ դրան
 մատ

մատրանն կափարիչ նմին: և այնպիսի մատու
 թէ հարեալք էին, զոր ոչոք իմանայր և կամ
 համարէր յայնմ տեղւոյ գոլ դուռն կամ ըզ
 վէմն կափարիչ նմին, այլ համարէին զվէմն
 երև. զմի շարեալ վիմաց որմոյն: Այլ 'ի մերս
 ազգէս ոչոք էր տեղեակ սոցա՝ ոչ մատրանն և
 ոչ դրան նորին: և Ֆռանկ պատրիքն գրօք իւ
 րեանց գտեալք էին զդուռն մատրանն և զբա
 զում երկս և զաշխատանս կրեալք էին ի վր կա
 փարիչ վիմին թէ 'ի բաց բորձցեն. և ոչ են կարա
 ցեալք: և յետ բազմաց աշխատանաց խոկմանց
 և մտածութեց, որ վն բանալոյ դրանն, ի երև
 զփորձ առեալք են թէ ոչ լինի, ապա թողեալք
 են զդուռն մատրանն, և եկեալ ելեալք են 'ի
 բեմն 'ի յաւագ խորանն, և 'ի վերուստ կողմա
 նէ բեմին առաջի և 'ի ներքոյ խորհրդանոցին,
 ըստ նշանակելոյ գրոյն իւրեանց զճանապարհ
 դրանն, հանդէպ նմին փորեալք են այնքն մինչ
 ծակեալք են զառաստաղ ճանապարհի դրանն,
 և իջեալ 'ի ներքս իմէջ ճանապարհին: և ապա
 այնքան աշխատեալք են 'ի ներքուստ և յարտա
 քուստ մինչ որ զկափարիչ վէմն ոստուցեալք
 են 'ի տեղոյն՝ և արտաքս ձգեալ իմէջ հիւսի
 սային խորանին.

Յետայսոցիկ իջեալք են իմէջ մատուռի գե
 րեզմանին և զտապանաքար գերեզմանին թաւա
 լեցուցեալք են 'ի բաց, և փորեալ զգերեզմանն
 կուսին հռիփսիմեայ այնքան, մինչ հասեալք են
 'ի տապանն յորոյ միջի կայր եդեալ սքք նշխար
 քրն հռիփսիմեայ: և առաւելևս փորեալք են
 մինչ զտապան նշխարացն ոստուցեալք են 'ի
 բնական տեղոյն և յամբուլութիւն: և ապա զտա
 պանն յնշխարօքն 'ի մատուռէն արտաքս բե
 րեալ իմէջ մեծի եկեղեցւոյն՝ և կամեցեալք են
 առնուլ զնշխարան: ԺԷԶ Եւ

Իւ՛ն խնամոց և յողորմութեցն Ի՛յն յաղօթեց սքշլուսաւորչին, ՚նմին ժամու նոյնու՛մ աւուր՝ երկուք ոմանք յեպկպացն սրբոյ Դ՛մի ածնի, միոյն անուէն գրեգոր եպկպս և միւսոյն վարդան եպկպս, ելեալք են ՚ի պատանս շրջագայիլ և շրջելով Տասեալք են ՚ի տաճար սրբուհւոյն հռիփսիմէի, և յայնմ ժամոց պատահեալք են իվ ը՛ մինչ պատրիքն զտապանն նշխարօքն բերեալք են իմէջ եկեղեցւոյն՝ և կամէին առնուլ զնշխարան, և ՚ի հարցանէն եպկպացն ընդպատրեացն վն՝ իրացն՝ նք թէպէտ բանս ինչ յօրեալք և բարբառնջեալք են, այլ անյարմար Իսկ եպկպացն շրջեալք յեկեղեցին և զամ տե սեալք, ՚ի վերուստ զծակն, և ՚ի կողմանէ գղուուն, և զմատուուն. և թաւալեցուցեալ զտապանաբարն, և փորեալ զգերեզմանն Իրովմամբ և զայրացմամբ եկեալք են առպատրիսն և արարեալ զկագ և զկուիւ և զաղմուկ լնն մինչ զմիմեանս հարկանել և վիրառիել, որ և զգլուխ վարդան եպկպսին հարեալք են պատրիքն և վիրաւորեալք՝ զի պատրիքն երեք են լեալք, և եպկպսունքն երկու. և զսիւն և զտեղի վիրացն եցոյց մեզ ՚ի ժամանակս յայտ, որ և զպատմութիս զայս նա պատմեաց մեզ՝ որոց ինքն ակամատես էր՝ որոյ՝ Տր որդրմեսցի և թողցի զյանցանս նրա եպկպսունքն ոչ են թողեալք առնուլ զմանս ինչ ՚ի նշխարացն պատրեացն յայնմ ժամու. և յետ մարտնչելոյն և կռուելոյն, երկոքին եպկպսքն բարձեալք են զտապանն լինշխարօքն՝ և բերեալք են յԴ՛մի ածնի, և պատրիքն ևս եկեալք են լնն յԴ՛մի ածնիս Իսկ եպկպսքն զտապանն նշխարօքն յեղեալք են իմէջ հրապարակի. և ՚ի շտեղ միտքանիցն ժողովեալք են իվերայ, այլ և գերականքն, և

ԿԹ՛՛՛կան

կթղկան մեղքիս թ ինքն իսկ : և որք եկեալք տեսանէին և իմանային , հիացեալ զարմանային և զսէին , մեք որ 'ի հարց և 'ի հաւուց աստ ժնեալեմք և սնեալք , յայսքան ժամանակս բք նաւին ոչ մք րեղեակք , և սորա արք օտարք նաև պանդուխտք՝ զի արդ կարացին գտանել և առնել զայսպիսի գործ : Եւ յաղաղս եղէ լոց գործոցս եպիկպսուկքն և միաբանք վանացն յոյժ սրտմտութք և սաստիկ բարկութք զվէճեղեալ՝ և զազմուկ արարեալ կռուէին ընդ պատրեացն : և մնային կթղկսին , թէ դատապարտեսցէ զպատրիսն , և վրէժխնդիր լինիցինն , իսկ նա որ առեալէր 'ի պատրեացն զոսկե դահեկանսն . ոսկեաւն այնու կաշառակուր լեալէր տեսարան մտացնր , ոչ եղև վրէժխնդիր , այլ թոյլ տուէալ անհոգ էր :

Եւ յայնմ ժամու պատրիքն ունէին շնդինքեանս , յառաջագոյն բսակս կազմեալ ի միմլաթէ՝ այս ինքն 'ի մուշամբայէ : վաստահացեալք յերեսպաշտութի կաթղկսին , եկեալ յառաջ իվր նշխարալի տապանին , և բացին զբսակն , և ոմն 'ի պատրեացն պատեաց զձեռն իւր մարուր և սպիտակ դաստառակաւ՝ և առեալ 'ի նշխարացն էլից 'ի բսակն , և կամէին զմմն նշխարսն առնուլ : և 'ի տեսանելն զայն եպիկպսն լի եղէն ցասմամբ և բարկութք՝ իվր եկեալ հարին զպատրիսն և իբաց վարեցին : և ոչ թողին այլևս առնուլ 'ի նշխարացն՝ այլ յողովն մնաց իմէջ տապանին , և զգլուխն ևս առեալք էին պատրիքն , զայն ևս յափշտակեցին եպիկպսն և եղին իմէջ տապանին : Եւ աւսէր վերոյ յիշեցեալ վարդան եպիկպսն , թէ ցոր բամբ ոչ էին մերձեցուցեալ զձեռս 'ի նշխարսն որակ և գոյն նշխարացն սպիտակ էր : և յոր

182 Բարձու մն՝ Նշխարաց Տոհիսիսիմեայ :

Ժամ՝ ձեռն մերձեցուցին՝ գոյն նշխարացն դարձաւ՝ ՚ի դեղնութի :

Եւ իվ ի այսց ամենից սկսան լալ և ողբալ եպիպուսքն, և ասել առ կթղիսն զբարձուտրան ջանաց և մեղադրանաց, թէ արդարադատն ՄԺ լիցի քեզ վրէժխնդիր յաղագս նշխարաց սքցս, զի յաւուրցն սքոյ լուսաւորչին մինչ ցայս օր ոչ էին խախտեալք կամ ուրեք ցրոճեալք նշխարք սքցս այսոցիկ, և սք էին սկիզբն և հաս տատութի հաւատոյս հայաստանեայց, և լիութի և բարութի աշխարհիս, և դու այսօր ցրոճեցեր : Եւ յետ լալոյ և սգալոյն իւրեանց եպիպուսքն բարձին զտապանն մնացեալ նշխարօքն և դարձեալ տարան ՚ի տաճար սրբուհւոյն Տոհիսիսիմեայ. և իջուցեալ իմէջ մատուռին, և խորագոյն փորեալ զգերեզմանն եդին զնշխարալի տապանն իմէջ գերեզմանին, և յամենից կողմանց կրով և խճով մածուցեալք ամրացուցին, և ծածկեալ զգերեզմանն եդին իվ ի զտապանաքարն : Իսկ զդուռն մատուռին, ոչ խցին, այլ մնաց ՚ի բաց, ոպ և արդ տեսանի : և զծակն, զոր ՚ի վերուստ ՚ի բեմն ծակեցին զայն խցին. բայց խուզողացն յայտնապէս երևի ՚ի ներքնոյ ճանապարհէն. քանզի իվ ի ծակն եդեալ քարինքն դեռ և սպիտակք են :

Իսկ պատրիքն առեալ զքսակով նշխարօքն սքին Տոհիսիսիմեայ գնացին ՚ի քաղաքն Երևան. և խորհէին թէ ընդ որ ճանապարհաւ տարցեն յաշխարհն իւրեանց. քանզի հոռոմոց աշխարհաւն ոչ կարէին գնալ վն երկիւղին () սմանցւոց՝ զի մեծ թշնամութի և տաստիկ մարտ պատերազմի գոյր յայնմ ժամանակի իմէջ () մանցւոց և ֆուանկաց :

Եւ այլա ելին պատրիքն յերևանայ և զնր շխարհ

խարն ընդ ինքեանս առեալ էին յերկիրն նախ
 չուանայ 'ի գաւառն երնջակու . 'ի գիւղն
 Փռանկաց ապարանէր . և անդ զնշխարսն
 արարելաք են երկու և երեք բաժին : և պատ
 ըիքն ինքեանք մնացեալք են անդէն . և զերկու
 մասն նշխարացն կալեալք են առ ինքեանս : և
 զմի մասն ընդ հաւատարմաց արանց իւրեանց
 առաքեալ են 'ի քաղաքն ասպասան 'ի վանքն
 Փռանկաց, զոր հուսէնիայ անունն կոչէն . քան
 զի երեք վանք կայ Փռանկաց իմէջ քաղաքին
 ասպասանու : և բերողք նշխարացն բերեալք
 հասուցեալք են զնշխարսն 'ի հուսէնիայ վանքն
 Փռանկաց, և սնդկով 'ի տան միում պահեալք
 են, և սպասէին դիպող ժամու զի առեալ տար
 ցեն ի վր բանդարու 'ի քաղաքն գըւայ յերկիրն
 փութութեանն, զի անդի նաւու տարցեն 'ի
 բուն իսկ 'ի Փռանկատան :

Եւ դաւիթ կթղկան այս ամենից եղելոցս ոչ
 գիտակէր, քզի յաւուրսս յայտոսիկ բնակեալ
 էրնա 'ի քաղաքն ասպասան : ունէր և դաւիթ
 կթղկաս 'ի հայոց ազգէն հաւատարիմ զսպա
 սաւոր այր մի որում անունն էր գրիգոր . ճար
 տար և զգոյշ 'ի սպասաւորութիւն 'ի գործ իւր :
 և գիտէր այրս այս զէզու Փռանկաց որ միշտ
 գնայր 'ի վանքն Փռանկաց, և առնէր նց զսպա
 սաւորութիւ վն մարմնաւորի օգտի իւրոյ : և յաւ
 ուր միում 'ի յրմպել գինւոյ, 'ի խնամոցն Մ
 քաղցրացեալք են իմէջ խօսիցն և ընդ բազ
 մաց բանիցն զայն և սասացեալէ նշխարաց բե
 րող սպասաւորն Փռանկաց ընդ կթղկսի սպա
 սաւոր գրիգորն, թէ գնացաք յաշխարհն
 ձեր և տեսաք զաթորն ձեր զ ջմիածին և ան
 մի գնացաք զնշխարս սրբուհւոյ կուսին հուսի
 սիմէ և բերաք աստ, և ասաւանիկ կայ յայն
 իմն

իմն տան անդ-կով, և կամիմք տանել յերկիրն փուռ-թուկէշին զի անդ-ի տարցուք 'ի բուն իսկ 'ի Ֆռանկատան: Իսկ իմաստուն Եխասա կան այրն՝ թարբուցեալ է զբանն՝ 'ի ցնտի եւր ում առ ժամուն՝ և հաճեալ զմիտս ասողին, բայց յերկրորդ-ումն աւուր գնացեալ է առ կլթ-իկան դաւիթ՝ և յայտնեալ է զբանն՝ զոր լուաւ 'ի Ֆռանկացն:

Իւր 'ի ժամանակիս յայսմիկ յարարագուեր կրէն բազումք քրիստոնեայք 'ի հայոց ազգէն. և մանաւանդ երեւանայքաղաքի ժողովուրդըքն բնակեալք էին իմէջ քաղաքին ասպահանու, զերեւելիս և զհաւատարիմ ումանս ինոցա նէ կոչեաց դաւիթ կլթ-իկան առ ինքն՝ և յայտնեաց նց զբանն, և նորա յոյժ տրտմեցան, և շարժեցան 'ի նախանձ վրէժ ինդրութե: և կլթ-իկան և նորա՝ 'ի միասին գնացին իմէջ ջուղայեցւոց առ խօջայ սաֆարն՝ որ էր աւագ ջուղայեցւոց, ոչ միայն ջուղայեցւոց, այլև ամի ազգին հայոց՝ որք կային՝ ի ներքոյ թգլրութեն Սարսից քանզի յոյժ ընդունելիք էին խօջայ սաֆարա՝ և եղբայրն իւր խօջայ նազարն առաջի Սարսից թգլրին՝ և իշխանաց նր, և ժանուցին խօջայ սաֆարին զայն գործ: և խօջայ սաֆարն՝ և կլթ-իկան՝ և աղայ տէր տէրն, որ էր աւագ երեւանեցւոց, 'ի միասին գնացին առ քաղաքապետն՝ որոյ անունն էր միրզայ մահամատ, զոր շահն կարգեալ էր քաղաքապետ ասպահանու, վն զի շահն ոչ էր յասպահան յայսմ ժամանակիս այլ՝ 'ի թաւրէզ էր, նա և խօջայ նազարն ևս անդ էր առաջի շահին: և յետ ծանուցանելոյ քաղաքապետին առեալ զօրականս՝ ի մանէ գնացին յանկարծակի 'ի քանքն Ֆռանկաց՝ և բացեալ զասացեալ տան դուռն

գանն զանդուռնն նշխարոյն : և առեալ բերին զնշխարալի սնդուռնն առ քաղաքապետն . և նա կնքեալէ զսնդուռնն իւրով մատանեաւն և տուէ եալ զխօջայ սափարն յաւանդ՝ առ ՚ի պահել զնա մինչև ցգայն շահին և ՚ի խնդրել զնա :

Օ այս ամենից գործոց անցունածք և ունիսու թիք խօջայ սափարն և դաւելթ կթղկան գրով ծանուցեալք են խօջայ նազարին որ էր ՚ի թաւրէզ : և խօջայ նազարն , քանզի համարձակ էր առաջի շահին , ծանոյցնմա , և խնդրեաց ՚ի շահէն զթուղթ հրամանաց , և ծառայ թգլբ կան առաքել զկնի պատրոցն՝ որք զնշխարան հանին , զի կալեալ զնսածցէ առաջի թգլբին , և շահն արար զամ կամն խօջայ նազարին : Ի այց գործն այսպէս հանդիպեցաւ զի զթգլբ րական ծառայն , զոր պատրաստեցին ՚ի գնալ ազգաւ հայ էր և հաւատոյն քրիստոնեայ , դաւանութիւն հայոց՝ որոյ բնական անունն էր աւետիք : Բայց միւս ևս զմականուն մակադրեալք էին նմա ալթուն . և զամ զորինչ պաշաճ էր գործառնութիւն այնմիկ , խօջայ նազարն պատուիրեաց ալթունին : և ալթունս այս գնացեալ է հաս ՚ի դաւառն նախնուանու՝ և հմուտ ՚ի գիւղն Փռանկաց ապարանէր , և նոյն ժամայն զեպկարն և զերիցունան և զերեւելիս ՚ի Ժողովրդականացն Փռանկաց կալեալ կապեաց՝ և արգել ՚ի կալանս , և պահանջէր ՚ի նոցունց ցուցանել զնշխարաց հանօղ պարինն , իսկ նորա ոչ կամէին ցուցանել : Բայց ալթունն չարչարէր զնս և կախեալ բրածեծ առնէր , իսկ նորա յակամայ ցուցին զնշխարաց հանօղ պարինն , որոց անուննքն էին պատրի գլխուն , պատրի արքանջլի : այնու հետև կարչ ստիպով պահանջէր զնշխարն ՚ի նոցունց ,

խակ նորա ոչ կամէին ցուցանել . բայց ալթունն սկսաւ կախել և սաստիկ բրածեծ առնել , և խստագոյն չարչարել , և տանջել զնս . և այն պէս զբաղում աւուրս անողորմ չարչարէր զնս՝ զի ոչ ցուցանէին զնշխարսն :

Աւ յաւուր միում մինչ կախեցին ՚ի գեղա կան երիցանց գեղջն այնմիկ զոմն էրէց . և զբաղում ժամն հարկանէին անողորմ : կայր և երիցուն այնմիկ եղբօր որդի մի փոքրիկ տղայ , որ աւ ընթերնն կանգնեալ աղիողորմ լայր . և տղայս այս հարցանէր արանցն , որք անդի կային . թէ զի վն կախեալ հարկանեն զտէրտէրն իմ . և արքն ետուն զպատասխանի մանկանն թէ նշխարք սքց բերեալք են ՚ի գիւղս՝ և զայն խըն դրեն ցուցանել : և մեք ոչ եմք տեղեակ որ ցուցանեմք . վն այնորիկ կախեալ են և հարկանեն : և տղայն կրկնեալ ասաց նց . ապա զինչ է այն , որ կայ ՚ի ներսագոյն տան մերում , որ յամ աւուր զճրագ վառեն առաջինն : Աւ մինչ ցայս վայր ալթունն բնաւ ոչ է խօսեցեալ հայերէն . և կամ զինքն հայ ձևացուցեալ . և ինքնևս իմէջ արանցն կանգնեալէր յորժամ տղայն ասաց զայն բանն : և ՚ի լտէն իւր ալթունն ՚ի տղայէն զբանն զայն . ինմին ժամու դարձաւ առ տղայն և խանդաղատանօք խօսեցաւ լը նմա՝ և ասաց զինչ ասացեր որդի միւսանգամ ասա . և տղայն կրկնեալ միւսանգամ ասաց զբանն : և ապա ասաց ալթունն առ տղայն . եթէ դասացեալդ ցուցանես ինձ զտէրտէրն քո արձակեալ թողում . և քեզ և քո տէրտէրին զկապայ հագուցանեմ իւրղաթ . ապա թէ ոչ՝ այնչափ ծեծեմ զտէրտէրն քո մինչ զի ինեքքոյ փայտի մեռանի : ապա ինքն ալթունն կալեալ զձեռնն տղային , ասաց . եկ որդեակ՝ երթիցուք ՚ի տունն ձեր

և զասացեալդ ցոյց ինձ . և հասեալ 'ի տունն մտին տանէ 'ի տուն մինչև ցներսագոյն տունն՝ ուր կայր նշխարքն . և ետես ալթունն զի 'ի բարձր տեղու ճանգուցեալ էին՝ և մարուր զգեստուք ծածկեալ՝ և ճրագն առաջինը 'ի վառ-կայր . և ալթունն իբրացէառ զամ ծածկոյթն և ետես որ ստոյգ նշխարքն էր : և ինքնին առեալ 'ի գիրկն իւր 'ի դուրս էբեր : և ըստ իւրում խոստմանն որ առ տղայն . եթող զէր էցն . և զխոստացեալ կապայն պարգևեաց երկցոյն և տղային :

Եւ այնուհետև սկսաւ ալթունն խոստագոյնս ջարջարել զայլ կալանաւուրսն՝ և մանաւանդ զնշխարաց հանօղ պատրիսն . և յոչ ըմբերել դառն տանջանացն . ասացին թէ այլ ոչ գոյ բաց յայնմ միոյն զոր 'ի լեառն պահեալ էմք . այժմ 'ի ցերեկի համբեր զի ոչ լինի . և 'ի գիշերի գնացեալ 'ի տեղին հանեալ տացուք քեզ : զի զանուն լերինն՝ յորում զնշխարն թաքուցեալք են՝ բօլու կոչնն ամ աշխարհն այն : որ մերձ է գեղջն ապարանու : որ է բարձր քարանձաւ լեառն : և յորում գիշերի գնացին պատրիքն 'ի լեառն , գնաց և ալթունն և սըղ նոսա : և յորժամ զնշխարն թաղեալք են անդ . նշանօք բևեռ աստեղն թաղեալք են . և այժմ և սկսան նշանօք բևեռ աստեղն երթ և եկս առնել . և այնքան երթևեկս արարին այսր և անդր . մինչ հաւաստեաւ իվր թաղեալ տեղույն եկեալ կացին . և ապա հրամայեցին սպասաւորացն փորել գտեղին . և 'ի զրաւ փորելոյն տեսին արծաթեայ թաս մի լի՝ նշխարօք . և առեալ զայն և ստունս պլթունին : և ալթունն առեալ զնշխարսն և զնպարին դարձաւ 'ի գիւղն ապարանէր . և պահանջէր 'ի նոցանէ զայլ և նշխար . և նորա

առաջի անկեալ լայնն և սոսկալի երդմամբ
երդնութիւն թէ այլ ոչ գոյ :

Եւ ինքն ալ թուն էր 'ի գեղջէն աստապա
տու՝ որոյ և տունն անդ էր : Ելեալ յապարա
նէր գեղջէն ը իւր առեալ զնշխարսն և զնշ
խարաց Տանող պատրիսն , և եկեալ 'ի գիւղն
իւր յաստապատ :

Յաւուրսս յայտոսիկ պատահեցաւ սրբոյ
վարդապետին պողոսի լինիլ 'ի գիւղն աստա
պատ . և զպատմութի այս վարդապետիս արա
րեալ եմ յառաջիկայդ յայտմ շարագբութեալ
առ որ գնացեալ ալ թունին և տարեալ առա
ջի զամնն նշխարսն ասաց վարդապետին առ
նուլ իւր բաժին , և վարդապետն առեալ 'ի
նշխարացն զմասն մի 'ի չափ մատին միոյ , և զայլն
ժողովեաց ալ թունն առ ինքն : Ոայդ էս ա
սաց ալ թունն առ վարդապետն , եթէ ոչ լի
նիս ինձ մեղադիր վասն պատրեացս , զմարմինս
սոցս աստէն թողեալ . և բարձեալ 'ի սոցունց
զգլուխսն միայն տարայց առ թագաւորն : Իսկ
վարդապետն սուրբ՝ իբրև իվր քրիստոնէից
գթացեալ իվր պատրեացն ոչ էթող ալ թու
նին առնել զասացեալն :

Եւ զմասն նշխարացն , զոր էաւ վրդպտն
յետամաց ինչ գնաց 'ի քաղաքն նախնուան , և
է մերձնմին քաղաքի փոքրիկ գիւղ մի զոր քուլ
թափայ կոչէն . և մինչև ցժամանակն յայն ոչ
գոյր 'ի գիւղն յայն եկեղեցի . և անդէն զՏիմն
աբկեալ եկեղեցւոյ եդ 'ի Տիմուհս եկեղե
ցւոյն զնշխարն զայն , և իվր նր շինեալ աւար
տեաց զեկեղեցին : և յաւուրդ օժման եկեղե
ցւոյն անուհանեաց զնուն եկեղեցւոյն սբ Տոխի
սիմեայ : և կան այժմիկ սակաւ հասարդուն քրիս
տոնեայ . բ 'ի գիւղն յայն հաստատեալ իվր եկե
ղեցւոյն : Իսկ

Իսկ ալթուռնն ելեալ յաստապատու առեալ ընդ իւր զպատրիսն և զնշխարն, և գնացեալ է հաս 'ի Թաւրէզ' և մատոյց առաջի խօջայ նազարին զնշխարսն և զպատրիսն և խօջայ նազարն ծանոյց շահին. և խնդրեաց 'ի շահէն; և ասաց: Եթողումն բախտի Թաւրիդ մերոյ ոչ է Թող գնալ նշխարացն այնոցիկ 'ի Փռանկատան. զի Թէ գնացեալէր, ամ աղգն հայոց զկնի նորա գնային. քանզի աղգն հայոց ամենեքեան կախեալ կան զնմանէ: և մանաւանդ ժողովուրդքն ջուղայեցւոց և գող Թան գաւառին. յորոց բազումք են վաճառակա նութք այժմ 'ի Փռանկատան. և հաղիւ Թէ դատնային նորա յայտ աշխարհ: և խնդիր մեր այս է յարքայէ. մի գուցէ բաժանեցէ զմասն ինչ 'ի նշխարացն յայցանէ. և Թէ իցեն Փռանկուսքն առեալ 'ի ամանէ, զայն ևս առեալ 'ի նոցանէ մեզ տացէ: զայս բան նախքան զօրքննութե դատարանսն ինասաց խօջայ նազարն ընդ շահին. Իսկ շահն արար զպատառխանի. Թէ որովհետեւ յօժարութի կամաց ջուղայեցւոց այդպէս է. յաղագոս յօժարութե նց, և 'ի շնորհ երեսաց քոց արարից ուր ասացերդ:

Եւ յառուր յորում նստաւ շահն 'ի դատարանսն. Էբեր ալթուռնն զնշխարն և զպատրիսն առաջի շահին. և շահին հարցեալ տեղեկացաւ ամի. զպատրիսն է Թող առանց պատուհասի. քանզի 'ի ժամանակին յայնմիկ դաշն խաղաղութե ուխտեալ և հաստատեալէին շահն և Թգրն Փռանկաց ընդ միմեանս. և 'ի շնորհուկս առնելով նց ոչ պատժեաց զպատրիսն այլ իբացարձակեաց առանց պատժոց: Իսկ պատրիսն զհամարձակութի առեալ 'ի ներողութե շահին, ասացին առ շահն. զայս քան աշխարհ

աշխատութիւն և զնեղութի՛ն զոր կրեցաք մեք յազագս նշխարացդ։ խնդրեմք զի զմասն ինչ՝ ի նշխարացդ պարգևեցէ մեզ արքայ։ պատասխանի արարնց շահն հիացականաւ մեղադրութե՛ք ասելով. զորոց զինչսն առեալ տաց ձեզ՝ զի զայս նշխար՝ զոր խնդրեք հայոց է. և որքաւ ունք վկայեն թէ զինչս նց առեալ ձեզ տաց։ և ապա շահն արար զհրաման տալ զնշխարսն զամ ցխօջայ նազարն։ որ եղև այնպէս։

Եւ տայոցիկ կամեցեալէ շահն առաքել ըզնշխարն՝ ի քաղաքն ասպահան՝ և խօջայ նազարին և սասցեալէ թէ այսպ կամիմ առնել և նա և սաւանութի տո՛ւեալէ այսմ։ և ապա գրեալէ շահն զթուղթ յասպահան առ խօջայ սափարն. թէ յաղագս շնորհի երեսաց ձերոց՝ և ըստ յօժարութե սրտից ձերոց. առ ի զնշխարս սքցն ձերոց՝ ի ֆռանկաց՝ և պարգևեցի ձեզ. և արդ առաքեցի առ քեզ յաւանդ պահեստի։ Ըրդ ընկալ զդա և պահեա՛ զորժամ խնդրեցից բերցես առաջի իմ։ և խօջայ սափարն առեալ և ընկալեալ զնշխարսն և ի տան իւրում պատրաստեալ տեղի պատշաճաւ որ. և անդ էր հանգուցեալ. և ըստ արժանոյ սրբութեցն յամ աւուր պաշտէր զնն անուշահոտօք խնկօք և պայծաւ մոմեղինօք, որքան ինքեւ որդիքն կային. և այժմ թուուրքն իւր. և կայ անդ էն մինչև ցայսօր։

Ըրդ նշխարք սրբութեցն՝ հռիփսիմեայ այսպէս հանեալ եղև ի ֆռանկաց. և այսպէս եկեալ եղև յասպահան քաղաք։

Իսկ նշխարաց հանօղ պատրիքն՝ զորս արձակեաց շահն ելին ի թաւրիզու և գնացին միւս անգամ ի նախշու՛ան՝ զի վերստին գնացեն ի գաւառն արարադեան ի խնդիր նշխարաց սրբոց։

Եւ պատրիքն մինչ տակաւին էին 'ի գաւառին նախչունու • յաւուր միում պատասէցան տեսութե մախտուտ սուլթանին՝ որ էր իշխան նախչունան քաղաքին՝ և ամենից գաւառաց նորին • և 'ի յաճախել բանից և խօսից իմէ ջնց, զք վասն հաւատոց • ասացեալէ սուլթանն ը պատրիսն ապա զպատգասաբերն մեր զմահմետ ամենեւին ոչ պատուէք և ընդունիք : և 'ի նմին ժամու հանդէպնց նստեալէր շուն մի • և ոմն 'ի պատրեացն ձգելով զձեռն հանդէպ շանն ասաց • զինչ է մահմետ զի պատուէսցուք զնա՝ եթէ մահմետ և եթէ շունն այն զուգահաւասարք են : և իվր այսմ բանի սուլթանն և ամբն արք և ծառայք նր 'ի խոր խոցեալք են՝ և մահու չափ վիրաւորեալք • բայց զոմն 'ի սիրտս իւրեանց թաքուցեալք են առ ժամաւն և ոչ բերեալ յերեսս :

Իսկ պատրիքն յետ աւուրց յօլովից կամ սակաւուց • ելեալ 'ի նախչունայ գնացին յերևան • և անտի ելեալք են զի գնացեն 'ի գեղարքունի • և յորժամ հասեալք են 'ի լեառն, զոր սուլթանայ սար տսեն : յետուտ կողմս նէ եկեալք են զկնինց արք հինգ հեծեալք • ազգաւ զզլպաշ • հասեալք են պատրեացն • և մինչ խօսելով ընդ նուս երթային զճանապարհայն • և անդէն յանկարծակի հարեալք են սրով և սպանեալ զերկոսին պատրիսն՝ որք էին հըռիփսիմեանց նշխարաց հանօղքն :

Իայր այլ և ոմն աշխարհական այր ընդ նս, զր էր սպասաւոր պատրեացն • և անուննր աղամբր յյապրակունիս գեղջէն Փռանկաց • և այրս այս 'ի սպանաներն պատրեացն ինքն փախուտ աւեալէ 'ի գողմն քարանձաւի միոյ • և ոմն 'ի զզլպաշ զինուորացն ընթացեալ զկնի նր • և անդէն

անդէն հարեալէ զնա արուիւ, 'ի գլուխն, 'ի օրորանոցն, յուսն և յարմուկն, և վերաւորեալ այրն ոնկեալ 'ի գետնի ձեացուցեալ զինքն թէ մեռայ. և զինուորին ևս համարեալ է զնա թե ստուգիւ մեռեալ է: Վնորոյ հարեալ է զայրն ոտիւքն և 'ի բարձանց'ի վիտոյ քարանձաւին արկեալէ զնա 'ի ներքոյ վիտին. և ինքն գնացեալ առ ընկերս իւր. և զինուորքն՝ որք զայս գործեցին, առին զինչս նոցա որոց և հաւանեցան: Եւ գնացինուրև կամեցան:

Աւ զայս զղլպաշ զինուորքս՝ որք զպատրիսն սպանին. ոմանք ասացին, թէ 'ի մահառուտ սուլթանի զօրականացն էին. որք վն անարգանաց մահմետին. զոր անարգեցին պատրիքն՝ և ասացին, հառասար գող զնա շան. առաքեաց մահառուտ սուլթանն՝ թաքուն սպանանել զնս. և զինուորացն եկեալ այնպէս արարին: Աւ ոմանք ասացին, թէ այն պատրի սպանող զօրականքն էին 'ի զօրականաց ամիրգուչայ խանին. որ էր տէր գաւառին՝ Ղլիաճնի. առաքեաց զկնի պատրեացն սպանանել զնոսա, վն երկու պատճառի: Ասին՝ 'ի վրէժխնդրու թի նշխարաց սրբոյն հռիփսիմէի. զի յերկրէն ամիրգուչայ խանին հանին զնշխարսն և տարան յայլուր: և երկրորդ՝ ասացին թէ լուծեալ էր ամիրգուչայ խանն. թէ ընդ պատրեացն այնոցիկ կան բազում գանձք ոսկւոյ և արծաթոյ. վասն գանձուցն առաքեալ զօրականս սպան զնոսա և հառ զգանձն: Արդ՝ եթէ 'ի մահառուտ սուլթանէն. և թէ յամիրգուչայ խանէն՝ և թէ ուստի և իցէ: Եկին զինուորք ոմանք՝ և սպանին զպատրիսն. և զպատրեաց պատրեացն վերաւորեալ արկին 'ի ներքոյ քարանձաւին:

1, և մէք յորժամ ելեալ 'ի խնդիր պատմու-
 թեց շրջեաք, գնացաք յերկիրն նախշուճա
 նու 'ի գաւառն երնջակ. 'ի գիւղն ապարա
 ներ. պատահեցաք առնս այսմիկ աղամիրի.
 և տեսաք զինքն և զտեղիս, և զսպէսն վիրացն,
 և նա պարտեաց մեզ զպատմութիս զայս: և
 զինի ասաց թէ յորժամ արկին զիս 'ի բարան
 ձաւէն 'ի վայր՝ ընկեցայ ես իմէջ ջրոյ գետին՝
 զոր կոթայ գետատէն. և ջուր գետոյն առեալ
 տարաւ զիս՝ և էարկ ընդդէմ վիմի միոյ, և
 վէմն այն եղև արգելիչ ինձ, և արգել զիս մինչ 'ի
 մթանալ երեկոյնն ցերջ աստեղաց: և այսոքիկ
 ամբն եկին ի վր իմ, և ես կայի կենդանի շնորհօքն
 Մ. և գիտէի զամ, որ ինչ պատահէր ինձ. և
 ողորմութիւն Մ ոչ խեղդեաց զիս ջուր գե-
 տոյն: և ընդ մթանալ երեկոյնն, ելի 'ի գե-
 տոյն, և գնացի. և ոչ գիտէի թէ ուր գնամ,
 բայց 'ի գնալն իմ պատահեցայ բաղմադնաց
 ոտնակոխ ճանապարհի միոյ, և խորհեցայ
 յանձն իմ, թէ ի վր ճանապարհիս կացից. զի
 'ի յանցորդաց սորինն հարցեալ գիտացից թէ
 զինչ պարտէ ինձ առնել: և եղև զի ընդ արշա-
 լուս առաւօտուն. եկին արք ոմանք գրաստուք
 հայ աղգաւ. և գնային 'ի գիւղ ուրեմն. և ես
 ելեալ խառնեցայ ընդ նոսա. և նց գիտացեալ
 զամ պատահումն, որ առիս. եղին զիս ի վր
 գրաստու. և հասուցին 'ի գիւղ մի՝ և ես պատ-
 մեցի գեղականացն զամ: և 'ի գեղականացն
 ամանք գնացին 'ի տեղի սպանման պատրեացն.
 և տեսին զպատրիսն սպանեալ. և ամբն գրեանք,
 և թուղթք, և զգետք նց ցրուեալք լէ երեսս
 զհասարտին: և անդէն ի վր ճանապարհին
 փորեցին վիճակ ընդ հողով արարեալ ծածկե-
 ցին զնս. և ես մնացի 'ի գիւղն մինչև ողջացան
 ժգ. վէրքն

վերքն իմ. և ապա երեալ եկի 'ի տուն իմ: Եւ որ այս աղամիր անուն այրս, որ տեսող էր ամենից գործոց. պատմեաց մեզ 'ի տեղւոյն. որք ելեալք են 'ի նախշունայ մինչև ցայսվայր:

Իսկ զինի, զոր արդ պատմեմք մարտիրոսս պնունամբ ոմն եպիսկոպս պատմեաց զորինքն ինչաչօք տեսեալ: Եւ ինչ 'ի թէ յաշխարհէն Փռանկաց եկն միւս այլ պատրի անուն մէլքիօր. և պատաստեցաւ տեսութե շահէն. որ էր յայն ժամ 'ի թաւրէզ. և 'ի թաւրիզու ելեալ շահն ամիւ բանակաւն իւրով եկն յերկիրն գեղամայ. եկն ընդ նոսա և պատրին մէլքիօր. քանզի եբբ զդեսպան եկեալ ձև ոնայր' և զպատիւ ունէր 'ի շահէն. և էր այր մեծ ազգի և փառաւոր' և յոյժս խօսէր ընդ նմա շահն: և իմէջ խօսիցն յաւուր միում ասացեալ է մէլքիօրն ընդ շահն. թէ յառաջնով ժամանակաւ ոմանք 'ի մերոց պատրեացն եկեալեն յայս երկիրս. և յաւազակաց սպանեալք են և թաղեալք կան 'ի լերինս. և արդ յօժարի կամք իմ հանել զոսկերս նց և տանիլ 'ի հայրենի գերեզմանատունս իւրեանց: Իսկ շահն հեթանոս գոլով օրինօք և ազգաւ. և ոչինչ ունելով զփոյթ ոսկերաց մեռելոց. պատասխանեալէ նմա՝ դու գիտես: ապա մէլքիօրն առաքեալ է զոմանս 'ի տեղին, որք հանեալք են զոսկերս գլելումին և զընկերին, և առ ինքն բերեալ. և ինքն ընդ իւր տարեալէ 'ի բուն Փռանկատան յերկիրն իւրեանց՝ եբբ և զնշխարս մարտիրոսի: Եւ այս ևս այսպէս:

Եւ ժամանակս որ այժմս կամք մեք. է 'ի թունականն մեր հայոց. հազար և հարիւրե եօթն՝ յորում և զպատմութիւն շարադրեալ գրեցաք, պատաստեցաւ մեզ գալ 'ի մեծահան

գէս քաղաքն ասպաճան՝ քզի եկեալէր աստիռ
 Տական, և մեծաճոգի, և արժանաժառանգ
 Տայրապետն ամենից Տայոց կեօղկան սրբոյ | Չ
 միածնի տէր յակօբ առի տեսութի և յայցարա
 թութի բանաւոր Տօտին Քնի՝ որ Տաւատացաւ
 պակ 'ի նուիրակութի սբյ | Չմիածնի :
 այլև 'ի գործոց մարմնականաց յարդարումն որ
 'ի դուռն արբունի : որոյ 'ի սպասաւորութի
 եկեալէք յորովք որով և գնացաք 'ի տուն խօ
 ջայ սափարին յուխա և յերկրպագութի նշխա
 րաց սրբուհւոյն Տուհիսիմեայ . և այլ յորով
 նշխարաց որք կան անդր . և բացեալ զնշխարսն
 տեսաք զմամն՝ և կատարեալ զուխտն արժա
 նացաք օրհնութեց սրբոցն : Սմանք յերևելի
 արանց ջուղայեցւոց ասացին մեզ զայլ և սպաս
 մութիս սակաւս : և շարագրութի պատմու
 թեց նց էր այսպէս :

Յետ ժամանակաց անցելոց պատմութեցդ՝
 զոր յառաջդ պատմեցաք՝ եկեալէ շահն յա
 պաճան . և ըստ Տանապագորդ սովորութե
 եւրում եկեալ է 'ի տուն խօջայ սափարին .
 պատաստեալեն և անդ ոմանք պատրիք Փռսն
 կաց՝ որք էին 'ի կարգէ վերոյ ասացեալ պատ
 րի գլխումն . իմէջ խօսեց յիշեալեն զնշխարս
 սրբոց Տուհիսիմեանց . և բերեալեն զմամ՝ նր շ
 խարս սրբուհւոյն Տուհիսիմեայ առաջի շա
 ճին 'ի տեսութի ամցւն : և յորժամ բացեալ են
 զնշխարն . յայնժամ պատեճ ժամ գտեալեն
 պատրիքն . և 'ի շահէն խնդրեալեն իբրև ըզ
 պարգևս տայ նց մասն ինչ 'ի նշխարացն այսո
 յիկ : և շահն ինքն առեալէ օսկրմի յօսկերացն .
 և զայն ևս դանակաւն Տարեալէ և կտորեալ .
 զկէս օսկերն դարձեալ ձգեալէ իմէջ այլ ևս
 նշխարացն . և զկէսն տուեալէ 'ի պատրիսն .

և նորա առեալ են և ամփոփեալ յինքեանս :
Եւ զայլ ևս նշխարսն զՏասարակն, հրամայեալ
է խօջայ սաքարին տանիչ և պահել . և նա
բարձեալ 'ի միջոյ՝ և տարեալ 'ի տեղին ուր
յառաջն եդեալէր, և կայ անդէն մինչև յառ
օր : Իսկ վնմասին, զոր այժմ առկայեալ
տարեալեն 'ի բանդարայ աշխարհն 'ի քաղաքն,
որ կոչի գուճայ, շինեալեն վանք 'ի նմին քաղա
քի . և զմասն այն եդեալեն 'ի հիմունս եկեղե
ցւոյ այնմ վանացն . և է վանքն այն այժմ կու
սանաց վանք . յորում բնակեալեն բազումք
ձգնաւորք կանայք :

Թէ ո՞ր կամ յինչ պաճառ է տարան յասպահան քաղաք զԱւ
սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին . և զՔարինս
սրբոյ աթոռոյն էջմիածնի :

ԺԷ

ՄԵՆ Ի ԹՎԳՒԼԻՈՐՆ ՊԵՐ



սկի առաջին շահաբանս . որ զազգս
Հայոց արտասահման արար 'ի բնիկ
աշխարհէն Հայոց . և վարեաց յաշ
խարհն Պարսկց, այնու դիտաւորու թէն ո՞ր
զի աւերեցի աշխարհն Հայոց՝ և շինեցի աշ
խարհն Պարսկց . և նունազեցի ազգս Հայոց և
բազմացի ազգն Պարսկց : և զի էր շահաբանս
ինքն այր զգոյշ և նախահոգակ . և յար, և հա
նապաղ խորհէր՝ և խոկայր . Թէ որպիսի հըն
արս հնարեցէ վն ազգին Հայոց՝ զի մի դարձ
ցին յաշխարհն եւրեանց . այլ մնացեն յաշ
խարհն Պարսկց : վն զի ժողովուրդքն Հայոց,
ձեռաց զուլերոյն, և գնաց 'ի մասն բաժնի եր
կիրն () ամանցւոց:

Եւ այսոցիկ իբրև զգացին շահիղուլերն
զինսոլստն սահակին՝ եկին առ մովսէս վրդ
պետն՝ թէ դու առաքեալես զսահակն յԵՂՄԻ
ամին վն անօթի: և մովսէս ասաց՝ ես զսա
հակն ոչ տեսեալեմ և ոչ առաքեալ այլ նա այդ
ու բանիւդ զձեզ խաբեալ է և փախեալ:
Եւ զուլերն թէ պէտ բազմաւ կերպիւ կողմէ
'ի կողմ անկան. երբեմն առ խանն գնալով՝ և
երբեմն առ շէխն, և երբեմն առ դատաւորն,
և երբեմն առ մովսէս վրդպտն. ոչինչ կարո
ցին պատուհաստել ի վր մովսէս վրդպտին: այլ
ամենից կողմանց վճատեալք՝ դարձան և գնա
ցին 'ի տեղիս իւրեանց զուլերն ամբն: Եւ այս
ևս այսպէս:

Վն հահառահութ սահակ կթղկան, զոր արար ընդ
Խրբոյ Էջմիածնի և ընդ մովսէսի կթղկան:



ԵՏՓԵԽՍՏԵՐՆ

սահակ կթղկան յաշխարհ տերութե
() ամանցւոց. մեռաւ թգլերն Վարսից
շահաբաս՝ որ զհարիւր թուման մուղադէն ե
րբեալէր ի վր կթղկացն. և փոխանակ շահա
բասին թգլոյաց թոռն նորին շահսեֆի:

Դսկ ազգն հայոց ամբն արեւելեանք և արե
մտե

մտեանք՝ հանապազ հեծէին և երկնէին և յո
գւոց հանէին վն հարիւր թուման մուղադայ
ին, որ՝ Խտարապարտուց եղաւ իվ ը Թումոյն .
զի սուգ անմխիթար և արամութի անգրաթ
տեղի կայր իվ ը ամցւն . և միահաղոյն տրամու
թք զգածեալ՝ Խտարակուսի կային : Եւ որ
քան մտածէին ոչ կարէին գտաներթէ որով
հնարիւք բարձցեն զայսպիսի ծանր և ստուար
լուծս՝ Խպարանոցէ աթումոյն : Կ՝ Խ խնամոցն
ՎՋ գտին ժամանակս զայս յորժամ թգրեաց
շահսէֆին, քանզի նոր թգրէր և մանուկ տնօք .
և ամքն նախարարքն և իշխանքն՝ որք կային՝ Խ
դուռն նր, ճանաչէին՝ Խ քրիստոնէից գարթ
երևելիս . և մանաւանդ զխօջայ նազարն՝ որ
նախապատիւ էր քան զաման : զոր և այս խօջայ
նազարս գրէ յասպահանայ առ մովսէս վարդ
պետն . և փայեկաւ հասուցանէ՝ Խ նա՝ որ էր՝ Խ
սք ՎՋիածին յայնժամ . գալ փութանակի՝ Խ
դուռն արքային՝ զի թերևս հնարեցեն բառ
նալ զհարիւր թուման մուղադէն :

Յայնժամ մովսէս վրդպետն աճապարեալ
էհաս յասպահան . և միջնորդութք խօջայ
նազարիս զբազում գանձս ծախեալ . և յոք
նակի աշխատութիս կրեալ . հազիւ թէ կարա
ցին բառնալ զհարիւր թուման մուղադէն . որ
ծանր բեռն անկաւ իվ ը կթղկոսարանին : զի
շահսէֆին հրամայեաց և զգեր ետ՝ թէ անցայ
Խ հարիւր թուման մուղադայէն :

Ետ այսորիկ քրիստոնէայքն խնդրեցին՝ Խ
շահսէֆի թգրէն վն մովսէսի վրդպին զհրա
ման կթղկութե . և շահն ետ զհրաման և ըզ
թուղթ կթղկութե մօտէսի վրդպտին : Վպագ
ամագզն հայոց, որք յարևելս և յարևմուտս
կային միաբանեցան թղթով և բանիւ . և արա
րին

րին զմտէս վրդպտն կլթղկոս և հաստատեցին
'ի սրբբ աթոռն Եւջմիածին:

Կէ չարն սատանայ զմովսէս վրդպտի կլթղ
կոսութին ծանր թուէցոյց 'ի սիրտն սահակայ
կաթուղիկոսին: զի համարէր 'ի սրտի իւրում,
թէ մովսէսն առանց իրաւանց հնարիւք իմն
էհան զաթոռն և զկլթղկոսութին 'ի ձեռանէ
իմն, և յինքն կորզեալ ընկալաւ զերկոսեանն:
և հանապազօր նախանձ կրեալ 'ի սրտի իւրում
վարոյ սկսաւ նախանձախնդիր ընել:

Եւ մովսէս վրդպտն, որ եղև կլթղկոսունէր
զմիաբանս և զաշակերտս բազումն, և վնորո
գութե սրբոյ Եւջմիածնի որ նոր էր սկսեալ,
առաքեաց զաշակերտսն իւր 'ի նոճերակութի
զի բերցեն զինչս յօժանդակութի նորոգման
սրբոյ աթոռոյն Եւջմիածնի: Եւ փիղիպպոս
վրդպտն որ էր և սա մի յաշակերտացն մովսէ
սի, որոյ հրամանաւ գնաց 'ի նոճերակութի
յարգում և 'ի բաղէշ և 'ի վան, և մինչ էր փի
լիպպոս վրդպտն 'ի վան քաղաքի, գտաւ անդ
և սահակ կլթղկոսն որ շրջագայիւր այսր և
անդր, և դեռ նոր սկսեալ էր յրկիզքն գոր
ծոց հակառութե: և փիլիպպոս վրդպտն և եր
կելի արքն որք 'ի վան քաղաքին կային, որ էր
խանենց խօջայ ամիրխանն, և խօջայ թումն:
այլև խօջայ շիրաքն, և խօջայ միրաքն, և խօ
ջայ փոլատն, և խօջայ սարուխանն, և այլք
բազումք, խօսեցան ընդ սահակ կլթղկոսին, զի
զհակառակութի և զխռովութին թողցէ: և
մի 'ի դրունս այլազգեաց դեգերելով ցրոճեա
ցէ զինչս քրիստոսն ից: և փիլիպպոս վրդպտն
համակամութի դուրս թաւորացն միաբանեալ
յանձն առին որ 'ի սբ Եւջմիածնէ տացեն 'ի տա
րուջ, զերես հարիւր զուռուչս յամ ամի անխա
փան

փան սասակ կթիկսին, որքան ենքն կենդանի է
'ի պէտս ծախուց եւրոց կարեաց' և զղուռու
պաշայ վանքն եւրովք մտիւքնետուն նմա, զի
անդէն նստեալ կացցէ 'ի խաղաղութե : և թէ
պէտ փիլիպպոս վարդպտն և խօջաներն 'ի բա
զում աւուրս բազմակի խօսեցան զխաղաղու
թի . այլ սասակ կթիկսն ոչ հաճեցաւ , և ոչ
դարձաւ 'ի չարեաց դիտաւորութեց խորհր
դոց եւրոց' այլ գնաց 'ի դուռն վէզերին' առ
'ի կատարել զխորհուրդս սրտի եւրոց :

Մինչ շրջէր սասակն իմէջագգին Հայոց
որք կային ընդ իշխանութեն (Սամաղուոց
այսր և անդր յաշխարհս և 'ի քաղաքս, զարս
ոմանս' ի վարդպտաց և յեպկպոսաց էգիտ եւ
րոց խորհրդոցն կամակեց' յորոց մի էր և պօ
ղոս սնուն վարդպտոմն' որ էր 'ի սրսայ կթիկ
կոսարանէն եղբօր որդի յովանէս կթիկկոսն
սրսայ : Թէպէտ յովովք կային չարի խորհր
դեանն համախոհք, այլ կատարիչք չարի գոր
ծոյն սոքա երկոքեանս էին սասակ կթիկսն և
պօղոս վարդպետն :

Եւ պօղոս վարդպտն գնաց 'ի մեծ քաղաքն
կոստանդնուպօլիս առ զարքարիայ վարդպտն ,
և էր զարքարիայ վարդպտոյեր կրէն վասպուրա
կանի' և էր յայսմ ժամանակի առաջնորդ ազ
գին Հայոց որք կային 'ի կոստանդնուպօլիս, զի
անոճամբ պատրիարգութե' և թգլրականաւ
մուղադայիւ և հրամանաւ նստեալէր առաջ
նորդ 'ի կոստանդնուպօլիս : Եւ էր սա յոյժ
ներհակ մօսէսի կթիկսին, և ձեռնտու և օգնա
կան սասակայ կթիկսին, վնորոյ գրեաց զարզայ,
և մատոյց առաջի թգլրին սուրթան մուրանի
որ 'ի նմին աւուրսն 'ի կոստանդնուպօլիս էր :
Խնդիրք մեր հայազունք իստոնէիցս այսէ 'ի
թգլ

Թգրէն՝ զի շնորհեացէ զՏրաման կթիկաւե սահակ կթիկան, զի հովուեացէ մերովք օրինօք զայն քրիստոնեայս՝ որք եցեն ազգաւ հայ որք կան ընդ իշխանութիւնքնակալի Թգւրութեդ (Սամանցւոյ: և Թգւրն ետ զՏրաման և զթուղթ կթիկաութե սահակին, ու և խնդրեաց զաքարիա վարդապտն. և զայս Թուղթ իշխանութե՝ զաքարիայ վարդապտն ետ ցպօղոս վրդապտն, և առաքեաց առ սահակ կթիկան, և պատգիրեաց ոչ Թուլանալ և ոչ կասուլ՝ ի չաքեաց դիտաւորութեցն՝ այլ ջանալ և աշխատիլ քնէ և ցկատարումն: Եւ ի ժամանակիս յորում զայս Թուղթս է հան զաքարիա վարդապտն ի Թգւրէն՝ ոչէրանդ առ Թգւրն, Թգւրի մեծ վէզերն՝ որոյ անունն էր խոսրով փաշայ՝ այր բազմահանձար և խրոխտ իշխան. և բնաւ ոչ էր տեղեակ վէզերն այսմ գործոյ: և ույ յայտեանցն զի կարգ և սահմանք է (Սամանցւոյ, զի զսմ գործ և զորպիսութի ազգաց և ազանց. իշխանաց և պետաց. կողմնակալաց և կուսակալաց՝ վէզերն հոգայ, տայ և առնու. որոյ սակս և կարգեալէ: և սորա զանցարարեալ զվէզերաւն, և առ Թգւրն գնացեալ առ ին զՏրաման կթիկաութե: Եւ այսու Թղթովե սահակ կթիկան և պօղոս վարդապտն եկին ի քաղաքն տիգրանակերտ՝ որ է համիթ առ մեծ վէզերն խոսրով փաշայ, զի ի նմանէ և ս առցեն զՏրաման և զթուղթ կթիկաութե:

Իսկ բարեպաշտ քրիստոնեայքն՝ որք յազգէն հայոց բնակեալեն ի քաղաքն համիթ, որ էր խօջայ երեմիայն, և խօջայ մախսուդն, և վնսեցի խօջայ դիտիջանն, որ էր այս վէզերիս բուրբջի պաշի և հաւտարիմ, և հաճոյական քաղաքաւոր առաջի նր: Եւ և բարեղ վարդապտն

դապետն, որ էր նոյն քաղաքին առաջնորդ, և էր սա բարեկամ սրբոյ Վլմիածնի և մտխտէս կթղկսին, քանզի և սա յաշնդերտաց սրազնն կթղկսին էր վն որոյ և յիշեցաք 'ի ճառի սրա պիտնին : և այլևս դօլվածաւորք և վարդպառք բազումք ժողովեցան 'ի համթ քաղաք 'ի կողմանէ սրբոյ Վլմիածնի և ջանային խափանել զսահակ կթղկսի զչար դիտաւորութիւն :

II սղի սահակ կթղկսն և ամբն համախոհքն իւր սահմանեալէ ին իմէջ իւրեանց թէ սահակ կթղկսն առցէ զիշխանութի կթղկսութե վէզիրէն, և գնացեալ 'ի մշու սք կարապետի իւր աթոռ կալեալ անդ նստցի, և անդ օրն նեցէ զմեռոն, և անդի առաքեալ բաժանեսցէ յազգս հայոց՝ որք կան ընդ իշխանութքն ()ամանցւոց, և զվաղեմի սահմանեալ զթեմ և զվիճակ սրբոյ Վլմիածնի հատեալ շորթեսցէ յինքն, և ընդ իւրով իշխանութք գրաւեսցէ բռնութք թիւրականի իշխանութէ : և խափանեսցէ զնո՛ւնրակն և զիշխանութի սրբոյ աթոռոյն Վլմիածնի :

Իսկ քրիստոնեայք ամբն թէ եկեղեցականք և թէ աշխարհականք 'ի բազում աւուրս գնային առ սահակ կթղկսն, աղաչէին և խնդրէին մի մատնել զտառապեալ ազգս հայոց 'ի բերան այլազգեաց բռնաւորաց՝ և մարդադիմաց գազանաց : Եւ խոստացան սահակ կաթուղի կոսին, թէ 'ի քաղաքաց կամ 'ի վանորէից որ ում և հաճեսցի ինքեան լիցի թեմօք և վիճակօք . որքան ինքն կենդանի իցէ նո՛ւնրակ Վլմիածնի մի մտցէ 'ի նա . այլև ընդ սմին հանապազ յամ ամի 'ի տարն հինգ հարիւր զուռուջ Վլմիածնի նստողն տայ սահակ կթղկսին վն իւրօր աւուր խարջին : Եւ որ այս

Ըրգայ Իսահակայ առ Սէզերն: 241

պէս և յառայամ օրինակի բազմակի և յոլովակի գունդործեալ Տնարեցան, և մաղթէին գալ 'ի խաղաղութի մահակ կթիկան և պօղոս վարդապան, և նորա ոչ եկին:

Եւ մովսէս կթիկան որ յԵջօթօծինն էր և փիլիպպոս վարդապան որ տակաւին 'ի վան էր: սորա և սյուրբնիւրոց տեղեց գրեցին զթուղթ մաղթանաց առ սահակ կթիկան. և երևելի արամբք աւարեցին՝ զի դադարումն արասցէ խոտովականի գործոյն: և զայլևս թուղթ առ շարեկամսիւրեանց՝ ունի թէ համոզել զսահակն ի խաղաղութի և կատարել զհաճոյս կամաց նր, զինչ և խնդրեսցէ:

Իսկ սահակ կթիկան և պօղոս վարդապան բնաւին ոչ եղեն ունկնդիրք. այլ գրեցին զարգայ յիւրեանց կողմանէ և միջնորդութբ ետ զուրբ փաշային հասուցին 'ի ձեռն վէզերին. և գոյացուծի բանի արգային էր ըստ այսմ օրինակի: Եյտ լիցի մեծի և անպարտելի տեքութե հզօրիդ՝ խնդրեմք զի շնորհեսցես մեզ զիշխանութի կթիկաութե ազգին հայոց. եթէ լիցի այս բան հաճոյ կամաց վէհիդ՝ և արժանացուցես զմեզ այսմ սպասաւորութե. մեք յաւելումք 'ի գանձարանն արքունի ամ յամէ յիւրբնիւր տարւոյ զտասն հազար զուռուշ որ ամ յամէ տամք: Եւ և յաղագոս այսմ գործոյ 'ի թիւրէն և սխնդրեցաք զթուղթ հրամանի և նա պարգևեաց. զոր ահաւասիկ ունիմք առ մեզ. և արդ 'ի բուռմմէ մեծութե և սխնդրեմք զի հաստատուն լիցի գործս մեք քոյով հովանաւորութբն: Օ այս թուղթս արգայի ետղուր փաշէն մատոյց առաջի վէզերին. և վէզերն ընթերցաւ և մտօքն հաւանեցաւ. բայց բանիւ ինչ ոչ ասաց:

Եւ յայլում աւուրարքն, որք 'ի կողմանէ
 Լ. ջմիածնի էին, նորա ևս գրեցին զարգայ և մա
 տուցին վէզերին 'ի պատշաճի ժամու։ Եւ որչա
 ցութի բանից արգային էր այս։ Ինդրեմք յաշ
 խարհաշէն և 'ի խաղաղարարէ տերութէ հզո
 րիդ՝ զի մի մատնեսցես զաղքատ և զտառա
 պեալ Ժողովուրդս 'ի ձեռս դոցա՝ զի դոքա
 վն փառամուրթե և ադահութե իւրեանց
 մատնեն զողորմելի ռիաթն 'ի ներքոյ ծանր
 հարկի. որ է Ժողովրդեանն մեծ սխիթամ. և
 գործողացն մեղք։ Եւ յետ ընթերցման զայ
 զայիս բարտասխանեալ է վէզերն արանցն մա
 տուցանողաց արգային. անխելք հայք՝ զիարդ
 ոչ տամ նց զկիթիկսութի. զի նորա 'ի տարւոջն
 զտասնհազար զուռուշ յաւելուեն 'ի գանձա
 րան Թգւրին։ Իսկ խօջայ ռուհիջանն. որ
 վն հաւատարմութե իւրոյ համարձակութի
 ունէր առաջի վէզերին՝ ասաց առ վէզերն.
 փառաւոր տէրիմ. եթէ զողորմելի և զտառա
 պեալ ազգն հայոց վն գանձի վաճառես նոցա.
 ինձ վաճառեա. և ես ոչ թէ զտասն հազար
 զուռուշս. այլ զքսան հազար զուռուշս տամ։

Եւ ամենաթգւրն Թգ. որ ունի 'ի ձեռին
 զսերտ ամենից Թգւրց և իշխանաց՝ ըստ սաղօ
 մօնի. Եւ յոր բանից ռուհիջանին է բաց զտեսարան
 մտաց վէզերին, որ կրկնակի հարցումն արար.
 և խօջայ ռուհիջանն զամ որինչ պատշաճ էր
 ծանուցանելոյ ասաց անդէն։ Եւ վն նախանձ
 արկանելոյ 'ի սերտն վէզերին. զայն. ևս յուշ
 արարեալէ նմա. Թէ ամքն պետք, և իշխանք,
 կողմնակալք և կուսակալք ադգին () ամանցոց
 խոնարհին ընդ տերութիւնք և առքեզ գան
 խնդրել և առնուլ զպատիւ և զիշխանութի.
 Իսկ սորա զանցարարեալ զքե առ Թագաւորն
 գնաւ.

գնացեալ առեալ են զիշխանութի կթղկսու
թե: Կալ յետ վճարման ամենից բանիցն արձա
կեցան խօջայքն: Ի վէզերէն՝ և ի բաց գնացին:

Եւ յաւուրն, յորում նստաւ վէզերն յա
տեան բազմախուռն հանդեսիւ, առնէր դեա
ան. եազուբ փաշէն, որ էր միջնորդ և յար
դարից գործոց սահակայ կթղկսին. զսահակ
կթղկսն և զպօղոս վարդապետն ամեալ ի հան
դէսն յանդիմանկացոյց առաջի վէզերին:

Եւ ինն ի նոյն հանդէս և արքն, որք ի կողմա
ն լըմեածնի, (էին արք) բազումք. որոց գլու
խաւ որն էր խօջայ երեմիայն, և խօջայ մախ
սուտն, և խօջայ ոօհիջանն, և բարսեղ վար
դապետն: Իստեւ սկսաւ վէզերն առ սահակ
կթղկսն և առ պօղոս վարդապետն և ասաց. զինչ է
յօժարութի կամացն ձերոց՝ ոյլ արք. որք դե
գերիք ի դրունս իշխանութես: պատասխա
սեաց սահակն. զորինչ արդայ թղթ ոյլ մատու
ցար առաջի տեառն մերոյ: և վէզերն հրա
մայեաց զարդայն ընթեռնուլ. յորում գրեալն
էր՝ Թէ ի Թգրէն ընկալար զհրաման կթղկո
սութե, և արդ ի քէն և սխնդրեմք: Եւ հարց
վէզերն ցտահակն՝ Թէ արդարև ընկալեալ էք
զթուղթ կթղկսուէ ի Թգրէն. և նա ասաց այո,
մատեաք առ Թգլուն և առ սք զհրաման: Եւ ասց
վէզերն. դուք յորում առուր ծանուցիք մեզ
զորպիսութի ձեր՝ և մէք անփոյթ արարեալ
ոչ կատարեցար զինդրուածս ձեր. որ զանց
արարեալ զմեօք գնացիք առ Թգլուն ձանձրա
ցուցանել զգլուխնք: Եւ նոյն ժամայն հրա
մայեաց վէզերն, որոց կային առաջի իւր, սպա
սաւորաց և դահձաց, դնել զսահակ կթղկսն
և զպօղոս վարդապետն ի Ֆալախայ և բրածեծ
առնել և այնչափ հարկանել մինչև կամ դատ
նալ

նալ 'ի հաւատոց իւրեանց օրէնս մահմեթի. և կամ ինեքոյ փայտի մեռանիլ : իսկ սարգսաւորք վէզերին առժամայն կնտարեցին Տրամանն . զի զասակ կթղկոսն և զպօզոս վրդպտն եղին 'ի Փալաղայ և յերկուց կողմանց կանգնեալ արանց հաստիւք բրօք սկսան անողորմ հարկանել . միշտ հարկանէին , և միշտ ասէին . արդ դարձիք 'ի մոլար հաւատոց ձերոց և մտէք 'ի ճշմարիտ օրէնս մեր' և զերծ ջիւք 'ի տանջանաց' և 'ի դառն մահունէն . ապաթէոջ' ըզդադարիմք 'ի հարկանելոյ մինչև ցմահն ձեր :

Եւ իբրև եղև զի մատնեցան 'ի հարունաճիւղանից սահակ կթղկոսն և պօղոս վրդպտն . և զինունորքն անողորմ և ուժգին հարկանէին . զի թերևս 'ի վտանկէ տանջանացն դառնայցեն յիւրցի հաւատոցն : Յայնժամ խօջայ երեմիայն և ընկերքն իւր խորհեցան զի մի գուցէ ոչ կարիցեն տևել տանջանացն' և դառնայցեն 'ի հաւատոցն' և լինիցի նց խիղճ մտաց . և ազգին հայոց մեծ ամօթ և նախատինք : որև ուժամայն նոքին խօջայքն այսր և անդք ընթացան առ նախապատիւ իշխանս վէզերին , և խոստացան նց զարծաթս բազումն զի զբանս մաղթանաց խօսեսցին առաջի վէզերին մի փրկութե սահակայ կթղկոսին և պօղոսի վրդպտին : և իշխանքն ըստ պատշաճին խօսեցան առաջի վէզերին զբարեխօսութի . որով ցածեաւ բարկութի վէզերին . և հրամայեաց արձակել 'ի տանջանաց . և իբաց վարել 'ի դրանէ դիւանին : և զինունորքն յետ արձակելոյն , հարկանելով և ձաղելով զկառափունս նոցա վաղեցին արտաքս 'ի հանդիսէն :

Եւ իբրև այսպէս եղև կատարումն գործոյ սահակայ կթղկոսին և պօղոսի վրդպտին . այնու

նուՏետու եկն ի վր նց ամօթ և պատկառանք •
 և անկան երեզք նց • և ոչ ևս կարէին հայել յե
 ընս քրիստոնէից • և ոչ համարձակէին շրջիլ
 իմէջ մարդկան վն ամօթոյ :

Եւ ապա պողոս վրդպտն գնաց ՚ի մեծ քա
 դաքն կոստանդնու պօլիս , և անտի յուռումէ
 լի ; և անտի յաշխարհն իլախաց • և կացեալ
 ժամանակս ինչ և ապա վախճանեցաւ • և ան
 դէն թաղեցաւ : Սոյնպէս և սահակ կթղկոսն
 սակաւ սակաւ գնալով էհաս ՚ի գաւառն կար
 նոյ • և անտի յաշխարհն վրաց • և անտի յար
 արատ գաւառ և ՚ի սբ Եջմիածինն • և մնաց
 անդէն ՚ի սբ աթոռն յԵջմիածին :

Եւ ըստ ցաւակիր բնութեն մարդկան պա
 տասնեցաւ ցաւ իմն ոտից սահակ կթղկոսին • և
 օր աւուր յաւելաւ ցաւն յորմէ պատճառե
 ուռան երկոքին ոտքն նր • և օր աւուր յաւե
 լաւ ուռուցն • և էհաս մինչև ՚ի փորն և բա
 զումաւուրս մնաց այնպէս • և ցաւն այն յոյժ
 ցաւէր • և կարի վշտացուցանէր զնա :

Իսկ ՚ի նեղութէ ցաւոյն յաւուր միում
 ասաց սահակ կթղկոսն բառնալ զինքն և տա
 նիլ ՚ի տաճար սրբոյ Եջմիածնին • և անկեալ
 ի վր իջման տեղեացն ՚ի ՚ն յորում տեղի ՚ի
 իջեալ է • և բազմօք հառաչանօք փղձկելով
 սրտիւ և յորդաբղիով քարտասուօք և ցաւ
 ագնիւ անձամբ զերեսս ՚ի գետին փարելով •
 ՚ի բազում ժամս էլաց գառնապէս • և ընդ
 արտասուօցն մաղթողականաւ բանիւ ասաց :

Ո՛վ Տ՛ր իմ և Բ՛ծ իմ : Են ՚ի գաւառապարտե
 ալ ժառայքոեմ և մեղուցեալ հոգւով և մար
 մնով եթէ կամք քո հաճի կեալ ինձ կենդանի
 փութով փրկեալ զիս ՚ի ցաւոյս և տուր ինձ զա
 ուղջութի : և եթէ կամք քո հաճի մեռանիլ
 ինձ

ինձ՝ փուլթով տուր ինձ զմօճ զե հանգեայց 'ի տառապանաց ցաւոյս : Եւ անդէն 'ի նմին տեղւոջ իմէջ եկեղեցւոյն կոչեալ առ Կնքն զոմն ծեր եպսկպս և խոստովանեալ զաման յան ցանս մեղաց իւրոց • և հաւատով և յուսով հա զորդեալ 'ի պատուականէ Մարմնոյ և յԱ՛րե նէ Որդւոյն Լ՛Ե : Եւ ապա բարձեալ տարան 'ի տունն յորում կայր հիւանդ • և 'ի գիշերին յայնմիկ հասանէ նմա մօճ՝ և աւանդէ զՏօ գին՝ և վճարէ զկեանս իւր՝ և հանգչի 'ի տառապանաց ցաւոյն ըստ խնդրանաց իւրոց : և կատարեալ զկարգ թաղմանն իվր'նր տարեալ թաղեցին 'ի դերս գերեզմանացն :

Պատմութի առաքինադործաց արանց Սարգսի եպիպոսին և տեառն Կիրակոսին • որք եղեն սկիզբն շինելոյ և հաստատելոյ անապատաց : Որովք և պատճառք բարեկարգութե • Վանորէկոյ , և Եկեղեցեաց , և նոցին բնակողաց :

ԻՄ :

ՍԵՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
 ոմն • որ էր յաշխարհէն արարադեան • 'ի գաւառէն ամբերդոյ՝ որ է արագա ծոռն • 'ի գեղջէն , որ ասի յարենի • որ է մերձ 'ի գիւղն կարփի • և այժմ է աւերակ • և անմարդաբնակ • բայց 'ի ժամանակս հարց մերոց էր շէն գիւղս յայտարենի • ուստի էր այս սարգիս եպիպոսս : Որոյ եկեալ բնակե ցաւ 'ի մեծափառ ուխտն սաղմոսավանաց • լեալ սպասաւ որ բազմա հաւաքից սրբութեցն , որք կան անդր • որև զկնի ամաց ինչ եղև առաջ նորդ նոյն վանացն :

Իայց գոյր մերձ այս վանիցս գիւղ մի փոքրիկ • ուստի այր ոմն քրիստոնեայ դրսորդ գողով շրջէր աւուրց յաւուրս 'ի լերինս որսալ էրէ վայրիս :

վայրիս: Եւ եղև յաւուր միում գնալ առնս
այսորիկ'ի մեծ լեառն արագած վնորսոյ. և'ի
չըջիցի իւրում'ի գլուխս լերինն. պատահե
ցաւ առն ումեմն ճգնաւորի. որ'ի խուռջս
վիմացն նստեալ կայր գճկեալ. ունելով'ի
գլուխն վեղար և զիւրև փիլոն: և մօտեալ
առի ստուգիւ գիտել. թէ զինչ իցէ այն.
ետես զի մարդ էր հաւաստեալ. և մեռեալ
էր. և այնպէս նստեալ կայր. և մարմինն անա
պական: Եւ'ի տեսլենէս այսմանէ անկաւ եր
կիւղ և սոսկումն իվր առնս այսորիկ որսորդի. և
ոչևս կարաց ժուժել'ի տեղին յայն, այլ դարձ
արարեալ անտի եկն'ի տուն իւր: և եկեալ'ի
սաղմոսավանք պատմեաց ամենեցուն զննջումն
ճգնաւորին, որ պատահեցաւ նմա'ի գլուխ
լերինն. իբրև լուաւ զայս սարգիս եպիպան.
և ստուգեալ վերահասու եղև թէ յորում տե
ղուջ իցէ:

Եւ յաւուր միում յանձնեալ զանձն իւր
Լ'Սարգիս եպիպան՝ յուսացեալ յառաջնոր
դութին Լ'Մ ելեալ գնաց'ի լեառն արագած.
և շրջեալ այսր և անդր յաւուրս երիս. էգիտ
զվախճանեալ ճգնաւորն: և բազմօք փափա
զանօք և ջերմեռանդիւ սիրով համբուրէր զ
ձեռս և զոտս նր. և յետ հեղման բազմաց
արտասուէաց՝ ամփոփեալ թաղեաց զնա նորին
զգեստիւն. դարձաւ և եկն'ի վանքն:

Եւ եղև այս պաաճառ զղջման սարգիս
եպիպասին, և հրաժարելոյ յաշխարհէս. բան
զի տաղտկալի թուէցաւ յախորժակս սրտի նր
պատիր և ընդունայն, խէնէչ և խաբուսիկ
ժայել չուի աշխարհիս այսորիկ: Եւ յայնմանէ
օրէ և առ յապնայ խնդրէր սարգիս եպիպոս հե
ռանալ յաշխարհէ. և հետեւիլ լուսաշաւիղ

երկնացունի ճանապարհին առաքինականաց վարուց: Ի այց ոչ գոյր 'ի ժամանակին յայնմիկ անապատ և կամ գիտող կարգաց կրօնաւորականաց վարուց. վն բազմաց հինից թշնամեաց եկեղոց ի վերա և վրդովմանց՝ և աւերմանց աշխարհիս հայոց՝ ամենեւին բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նշմարան առաքինեաց գործոց՝ և բարեաց կարգաց յաշխարհես հայոց: Իւ մինչ կայր իմէջ յայսմ վարանմանս սարգիս եպկպսն, եղ 'ի մտի իւրում գնալ 'ի նբ քաղաքն եէմ յերկրպագութի սնօրինականաց ՎԻ ՄԿ մերոյ. որև ելեալ գնաց:

Ի բարձեալ 'ի սոյն ժամանակի գտեալ եղևակսն և ա այլ ոմն. որոյ անունն էր տէր կիրակոս. որ կամօք և յօժարութբ նման գոյր կամաց և յօժարութե սարգսի եպկպսին: և էր տէր կիրակոսս այս 'ի քաղաքէն տրապիզոնայ. մտեալ 'ի կարգ աշխարհի բայց ոչ վայելեալ քանզի զկնի սակաւուց աւուրց վախճանեալ ամուսնոյ նր. և ինքն մենացեալ իբրև զտատրակ ողջախոհ: և հանապազօր խոկայր 'ի պատուհիրանս ՄԿ. և անձանձիր ընթեռնոյր զգիրս անայինս. և 'ի միտառնոյր զպատգամսնց. և ջանօք և երկօք կրթէր զանձն ըստ հրամանաց գրոցն կենցաղավարելով:

Ի սոյն ժամանակի յայսպիսում խորհրդեան գողով տեառն կիրակոսիս՝ լուաւ յոմանց վն սարգսի եպկպսի թե նա զղջացեալէ յաշխարհէ. և կամի հրաժարիլ և հետևիլ առաքինեաց վարուց. վն որոյ տէր կիրակոսն ելեալ 'ի տրապիզոնայ եկն յերկիրն արարադու 'ի սաղմոսս վանք՝ առի միաբանիլ ընդ սարգսի եպկպսին: և ոչ կարաց տեսանել զնա՝ զն գնացեալ էր յեէմ: Են որոյ և սա եղ 'ի մտի իւրում գնալ յեէմ:

յեհմ. և դարձեալ 'ի սաղմոսավանից եկն 'ի տրապիզոն՝ վաճառեաց զաման ինչս իւր. զմասն ինչ երո աղքատաց. և զառուն և զանդաստանն իւր աւանդեաց եկեղեցւոյն տրապիզոնայ. և զմասն ինչ էստ ը իւր զթոշակ ճանապարհին. և ելեալ գնաց յեհմ: և պատահեցան սորա երկոքեանս միմեանց սարգիս եպիպսս և տէր կիրակոս. և յետ աւուրց ինչ առ միմեանսկելոյ գտին զիրեարտ միով դիտաւորու թի՛ք. և միով յօժարու թի՛ք և կրիւք ախտացեալս. և միակամ և միաբան և միախորհուրդ եղեալ յայնմանէ որք և առ յապայ կենցաղավարիլ 'ի միասին:

Բայց խնդրէին զտեղի անքոյթ և պատշաճաւոր անապատի, և հեռի 'ի շփոթմանց աշխարհի. և լուճեալ յոմանց գետողաց թէ այդ պիտի տեղիք բազումք գոն յարևելեաց մասին աշխարհին հայոց. և մտնաւ անդ յերկրին սիւնեաց՝ որ և 'ի հին ժամանակաց անապատ եղել է յաշխարհին յայնմիկ՝ որոց տեղիքն արդէն ևս երևին: և իբրև ստուգեցին զբանն, ելեալք յեհմէ յօժարու թի՛ք դիմեցին և եկին յաշխարհս արևելեան յերկիրն սիւնեաց. և հասին 'ի մեծափառ ուխտն օտաթէի առաքելոյն՝ որ այժմ ասի տաթեոս վանք: և սուղ ժամանակս կացեալ անդ, գնացին 'ի տեղին, որ անուանի ձորոյ վանա, որ ասի ցրուանց: և զկնի սղոց ժամանակաց գնացին անտի 'ի տեղին, որ անուանի թանասատի վանք: և անտի ևս ելեալ որոնէին առաւելևս օնքոյթ և անշփոթ և յապահով տեղի, մինչև գտին զտեղին յորում այժմ շինեալ կայ մեծ անապատն: և անդ շինեցին զեկեղեցի և զխուցարատ պատշաճի անապատի, և միայնակեցի, ունի ցուցանէ գերք հարանց վարուց և այլոց ճգնաւորացն, նսեմ և

մթին և փոքրագոյն • և սկսան անդ զետեղիչ :

Իսկ Տրն տերանց՝ և Լ'ճն աստուծոց՝ որ միշտ զբարին կամի և յառաջեցուցանէ, յա ջողէր և ուղղէր զգործսնց՝ և ինքն ձեռնառու և օգնական ընէր, վն զի իվր բարւոյ Տամ բաւոյնց եկին բազումք և յարեցան 'ի նոսա և եղեն նց միաբանք և բնակիչք տեղւոյն : ոչ միայն աշխարհականք և աննշանք, այլ և եկեղեցականք և անոճանիք արք վարդապոք, եպիսկոպոք, և քահանայք : Ար էր պողոս վարդապն մոկացի, և մովսէս վարդապոն սիւնեցի • որ զկնի եղև կթղկոս • որ և զերկուցս պատմու թիսն և զարդիւնն յայլում ճառի երկայ պատմելոցեմք : Եւ ներսէս վարդապան մոկացի, որ զկնի գնաց 'ի կղզին լմայ և անդ շինեաց անապատ : Եւ թումայ եպիսկոպոն տաթևու, որ զկնի եղև վարդապո, և գնաց յերկիրն շամախու հովուել և առաջնորդել ժողովրդեան աշխարհին : և կարապետ եպիսկոպոն Լ'միածնեցի, որ զկնի գնաց 'ի սևան կղզին, և զայն տեղին շինեաց զանապատ՝ և կայ հաստատ մինչև ցայսօր : Եւ շամբեցի արիստակէս վրդապոն, որ զկնի եղև առաջնորդնոյն մեծի անապատին, և անդ էկաց մինչև ցվախաձան կենաց իւրոց՝ և անդէն թաղեցաւ : Եւ միւս տէր արիստակէսն, որ էր 'ի գաւառէն բարկաշատայ • որ զկնի գնաց 'ի տեղին, զոր անոճանէն տանձափառախ, և շինեաց զանապատ՝ և անդ էկաց մինչ ցվախաձան կենաց իւրոց՝ և անդէն թաղեցաւ, և տեղին անապատ կայ հաստատուն մինչև ցայսօր : Եւ գաւիթ եպիսկոպոն, որ էր 'ի շամբօռու ձորէն՝ և 'ի ցեղէ եշխանաց՝ որ զարամանեց կոչեն • սա ևս եկեալ էկաց 'ի մեծ անապատս • և ապա ելեալ գնաց 'ի ձորն շամբօռու՝ և անդ

չինեաց զանապատ՝ զոր կոչեն չարեքագետի անապատ. որ է բազմաժողով եղբարց բնակունի. և յոյժ Հաստատուն ամենիւք կարգօք և սահմանօք անապատի մինչև ցայսօր. և ինքն դաւիթ եպիպոսն անդէն վախճանեցաւ, և անդէն թաղեցաւ : Եւ այլք բազումք և յողովք՝ որք անդէն կացին՝ և առ Տր փոխեցան. և որք յայլուրեք գնացեալ շինեցին զանապատս և զվանորայս :

Վանզի եբրե զմայրն սիօն զորմէասէ մարգարէն եսայի. թէ 'ի սիօնէ ելցեն օրէնք՝ և բան Տն յեմէ. սոքա երկոքին արքս եղեն սկիզբն անապատիս. և անասբատս եղև մայր և Կնօղ ամենից անապատաց, և առ ի թ լուսաւորութե ազգես Հայոց :

Ս անզի ոմ ասացի աստ վարժեալ ուսաւ մոկացի ներսէս վարդապետն զվարս կրօնաւորա կանս, և ելեալ գնաց 'ի գաւառն վասպուրա կանի, և էմուտ 'ի կղզին լմայ իմէջ ծովուն. և անդ ժողովեցան առնա բազմութիք եղբարց, և եղև անապատ Հաստատուն ամենիւք կարգօք և կրօնիւք միակեցութեց վարուց, և ինքն ներսէս վարդապետն անդէն կացեալ կրօնաւորա կանաւ ժողովալութիք կատարեաց զնթացս իւր առաքինի վարուք, անդէն վախճանեցաւ և թաղեցաւ, և վախճան նր եղև 'ի թունին մերում. հազար եօթանասունևվեց ամի :

Եւ զինի նորին յաջորդեաց զառաջնորդութի տեղւոյն ընկեր նորին ստեփաննոս վարդապետն : Եւ յայսմ ժամանակիս և ևս աճեցան միաբանք լմայ անապատիս, վնորոյ ոմանք ելեալ 'ի լմայ գնացին 'ի տեղին՝ որ անուանի կտուց՝ որ և սա կղզի է Քմէջ նոյն ծովուն. և անդ ևս շինեցին զանապատ և զեղբայրանոց՝ և է ոյժմ՝ Հաստատ ամենիւք կրօնաւորա կանիւք կարգօք :

Են և այլ ևս մանուկք անապատք շինեալք
այսր և անդր, բայց մեք զնշանաւորսն յիշեցաք՝
որ յայս մեծ անապատէս ուսեալք և վարժելք
գնացին յայլ տեղիս՝ և հաստատեցին: որոց
ամենացուն եղէն սկիզբն և պատճառ վերոյ
ասացեալ երկոքին արքն սարգես եպկպսն և
տէր կիրակոսն: Քանզի միանգամայն յամէ սր
տէ լբին եբաց զաշխարհ, և բարեաւ մնալ աս
ացին ամենից կենցաղականաց հոգոց սորա, և
արարին զինքեանս խաչեալ աշխարհի, և զաշ
խարհ ինքեանց, ըն խրատու առաքելոյն: Արով
ինձ աշխարհ՝ ՚ի խաչելեալէ, և ես աշխարհի
վն զի զցայգ և զցերեկ յինքեանս կրեալ ունե
ին զՔն յընդունարանս սեկեկի յոգւոյ իւրոյ:
որ ոչ միայն ՚ի ժամ աղօթից և յեկեղեցւոյ
այլ և ՚ի խցի ժուժկալեալ արգելուն զին
քեանս, պարապելով յաղօթս և ՚ի խօսակցու
թիս Լ՛ն և յնթերցումս սրբոց գրոց, զաղօթս
արարեալ կերակուր և զարտասուս ըմպելի:

Եւ հոգին Սբ որ քննիչ է խորոցն Լ՛ն և
վերակացու տեսութե իմաստից գրոց, բա
նայր առ ջի մարուրց մտաց նց զդրունս գիտու
թե, և խելամուտ առնէր զնն շաւղաց գրոց,
որովք լուսաւորեցան ինքեանք՝ և լուսաւորե
ցին զմերձակայս և նորօք զաղգս հայոց, քան
զի մինչև ցայս վայր տգիտութե խոպանացեալ
և կորդացեալ երազգս հայոց, և ոչ միայն ոչ
ընթեռնուն յայլ ոչ զգիրս գիտեին, և ոչ
զզօրութիս գրոց, վն զի անպիտանացեալ եր
գիրքն յաչս մարդկան, և եբրև զկոճեղս փայ
տից անկեալ յանկեան ուրեք լցեալ հողով և
մոխրով: Եւ եբրև սորա մտիկ ընդ լծով ծա
ռայութե առաքինեաց գործոց յօժարութե
ընթեռնուն զգիրս և կամակարիւք մտօք կր
թիս

Թէին ձինքեանս, գործով քկատարել զընթերցեալն բանիւ . վն զի աներկբայիւք մտօք հաւատային գրոց բանից Թէ Մ պատգամք են : Եւ սոքա երկոքին արբա, վերոյ առացեալ արամբքն . զորոց զանունս յիշեցաք վարդպտց և եպիսկոսաց, սկսան յընթերցմանէ և յուսուցանելոյ գրոց վերստին նորոգել և յարդարել զմման կարգս բարիս անապատաց և վանորէից և ժամատեղաց օդնութք և օժանդակութք հոգւոյն սրբոյ՝ որ վերակացու է խորոց իմաստից գրոց . բանայր, և յայտնէր, և ծանուցալէր առաջի տեսութե մտաց նց զիմաստութի, և զուղիղ կարգս որում՝ ՚ի խնդիր էին :

Որով սահմանեցին Թէ պարտ է անապատաւորաց միայն կալ և ժուժել ՚ի խցիււ պահել զմիտս և զխորհուրդս սքս ամենից անմարբից մտածութեց հոգեկանաց և մարմնականաց . և Թողուլ զկամս իւր և լինիլ հնազանդ և կատարող կամաց առաջնորդին : և ոչ լինիլ ումէք ստացուած առանձին, այլ ամինչ հասարակաց լինիլ . և առաջնորդն հոգացէ ամցւն եղբարց պէտմն, և բաշխեսցէ ում և պիտոյացի : և ինչ ոչ ունել ՚ի խցի՝ և կամ ուտել և հանապազօր ՚ի տարին պահօք անցուցանել բաց ՚ի շաբաթի և ՚ի կիրակէէ և ՚ի տէրունականաց տօնից : Եւ պառ հրաժարեալք ՚ի գինւոյ և ՚ի մտոյ : և յամ աւուր յայգն և յերեկոյն խոստովանիլ անխափան զյանցուածս և զմտածութիս աւուրն : և յամ շաբաթ օր և ՚ի կիրակի օր, և ՚ի տէրունական աւուրն զգիշերն պաշտմամբ անցուցսնել մինչև ցառաւօտն, և ՚ի տոյն աւուրս անխափան մատուցանել զպատարագ : և հասարակ ամքն մեծք և փոքրք, իմիւս զալ ՚ի մարմնաւորաց գործոց կոչնակն : և

'ի սեղանն մարմնաւոր , և 'ի տեղի աղօթից . և եւրաքանչիւրոց առանձին դնել զմարմնաւոր կերակուրն : և 'ի մեծէ մինչև ցփորունս միաջափ , սոյնպէս և զբաժանելն մրգաց միաջափ :

Վյլ և զորպիսութի զձև զգեստուցն գտին 'ի գրոց , զբուսիթայն , որ է գլխոյ թօփին : և զքառակուսին , և զոքեմն , և զցպսիսն , որ է մաղեղէնն , ինէրքոյ զգեստուցն ի վրմերկ մարմնոյն : և հասարակ ամցւն զգեստն բովանդակ անունեղէն լիցի՝ և ոչ բամբկեղէն : և զատուեղէն չապիքն երկայն պճինաւոր առնել մինչ 'ի յոտն՝ և գօտի մաշկեղէն : Վյլ սահմանեցին ամցուն թէ եւրաքանչիւրոք եւրովք զգեստուքն չըջեցի , եթէ միայնակեաց իցեքուսիթայիւն և քառակուսոյն . եթէ երեց իցե փիլոնաւն : եթէ արեղայ իցե փիլոնաւն և վեղարաւն : Վյլ կրօնաւորական զգեստ ամենևին անհետ լեալեր , և այժմ սորա գտին . իսկ վեղար և փիլոն թէպէտ գոյր , այլ միայն 'ի ժամ աղօթիցն զգեսնունին , և զկնի արձակման ժամուն իբացեղեալ յինքեանց , և իբրև զաշխարհականս չըջին :

Վյլ և զկարգ ժամատեղացն սահմանեցին զառաջին ժամ գիշերոյն պաշտամամբք կատարել 'ի Թրունի աւուրն , և զանակաւ յիշեցուք այլովքն : և երկու կանօն սաղմոս և 'ի վերջն կանօնագլուխ ձայնիւ : և հանգստեան շարահան և աւետարան , պաշտօն վսննջեցելոց . օրհնութի ըստ խորհրդոյ աւուրն , և ի վրքաղունածք շարականաց , և թգլրք , և այլ լուք ձայնիւ : նոցին զկնի ընթեռնուլ զյայտ աւուր , և ի վր նր շարական ըստ պատշաճի ճառին , որ ընթերցաւ : և զկնի երկու կանօն և սաղմոս . զհետևորին հարցն եւրովք սարօքն : և զարեւոյց

Ժամն յիւրով կանօնաւ սաղմոսովն : և զինի առաւօտու ժամուն, և երեկոյն ժամուն, յետ արձակելոյն զգիրս խրատականս ընթեռնուլ յամաւուր : Ալ զերրորդ ժամ ցերեկին . և զվեցերորդ ժամն, և զիններորդ ժամն, իւրեանց նշանակեալ սաղմոսովն, զստ և որիչ 'ի միմեանց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու ասէին : և զինի զպատարագն սբ. մատուցանէին : և զարարողութի պատարագին դպրօք և սարկաւազօք իւրաքանչիւրօք իւրովք նշանակեալ զգետուքն : ամբն խոտովանեալ և ապա զգետաւորեալ : ասիւ և դողուք կալ առաջի պատարագին և մտաւոր և սրտաուլջ աղօթել և գիտել 'ի սրտի թէ զինչ աղօթեն : և յրկզքն պատարագին մինչև 'ի վախճանն ցընթերցումն իբրև ճաշեցին աւետարանին, անդադար և անմիջոց հեղճին արտասուս իմեջ եկեղեցւոյն իբրև զբոլորս յաղբեր : Ալ զինի պատարագին, ոչ վաղվաղակի առնուն կերակուր, այլ յեւանելն յեկեղեցւոյն լռելեայն ընթանային իւրաքանչիւրօք 'ի խուզն իւր, զի զընկալեալ շնորհսն և զուսաւորութիւն մտնոցն՝ զորընկալան 'ի սրբոյ պատարագէն, մի գուցի ի արատեսցի 'ի մտաց նց . և անդ ևս 'ի խցին ժամ մի առ անձին աղօթիւք անցուցանէին մինչև հանդարտէր բորբոքումն սրտից նց : և յորժամ հարկանէին զկոչնակ սեղանոյն ապա ամբն ժողովէին 'ի սեղանատունն և մի ահաղոյն նստէին 'ի սեղանն և ուտէին լռելեայն : և յորն միանգամ առնուն կերակուր 'ի բոլոր տարին : և յուտելն զկերակուրն սահմանեցին զգիրս ընթեռնուլ . զի ոպքիմք զհամն ճաշակեն այնպէս միտք զբանս Ա. Յ. քննեսցեն : Կար՝ այս յայտնի կարգ և սահմանն նց . զոր վերոյ

վերոյ ասացեալ վարդապօրն սահմանեցին երկորին արամբքս, իսկ զԾածուկ առաքինութիս նոյ՝ զորունէին, նա միայն գիտէ, որքննէ զսիրտս և զերկամունս որդւոց մարդկան :

Բանդի Թմբն զարդարեալք էին զանազանիւք՝ առաքինութեք, ոմանք ստնակացութեք, ոմանք պահոց պնտութեք. ոմանք արթնակացութեք. ոմանք արտասունահեղութեք, ոմանք լուակացութեք. ոմանք հիւանդաց սպասաւորութեք. ոմանք այլով կերպիւ մինչ զի Թմբն արժնացեալք էին շնորհաց սրբոյ հոգւոյն. առ որ հաճոյ լինէր՝ սրբանունէր աղօթք նոյ : Արդէս պատմեն վնտեառն կիրակոսի զայս ինչ : Էր ոմն այր եկեալ յաշխարհէ և լեալ միայնակեաց . և ՚ի սակաւ ժամանակս կացեալ յանապատին . Թէպէտ և խոստովանեալ էր և զհանդերձս աշխարհահանի փոխեալ՝ այլ ոչ էր հաղորդեալ . զի այն պէս էր կարգ անապատին, որ ՚ի կատարել տարւոյն ապա զնորեկս հաղորդէին : Եւ այս եկեալ այրս տակաւին ոչ էր լցեալ զտարին . վնորոյ և ոչ էր հաղորդեալ : պատահեցաւ սմա հիւանդանալ և անհաղորդ մեռանիլ . և սորին անհաղորդ մեռանիլն՝ խղճմտանք մեծեղև ի վր անապատաւորացն : և ոմանք կամեցոն յայնմ աւուր Թաղէք զնա . իսկ տէր կիրակոսն պատճառէր, և բարուրս յօդէր . և ոչ Թողոյր ՚ի Թաղէլ, և ասէր Թէ այրս այժմէն առ մեզ՝ և էկաց յայսքան աւուրս՝ և ոչ ինչ օգտեցաւ ՚ի մէնջ . և արդէ անհաղորդ և սմեռալ :

Եւ արդ առանց պաշտամանս և պատարագի Թաղէք զսա, արդողորմեցալուք սմա . և պահեցէք այսօր ևս՝ և ՚ի վաղիւն զպաշտօն և զպատարագ արարեալ վն հոգւոյ սորա՝ և այնպէս Թաղեցէք զդա : և միաբանքն հաւանեցան սուրբ

նել այնպէս : և ոչ գիտէին զկիրս մտաց տեսառն
կիրակոսի : Եբրե էանց գիշերն . և 'ի վաղիւն
տեսին զմեռեալն յարուցեալ և նստեալ որ
խօսէր և շարժեւր՝ և իւրովի ելեալ 'ի մահ
ճացն գնաց յեկեղեցին . և հաղորդեցաւ 'ի սբյ
Սարմնոյ և յ' ընէն Տ'ն . և գնաց 'ի տեղի հան
գատեան իւրոյ . և 'ի գալ միւսում գիշերին
դարձեալ վախճանեցաւ . զոր տարեալ թաղե
ցին 'ի գիրս եղբարցն : զայս պատմէին զտեսնէ
կիրակոսէն : Եւ զայլ բազում պատմութիւն ար
ժանի լսելոյ պատմեն 'ի միակեցաց անապա
տին . վնզի հոգին ՄԾ վերակացու էր նց :

Եւ էր հոգաբարձու 'ի մարմնաւորէ կողմա
նէ անապատիս սարգիս Եպիպոսն . և գրոց ու
սուցիչ տէր կիրակոսն , և պօղոս վրդ-պոսն , և
մովսէս վրդ-պոսն , և ներսէս վրդ-պոսն , և թու
մայ Եպիպոսն . որք բազում ժամանակս կացին
իմիասին սորա ամենեքեան : և ապա տէր կիրա
կոսն և թումայ Եպիպոսն գնացին յերկիրն քչտա
ղըս մերձ 'ի գիւղն հօջանց շինեցին զանապատ
և անդ բնակեցան : Իսկ սարգիս Եպիպոսն Ե
կաց մնաց 'ի նոյն մեծի անապատին . և համբե
րութիւն տանէր ամենից նեղութեց եկելոց ի վր,
մինչև է հաս 'ի խորին ծերութեաւ արքնակնիւք
վարուք . զընթացն հատարեալ և զհաւատն
պահեալ փոխեցաւ աստի յերկիրն կենդանեաց
'ի նոյն մեծի անապատին . որև անդէն կայ
թաղեալ պատուական նշխար մարմնոյ նորա :
որում վախճանն եղև 'ի թուականութե մե
րում հազար և վաթսուէն և ընին : Իսկ տէր կի
րակոսն , որ գնաց 'ի հօջանց կացեալ անդ կրօ
նաւորականաւ ժուժկալուք . 'ի նմին տեղեոյ
մերձ 'ի գիւղն հօջանց՝ յիւրում անապատին
եւ վախճանն սր 'ի թուականութե մերում :

Տաղար և եօթանասուն . և գնաց առ սիրեցեալն
իւր Քս . որում փափագեալ Տանապազ կրէր
'ի յոգին իւր : և 'ի նմին տեղոջ կայ թաղեալ
պատուական նշխար մարմնոյնր : 'ի փառս Քս
Լ. Ե օրհնելոյն յաւիտեանս Լմէն :

Այլևս պատմութի վասն սոյն մեծի անապատիս :

ԻԲ : *



ՍՆԻ ՇԻՆՈՒԹԵՄԻՆ

անապատիս . Իբրև անցին իվր ամբ
քառասուն և Տինգ կամ աւելի : արև
մտեան կողմն անապատին , գետինն պատառե
ցաւ ընդ կողմն Տիւսիսի , և էհաս մինչև 'ի
կողմն արևելեց մինչ 'ի հանդիպոջ լեռնա
վէմն : Իսկ յարևմտեց կողմանէ անցեալ զգե
րեղմանօքն . և էհաս մինչ 'ի լեռուն արև
մտեայ կողմանն : և այնքան պատառեցաւ լայն
և ընդարձակ և խորագոյն . զի թէ եզն և ձի' և
այլ անասուն գէպ լինէր անկանիլ 'ի խորափտի
պատառածին՝ ոչ կարէր ելանել : այլև բաց ի
ամանէ այլևս պատառուճածք այսր և անդր յո
լովք լինէին օր աւուր : Իւր յայմանէ պատճա
ռէ երկիւղալից կասկած անկաւ 'ի սիրտս բնակ
չաց անապատիս . թէ գէտինն յորոյ վերայ շի
նեալ կայ անապատն սահելոց է 'ի տեղոջ
իւրմէ : Իսկ ամբն գաւառականքն , որք անդ
պատահէին . 'ի տեսանէն զպատառուճածն
զայն , զնոյն վկայէին :

Իբրև էհաս թուականն մեր 'ի հաղար և հա
րիւր և եօթն , և յապրիլ ամիսն . եղև անձրևային
գարունն այն՝ և այն պատառուճածքն սկսան օր
աւուր լայնանալ . և հաւաստեալ հաստատե
ցաւ 'ի սիրտս ամենեցուն թէ այսօր կա
ղևն

դիւն նաճեալ հոսելոց է ստորակայ գետին ա-
նապատիս : Եւ եղև յաւուր աշխարհամաս-
րան կիրակէն, որ էր ապրիլ ամսոյ քսանևհինգ-
ընդ ժամանել 'ի ժամ երեկոյն մեքձ 'ի մուտս
արևուն . սկսաւ պատառիլ գետինն 'ի հա-
րաւոյնոյ կողմանէ անապատին 'ի բարձուէ 'ի
լեռնէ անտի . իբրև զմրրկեալ ամպ դիմեալ
գոյր 'ի բարձանց լերին՝ ահագին դորդամաժ
և թնդմամբ՝ և որոտմամբ՝ և ճայթմամբ իբ-
րև զորոտումն կայծակնացայտից ամպոց : և այն
քան ահագին էր որոտումն և թնդումն . մինչ զի
ամբն բնակիչք շինահայր գեղջն . և հալիձոր
գեղջն լուեալ զձայնն . և ելեալք յանդիմա
նակացէ տեղուջէ գեղջն իւրեանց տեսանէ-
ն . զարհաւիրն զայն : զի յաւիտենից հաստակա
ռոյց լեռնականք վեմք սրտառեալք յինքեանց
'ի միմեանց իբաց տրոհէին . և յսկզբանց կա
ռուցեալք վեմք՝ որք հիմունքն էին գետնոյն .
եռացեալք 'ի վերգային յերեսս գետնոյ . և
յոյովից ժամանակաց ծառք և տունկք ամբն .
եթէ ընկուզի , և թէ կաղնի , և ընդ նոսին մե-
ծամեծք վեմք՝ զառի ստորև սուզեալ 'ի ներքս
'ի յանդուհս կլեալ աներևութանային :
Եւ մեծամեծք վեմք հատեալք 'ի լեռնէն և
զինի միմեանց հոլովեալ գային 'ի վայր . որոց
'ի բախելն ընդ միմեանս փշրեալ և խորտա-
կեալ իբացնորթին : և ուժ գնութի սոցին բախ-
մանցն թնդումն սաստիկ առնէր ամենից վայ-
րացն . և ձայն գոռալոյ և որոտման սոցա խլա-
ցուցանէր զլսելիս՝ և սրտամեռ առնէր զամին :

Եւ որովհետև երեկոյացեալ էր օրն և սա-
կիւն մնացեալ ժամաւուրն . և այն ևս էանց
և ժամանեաց գիշերն իվր . սկսաւ անձրև թո-
ղիլնիլ սաստիկ մթնագիշեր այնքան զի և

առ ընթերակայ կացեալքն զմիմեանս ոչ տեսա նէին : Եւ ամբն բնակիչք անապատին ելին յանապատէն . և գնացեալ ժողովեցան յարևելեան կողմն անապատին 'ի քարեայ լեառն : և անդ զետեղեալ վառեցին զապտերս և զմեծամեծ մոմս . կային ասաբէկ պակուցմամբ , և մնային կատարածին . և ըղձանային չուսոյ առաւօտուն :

Իսաղումբ համարեցան թէ անապատն միա հաղոյն քանդեցաւ ընդ այլ սասեալ գետոնոյն , բայց արարչական խնամ գթածին ՎՅ հայեցեալ 'ի մշտապաղատ մաղթանս ողորմելեաց եղբարցն ոչ էթող իսպառ աւերիլ՝ այլ սակաւ : քանզի արևմտեան կողմն անապատին , պարիսպն և հիւրատունն . և ախոռք անասոցն , և համբարանոցքն , և մասն ինչ 'ի սենեկէ եղբարցն . և արևմտեան կողմն մեծ ի եկեղեցւոյն յետուսս կուսէ արևմտեան սեանցն , սորա ամենեքեան աւերեցան :

Եւ յոյժ ասագին և ասընկէց էր գործեցեալ իրն , քանզի ուր լեռնացեալ կոհակք ալեաց ծովու՝ որք զհետ միմեանց սասեալ ընթանան , սոյնսկ և հաստահիմ վեմբ քարևհող վայրացն այնմիկ եղեն : Օ ի 'ի սրտէ լերինն յորոյ վր թանահատի վանքն կայ շինեալ . 'ի խորոց անդնդոց բնականք վեմբ լերինն սկսան արատուիլ . և հողով և խճով և մեծամեծիւք վիմօք , իբրև զտունս եկեալ զառի վայր հոսեր և 'ի վերուստ եկեալ հոսանն իւրոյ բռնութիւն և ուժ գնիւ հոսմամբն զիւր առաջի վայրսն 'ի բնականի տեղւոյն 'ի բացոսաուցեալ ընդ իւր իմիպակն զկնի միմեանց ընթանային իբրև յորձանս ծովուց ելեէջս առնելով և այսպս սասեւրով գնացին և հասին 'ի գետն մեծ որոյս :

որ իմէջ ձորոյն անցանէ , և արգելին զգնացս ջուրցն իբրև ժամն ութն , և ջուր գետոյն , որ 'ի վերուստ իջանէր եկեալ ծովացաւ և լցաւ տեղին և ապա 'ի կողմանէ ինչ էգիտ ինքեան զտեղիս գնալոյ՝ և քարինքն և հողքն , որք արգելան յեզր գետոյն եղեն բլուր մեծ :

Իսկ գերեզմանատուն անապատաւորացն էր յարևմտեան կողմանէ անապատին , և ը հոսիլ վայրացն այս գերեզմանատունս ևս հասարակ միահաղոյն ամ 'ի միասին , խորագոյն և անդն դային յատակաւն իւրով ոստեալ 'ի տեղւո ջէ իւրմէ սահեալ գնաց բազմաւ հեռաւորութի 'ի վայրի ուրումն զկայ առեալ կայացաւ : Բայլ 'ի սոյն տեղւոջ էին թաղեալ սք վարդապետն պօղոս , զորոյ զպատմութինն արարեալ էմք յայլում ճառիւ և սարգիս պարոնտերն որոյ սակս յանցեալ ճառիդ պատմեցաք : և արիստա կէս վրդապետն , որ զկնի սարգիս պարոնտերին եղև առաջնորդ անապատին : և ճգնաւոր և ընտիր և առաքինագործ արեղայն տեր բարսեղ : աքա չորեքեանս առ ընթեր միմեանց թաղեալք կային , և իվր իւրեանց շինեալ կայր մատուռն : և 'ի ժամ հոսելոյ տեղւոյ գերեզմանատանն ինամն Բյ իբր զգործինչ սքանչելեաց արար իվր սրբոցս , զի ամենևին գերեզմանք սոցա ոչ խախտեցան , որ և քարինք տապանացն ոչ թիւրեցան , այլ զդիրս իւրեանց դէպ ուղիղ ընդ արևելս ընկալեալ կայացան , ուն և նախկին թաղեալք էին : բայց մատուռն որ իվր սոցա կայր փլուզեալ ցնդեցաւ :

Եւ 'ի լինելն այսց ամենից գործոցս սոսկալի ինամօքն Բյ ամենակալի , ոչ ումէք եղև մնաս մարդոյ կամ անյանոյ , այլ միայն եղբայր ոմն Մարգ իմէջ իւրոյ խղին և անդէն մեղաւ 'ի ներ

քոյ հողին : զի ըսկասնել հոսմանն 'ի ժամ Երեկոյն , ոմանք յեղբարցն գնացեալ ազդեցին նմա երանել անդի՝ զի միմնացէ 'ի ներքոյ հողոյ , և նա 'ի վաղուց ժամանակաց ցանկանալով սպասէր մահու՝ ոչ եկն արտաքս , այլ մնաց անդէն յուսով ակնկալեալ ՏՄ՝ զի Թերևս վստայարտի մահոճան իւրոյ ընկալցի զայցելութի հողոյ իւրոյ , 'ի բազմագուծ ՏԵՄՅ :

Իսկ միւս այլք բնակիչք անապատին ամբն ժողովեալք էին 'ի լեառն , որ կայ յարեւելից կողմն անապատին , յորդարդիսիւք արտասուօք և մեծօք հառաչանօք կոծէին զանձինս , և աղաչէին զԻ՛ժ՝ զի Թերևս զերծցին 'ի սատակ մանէ , և փրկեսցի շինուած անապատին 'ի փրմանէ , քանզի յուսահատեալք էին վստահազին արհաւրացն եղելոյ , և մինչև ցլուսանալ 'ի լոյս առաւօտու երկու շաբաթին , իբր զպաղատաւոր որ յերկունս կային : Իսկ այն որոյ գթութինն բնութիւն աղբուրն ողորմութե ՏԵՄՅ՝ ոչ միայն զնս փրկեաց 'ի սատակմանէն . այլև զանապատն ևս ամբողջ պահեաց և ոչ եթողաւ երկ . զի ամենագործողն իւրովան խախտ պահեաց զանապատն բաց յառաջ ասացեալ աւերելոցն :

Իւր ոմն յեղբարց անապատին պատմեաց այսպիսի տեսիլ երագոյ . Կասաց Թէ տեսանէի զոմն չքնաղատես մեծաշուք պայծառիւ զգեստու հեծեալ յըսպիտակ երկվար՝ և կայր ի վտանեաց եկեղեցւոյն , որում առաջի ժողովեալ եղբարցն պատմէին զանցս ահագին վշտացն : Իսկ երևեալ փառաւոր այրն զնոյն երկրորդեալ խօսէր ընդ եղբարցն : Որև 'ի կարգս խօսից իւրոց ասաց այրն փառաւոր և ես վստայոց իրաց կամ և հոգամ , որոյ սակաւ

կաւ մի ցաւեցաւ ծուռնկա իմ, զի զոտս իմ եղեալ դէմ երեսոց քարանձաւիդ զդէմ կալեալ ունէի լերինդ, զի մի փլուզեալ ծածկեացէ զանապատս եղբայրանոց: և դուք մի ծուռնայք 'ի գործոյ առաքինութե, և հանապազ գոհութե փառաւորեցէք զՏԻՄՈՒՅՆ որ փրկեաց զձեզ. և առ յապայն ևս փրկեացէ ողորմութիւն իւրով. որում փառք յաւնտեանս ամէն:

Պատմութի վարդապետութե և վարուց սրբոյ վարդապետին պողոսի:

ԻՊ:



Մ. Ա. Ր. Դ. Ա. Պ. Ե. Տ. Ն

պողոս էր յերկրէն մոկաց 'ի գեղջէն, զոր անուննէն բար: Եկեալ 'ի սուրբ և 'ի մեծահաշակ ուխտն վարադայ յարեցաւ առ կարապետ վարդապետն, զորոյ զմակ անունն ձագ վարդապտ ասէին, որում աշակերտեալ ուսաւ զամեն գիրս հնոց և նորոց կտակարանաց, և իբրև կատարեալ եղև գիտութե և հասակաւ ետ նմա ձագ վարդապտն զիշխանութի վարդապտութե. և նա գնացեալ իմէջ քրիստոնէից քարոզէր զպատու իրանս Մ. Ե. Ա. քարոզելով եկն 'ի թաւրեղ քաղաք, և անդ 'ի կիրարկեալ զգործ վարդապտութե իւրոյ, և յամ առուր քարոզիւ և դասիւ և յորդառատիւ վարդապտութե լուսաւորէր զժողովուրդս քրիստոնէից որք և պատահէին անդ: Քզի յամենից կողմանց եկեալ վաճառակահանքն որք գային 'ի թաւրեղ. իբրև պատահէին լրոյ քարոզութե սրբոյ վարդապտին մխիթարեալք զունարձանային հոգւով. և զորհնութի մատուցանէին Մ. Ե. տունողին այնպիսեաց շնորհաց:

Եւ ինքն պողոս վարդապտն. էր վարուքն
ԺԵ Կ

նք և առաքինի. հանապազօր փաղմուսերդ. և արտասու՞օք և մտաւոր ազօթարար: որ զգե շէր շաբաթ աւուրն յորում լուսանայր միաշաբաթօրն. յերեկոյէ սկսեալ յօտին կանգնէր. և մինչ 'ի լուսանայն հսկումն առնէր. և զամ շաբաթու գիշեր այսպի առնէր. զյիշեացութն, զկանօն գլուխն, զալէլուսն խաղովասէր հանդերձ ութ կանօնաւ սաղմոսիւն. և յառաւօտուն զփրկական խորհուրդ պատարագին մատուցանէր: այլև հրաժարեալ էր 'ի գինիւոյ և 'ի մնոյ ամենեկին. 'ի շաբաթօր և կիրակի մի այն ճաշակէր 'ի նաւակատեաց կերակրոց. և զայլ ամենեստան աւուրս տարւոյն պիտօք կայր: այլև ոչինչ առնոյր զինչս և զստացունձս յումեքէ՝ զի անարժաթ քարոզէր. և թէ տային ևս ժողովուրդքն ինչս. զայն ևս 'ի պէտս գերեաց և կարօտելոց և 'ի շինումն եկեղեցեաց ծախէր: այլև ուրև գնայր 'ի ճանապարհ թէ հեռաւոր և թէ մօտաւոր՝ հետի ոտս գնայր. քանզի զգիրս քարոզին և զայլ գրեանս ինքն և աշակերտքն իւր բառնային շալակով և գնային: Եւ 'ի թաւրէզ քաղաքի թէպէտ գոյր ժամատուն. բայց տեղի պատարագի ոչ գոյր 'ի նմա. իսկ սա 'ի նմին ժամատան շինեաց զգեղեցիկ խորան պատարագի:

Եւ ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վանն ճամարտից վարուցնր. և վաճառականքն, որք էին յերկրէն գողթանց աղաչէին զնա գնալ յերկիրն իւրեանց 'ի քարոզութի. յորոց մի էր ցղնեցի խօջայ հայրապետն և այլք և ուրնդ նմա. և զայս բան 'ի բազում աւուրս թախանձէին: Իսկ վրդպտն հաճեալ 'ի բանսնց գնաց 'ի գաւառն գողթանց և եկեալ 'ի գիւղն ագուլիս: Կայր անդէն եկեղեցի մի առաքելաշէն որի

մէ ասէին թէ իբրոյ առաքելոյն թաղէոսի շե նեալն է . որև յետ բազմաց ամաց զինի բանալոյ դրանն . մեք ևս տեսաք զեկեղեցին զայն : Եւ էր դուռն եկեղեցւոյն այսմիկ՝ի բազմաց ժամանակաց ինքնին փակեալ առանց նգի և փակազակի . և թէպէտ բազումանգամ աշխատեալ էին և ջանացեալ զի բացցեն՝ և ոչ էր լեալ Տնար բանալոյ . վնորոյ վճատեալք էին և իբաց կացեալք : և փակումն դրանս այսմիկ ամենիւ ունիսուք պատմեալ եղև վարդապետին :

Եւ յորժամ էճաս գիշեր շաբաթուն՝ի լոյս միաշաբաթին . եկեալ վարդապետին ըստ Տանապապորդ սովորութե իւրոյ էկաց առաջի փակեալ դրան եկեղեցւոյն՝ զի Տսկումն արարեալ զցայգապաշտօնն և կատարեսցէ : և կացեալ առաջի փակեալ դրանն սկսաւ ՚ի խորս սրտի իւրոյ ուժգին գոչմամբ և յորդաՏոս արտասուճօք աղաչել՝ և խնդրել ՚ի Տեշտալոյ տեառնէ զբացումն դրան եկեղեցւոյն . զի բեկելով սրտիւ Տեղոյր զանձն առաջի Տն յոր դաՏոսիւք արտասուճօք . զոր բղխէր յաջացն իբրև զաղբիւրս : Եւ նախ քան զսկսանիլ Տսկ մանն արար զդուռնաբացէք , և իբրև բախեաց զդուռն երկցս անգամ և ամաց . բաց մեզ տր , բաց մեզ տր , բաց մեզ տր զդուռն ողորմութե քոյ՝ որ ողբալով կարդամք առ քեզ : և շնորհօքն Մ. յառանց ուրուք մերձենալոյ առ ժամայն ինքնին բացաւ դուռն : Իսկ որք մերձն կային ՚ի քահանայից գեղջն և յաշխարհականաց Տիացեալ զարմացեալ ապուշկային . և ապա եկեալ ՚ի միտս վաղվաղակի ընթացեալ յաղդ առնէին ամի ժողովրդեանն : որոց ՚ի լմելն , թողեալ զտունս և զընտանիս ՚ի խորս կերին փութանակի անդր ժպմանէին մե

Ժամեծք և փոքունք. և 'ի տեսմանն զօրհնու
 թի'ի բարձունս վերաւաքելի Մ. Ե. Ե. և ի բերև
 բացաւ դուռն եկեղեցւոյն. մտեալ 'ի ներքս ա-
 մենիւ ժողովրդեամբն՝ ուրախու թէ և ցրն
 ծու թէ անդէն 'ի նմին եկեղեցւոջ սկիզբն ա-
 րարին գիշերային կարգին: և յառաւօտուն
 մատուցին զփրկական խորհուրդ. պատարա
 գին. և ամբն 'ի մի բերան օրհնէին զհրաշա
 գործն Մ. Ը՝ որ արար զնս արժանի այնց պար
 գևաց: և հնչեաց հռչակ լրոյս այսմիկ ընդ
 ամեն կողմանս գաւառին իմէջ քրիստոնէից՝ և
 այլազգաց. և որք լսէին հիանալով օհէին զՄ. Ը:
 Մ. րդ՝ 'ի բանալ փակեալ դրանս այսմիկ, մեծ
 հմն խորհուրդ յայտնեալ ցուցաւ. քանզի լէ
 նմին բացաւ և դուռն քարոզու թէ բանին կե-
 նաց յաշխարհս արևելեան. որք ցայն վայր 'ի
 խորխաւարի անգիտու թէ նստեալ կային. ուր
 թէ 'ի ժամանակս կռապաշտու թէ, եկեղե-
 ցականք և աշխարհականք: և ուր հին Վ. ս
 արեգակն արդարու թէ ծագեցաւ յաշխարհ.
 և լուսաւորեաց զամենեսեան հաւատով Մ. Ը
 գիտու թէ. այսպէս և սք վրդ. պտն պօղոս ըզ
 կողմնս արևելեան. վնզկէ բարձ 'ի միջոյ զամ
 աւելորդ անկարգութիս յեկեղեցականաց և
 յաշխարհականաց. և կարգազարդեալ շքե
 դացոյց զամեն ուղղիւ. բարոզու թէ: վս զի յետ
 բանալոյ դրան եկեղեցւոյն՝ բացաւ դուռն
 հաւատոյ աշխարհիս արևելեան՝ քարոզու թէ
 և ամբժիւ և անկեղծիւ վարդ. պտու թէ սորա.
 զի առաքելաբար շրջէր յամեն տեղիս. բարոզէր
 զբանն կենաց. կարգէր զբաճանայս, շինէր զե-
 կեղեցիս, և հաստատէր զբարի կարգս յեկեղե-
 ցիս և 'ի գիւղս. ժողովէր զմանկունս յուսուհն
 սրբոց գրոց. և 'ի տեղիս տեղիս հաստատէր:

զդպրպտուևս՝ և յիւրոց աշակերտաց կացուցանէր զդպրապետս. և զունաս ՚ի մանկանց զպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր. որև ամբն հասին աստիճանն՝ աբեղայ և էրէց՝ բաւական ինքեանց և ժողովրդեան։

Եւ յամսն տեղիս ուրև շրջեցաւ նա շինեաց զեկեղեցի. քանզի յառաջ քան զնա յամսն տեղիս ոչ գոյր եկեղեցի. և թէ ուրէք գոյր ևս, և այնևս անշուք, և անճահ. եկեղեցի անուն, խրթին և նսեմ, խարխալեալ և բլբլեալ։ Ելցեալ հողով և մոխրով. որով ձևն և դիրն թիւր և թէք։ Իսկ սա ուրև հասանէր, հմար կէր զեկեղեցիս պատշաճաւորիւ ձևով դէպ ուղիղ ընդ արևելս ունելով զդիրս՝ գեղեցկիւ շինուճածով խորանքն և լուսամուտքն և կաթուղիկէն և այլքն ամբն։

Եւ ըստ այսմ սարասի քարոզելով և զեկեղեցի շինելով էհաս մինչ ՚ի գիւղաքաղաքն աստապատ. և նախ զնոցին վանքն շինեաց՝ որ յանուն սրբոյն ստեփաննոսի նախալկային է ամբով պարսպիւ, և երկաթապատիւք դրամբբ։ և յետ աւարտմանց վանիցն սկսաւ զգեղջն եկեղեցին շինել. ի թախանձանաց ժողովրդեան գեղջն. և վանզի եկեղեցին փոքր էր և ոչ էր բաւական տանիլ զժողովուրդսն՝ զի բազում էր ժողովուրդն։ Ընդ որոյ կամեցան ՚ի խցիցն որք շուրջ զեկեղեցաւն էին քակել և խառնել յեկեղեցին՝ զի մեծացի։ Իսկ աբեղայքն. որք բնակէին ՚ի գեղջն. և էին տեարք խցիցն խոժոռեալք ըմբոստացան. և ոչ թողունք քակել զխուցան, բայց ժողովրդոցն ոչինչ դիպթ արարեալ զամբոխմանէ նոցա. այլ դիմեալք ի վր քակեցին զխուցան։ առ որ դժուար ըսաւ աբեղայիցն՝ գնացեալ ՚ի վանքն առին

զեպկ

զեպկպոսուենսն և եկին 'ի գիւղն. և արարին զաղմուկ մեծ. և զբանս անսխառչաձս ասեին վարդապետին: Իսկ սրբոյն բերեալ յինքեան ըզ նմանութի ճշմարտի հեզոյն Յի. խորհելով 'ի մտի թէ հալածեսցեն զձեզ' ի քաղաքէ յայս մանէ՝ փախիջէք 'ի միւսն. վնորոյ զանխուլ յամէ ելեալ 'ի գեշերի լուեւայն հետևեցաւ գնալ յայլ գիւղ: Իսկ ժողովուրդքն իբրև զգացին զգնալն վարդապետին. յայնժամ դի մեալ իվր արեղայիցն հարկանելով քարիւ և փայտիւ արտաքս վարեցին 'ի գեղջէն. և վաղ վաղակի ընթացեալ զկնի վարդապետին բազմօք աղաչանօք դարձուցեալ զնա ածին 'ի գիւղ անդր: և սկսան շինել զեկեղեցին լայն և ընդարձակ և բարձու շինուածով. և կաթուղիկէ իվր յօրինեալ: նոյնպէս և զայլ յարկս տանցն և պարսպին: Իսկ արեղայքն և եպիսկոսուսքն իբրև տեսին թէ ինքեանք ոչ կարացին ինչ ստնա նել վրդապետին. գնացեալ 'ի դարաշամբ զաման եպիսկոսուսն նոխապկայի վանացն միաբանեցուցեալ լէ ինքեանս առեալ եկին իվր վրդապետին. ըստ օրինակի թգւրացն ամաղեկայ որք միաբանեալ եկին իվերայ զօրավարին Մ. յետուայ. բացց ույ նորա անդ պարտեալ գտան. սոյնպէ և սորա աստ: վնզի թէ պէտ բազումանգամ հակառակեցան վրդապետին. այլ նա ամենեկն ոչ լբաւ 'ի բարւոր յառաջադիմութեն:

Իսկ միաբանեալ արեղայքն առաւելևս դրդեալք 'ի նախանձուէ գնացին առ մելքի ասե թ կթղկոսն՝ որ զիշխանութի կթղկոսութե՝ զաբալայիւ առեալէր 'ի պարսից թգւրէն. և այնքան դրդեցին զնա 'ի բարկութի մինչ զբազումանգամ առարեաց առ վրդապետն բանս սոպառնակայս և յանդիմանութե: թէ ելցէ

յերկրէս

յերկրէս մերմէ և գնասցես յերկիր քո ուստի
 եկեալ ես՝ զի ոչ է պիտոյ մեզ խաբէբայ և նո
 րահանուկ քարոզութի քո . և ոչ կեղծաւոր
 վարքն քո . ապաթէ ոչ՝ առակ նշաւակի, և
 այսն կատականաց լինիցիս՝ ի ձեռս իմ : Իսկ
 վրդւպտն բնաւ ոչինչ առնէր վոյթ զայնմանէ՝
 վնզել յոյս նր հաստատուն էր՝ ի Տր . այլ հանա
 պազ շրջէր, և քարոզէր, և շինէր զեկեղե
 ցիս, և յարդարէր զամենեւեան ուղղելւք կար
 գօք և սահմանադրութիք :

Իսկ յետ ամաց ինչ անցելոց՝ կթղկոսն մէլ
 քիսէթ և վրդւպտն պօղոս պատահեցան միմե
 անց՝ ի նախընճան քաղաքի . և կթղկոսն զթոյնս
 և զմաղձս դառնութե, զոր ի բազում ժամա
 կաց մթերեալ ունէր՝ ի սրտի . յայնժամ ժայթ
 քեաց ի վր վրդւպտին : և յետ բազմաց յանդիմա
 նուեց և կշտամբանաց և անպատեհից բանից՝
 զորս խօսեցաւ կթղկոսն յերեսս վրդւպտին . և
 զայս և սասաց թէ զամեն եկեղեցիսդ, զոր դու
 շինեցեր ի վերայ քոյ գլխոյ քակեցից : և հրա
 մայեաց նմա ելանել յայսմանէ աշխարհէ . և
 գնալ ի տեղի իւր . և թէ այլևս յամի՝ այնուհե
 տև մատնի՝ ի ձեռս աշխարհակալաց իշխանաց
 և ոչք գոյրօգնական՝ ի կողմանէ վրդւպտին . ոչ
 եկեղեցական և ոչ աշխարհական : վնզի ամենե
 քեան երկնչէին ի կթղկոսն . զի թգրականաւ
 իշխանութի վարէր զկթղկոսութին : Եւ
 զագս որոյ անձար լեալ վրդւպտին՝ ելեալ ի
 նախընճանայ գնաց ի գիւղն շամբ՝ զի գնասցէ
 ի տեղի իւր . և ըստ հանապազորդեան սովո
 րութե իւրոյ որ իմէջ գիշերի աղօթէր վարդա
 պտն . և յայնմ գիշերին յետ աղօթիցն խթեաց ի
 կողս աշակերտին՝ և զարթոյց զնա . զարթեան
 և այլք ոմանք ևս . սկսաւ հարցանել ցնոսա
 թի

Թէ զինչ բարւոյ թուի ձեռք արհանալ ընդ
դէմ փորձու թէս. դիմակայիլ խառնութեան
այսմիկ և բարոյել զբանն կենաց. թէ տեղի
տալ և հեռանալ ՚ի շփոթէ սոցա: Իսկ աշակեր
տացն տուեալ զպատասխանի. դու ինքնին տե
տանես զխաւար անդիտութեան. թէ որպէս
սփուեալէ ի վր ժողովրդեանս. և զայնևս թէ
ոպէ կբաց ՏՊ զդուռն բարոյո՞ւթէ. քանզի
զորինչ և բարոյէս վաղվաղակի արդիւնանայ:
արդ մի գուցէ վհատիցիս զի ՏՊ ՎԺ ձեռնտու
է քեզ. պարտ է քեզ արհանալ և համբերել
փորձութե վն օգտի ժողովրդեան՝ և բարո
յելոյ զբանն կենաց:

Իբրև ընկալաւ զբաջալերս զայս ՚ի նոցանէ
սք վրդնայտն. յայնժամ ասէ ցաշակերտսն իւր.
արդ որդեակք իմ, օրովհետև այդպէս ասա
ցիք. պարտէ մեզ գնալ առ թգւրն և առնուլ
՚ի նմանէ զհրաման վն շինութե եւ եղեցեաց: և
ես ակնուն իմ ՚ի Տէ զի տացէ թգւրն զինդերո
մեր: Երդ եթէ առնու՞ք ՚ի նմանէ զհրա
մանս զայս բաջութե անունն է մեզ. և թէ
սպանցեն զմեզ վարձս բարեաց ընդունելոյ
եմք ՚ի ՎԺ Է վաստակաւորաց ծառայից նր:
և աշակերտացն ևս վկայեալ թէ յոյժ բարի է
այդ խոհուրդ:

Եւ նոյնժամայն ՚ի նմին գիշերի յարու
ցեալք ելին ՚ի շամբայ՝ անցին զգետն երասիս
և հետևեցան ՚ի գնալ առ թգւրն, որ էր ինքն
առաջին շահաբանս. վն առնելոյ ՚ի նմանէ զհրա
ման շինելոյ զեկեղեցի: և յետ աւարտման կա
նօնի սաղմոսին, զոր ասէին. զճանապարհայն
մինչ երթային. պատահեցաւ լինիլ քարոցն
այն որ ասէ. վն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճա
նապարհս խաղաղութե զտէր աղաչեսցուք: և
վն խոց

վնխորնակելոյ զհակառակորդն վաղվաղակե
ընդ ոտիւք մերովք. զտէր: յայնժամ ասէ
վարդապետն ցայնոսիկ որք ընդ նմա էին. տեսէք
որ դեակք իմ, զի ուղիղ է ճանապարհս մեր
ընտելկայութե սաղմոսիս. որով առաւել հաս
տատեցան, և ուրախացան. և մեծաւ յուսով
երթային:

Եւ եղև իբրև հասին 'ի գաւառն, զոր ա
րազբար ասեն' և 'ի տարածամել աւուրն
մտին 'ի գիւղ մի այլազգեաց առիօթել զգի
շերն զայն. և տեսին, զի այր ոմն մահմետա
կանաւ հաւատով եկն ընդ առաջ նց' աղաչէր
և ասէր. խնդրեմ 'ի ձէնջ վն ՎՅ մի գարշիւ
յայլազգութե իմմէ այլ խոնարհիւ յաղաչանա
իմ, և գալ 'ի տուն իմ. զի հիւրընկալ եղէց
ձեզ: քանզի ուխտեալեմ ՎՅ. զի յայսմ աւ
ուրառանց հիւրի ոչ ճաշակեցից ինչ. և մինչև
ցարդ սպաս կալեալ կամ իմէջ շինիս. և նայ
իմ վն հիւրի. և արդ զձեզ առաքեաց ՎԾ. վն
որոյ յօժարութե խնդրեմ զգալն ձեր 'ի տուն
իմ: Իսկ երանելոյ վարդապետին տունեալ ցնծու
թե զպատասխանի առնն, և ասէ. այդպէ եղի
ցի ոմ ասացերդ. երթիցուք 'ի տունքո. զգի
շերն զայն օթեցան 'ի տուն առնն այնորիկ. և
այրն յոյժ բարւոք սպնսաւորեացնց ամենիւք.
պիտոյիւք և հանգուցանելով: և յառաւօ
տուն մինչ կամեցան 'ի գնալ եկեալ այլազգին
աղաչէր. խնդրէր և ասէր' թէ ոչ գոյ ինձ
զաւակ և յիշատակ յերկրի. խնդրեմ 'ի ձէնջ
առնել զաղօթս վն իմ. ոմ զի լիցի ինձ զաւակ
քանզի կին իմ ամուլ է: Իսկ սրբոյ վարդապետին
համբարձեալ զմշտատարած ձեռնն 'ի յերկինս
կանխառանալեք աղօթիւքն խնդրեաց ՎՅ
տալ նմա զզաւակ. իսկ հեշտալուր ՏԻն. զոր
խոսայ

խոստացաւ ծառայից իւրոց թէ զամ'դորինչ
և խնդ-իցէք հաւատովք, առնուցուք . աղօ
թիւք սրբոյ վարդապտին պարգևեաց առնն այն
միկ զաւակ . ոպ և յայտնեաց նոյն այր :

Յետ այսորիկ եւ անտի վարդապտն և գնալ
յերկիրն աղուանից 'ի զարաբաղ . 'ի տեղին որ
անուանի քթուկլու . քանզի անդէր բանա
կեալ թգրն շահաբաս ամենիօսպայիւն իւրով :

Իսկ յորժամ յանդիման եղև վարդապտն
թգրին . երևեցոյց ՏՐ շնորհաւոր զծառայն
իւր առաջի ահարկու և այլազգի թգրին .
և 'ի հարցանելն արքայի ցվարդապտն . թէ զինչ
խնդիր կայ քո 'ի թգրութէս մերմէ : Պատաս
խանեալ ասաց վարդապտն : զի խաղաղարարաւ
թգրութք քով արքայ ոչինչ կայ պակաս յա
մենից բարեաց ազգիս հայոց՝ բայց միայն աղօ
թից . զի ոչ գոյ տեղի աղօթից՝ զի աղօթես
ցեն առ ՄԾ վս աշխարհի՝ և վս կենաց թգրին :
զայս խնդրեմ յարքայէ զի տացէ ինձ զհրաման,
և զհրովարտակ շինելոյ զեկեղեցի . և այսմ
եթէ եցէ վարձք ինչ եղիցի թգրին . և թէ եցէ
մեկանք ինչ եղիցի ինձ : Իւր 'ի լսելն զայս ար
քայի զուարճացաւ յանձն իւր . և բարձու բար
բառով ասաց նախարարաց իւրոց . իշխանք և
դատաւորք զինչ արժան և ուղիղ թուի ձեզ՝
զհրաման տալ զեկեղեցի շինելոյ՝ և թէ արգե
լուլ : դարձեալ ինքն փութանակի արար պա
տասխանի իւրոց բանիցն և ասաց . ոչ է պարտ
արգելուլ . այլ արժան է տալ զհրաման շինե
լոյ՝ քանզի և այնք և ս Մ տունք են : Իւր առ
ժամայն հրամայեաց գրել զնոմոս՝ կնքել և տալ
նմա . և իբրև կատարեցին և ետուն ցվարդապտն
զթուղթն . և նա տարեալ իբացեայ ետ ըն
թիուտուլ . և ետես զի ոչ էր այնպէս օգտա
կառ

կար, որբաւակոն շինէր կարեաց ներկայի ամա
նակին. վն որոյ ՚ի պատճառէս հարկեալ կրկին
անգամ կացեալ յանդիման արքայի. և յուշ
առնէ նմա զինդրելին իւր զհրովարտակն. և
իբրև վերահասու եղև թգրն ամի գիտաւորու
թե մտաց վարդապետին: և յայնմժամու թգրն
արտաքս ելեալ ՚ի խորանէն երթևեկս առնե
լով Ճեմէր. և նոյնժամայն կոչեաց զմիոմն ՚ի
գրչացն նստոյց ՚ի գեանի առաջի իւր. և արքայ
կացեալ յոտին ինքն ասէր, և գրագիրն գրէր.
մինչև կատարեաց զաման բանս գրոյն: և պապ
հրամայեաց նոյն առնն գրչի շրջեցուցանել առ
աման իշխանս զի ձեռնագրեսցեն և կնքեսցեն:
և իբրև կատարեցաւ ամբերեալ ետուն ցվարդ
պետն զհրովարտակն: և սրբոյ վրդապետին գոհա
ցեալ զՏէ. առեալ զհրովարտակն արքունա
կան եկն յարևելեայ երկիրս հայոց. և այնու
հետև աներկիւղ և ևս վայելուց սկսաւ շինել
զեկեղեցիս. և համարձակ շրջիլ և քարոզել:
Իսկ կթղկոսին մեքիս թիրաւաւել մախա
ցեալ լը վրդապետին պողոսի, խօսի զբանս զրպար
տանաց ՚ի կողմանէ վրդապետին ընդ մեծի և հզօ
րի իշխանին ամիրգունայ խանին. որ էր իշխան
երևանայ. և ասէ, այր մի ստամբակ և անհնա
զանդ. և օտար՝ յաշխարհէն մարաց. քանի ամէ
զի շրջագայի յերկրիս Պարսից. և մանաւանդ
՚ի բում իշխանութե գաւառս. և ստով և խա
բեբայիւ քարոզութի և կեղծաւորիւք վարուք
հաւանեցուցանէ զամ մարդ ինքեան. և ոչ
մնաց ոսկի և արծաթ և այլինչ ստացունած առ
որ՝ այլ զամ կողոպտեալ յամենեցունց և ա
մեալ առաքէ յերկիր իւր: քանիցս անգամ
պատուիրեցաք նմա բանիւք. նաև երես և ե
րես և սասցաք նմա ելանել յաշխարհէ ասորի.
1 18 ԺԸ և գլխալ

և գնալ 'ի տեղի իւր. և նա ոչինչ արար զփոյթ 'ի մերոց բանից. և կամակն էած թգլբակահանի Տրամանին. որ կայ 'ի ձեռս մեր. այլ գործէ ըստ հաճոյից կամաց իւրոց. քանզի անհնա զանդ է իշխանաց և պետաց :

Ս արոյ և խանին կոչեալ զոմն զինոճոր առաջի իւր՝ և ասէ, Տրաման է յիշխանութենէս մերմէ գնալ քեզ յերկիր տերութեն մերոյ շրջիլ և գտանել զվարդպտն պօղոս և ածել այսրէն առ մեզ : Իսկ զինոճորին գնացեալ որոնելով գտանէ զնա 'ի գիւղն ագուլիս. և անտի առեալ զնա ածէ յերևան քաղաք : Իւր 'ի գալն յորժամ եկեալ հասին 'ի դռնին զայն գիշերն անդէն օթեցան. և կայր 'ի գիւղն յայն այր ոմն քրիստոնեայ՝ որոյ որդւոյ ձեռն գօսացեալէր՝ զոր ածեալ առաջի վարդպտին խնդրէր աղօթել իվր նր ույ զի բժշկեցցի ձեռն մանկանն : Իսկ նք վարդպտն կալեալ զձեռանէ մանկանն, և աղօթեաց իվր նր. և ասաց զհայր մեր որ յերկինս, և ետ ցհայրն որ առեալ գնաց : և յայգ յառաւօտուն առեալ զորդին և եկեալ առաջի վարդպտին երկիր պագանէր և համբուրէր զոտս նր. գոհանայր և զնորհս խոստովանէր զնմանէ. և ցուցանէր զձեռն մանկանն ամենեցուն թի աղօթիւք վարդպտին բժշկեցաւ ձեռն մանկան իմոյ :

Իլլեալ անտի եկին 'ի քաղաքն երևան. և զինոճորն, որ էած զվարդպտն. 'ի նոյնում առուրն յանդիման կացոյց զնա խանին. իսկ խանն ույ ընկալեալ էր զնիւթ 'ի կթղկսէն. զբազում մախանս և զդառնութիս ամբարեալ ունէր 'ի մտի. զի յընակի կիրս չարչարանաց անցուցիէ լ վարդպտն : այլ այն, որ թգրէ թգրաց և Տրտկրանց, որ 'ի ձեռին ունի զսիրտ ամենից բռնաւորաց

նաւորաց ըստ Լմաստնոյն սահօմօնի. առ ժա
մայն դարձոյց զսիրտ խանին՝ի. քաղցրութի.
ոպ արսառչէսի արքայի իվր մուրաքէի և բար
կութի իվր Տամանայ: վսգի ընդ ակնարկէլ
խանին յերեսս վարդապետին՝ ոչ թէ զբանս բար
կութե ասաց կամ զայրազնեալ դէմս երևեցոյց
նմա. այլ մեղմիւ և հանդարտիւ բանիւ ասաց
նմա. այսօր կացջիւր առ մեզ՝ քանզի մեզ հիւր
ես. իսկ՝ի վաղիւն տարայց զքեզ ընդիս առ
կլթիկան և հաշտեցուցից զնա ընդքեզ: քան
զի մեւքիսեթ կլթիկան հրաւիրեալէր զխանն
իւրովք բարեկամօքն՝ի պատիւ՝ յերկրորդումն
աւուր. սորին վս ասաց խանն. թէ տարայց
զքեզ ընդիս առ կլթիկան և հաշտեցուցից:

Իսկ՝ի վաղուեան աւուրն մինչ երթայք
խանն՝ի կոչն կլթիկոսին. տարաւ ընդ իւր և
վրդապետն. և իբրև էհաս ժամ խօսելոյ՝ ասաց
խանն ընդ կլթիկոսին. արդ յօժարութի սրտի
իմոյ զայս կամի՝ի քէն՝ զի դու հաշտեսցիս ընդ
վրդապետին և լինիք ոպ զհայր և զորդի. զի թէ
պէտ շրջի իմէջ ժողովրդեանն. ոչինչ առնէ
զգործ կամ զվրաս արժանի դատապարտու
թե. ոչ ինձ՝ ոչ քեզ՝ և ոչ ժողովրդեան. և ես
կամիմ զի իմէջ ձեր խաղաղութի և սէր հաստա
տեսցի: Իսկ կլթիկոսն իբրև ետես. թէ զորինչ
խորհեալ էր՝ի մտի. և խօսեալ էր լ խանին.
այնպէս ոչ եղև. այլ նորիններ հակն. և թէ պէտ
ոչ կայէր հաշտիլ այլև լ դիմանալ հրամանաց
խանին անմարթ վարկանէր՝ զի՝ի չահել զսիր
տըն նր կոչեալ էր. և մօնաւանդ այնքան պա
տճաւորաց արանց միջի. և իվր իւրոյ սեղա
նոյ, և յիւրում տան: վս որոյ ակամայիւք կա
րք վերերևութիւ և կեղծաւորելով սրտիւ
առնէ զհաշտութի ընդ վրդապետին ըստ հաս

276 Մատնութի առ Վառչիայ խանն .

մանաց խանին : Եւ յետ խրախուծե յորժամ
Տանդերձեալ էր 'ի գնալ խանն . ասե ցկթի
կոսն . վրդպտս այս եղեցի քեզ յանձնն յայսմ
գիշերի . և 'ի վաղիւն 'ի գալն քո առ իս ընդ
քեզ բերցես . զի ունիմ գործ ինչ ընդ դմա :
Իսկ 'ի վաղիւն կթիկոսն ինքն ոչ գնաց այլ զոմն
յեպկպսաց իւրոց եդեալ ընդ վրդպտին առա
քեաց առ խանն , իսկ խանն պատուեալ խի
լայեաց զվրդպտն . զի էարկ իվն նր զպատու
կան և զոսկէՏուռն կապայ : Եւ դարձեալ կո
չեաց զնոյն զինուորն , որ բերեալ էր զվրդպտն ,
և ասաց նմա . արդ առեալ զվարդպտս զայս
տարեալ Տասուսցե՞ 'ի տեղին . ուստի և դար
ձուցեր զդա . և յանձնեցես արանց տեղւոյն
և ապա դարձցիս այսրէն : իսկ զինուորն և վար
դպտն երկրպագեալ ի խանին ելեալք յերե
սաց նր գնացին դէպ 'ի գաւառն գողթան :

Իսկ արքն , որք էին նախանձաւորք ընդ
վարդպտին . իբրև տեսին թէ մատնութէն , զոր
արարին առ ամիրգուենայ խանն՝ ոչ ինչ կարացին
ստնանել վարդպտին . վտորոյ սովիմք օրինա
կաւ միւսևս զմատնութի արարին առ զառչ
ղայ խանն . որ էր առաւել խրոխտ և մեծա
գոյն փառօք՝ և ամիւ որպիսութե քան զամիր
գուենայ խանն : և էր զառչղայ խանն իշխող քա
ղաքին թաւրիզու . առ որ գնացեալ մեւքի
սեթ կթիկոսն ինքն , և այլք ևս յեկեղեցակա
նաց և յաշխարհականաց . և արարին զամբաս
տանութի զպօղոսէ վարդպտէ . և զարդայ
խանն առաքեալ զզինուորս տարաւ 'ի թաւ
րէզ զպօղոս վարդպտն : Իսկ կատարուին
գործոյն եղև՝ ոսկ և առ ամիրգուենայ խանիւն
կատարեցաւ : և այսու ևս յամթ լեալ պարս
զին նախանձաւորքն :

Եւ յետ անցից պատմելոցս ամի և ևս դերա
գունից. մինչ շրջէր պօղոս վարդապետս քարո
զութի իմէջ քրիստոնէից ըստ հանապազօրդի
սովորո՞ւ է իւրոյ: պատահեցաւ նմա սահակ կա
թիկան եղբօրորդի մելքեսէթի կթիսին. և
այլք ևս՝ ի նոցին համախոհացն. և յուրի ա
ռուս խոշտանկեցին զնա ասելով՝ լռեա դու
՝ ի քարոզութեդ. և պօղոս վարդապետն ոչ
կամէր լռել՝ զի կարի յօժար և փոյթէր ՚ի քա
րոզութին: Իսպց ներհակքն կարիյաւետ և
բազմահնարիւք պարուանդիւք խորամանկու
թե և զրպարտութե մեքենայիւք ճմլեալ կժ
րացուցին զնա ասելով. դու մի ևս յաւելցիս ՚ի
շրջել առ Ժողովուրդս և քարոզել. այլ տուր
մեզ ձեռնագիր վկայութի մահմետականաց՝
թէ այսուհետև քարոզես՝ լինիցիս թնշամի
թիւրին. և մահու և սպանման պարտական:
Եւ ՚ի բազում առուս յոքնազանիւ կեր
պիւ ճնշելոյ ներհակացն զվարդապետն մնաց
անձար. զի ինքն միայն էր ընդ դիմակայ նոցա
առանց օգնականի. թէպէտ ՚ի քրիստոնէից
բազումք կային բարեկամք և սիրողք վար
դապետին. այլ վն երկիւղի ներհակացն, ոչոք
իչխէր օգնել վարդապետին. վն որոյ մնաց անձար,
ետ նց զձեռագիր այսպէս: Ես պօղոս վարդա
պետս ետու զձեռագիր այսուհետև ոչ շրջել
և ոչ քարոզել. և թէ զայսոսիկ առնեմ, լի
նիմ ես թշնամի թիւրին: Իբրև առին ներ
հակքն զայս ձեռագիրս ՚ի պօղոսէն. ուրախ
եղէն անձառելեալ խնդութի: և այնուհե
տև պօղոս վարդապետն գնաց ՚ի մեծ անապատն՝
կայր միակեցութի լռեալ ՚ի խցի. մշտամտու
ղիւքաղօթիւք քօսակցելով լ լ Վ. Եկաց անդ
էն և ոչ ել արտաքս յանապատէն մինչև ցիսիս

Ճան կենաց իւրոց՝ որ հանգեալ ՚ի Քն՝ և ան
 դէն թաղեցաւ : և եղև վախճիրն սորա. հազար
 և վաթսուներկնն ամի թուականի մերում. որ և
 ՚ի գերեզմանէ նի զբազում գործս սբանչելեաց
 լսեմք ՚ի հիւանդս և ՚ի ցաւազարն որք յուսով
 երթան առ նա, և առնուն զբժշկութիս իւրա
 քանչիւրոց ցաւոց շնորհօքն Քն Մ. Ե մերոյ :

Ար Վարդապետութե և կեցիկութե տեառն Սօսիսի :
 Ընդ որում և յաղագս նորոգութե լուսականոց
 սրբոց Ա թուոցն էջմիածնի :

Ի Գ :



Ս Ե Ն Ե Ն Ե Ն Ե Ն Ե Ն Ս Մ Բ Ե Ն

անունդ և բարեփառ հայրս մեր տէր
 մօտէս կեցիկոսս. էք յաշխարհէն
 սիւնեաց ՚ի գաւառէն բաղաց.
 որ այժմ մասի աճանան. ՚ի գեղջէն, որ անուճա
 նի խոտանան : Եւ մինչ էր նա ամաց հնգե
 տասանից աւելի կամ պակաս. ետուն նմա զա
 տիճան քահանայութե. և օրհնեցին կուսա
 կրօն աբեղայ :

Եւ դէպ եղև պատահել նմա տիեզերալոյս
 վարպտին սրապիոնի. և առ նա յարեալ աշա
 կերցաւ նմա. բայց վախճանն սրապիոնի փու
 թով ժամանեաց ի վրոյորում ժամանակի տհաս
 էր տէր մօտէս ուսմամբ և հասակաւ : բայց
 սրապիոն վարդապետն մտօք նկատեալ իմանայր
 յոգի իւր՝ զի շնորհ անձային երեկուր առ տէր
 մօտէսն՝ ընդ որոյ ցաւակցաբար հոգաց զնա.
 վն զի կոչեաց առ ինքն զաւագ աշակերտմ իւր
 զկեսարացի գրիգոր վարդապետն՝ և յանձնարար
 նմա զտէր մօտէսն ասելով. յանձն առնեմ զսա
 քեզ՝ զի փոխանակ իմ հովուէալ պահեսցես
 զսա՝ և հասուցեալ յարբուճա հասակի, և
 վաղարկեալն ուսման. և տացես զգաւազան
 և զսպա

և զպատիւ վարդապետական. և եղիցի օրհնութի իմ ի վրքո և գոյա:

Եւ յետ վախճանի սրապետնին մնաց տէր մօսէս առ գրիգոր վարդապետն յաշակերտութի նր. և զկնի սուղ ինչ ամաց խնդրեաց տէր մօսէս զՏրաման'ի գրիգորէ վարդապետն՝ զի գնասցէ յէմ յուխտ և յերկրպագութի տնօրինականաց տեղեացն Քի Մմերոյ: և նա ետ զՏրաման օրև ելեալ տէր մօսէս գնացեալ է՝ Տաս յէմ. և կատարեաց զուխտ ամենից տնօրինականաց Տեառն: Եւ պա անտի գնաց յաշխարհն եգիպտոսի՝ և շրջեալ յաման վանորայս և յանապատս ազգին զիթոց. վնզի վանորայք և անապատք բլմբ գոն յորում բնակեալ են բազմաՏոյլք միաբանք կարգօք և սահմանօք կրօնաւորականօք. որք ունին զկարգաւորութի ամենից իրաց. ժամատեղաց և սեղանատեղաց. և զգեստուոց, և խցակացութե. և կրօնաւորականի ժուժկալուե. և այլ ամենից գործոց: և իմէջնց շրջելով և հարցանելով և տեսանելով տեղեկանայր ամի. և սմին այսմիկ ինքն ար մօսէս թէ պէտանհոգ և անփոյթ էր, այլ տնօրինիչ սբ հոգին՝ յածեալ շրջեցուցանէր իմէջ այսպիսեաց կրօնաւորականաց կարգացառի ուսուցանել զնա. վն ապագայից ժամանակաց. ուն և պիտոյացառ: 'ի ժամանակս կարգադրութե մեծի անապատին: և տէր մօսէսս յեգիպտոսէ դարձեալ եկն յէմ. և եղև լուսարար սրբոյ յարութեն:

Զորում ժամանակի դէպ եղև անդ լինել սարգիս պարոն տիրոջն և տեսառն կիրակոսի. որոյ վն շարտորեցաք՝ թէ եղեն սկիզբն անապատի, և կրօնաւորականաց կարգաց. որք կային յէմ, և շրջէին յաշխարհն յայնմիկ. 'ի վանորայսն յունաց՝ և յեղերս յորդանան գետոյ:

Ե

և 'ի լեառն փորձու թէ. և որինեալ խնդրէին
 զտեղի անապատի անբոյթ և փնչիոթ, և ըստ
 պատշաճին ոչ գտանէին: Մ. որս ասաց տէր
 մօսէս. զայդ պիտի տեղի, զոր խնդրէք՝ յարև
 լեան յաշխարհին բազումք գոն. և մանաւանդ
 յերկրին սիւնեաց. որոց էս ականատես իսկ
 եմ: և յաշխարհին յայնմիկ կարի առաւել պատ
 շաճէ շինել զանապատ. զի բուն հայաստան է.
 վանորայք, և գեղորայք. և ժողովուրդք
 քրիստոնէից բազումք գոն. ուստի ամբն պի
 տոյք անապատին լցեալ լինին: Մ. յլև ինքն տէր
 մօսէս յանձնէ առ զի յորժամ նորա ժամա
 նեալ յերկիրն յայն. և ուրէք անդորրացեալ
 զտեղիցին. ուր և իցէ ինքն տէր մօսէս թո
 զեալ զամ անդրառ նոսա ժամանեացէ՝ և ընդ
 նոսին բնակեսցի միաբանութիւն: արդ այսպի
 սեաւ յորդորականաւ բանիւ զնս առաքեաց 'ի
 վերին աշխարհն արևելից. և ինքն մնաց յեմ:
 Մ. հրամանաւ գրիգորի եպկսին. որ էր առաջ
 նորդ սրբոյ յակօբոյ գնաց 'ի նո՛ւ իրակութի վն
 եմի և զբազում արդիւնս ժողովեալ 'ի քրիս
 տոնէից էբեր յեմ առաջի գրիգորի եպկսին:

Մկա ելեալ յեմայ եկն առ վրդայտն իւր
 գրիգոր կեսարացի. որ էր 'ի կոստանդնուպօ
 լիս՝ քանզի թգրականաւ հրամանաւ նստեալ
 էր առաջ նորդ քնքին պատրիարգ անուամբ:
 և կացեալ յաշակերտուի գրիգորի վարդայտին
 յամս ինչ պարկեշտիւք և սրբակրօնիւք վարժ
 ուք՝ ոչ պաճուճիւ և փափկիւ հնդերձիւ ոսկ և
 այլքն էին 'ի ժամանակին. այլ խոշորագգեստ
 և պահացող. որ 'ի շաբաթ օր և 'ի կիրակի օր լոյ
 ծանէր. 'ի կերակուրս նաւակատեաց. զատեալ
 'ի մտոյ՝ և 'ի գինւոյ. և հանազազ սաղմոսերով
 և իրատարագամատոյց: Մ. որ հաճեալ և հաւ
 անեալ

անեալ ամ ժողովուրդն կոստանդնուպօլսի եկեղեցականք և աշխարհականք, և երևելի արք ուղչասէն չարային. որ էր այր նշանաւ որ 'ի դրան թագաւորին. և այլք ևս յօլովք: Կաւ վաճառականք արևելեան աշխարհին. որք պատասէցան 'ի կոստանդնուպօլսի. և մանաւանդ ջուղայեցիք և գողթնացիք. զի գիտէին թէ մօսէսն յարևելեան աշխարհէն է. ամբն մատուցեալ առ գրիգոր վարդապետն խընդրէին տալ տեառն մօսէսի զվարդապետութի:

Իսկ գրիգոր վարդապետն. էր այր ահարկու, և յոյժ խրոխտ, և դժուարահաւան՝ բայց տեսանելով զքաղցր և զսրբասէր բարս. և զպարկէշտ վարս տեառն մովսէսի. նա և զվկայութի ժողովրդեանն, ոչինչ եղծան լուր այլ ըստ վկայութեան ձիննր. և ամի ժողովրդեան ետ նմա զգաւազան վարդապետին մեծաւ հանդիսիս: Ի՛նչուհետև տէր մովսէս վարդապետն անխափան քարոզէր յամ եկեղեցիս զաւետարանն Քրիստի. և պայծառաւ քարոզութի:

Եւ յետ ամաց ինչ հրամանաւ գրիգորի վարդապետին առաքեալ եղև մովսէս վարդապետն գընալ և ինքնագլուխ քարոզութի շրջագայիլ. և ելեալ 'ի կոստանդնուպօլսէ եկեալ հասեալ 'ի քաղաքն տիգրանակերտ՝ ուր էր տապանն սրապիոնի վարդապետին. համբուրեալ զնա սրբով տապանաւն. և առեալ 'ի նմանէ զօրհնութի:

Ելեալ անտի անցեալ զվասպուրականաւ քաղաքաւն եկն 'ի թաւրիզք և անտի 'ի հայրենի աշխարհն իւր, 'ի դաւառն սիւնեաց՝ 'ի վանքն տաթևու: յորոյ գալտտենէ եղև անպատում ուրախութի ամցն եկեղեցականաց և աշխարհականաց: Եւ զառաջինն սիրով ընկալան զնա

միաբանք վանացն տաթևու եպիսկոպոս և արեղայք . բայց յետոյ յետս չոգան՝ ինմանէ քանզի ոչ ընկալան զքարոզութի նր : Յաղագս որոյ ելեալ՝ ի տաթևու վանացն . և գնաց ՚ի մեծանապատն առ սարգիս եպիսկոպոս . և առ տէր կի ըակոսն . ըստ նախկնոյ ուխտադրութեն իւրց , զոր պայմանեալք էին յեհմ . և անդէն յանապատին կալաւ իւր դադար բնակութե : և ՚ի ժամանակս ժամանակս ելեալ շրջէր իմէջ քրիստոնէից՝ և քարոզէր զգատուհրանս ՄԴ , և վերստին դառնայր յանապատն . վնզի ոպ ձուկն ելեալ ՚ի ջրոյ մերձի՝ ի մեռանիլ և անդրէն ՚ի ջուր անկեալ կենդանանայ . սոյնպէս և սմա յելանելն յանապատէն , և մտանելն յանապատն :

Իսկ զքարոզութի մօսիսի վրդապետին ամբն ժողովուրդք խնդութի ընդունէին , և յօժարութի կատարէին . և ուրախութի փառաւոր էին զՄԸ զտուհչն այնպիսեաց շնորհաց մարդկան . բայց եպիսկոպոս գաւառաց , և արեղայք վանորէից ոչ հաճէին ՚ի քարոզութին մօսիսի վնզի մօսես վարդապետն ոպ ինքն մերկէր ամենից աշխարհականաց նիւթոց . և պահօք , և սրբութի , և կրօնաւորականօք վարուք կեայր ըստ հրամանաց գրոց՝ սոյնի և քարոզէր լինել ամենից վանականաց . և նք անգոսնեալ զբանս նրոչ ընկալան : վնզի ամբն վանորայք արգիս չայոց՝ իւրաքանչիւր սեպուղուխ ունէր իւր զինչս առանձին զայգի և զբուրաստան , զփեթակ և զտուն և , զմարան , և զհամբարանոցս և զմուտս ստացուածոյ : նաև զմուտս հասարակաց վանիցն մասունա արարեալ յինքեանս բաժանէին , և զայն ամ ինքեանց , և արդոյնոց՝ կիւրեանց հաճելեաց արանց ծախէին ՚ի պէտս

պետե կարեաց : Եւ զնունընեալ տեղինս Լ՛յ. որք բնակարանք են նշխարաց սրբոց : և սքանչե լագործք . և շնորհակրից նշանաց Լ՛յ. լցեալ են զայնոսիկ կանամբք և տանտիկնօք . և իւրեանց ազգայնօք :

Եւ բնաւ ոչ գիտէին թէ պարտ է կարգաւ որի զվեղմը և զվիելոն ունիլ զիւրեքս կամ հանդերձս խոշորս , և ասունիս զգէնուլ . այլ ուր զաշխարհական , և զմարմնաւոր իշխանս փափկիւ և ազնիւ զգետու աճ՛նէին : չաշխուր , և կապայ , և պատուական փակեղ՛ի գլուխօ . և բալափուշ զիւրեւ առեալ : Լ՛յլև ոչ վարկանէին թէ պարտ է վանականաց պահօք և ծովս ջանիւք երկօք կենցաղավարիլ . այլ՛ի բոլոր տօրին ուտիք և գինի և միս անխտիր :

Սոյնպիսի և գեղականք երիցունք՝ անունամբ միայն քահանայք . այլ ոմանք առեալ զիշխանութի մէլիբութե . և ոմանք ասուտտիրութե՛ և ոմանք պրունիկք և երկկանայք՝ ոմանք յարեցեալք իշխանաց այլազգեցարբանեակք չարեաց գործոց նց՝ և մատնիչք քրիստոնէից՝ ոմանք ՛ի մարմնաւոր արունեստս և ՛ի հողագործութիս պատաղեալք իբրև զաշխարհականս . և բնաւին թողեալ զժամ՝ և զպատարագ : Աջ կանխէին՛ի ժամ աղօթից յեկեղեցի . և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի՛ի գեղորայս՝ և բնաւին բարձեալ՛ի նոցունց զշնորհքահանայութե , բայց տակաւին զինքեանս քահանայս անունանէին , և գործէին զգործքահանայութե , ոչ իբր զքահանայ , այլ իբր զմարմնաւոր արունեստաւոր վս մարմնաւորի վարձու իւրոյ :

Եւ ոչ միայն գեղական երիցունք և արեղայք ը ասացելուց անուղղիւք կարգօք լեալք

Թախառականք, այլև կլթիկոն՝ զի ոչ թի միեր, այլ երեք և չորք կլթիկսք, վն զի յաղագս փառամոլութե, և ագահութե եբրև զմաքսաւորս զաբալայիւ և հարկիւ՝ ի Պարսից թիւրհն առնունին զիշխանութի կլթիկոութե՝ և զսք աթոռն Ելմիածին, և ՚ի շրջագայութե իւրեանց իմէջ ժողովրդեանն, թիւրական ծառայ և այլազգի զորականս շրջեցուցանեին ընդ ինքեանս: և զիրաւունս և զհասս որք՝ ի ժողովրդեանէն ճշդիւ և բռնութիւ ուժգին առնունին ուն զորդեան հեղեայ: և կլթիկսքն ուն ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճանս կլթիկսութե, սոյնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիպսունքն և քահանայքն, տգէտք, խոտանք, և անպիտանք, ըսասաղմոսին, որք էին լեալ պաշտօնեայք որովայնի հասապազ՝ ի գիներբուս դեգերեալք գուսանօք եբր զմարմնաւոր իշխանս, յառաւօտե մինչև ցերեկոյ հետեւեալ կատակաց և լիտեաց բանեց՝ և դատարկութե:

Եւ սոցին ամյւն առ ի թ, ոչ այլինչ է թի ոչ հեռացումն ՚ի սքոց գրոց և յերկեւղէն Մ, ոչ բնաւ ընթեռնունին զգերս՝ այլ էին փահեալ և լուեալ մատեանք Մ ծայինք, վն զի էր խափանեալ ընթերցումն սքոց գրոց, որք էին արհամարհեալք յաչսնց, հողով և մոխրով լցեալ և անկեալ յանկեան ուրեք, վն զի ոչ զգերս գթտեին և ոչ զգորութիս գրոց ըստ Տն բանի:

Երդ է թի է կեղեցականք այսպէս, զինչ և սասացից զաշխարհականաց՝ որք ոչ բնաւ գիտեին թի պարտեք իստոնեից խոստովանիլ և հաղորդիլ. կամ յամաւուր ՚ի տեղի սոյն թից կանխել: նաև զպահս ձիթով և գինեաւ արպականեին: ոմանք կնահանք, և ոմանք երկա

երկականայք, և չհասիւք և մեղօք աղգաշա
ղախիւ պղծութի:

Իսկ եկեղեցիք և վանորայք, ամբն անշուք
և անպատիւք, բնաւին կողոպտեալք ՚ի զար
դուց և ՚ի սպասուց, մինչ զի և սք սեղանն և ս
ամենեկին մերկ և բաց: Բազմաժամանակեաց
փակեալ դրամբք, խաւար և անշոյս, լուեալք
՚ի պաշտամանց և ՚ի պատարագաց: աւերեալ
և խախտեալք շինունաճք նց տանիք և որմունք:
Եբրև զանտէր և այրի զրկեալ ՚ի փեսայէն և
օտարացեալ յորդուոց նստեալ թաղծելով
ոգւով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ:

Լ՛րդ՝ բազմապատկիւ յոլովութիք քան զորս
շարագրեցայք աղաւաղեալ եղծեալէր բարե
կարգութի ՚ի վերին աշխարհէս հայոց, և փո
խանակնորա արձանացեալ և արմատացեալ ան
կարգութի: Սրոյ վն վշտանային և ցաւեկն
հոգւով չափ ընդ տգիտաբար մոլորութիս
յայտոսիկ երկոքին սքք վարդպտքն Սոմսեսս
այս և Պօղոսն զոր յանցելում ճառիդ ծանու
ցաք զորպէսն: Եւ պօղոս վարդպտն փորձի
ժամանակաւ վաղագոյն եկեալէր քան զմով
սէս ՚ի վերին աշխարհս, և ՚ի սակս մեկնակու
թե իւրոյ հակառակորդքն հարստահարէին
զնա, իսկ ՚ի գալն մովսէսի վարդպտին, իրե
րաց զօրավիգն եղեալք համարձակ քարոզէին
ընդ ամն գաւառս: Եւ սորա երկոքին վրդ
պտքաւ և սարգիս պարոնտէրն, և տէր կիրա
կոսն, այլովք յիշատակեալ արամբքն, զոր ՚ի
ճառին մեծ իննապատին յիշեցաք, նախ զամն
գկարգս և զսահմանս անապատի և կրօնաւորու
թե սահմանեցին, զորս ՚ի գրոց ընթերցմանէ
գտին, և զորմ մովսէս վարդպտն յանապատս
ղիթոցն տեսեալէր և ուսեալ և ապա նորա
ամբն

Թիւն յանապատին կալով աղօթէին վն փրկու
 թէ աշխարհի, և նովին աղօթի վն պատ լինէին
 վարդապետն՝ ինդրելով՝ ի սբյ Տոգւոյն օժան
 գակել նց՝ Երարողութի բանին կենաց : Իսկ
 երկոքին վարդապետն մովսէս և պողոս եղէն
 իրերաց ընկերք իբրև զսբ առաքելան պէտ
 ըոս և պողոս, շեալք ամուք հաւատոյ՝ շրջե
 ցան յամենեսեան գաւառս արևելեայ աշխար
 հիս . քարոզէին ամենեցուն զճշմարտութի, շի
 նէին զեկեղեցիս, կարգէին զբաժանայս, հաս
 տատէին դպրոց, ուսուցանէին զմանկունս :
 վն զի առաքելաբար շրջէին հետևոտս գնա
 լով . ոչինչ առնուին յումեքէ, այլ միայն զկե
 րակուրս . և զբոլոր շաբաթն պահէին, միայն
 ՚ի շաբաթ օր և ՚ի կերակի օր լուծանէին նաւա
 կատեաց կերակրովք՝ ի բոլոր տարին, և ՚ի գի
 նուոյ և ՚ի մնոյ մեկնեալք ամենեկին :

Իսկ քրիստոնէայք վերին աշխարհիս տեսա
 նելով զճշմարիտ քարոզութի նց, զի վկայէին
 բանից և քարոզութե նոցա գործք նց, Թիւն
 դարձան ՚ի թիւրից ճանապարհաց իւրեանց՝ և
 հնազանդեցան կարգաց և սահմանադրութե
 նց, իշխանք, եպիպոսոնք, և երիցունք, և արք
 նշնաւորք ուսմիօք ամենեկնք : Իայց յորովք արք
 անուանիք եկեղեցականք և աշխարհականք,
 ոչ միայն ոչ ընկալան զքարոզութի նոցա, այլև
 ներհանային ևս, և կեղծաւորս և խաբէբայս
 անուանէին : և զսահմանեալ կարգս նց խան
 գարիին ինքեանք և արբանեակք իւրեանց,
 ուր և հասանէին, ուր և կարէին :

Իյլ զայս գործ հակառակութե առնէին
 արք թիւրք և օրինազանցք, որք ոչ հաճէին
 ընդ ճանապարհս ճշմարտութե, շինէին չարա
 համբալք և ամբաստանք վարդապետն, մինչև
 Եհաս 8

և հակառակութիւնդ իմակացոցն: 287
է հաս շուր ամբաստանութե նց առ այլազգի
իշխանս աշխարհաց՝ ի խանս և ՚ի սուլութանս, և
մանաւ անդ. առ կլթիկան մեւքիսէթ, որ թգրա
կանաւ բռնութե վարէր զիշխանութի կլթիկսու
թե: և զի ինքն կլթիկան ևս ոչ էր ՚ի ճանապարհս
ուղղութե, յայն սակս տեղի տայր ամբաստա
նութե այնպիսեաց՝ և զնիւթ առեալ ՚ի նոցունց
նեղէր զվարդապետն: Իսպու մանդամ պատա
հեալ կլթիկան ասա և անդ զսպսմանեալ կարգս
նց խափանէր: և զ՚ի նոցանէ յառաջ կոչեալ
զարան յետս ընկրկէր, և նոցին զպատգամս
զսպառնականս խորխտիւ բանիւ առաքէր:

Իսկ պատահեցան վարդապետն կլթիկսին
զնոյն զսպառնական և զեպերական բանս լու
ան ՚ի նմանէ, զի թգրականաւ իշխանութե
խորխտայր ի վր վարդապետն: և այնքան վտան
կեցին զվարդապետն, մինչև առին զձեռնագիր
՚ի պողոսէ վարդապետն ոչ ևս շրջիլ իմէջ բրես
տոնէ ից և բարոզել ուն և յառաջդ պատմեցաք
՚ի նորին ճառին:

Իբրև այն ինչ եղև՝ զի զպողոս վարդապետն հա
նին ՚ի կողմն ինչ և միայն գտեալ զմովսէս վար
դապետն՝ սկսան սաստկիւք մրցանօք մաքառիլ լ
նմա, և այնքան ՚ի նեղարկին զնա ևս՝ մինչոր
ինքն մովսէս վարդապետն զիւր փիլոնն և զգաւա
զանն և զխալիչէն առաքեաց առ մեւքիսէթ
կլթիկան ասելով. որովհետև ոչ կամիս զբարո
ղութին մեր, ահաւ ադիկ առ ՚ի քեզ զիշխա
նութինն մեր, և մեք լուեալ գադարիմք ՚ի բա
րոզելոյ, և ընդ այդ թէ իցեն մեղք ինչ՝ դու
տացես զպատասխանի Մ. Իսկ բարեաց կամե
ցօին Մ. որ զամ տնօրինէ, ոչ արար հաճելի
զարարս մովսէսի խորհրդակցացն միւքիսէ
թի, վն որոյ հաւանեցուցին զմեւքիսէթ ոչ
առնուլ

առնուլ զիշխանութիւն մովսէսի, այլ զգաւ ազանն իւր առ ինքն դարձուցանել և տալ զհրաման քարոզութե՛ս և մեղքիս թե՛ս արար այնպէ՛ս թեպէտ ետ զհրաման քարոզութե՛ մեղքիս սեթն մովսէսի. այլ՛ ՚ի նենգելոյ ոչ դադարեաց, զի հանապազ հարստահարէր դատափետեալ պարտաւոր առնէր, և զըպարտէր, ինքն և համախոհքն իւր անխնայաբար զնեղութիւն իվր նք ածէին:

Ինդ որոց արարս տաղտկացեալ և ոգւով չափ դառնացեալ վարդապետն մովսէսի, ձանձրացեալ և իբր զսրտիւ վհատեալ և լքեալ մտածելով զբանն Տ՛ն, թե՛ հարածեցեն ըզձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ փախիջիք ՚ի միւսն, խորհեցաւ հեռանալ յարևելեփն աշխարհէս՝ և գնալ յարևմտեան աշխարհն, և անդ եղելոց քրիստոնէից քարոզել: Եւ յուր դիտաւ որութե՛ք ելեալ և եկեալ ՚ի քաղաքն երևան՝ զի անցեալ ընդ այն գնացէ ՚ի թեոդուպոզիս, որ է արգրում քաղաք:

Յորում ժամանակի տէր և իշխան էր երևան քաղաքի և արարադեան աշխարհի մեծ և հզօր իշխանն ամիրդունայ խանն, որում դէպ եղև պատահմամբ ինչ տեսանել զվարդապետ մօսէս, որոյ վն հարցումն ճարտեալ խանն իւրոց առաջիկայից քրիստոնէից, որոց պատասխանեալ զուստին և զորպէսն: և եղև զի այլ ևս պատահեցաւ խանն վարդապետն, և որքան տեսանէր և խօսէր ախորժ թունէր վարդապետն առաջի խանին, զի խնամքն Մ. Ե. շնորհալի ցուցանէր զժառայն իւր առաջի բռնաւորին, որ և ոչ եթող խանն զմովսէս գնալ յաշխարհն արևմտից, այլ անդէն արգել յերևան քաղաքի և օր աւուր դայր խանն, և տեսանէր զպատա

րագն, և զայլ արարողութիս ժամակարգութեն, և խօսէր ընդ նմա երբեմն՝ ի պատճառս իմաստութեան, և երբեմն՝ ի պատճառս հաւատոյ, և լսէր զպատասխանիս վարդապետին, ախորժ և համեղ և լի շնորհօքն Մ. և վնաս պարկէշտից վարուց նր սիրեաց զնա խանն, վնորոյ պահեաց զնա յերևան քաղաքի՝ ի կաթուղիկէ եկեղեցւոյն կացուցեալ զնա զամբերիս:

Կայր՝ ի վաղեմեաց ժամանակաց վայելուց մատուռ մի շինեալ ի վր դամբարանի սբյաւաքելոյն անանիայի, որ էր՝ ի հիւսիսայնոյ կողմանէ քաղաքին երևանու իմէջ այգետանացն, և էր աւերակ և անմարդաբնակ: որոյ վնասաց խանն առ վարդապետն, տեսանես զայս եկեղեցիս, որ ամայի կայ, արդ լուր ինձ, և մի գնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութի, և դարարեալ աստէն՝ զի իրերաց մերձակայութե և տեսութե միսթարիցուք: այլ և ամբն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք աղաչելով զնոյն խնդրէին՝ ի վարդապետն: Սրոց զբանս հաճեալ սրբոյ վարդապետին զձեռն ի գործէարկ շինել զտեղին արդեամբք և ձեռն տունութեք քրիստոնէից տեղականաց և վաճառականաց. որք յօժարուք տային զտուրս ողորմուէ՝ ի շինումն տեղւոյն, վնսիրոյ վրդապետին, զի բնակեացի իմէջ իւրեանց: վնորոյ փութանակի շինեցին շուրջանակի զպարիսպ և զխուցս և զժամատուն, և զսարաւութ, և զայլ տունս յորովս. և կատարեալ զմմն շինուածսն, բնակեցաւ անգէն վարդապետն իւրովք միաբանօքն, հարգաւն և սահմանաւն այնու, զոր կարգեցին ի մեծանապատն: Ու որ ժողովեցան միաբանք բազումք, միմյսակեացք և գրոց աշակերտք իմաստունք և սրբակացք, կային ի միասին

մեծք և փոքերք սիրով հանդարտեալք 'ի խցի •
հանապազօր կանխեալ յաղօթս և յընթեր
ցունն սրբոց գրոց •

Արոյ ուղղի վարդապետութե և բարւոյ քաղա
քավարութե համբաւ հռչակեցաւ ընդ ծագս
աշխարհի • 'ի հոռմաստան, 'ի քրդաստան, 'ի
վրաստան, 'ի պարսկաստան, զի ամենից աշխար
հաց վաճառականք գային անդր և տեսանէին
և զհամբաւն տանէին : Օ այս ամ յաջողու
թիս զառաջադիմութիս մովսէսի վարդապետին
տեսանելով մեւքիսէթի կթիկոսին զչարէր և
հեղձամղձուկ լինէր 'ի սրտի • բայց ոչ կարէր
զչարին առնել մովսէսի վն երկեւղի խանին •
զի նա յոյժ սերէր զվարդապետն •

Եւ եղև զի մեւքիսէթ կթիկոսն եւրովք
խորհրդակցովքն արար զոյսպեսի խորհուրդ •
ոչ վն փառացն Մ. և ոչ վն օգտի մօսէսի վար
դապետին • այլ վն շահու և օգտի եւրեանց • զի
մամոնայ և արծաթ բաղում գումարեսցի են
քեանց : Սահմանեցին թէ 'ի սթաթոռն Վջմիա
ծին մեռոնորհնէք առնեմք, և այն ձեռամբ մօ
սէսի վրդապետին • ուր զի 'ի նորին համբաւ 'ի բաղ
մաց աշխարհաց ժողովիք գումարեսցին • յորոց
լիցի մեզ շահ յոլովից մամոնայից արծաթոյ •
Անորոյ ոմանք յեպկպոս մեւքիսէթի կթիկո
սին • եկին առ մօսէս վարդապետն • և մե
ծարեցին զնա բանիւ մեւքիսէթի կթիկոսին
գալ յՎջմիածին • և առնել զմեռոնորհնէք •
Եւ յայնմ ժամանակի տակաւին ոչ ունէր զաս
տիճան եպկպոսութե մօսէս վարդապետն վասն
որոյ հրաժարէր ասելով • Ես ոչ ունիմ զաստի
ճան եպկպոսութե ոչ է այդ հմ գործ • այլ
այնոցիկ որք եպկպոսք են : Արոյ պատճառե
ասաց մեւքիսէթ կթիկոսն • Եթէ զեպկպոսու
թին

Թին պատճառէ . ես օրհնեմ զինքն եպսկպոս . և միևս պատճառու յօդեացէ այլ եկեալ օրհնեցէ զմեռոն : Իսկ մօսէս հրաժարեր յեպիպոսս կանէ աստիճանէ զանձն անարժան ասելով . բայց նորին աշակերտքն , և ամքն քահանայք և ժողովուրդք Թախանձէին յանձնառնու զաստիճան եպիպոսութե . վասնորոյ յանձնէառ վարդապետ մօսէս լինել եպիպոս :

Եպոս մեւքիսէթ կթղկոսն եկեալ 'ի դամբարանս սրբոյ առաքելոյն անանիայի՝ ուր էր բնակութի մօսէսի վարդապետն՝ զոր անուանեցին անապատ . և անդ օրհնեաց զսա եպիպոս յաւագ երկուշաբթ աւուրն : և ապա եկին յԱջմիածին կթղկոսն և վրդապետն , և ամքն եկեղեցականք , և աշխարհականք . և յաւագ հինգշաբթ աւուրն օրհնեցին զմեռոնսյետ օրհնութե մեռոնին վաղվաղակի արձակեցին զժողովն՝ քզի 'ի բազմաց աշխարհաց եկեալք էին ժողովուրդք . որոց աւեալ զօրհնութի սրբոյ մեռոնին և զԱջմիածնի գնացին 'ի տեղիս Իւրցի :

Իսկ վաճառականացն ջուղեցուց հասեալք յասպահան քաղաք առ հովաքեղոս Իւրեանց՝ ամենեցուն պատմէին զբարեվայելուց զարարողութիան զոր տեսեալ էին 'ի մօսիսէ վրդապետն : Իսկ ջուղեցիք եկեղեցականք և աշխարհականք լսելով զայն , տենչային 'ի սէր վարդապետին , և խանդակաթիւ սրտիւ փափագէին 'ի տեսութի նորին : որ և պատրաստեցին զարսնչանաւորս քահանայս և աշխարհականս , և առաքեցին հրաւիրակ մօսէս վարդապետին գալ յասպահան Իմէջ Իւրեանց : Եւ գլուխն ջուղեցուց զորմութեցնս ի արժանին խօջայնազարմ գրեաց ի վր որդւոյ Իւրոյ խօջայ սարժրազին՝ որ յաւուրնս յայնոսիկ էր յաշխարհն ատր
 . Ժ 2 պատաս

պատականի, մեծարել զվարդ-նյուն մօսէս յաս պահան, որոց եկեալ և առեալ զմօսէս տարան յասպահան: Եւ նա անդէն ըստ քնականի վարդ-նյունէն, և աւետարանականի քարոզող թէն սիովեալ արգահատեր զնս, և հաստատեր 'ի հաւատս քնական, ոչ Վիայն զբնա կեալնս՝ ի քաղաքին, այլ զնման շրջակայս գաւառին: և կացեալ անդէն ժամանակս ինչ մեծիւք փառօք փառաւորեալ 'ի նոցունց, և ապա անտի դարձաւ յերևան քաղաք 'ի տեղի իւր:

Սինչ կայր մօսէս վրդ-նյուն անհոգ պարզիւ մտութիւն յերևան քաղաքի յիւրում տան, նիւթեաց նմա զնենգութի մեղքիս թ կթղկնս այսպիսեաւ օրինակաւ՝ զի երևեցոյց զթուղթ մի ուն զթամասուկ, յորում գրեալ էր: Եւ մօսէս վարդ-նյուն տալու եմ մեղքիս թ կթղկսին զհարիւր թումանս՝ զնամ յասպահան և անտի եկեալ տամ: զայս թուղթս տարան 'ի դիւանս ամիր գունայ խանին, և ճշդիւ պահանջէին զհարիւր թումանս: Իսկ մօսէս վարդ-նյուն, ուն և էր անպարտ զնոյն պատասխաներ թէ ան պարտ եմ 'ի դմանէ, վնդի ոչ է իմ տուէալ զգերդ զայդ՝ այլ դաւով և հնարիւք իմն գործեալէն զգերդ և թէ պէտ պատասխանի առ ներ մօսէս վարդ-նյուն ջանիւք բազմօք, սա կայն ոչ լինէր փրկութի, զի կողմն զրպարտողացն ճարտասանք էին և փորձք 'ի չարիս: Իսկ խանն իւրովք ելխանօքն և ամքն քրիստոնեայքն վերահատու եղեն զի թուղթն այն հնար իմն է և մօսէս անպարտ է, վն որոյ ամքն ջանային փրկել զմօսէս՝ և ոչ կարէին, զի երկարեցաւ գործոյս այսորիկ պատասխանն յերկուս ամիսս: այլ ազատարարն ՄԾ փրկեաց զնա այսպիսեաւ կերպիւ:

Մեւքիսէթ կաթուղիկոսն և Եւրեղբօրորդե սահակ կթղկան՝ ունէին զոխս նախանձու ընդհամազասպի եպկպսին՝ որ էր հաւուց թառայ վանացն և երևան քաղաքին առաջնորդ, և էր սա այր խրոխտ և ճարտարաբան որ մեծաբանութե պակուցանէր զկողմն մեւքիսէթեան, և թեւած էր ի վր' նց. որ և մեւքիսէթեանք վն այ սորիկ քինու արկին զվնասն ի վր' համազասպ եպկպսին : Եւ եղև զի յաւուր զիտում մինչ կային՝ ՚ի հանդեսի դատաստանին, սահակ կթղկան էկաց առաջի խանին իմէջ ատենին, և ասաց ՚ի լուր հանդեսին, թուղթդ այդ բնաւին սուտ է՝ զի ոչ իմ հօրեղբայր մեւքիսէթ կթղկան գիտէ՝ և ոչ ես. այլ ես գիտեմ զի համազասպ եպկպսն արարեալ զայդ նենգութիդ : Զայն ժամ խանն և ամբն, որք կային անդ, ՚ի ձայն ցնծութե օրհնեցին զՎճ, որ ազատեաց զան պարտն ՚ի ձեռաց զրպարտողացն, և ՚ի նմին հանդեսի պատառեցին զթուղթն զայն : և գնացին մեւքիսէթեանքն կորագլուխ և ամօթով ՚ի տեղիս Եւրեանց :

Ետայս սորիկ անցին սակաւք ժամանակք ի վր' եկեալ է հաս հրովարտակ ՚ի մեծ շահաբաս արքայէն առ ամիրգուհայ խանն վն մօսէսի վարդապետն, յորում գրեալն էր թէ ծանիր ամիրգուհայխան՝ զմօսէս անունամբ վարդապետն՝ որ բնակի ՚ի բում քաղաքի առ քե. փութանա ին առաքեսցես զնա առ ես. և ուր և իցեմ ես եկեալ գտցէ զիս :

Եւ պապճառ այսոցիկ խնդրանացօ սպիտա արցուցեալ մոմն էր. վն զի մօսէս վարդապետն ՚ի ժամանակին յորում էր՝ ՚ի քաղաքին եէմ. անդ ուսաւ զարուհե թոն մոմ սպիտակացուցանելոյ. և արդիս ինքն յամի ամի սպիտակացուցանէր. և

զսպիտակ մոմ վառէր յեկեղեցւոջն 'ի պատա
րագն, և յամնն ժամակարգութիան : զի զտօնս
տէրունականս և զնշանաւոր սրբոց մեծաւ հան
դիսիւ կատարէր սպիտակօք և պայծառիւք
մոմեղինօք՝ և մեծաւ ցնծութիւնս, ուն գրեալ է
'ի պատմութիս սրբոյն յօհաննու օձնեցւոյ :

Իարձեալ ուն սովորուի է թիւրց որ զտղայս
և զաղջկունս ժողովէն յամենից աշխարհաց
այսու սովորութիւն և այս շահաբնաս թիւրս 'ինս
խարարաց իւրոց զոմն որոյ անունն էր բային
դուրբէկ, ընդ որում և այլևս ներքինիս առա
քեաց յաշխարհն ատրպատականի ժողովել
զտղայս և զաղջկունս վն թիւրին . և նք գալով
եկեալ հասին 'ի քաղաքն յերևան : Եւ յաւուր
միում 'ի զբօսանս ելեալ շրջէին բայինդուր
բէկն և ամիրգունայ խանն իմիասին . և զբօսն
լով եկին յանապատն ուրբնակէր մօսէս վարդ
պետն . և անդէն բերեալ մօսէսի վարդապետն
յայնմանէ սպիտակէ մոմէն աղերսաց զեօթն
մոմ բայինդուրբէկին . և զեօթն մոմ ամիրգու
նայ խանին : և բայինդուրբէկին տեսեալ ա
ռաւել պայծառ՝ չքնաղ և հրճուալի զսպիտա
կութի մոմին . յոյժ սքանչացաւ , և հաճեալ
հաւանեցաւ . և ասաց, պահեմ զսա և փարեալ
զաղերս մատուցանեմ շահին : Իբրև զայն լու
աւ ամիրգունայ խանն ասաց՝ որովհետև այդն
ասացեր՝ և զիմս բաժին եդից ընդ քումգ՝ զի
ընդ դմին աղերսեալ լիցի առաջի թիւրին :
Իսկ մովսէս վարդապետն իբրև ետես զբանս և
զգործս իշխանացն . ասաց որովհետև այդն
արարեք՝ զեօթնևս մոմ բերեալ յաւելում
իվր դոցա և այնն մատուցես առաջի թիւր
րին : Իսկ 'ի զբաւ գործոց խորոց բայինդուր
բէկն գնաց առ թիւրն՝ և ընդ բաղմաց և զա
նագա

նազանից աղերսիցն, մատոյց և զսպիտակ մոման
 առաջի Թգլրին, որոց 'ի տեսանեւն Թգլրն
 առեալ զմոման 'ի ձեռնն իւր տեսանէր և զննէր,
 և Տարցանէր Թէ ուստի իցէ, և բայինդ ուր
 բէկն ասաց զուստին: արդ վնայսորիկ Թգլրն
 գրեաց զՏրովարտակ ի վր ամիրգ ունայ խանին
 զի առաքեսցէ զմօսէս վարդապետն առ ինքն: զոր
 և առանց իրիւր յապաղելոյ առաքեաց ամիրգ ու
 նայ խանն զմօսէս վարդապետն առ շահն:

Ս անորոյ ելեալ վարդապետին մօսէսի յերև
 անայ գնաց 'ի քաղաքն բաղդատ զի անդ էր
 շահաբաս Թգլրն, զի կամէր զքաղաքն բաղ
 դատ յետ առնուլ յ()ամանցոց, զորև էառ
 յետ սակաւուց աւուրց: և մինչ տակաւին ոչէր
 առեալ զբաղդատ այլ շուրջնստեալ պատե
 րագմէր, անդ մօսէս վարդապետն յանդ իման
 եղև Թգլրին, յորում ժամանակի էր Թոճա
 կանն մեր, Տաղարևեօթանասուռն և Տինգ, և Թա
 գաւորն Տարցումն արարեալ վն սպիտակու
 Թե մովին, իսկ վարդապետն առաջի կացեալ ըստ
 պատշաճին տայր զպատասխանին:

Բ առ գրեաց շահն զՏրովարտակ և ետ ցմօ
 սէս վարդապետն և առաքեաց յասպահան քա
 ղաք առ լալաբէկ իշխանն, որ 'ի Թգլրէն քա
 ղաքապետ կարգեալ էր ասպահանու, զի տա
 ցէ զՏարիւր լիար մոմ և զերիս ծառայս 'ի ծա
 ռայից Թգլրին մօսէսի վրդապետին, և զաման
 ծախսնց հոգացէ. և այդ եստանեացն որոց և
 Տաւանեսցի մօսէս վարդապետն անպատճառ
 տացէն նկն, զի անդ սպիտակացուցէ զմոմն.
 և ղւտուցեալ զծառայան տարցէ պռաջի Թա
 գաւորին ուրև իցէ նա: Բնեալ վարդապետին
 մօսէսի զարքառնի Տրովարտակն և եկն 'ի քա
 ղաքն ասպահան, եցոյց լալաբէկին, և նա կն
 Թ 4 տարեաց

տարեաց զմման հրամանս թգւրին, տուեալ 'ի մօտէս զմմին և ծառայս երես. և զայգին զոր թի լիմ խանի այգի ասեն: և մօտէս յամիսս ութն աշխատեցաւ անդ. սպիտակացոյց զմմին և ուսոյց զծառայսն, և անպատեալ զսպիտակացուցեալ մոմն և զծառայսն գնաց 'ի քաղաքն Փահրապատ: քանզի անդ էր շահն: զի զբաղ դատ քաղաքն առեալէր և դարձարարեալ գընացեալէր 'ի Փահրապատ տուի ձմերել անդ, վսորոյ անդ գնաց մօտէս:

Ի նմին աւուրսն անդ էր մեծ և փառաւոր էջ խանն ջուղայեցի խօջայնազարն՝ որ յոյժ բարեկամ էր մօտէսի. և յարգոյ առաջի շահաբաս թգւրին: Արոյ ձեռամբն մօտէս վարդապետն մատոյց զսպիտակ մոմն, և զուսուցեալ ծառայսն առաջի թգւորին, որոց 'ի տեսանելն յոյժ զուարճացաւ արքայ՝ և 'ի ձեռս առեալ զբօնոյր 'ի նն, և բազմաւ յուսադրականաւ բանիւ արձակեաց առ ժամուսն զվարդապետն:

Յաւուրսն յայնոսիկ եկեալ էհաս տօն ծննդեան և յայտնութեն Քնի Մի մերոյ, և ույ սովորութի էր մօտէսի հանապազ մեծաւ հանդեսիւ կատարել զտրուսական տօնսն, և ևս առաւել զտօնս զայս բազմաւ պատրաստութի և յարմարագունիւ կմրգաւորութի, քան զի նքն թգւրն ևս հանդերձեալէր 'ի տեսութի և 'ի զբօնանս տօնին գալ, որ և եկն: և վրդապետն մօտէս թափեաց զերկու սպիտակ մոմս մարդաչափ և 'ի ճրագալուցի գիշերն՝ ի լուսնալ տօնին լուցեալ յերկորեայ յանուն սրբոյ Մծածնին և ննքն յոտին կացեալ հսկելով ցաւուաւ տն ջերմագունիւ սիրով և հաստատնով հաւատով, յորդաբղիսիւք արտասուէք աղօթելով առ տէր բարեխօս արկեալ առ միածին Արդին:

Որդին զտերամայր սք ՄԾ ածինն զի շնորհալի
ցուցցէ զտօնախմբութին այլահաւատոյ ԹԳԷ
րին, և արկցէ զգութ և գողորմ՝ ի սիրտանը իվր
քրիստոնէի ազգին : Որև ողորմութբն ՄԵ
եղև քն խնդրոյ վարդապետին, զի յաւուր տօնին
մինչ նստէր արքայ՝ ի զբօսանս տօնին՝ և վարդա
պետն զգեստաւորեալ եւրովք պաշտօնէիւքն
կատարէր զկարգն ջրօրհնեաց : յոյժ հաճեալ
և հաւանեալ էր արքայ ը տօնախմբութին .
և գթացեալ իվր մօտեսի՝ որև հարցումն ևս
արարեալէր ԹԳԷրն յաղագս վարդապետին ընդ
խօջայ նազարին, և նա զբանս բարիս և յոլովս
խօսեցեալ էր վն մօտեսի առաջի ԹԳԷրին :

Իսկ զկնի աւուրց ասաց արքայ ընդ խօջայ
նազարին . զինչ խնդիրք ունի վարդապետն ձեր
զի կատարեսցուք . զգանձ Թէ զդատտակերտ,
Թէ զայլինչ, զորինքն կամի . պատասխանեալէր
խօջայ նազարն Թէ սա այնպիսի այր է, որ գաշ
խարհաւ և զընչեւք նորին զանցարարեալ է՝ և
բնաւ միոք՝ ի դոցանէ ոչ է կարիք սորա : այլ
Թէ զշնորհս առնես տալ սմա զպարգևս . զու
սարարութին Ի ջմիածնի տուր . զի անդ սպա
սաւորելով եկեղեցւոյն այնմիկ աղօթեսցէ վն
կենաց ԹԳԷրին : Նորոյ խնդիր յոյժ հաճեալ
և հաւանեալ էր արքայ . և տունեալէր մօտ
սի զուսարարութին սրբոյ Ի ջմիածնի ԹԳԷ
րականաւ նմոսիւ :

Վպա մօտես վարդապետն ելեալ ի Փահրատու
պատու ժծիւք վառգր և անպատմաւ ցնծու
Թբ . ոչ միայն իւր՝ այլև ամենից քրիստոնէից
եկեալ է հաս յերևան բազար, որև ի սք Ի ջ
միածինն . և առանց յապաղելոյ զձեռն ի գործ
էարկ նորոգութե սրբոյ աթուոյն . ի թոճա
կանիս մերում . հազար և եօթանասուն և վեց
ԺԹ 5 . ի վար

ի վարդավառի պահոց երկու շաբաթ աւուրն որ է յունիսիամոյ քսան և չորսն զսկիզբն արարին շինութե և նորոգութե :

Արդ լսելով զնորոգութի ոչ գիտես թէ ոպ էր աւերութիւն . վս որոյ հարկիմ դրեք զաւերութիւն . զի ծանիցեն զթշուառութի սրբոյ աթոռոյն . որով և զցաւիլն և զկսկծալն զոր ունէին ամ ազգն հայոց և վարդապօք ժամանակին վս սրբոյ աթոռոյն . ընդ նմին և զաշխատանս մօտեսի վարդապօտին և զիւրոց աշակերտացն . և զտուրս և զողորմութիւս քրիստոնէից ՚ի նորոգումն սրբոյ աթոռոյն :

Այ ասէ մարգարէն դաւիթ, արարին զեծմոնի խուղս մրգապահաց . և եսայի մարգարէն ասէ վս սիօնի, իբրև զհովանի իմէջ սեխե նեաց . ըստ այսմ սարսի գողցես և զամբանակ սք աթոռս : զի ամենևիմք ունայնացեալէր ՚ի ստացունածոց՝ և կողոպտեալ ՚ի զարդուց . ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասացութի և կամ ընթերցումն . ոչ զգեստ և ոչ շուրջառ, զի ոչ էր ժամակարգութի և պատարադ . մինչ զի Քի իջման տեղն՝ և սք սեղանն և ս ոչ ունէին զծածկոցս . ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյս . այլ հասապաղ ՚ի խաւարի . բայց այլազգի մահաբտական ոմն վառեք զճրագ ձիթոյ և դնէր իվրբե մին . և այնևս երբեմն երբեմն վս անցաւորաց ճանապարհորդաց . զի տեսանելով զայն զողորմութի արասցեն նմա : ոչ խնկարկութի, զի ոչ գոյր բուռվառ և խունկ : և սարայարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ . եղեալ քոջ գեունոց և սողնոց : և մեծամեծք լուսամուտքն՝ զորս ունի առնն ՚ի բացկայր առանց վանդակի . որստի մտեալ ՚ի ներքս թուչունք լուռին զեկեղեցին ծռտովք և ծղովք և սլօք գուխօք . զորս
յսմ

յամ աւուր Տարկիւ սրբէաք : և ընդ այգն ընդ առաւօտն 'ի լուսանալն ձայնք թռչնոցն խափանէր զձայն ժամասելոյն :

Իսկ յարտաբուստ կուսէ գլուխ կթիկէին, և պանիքն ասինքն . և երեսք որմոցն քանդքան դեալք և քարինքն թափեալք . և որմոյ յատա կաց վէմքն փշրեալք և ծակոտեալք : Եւ 'ի վաղեմեաց ժամանակաց որ շուրջ զեկեղեցաւն շինութի եղեալէր . և դարձեալ աւերեալ և իվր միմեանց փլուղեալ էր . այնքան բարձրացեալէր հողն և մոխիրն . որ յամենից կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալէր . աղբիւսն և հողն եկեալ և ծածկեալ էր զՏիմուսն և զաստիճանս եկեղեցւոյն որք կան յարտաբուստ կողմանէ :

Իսկ զարդք՝ և սպասք՝ և անօթք եկեղեցւոյն՝ և կամանտ բնաւ ոչգոյր . զի զոթինչ և լեալ էր 'ի հնոց ժամանակաց՝ կթիկոսքն զամ վաճառելով և գրաւ դնելով վասնեալ էին : և արդ ևս գրաւ եղեալք անօթք գոյին առ մահ մետական իշխանս . զորս ազատեաց մօտէս վարդապետն : որ էր անջ արխատակէսի հայրապետին որդւոյ սրբոյն գրիգորի լուսաւորչին մերոյ : այլև զանջ աղջոց վանաց սրբոյն ստեփաննոսի . ընդ որոց և զխաչ՝ և զսկիհ՝ և զբուրվառ՝ և զշուրջառ՝ և այլևս ինչք :

Եւ ասացեալ բանքս որք 'ի մէնջ ցուցանեն զտեղին անբնակ գոլ 'ի մարդկանէ . և ասեմ զիսկն ոչ էր ամենեկին անբնակ . այլ դու համարեաց իբրև զանբնակս . վնդի կթիկոսուքն՝ անդ յԵւմիածին ոչ բնակէին . այլ յերևան քաղաքն 'ի կաթունիկէ յեկեղեցւոյն . և կամ թէ 'ի շրջագոյութիւն աշխարհաց : բայց սևա գլուխք ոմանք սինլիք որք և գուհիկք որք և զգեղ

զգեղական հողագործս որք վարնորդիւք մշակօք բնակեին յՂջիածին և զաւուրս տարւոյն զբազումսն 'ի գեղորայսն անցուցանեին քան թէ յՂջիածին :

Եւ յորժամ մօտէս վարդապետն զսկիզբն պարտնորդութե • ասրակուսեին վն հողոյն և մոխրոյն որ բլրացեալ կայր շուրջանակի • թէ զի արդ լինի պեղել : բայց որովհետև կամքն անային քաղրացեալ էր և ձեռնարկուէ գործոյն նորին հաճութեւն էր • դիւրահնարիւ եղև բարձումն հողոյն • վնզի ամին զջուր 'ի գետոյն յորդ և վարար • և կասեցին 'ի կողմն ինչ հողոյն • և զբազում ժշտկաարկին 'ի գործ և սկսան մշակքն փորել զհողն և տրորտալ ջրոյն • և այնպէս առնելով • ջուրն առեալ զհողն տանէր և քարն մնայր որ 'ի սակաւ աւուրս փութանակի յամենից կողմանց բարձաւ հողն • և բացաւ վայրն ամ • և եղև հարթայատակ գետին • և մնացեալ քարինքն շարեցան 'ի յորմն տանցն • լեալ ձեռնատու գործոյն • և ապա զլայն և ընդարձակ պարիսպ պատեցին շուրջանակի • յորի նեալ զբուրքս ութն 'ի նմա :

Եւ զպարիսպն զոր շինեցին • այսպէ ձեւեցին : Ոպ և տեսանի յեկեղեցւոյ անդ չորեքին խորանք եկեղեցւոյն որք կան յորինեալք 'ի նմա ընդ չորս կողմն աշխարհիս • յարտաբուստ կուսե եկեղեցւոյն 'ի ճակատաց այս չորից խորանաց : Եւ ապա իմէջ պարսպին արևմտեան կողմն շինեցին զդարպասս և զտունս 'ի պէտս ինքեանց և հիւրոց : և 'ի հիւսիսային կողմն և յարևելեան կողմն շինեցին խուցս 'ի բնակուի միաբանից : և 'ի հարաւային կողմն շինեցին զսեղանատուն, զփռնատուն, զանտեստուն, զհամբարանորդ ցորենոյ և այլոց նիւթոց : Եւ ամ շինուածքս

ածքս այսոքիկ՝ միայն պարիսպն 'ի հողոյ եղև շինեալ . եսկ այլքն ամենեքեան լիտելով քարիւ և թրծելով աղիւսով և կրով և բռով շինեցին գեղեցկիւ և վայելչիւ յօրինուածով :

Ետայսօրիկ զեկեղեցւոյ գծբէթի տանիսն արագեցին . քանզի սալքն քանդեցեալք և 'ի տեղւոյն իբացոստեցեալք էին : Եւ թէ որ տենչացեալ գիտել կամիցի զչափ լուսակառոյց Վնստնկարի Վճաբնակի տաճարիս սրբոյ Վջմիածնի այսքան է . յիսուն հալապի գազերկայնքն է յարևելից դէպ յարևմուտս . քառասուն և ութն հալաբի լայնքն է հիւսիսոյ դէպ 'ի հարաւ . երեսուն և հինգ հալապի բարձրութիւն է 'ի ներսիկողմանէն կթղկէն 'ի պորտէն մինչև գետինն : այսոքիկ չամբս եկեղեցւոյ մէջն է 'ի ներսի կողմանէն թող զպատն :

Եւ օր աւուր նորոգեալ հաստատէր զսթաթոռն . որով և ամ կարգ և կրօնք հաւատոյս քրիստոնէն թէ . վանզի համբաւ նորոգման սրբոյ աթոռոյս հօշակեալ ծաւալեցաւ ընդ ամաշխարհ , 'ի հոռմաստան , 'ի պարսկաստան , 'ի բրդաստան , 'ի վրաստան , և ամենեքեան զուարճացեալք ցնծային : Եւ յաշակերտաց իւրոց առաքէր մօսէս վարդապետ 'ի քարոզութի յամն կողմանա . որք գնացեալ հոգեբղխիւ քարոզութ և բարեկրօնիւք վարութ հաստատէին զկարգս և զկրօնս քրիստոսակնի հաւատոյս՝ և եկեղեցականի աւանդութ : վնզի ուրև գնային զճշմարտութ գործս ցուցանէին ըստ նմա նութի վարդապետին իւրեանց . շինէին զեկեղեցիս , կարգէին զքահանայս և ընկրկեալ կործանէին զհակաաակորդս ճշմարտութ . որով զօրացեալ յառաջանայր ճշմարտութին : Եւ և հոգելից սթ վարդապետ տէր մօսէս կարգեաց զդպրո

զգարատուն 'ի մեծափառ սբ ուխտան յոհանա
վանք՝ ուր ժողովեաց զմանկունս յոլովս . և զա
մենեցուն զծախան և զպէտան ինքն հոգայր . և
մանկունքն անզբաղ և անխափան ուսանէին զե
կեղեցական ուսումն , և զգիրս Վճացունս , և
զիմաստասիրականս որք եղէն ամենեքէսն արք
պետանիք և օգտակարք աշխարհի . վարդապետք ,
եպկպոսք , և արեղայք , և երիցունք . և ամբն
վանորայք որք ամայացեալք 'ի խաւարի կային .
եղէն լցեալք միաբանիւք , արեղայիւք , և կրօ
նաւորօք , և գեղորայք վարժիւք երիցամբք :

II նորոյ ամբն ժողովուրդք հայոց՝ որք յԵՏա
նուր աշխարհս բնակեալք են յառաջին կթիւ
կոսաց անկարգութեն ճանճրացեալք՝ և 'ի սո
րին բարեկարգութեն միխթարեալք՝ կամօք
և յօժարութբ կաթողւով սրտիւ կամէին զե
նքն սբ հայրս մեր մօսէս վարդապետ լիցի կթիւ
կոս . որք գրովք և աղաչանօք թախանձէին
ամենեկ տեղեաց վարդապետք և եպկպոսք և
երեւելիք արք . զի յանճնառցե զաստիճան կա
թիւկոսութեն . բայց նա հրաժարէր զանճն ան
արժան ասելով առաքելականի աստիճանին :

Բյլև այրս Բյ տեր մովսէս վարդապետ հա
նապազ 'ի սրտի իւրում վարանէր . և Խերեր .
և ցաւեր . վն հարիւր թուման մուղադային .
որ անտանելի ծանր բեռն և անխզելի անուր
եզաւ՝ ի վր սրբոյ աթոռոյն Ելմիածնի . ոչ
միայն սա այլև ամազգն հայոց : II րև վն փրկու
թե Վնաբնակի սբյ աթոռոյն ոչ դանդաղեալ
ծուլացաւ ինայելով յինքն կամ 'ի ճեղքութի
տկարութե՝ այլ ելեալ գնաց 'ի դուռն արքայ
ին 'ի քաղաքն զազբին . քանզի անդէր թգրն
չահաբաս . 'ի հազար և եօթանասուն և եօթն
աթի թուականիս մերում : և մատուցեալ այսր
և անդր

և անդր առ նախարարս Թգլրին աղաչէր զնս
 ծանուցանել արքայի առ ՚ի բառնալ զհարիւր
 Թուման հարկն ՚ի սրբոյ Եջմիածնէ. և նա
 խարաքն պատէ՛ց ոչ համարեցան ասելով՝ այս
 Թգլրս յոյժ արժաթ ասէր և ազասէ. և յայդ
 քան շահուց արժաթոյ ոչ զանցառնէ. և մն
 նաւանդ զի գործդ այդ իւրէ հաստատեալ.
 որով առաւել տեսանի զի ոչ զանցառնէ զդո
 վաւ՝ վսորոյ պարտէ քեզ լուել ՚ի ժամն և յաւ
 ուրսս յայսոսիկ. այլ մեք գտեալ զպատշաճ
 ժամ, խօսեցուք առաջի արքայի. վսորոյ
 տխրեցելով և Թախցեցելով սրտիւ դարձաւ
 ՚ի զազբնոյ և եկն ՚ի սբ Եջմիածին:

Իսկ արքայն շահաբան ելեալ ՚ի զազբինոյ
 գնաց ՚ի Փահրատապատ ՚ի քաղաքն որ կոչի ա
 շրաւ. առ ՚ի ձմերելանդ. և ըստ հիւժականի
 բնութեա մարդկան հիւանդացեալ մեռաւ ՚ի
 հազար և եօթանասուն և ութն ամի Թոճակա
 նութես մերում. և յունվարի ամսոյ եօթն և
 կուակաւ հաստատեաց տալ զԹգլրութին Թո
 ոին իւրոյ: քզի արատամիտ և բազմախորհուրդ
 արքայս շահաբաս, յորդուոց իւրոց զոմանս
 սպան՝ և զոմանս կուրացոյց վն երկիւղի՝ զի մի
 գուցէ Թգլրեցուցեն ի շխանքն. և մնացեալ էր
 Թուն մի որդի աւաղի որդւոյն իւրոյ. վսորոյ
 ետ զԹգլրութին Թոռին իւրոյ: Եւ ժողո
 վեալ ամքն նախարարք՝ և հաւատարիմք տան
 Թգլրին Թգլրեցուցին զԹուն, և կոչեցին զա
 նուն նորոյ Թգլրին շահսեֆի. զի վիճակաւ
 եդին զանուն նր. որ և վիճակն՝ և կոչումն ա
 նունանո ուղղակի դիպեցաւ. զի և անուն նոր
 նձայ Թադաւորիս հօրն սեֆի էր: և նստաւ
 Թգլր նոր ընծայ շահսեֆի ՚ի նոյն Թոճականին.
 զար և եօթանասուն և ութն ամին. և յուն
 րի ամսոյ տօին և ինն:

Եւ

Եւ եղև ժամանակս այս պատշաճ և ըմբոն ժամ . վնբառնալոց հարիւր Թուման մուղա դային . վասնորոյ ժողովուրդքն ջուղայեցւոց բնակեալքն 'ի քաղաքն ասպահան . և մանաւանդ ողորմութեցն Մարտանին Վարդապետ մեծ իշխանն խօջայ նազար գրեալ զԹումալ Թորն Թացիւ վայեկաւ հասուցին յՎնիս թին առ մօտէս վարդապետն . վաղվաղակի հասանիլ 'ի դուռն նորն՝ ծայ Թորնին . վնբառնալոց հարիւր Թումանին . զոր և անյապաղիւ ճեպով ելեալ մօտէս վարդապետն գնաց յասպահան քաղաք 'ի դուռն Թորնին : և կացեալ 'ի դրան Թորնին ամիսս ութ . և տեսեալ զմասն նախաբարս զհինս և զնորս և հաճեալ զմիտս նց բազմաւ ընծայիւ և աղերսիւ :

Վապ սբ այրն Մարտանի պատրաստեաց զընծայոս վայելէ Թորաց . սկուտեղամբ զուտ ոսկի դահեկանս . և զայլևս ինչս պատուականս . և գրեալ զգիրս յօժարութե , որ է արղայ . և վարդապետն և խօջայ նազարն միջնորդութե նախարարացն ձօնեցին առաջի Թորնին . որ 'ի հարցանելն արքայի վնվարդապետին . իրազգածարար զնա խօջայ նազարն . պատմելով նմա զազնուականութե վարդապետին : այլև Թե նախածանօթ և հաճելի ծագայ էր յառաջագոյն մեծի Թորնին հաւոյն քում . և այժմ ևս աղօթող է վասն կենաց Թորնին : բայց զայս ինչ խնդիրս ունի՝ զի այցարարեալ գԹացի 'ի տառապեալ ժողովուրդս իւր արքայ՝ և զծանր բեռն , զոր ընդ վայր և 'ի տարապարտուցեղաւ իվր մեր . այսինքն հարիւր Թուման մուղագէն . հրամայեսցէ արքայ բառնալ զայն :

Եւ արքայ շահսեֆի անդէն 'ի հանդիս յովով բանս խօսեցաւ ընդ խօջայ նազարի

այլև էհարց 'ի մօտեսէ վրդ-պտէն վասն մուղա
 դայ հարիւր թումանին . և ողորմութիւն և
 շնորհօքն Վճայնօք . ամբն քանք վրդ-պտին դի-
 րին և ակորժ թուէր առաջի թգլրին : քան
 ի ամենաթգլրն Վճ, որ ունի 'ի ձեռին զսիրտս
 թգլրաց . հաճեցոյց և քաղցրացոյց զկամն
 թգլրի . որ 'ի լուր ամի հանդիսին ասաց թէ
 անցայ 'ի հարիւր թուման մուղադայէդ՝ զոր
 տայլիք 'ի դիւան թգլրին . այսուհետև կացէք
 ազատ և աղօթեցէք՝ վն մերոյս կենաց և յաջո
 դութե : (Հայնժամ խօջայ նազարն՝ և մօտես
 վրդ-պտն՝ և ամբն իշխանքն՝ որք կային առաջի
 թգլրին . ամենեքեան խոնարհեալ երկիր պա
 գին թգլրին . և համբարձեալ զձեռս եւրց
 'ի ձայն գոհութե օրհնեցին զ Վճ և զթգլրն .
 և ուրախութիւն արձակեալք յերեսաց ատենին
 գնացին 'ի տեղիս եւրեանց : Վճ սուհետև մօ
 սես վարդ-պտն և խօջայ նազարն, հանապազօր
 շրջելով 'ի դրունս իշխանաց . և առ վերակա
 ցուս դիւանականաց մատենից . և առ գծա
 գիրան . սյնքան աշխատեցան մինչ զի յամենից
 մատենից ուրև գրեալ կայր բանն այն . յամէ
 հանեալ արտաքսեցին :

Նա ապա գրեաց միւս ևս զարգայ խօջայ նա
 զարն և մատոյց առաջի թգլրին խնդրելով՝ զի
 տացէ զնոմոս թգլրականաւ կնքով վն բառնա
 լոյ հարիւր թուման մուղադային : այլև լն մին
 խնդրեաց յարքայէ տալ զիշխանուե կթիկսու
 թէ մօտեսի վարդ-պտին : Նա արքայ շահսէֆի
 կատարեաց զամն խնդիրս նց . զի ետ զնոմոս
 թգլրականաւ կնքով ազդու և հատու բանիւ .
 թէ բարձի զհարիւր թուման մուղադայն ,
 որ 'ի մերոց թգլրաց եդեալ էր ի վր աթոռոյն
 ձերոյ Նշմիածնի : այլև ետու զհրաման կա
 Ե . Թիկսու

Թղկսու թէ մօսէսի վարդապետին ըստ հայցո՛ւ ա
 ծոյ ամազգին հայոց: Եւ որդայսն քաղմաերկիւ
 աշխատու թք. և յոյժ զբազում գանձս ծախս
 լով եբբ թէ հազար թուման. հազիւ թէ կա
 րաց բառնալ զծանր բեռն հարկին 'ի սրբ
 աթոռոյն սուրբ վարդապետն մօսէս. և սուեալ
 զթղրկան նոմոսն դարձաւ մեծաւ ըրախու
 թք և եկեալ է հաս յածաբնակ յաթոռն 'ի սք
 Եւ ջմիածինն: և սփռեցաւ համբաւ ազատու
 թէ սրբոյ աթոռոյն յընդհանուր աշխարհ
 յազգս հայոց. և ամենեքեան լցեալք անպաս
 մառ ուրախու թք 'ի ձայն ցնծու թէ գոհա
 նային զՄ. Ե:

Եւ այնուհետև յամենից աշխարհաց արբ
 երկելիք եկեղեցականք և աշխարհականք.
 սկսան առաւելաբար առաքել զթուղթս ա
 ղերսանաց առ մօսէս վարդապետն խնդրէին և
 աղաչէին զի միևս պատճառս յօրեսցէ այլ վն
 հաստատու թէ հաւատոյ՝ և կարգի եկեղեցոյ
 յանձն առցէ զկթղկսու թին: և այս թուղթ
 աղաչանաց առաքեցաւ 'ի պարսկաստանայ, 'ի
 ժրաստանայ, 'ի բրդաստանայ, 'ի հռոմաստա
 նայ: Եւ սք հայրս մեր՝ ոչ թէ 'ի փառս անձին.
 որ փառաւորեալ էր յՄ. Ե և 'ի մարդկանէ, այլ
 վն օգտի ժողովրդեան Յ. Ե և հոգևորաց կրօ
 նից հաստատու թէ լսող եղեալ աղաչանաց ամե
 նեցուն ընկալաւ զաստիճան կթղկսու թէ. և
 օծմամբ ամենասուրբ հոգոյն Մ. Ե օծաւ հայրա
 պետ ամազինս հայոց՝ պայծառ և պանծալի
 ժառանգորդ բարձրագահ աթոռոյն սրբոյ
 Եւ ջմիածնի. 'ի մերում թո՛ւնականութես հա
 զար և եօթանասուներեւթ ամի յունվարի ամսոյ
 տասներկոց. յօր տնօրէնուէ հն: Եւ լն բանին.
 հն, ճրագ արփիաւորից եդաւ 'ի բարձու աշ
 տակալ

տականի՛ր գերագահ թողու լինիլ լուսատու տանս արամեան: և անաշնորհիւ վարդապետութիւն իւրով միտարէր զամեն քաղցու քարոզութիւն զոգոտելով՝ ի ճանապարհսարդարութեան:

Եւ երսէ՛հ հարսմեր մաքրակենցաղ և սրբասունդ, երկայնամիտ և ողորմած, որ և բազում գործք աղատեցան ՚ի գերջաց ձեռամբ սորա վնգի յաւուրս սորա անհաշտ խռովութիւն եր իմէջ Վարսից և () սմանցուոց. որոյ սակաւաւար և գերութի կարի յովով լինէր յերկուց կողմանց. և զորս և տեսանէր ՚ի գերեացն. ան վրէպ առնոյր գնով և աղատէր: Եւ էկաց սա ՚ի բարձրագահ թողուն ՚ի սուրբ Վլիածինն. ուղղիւ վարդապետութեան. նորոգեաց զաւերական նորոգչինութիւն և պայծառացոյց միաբանօք և վարդապետօք. և յարմարիւ և հաստատնով ժամակարգութիւն և փարթամացոյց եկեղեցակա նաւ անօթով՝ և մարմնականաւ ստացունաժով: և էկաց սա կլիկոս յերիս ամս և ՚ի կէս. և ՚ի թունականիս հազար և ութսուն և մեկ ամին ՚ի մայիսի ամսոյ տասնեւչորսին վախճանեցաւ. պակասեալ աստի մահաժամբ և յաւելաւ առ Տր հանգստեամբ. և գնաց առ անձկալին իւր Վն. զոր հանապազ մշտապաղատիւ և սրբանունիբիւ աղօթիւք կրէր յոգի իւր:

Եւ պատահեցաւ լինիլ վախճան սորա յերևան քաղաքի ՚ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն անանիայի. վնորոյ և տարեալ ՚ի հասարակաց գերեզմանատունս, ՚ի կողեռ կոչեցեալ բլուրն. վն գերեզմանի կողուան վարդապետին, որ անդ է: և յարահուպ գերեզմանի կողուան վարդապետին և մեւքիսիթի վարդապետին. իմէջ երկուցս այսոցիկ պատրաստեցին զդիր հանգստեան սրբոյս այսորիկ. և անդ էն իմէջ

երկուց կափուցելոց տապանաց եդին զսրբա սնեալ նշխար մարմնոյ նր մեծաւ պատուով և փառօք . 'ի փառս Վրի և 'ի բարեխօսութի ամենեցուն Վրիստոնէից :

Վասն վարդապետութե և կթղկաութե տեսան փիլիպպոսի :
Յորում և վնտորդութե եկեղեցեաց , սրբախեաց
կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և
յայտնելոյ նշխարաց նոցին :

ԻԼ :



Փ Ի Լ Ի Պ Պ Ո Ս Կ Լ Թ Ո Ւ

ղկկոսն էր յերկրէն բարմայ . որ այժմ ասի աղբակ . 'ի դեղջէն որոյ զանուան կոչէն էրընկան : գողով սորա 'ի տիս տղայութե չորեքտասանց ամաց աւելի կամ պակաս . լուաւ զձգնողական վարամիայնակեցաց մեծի անապատին . մեծատենչիւ փափագ մամբ ելեալ գնաց 'ի մեծ անապատն լինիլ կրօնաւոր . և հետեւիլ առաքինականաց վարուց մաքրակենցաղի սրբութե . որոյ կարի փափագիւր : Իսկ կրօնաւորք անապատին ոչ թողին զնա յանապատն . վն տղայականի հասակին և անմօրուս գողոյն . սակայն նա ոչ դարձաւ կրկին յաշխարհ՝ այլ անդէն եկաց արտաքոյ անապատին իմէջ մայրեաց՝ որ շուրջ էր զոնա պատիւն . և համբեր այնպէս զամիսս ութ :

Ի նդ այն ժամանակս մօսէս կթղկան տակաւին վարդապետ գողով քարոզուէ շրջէր յաշխարհի . և լուսաւորէր զամ մարդ իբրև զաթ գակն . իսկ հայրն մեծի անապատին սարգիս պարոնտէրն . ետ զփիլիպպոսն յաշակերտութի մօսէսի վարդապտին : Եւ որ կացեալ փիլիպպոս է հաս յարբունս հասակի 'ի տիս երկտասարդութե . օրհնեցին զնա աբեղայ կուսակրօն

Կրօն քահանայ . և նա՛ ի տունէ և ՚ի գիշերի հե
տևէր ճգնողականաց վարուց . և գործոց առա
քինութե . և յընթերցումն և յուսումնածայ
նոց գրոց . որոյ զառաջադիմութիւն տեսանե
լ վարդապետին մովսէսի . իւրով հաւանու
թիւն , և վկայութիւն ամենից եղբարց , ետ նմա
զիշխանութի վարդապետական . և յետ ամաց ինչ
զգաւաղան վարդապետական . և ՚ի հազար և եօթա
նասուսնեկնն թուին օրհնեաց զնա եպկպոս :

Եւ ՚ի հազար և ութսունևմի թուին յոր
Ժամ է հաս վախճան մօսէսի կլթիկոսին , Ժողո
վեցան առ նա եպկպոսք և վարդապետք՝ և երևե
լիք արք . և որբալով ասացին , որովհետև այդւի
հաճեցաւ վնքոյ Տրն և տունդն կենաց՝ զի
մեկնիս և գնաս ՚ի մէնջ : այլ արդ խնդրեմք ՚ի
հայրախնամոյ գթոյ քոյ զի մի կարի թողու
ցուս զմեզ որբս՝ այլ յայտնեա մեզ թէ զովորբ
տաս մեզ լինիլ հայր և հովիւ զկնիքո՝ և նա
ասաց , դուք գիտէք՝ զորոք և կամիք ընտրեցէք :
Իսկ ըամք Ժողովոյն ասացին , մեք բոլոր աշ
խարհ զբեզ ընտրեցաք . և այժմ դու զովորբ
ընտրես ընդունելի է մեզ . և նա ասաց ես զփի
լիպոս վարդապետն կամիմ լինիլ փոխանորդիմ ,
և յաջորդ սրբոյ աթուռոյն Ս Ղմիածնի . և նք
ամենեքեան իբրև զայն լուան յօժարիւք կամօք
հաճեցան . և ընկալան զփիլիպոսն լինիլ կլթի
կոս : Իբրև ծաւալեցաւ համբաւ մահունանն
մօսէսի յամաշխարհ յարևելս և յարևմուտս . նա
և բանն այն . թէ վն փիլիպպոսի պատուհիրեալ
է առնել կլթիկոս . ամենեքեան կամօք և յօժա
րութիւն հաճեալ հաւանեցան . վնորոյ իւրաքան
չիւրոց տեղեաց առաքեցին զթուղթս վկայա
կանս զի փիլիպպոս վարդապետն լինիցի կլթիկոս .
և մինչ ՚ի գալ թղթոցն էանց այն ամն . և է հաս

իվր թուճականն հազար և ութսուններկու-
յորում ամի օրհնեցին զնա կթղկոս օծմամբ
հոգւոյն սրբոյ . յամսեանն յունվարի տասնևե-
րից . 'ի տօնի տնօրէնութե ՏՆ : Եւ ազգս
հայկազեան՝ թէպէտ իվր մահուան յետեւ
վշտալիցք լեալ տրտմեցան . այլ 'ի յարողելն
փիլիպպոսի բերկրեալ զոճարձացան : զի փո-
խանակ հօրեկաց որդի՝ իշխան հանուր ազգի :

Իսկ յորժամ ժամանեալ թուճականն մեր
էհաս հազար և ութսունևչորս ամն թգրն
ստամբօլայ սուլթան մուրատ կոչեցեալ այր կա-
րի խրոխտ հզոր յաղթող և իմաստուն . ելեալ
'ի ստամբօլայ եօթն հարիւր հազար հեծելազո-
րօք , և եկն յաշխարհս արարադու . և շուրջ
նստեալ զբերդիւն երէվանու պատեալ պա-
շարեաց զնա . և յաւուրս ինն էառ զբերդն ,
և զիշխան բերդին զթահմազդու լիխանն ; զոր
դին ամիրզունայ իանին կալեալ առաքեաց 'ի
կոստանդնուպօլիս . և 'ի նախարարաց իւրոց
զոմն բարեբարոյ և խելացի իշխան . որում ա-
նունն էր մուրթուզայ փաշայ . հաստատեաց
իշխան իմէջ բերդին տասնևհինգ հազար սպա-
ռազինիւք և ընտրելովք հեծելօք . և ինքն ան-
ցեալ գնաց 'ի թաւրեղ քաղաք . և անտի դար-
ձաւ իվր վանայ և գնաց 'ի տեղի իւր :

Իբրև էանցայն ամառն . և 'ի գալ ձմռանն՝
յորում էր թուճականն մեր հազար և ութսուն
և հինգ , ելեալ թգրն Պարսից շահսէֆի հրիւր
հազար հեծելօք և եկեալ էմուտ յաշխարհս
արարադու : և նստաւ իվր բերդին երէվա-
նայ յաւուրս նսունևերէք՝ մեծաւ տաժան
մամբ և բազմօք չարչարանօք , և արեանց հեղ
մամբ հազիւ թէ կարաց յետ աւնուլ զբերդն
'ի ձեռաց () ամանցւոց : Եւ 'ի շարժմանէ այսց
երկուց .

երկուց ինքնակալաց թգրցս աւերեալ ապակա
նեցան աշխարհք արևելից և արևմտից. և մա
նաւանդ աշխարհն պրարադու իւրովք շրջա
կայիւք գաւառօքն: վս զի երկոքն թգրքն իւրց
հեծեյօքն և հետեւելովքն անդր գումարեալ
կատարեցին զգործս իւրեանց, և դարձան:

Իսկ օք աթուռն Նշմիածին բաց յեկեղե
ցւոյն՝ և գմբէթաշէն՝ տունցն՝ ամբն բնաւին
աւերեցան. զի որինչ փայտակերտ տունք
և շէնք կային քանդեցան: վս որոյ տէր փիլիպ
պոս կթղկոսս բազմաերկիւք վաստակօք զաման
շինուածսն վերստին շինեաց բովանդակ. քան
զի վս միայն փայտեղինաց շինուածոց զհազար
դուռուշ նաղտ դրամ նորին արհեստաւորացն
ետ: Եւ իմէջ սեղանատանն հացկերութի սե
ղանն՝ և որ՝ ի նմա այլ կահք էին, յառաջն
որ շինեցաւ՝ ի ժամանակս մովսէսի, փայտա
կերտ շինեցաւ. վս որոյ դիւրաւ աւերեցաւ.
այլ այժմ փիլիպպոս կթղկոսն քարիւ շինեաց
զսեղան հացկերութին. և զտեղի նստելոյն և
զգալյարկ յատակս նորին. զի մի դիւրաւ աւե
րեցի ի ժամանակս հեծելաշարժութե:
Եւ արևելեայ կողման խուցան բովանդակ
նոր շինեցաւ. վս որոյ ոչ ըստ առաջնոյ ձևոյն
է. այլ այլով ձևով զինեալ է: Եւ և զեկեղե
ցւոյ տաննն, զտո ի գմբէթի գդակէն,
զբովանդակն նորոգեաց: Եւ քարակապ
Փարշն, որ շուրջ զեկեղեցեաւն է. և միւս
Փարշն, որ առաջի խցացն և այլ տանցն է: Եւ
արտաքոյ պարսպին մերձ հարաւայնոյ դրանն
երկու գմբէթաշէնք ձիթահանք նոր շինեցան
զի ոչ գոյր բնաւ: Օտտ յայտցանէ և զայլևս
Մքոյ յորժամագուլիս գիւղի քահանայքն եկին ընդառաջ շահին զգեցեալ զգետուք • կային ընդ նոսա և ոմանք 'ի մանկանց դպրատանն՝ որք զգեցեալ էին զշապիք և բարձեալ շամադան և մոմ : և երթային առ ընթեր խաչալամին : և մինչ երթային քահանայքն երգելով առաջի շահին • և շահն հայեր այսր և անդր • և ըստ չարայուշ մտաց և բարոյից իւրոց զննէք զաման : և 'ի զննելն հայեցեալ 'ի մանկունան ետես զի ածելեալ էր կուլակք մանկանցն • և այն յոյժ ծանր և դժուարին թուեցաւ ինքեան • զի համարեցաւ թէ վասն ինքեան արարեալ իցեն զայն • ուր զի մի վայելչագեղ երևեսցին մանկունքն յաչս նր • և հաճեալ 'ի նոսա աւցէ 'ի նոցանէ : Եւ անդէն շարժեցաւ 'ի ցասումն բարկութե շահն իվր առնն որ ածելեալ իցէ զկուլակս մանկանցն : Մյլև արք յմանք մահմետականաւ հաւատով որք բնիկ բնակիչք էին ագուլեաց գեղջն՝ երևելի իշխանք որք լւ շահին շրջէին • և մերձնմին 'ի սպասու կային : և վն բնականի նախանձուն, զորունելին ընդ քրիստոնէից առաւելևս գրգռեցին և զայրացուցին զսրտմտութի թգլրին իվերայ քրիստոնէիցն • վասն որոյ ստեպ յուզ մամբ հրամայեաց շահն զննելև գտանել • և որ զայն արարեալ իցէ սպանանել : և եթէ ծընօղք մանկանցն արարեալք իցեն զայն • զնոսին սպանանել և զինչսն յափշտակել և զմանկունան

կուսան գրաւել 'ի ծառայութի թգրին :
 Իսկ առաջիկայք թգրին սկսան զննել և
 հարցանել 'ի սմանէ և 'ի նմանէ թէ ո՞ր զայն
 արարեալ իցէ . և ամբն զոչգիտելն պատաս
 խանէին . ապա իմէջ առեալ զտէր անդրէասն
 և ստիպով պահանջէին թէ ասա մեզ՝ զի դու
 ես վերակացու մանկանցն . և դու ես գիտակ :
 Իսկ տէր անդրէասն խոկայր 'ի մտի . թէ
 զծնողսն պատճառեմ զնս սպանանեն , և զման
 կուսան յափշտակեն : և թէ զայլ որ պատճա
 ուեմ զնա սպանանեն . և լինի այն ինձ խիղճ
 մտաց և սողտանք անփարատելի . բայց լաւ
 համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազու
 միս . վնորոյ 'ի կարի ստիպելն զինունորացն .
 տէր անդրէասն առի փրկելոյ զայլս ասաց թէ
 ես եմ արարեալ զայն : և զինունորքն ծանու
 ցին զբանն նորա շահին . և շահն հրամայեաց
 ունել զնա և պահել 'ի կալանս : Եւ զկնի աւ
 ուրց հրամայեաց շահն ւածել զնա առաջի իւր .
 և հարցանէր , թէ զստոյգն ասա՝ ովոր է արա
 բող այդմ գործոյ՝ և տէր անդրէասն ասաց՝ ոչ
 որ այլ ես միայն : իբրև ետես շահն թէ զայլոր
 ոչ մատնեաց՝ յոյժ բարկացաւ իվր նր . և հրա
 մայեաց տարածել իվր գետնոյ և բրածեծ առ
 նել անխնայաբար : և զկնի յորով ից հարունածոցն
 ասաց շահն . զայդպիսի մնաս և զպարտաւո
 բու թի արարեալ է քո . եթէ կամիս զկենդա
 նու թի անձին քոյ . ուրացիր զհաւատն քրիս
 տոնէ ութե՛ ձերոյ . և լէր օրինօքն մերովք՝
 դաւնու թբն առաջնորդին մերոյ . և ես տաց
 քեզ զպատիւս և զմեծութիս . և թէ ոչ հաւա
 նիս . շանց և գազանաց առաջի արկանեմ զքեզ
 Եւ նա ոչ կալաւ յանձն զուրանալն . այլ ետ
 զպատասխանի թէ քրիստոնեայ եմ և Վի
 ծառայ .

Ժառայ: և Թիւրն իբրև լուճա զայն. զայրա գին բարկութիւն Տրամայեաց դարձեալ 'ի բանտ արկանել:

Եւ 'ի վաղուն վերստին էած առաջի իւր. և Տարցանէր Թէ ուրանաս զՏաւատն քո. և տէր անդրէաս ասաց ոչ ուրանամ: Կրկին անգամ ասաց արքայ տամքեզ զպատիւս և զմե ծութիս Թէ ուրանաս զՏաւատն ձեր. և նա ոչ Տաւանեցաւ: և դարձեալ Տրամայեաց 'ի բանտ արկանել:

Իսկ քրիստոնէայքն մատենան առ նախաբարս Թիւրին. և խօստացան զգանձս բազումս. զի գուցէ ազատեսցեն զնա. և Թէպէտ նախաբարքն խնդրեցին երկիցս և երիցս ոչ լուճա արքայ: Եւ ցղնեցի խօջայ անձրևի կինն սրում մայր էր ասացեալ շահն. և ունէր զպատիւ առաջի շահին. սամեծաւ աղաչանօք անկեալ առաջի շահին խնդրեաց արձակել զնա. ամա ևս ոչ լուճա:

Եւ դարձեալ ածին զտէր անդրէաս առաջի արքայի յետ բազումանգամ Տարց և փորձ առ ներոյ խոստմամբ պարգևաց և սպառնալեօք տանջանաց. իբրև ետես Թիւրն Թէ ոչ Տաւատնի, Տրամայեաց սպանանել: Իսկ քաջ նաՏատակն և ճշմարիտ քահանայն տէր անդրէաս Տաստատնով Տաւատով կայր իվր անշարժի Տիման Տաւատոյս քրիստոնէութե:

Իսկ զինուորացն առեալ զտէր անդրէասն կապանօք տարան 'ի տեղի կատարման. և նա ուրախութիւն և յօժար կամօք գնայր. և յորժամ էՏաս 'ի տեղի կատարմանն իւրովի արձակեաց զգօտին իւր. և մերկացաւ զՏանդերձն իւր. և ասէրդահճացն կատարել իվր ինքեան զՏրամանս Թիւրին. բայց դահիճքն յամեցուցանէին.

352 Կատարումն սրբոյն Լիւդիւսաց .

ցանէին . զի գուցէ հաւանեացի հրամանաց
արքայի :

Եւ մինչ կայր սուրբն 'ի տեղի կատարմանն .
առաքեաց առ նա թգլւրն 'ի նախարարացն զո
մանս երկիցս թէ մի կորուսաներ զգեղ և զման
կութի քո՝ եկեալ հաւանեաց իմոց բանից . և
առ յինէն զպարգևս և զմեծութիս : Իսկ քաջ
նահատակն ամենից բանիցնց տայր զպատասխա
նի . թէ ընդունայն խոստմանց ձերոց ոչ հաւա
նիմ : և զճշմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ : Եւ
դահճացն հանեալ զսուրն խաղացուցանէին
ի վիճորս՝ և ածէին ի վիճորովայնին առ ի երկե
ցուցանել զնա՝ և նա ոչ երկնչէր :

Եկին 'ի տեղի նահատակութե ծնողք սբյն
և կային առ ընթերթ՝ և աղիողորմիւք և յորդա
բղիւօք արտասուօք լային . և աղաչանօք ասէին
առ սուրբն . քաղցրիկ որդեակ մեր , որ առ
եր զկարգ քահանայութե և եղբ զինուօր
Վի . մի երբէք լիցի քեզ ուրանալ զՎն . և
լինիլ զինուօր տիրատեաց . մի թողուցուս զլու
սապայծառ հաւատս Վի . և մի վն առ ժամա
նակեայ կենացս զրկեսցիս յաւիտենականաց կե
նացն . այլ յիշեա զճշմարիտ վկայսն Վի . զորոց
զպատմութիսն հանապազ ընթերցեսու պատ
մէր մեզ . համբեր որպէս և նորայն . զի և
նոցին պսակացն արժանաճցիս : զայս և որ սո
ցին նման փղձկելով սրտիւ . և յորդաբղիւօք
արտասուօք աղերսալի ասէին ծնողք սրբոյն
առ նա : Իսկ դահճացն զբազում ժամս յամե
ցուցին անդէն . զի թերևս երկմտեալ թու
լացի . և սուրբն անդրդուէլի կայր ի վիճմա
րտի հաւատոյս . և 'ի խաչակնքելոյ զդէմն ոչ
դադարէր : Իբրև տեսին զհաստատութիւն
մտաց նորա դահճիքն . թէ ոչ դառնայ , յայն
Ժամ .

Ժամ ձգեալ զսուրն պատառեցին զորովայնն նր. և վաթեցաւ աղիքն արտաքս'ի փորէն. և սքն միով ձեռամբն ժողովէր զաղիսն'ի փորն և միով ձեռամբն խաչակնքէր զերեսն. և յիշէր զանունն Քրի: և ապա ծակեալ զջիւս սրու նից ոտացն. և պարանօք բարձրացուցեալ'ի բարձունս. և կախեցին զսուրբն գլխի վայր. և նա կայր կենդանի մինչև'ի մուտս արևուն: և ընդ երեկոյն աւանդեաց զմաքուր հոգին'ի ձեռս Մ. Ե. որպէս զխունկ անոյշ և զճշմարիտ զոհ ընդունելի: Եւ յետ մահունան սբբոյն հրամայեաց շահն ձգել զմարմինն նր արտաքոյ շինութե. զի կերակուր լիցի գազանաց և թռչնոց: Իսկ քրիստոնէիցն բարձեալ անտի և բերեալ յագուլեաց ներքին եկեղեցին, որ այժմ ասի խցաձորի եկեղեցի. և անդ թաղեցին. և այժմ անդէն կայ թաղեալ պատուական նշխար ոսկերաց նր:

Եւ եղև կատարումն և մարտիրոսական մահ սբբ. քահանայիս Մ. Ե. տէրանդրէասիս'ի թունահանիս հայոց հազար և վաթսուն և վեց. տրեամնոյ'ի տասն. և նոյեմբերի ամնոյ'ի տասն և յութն: Որոյ յիշատակն օրհնութիւնք եղև լիցի' և աղօթիւքնր Տր մեզ ողորմեսցի:

Եւ յետ կատարման տեառն անդրէասի եբրե անցին ի վր ամիսք երեք կամ չորք. իմէջ խօսից և զրուցաց վերստին յիշեալ եղև առաջի շահաբասին ողորմիք և իրակուիք անցունա ծոց տեառն անդրէասի: Եւ անդէն ոմն'ի նախ կի չարախօսացն'ի բնակող մահմետականացն ագուլեաց՝ որոյ վասն կանխաւ յիշումն արարաք. և սորայս անունն էր շահաուղբէկ. ասաց առաջի շահին թէ տէր անդրէասն, որ զկուրակս մանկանցն ածելեալ էր. ոչ թէ յիւ

ըոց մտաց ինչ . այլ խրատով վերակացօւին իւրոյ . քանզի ունի ինքեան զխրատիչ : և անդէն արարին զՏարցումն վն խրատողին թէ ովոք իցէ : Այլ ոպ'ի համեմատուիս մարդկոն և անասնոց կենդանեաց . համեմատին տաճկաց ազգն 'ի յօձ վն նախանձուն և նենգութե, զոր բնական ունին ընդ ազգս և ընդ հաւատս քրիստոնէից : յորոց և ոմն այս շահաւորքեկս նովին կրիւքն ախտացեալ մատնեաց շահին զմօսէս վրդարտն ասելով : Է ոմն այր, որոյ է անունն մօսէս . որ է վարդարտ օրինացն քրիստոնէից . որոյ բնակութիւն է 'ի վանքն տաթևու . և ինքն է յերկրէն սիւնեաց' և նա է օրէնսուսոյց և դաս տխարակ տեառն անդրէի : Յաղագս որոյ հրաման եղև 'ի թգրէն առաքել զգորականս և որնիլ զմօսէս' և կապանօք ամեւ առ թգւրն : և զօրականացն գնացեալ կալան զմօսէս վարդարտն . ընդ նմին և զպօղոս վրդարտն և եղին զօղամանեակ զուգեալ 'ի փայտից' ի պարանոցս նց . և երկաթ սունակապ յոտսնոցս . յաւուրս ցրտութե ձմերայնոյ . և բերին զերկոսեան վրդարտն 'ի Քանակն շահին, և ծանուցին նմա : Այլ 'ի խոհարանս խորհրդոց իւրոց քննեալէր շահն թէ սպանանեմ զարս երկուս' սակաւ լինի մնաս քրիստոնէից և օգուտ մեզ . այլ առ ից զլուով տուգանս արծաթոյ 'ի նոցանէ . որով լինի աւելի օգուտ մեզ և մնաս նց . և այտպէս վն ազահութե և արծաթսիրութե էարկ զտուգանս իվն վարդարտն թէ զհինգ հարիւր թուման տան և ապա գնան ազատ : Բայց քրիստոնէիցն զաղերս մատուցեալ առ նախարարս արքայի, զի խնդբեցեն յարքայէ թէ թևացուցանել զտուգանսն . և վն միջնորդելոյ նախարարացն Եղաւ մինչ յերեք հարիւր թումանս .

և անդէն վճիռ է հատ թէ անպատճառ տա
ցեն. որև կարգեաց ի վր նց զգորականս զի առ
ցեն: Իսկ վարդապետքն վն ոչունելոյ զինչս, զե
տացենն ՚ի տուգանա. ելին ՚ի շրջագայութիս և
՚ի խնդիր ողորմութե յամենայն ազգս հայոց:

Իսկ անասեր քրիստոնեայքն թէ պէտ աղ
քատք և չքաւորք էին. այլ լիկարողութե իւրց
աղքատք և հարուստք. արք և կանայք անխնայ
աբար թափէին զինչս և զողորմութիս առաջի
վրդապետացն: և նք առեալ զողորմութիս. ուրև լի
նէր գերի և բանտ արգել և անդերժանելի պար
տատեր՝ և այլ պակասաւոր՝ նախ նց տային և
ազատէին. և յայսմանէ պատճառէ բազում
գերիք, և բանտ արգելք, և պարտատեարք,
սկզատեցան. և ապա զմնացեալն տային իւրեանց
ուսող զօրականացն սակա տուգանին իւրեանց:

Եւ այսպիսեաւ շրջագայութե մինչև ՚ի չորս
և ՚ի հինգ ամիսս վճարեցին գերեքհարիւր թու
մանն. և ինքեանք գերժան ՚ի կապանաց ողոր
մութեն Մ, Ե և տրօք քրիստոնեից:

Իսկ շահուող բէկն. որ մատնեաց զմօտես
վարդապետն յետ սակաւուց աւուրց սպանեալ
եղև սրով ՚ի զօրականաց շահին. ընկալեալ
աստէն զհատուցումն վաստակոց իւրոց զսա
տակումն մտրմնոյ. և անդէն զկորուստն հո
գւոյ և զտանջանսն յաւխտենից:

Պատմութե նեղութեց, և վշապ. զորս կրեցին Հայ ազգաւ
քրիստոնեայքն, որք բնակեալք են ՚ի քաղաքն իւր:



Ս ԵՐ ԸՆՆ ԴՐ Դ ԿԼՐԳԻ
պատմուէն, զոր գրեցաք վն մեւքիսեթի
կթղկսին թէ գնաց նա յաշխարհն իլա
խաց. արդ յորժամ է հատ նա անդր՝ և էմուտ
եդ 2 ՚ի բա

'ի քաղաքն իլով յետ անցանելոյ աւուրց ինչ՝
 'ի նունոյ իլովէ քաղաքէ ոմն աբեղայ . որոյ
 անուանն էր նիկոլայոս . զորս ոմանս միջնորդս
 և բարեխօսս արարեալ առաքեաց առ մելքի
 սէթ կթղկոսն զի օրհնեսցէ զինքն եպիսկոպոս
 ազգին հայոց . որք կան իլով քաղաքին և որոց
 շուրջ զնովաւ . վն զի 'ի ժամանակին յայն
 միկ ոչ գոյր եպիպոս նց : Աւ միջնորդացն մա
 տուցեալ առ կթղկոսն ընծայեցին զոսկիս բա
 զումս . և խնդրեցին առնել զնիկոլայոս աբե
 ղայն եպիպոս . և կթղկոսին տեսանելով զյո
 լովուէն առ ձեռն պատրաստ ոսկւոյն . նաև ակն
 կալուծի ևս յոլովից ոսկւոյ առ յապայն . հա
 ճեցաւ օրհնել զնիկոլայոսն եպիպոս իլովայ :

Իսկ քահանայք և ժողովուրդք քաղաքին՝
 իշխանք և ռամիկք՝ 'ի վաղուց ժամանակաց գի
 տելով զորպիսուծի վարուց նիկոլայի աբեղայ
 ին . գումարեցան միահաղոյն ամենեքեան , և ե
 եկալ առ կթղկոսն ծանուցին զբանս իւրեանց
 նմա՝ և տասցին . մեք գիտեմք զդա , և զորպիսուէ
 վարուց դորա . վնորոյ ոչ է գա մեզ ընդունե
 լի . մի զդա՝ այլ զայլոք արասցես մեզ զեպիպոս :

Իսկ կթղկոսն քամահեալ անարգեաց զժողո
 վուրդն և զբանս նց . և արտաքսեալ յերեսաց
 իւրոց յետս դարձոյց զնս՝ բայց ժողովուրդքն՝
 ոչ թուլացան 'ի բանից իւրեանց՝ այլ 'ի բազում
 աւուրս՝ բազմօք բանիւք խօսեցան ընդ կթղ
 կոսին . և ոչ թողին օրհնել զնիկոլայն եպիպոս :

Վրա կթղկոսն ելեալ 'ի քաղաքէն գնաց 'ի
 վանքն , որ անուամբ սրբուհւոյ Մաթնին կայ
 շինեալ արտաքոյ քաղաքին . զոր լովացիք հաճ
 կատար Մաթնին ասեն . և անդէն առանց գի
 տելոյ ժողովուրդոցն իմէջ գեղերի սկսաւ օրհ
 նել զնիկոլ աբեղայն եպիպոս : որում իրազ
 դամ

գած լեալ Ժողովրդականաց քաղաքին առ Ժա մայն՝ ի նոյնում գիշերոյ իշխանք և ռամիկք վաղվաղակի գումարեցան՝ ի միասին և ը փոքր գուռն քաղաքին ելեալ փութանակի հասին ՚ի տեղին . աղաղակէին առ կլթղկոսն մի՝ օրհ նէր զդա՝ և մի մատներ զմեզ և զեկեղեցիս մեր ՚ի ձեռս անիրաւիդ այդմիկ . զի մեք գիտեմք զդա՝ և զորպիսութի վարուց դորա . վստորոյ ոչ է մեզ ընդունելի: Եւ կլթղկոսն նստեալ ի վր աթոռոյ օրհնէր զնիկօլ աբեղայն եպիսկոպոս՝ և խաչուէն որ ՚ի ձեռին էր սաստէր Ժողովրդեանն . և զբանստգեղս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասէր նոցա . և թէպէտ ողորմելի Ժողովուրդքն ամբոխեալ և աղմկեալ յորնակի աղաղակեցին . ոչ լուաւ նց կլթղկոսն . այլ օրհնեաց զնիկօլն եպիպոս:

Եւ յետ սուղինչ աւուրց կամեցաւ մելքի սէթ կլթղկոսն ելանել ՚ի լովայ և գնալ ՚ի քաղաքն կամենից . և Ժողովուրդքն հնարեին, զի թերևս զնիկօլն ընդ կլթղկոսին ուղևորեսցեն ՚ի գնալ . իբրև խօսեցան Ժողովուրդքն ընդ նիկօլին վն գնալոյ ընդ կլթղկոսին . և նա խաբեաց զնս ցուցանելով զինքն կամայօժար ՚ի գնալն: իբրև գնացին աւուրցինչ ճանապարհ, ասաց կլթղկոսն ընդ նիկօլին . բաւական է այս քան գալն քո՝ այսուհետև խաղաղութք դարձիր ՚ի տեղին քո . և ՚ի գործ եպիպոսութեքոյ . ասաց նիկօլն քո իսկ աջօք տեսեր զի այն քան հակառակեցան քեզ՝ և ոչ հաճէին յիս . և այժմ՝ զխնդր իշխեմ՝ գնալ իմէջ նց: և այն քան հնարեաց նիկօլն . մինչ որ կլթղկոսն զգիրս բանադրանաց՝ նզովից և կապանաց գրեալ ի վր Ժողովրդեանն էտ՝ ՚ի ձեռս նիկօլայ եպիպոսին . ոպ զի թէ որք ընդդիմակայեալ հակառակեսցի .

և ոչ ընկալցի զնա՝ ի պատիւ եպկպսութե՛. լիցի
 'ի ներքոյ բանադրանց : և նիկօլին առեալ զայս
 Թուղթս և եկն 'ի լով . ասաց ժողովրդեանն .
 դուք ամբն ժողովեցարուք յաւուր կիրակեի յե
 կեղեցին՝ քանզի ունիմ խօսք ինչ խորհրդական
 հասարակապէս ասել ձեզ ամցւն : և յաւուր
 կիրակեի յորում և ժողովուրդք ժողովեալք
 էին յեկեղեցին՝ հանեալ զԹուղթն բանա
 դրանաց ետ ընթեռնուլ 'ի լուր ամցւն . իբրև
 զայն տեսին և լուան ամբն ժողովուրդքն
 տրտմեալ մեծաւ սգով՝ և վհատեցելով սրտիւ
 ապուշ մնացին . և ասիբերան եղեալ լուեցին :
 Իսկ կթղկան մելքիսեթ՝ որ գնայր՝ ի կամենից .
 իբրև էհաս անդր . զկնի սուղինչ աւուրց
 հեւանդացաւ՝ որ և մեռաւ իսկ յաղուհացից
 պահոցն՝ ի ծաղկազարդի շաբաթօրն , 'ի տօնի
 յարութե դազարու . 'ի մերում Թոճականին
 հաղար և եօթանասուն հինգ՝ և անդէն Թաղե
 ցաւ : } Ետ այսոցիկ զկնի անցելոց աւուրց և ա
 մաց ինչդէպեղև նիկօլայի եպկպսին գալ 'ի քա
 դաքն կամէնից . և 'ի նունոյ քաղաքէն զոմն սար
 կաւազ որոյ անունն էր խաչկօ օրհնեաց արե
 դայ . փոխեաց զանունն նր և կոչեաց օնփրիոս :

Եւ կեսարացի գրիգոր վրդւպտն որ տոճեալ
 էր զգաւազան վրդւպտական մօսէսի կթղկսին .
 էր այր երևելի . զի վարուքն կարի պարկեշտ
 էր և չորակաց՝ և իմաստութէն փարթամ ,
 բանիբուն և յոյժ հանձարեղ . վն որոյ անոճա
 նի էր նա իմէջ աշխարհի՝ որ ամ աշխարհ կա
 խեալ կային զնմանէ . և եղև այսորիկ գրիգոր
 վարդւպիս յաւուրս յայտոսիկ գալ յաշխարհն
 իլախաց . և նախ էմուտ 'ի քաղաքն կամէնից .
 անդ 'ի կամէնից էր և նիկօլ եպկպսն . և կամե
 ցան նիկօլ եպկպսն և այլք ոմանք զնորոնծայ
 արե .

աբեղայն զօնօփրիոս արտաքս բերել ՚ի քառաս
 նից : վնորոյ և եկեալ առ գրիգոր վրդայտն մե
 ծարանօք հրաւիրէին գալ ՚ի միւսեկեղեցին .
 յորում զպատարագն մատուցանելոց էր նորըն
 ծայն . և նորընծայն դեռ ևս ոչ էր լիով պահեալ
 զքառասունսն՝ քանզի տամնէ հինգ աւուրօր հ
 նեալէր՝ զոր կամէին արտաքս բերել . վնորոյ ա
 սաց վարդայտն՝ որովհետև ոչ է լցեալ զթիւ
 քառասուն աւուրն . ոչ է պարտ հանել ՚ի քա
 ռասնիցն . այլ պարտէ լիով պահել զքառաս
 սունսն ըստ աւանդութե հայաստանեայց եկե
 ղեցւոց՝ և կանօնաց հայրապետաց մերոց . և
 ապա հրաման է նորընծային մատուցանել զպա
 տարագ և արտաքս ելանել ՚ի քառասնից . վն
 որոյ և նոքա լուեցին զայն շաբաթն և ոչ բերին
 արտաքս զնորընծայն : Աւ ՚ի գալ միւսում կի
 ռակէին կամեցան նիկօն և այլք արտաքս բե
 րել զնորընծայն . վնորոյ ՚ի շաբաթօջն աւ
 ուր միւսանգամ եկեալ հրաւիրեցին զվարդա
 պետն . և վարդայտն ոչ գնաց , այլ ասաց խօսքն
 մէկ կու լինի : իսկ նոքա ոչ եղեն ունկնդիր
 բանից վարդայտին , և ոչ համբերեցին . այլ
 գնացին ՚ի յայնմ կիրակէին արտաքս բերին
 զնորընծայն . որ մատոյց զպատարագս . և այս
 կիրակէս՝ յորում զպատարագս մատոյց նորըն
 ծայն . դեռ քանակերկու օր էր նր , որ քառաս
 սունք էր պահեալ :

Մյլև եպիպանսնիկօլ արար յոյժ զանդուզն
 և զանպատշաճ զգործ ՚ի կերակէիս յայմիկ յո
 բում զպատարագն մատուցին . քանզի եկե
 ղեցւոյն այնմիկ յորում էր վարդայտն զդուռն
 փակեաց և զբանալին առ ինքն կալուա : Այլ
 այնմ գործոյ յոյժ վշտացաւ վրդայտն՝ վնորոյ
 ասաց՝ այն մարդն անիծեալ լինի , որ այսօր

գնայ յայն եկեղեցին : և եպկպան յետ կատարելոյ պատարագին , և արտաքս բերելոյ զնոր ընծայն . զայնմ՝ եկեղեցւոյ զդուռն ևս փակեաց . և եղեն փակեալք երկուց ևս եկեղեցեաց դրունքն : և եին ուուրք աւագ տօներոյն՝ որ զկնինունոյ կիրակէին հետագայ յերկու շաբաթոջ աւուրն դաւթի մարդարէին և յակօբայ Տն եղբօրն էր տօն , և այլ ըստ կարգի . և մնացին այսօրիկ աւուրքս եկեղեցիքն փակեալք առանց ժամի և պատարագի :

Վի՛ր այսոցիկ յաւել նիկօյն այլևս զնենգութի գործել առ վարդապան , և վշտացուցանել զնա . վնզի գնայ առ վօյթն կամէնից քաղաքին , որ՛ի մեծ է իշխանէն վերակացու էր կարգեալ կամէնից քաղաքին , որոյ անունն էր լուկաշ , խօսեցաւ եպկպան ընդ նմա և հաւանեցոյց զնա՝ զի արդելցէ զվարդապան , և մի թողցէ գնալ՛ի լով և կամ յայլ քաղաքս , այլ՛ի կամէնից քաղաքէն դարձուսցէ զնա , յետ դառնալ ընդիւր եկեալ ճանապարհն և գնալ յայլ աշխարհ : Վ սորոյ և լուկաշ անուամբ վօյթն առաքեաց զպատդամն առ վարդապետն ասելով . մեծ իշխանն մեր թուխթ է ուղարկեալ մեզ՝ թէ այդ վրդապետ , որ՛ի թուրքի աշխարհէն եկեալ է չառուս է եղեր , հրամանակայ որ՛ի քաղաքէ դելանէ . մի թողուք , որ երթայ , թէ ոչ ձեր գլուխն կերթայ : և այսպիսեօք բանիւք արդելցին՛ի գնալոյ զվրդապան , և վարդապան կայր անդէն իբրև զդիպահոջ : Մպա արք ոմանք բարեպաշտօնք՛ի ժողովրդոց քաղաքին մատեան առ վօյթն և ծանուցին զանմեղութի վարդապանին , ապա թէ հրաման եղև վն վարդապանին զի ելեալ գնասցէ ոչ թէ իլով՝ այլ գէպ՛ի յետ ընդ որ և եկեալն էր :
և վար

և վարդապետն ելեալ 'ի կամէնիցոյ և եկն 'ի բուղդան և 'ի յուռուժի, և 'ի ճանապարհէն գրեաց զգիր բանադրանաց նգովից և կապանաց ի վր'ն հիօլային՝ և առաքեաց 'ի լով. և նի կօն ոչինչ հոգաց 'ի կողմանէ բանադրանացն, այլ կայր 'ի կարգի իւրում և 'ի քահանայագործութե : Բայց քահանայքն և ժողովուրդքն՝ այնք որք յառաջմէ ներհակ էին նիօլին, 'ի բերան առեալ խօսէին, նաև յերեսաց ընդդէմ բերէին նմա, նաև ոմանք ոմանք ներհականային ևս, և օրաւուր զօրանային ներհակքն ի վր'ն հիօլին : Եւ յլև գրիգոր վարդապետն, ամ որպիսութի անցունածոցս այսոցիկ, այլև զանուղղայ վարս նիօլին թղթով ծանոյց մօսէսի կթիկսին սբոյ Նջմիածնի, և խնդրեաց 'ի նմանէ զի և նա բարձու հրամանաւ սրբոյ Նջմիածնի և կթիկսականաւ իշխանութիւն բանադրեսցէ զնիօլեպկան, և մօսէս կթիկսն ևս գրեաց զգիր բանադրանաց, և առաքեաց ի վր'ն հիօլայի եպկպսին : և այսու պատճառաւ առաւել ևս զօրացան ներհակքն ի վր'ն հիօլին և 'ի ջմարդի ունէին զնա :

Եւ պա ոմանք 'ի ժողովրդականացն հարցունն արարին ընդ նիօլին՝ թէ ընդէր ոչ գնաս առ գրիգոր վարդապետն և առնուս զարձակումն 'ի նորին կապանացն, և նա պատճառեաց թէ ոչ ունիմ զթոշակ ճանապարհի, և ժողովիքն ժողովեցին զերես հազար դուռուշս և ետուն նմա 'ի թոշակ ճանապարհի : Եւ յսուհեակ եպկպոսն, եթէ յիւրոց ինչ մտածութեց, և եթէ 'ի սաղրելոյ յիւրոց բարեկամացն, և թէ 'ի հարկելոյ ժողովրդոցն, ելեալ 'ի լովայ գնաց 'ի կողմանս կոստանդնուպօլսի, և կեսարիոյ զի թերևս յուրեք գտեալ զգրիգոր վարդապետն

տաղէ մեղայ և առցէ զարձակումն 'ի նորին կապանացն: Ալ գալով եկեալ է՛հաս 'ի քաղաքն քուրսայ, պատահեցաւ զի յաւուրսն յայնոսեկանդէր և խարբերդացի արիստակէս վարդապետն, արդ' նոյս արիստակէս վարդապետ և այն կէսարացի գրեգոր վարդապետն, ունէին ընդ մի մեանս զոխս նախանձու յոյժ սաստիկ: Ալ թէ զինչէր պատճառ նախանձու և ոխակալութե սոցին, բազմաւ ժամանակաւ որոնեցի և զՏաւաստին ոչ գտի, և զանՏաւաստին ոչ գրեցի: Եւ 'ի պատճառէ այսմ նախանձու բազմօք բանիք և պէսպիսեաւ կերպիւ խօսեցաւ արիստակէս վրդապետն ը նիկողայի եպկպսին, և արգել զնա 'ի գնալոյ առ գրեգոր վարդապետն. երբեմն ասէր, դու եպկպս ես և նա վարդապետ, չունի զիչխանութի ի վրքո. երբեմն ասէր, 'ի զուրկ 'ի նախանձու է բանադրեալ զքեզ, երբեմն ասէր, և ես վրդապետ եմ իբրև զնա ես արձակեմ զքեզ 'ի կապանաց: Եւ այլ բազմաւ կերպիւ խօսեցաւ և ոչ եթող գնալ 'ի կեսարիայ առ գրեգոր վարդապետն: Կոչուհետև նիկոյն ինքն ոչ գնաց՝ այլ գրեաց զթուղթ խնդրանաց և աղերսանաց առ գրեգոր վարդապետն, թէ մինչ 'ի քուրսայ եկի, և աստէն Տիւանդացայ և անկեալ կամ 'ի մոՏիճս. վնորոյ ոչ կարեմ գալ, խնդրեմ զի բարձրես յինէն զբանադրանսն և արձակեսցես 'ի կոպանաց, և առաքեսցես ինձ և ժողովրդեանս զթուղթ օրհնութե, զի թերևս աղօթիք և օրհնութիք բով աստի դարձայց և ողջութիք Տասից 'ի տեղին իմ: Դսկ վարդապետն 'ի տեսանէն զգիրն անկեղծիք մտօք Տաւաստաց խօսից եպկպսին իբրև ճշմարտից խօսից, գրեաց զթուղթ արձակման և օրհնութե եպկպսին, այլև զգիր օրհնութե լովայ քաղաքին և առաքեաց

քեաց առնիկոյն, որ՝ ի բուրսայ եր. և նիկոյն առեալ զԹուղԹսն զայնոսիկ դարձաւ. և գնացեալ է՛հաս՝ ի լով: և լովացիք եբրեւտեսին ըզԹուղԹսն գրեգորի վարդապետն, ուրախացան և միաբանեցան լը եպիսկոսին: Եւսկ գրեգոր վարդապետն՝ ի ձեռն ճանապարհորդաց և յարանց գիտողաց, հաւատեալ իվր է՛հաս Թէ նիկոյ եպիպսն, յորժամ եկեալէ՝ ի բուրսայ ոչ հեանդացեալէ և ոչ տկարացեալ այլ խորհրդակցուԹք արեստակէսի վարդապետն զկայ առեալ կացեալ է՝ ի բուրսայ, և հնարիւք և պատրոզականօք բանիւք արձակման զԹուղԹ առեալ է և գնացեալ՝ ի տեղի իւր: Եւ իվր այսմ խաբէութեա՛ զոր արարեալէ եպիպսն ընդ վարդապետն՝ կարի վշտացեալէ վարդապետն, և զամ խաբէութի գործոց նորա գրով ծանուցեալէ լովացոց, այլե գրեալէ Թէ զնոյն առաջին նզովքն և բանադրանքն տակաւին կայ իվր այդմ եպիպսիդ, վն որոյ և լովացիք յետս կացին յեպիպսէն, և ոչ ընդունէին զնա. և անկաւ հակառակուԹի իմէջ եպիպսին և ժողովրդոցն յոյժ սաստիկ:

Եւ մնացին այսպիսեալ հակառակուԹք մին չև հասին՝ ի Թուռականն մեր հազարեւօԹանա սունեկինն. յորում ժամանակի առաքեաց մօսէս կթղկսն զմեծ աշակերտն իւր, զկեսարացի խաջատուր վրդապետն վն նուիրակուԹե սրբոյ Եջ միածնի յաշխարհն արեւմտական՝ յասորեստան և՝ ի հռոմաստան: Եւ էր խաջատուր վարդապետն այր հեզ և հանդարտ և քաղցրաբարոյ, ոչ անիմաստ և անբան. այլ իմաստուն և բանի բուն, որ լոկ տեսուԹք միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վն զնա կարգեցին նուր բակ: և խաջատուր վարդապետն անցեալ զամե
նիւք

նիւք տեղեօք եկեալ է հաս'ի կեսարիայ , և անդ պատահեցաւ մեծ ի վարդապետն գրիգորի , և գրիգոր վարդապետն զբազում բանս հրամայած կանս պատուհրեաց խաչատրոյ վարդապետին՝ Թէ'ի հասանին քո'ի լով մի գուցէ Թէ ընկալցիս զնիկօջն'ի կարգ և'ի պատիւ եպկպու թէ : Եւ խաչատուր վրդապետն նու՛ն հրակեալ զամենեւան տեղիս եկեալ է հաս'ի լով , առ որ մատուցեալ ժողովրդականացն սկսան բազմօրինակ և կսկծալի զամբաստանուի առնել զնիկօջայէն վսպէս պիտից անցունածոց և գործոց , որ'ի նման է տեսեալ է ին և կրեալ : Իսկ վարդապետն ըստ իւրում քաղցու և հեզի բնութենն ոչ առ երեսս յանդիմանէր զնիկօջն , այլ մեղմ' և խրատօրէն ինքն և նա մի այն խօսէր ընդ'նմա՝ ըստ պատուի բանին Տն Թէ ասասջիր նմա յորժամ դու և նա միայն իցէք : Իսկ նիկօջն բնաւ ոչինչ հոգայր յամէ , զի ոչ'ի վարդապետն ամաչէր , և ոչ'ի ժողովրդոց ամբաստանութեն երկնչէր , այլ իբրև զանշարժ լեառն արձանացեալ կայր'ի կամս իւր :

Եւ եղև երբեմն յաւուր կիրակէի աւետարտն կարդալ , և նիկօջ եպկպոսն հրամայեաց իւրում արեղային Թէ գնա կարդա , իսկ խաչատուր վարդապետն ասաց թող նա չկարդա՝ այլ այն ոմն , իսկ նիկօջն ոչ անսաց բանից վարդապետին այլ իւրում արեղային ետ կարդալ զաւետարանն , իբրև ետես վարդապետն Թէ իմէջ քահանայիցն և ժողովրդոցն յայտնի և համարձակ քամահեաց զբանս իւր , և'ի չմարդի ունի զինքն , դարձաւ առ ժողովուրդն և ասաց , այն մարդն անիծեալ լինի , որ սորայետևն զժուրն դնէ : զայս ասաց վարդապետն , և ելեալ յեկեղեցւոյն գնաց'ի տեղին իւր'ի վերնատունն ,

տունն ; Եւ ընկնէր՝ ի հասարակ աւուրսն : Իսկ
 Ժողովուրդքն իբրև զայն լուան և տեսին՝ ին
 քեանք ևս ամբն միահաղոյն գրոհ տուեալ
 ելին անտաքս յեկեղեցւոյն , և մնացին յեկեղե
 ցին նիկոզն և այլք ոմանք , և զկնի արձակելոյ
 Ժամին նորա ևս գնացին ՚ի տեղիս Եւրեանց :
 Իսկ ՚ի Ժողովրդոցն Հայոց՝ դատաւորքն և Եւ
 խանքն եկին ՚ի նոյն ցերեկին , և փակեցին
 զգուռնն եկեղեցւոյն և առին յինքեանս զբա
 նալին՝ և մնաց եկեղեցին փակեալ աւուրս ինչ :
 Իսկ դատաւորքն և Եւխանքն Հայոց խօսե
 ցան ընդ վարդապետն խաչատրոյ , և հաւանե
 ցուցին զնա՝ զի նստցի յաթոռ և կարդեսցէ յա
 տեան դատաստանի , առ ի դատել զնիկոզն վա
 յանդգնութեն , և այլևս անկարգութեն և յան
 ցանացն : Իբրև իմացաւ եպիսկոսն զգործս զայս
 եբեր առ ինքն զերկուս ոմանս՝ ՚ի վկայիցն Փռն
 կաց , որ իմէջ ամի դատաստանի նորա գան
 և ասն զվկայութի : և ըստ նոցին վկայութեցն
 դատաւորքն տան զվճիռ դատաստանին , քան
 զի զայսպիսի կարգս ունին աշխարհն իլախաց
 իմէջ Եւրեանց : Ի յօսեցաւ նիկոզն ընդ վկայիցն
 այնոցիկ , և հաճեցոյց զկամս նոց զի յորժամ
 կոչեսցէ զնս , և նորա անպապաղ եկեսցեն ՚ի կոչ
 նր : և յաւուր դատաստանին յորում նստաւ
 վարդապետն ՚ի դատաստան , նստան ընդ նմա և
 Եւխանքն և դատաւորքն Հայոց՝ կոչեցին և զնի
 կոզն առ ի դատել , բայց նիկոզն յառաջագոյն
 զվկայսն զայնոսիկ բերեալէր ՚ի տունն յայն ,
 և ՚ի տեղի թաքուն կացուցեալէր զնս առանց
 գիտելոյ արանցն Հայոց : Իբրև կոչեցին զնի
 կոզն ՚ի ներքս՝ և նա եկեալ հրամայեաց Եւրոց
 սպասաւորացն դնել զաթոռն Եւր ՚ի հանապա
 զորդեան տեղին Եւր , զի անդ նստցի ինքն , իսկ
 Եւխանքն

Իշխանքն ասացին. առ նիկոյն՝ զինչ ուռնես, զի նստիս՝ զի՛ ՚ի դատել կոչեցեալեն ք.բեզ. կաց՝ ՚ի յոտին այդր: Առ նիկոյն ասաց՝ և ով է դատողն իմ, անեն իշխանքն, եկեալ նու՛րբակս, զոր տեսանես, և դատաւորքս, որք ասական: Յայն ժամ բարձու ձայնիւ գոչեաց նիկոյն առ թաքուցեալ վկայսն, թէ եկայք արտաքս, և նորա առ ժամայն եկին, և կացին իմէջ հանդիսին, առ որս ասաց նիկոյն, վն՛ ԱՅ՝ ձերովք աջօք տեսէք՝ և լերուք ինձ վկայք՝ զի ես եպկպո եմ, և սորա աշխարհականք գոլով ժողովեալք են առ՝ ՚ի դատել զիս. և վարդապետ այս որ՝ ՚ի թուրքաց աշխարհէն եկեալ է աստ. ՚ի ճաշուսու թի եկեալէ յայս երկիրս՝ ՚ի գիտել զամենայն որ պիտու թի մերոյ աշխարհին. և սա այժմ՝ սորօք նստեալեն առ՝ ՚ի դատել զիս: Առ վկայքն ասեն, զորինչ մերովք աջօք տեսաք սմին վկայեմք, և ուրև տանիս զմեզ տամք զվկայու թիս: յայն ժամ ԹՎՔՆ ժողովեալքն՝ ՚ի Տայոց եթէք ասա նայք և եթէ իշխանք և դատաւորք, եղեն պակուցեալք, և զարհուրեալք յերկեղէն Փռան կաց. և սկսան մի մի ելանել և փախչել, և վարդապետն ևս ելեալ գնաց ՚ի տեղի եւր:

Օ կնի այսոցիկ նիկոյ եպկպսն սկսաւ ստու թի և կեղծաւորութիւն առաքել միջնորդս, և պատգամաւորս առ վարդապետն, և առ քահանայսն, և առ իշխանսն վն հաշտութե ասելով. բաւական է այսքան հակառակութիւն ձեր՝ և ոյլ մի ևս հակառակիք՝ և մի փակէք զեկեղեցին. այլ բացէք զդուռնս եկեղեցւոյն. իսկ լովացիք ԹՎՔՆ գիտելով զխարդախութիւնն ոչ հաւատային նմա: Ռայց վարդապետն նկատեալ եւրովք մտօքն տես զի ցորքան գրգռին ՚ի խուովութիւն, և զվէճ և զպայքար դնեն ընդ եպիս

Եպկպսին, առաւել և բազում յորդեալ յա
 ռաջագայի՝ ի նմանէ գործ չարութե. վն որոյ
 յաղագս վտանկիս այսմիկ յակամակամօք կա
 մեցաւ առնել զհաշտութի ընդ եպկպսին, զոր
 և խօսեցաւ ընդ քահանայիցն, և ընդ իշխա
 նացն, զի արասցեն զհաշտութի՝ և նորա ոչ
 կամեցան. ասաց վարդապետն, վն ապագայից
 չարեացն, որ հանդերձեալ է գալ յեպկպսեդ,
 երկնչիմ ես և կասկած կրեմ, թէ մի գուցէ՝ ի
 վերջ յամառութես մերոյ մեծագոյն ինչ վնաս
 կրիցեմք՝ ի դմանէ: Ատուն զպատասխանի,
 ամենևնիմք մի երկիցես վարդապետ զի մէք ունիմք
 զբիւր՝ նոմոս յառաջնոց և՛ ի վաղեմեաց թիւրջ՝
 զի ցորքան պատահիցի դատաստան երիք ինչ
 գործոյ, մեր հայոց ազգի դատաւորքն արաս
 ցեն զդատաստանս հայոց. և ոչ թէ դատաւ
 որք ազգին Ֆռանկաց, այլև ունիմք զապրանս
 ընդ ապրանաց նոցա, և զխելս ընդ խելաց նոցա
 և դու զի ևս երկնչիս: Աւ վարդապետն ոչ բնաւ
 հաճեցաւ ՚ի բանսս յայտոսիկ, այլ երբեմն
 հասարակ, և երբեմն առանձին խօսեր ընդ
 նոսա գալ ՚ի հաշտութի, և նորա ոչ կամեցան.
 յայնմ հետէ կալեալ վարդապետին իւրով ձեռ
 ամբն զփողպատն իւր, թօթափելով ասաց,
 անպարտեմ ես ՚ի մեղադրութենէ գորին
 դուք գիտասջիք:

Իսկ նիկօլ եպկպսն իբրև ետես թէ միջնոր
 դութի իւրոց սուաքելոց ստոց և կեղծաւորաց
 պատգամաւորացն լովացիք ոչ գան ՚ի հաշտու
 թի, և ոչ բանան զեկեղեցին. այնուհետև գնաց
 առ եկեղեցականս Ֆռանկաց՝ որք կան իմեջ
 քաղաքին լովայ, և մանաւանդ առ այնոսիկ
 որք ՚ի կարգէն թո վայիթայ են, միաբանեցաւ
 ընդ նոսա՝ և ետղձեռագիր անլուծանելի: Աս
 նիկօ

Նեկոյայոս եպիպոս Տայոց՝ իմովս կաճաւ միտ բանեցայ ընդ եկեղեցւոյն հռօմայ . և մտի 'ի հնազանդութի՛ն փափին ամենիւք հեռե ելովքն իմովք կատարել զամսն հրամանս որք առ 'ի նմանէ : Վլի այսորիկ յարեաւ գլխաւորն եղվայիթայ կարգին , էառ և զայլևս եկեղեցա կանս յայլոց ևս կարգացն , առին ընդ ինքեանս և զնեկոյ եպիպոսն Տայոց , և տարան առ արքեպկ պոսն իւրեանց . և նա սորօք առաքեաց զպատգամսն առ իշխան քաղաքին՝ զի հրամայեսցէ ժողովրդոցն Տայոց , կամ հնազանդեցին եպիպոսն իւրեանց , և բացցեն զեկեղեցին . և կամ եկեալ յատեան դատաստանի միմեանց յանդիման լիցին : և ըստ հրամանի արհէ եպկ պոսնն արար իշխանն , բայց ժողովուրդքն Տայոց , ոչ զեկեղեցին բացին , և ոչ 'ի դատաստան եկին . մինչև երեքանգամ այսպէս կրկնեաց իշխանն , և Տայք ոչ զեկեղեցին բացին , և ոչ 'ի դատաստան եկին :

Վպա յաւուր միում ժողովեցան բազումք եկեղեցականք յեղվայիթայ կարգէն . նա և յայլոցն ևս կարգացն . առին և զբազում տղայս 'ի դպրոցացն , գնացին առ արքեպկպոսն իւրց . առին և զկարգաւորս 'ի նմանէ . գնացին առ իշխան քաղաքին և առ դատաւորս . առին 'ի նոցանէ զգորականս և զդատաւորս լի իւրեանս . սքամքն եկին 'ի դուռն եկեղեցւոյն Տայոց՝ զոր իշխանք Տայոց փակեալ էին : Վլ առաքեցին առ իշխանս Տայոց . զի կամ ինքեանք եկեալ բացցեն զդուռն եկեղեցւոյն . և կամ զբանալին առաքեսցեն . և նորա ոչ ինքեանք եկին , և ոչ զբանալին առաքեցին : Տայն ժամ նորա որք եկեալք էին՝ հարեալ խորտակեցին ըզդուռն եկեղեցւոյն , և առեալ զնեկոյ եպիպոսն ,

մուծին յեկեղեցին . և ՚ի նա յանձնեցին զեկեղեցին ամենիւք ընչիւք . որ վրբերի առ եկեղեցի այնուհետև ելեալ զօրականացն Փռանկաց ՚ի խնդիր երիցանց և իշխանաց հայոց զի իշխանականաւ բռնութիւնաւ արկանիցեն ՚ի բանորս և ՚ի տուգանս և նքովախուցեալք թաքեան և ոչ բնաւ երևեցան : Եւ իմէջ եկեղեցւոյն կայր գանձատուն , և ՚ի նմա գիրք և անօթք յոյժ բազումք . գրեանք աւելի քան զհազար փերթ . ամբն ընտիրք և պատուհանք և վարդապետականք . յորս էին ոսկետուփ ամաշուկայք , և աւետարանք , և շարակնոցք , և այլք գրեանք բազումք : Եւ յնպէս և անօթք , սկիհք , և խաչք , քրոջք և բուրվարք , կանթեղք և աշտանակք , շուրջառք և եմփորոնք , թագք և վակասք , սքր և շանք և սրբոց նշխարք . և որ ՚ի հարց և ՚ի հաւուց ՚ի վաղեմի և ՚ի նախկին թգրոուն էին մուրհակք և նոմոսք . և այլևս ինչ յոյժ բազում . սորա ամբն իմէջ եկեղեցւոյն էին ՚ի նոյն գանձատանն . զորս գրաւեաց ընդ իւրով իշխանութեն նիկօշն : Եւ միայն զայս եկեղեցիս այլև զայլ եկեղեցիսն և զվանորայսն , որք ՚ի քաղաքին . և որք շուրջ զքաղաքաւն էին . և զամենաւանդս նց . զտունս և զանդաստանս . զաղօրիս և զխանութս , կալաւ եպիպոսն ընդ իւրով իշխանութիւն ասելով . ես եմ եպիպոս , իմ են եկեղեցիք ամենեքեանք և աւանդք իւրեանց : Իսկ խաչատուր վարդապետն և ամենայն ժողովուրդքն հայոց որք ՚ի լով կային մնացին արտաքոյ եկեղեցւոյ . քանզի թէ մտան էին յեկեղեցին հարկէր նց մտանել ընդ իշխանութիւն փափին . և ընդունիլ զնորին դաւանութիւն . այլ և պարտէր հնազանդիլ նիկօշայի եպիպոսին . և լովացիք ոչ ախորժ էին զայսօտեկ . վնորոյ եղեն

վարանեալք և տարակուսեալք՝ և ոչ կարէին
 գտանել զձարինչ . և մնացին ժողովրդքն հայ
 ոց որք ՚ի լով քաղաքին էին առանց եկեղեցւոյ :
 Այդև զի վարդապետն խաչատուր ել ՚ի քաղա
 քէն . և գնաց ՚ի սուրբ խաչ կոչեցեալ վանքն .
 իսկ ՚ի ժողովրդոցն ովոք որ կամէր գնալ առ
 նա՝ համարձակու թք գնայր և գայր . և ահա
 յաւուր միում եկին բազումք զինունորք և զօ
 բականք զինուք և պատրաստու թք . և շուրջա
 նակի պատեցին զվանսն . և ՚ի հարցանելն տե
 սողացն պատասխանէին զինունորքն թէ ՚ի
 թուրքաց աշխարհէն չաշուտ է եկեալ՝ և ահա
 ՚ի յայտ տեղս է, կամիմք ըմբռնել զնա : իբրև
 սուղ ինչ ժամս էանց իվր . և տեսին , զի ահա
 եկն նիկոլ եպիպոսն իւրովք սպասաւորօքն և
 փառօք : և ՚ի մերձենալն իւր առ զինունորսն
 հարցանէր ցն՝ թէ վն էր ժողովեալ էք ասա .
 ասեն զինունորքն ՚ի թուրքաց աշխարհէն չա
 շուտ եկեալ է աստ՝ կամիմք ըմբռնել զնա : առ
 որս ասաց նիկոլ՝ ոչ է մարթ և պատշաճ ըմբռ
 նելն ձեր զնա . այլ դուք դարձարուք և գնա
 ցէք ՚ի տեղիս ձեր . և ես գնացեալ տեսանեմ
 և խօսիմ ընդ նմա . և զինունորքն ամենեքեան
 իսկոյն ցրուեցան և գնացին : իբրև այսպէղև
 զրաւ գործոյն . որոյ վն կարծեցեալ եղև ՚ի
 ժողովրդոցն հայոց՝ թէ ՚ի հնարից եպիպոսին
 եկեալ էին զինունորքն վասն երկեցուցանելոյ
 զվարդապետն : Իսկ եպիսկոպոսն գնաց առ վար
 դապետն հառ զնա անտի . և հբեր զնա ընդ
 իւր ՚ի քաղաքն : Այլ մինչ էր վարդապետն ՚ի քա
 ղաքին . հանապազ գային առ նա արեղայք և
 այլք ոմանք ՚ի ֆռանկաց . և առնէին զհակա
 ճառութի ընդ վարդապետին իվր երկու բնուե ,
 և մէկ բնութե . և իբրև զևտիքէականաւ
 Տեղի

Տերձուճած ոյն խոտորեալ զՏայս. և ՚ի տգ խոու
 Թէ և յիմարու Թէ մուրդեալ ՚ի սկ վարդ-պտին
 մտածելով զգործս անցելոյն. և խորհելով զա
 պառնւոյն. և տեսանելով զներկային. գիտաց
 զի ոչ գոյին չ օգուտ՝ այլ զուրաշխատանք և ի
 նանիր վաստակ. վնորոյ ելեալ ՚ի լովայ՝ և գնաց
 զճանապարհս իւր մինչև եկեալ է հաս յ Վեհօ
 ծին առ մօսէս կթղկոսն. և առ այլ վարդ-պտան.
 որք ամբն ցուազնիւ սրտիւ՝ արտասուճաթո
 րօք աջօք սգային վն ազգին Տայոց՝ որք էին ՚ի
 լով քաղաքին՝ Թէ զիարդ լինի փրկու Թի նց :

Եւ ոպ Տրն Վն ասաց՝ նախ զՏզորն կապի
 ցէ և ապա զտունն նր աւար հարկանեցէ այս
 պէս արար և նիկօլ եպկպսն. զի յետ գնալոյ
 վարդ-պտին. ոպ զգազանն տեսլեանն դանիէ
 լի սկաւ զամսն ժողովուրդսն և զգանձս և
 զամսն ինչս եկեղեցւոյն ուտել և մանրել և զմնա
 ցորդսն առ ոտս արկանել : Վանզի ոպ ՚ի ժա
 մանակս կռապաշտից Թղւրցն ունէին քրիստո
 նեայքն զՏալածանս՝ այսպէս և յայսմ ժամանա
 կի եղև իվերայ աղգին Տայոց բնակելոցն ՚ի լով
 քաղաքին. քանզի կարի զօրու Թք զօրացաւ
 նիկօլ եպկպսն և բռնացաւ իվր ժողովրդեանն
 Տայոց : կալնոյր զերիցունս առ ովք և գտա
 նէր սուղինչ մնաս և արկանէր ՚ի բանտ՝ և առ
 նոյր ՚ի նոցանէ զտուգանս զերիս հարիւր և չորս
 հարիւր զուռուչս. սոյնպէս և զիշխանս, որք
 և դատաւ որք էին կարգեալք՝ կարեալ տու
 գանէր : Եւ հասարակ զամսն ժողովուրդսն
 վտանկէր. ոչ Թողոյր ՚ի Թաղել զմեռեալսն
 վասն գանձի. և յորժամ առնոյր զգանձս ըստ
 հաճոյից կամաց իւրոց. ապա տայր զՏրաման Թա
 դելոյ և զտեղի գերեզմանի առ ի Թաղել. և յետ
 Թողելոյն յորժամ գտապանաբարն իվր գերեզմա
 նին

նին կամէին ձգել յայնմանէ պատճառէ միւսանգամ առնոյր զգանձս. և ապա զհրաման տայր ձգել զքարն: Սոյն պատճառի վն. և պսակք և մկրտութիք խափանեցան. զորստարեալ յայլ քաղաքս պսակէին և մկրտէին. և զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին. և զայսօսիկ առնէին՝ ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին. և յորժամ իմանայր՝ մեծացասմամբ զայրանայր. և ըմբռնէր զէրէցն և զարարող արսն բազմօք խոշտանգանօք չարչարէր՝ և զծանրագոյն տուգանս առնոյր:

Երբեմն զի զոմն երիտասարդ կամեցան պսակել՝ ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին. որոյ վստերէք քահանայք բերին զի՝ ի տան անդր արացեն զպսակն. և ծանուցեալ եղև այս եպիսկոպոսին. որոյ առաքեալ զօրականս ունել զերիցունսն և զտեարս հարսանեացն և արկանել ՚ի բանտ: սմին իրաց իրազգած եղևալ տեարց հարսանեացն և երիցանցն. առ երկիւղէն սկսան թաքչիւ. զոմն յերիցանցն եղին ՚ի մէջ սնդուկի և կոպղայեցին իբր թէ կահք և զարդք կանացի գող: և երկուքն յերիցանցն մտին իմէջ սօբային, որ շինեալէին իմէջ տանն վն հրավառուէ: Իսկ զօրականացն ՚ի յուզելն և ՚ի խնդրելն զերիցունսն գտին իմէջ սօբային. հանին զնս ՚ի սօբայէն և կապեցին ձեռս ՚ի յետս գլխիբաց և բոկոտամբ նեացեալ երեսօք և մարմնով զի մուր սօբային սևացուցեալէր զնս. և այնպ տարան զնս առաջի եպիսկոպոսին: և եպիսկոպոսն յետ բազմաց անարգանաց և սպառնայեաց էարկ զերիցունսն և զտեարս հարսանեացն ՚ի բանտ. և էառ զչորս հարիւր զուռուռ յերիցանցն. և զչորս հարիւր զուռուռ ՚ի տեարց հարսանեաց. և ապա եթող

որք գնացեալք արարին զՏարսանիսն: Աւ բազումք տղայք մեռանեին առանց մկրտութե. և բազումք տղայք կային անմկրտեալք Տնգետասան և վեշտասան ամեայ՝ և բազումք մեռեալք մնային անթաղք յամս բազումս: դնեին զմեռեալսն՝ ի մէջ փայտեայ տապանի. և ընդին զտապանսն կարով մինչև որ ժածկեր զմեռեալսն. և դնեին ՚ի ցուրտ տեղիս և պահէին. սպասելովայցելութե ՏՏ՝ և բովանդակ եօթն խորհուրդ եկեղեցւոյ և ամ՝ ժամակարգութի խափանեցաւ: և մնացին ողորմելի ժողովուրդքն իմէջ անհնարեց ներուծեց: առաւել քան զոր ՚ի ժամանակս կուսապատուութեն:

Այս ժողովուրդքն յաղագս յոքնակի ներուծեց իւրեանց բողոք բարձին ՚ի սուրբ Թոռն Աջմիածին. վնզի տէր սիմոն անուճամբ զոմն քահանայ և զերևելի այր մի աշխարհական առաքեցին առ կլթիկան տէր մօտէս՝ զի հոգասցէ, և հնարեցէ նց զփրկութի. և կլթիկան գրեաց զնամակս խոհեմականս՝ և լի իմաստութե. խոնարհ և մաղթողականաւ բանիւ առ թգլրն լէհաց և առ նորին իշխանսն. և առարք եպիսկոսն քաղաքին լովայ՝ որ յազգէն Փռանկաց՝ նաև ուռ փափն: Աւ խնդրեաց թէ ողորմեցարուք տառապելոյ ժողովրդեանն. և շնորհեցէք զեկեղեցին ինքեանց՝ և մի խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցւոյ. զոր ոչ է պատեհ առնել քահանայից ՎԻ. իբրև հասին նոմոսքս այսօրիկ ՚ի լով քաղաք. և ժողովուրդքն հայոց տարեալ մատուցին իւրաքանչիւր տեարց՝ թգլրին և ուլոց: Աւ նորա հրամայեցին թարգմանել ՚ի գիր և ՚ի բարբառ իլախաց. որոց յընթեռնուլն հաճեալ հաւատնին

նէին ամենից բանից և որպիսուէց. որոց բանից վերայ գթացաւ սիրտ Թգրին. որոյ անունն էր վլատիսլաւ. զոր և Տրամայեաց Թէ տուք զեկեղեցին Տայոց յինքեանս. բայց յեզվայի դայք լըդիմացան և ոչ Թողին՝ ասելով Թգրին. այս եկեղեցական և Տոգևորական գործ է՝ որ վերաբերի առ փափն. և առ արք եպիսկոպոսն. և նոքա պարտին Տոգալ զսա՝ որոց անկ է և պատե՛հ. և ոչ քեզ՝ որ մարմնաւոր Թգր ես. վն որոյ ոչ է քեզ պատե՛հ խառնիլ յայս գործ՝ որ է Տոգևոր: և Թգւրն վն գթալոյ՝ ի սառաւապանս ժողովրդեանն Տայոց. խընդրեաց յարք եպիպոսէն. իւրեանց տալ զեկեղեցին Տայոց. սմին և ս ընդդիմացան եզվայի դայքն, և ոչ Թողին տալ: Եւ վն առաւել գթալոյ Թգրին իվր Տայոց ինքն Թգւրն յարեաւ և գնաց յեկեղեցին Տայոց՝ զի տացէ զեկեղեցին Տայոց ինքեանս՝ ի Տայս. իբրև զայն գիտացնիկօլ եպիպոսն. իսկոյն զգեցաւ զզգետս պատարագի. և բարձեալ զՏաղորդ պատարագին իվր գլխոյ իւրոյ՝ և ելեալ եկն ընդ առաջ Թգւրին. որում ՚ի տեսանելն Թգւրին զարՏուրեցաւ՝ ի տերունականէ խորհրդոյն. և ոչ ինչ զօրեաց առնել. այլ Թողեալ զամ դարձաւ ՚ի տեղի իւր և յապարանօ:

Եպա Տարկ եղև Տայոց գնալ ՚ի Տուօմ առ փափն՝ զոր և բազմօք աղաչանօք առին զԹուղթս բարեխօսուէն՝ ի Թգրէն և յարք եպիպոսէն առ փափն. և գնացին ՚ի Տուօմ. ետունն ՚ի փափն նախ զինդրանաց Թուղթն մօտէսի կԹիկսին. և ապա զԹգրին և զարք եպիպոսին: իբրև ետեսնիկօլ եպիպոսն Թէ ժողովրդքն գնացին ՚ի Տուօմ. գնաց ինքն և ս ՚ի Տուօմ. և անդ և ս անիրաւ եզվայի դայքն ներՏակացան Տայոց՝ և ձախեցին զբանս

նց՝ որ Եւ եղև տունեալ եկեղեցին Հայոց . զորև ունայն դարձան ողորմելիք ժողովուրդքն . և եկին՝ ի լով : Բարձաւ և նիկօլ եպիսկոսն՝ ի հռօ մայ և եկն՝ ի լով : և կայր ըստ առաջնոյ կարգին վտանկելով զժողովդսն և ևս անառակու թք :

Թող զառաջինն երկիցս և երիցս ևս առաքեցին լովացիք զբաճանայս և զերեսփոխանս յԱջմիածին առ կթղկան փիլիպպոս . զի մօտէս կթղկան վախճանեալ էր . և փիլիպպոս կթղկան բազում մանգամ զանազանիւ կերպիւ ղթուղթս գրեաց՝ ի լով . և յիւրոց աշակերտաց և վարդապետաց առաքեաց ՝ ի լով . սակայն այնու ևս ոչ եղև օգտու թի ինչ Հայոց ժողովրդեանն : Եւ յԼե՛ ի լովայ քաղաքէն եկեղեցականք արք բարեպաշտօնք . որք էին արեղայք և երիցունք գրոց աշակերտք . վն այսոցիկ հալածանացս եկին յԱջմիածին՝ և անդէն բնակեալ կացին . որք էին որդիք նշանաւորաց արանց . յորոց զո մանս ձեռնադրեաց փիլիպպոս կթղկան եպիսկոս լովայ՝ և առաքեաց անդ առ ՝ ի հովունել զժողովուրդսն . սակայն և այնու ևս ոչ եղև օգտու թի ինչ ժողովրդեանն լովայ : Եւ յԼե՛ ի սոյն ժամանակի՝ ի կրգէն դօմինիկոսի պօղոս անուն ամբ վրդապետ ոմն այր իմաստուն և երևելի յազգէն Ֆռանկաց . եկն յերկիրն նախնուանայ ի մէջ ախթարամայիցն որք անդկան . և փիլիպպոս կթղկան զբազում սէր և զբարեկամութիս աւրար ընդ պօղոսին այն . վն օգտի ժողովրդեանն մերոյ և փրկութե եկեղեցւոյն լովայ : և պօղոսն այն յետ կատարման գործոյ քւրոյ կամեցաւ գնալ ՝ ի հռօմ . և գնալով զձանապարհս իւր հանդիպեցաւ ՝ ի լով քաղաք . և լովացիք ևս բազմօք աղաքանօք խնդրեցին ՝ ի պօղոսէ և զբազում մեծարանս արարին նմա . և զգանձս

376 11 ատնումն Լ'նօթոց Եկեղեցւոյն •

ևս յորովս առ 'ի Թոշակ ճանապարհի րտուռն
նա՛ա. զի Թերևս զօգնութի ինչ հնարեացէ նց
'ի դուռն փափին : և յորժամ է հաս պօղոս 'ի
հոռոմ : և մինչ նա զբանս ինչ բարեխօսութե վն
հայոց առաջարկեալէր • և խօսէր 'ի դուռն
փափին • վաղվաղակի գնաց զկնի նր և նիկօլ
Էպիկմսն 'ի հոռոմ 'ի դուռն փափին • և խա
փանեաց զօգնութին պօղոսի ձեռնատուռ
Թէ եզվայիթոցն : և այսպէ յամենից կողմանց
խափանեցաւ փրկութի և օգնութի տառա
պեալ ժողովորեան լովայ քաղաքին • և ընդ
պօղոսին գնացողքն տրտում և ունայն դար
ձան անտի : Եւ նիկօլ Էպիկմսն ևս դարձաւ 'ի
հոռոմայ և եկն 'ի լով քաղաք • և կեայր ը առաջ
նոց վարուց իւրոց • և ևս առաւել անառակ : և
զվերոյասացեալ գրեանան • և զսրբութե ա
նօթան • և զամսն աւանդս եկեղեցւոյն • զորս
վաճառեաց • և զորս կաշառս բաշխեաց • և
զորս ձեռամբ հրէից խորտակեալ արար զար
ժաթ և վաճառեաց : և զայնքան զբազում
և զանթոռէրի զհնչսն և զգանձսն ցիր և ցանս
արարեալ բնաւին վատնեաց՝ որ ոչինչ մնաց •
միայն լոկ դատարի քարեայ եկեղեցին • զի
կեայր անառակ և զեղիս և շուայտիւք վարուք՝
յայտնի և համարձակ յոչումքէ վեհերելով :
և բազումք գրեանք և անօթք 'ի նորին վաճա
ռելոցն եկին յերկիրս հայոց՝ և առ մեզ հա
սին • զորս վաճառականք գնով առեալ բերին •
որ սքանչելի էր տեսողացն :

Եւ ողորմելի ժողովուրդքն լովայ զվտանկս
և զչարհարանս բազումս կրեցին • վն զեօթն խոր
հուրդս եղեկեցւոյ խափանելոյն • և բազումք
արք երկիւղածք • և վրէժխնդիրք հայրենեաց
օրինաց մեկնեցան 'ի տանց և 'ի տեղեաց • և ե

եալք •

լեալք ՚ի բնի Ծէն հեռացան . անջատեալք յըն
տանեաց և յաղգաց . պանդուխտք , և նշդեհք
չրջագայեալք յօտար աշխարհի . և այնպիսեալ
կենօք հեծեւոյվ և յոգւոց հանելոյվ վախճանե
ցան : և զայլևս չարչարանս և զնեղութիոյ յոքնակի
կրեցին ժողովուրդքն Հայոց՝ զի հալածումն
մեծ էր ի վր նց . որք և զրկեցան յեկեղեցւոյն
իւրց՝ և յայնքանեաց ստացուածոցն . և իւրց
ևս զգանձս վատնեցին ՚ի դրուսս իշխանաց և
թգւրց . և աստ և անդ յուղեգնացութիս :
Եւ այնքան աշխատեցան երկօրին կողմանքն .
այսինքն նիկոլն և ժողովուրդքն . զի Լբան ՚ի
բազմորակի հնարագործութեց և ՚ի բազմաժա
մանակեայ ներհակութեց . քանզի սկիզբն խոս
վութեո եղև ՚ի հազար և եօթանասուն և ինն
թուէին . որ զեկեղեցին յափշտակեաց նիկոլն .
և մնացին այնպէս մինչ որ հասին ՚ի հազարև
հարիւր և երկու թիւն մեր :

Ճորուժժամանակի տէր փիլիպպոս կթղկան
սրբոյ աթոռոյն Երվիածնի գնաց յեհմ , և
անտի եկն ՚ի մեծահանդէս քաղաքն ՚ի կոս
տանդնոսպօլիս , որոյ գալստեան համբաւն
հռչակեցաւ ընդ նման տեղիս , նաև ՚ի լոյվ քա
ղաք ևս էհաս :

Ի սոյն ժամանակի հանձարեղ խորհրդա
կան նիկոլ եպիպան , նկատեալ տեսութբ իւ
րոց մտաց , թէ ժողովուրդքն այսքան չարչարե
ցան , և ոչ կատեցան ՚ի բերտ կամաց իւրեանց .
այլ տակաւին ՚ի սոյն կամս յամառեալք կան , վն
որոյ խորհեցաւ գնալ ՚ի կոստանդնուպօլիս
առ կթղկան փիլիպպոս , զի թերևս բարձցի
յինքենէ անուն բանադրեցելոյ , նաև ընկալցի
՚ի նմանէ ի վր ժողովրդեանն զթուղթ օրհ
նութե , և առ ինքն հնազանդութե : բայց
Իր 5 զե

զի էր դատարկ և ունայն՝ ի գոյից • և ոչ ուն էր զպաշար ճանապարհի • վսորոյ խորհէր գտանել սմին հնար • զոր և էգիտ այսպիսեաւ կերպիւ : Եւ էր՝ թօխաթ քաղաքի յազգէն Հայոց այր ոմն երեւելի և անուանի • որոյ անունն էր մահ դասի մարկոս • որ ետ զգանձս յոլովս սիմօն անուամբ որդւոյ իւրոյ՝ և առաքեաց յաշխարհն իլախաց վաճառականութեաղաքաւ և սիմօնս այս եկեալ է հաս ՚ի լով քաղաք՝ հանապազ ուտէր և ըմպէր և կեայր ՚ի խրախութե • նաև եղև ծանօթ և բարեկամ ընդ նիկօլայի եպիպոսին • զորև խոստացաւ եպիպոսին, և ասաց • Թէ ունիս զկամս գնալոյ առ կթղկոսն • մի՛ հոգար վսպաշարի • զի որքան և պիտոյասցի քեզ դքամ վասն ճանապարհի զամսն ես տամ • զորև ըստ իւրում խոստմանն ետ եպիպոսին զերկուս հաղար զուռուշս նաղա դքամ • եբրև զայն է առ եպիպոսն • ապա երեալ ՚ի լովայ եկն՝ ի բուղ դան և գնայր առ կթղկոսն փիլիպպոս :

Օ այս տեսեալ ժողովորդականացն Հայոց որք ՚ի լով • Թէ գնաց նիկօլ եպիպոսն առ կթղկոսն • սահմանեցին և նորա զայր ոմն երեւելի յիւրց կողմանէ, որ էր մի ՚ի դատաւորացն Հայոց • որոյ անունն էր խաչկօ՝ գնալ առ կթղկոսն փիլիպպոս տունեալ նմա զգրեալ թուղթս և զպատուհրեալ բանս բաղումս : և նիկօլ եպիպոսն և խաչկօ դատաւորն՝ որիչ ՚ի միմեանց գնացեալ հասին ՚ի կոստանդնուպօլիս՝ և պատահեցան կթղկոսին :

Եւ ՚ի յոլով աւուրս զկնի բազմից խօսից և գործոց կատարումն գործոյն այն եղև՝ զի կթղկոսն փիլիպպոս հրամայեաց՝ զի զբանս չորս գլխով յանձն առցէ նիկօլ եպիպոսն • և զայն ձեռնպ •

Ձեռնագրով իւրով դրոշմեացէ . և տացէ փի լիպպոսի կլթղկոսին :

Վախ՝ զի զգաւանութի լուսաւորչին . և զնորինն աթոռակալ Տայրապետացն դաւանեալ խոստովանեացի նիկոյն , և իւր հետեւողքն . այս ինքն եկեղեցականք և աշխարհականք :

Երկրորդ՝ զի զարարողութի Տայրաստանեայց եկեղեցւոյ արասցէ ինքն և իւր հետեւողքն :

Երրորդ՝ զի զկնի վախճանի նիկոյին՝ ՚ի տեղի նիկոյին եպիսկոպոս նստողն . ՚ի կլթղկոսէն Երմիածնի լինիցի օծեալ եպիպոս . և նորինն հրամանաւն նստցի ՚ի նունոյ վիճակին . և նունոյ կլթղկոսին հնազանդ և հետեւող լիցի :

Չորրորդ՝ զի ինքն նիկոյն միայն յիշեացէ զանուն փափին . և զայնևս ՚ի պատարագն մի այն . և ոչ յայլինչ բանս և յարարողութիս :

Վաւ մի խառնեացէ զջուր ՚ի բաժակ սրբոյ պատարագին : Վսկ յեկեղեցականաց ժառանգաւորաց և ՚ի կղերիկոսաց . ոչոք բնաւ յիշեացէ զանուն փափին : սոյնալ և մի յիշեացէ զկնի նիկոյին նստող եպիպոսն զանուն փափին ամենեկին . ոչ ՚ի բանս և ոչ ՚ի դործս՝ այլ միայն նիկոյն . և զայնևս ՚ի պատարագն միայն :

Եւ վս յիշելոյ զանուն փափին՝ նիկոյն ինքն խնդրեաց ՚ի կլթղկոսէն զի այնմ միայն ներու մտարասցէ . բանղի նիկոյն անաց թէ Ձեռնագրաւն , զոր ես տուեալ եմ Քուանկաց՝ ՚ի կարդել լուծանեն զիս . գուցէ մահապարտ ևս առնեցեն . վսայսորիկ ներեաց կլթղկոսն : Եւ զայս չորս բանս դրեալ ՚ի բարագոսի . կնքով կնքեալ և Ձեռնագրով դրոշմեալ նիկոյն ետ կլթղկոսին փիլիպպոսի և կաթուղիկոսն ետ խաչիօ դատաւորին . զի ընդ իւր տարեալ ՚ի բաղաբն լով ՚ի պահեստի ունիցին վս առ յապայն զգուշութե :

և ապա կթղկոսն արձակեաց զնիկօն' ի կապա նաց բանադրանաց. և ետ նմա զնոմոս եպիս կոպոսականի իշխանութե իշխել իվր ժողովրդոցն լովայ: Եւ պատուհերեաց նմա զի զգաս տացեալ' ի թափառականաց և' ի խենէշից վարուց իւրոց' եկեսցէ' ի կրօնս և' ի բարեշաւիղ ճանապարհս արդարութե. որ վայելէ անունն և աստիճանի եպիսկոպոսութե: և նիկօլ եպիպոսն զամսն հրամանս կթղկոսին հոգւով չափ և յօժարկամօք յանձին կալեալ. և արձակեալ' ի նմանէ եկեալ էհաս' ի լով. բաղաբ:

Եւ ժողովրդքն լովայ համարեին թէ զղջացեալ և թողեալ իցէ նիկօն զթիւր վարս իւր. բայց տեսանէին զի' ի նոյն վարս կայ անփոփոխ: այլ յիշէին զանչափ գոնձուցն իւրց և զանօթոցն վատնումն. և զբազմապատիկ նեղութիւն' զոր հասոյց նց եպիպոսն նիկօլ. այրեալ խորովեալ տոչորեին սիրտք նց: վս այնորիկ ոչ կամէին միաբանիլ ընդ' նմա: նա և ս առաւել փախչէին և կամէին նզով լինիլ' ի նմանէ:

Եւ մինչ տակաւին ոչ էր գնացեալ նիկօլ եպիսկոպոսն' ի կոստանդնուպօլիս. փիլիպպոս կթղկոսն' ի կոստանդնուպօլսէ զամն վարդապետ յիւրոց լաշակերտաց' որոյ անունն էր յօհան վարդապետ. որ էր տեղեալ յարդաւոյ. այր փարթամ իմաստութիւն. և հանձարեղ բանիւ. առաքեաց գնալ' ի լով. զի թերեւ գուռն գործեալ հնար իմն փրկութե գտանիցէ եկեղեցեաց նց: և' ի գնալն յօհաննու վրդապետին' ի լով. և' ի գալն. եպիպոսին' ի կոստանդնուպօլիս. ի ճանապարհին պատահեցան միմեանց. և նիկօլ եպիպոսն' ի յօհանէ վրդապետն և ս առ զթուղթաւ կթղկոսն. վս ինքեան յանձն արարութե. և գնաց առ կթղկոսն' ի կոստանդնուպօլիս. իսկ յօհանն

յօճան վարդապետն Տասեալ 'ի լով. մնաց անդէքս
 մինչ որ նիկոլ եպիպոսն և խաչիօ դատաւորն
 'ի կոստանդնուպօլսէ դարձան և եկին 'ի լով.
 Իբրև ետես յօճան վարդապետն թէ ընդդի
 մանան ժողովուրդքն եպիպոսին. և ոչ կամին
 հնազանդիչ նմա սկսաւ միջնորդել իմէջ ժո
 ղովրդեանն և նիկոլին վն բառնալոյ զբազմա
 ժամանակեայ զաղմուկն՝ և զխռովութիւն. և
 զբազումաւուրս բազմաւ խրատով՝ քարոզիւ՝
 և դատու՝ և առանձնակի խօսելով ընդ ժողո
 վրդեանն և ընդ եպիպոսին. բազմաւ ջանիւ և
 յողովիւ ուղխատութիւն Տաղիւ թէ կարաց հաւա
 նեցուցանել զժողովուրդն հնազանդիչ եպիս
 կոպոսին: ապա 'ի միասին առեալ յօճան վար
 դապետն զժողովուրդն և զեպիպոսն եբերեալ
 էմոյծ յեկեղեցին իւրեանց, զոր յափշտակեալ
 էր եպիսկոպոսն: Եւ եղև 'ի մտանել ժողովր
 դեանն յեկեղեցին. որպէս զխառնումն գա
 ուանց 'ի հօտս յջխարաց մարց իւրեանց գո
 ուումն, և գոչումն, և ողբումն, և աղիողորմ
 լաց և փղձկելով սրտիւ յորդառատ արտասուա
 հեղուլ ժողովրդոցն յաչաց իւրեանց. մեծաւ
 հառաչմամբ վն տարփալեաց կարօտանաց և
 փափագանաց որ առ եկեղեցին իւրց: և անդ
 էն յեկեղեցւոյն 'ի հոյնում ժամուն սկսաւ
 յօճան վարդապետն մխիթարել զժողովուրդն
 յածայնոց գրոց և 'ի վարուց և յօրինակաց
 սրբոց. որոյ բանից վերայ զովանայր սիրտ
 ժողովրդոց. և ածեալ 'ի համբոյր Տաշտու
 թէ զամենեսեան ընդ եպիպոսին:

Եւ է հաս համբաւ Տաշտութես առ թա
 գաւորն լէճաց որոյ անունն էր եանգեաժի
 միր. քանզի 'ի քաղաքն լովեր թգլրն յա
 ուրսս յայտասիկ. որ և կոչեաց թգլրն առ ինքն
 Գյօճան

Եւ յօժան վրդ-պտն և առանձինն 'ի սենեկի խօսե-
 ցաւ ընդ նմա զբանս բազումս և լուաւ զպա-
 տասխանիս հանձարեղս և համեղս բանիւ և սի-
 րեաց Թգւրն զվրդ-պտն և զշնորհակալութի-
 արար նմա վն միջնորդութե և հաշտեցուցա-
 նելոյն զժողովուրդն և զեպկայսն • և զբազմա
 ժամանակեաց խոովութին բառնալոյն : Եւ
 մնաց անդէն վարդ-պտն յօժան ամ մի ողջոյն
 և ապա դարձաւ և եկն 'ի սուրբ Եղիածինն :
 Իսկ ժողովուրդքն լովայ և նիկօլ եպկպսն :
 Կան իվ ի նոյն պայմանադրութեն, զոր սօհմա
 նեցին փիլիպպոս կթիկոսն , և յօժան վարդա-
 պետն մինչև ցայսօր՝ յորում զպատմութիս շա-
 բադրեցաք 'ի Թուականիս մերում հազար և
 հարիւր և երեսն • 'ի մայիսի ամսոյ տասն :

Թե որք և ոնք եղեն պատճառք գտանելոյ զոճն և զգիտու-
 թիս արտաբնոյ գրոյ, և զարու ետաս բերականութե,
 և նորոգեալ տիւեցին 'ի վարդապետս հայոց,
 որ բնաւին բարձեալ և անհետ էր լեալ :

ԻԹ :



ՐԴ Դ ՏՆՈՅ ԵՒ Դ Վ Լ

զեմեաց ժամանակաց կայր դասա

տուն վրդ-պտոյ՝ եքաղաքն բաղէշ,
 'ի վանքն որոյ անունն աւրդօլ աւեն, որ յա-
 ջորդելով մի զմի է հաս մինչև 'ի ժամանակս
 հարց մերոց : յորում ժամանակի էր յաջորդ-
 և առաջնորդ պետ և գլուխ վարդ-պտոյ տեղ-
 ոյն այնմիկ ոմն վարդ-պտ բարսեղ անունն, որ էր
 այր երեւելի և մեծանուն, և յոլով աշակեր-
 տաց տէր : և նոյն վանքն ամրդօլու յառաջա
 գոյն խրթին և յուի շինեալէր և այն ևս խար-
 խալեալէր 'ի հնութենէ, սա զամենեսեան շի-
 նուածան միահաղոյն քակեաց, և ինքն վերստին
 հմնաց :

Տմարկեալ շինեաց և կատարեաց զբոլորս
դակն, զեկեղեցին և զտունսն և զայլսն որ 'ի նս :

Լյլէ էր ինքնս բարսեղ վարդապետ 'ի գաւա
զանէն որ 'ի տաթևացւոյն յառաջ եկեալ և
սերեալ, այսպիսեաւ կարգաւ : նախ գրիգոր
տաթևացին : նորին աշակերտ դանիէլ : նորին
յովանէս Տամէնցին : նորին չորթան գրիգոր
արձիշեցին : նորին ներսէս որ մատաղ ասի,
նորին ներսէս բաղիշեցին : նորին ներսէս ամկե
ցին : նորին բրգու-թ յովանէս ոստանցին : նո
րին բարսեղ գաւառցին, որոյ վասն բանս է :
սորին աշակերտ մոկացի ներսէս 'ի գեղջէն
ասկնջաւսայ, որոյ մականունն բեղլու ասեն՝
զի մեծ էր բեղն : նորին աշակերտ մելքիսէ-
թերկանցի, 'ի գեղջէն վժանու :

Լրդ այս բարսեղ վարդապետ յինքենէ իսկ
գիտակէր թէ գիտութի արտաքնոց իմաստից
և բերականութե ոչ գոյ իմէջ վարդապետն Տայ
ոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թեր
ևս հասանիլ այնմ գիտութե ոչ միայն վնիւր,
այլ մանաւանդ վնազգին, զի արծարծեալ
սփռեսցի իմէջ ազգիս Տայոց, ուն զի ամքն
հասցեն այնց շնորհաց և գիտութե : վն որոյ
յարաժամ առեալ 'ի ձեռս իւր զարտաքին
գիրսն, և թէպէտէ ոչ գիտէր այլ անյսպաղ
և անձանձիր ընթերնոյր, էր զի ուրեք ուրեք
հասանէր ի վրտեսութե, և մտաց բանին, և
էր զի ոչ, բայց նա ամենիւ ջանիւ առանց
ձանձրանալոյ միշտ ընթերնոյր :

Եւ ուն Տրն Քն յադակս երեք նկանակին
ասաց, թէ ոչ տացէ վն բարեկամութե, սա
կայն վն ժտութե յարուցեալ տացէ նմա զինչ
և խնդրեսցէ : այսպէս և սմա ետ, որ անդա
դար և անձանձիր տքնութե յար հանապազ
կա

Գոցեալ 'ի դուռն իմաստից գիտուէ բաղխէր
զցայգ և զցերեկ աղօթիւք և ընթերցամբք :
Իսկ աղբիւրն և տուօղն ամի իմաստութե սք
Հոգին Լ'ճ, որ բերանով էակցին իւրոյ խոս
տացաւ . թէ խնդրեցէք, և տացի ձեզ . բաղ
խեցէք, և բացցի ձեզ . հայցեցէք, և առնու
ցուք, տեսեալ զանդանդաղելի զկանխելն և
զբաղխելն սորա, շնորհեաց սմա զխնդրելին .
զի ետ զտեսութի և զհանձար մտաց սորա խե
լամուտ լինիլ բառին, և ոճոյն, և շաւղաց ար
տաքնոց գրոց, առանց ուրուք առաջնորդե
լոյ և ցուցանելոյ :

Բանզինախ զսկիզբն արր սահմանաց գրոցն .
կարդայր մինչև ցլերջ պրակին, և դարձեալ
դառնայր 'ի սկիզբն պրակին, այնքան կար
դայր և դառնայր, մինչև ամենից որպիսու
թեցն տեղեկացեալ լինէր և ապա անցանէր 'ի
միւս պրակն, այսպէս առնելով մինչև 'ի տասն
պրակն սահմանացն կարդաց, և վր' հասու եղև
որ այլոց ևս կարէր ուսուցանել : Եւ ապա թո
ղեալ զսահմանն էանց 'ի պորփիւրն՝ տեսա
նել և՛ փորձել զնորին ևս զորպիսութի, և
սկսաւ մեծաւ ջանիւ ընթեռնուլ և մտածու
թք խոկալ և՛ 'ի բազում աւուրս յոքնակի աշ
խատութք ընթեռնելով եդառնալով, 'ի պոր
փիւրէն զտեռն և զտեսակն՝ ևս էգիտ շնորհօք
սրբոյ Հոգւոյն :

Եւ յաւուրս ծերութե իւրոյ այս բարօեղ
վրդմոս, կոչեաց զամենեսեան աշակերտս իւր
առաջի իւր, և զորինչ և գտեալնէր իմաստու
թի յարտաքնոց գրոց դաս ասաց նց, զոր նորա
ամբն 'ի միտառին, և ուսան : և ապա սկսաւ
խօսիլ ընդ նոսա և պատուիրել : Որդեակք եմ
սիրեցեալք, զորս հոգևորք երկամբք ծնայ 'ի

Տր՛զի նախնեաց վրդ-պտաց գրեանց մէջն զորոյ յիշեն, զսեռ. և զտեսակ, և զտարբերութի, և զյատուկ, և զպատահումն, և զստորասութի, և զբացասութի: որոց բազմաց և յորովից պատահեալէք իմէջ պարապմանց գրոցն, և գան ձուց գրոցն, և առ որս գրոցն, և այլոց այսպիսեաց: Թէ պէտ և ընթեռնումք, և անցանեմք, այլ թէ զինչ են տրա, և սոցին հետեմունքն, և բողոքն և մատուկքն, և այլ որպիսութիքն մէք ոչ գիտեմք: և հարկ է վարդպտաց սոցին ամենից քաջ գիտակ գոյ՝ զի թարոց սոցին գիտութե, թէ պէտ ընթեռնու որ. զինչև ընթեռնու, և կարծէ իմացեալ զնա, այլ ոչ է իմացեալ ըստ պատշաճին և պարտին: զի ամենից իմաստութեց և գրոց ներածութիք սորա են, եթէ նրբից և թէ արտաքնոց:

Վն որոյ իբրև զանդառնալի կտակ մահու պատուհիբեմ՝ ձեզ. և մանաւանդ ծանր և անբառնալի հարկ իվր ձեր գնեմ: զի որպէս զիս տեսիք զի հանապազ ընթեռնութե զայս գիրս, և բազմաւ խոկմամբ մտածէի, և երկնէի. այն քան մինչև գտանէի զտեսութի բանին. և զորինչ և գտի շնորհելով Տն՝ զայն ամ ահաւասիկ դասասացի ձեզ: Աւ այժմ մեծաւ հարկէ՛ւ պատուհիբեմ ձեզ զի և դուք այսպէս առնիցէք որքան և իցէք կենդանի. և զայս՝ զոր ես դասասացի ձեզ՝ հանապազօր կարգացէք. եւ իվր սորին դուք ևս աճեցուցէք. ընթեռնելով և յառաջ գնալով: և զորինչ և տացէ ձեզ Վճ սք հոգին զլինէն ուսեալն և զձեր գտեալն. ձերոց աշակերտելոցն դասասացէք. և միշտ վարժեցէք զնս՝ ի նոյնն մինչև ունակացի՝ ի միտս նց. և դուք ևս պատուհիբեցէք ձերոց աշակերտելոցն՝ զի ըստ այսմ՝ օրինակի ա-

Կասցեն : և այսպէս յորդուոց որդիս առնելով
 հաւատամ'ի Տր' զի բանայ և ցուցանէ զամեն
 ճանապարհս և զդրունս չքնաղի և պանծալոց
 գիտութես այսորիկ : Արդ լուսընկալ հոգի
 բարսեղ վարդապետ ըն ասացելունս պատճառ
 եղև գտանելոյ արտաքնոց գրոց գիտութե . և
 այսպի պատուհիբելով յաւելաւ առ հարս իւր'
 և հանգեաւ'ի Վն . և եդին զնա'ի հանգիստ
 գերեզմանի'ի նոյն վանքն ամրոջօլայ, զոր ինքն
 նորոգեաց :

Աւր ըստ պատուհիբելոյ երջանկի վարդապետիս
 բարսղի երեք ոմանք յաշակերտաց սորին արա
 բին . որք էին'ի մոկաց գաւառէն միոյն անունն
 յօսէփ'ի գեղջէն որոյ անունն է ողմի, և
 միւսոյն հայրապետ, և սորին եղբօր որդւոյն
 ներսէս, որք էին'ի գեղջէն որոյ անունն է
 ասինջաւս : և այս ներսէսս, բեղլուն ներսէսն
 է, զոր'ի կարգ վարդապետն յիշեցաք'ի վեր
 անդր : այս ներսէսս յոլով աշխատեցաւ և
 առաւելացոյց քան զբարսեղ վարդապետ և քան
 զընկերս իւր : Աւր ասպա'ի միտս իւր եկեալ
 ներսէս վարդապետ և խոկմամբ'ի միտածեալ
 զամեն ունայնութիս կենցաղոյս և զպատաղ
 մունս սորա' և զպատրանս մեծութե, զղջացաւ
 յաշխարհէ' և լքեալ թաթախեաց յինքենէ
 զաշխարհս, և զամենայն վայելչութիս սորին :
 քանզի մեծ անապատն նոր էր շինեալ և հաս
 տատեալ, որոյ զպատմութիս կանխաւ ճառե
 ցաք, և'ի նմին պատմութե ներսիսի վարդապետի
 յիշումն արարաք, և այն յիշեալ ներսէսն այս է :
 և սորա լուեալ զառաքինական ճգնութիս միա
 բանից մեծի անապատին, ելեալ գնաց անդր :
 Աւր'ի միաբանից մեծի անապատին ոմանք
 արեղայք . սկսան դասառնուլ զարտաքին
 գիրս :

գիրսն՝ի ներսիսէ վարդապետն: և վստի գործ
նական առաքինութիւն յարգոյ, և նախապատե-
կեր առ նոսա, զի զՏոգիս զարդարելոյ փոյթ-
ունէին և ոչ զբան, սորին վն ոմանք՝ի դաս
առնողացս յետս կացին: բայց ոմն արեղայ
տէր մեղքիսէթ անունամբ՝ որ էր յարարա
տեան աշխարհէն, ՚ի գեղջէն, զոր վժանասն,
Սա ոչ թուլացաւ յընթերցմանէ արտաքնոց
գրոց, և ոչ մեկնեցաւ ՚ի ներսիսէ վարդապետն,
այլ ցորբան ժամանակս եկաց ներսէս վարդա-
պետն ՚ի մեծ անապատն, եկաց անդէն և տէր
մեղքիսէթն, և յորժամ ելեալ ներսէս վարդ-
ապետն գնաց յերկիրն վասպուրականի ՚ի լիմ կօ
չեցեալ կղզին: որ է իմէջ ծովուն՝ և շինեաց
անդ զանապատ: այս տէր մեղքիսէթս ևս
գնաց ընդ ներսիսէ վարդապետն ՚ի լիմ:

Եւ յորժամ ժողովեցան յոլովք՝ և բազմա-
ցան միաբանք տեղւոյն: Տնդ այլևս եղբարք
միաբանեցան ը տեառն մեղքիսէթի՝ և ամենե-
քեան ՚ի ձեռն առին զգիրս արտաքինս՝ և ըսկ
սան ջանիւ կարդալ: և յայտ արարեալ նշու
նեցին յառուրն ժամ մի առի միասին ժողովե-
լոյ: որպէս զի եւրաբանչիւրոք ՚ի նոցունց՝ զոր
ինչ և գտեալեցէ ՚ի բանից գրոց անդէն ամե-
նեցուն յայտնեցէ՝ զի այլքն ևս ուսցին՝ որով
աճեցեալ և արծարծեցեալ առաւելացի գի-
տութիւն այն: և այսպէս արարին զամս երկուս և
յայնմ՝ Տետէ միաբանեալք եղբարքն ձանձրա-
ցեալք յետս կացին յընթերցմանէ արտաքնոց
գրոց՝ զի աշխատութիւն յոլովէր՝ և միսթարու-
թիւն սակաւ: զի տակաւին ոչ էին թգրեալ
իվր բանին: և զճաշակ քաղցրութե ոչ էին
այւեալ: որով ամբն աշխատութիւնն ուճատ և
եղբորդ նմին տեսանի ըստ վկայելոյն դաւթի
փիլիսոփային:

Վայց տէր մեքեհեթ ոչ էթող զարտաքին գերքն . և ոչ թուլացաւ 'նորին ընթերցմանէ . այլ անդադարիւ արնութիւնս զցայգ և զցերեկ ընթեռնոյր և մտածէր, և բերեալ առ ներսէս վարդապետն ցուցանէր, և հարցանէր թերևս ուղիղ եղի գտեալն թան : Եւ ընդ բազմաջանի ընթերցմանն, զոր առնէր և խոկայր ցանդ . հանապազ 'ի տեսական իմաստութիւն, և զգործնական առաքինութիւն ևս իմաստին բարձեալ տանէր, զի զկարգ անապատին հաւասար ընդ հասարակաց եղբարցն անուպակաս կատարէր, նաև գերագոյն թան զնն, 'ի գիշերի կանխէր յաղօթս և 'ի պարատանա առ ՏՅ և տունն իմի իմաստութե 'ի ՏՅ ՄԾ, բանալ նմա զդուռն իմաստութե գրոց' և խելա մուտ առնել նորին հանձարոյ :

Եւ զորինչ վասն նախասացեալ վարդապետն պատմեցաք, առ բազմապատիկ առաւել թան զնն զերկա և զաշխատութիս կրեաց իվթ արտաքնոց գրոց' զի թող զայլ ժամանական զոր ընդ ընկերացն և կամ չափաւորիւ ձգնութիւնս զարք նութի կրեալէր, այլ յատուկ տանամ առանց թուլանալոյ և ներելոյ ինչ, զմարմինն իւր 'ի խաց բարձեալ կարեօք և զանկու թիւ հանդերձ ըտտ պօղոսի : և թան զայս և սառաւել յամս երկուս յօրն մէկ հաց ճաշակեալ և ոչ այլ ինչ : և յայն երկու ամս ամենեկն լուռ էկաց և ընդ ումեք ոչ խօսեցաւ այլ ընդ ՄԾ, և ընդ գրոց իմաստութե : և ամենեկն մերձ հրոյ ոչ գնաց . և ճրագ, և կամ լոյս 'ի խուզել իւր ոչ տարաւ, այլ միշտ 'ի տունէ գերս վերժանէր և 'ի գիշերի խոկայր :

Իսկ անքննելին յամենեկն էկց սիւ հողին ՄԾ օր քննէ զամենայն և զխորա ՄԿ հայեցեալ յանդ

յանդառնալի յոյսն և յանձանձիր խնդրելն
նր, էհեղ առ նա զչնորհս իմաստութե և գի
տութե, և պարգևեաց զինդրելին յաղակս
ստեպ ժտելոյ նր, ըստ առակելոյ եւրոյ էակ
ցին Տն ԳՅ:

Քանզի գիտութե ամենից արտաքնոց գը
րոց անձարակոյս ելն չստեալ գիտող եղև,
Սահմանայն, պորփիւրին, ստորոգութե, պե
րիարմէնիաօին, աշխարհացն, առաքինութե,
վերլուծականին:

Այլև զամենայն արդաց սոմարն, որոց
պատճէն գրեալ կայ՝ ի միջի մերում, քաջ և
անտարակոյս էհաս ամի, գիտելով զսկիզբն և
զպատճառն և զամսն հետեւմունս նց: Այլև
քերականութե գիտութե եղև տեղեակ և գե
տող առաւել քան որք էին՝ ի ժամանակին:

Արդ՝ ոչ թէ այս միայն է շնորհք և գիտու
թեննր, զոր պատմեմք քանզի Վճաշնչոց գրոց,
և ՚ի բանից վարդապոյ կարի յոլով բան ՚ի բե
րան առեպէր, որ հանապազ քաղէր: Այլ
զայս արտաքին գրեանս յայն սակս յիշեմ և
շնորհակալ լինիմ նմա, զի զայսպիսի այլա
շաւիղ՝ և այլատեսակ՝ և այլանուն՝ և անընդե
լ քանս առանց վարժողի և թարց ուրուք ու
սուցանողի եւրովի էգիտ զամենայն յսկզբնի
մինչև ցկատարածն:

Եւ ՚ի կատարել մարմնոյ հասակին, քան զոր
առաւել կատարեպէր իմաստութե և հոգւոյ
հասակն, կամօք եւրովք վարդապոյն ներսէս՝
և վկայութե ամենից եղբարց անապատին,
յառաջ կոչեաց զնա՝ ի բարձրագոյն տեղի և ՚ի
պատիւ ըստ հրամանի Տն թէ բարեկամ ՚ի
վեր մատիւր, և շնորհեաց նմա զգաւազան վար
դապոյութե, որ յարածամ քարոզութե արբե
նէ 3 րաբար

րաբար հմարտութե ջրով միեթարեալ զպա
ռուցանէր զլսողսն :

Եւ յաւուրս Ժամանակին այսորիկ, մօսէս
վարդապետն, որ եղև կթղկս Աղմիածնի, այն ինչ
նոր սկսեալէր նորոգութի սբյ աթոռոյն Աղ
միածնի և շինութի պարսպին : և համբաւ նորո
գութե սրբոյ աթոռոյն և մօսէսի վարդապետի
կթղկասութեն հրատարակեցեալէր ընդ ամ
աշխարհ, առ որ ամբն տենչացեալ գային ՚ի տե
սութի նոցին : Եւ յու աղագաւ և մելքիսեթ
վարդապետս ելեալ ՚ի լմայ անապատէն եկն ՚ի
քարձրագահ աթոռն ՚ի սուրբ Աղմիածին և
երկրպագեաց Քնակոխի սբյ տեղւոյն և տաճա
րին և հանդիպեցաւ տեսութե մօսէսի կթղկո
սին, և նորին աշակերտացն . յորոյ գալստենէ
ուրախութի անպատու մ եղև ամցւն :

Եւ լինէր յորժամ մելքիսեթ վարդապետն
կանխէր ՚ի դաս և ՚ի քարոզ . երբև զյորձանս
ուղիսից և հեզեղաց ընթայր բանն ՚ի բերանոյ
նր . յորոյ հմաստութին ամբն ապուշեղեալ
հիանային և բաղձային :

Եւ յաւուրսն յայնոսիկ մօսէս կթղկան զմեծ
աշակերտն իւր զկեսարացի խաչատուր վարդա
պետն եզբարբք ոմամբք առ ուրբեաց ՚ի լէհաց
ճն յաղագս նուիրակութե սրբոյ Աղմիածնի .
և մտցի ոչ ընդդ հմակայ աշխարհս այնտահեալք
էին եղբարքն . որք ընդ խաչատուրոյ վրդապետն .
վնորոյ ՚ի միտս իւրեանց կարծէին զինքեանս
գիտնականս և կարօզս ոմանս գոլ : Եւ անդ
՚ի լով քաղաքի յազգէն Փռանկաց պատրիք
ոմանք եկին առ աշակերտս մօսէսի վն հակաձա
ռութե . և հարցին նորա ցմբսն նախ ՚ի քե
րականէ արհեստէն . և ասացին վարեմբառս
անուեն է թէ բայ և մերքն անհմուտ գորով զայլ
և այլ

և այլ պատասխաննիս ասէին . յայնժամ Ն. ք. բա մահելով և ծիծաղելով այսն արարեալք ին զմերովքն : և ՚ի բնութեամբուս վն Հակաճառութե այսպէս են արարեալ : յայնժամ մերքն ՚ի սիրտ և յոգի խոյեցեալք են , և իմացեալ թէ զայն , որ գիտեն ոչ է գիտութի , այլ պարտ է նց զպարսին գիրսն կարդալ , և անդէն ՚ի մտի եղեալք են Հաստատութի թէ գնալք յԱջմիածին առ մելքիսէթ վարդապետն , զայլ ամենայն ինչ թողեալ զարտաքին գիրսն կարդալք ՚ի նմանէ : Եւ յորժամ Հասին յԱջմիածին առ ժամայն սկսան ՚ի նոյն գործն ձեռնարկանել , և ոմանք ևս յեղբարց ՚ի միաբանիցն Աջմիածնի , ընդ նոսին յարեցան ՚ի դասառնուլ : և յորժամ միաբանեալ եղբարքն եկին առ մելքիսէթ վարդապետն , և սկսան զդասառնուլ , նախ զասմանքն սկսան , և ապա զպորփիւրն , զստորագութի , զպերիարմենի ասն , զաշխարհացն , զգովելին : զկնի սոցա ամենեցուն ամենից ազգաց զտօմարսն :

Եւ ՚ի զրաւ այսմ ամի , զորո դասասաց մելքիսէթ վարդապետն աշակերտեալ եղբարցն մեծաւ ցնծութի և բերկրելով հոգւով համբար ձեալ զձեռս իւր յերկինս սկսաւ գոհանալ զԲ. և փառաւորէր և զշնորհս խոստովանէր զՏ. և ասէր աշակերտեալ եղբարցն : Ոչ այլ ինչ խոկ ումն կամ մտածութի գոյր ՚ի սիրտս իմբայց միայն վն իմաստութես այսորկի՝ զոր բազում և անթուելի չարակրութի հագիւ գտի , և այն ևս շնորհելովն Տն , երկնցեի թէ առանց ումք ուսուցանելոյ մեռանսէի , և այս պանծալի և չքնաղ գիտութիս ընդ իս ՚ի հող մտեալ ամիտփիւրի բայց արդ որովհետև դասասացն ձեզ՝ և զընկալեալն ՚ի Տ. զարծաթ

բանին արկի 'ի սեղանաւորս՝ այսուհետև փոխանակ արտմութե ունիմ զմխիթարութի, զի թէպէտ ես մեռանիմ, այլ սերմանեալն առ ձեզ բան Տ՛ն մնայ յաշխարհի: և զորինչ ես յամս հնգեոտասն, և այլ աւելի, մեծաւ տաժանմամբ հազիւ կարացի գտանել: Բարդ՝ հեշտ և դուրին յամիսս ութ ձեզ ընէտեցի: Բայց խնդրեմ 'ի ձէնջ եղբարք իմ սիրեցեալք՝ ի Տ՛ր, ոպ պատուիրեցին մեզ նախնիք վրդպտքն մեր զկտակ արարեալ և զհրկ եղեալ իվր մեր, նոցին նման և ես այսօր ձեզ պատուիրեմ, և զնոյն հարկ դնեմ իվր ձեր, զի մի թուլանայցէք՝ և մի տայցէք զհանգիստ աչաց կամ զնինջ արտեանաց, այլ բուռն առեալ զշաւիղս իմաստութեո այսորիկ, և յաւուրս կենաց ձերոց անդուլ և անդադար աշխատեցարուք իվր սորին մինչև յօր վախճանի ձերոյ: և ես յուսամ 'ի սք հոգին Մ՛ծ՝ յաննախանձ պարգևատուն, զի բազմապատիկ առաւելեալ արդիւնաւորեցի զձեզ շնորհօք բան զմեզ, և զորինչ պարգևեցի ձեզ աննախանձաբար ուսուցէք այլոց խնդրողաց՝ ովոք և եցի:

Յետ այսորիկ անկաւ 'ի մահիճս հիւանդութե մեղբսեթ վրդպտս . բանզի վն առաջնոց վշտամբերից ճգնութեցն, զոր 'ի մնայ անապատիմդ իմակացեալ տեւալէր զրոտոյ և սառնամանեաց ձմերայնոյ . ցուրտ քամի ունակացեալ էր 'ի մարմնոջ նր՝ յորմէ պատճառէ ստեպ ստեպ հիւանդանայր: յայն սակս հաճեցուցեալ եղբարքն զմեղբսեթ վրդպտն՝ և բերին իվր նր զբժշիկ: զի թերևս բժշկականօք գեղօք փարատեցի զցուրտն 'ի նմանէ . իսկ բժշկին անհմուտ գորով՝ յորովագոյն 'ի գործեարկ զըերմ գեղն 'ի մարմին նր՝ յորմէ պատ

Ճարհ:

Ճառէ չորացեալ խշկեցան ամբն մասունք նէ) սին փորոտեաց նր: քանզի ուժգին Չերմութի դեղոյն այրեաց զմասունս ներօին անդամոց նր. զօիրտ, զլեարդ, և զթոք, և զայլ մասունս որով հեծեալ մաշեցաւ ամ միս անդամոցն. և այնու հոլանդութի վարեաց զկեանս զայս. և գնաց առ վերին իմաստութին ՚ի Տրն Վն:

Եւ եղև վախճան բաղմաշխատ վրդ-պտիս մեղքիս յերևան քաղաքի. ՚ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն անանիայի. և տարեալ զնա ՚ի հանգիստն հասարակաց ՚ի բլուրն զոր անունանն կոզեուն: զի վն գերեզմանի կողման վրդ-պտին որ անդ է՝ ոյնպէս կոչէն ըզբլուրն. և անդ մերձ գերեզմանի կողման վրդ-պտին պատրաստեցին զհանգիստ. և անգհանգուցին զպատուական և զսրբասնունդ նշխարս մարմնոյ նր. և գրեցին զանունն ի վրտադանին: Եւ եղև վախճան սորին ՚ի հազար և ութսուն թուականիս մերոյ: Եւ ՚ի սկիզբն ճառիս զոր ՚ի կարգս վրդ-պտցն յիշեցաք զգաւառցի բարսեղ վրդ-պտան. և սորին աշակերտ մոկացի բեղլու ներսէսն. և սորին աշակերտ երևանցի մեղքիս թն ՚ի վժան գեղ Չն. այն մեղքիս թն այս է՝ որոյ զպատուութին ճառէ ցաք:

Իսկ այնք եղբարք՝ որք միաբանեցան և գաւառին զարտաքինն՝ և մեղքիս թն վրդ-պտն. թեպէտ և ամ որ ջանաց և աշխատեցաւ և կարդաց ըստ իւրում կարի. բայց միոմն՝ ի նոցանէ սիմէօն անուամբ աբեղայնորոգ երիտասարդ՝ որ էր ազգաւ Չուղայեցի. որք այժմ բնակեալ են ՚ի սպահան քաղաքի: այս սիմէօնս յոյժ առաւելացոյց: վնզի այն զոր կանխաւ պատմեցաք թէ աշակերտքն մօսէսի կթիկսի գնա

յեալ 'ի լով քաղաք պատահեցան հակաճա
 ուութե ֆռանկաց. ընդ որս էր և այս տէր սի
 մէօնս: որոյ վն և այժմ' ի ժամանկս առնոյ դա
 սին կարի յօժարութի և ջերմեռանդիւ սրտեւ
 և պարտաւորիւ կարօտիւ առնոյր զբանս
 և յարժամ կարդայր: Ի բրև վերջիւ դա
 սին. ելեալ տէր սիմէօնս յ՝ ջմիածնէ գնաց
 'ի սպահան քաղաք. քանզի տէր սիմէօնիս
 վրդապտն. որ էր կեսարացի խաչատուր վար
 դապտն, որ զլոյով հարանց վարս և զժամագիրս
 տպագրեաց. այս խաչատուր վրդապտն. 'ի մօ
 սեսէ կթիկսէն առաջնորդ կարգեալ էր ջու
 դայեցւոց ժողովրդեանն. որք յասպահան քա
 ղաքին էին: յետ աւարտման դասին է առ
 դտէր սիմէօնս և գնաց 'ի սպահան քաղաք 'ի
 վանս իւր՝ զոր իմէջ ջուդայեցւոց շինեալ էին.
 և խաչատուր վրդապտն զաման աշակերտս իւր 'ի
 մարմնականաց գործոց յասպհով պահէր. վն
 որոյ և աշակերտքն միշտ և հանապազ 'ի կար
 դալ և յնթեռնուր կային: և մանաւանդ ի վր
 տեառն սիմէօնիս առաւել զգութ և զմնամ
 ունէր: որոյ խնամարկութեն տէր սիմէօնս կարի
 առաւել աճեցոյց զուսումն իւր, զի զրտաքինն
 զոր դաս էր առեալ յառաջ էբեր և սկսաւ
 կարդալ կարգաւ. և մտախօսէ շինէր զցայգ և
 զցերեկ անդուր և անդարդարիւ տքնութի. ոչ
 տալով զհանգիստ աչառ և ոչ զինջ արտեա
 նաց: այլ և ինքն տէր սիմէօնս 'ի բնէ ունէր
 զմիտս սուրս և զծննդականս. և այս արտաքին
 իմաստութեան կարդալն և պատահեցաւ նմա
 'ի տիս երիտասարդականի հասակին՝ որ առնու
 և պահէ և աճեցուցանէ: և ջան և երկն և
 վաստակն անչափ էր. զոր կրէր յնթեռնուրն.
 զի բերանն յնթեռցմանէ և միտքն 'ի խօսի
 մաճէ

մանն ոչ կայր պարտոյ ամենեւին . 'ի տան , 'ի ժամատեղ . 'ի դուրս . ուր և լինէր .

Եւ զամս երես 'ի յընթերցումն և 'ի խոկման կապեալ ունէր զինքն բազմաւ ջանիւ և յօժարութի . այլև մեծօք պաղաասնօք և արտասուօք խնդրէր 'ի հեշտալոյ ՏԷ . զի արժանի արասցէ զինքն այնպիսւոյ չքնաղի և պանծալոյ և գերադրականի իմաստութե . զի իբր զմոյն իմն առ այն իմաստութիս բեւեռեալ ունէր զտարփումն ցանկականի մասին :

Եւ 'ի բազմաժամանակէ և 'ի մշտաջանեալխատութիս յաւելաւ տեգական իմաստութի 'ի միտսօորա շնորհօք սրբոյ հոգւոյն Մ. Ե. որ հանապազ զարդարէ զեկեղեցիս Վի ըստ բազմազանից շնորհաց եւրոց . ուր ուսուցանէ նորին առաքեալն սուրբն պօղոս՝ թի ումեմն 'ի հոգւոյն տուեալէ բան իմաստութե . այլ ում բան գիտութե . և այլն : Եւրդ 'նոյն նք հոգին պարգեւեաց ամա զբան վճիտ՝ և գերասանծ՝ և շնորհալի 'ի քարոզութես 'ի հակաճառութես՝ 'ի մեկնութես Մ. Ծաշնչոց գրոց . կամ արտաքնոց գրոց . 'ի բնական քննութես , և 'ի փիլիսոփայական արունետս . անհամեմատ և գերիվերոյ եղև բան զամսն վարդապետս ժամանակիս այսորիկ . որք ամքն խոնարհեալ առ նա ուսարիէին 'ի նմանէ դասիւ և այլով կերպիւ :

Եւ վնդի 'ի մայրաքաղաքն ասպահան գոլով սոցա , որ բուն մայրաքաղաքն է Պարսից . յորմէ ազգէ արք փիլիսոփայք գային և զհարցաքննութի և զհակաճառութի առնէին . և տէր սիմեօնս զամսն եկողս հիացուցանէր փիլիսոփայականաւ արունետիւ և բնականաւ քննութի տալով նց զպատասխանի : Եւ ամենից նախապատուեաց արանց

Պրանց ջուղայեցւոց տեռանելով զարժանաւ
 ընթի սորա վկայեցին առաջի խաչատրոյ
 վրդապետին . այլև իւր իսկ խաչատրոյ վրդապետի
 տեսանելով զնա՝ ի շնորհս Ս՝ճաշինս . կոչեաց
 զնա յևս գերագոյն պատիւ և աստիճան . Եւ տա
 ւմա զգաւազան վրդապետէն զի յորդապետիւ
 բանիւ քարոզութե բերկրեալ զուարճացուցա
 նէր զմիտս լսողացն : և ոչ ունէր զկարիտ քարոզ
 գրքի կամ հարցնատեօի . այլ առձեռն պատ
 րաստ զինչև՝ պատշաճ պիտոյանայր ժամուն ,
 բնաբան ինչ առեալ Ս՝ճաշնչոց գրոց . գե
 ղեցկիւ և կարգաւորիւ և պատշաճաւորիւ
 շարագրութե յորինեալ յարդարէր զբանն .
 ի փառս Ս՝Յոգւոյն տունողին շնորհաց :

Եւ մինչև էր ի սպահան քաղաքին . երեք
 անգամ զարտաքինն և զքերականութիւն դաս
 ասաց ընկերաց իւրոցիւ աշակերտակցացն :

Եւ ապա ելեալ յաստիճանայ եկն ի գերո
 դրական և ի բարձրագահ և ի Քնաբնակ սք
 պթոուն Ս՝Չմիածին . յորոյ գալստենէ ուրա
 խութի անպատում եղև անդ եղեալ աշակեր
 տացն . և առ ժամայն պատրաստեցան ի դաս
 առնուլ ոչ միայն Ս՝Չմիածնի միաբանքն . այլ
 և բոլորից վանորէից գրոց աշակերտեալ աբե
 ղայքն . և միահամուռ ժողովեցան անձինք
 երեսուն և սկսան առնուլ ի դաս Ս՝ախ սկիզբն
 արարին ի բերականութիւն . և ապա կարտա
 քին գրեանսն բովանդակ մինչև ցվերջն :
 զկնի նորին զթուղթն պօղոսի զեբբայեցւոց
 գլուխն : և ամենեքեան սգտեալք և լուսաւո
 րեալք յիմաստից սորա՝ որք էին բաւական
 ինքեանց և այլոց :

Եւ երևանայ քաղաքի քահանայքն և ժո
 ղովուրդքն յոյժ հաճեալ ի բարս և ի բնու
 թիս

Թիս սորա • զի յոյժ բարեբարոյ և Տեղահոգի և զանրնչատէր բարս ունէր • և կին առ փիլիպպոս կէթղիոսն և մեծօք Թախանձանօք խնդրէին զնա իւրեանց առաջնորդ կարգել : և նա ըստ խնդրոյ նց արար այնպէս • առաքեաց 'ի վանս սոցա, որ է 'ի գաւառին գառնուոյ՝ անունաբ ամենափրկչին • որ մականունաբ անն հաւուցթառ :

Եւ յետ ամաց ինչ արար զգիրս մի և անուն անեաց տրամաբանութի • և է այս գիրքս իբր ներածութի արտաքնոց գրոց՝ քանզի շարս գրեալ բառքն, և բանքն, և միտքն, և ոճն, արտաքնոց գրոց գժեւարաւ ըմբռնի մտաց մարդկան և բազմի աշխատութե պէտք են լուկ այս, զոր սիմէօն վարդապետ արար • իբր ներածութի արտաքնոց գրոցն ամենեցուն • և որ ինչ այլևս որ առ սոսա վերաբերին զի Թէ գայցի ժամանակ յապագայս • որ գիտութի արտաքնոց գրոց պատեսցի յազգէս Հայոց՝ զորօրի նակ յանցեալ ժամանակս և 'ի մերս էր լեալ սոյ պատմեցաք • այս սիմօն վարդապետ արարեալն, զոր անունանեաց տրամաբանութի • անունց ուսուցանողի՝ եթէ որ կարդայ կարե դիւրաւ հասկանայ և իմր հասանիլ և ապա սովա յարայքին էիրքն ձեռնարկել :

Եւ յէ գիրքն պիտիղի իմաստասիրի, զոր 'ի Սրաց լեզուէն Թախմանեալ է 'ի մեր լեզուս՝ այլ ոմն նախագոյն եղեալ սիմէօն անունամբ • քահանայ • և այս սիմէօն վարդապետ գայն գիրքն և սուղեաց : վնզի առաջին Թարգմանութիս զաշխատութիս բազումս տայր կարդացողին • զի հոլովք անուննցն և խոնարհմունք բայիցն, և շարագրութիք բառիցն՝ ոչ էր ըստ պատշաճին և ըստ քերականի արհեստի յաղագորոյ և

և միտք բանին ընդ նմին այլայլուր: այլ և յո
լով տեղիս կրկնաբանութիւք կային միոյ բանի
և ընթերցօրն զբազում աշխատութիս կրէր
և զօգուես սակաւ գտանէր: Եւսկ սա ըստ
քերականի արհեստին զամ ուղղեալ յարդա
րեաց որ դիւրաւ իմանի կարդացողին: և զբա
զում օգտութի շնորհէ մտաց մարդոյ:

Յետ այսօցիկ ձեռնէարկ հողեաց գրքին
զի զնա ևս ուղղեալ դիւրացուցէ. և մինչ
դեռ նոր սկսեալէր յայն. քարոզութե աղա
գաւ ելեալ գնաց յաշխարհն յունաց. և էջաս
'ի քաղաքն յեւդոկիայ' որ այժմ ասի թօփաթ:
և անդէն տկարացեալ վախճանեցաւ. և անդ
էն թաղեցաւ: և եղև վախճան սորա 'ի մերում
թուականիս. հազար և հարիւր և վեց 'ի փետր
վարի ամսոյ քսան և եօթն' յազու հցից պահօցն:

Ը կնի սոցին պատմեցուք զայլոյ ումեմն
զմաքրակենցաղ առնն զարդիւնաւորութիս
որոյ անունն ստեփաննոս վարդապետ յորջորջելուր:

Որ էր ինքն 'ի մայրաքաղաքէն լովայ և
յազգէն հայոց յազատէ և 'ի փարթամէ տանէ.
բարեպաշտից ծնողաց զաւակոր'ի տիս տղայու
թե իւրոյ վարժեցաւ 'ի դպրատունս լովա
ցոց գրով և լեզունան լատինսոց. և ուսաւ
զարուէտաքերականութե և զճարտասանական:

Եւ 'ի ժամանակին յորում նիկօլ եպիպան
լովայ նեղէր և վտանկէր զհայազուն ժողո
վուրդսն ծնողք ստեփաննոսիս վն բարեպաշ
տութե և ուղղափառութե հանեալ զսա
'ի լովայ առաքեցին 'ի սբ աթոռն | Չմիածին 'ի
ժամանակս փիլիպպոսի կթիկսին: Եւ յորժամ
էջաս ստեփաննոս Ա Չմիածին ուսաւ զլեզու
և զգիր հայոց. և 'ի բերան էաւ զսաղմոս և
զջարական և զայլ եկեղեցական գուսմունսս

Ի յնուհետև սկսաւ ընթեռնուլ զածա
 շունչ գիրս և զերկոտասանից վրդարտաց և ի
 լիտփայից. և վնզի յառաջմէ գիտէր զլեզու
 և զգիրս լատինացւոց՝ յետոյ ուսաւ և զմերս.
 և զերկոսեանն առ միմեանս համեմատելով խօ
 կայր՝ ի նոյնն և մտալարժիւր: վնորոյ առաւե
 լաւ քան զայլ ընկերս իւր: այլև էր մտօքն
 սուր և ծննդական. առնօղ և պահօղ և միշտ
 ընթերցող: և վարուքն մաքրակենցաղ՝ և պար
 կեշտ: Սրոյ զուսումն և զմաքրութի վարուց
 տեսանելով ամենից վարդապետաց վկայեցին
 առաջի փիլիպպոսի կեօղկոսին. այլև ինքեան
 իսկ տեսուն փիլիպպոսի տեսանելով զարժա
 նաւորութի նր. կոչեաց յևս գերադրական՝ ի
 փառս զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահա
 նայ ետ նմա զիշխանութի վարդապետական:

Եւ ինքն ստեփաննոս վարդապետ օր ըստ
 օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ՝ և
 պարկեշտիւք վարուք. վնորոյ ընկալաւ զշնորհս
 ՚ի հոգւոյն սրբոյ. և ՚ի նորին պարգևաց թարգ
 մանեաց զչորս գիրս ՚ի լատինականէ գրէ և ՚ի լե
 զուէ ՚ի հայ գիր և լեզու. որոց մինն է յօսե
 պոս պատմագիրն. բայց ոչ բովանդակն. այլ
 զայն միայն, որ ի վր եհմի քաղաքին. և հրէից
 ազգին պատեւրազմութի յարեան՝ որ է վեց հա
 սոր: Եւ երկորդ՝ ի իոնէսիոսի արիսպագա
 ցւոյ գիրքն. զի թէսքտ առաջինն թարգմա
 նեալն ստեփաննոսի մեկնեցւոյն գոյր իմէջ մեք.
 այն համառօտախօս և դժուարահասկանալի
 էր. իսկ սորայս թարգմանեալն ևս նոյն է. բայց
 դիւրահասկանալի է՝ որ ոչինչ մնայ անհառ
 ընթերցողէն. զի մեկնութիւն յաճախ է և դիւ
 րահաս: Եւ երրորդ գիրք՝ որոյ անունն է
 Գիրք պատմաւաց. այլև կոչեն զնա ՚ի վեր
 քան

մեզ. յորժամ օրհնէք զմեռոն՝ զոր սրբութի բերէք ի վն. և մեք ասացաք զՄ. Չ սրբոյ գրի գորի մերոյ լուսաւորչին. և զՄ. Չ թաղեոսի սրբոյ առաքելոյն. և զնք նշանն որ՝ ի կենաց փայտէն. և զգեղարդն որ մխեցաւ ՚ի կոյսն Տն: և նորա թողեալ զամ ասաց, վն լուսաւորչի Մ. Չոյն զայդ՝ որ լուսաւորչի Մ. Չ ասեո աջոյ Մ. Չն է թէ ձախոյ. մեք ասացաք թէ աջոյ Մ. Չն է. ասաց ներսէս վարդապետն, բնա կիւք կիթղկոսարանին սասյ ասեն՝ թէ ստուգիւ և հաւատեալ Մ. Չ օբյ լուսաւորչին այն է, որ ՚ի սիս է. և բերեն զվկայ ստուգութի նորին զայն բանն՝ որ ՚ի շարագրութիս հայրապետաց գրեալ է վն ստեփաննոսի հայրապետին և վն լուսաւորչի Մ. Չոյն. որոյ գրեալ պատճէն այս է: տէր ստեփաննոս ամն չորս ՚ի սոքա աւուրս եղև անհարին աղէտ. զի անօրէն գողոզ սուլթանն եգիպտոսի քանդեալ աւերեաց զաթող լուսաւորչին սրբոյն գրիգորի՝ զկլայն հռօմէական՝ և ՚ի սուրսուսերի մաշեաց զամ. և զմնացեալսն խաղացոյց ՚ի գեթութի. ընդ որս և զհայրապետն սուրբ. և անդ վախճանի: Եւ զՄ. Չ սրբոյ լուսաւորչին գրիգորի անդ տարեալ. և յորժամ էմուտ ընդ ապարանս նց պատճեաց զնոսա մոհուամբ. ոպ ՚ի ձեռն տապանակին զայլազգիսն. մինչ զի անհամար և անթիւ էին մեռեալքն. մինչև դարձուցին զՄ. Չ ձեռն սբ լուսաւորչին գրիգորի յերկիրն կիլիկիոյ առ բարեպաշտ թիւրն հեթում. և ապա դարարեցաւ ցասումն ՚ի նոցանէ. Մ. Չոյ նորս այսու վկայութիս ասեն թէ այն Մ. Չն որ ՚ի սիսէր ստուգիւ այն է Մ. Չ սրբոյ լուսաւորչին. իսկ զայդ Մ. Չոյ, զոր արդ ունիք յՄ. Չ միածին. ոպ գիտէք թէ այդ լուսաւորչի

աջն է. եթէ ունիք զվկայութի՛ն նախնեաց վն դորին՝ ցուցէք: Իսկ մեր լսելով զայս լուեցաք զն պարզմտութե՛ն ունեայք զհաւատ հաստատ առ Լ. Ջոյն. և ՚ի նունոց հաւատոց ոչ երկմտեցաք, բաղմաւ հողաբարձութե՛ն հետեցարդ տանել զվկայութի՛ն գրոց. ոչ թէ վն մերոյս հաւատոյ հաստատութե՛ն այլ վն յայտնելոյ ճշմարտութե՛ն. և հարցողաց պատասխանատրութե՛ն:

Եւ ՚ի շրջին մերում յամենայն քաղաքս և ՚ի գիւղս, եթէ արեւելից և թէ արեւմտից, ուր և գտանեայք զժերունի վարդապետ, եպիսկոպոս, կամ քահանայ, հարցանեայք վն սորին խնդրոյ: Եւ յլլա յամենայն եկեղեցիս ուրև պատահեայք, ամենից գրոց անդրէն եղելոց զյիշատակաբանսն ընթեռնողաք, յորոց գտաք զբազում վկայութի՛ն, որոց զաւաւել հաւատին առեալ աստէն շարագրեցաք: Կնացաք ՚ի սպասան քաղաք՝ և մինչ որոնեայք զյիշատակաբանս գրոց, գտաք զաւետարան մի՛ որոյ յիշատակաբանն էր այսպէս:

Երդ գրեցաւ սք աւետարանս ՚ի թո՛ւնիս հայոց, ու թ հրել և ու թ սուն և ու թ ն ձեռամբ գրի գորի սուտ անուն կրօնաւորի, ՚ի վանս որ կոչիւր գիլան, ընդ հովանեաւ մօրս լուսոյ սրբուհւոյ Լ. ճածնին, և տեառէն յո՛ւսկայ որդւոյ սրբոյ գերեզմանին, ՚ի հայրապետութե լուսաւորչին, քանզի յայսմ ամի վերացեալ եղև Լ. Ջոյն ՚ի սայ՝ և ոչ գիտեմք զինչ եղև, յառաջնորդութե սրբոյ ուխտիս մկրտչի վարդապետին:

Հանդիպեցաք ՚ի սեբաստիայ ՚ի վանս սրբոյ հրեշտակապետին և անդ էր ճաշու գիրք մի, որոյ յիշատակաբանն էր այսպէս գրեալ:

Եւ արդ, գրեցաւ ճաշու գիրքս ՚ի քաղաքս արժկէ հանդէպ սրբարարի ծովում՝ որ մանր ձկուկս

ձկուհիք ելանեն , ընդ հովանեաւ պատերազմի
 սրբոյ նշանիս , և ամենամաքրի սրբուհւոյ Մծ
 ածնի կաթողիկէիս , 'ի հայրապետութեան թեմեծի
 աթոռոյն՝ որ էր 'ի սիսիսափանեցաւ . զի զՄ. Ջն
 սրբոյ շուսաւորչին անդ-ի գողացան , և յամս եր
 կու ազգս հայոց անտերունջ մնաց , 'ի դառն և
 'ի չար ժամանակիս՝ յորում շարժեալ էր պիղծ
 ջիհանշայն , զի թուականս հայոց , ութհարիւր
 և իննսուուն էր՝ որ այս ամենայն բանս եղև :

Գնացեալ 'ի սպահան քաղաք իմէջ ջուղայե
 ցոց , գտաք զայսմաւուր մի՝ որոյ յիշատակա
 րանն էր այսպէս գրեալ :

Իւ արդ՝ գրեցաւ այսմաւուրս 'ի թուա
 կանութես հայոց մեծաց , ութհարիւր և իննս
 սուն ամին , յերկիրս վասպուրականն , 'ի քա
 ղաքն վան կոչեցեալ . ընդ հովանեաւ սրբու
 հւոյ Մծածնի տաճարիս և այլոց սրբոց՝ 'ի հայր
 ապետութե մեծի աթոռոյն սայ՝ որ յայսմ ամի
 զլուսաւորչի Մ. Ջն գողացեալ տարան , և ա
 թոռն ունայն մնաց , 'ի դառն և 'ի չար ժամա
 նակի , 'ի պարոնութե ջհանշահին , որ չարութե
 իւրով լցեալ գնաց 'ի վրաց տուն , և վրացիքն
 զինչ քրիստոնեայ .ք , որ կայր 'ի հայոց ազգէն .
 զամենեսեան բռնութե՝ 'ի շաճուլտայ բերդն
 արգելեցին . Դ այլ ամենևին նոցա ոչ օգնեցին .
 և չար ջհանշէն չարեօք զօրօքն իւրովք գնա
 ցենալ ի վր . և հաւ զդղեակն շամշուլտոյ . և ինն
 հազար անձինս քրիստոնէից և այլ արելի հան
 դերձ քահանայիւք՝ 'ի սուր սուսերի մաշեցին և
 զկնայսն և զտղայսն գերեվարեցին . որոց զաղէտ
 տարակուսանացն ով կարէ սլատմէլ կամ գրել :

Իսկ գնացաք մեք 'ի քաղաքն ուրհայ .
 և 'ի վանքն ուրհայոյ ուր կայ տապանն սրբոյն
 Կփրեմի խորին ասորոյ . տեսաք զճաշոց մի

որոյ յիշատակարանն էր ըստ այսմ օրինակի :

Եւ արդ՝ եղև սկիզբն ճաշոցիս 'ի սբ ուխտն մատննավանք. և աւարտեցաւ 'ի քաղաքն յարծկէ. յամի ութհարիւրերորդի. իննսուներորդի. և երկրորդի ամի. 'ի թգրութե ջհանշացի որ գւոյ ղարայիւսուֆին. և 'ի հայրապետուէ ակոռոց լուսաւորչին մերոյ տեղապահի տեառն կիբակոսի ընդհանուրց հայոց կթղկոսի : զի մինչ 'ի սոյն ամս Ղն լուսաւորչին մերոյ գրեգորի 'ի սիս էր. և ամազգս հայոց հնազանդեալք էաք ակոռոյն կիլիկիոյ . և այժմ շնորհիւ նորին . և օժանդակութբ հոգւոյն սրբոյ, վերստին եկն 'ի նոյն վաղարշապատ Ղմիածին շողակածի տաճարին, և հաստատեցաւ ակոռ հայկազնի սեռի, գերապատիւ և հրաշափառ, զոր պահեսցէ հաստատուն ՏՐ ՅՍ, Ղմէն :

Եւ զտաք զաւետարան մի, երև ընթերցաք զյիշատակարանն, և էր գրեալ այսպէս : Եւ արդ՝ սկսեալ եղև սբ աւետարանս յարդնի, 'ի վերադիտողութե հայկազնի սեռի երկուց կթղկոսաց տեառն գրեգորի և տեառն կիրակոսի զի յորժամ գրեցաւ սբ աւետարանս այս, չորս ամ էր, որ լուսաւորչի Ղն կորեալ էր 'ի սրսայ և ել համբաւն 'ի վաղարշապատ, վստորոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպ, քահանայք, եօթն հարիւր անձն, և հաստատեցին զթոռն Ղմիածին, և եդին զոմն կիրակոս անուն այր առաքինի և ձգնաւոր կթղկա, և հաստատեցին զթոռ սբոյ լուսաւորչին : 'ի յաշխարհակալութե համկայսուլտանին : 'ի թոռականութե հայոց, ութհարիւր և իննսուներեք ամին : և այս ևս այսպէս :

Եւ յետ գրելոցս այսոցեկ ունիմք զայլևս հաստատագոյն պատմութի վս գալտոհան լուսաւորչի

որչի՛ Ղոյն՛ի սքաթոռն յՂմիածին, զի իմ պատահեալ՛ի քաղաքն անկերիայ, գտիցայս մաւուր մի յեկեղեցին՝ զոր սք հոգի սխուհանեն, որ ունէր զյիշատակարան կարի երկարաբան, բայց վս կարևորի գոյոյ բանին, զամեն բանն նունով շարադրութիւն անպակաս գրեցի աստ: և վս երկարութե ոճոյն մի ինձ լիցիս մեղադիր և միառաջնոյ շինողին, զի ոճ պատմութե այնպ պահանջէ քանզի երկար է պատմութի որոյ սկիզբն է այս: Վրդ գրեցաւ սք գիրքս յամի թուականութեա հայոց իննհարիւր և տասնամին, յերկիրս քաջբերունւոյ, ՛ի քաղաքս արձէշ, ընդ հովանեաւ ամէնօրհնեալ սրբուհւոյ Վճածնի տաճարիս, ՛ի հայրապետութե տեառն զաբարիայի կթղկսի ամենից հայոց, և ՛ի բռնակալութե ազգիս ներտողաց Չհանշայի փաթշահին. որել բազմօք հենիւք և անթուովք զօրօք. և գնացեալ եմուտ ՛ի տունն իրազայ և զամեն գրաւեաց ընդ ձեռամբ իւրով. և հասեալ ՛ի մեծ քաղաքն ասպահան, որ է շՅՔ քաղաք. յոր մարգարէն դանիել զտեսին ետես. որ էր ամուր և բազմամարդ որոց ընդ իմացեալ նմա պատերազմեցան. և յաղթեալ նց էտուր քաղաքն. և զամեն զօրսն սրոյ ձարակ տուեալ և ՛ի սուր սուսերի մաշեալ. քանդեալ և աւերեալ. և զԶուր գետոյն կապեալ իվերայ քաղաքին. զի որք ՛ի նղմունս և ՛ի ներքնատունս և ՛ի դարանս մտեալ էին և թաքուցեալ ամենքեան ջրասոյղ և հեղձամղձուկ եղեալ սատակեցան. որ և քաղաքն ամ տապալեցաւ իվր նց զի հողաշէնէր: Վր անտի գնացեալ եմուտ ՛ի հրէ և ՛ի խորասան. և զամ տունն թաթարաց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, և դարձեալ եկն ՛ի թախան իւր, ՛ի քաղաքն շահաստան ՛ի

Թաւրէզ: Որոյ ընդ առաջ գնացեալ մեծ հայ
 ըստեան տէր զպքարիայ աթոռակալ սրբոյ խա
 ջին աթամարայ. որ էր Թգլրազն՝ ի Թոռանց
 և շառաւիղէ արքային գագկայ բազմօք ըն
 ծայիւք և պատարագօք: զոր յոյժ սիրով ըն
 կալաւ արքայն արքայից Չհանշայ փաթշահն
 և դշխոյն բէկում խաթունն. և պատուէալ
 մեծարեցին զնա. և ետուն նմա զխլայ և զպար
 գև և զԼ՛ջ լուսաւորչին մերոյ սրբոյն գրեգո
 րի. և զպատիւ պատրիարգութե: Որոյ ա
 ռաջնորդութեն Լ՛յ և կամաւ սրբոյ լուսաւ
 որչին և հրամանաւ փաթշահին եկեալ ԵԼ՛ծ
 արեալ և ԵԼ՛ծանկար սբ գրեգորաշէն և երկ
 նասանգէտ կԹ՛ղկէ սբ Եջմիածինն՝ յառաքե
 լաշնորհ աթոռ սրբոյն գրեգորի. և նստաւ ինք
 նակալ պատրիարգ Է հանուր ամիքրիստոնէա
 կանի ազգի. որք են ընդ ամոյորոս տիեզերաց.
 և արարեալ զաշխարհս ամ լինել մի հօտ և մի
 հովիւ ըստ բանին Տ՛ն. և հովուէր զամսն ՚ի
 հաւատա ուղղափառ նիկիականի սրբոյ գաւա
 նութե: Ի նդ այնմ ժամանակին եղև ցասնուլ
 փաթշահն իվր ամիրային բաղչու. և բար
 կութի առաքեաց զչորսզօրագլուխ երկոտա
 սանիւք հազարօք հեծելազօրօք իվր քաղաքին
 խլաթայ՝ և գնացեալ աւարեալ քանդեցին
 զնա՝ և բզմաւար ՚ի մի ժողովեալ նստան իվր
 բերդին և նեղէին յառնուլ զնա: և զնոյն հան
 դերձեալէ ինառնել ՚ի բաղէշ՝ և մուշ ՚ի խութ
 և ՚ի սասունք և յամսն գաւառսն նց: Օ՛ր տե
 սեալ նորընծայ պատրիարգն տէր զպքարիայ
 զտարակուսանս աշխարհին այնորիկ զգերեվա
 րին և մասնին ՚ի ձեռն անօրինաց: զաւերին
 և զքանդին. զխախտումն եկեղեցեացն. և
 զտապալումն սբոց սեղանոցն. զգերեվարիւ սրբ
 բու.

բուծեցն . և զխափանու մն փառաբանութեցն
 Լ. Յ. և զտարաշխարհիկ լինելն ամ խառնիճա
 զանձ ժողովրդեան՝ զգերին և զտատախլն :
 Օայս ամ զմտաւածեալ մեծ հայրապետն
 տէր զաբարեայ . և ՚ի միտս իւր բերեալ զբանն
 տէրունական . որ ասէ՝ Թէ եսեմ հովիւն քաջ
 հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վր ոչխարաց . և
 կատարեալ գործով զբանն . եդ զանձն իւր
 ի վր բանաւորի հօտին Վ. Ե ի վր ամի ժողո
 վրդեանն քաղիչու . և զօրացեալ ՚ի հոգւոյն
 սրբոյ . և արարեալ զսիրտ իւր եբրև կկարծր
 վէմ . և մտեալ առաջի Թգրին , ետ զանձն իւր
 փրկանս փոխանակ բազմաց . տուեալ զձեռա
 գիր և մտեալ դաման առնուլ զհարկս յամիրայ
 էն բաղիչու և տալ կայսերն առ ՚ի մնալ երկ
 ըին ՚ի խաղաղութե՝ և առնել զաղօթս վն կե
 նաց Թգրին և որդւոց նր : Արոյ հաւանեալ ար
 քայն և դչխոյն ետուն նմա զնշանագիր և զհրա
 ման առնել զինչև կամեսցի , և նր երեալ երե
 սաց նց վաղվաղակի ձիրն Թաց արչաւմամբ գը
 նացեալ էհաս ՚ի քաղաքն բաղէշ : Արոյ ընդ ա
 ռաջելեալ ամիրայն հանդերձ ամենիւք մեծա
 մեծօքն իւրովք , և մեծարեալ փառօք տարաւ
 զնա ՚ի գլուխ բերդին , և խոստացան առնել
 զկամս նր և տալ զինչև խնդրեսցի , բայց միայն
 զի յետս դարձուսցի զամենայն հեծելազօրսն
 ՚ի բերդէն խլաթայ : Այլ նա առեալ զ վկայ
 ութն ՚ի բերանոց նց գնաց ՚ի խլաթ , և ետ զօ
 ըագլխացն կրկին ձեռագիր , և ցուցեալ նց
 զնշանագիր փատչաճին և համոզեաց զնս՝ որք
 խաղաղութբ գնացին ՚ի տեղիս իւրեանց , և
 ինքն դարձաւ ՚ի բաղէշ և նստաւ ամիսս երիս
 և առեալ զխոստացեալ հարկն կայսերական ,
 և տարեալ մատոյց առաջի փատչաճին՝ և արար

զխադարդութի իմէջ նց , և ադատեաց զամնս
 խառնիճադանճ ժողովուրդն զՏայ և զտաճիկ
 'ի ձեռաց անօրինաց և 'ի դառնէ գերութենէ ,
 զոր Վճ ազատեսցէ զնա յամէ փորձութէ
 Տոգւոյ և մարմնոյ ամէն : Եւ նր դարձեալ
 'ի փառշահէն նստաւ յաթոռն իւր 'ի սբ Եջ
 միածինն , և մեծարանօք խիլայեալ եղև յեր
 կուց գոռողաց յայլասեռից , 'ի թուրքմանէ
 փառշահէն և 'ի բրդոյ ամիրայէն , ոնց զգօ
 ռաբաբէլ 'ի դարեհէ առ 'ի հովուէլ զհաւա
 տացեալ ժողովուրդս իւր : Եւ եղև կրկին
 անգամ գնալ ջհանշայ փաթշահին 'ի տունն
 երաղայ , 'ի շիրազ և 'ի բրման , և եր նր որդի մի
 հասանալի անուն՝ որ շրջէր թափառական
 զվերին կողմամբ գաւառին արարադեան , և
 նա նենգութբ չարախօսաց ոմանց կամեցաւ
 ըմբռնել զմեծ պատրիարզն զտէր զպարիայն՝
 և պահանջել 'ի նմանէ զգանձօ և զինչս : զոր ի
 մացեալ մեծ հայրապետն զնենգութի նորա , և
 առեալ զԵջ սբ յուսաւորչին հանդերձ այլօք
 սպասուք յաւուրս ձմերայնոյ և գնացեալ
 մինչ 'ի բագուճան և անտի եկեալ 'ի բերդն բի
 ազտի իջեալ 'ի սբ ուխտն արգիլանս ուր հնգու
 ցեալ կայ պատուականն շխար սբոյ վարդապետին
 ստեփաննոսի տէր յուսկայ որդւոյն : Եւ անգ
 հասեալ յայտնեաց զգանձն Վճային զԵջ
 սբոյ յուսաւորչին մերոյ սբոյն գրիգորի .
 հանդերձ խաչալամոյն որնկարեալ կայր 'ի մի
 կողմն պատկերն տերունական . և 'ի միւս կողմն
 յուսաւորչին մերոյ սբոյն գրիգորի . և թա
 գաւորին արդատայ . և չքնաղագեղիկուսին
 սրբուհւոյն հաիփսիմեայ . այլև ոսկեթել յօրե
 նուճածով և ազգի ազգի գունով . երանգ ե
 բանգ զարդարեալ սրբով ուրարոյն . որ զարմա
 նալի է

նալն է տեսողացն: Եւ գեմ եգեալ գալ ՚ի
 Տայրենի աթոռն իւր ՚ի գեղեցկայարմար զըմ
 բէթայարկ քբ խաչն ախթամարայ: Եւ ՚ի
 Տամբաւ գալոյնը Տնդերձ սրբով Լ՛. Զոյն և խա
 չալամոյն, որ բարձրացեալ կայր ՚ի ծայրս ձողոյ՝
 և խաչ ոսկի կառուցեալ ՚ի գլուխս նր. ընդ որ
 գրոհ տունեալ ամենից բնակ չաց գաւառացն Է
 որ գայր Տայրապետն և ամբն ընդ յառաջ ընթա
 նային խնկօք և մոմեղինօք և զենմամբ խոյոց և
 զոճարակաց և երկրպագութի մատուցանէին
 սրբոյ Լ՛. Զոյն. և Տայրապետին՝ և Տամբուրէին
 զնա մեծօք փառապանօք մինչև եկեալ է Տաս
 ՚ի գաւառն տոսբայ. և մտեալ ՚ի քաղաքն
 վան. բազմօք եպկպսօք և վարդապետօք. քահա
 նայիւք և բազմամբոխիւք ժողովողովք՝ ձիօք
 և ձիաւորօք. և խաչալամն առաջի. և քահա
 նայքն յառաջ և յետոյ երգէին քաղցուք եղա
 նակօք. և այնպէս պերճ և փառաւոր եմուտ ՚ի
 քաղաքն վան: Իսկ պարոնն այն՝ որ նստեր յա
 մուրն շափրամայ ՚ի բերդն վանայ մահմուտ
 բէկ կոչեցեալ. որ երկաթնեղբայր ՉՏանչայ
 փառաշահն. ետես զպայծառութի քրիստո
 նէիցն և ցանկացաւ տեսութե սրբոյ Լ՛. Զոյն.
 և յղեալ տարաւ ՚ի գլուխ բերդին. և եղև
 Է մտանել մեծի Տայրապետին սրբով Լ՛. Զոյն Է
 գուռն վերին բերդին՝ ընդ առաջել գուռոցն
 մահմուտբէկ. ամենիւք մեծամեծօքն իւրովք.
 տամբ և ամիրզայ որդւովքն. և ամենիւք ընտա
 նեօքն. և երկրպագութի մատուցանէին սրբոյ
 Լ՛. Զոյն և Տամբուրէին. և զաղերս պատարագաց
 նոճիրէին. և մեծարեալ խելայեաց զՏայրա
 պետն՝ և դարձոյց յօթեւանս իւր: զոր տե
 սեալ բազմութե քաղաքին և գաւառին օր
 ըստօրէ դային յերկրպագութե սրբոյ Լ՛. Զոյն.

և յողջոյն մեծի հայրապետին բազմօք ընծայ
 իւրեւ պատարագօք: Եւ յետ աւուրց ինչ ա-
 ռաւ զհրաման՝ ի պարոնէն գնալ՝ ի հայրենի
 աթոռն իւր՝ ի յաղթամար. և իբրև ել՝ ի քա-
 ղաքէն ելին ընդ նմա բազմութիւք եպկիսոց՝
 վրդաւոց՝ և քահանայից և նմ ազատագունդ
 խօջայքն վանայ՝ ձիօք և ձիաւորօք սպառազի
 նեալք: և եկեալ հասին մերձ ժովասայեաց
 քաղաքին ոստանայ. որում ընդառաջ ելին
 նմքն բնակիչք քաղաքին, քահանայիւք և բազ-
 մամբոխիւք ժողովրդօք՝ ի մեծամեծաց մինչև
 ցփոքունս. խնկօք՝ և մոմեղինօք՝ և բարձրա՝
 ձայնիւք եղանակօք. մինչ գրեթէ քան զհազար
 մարդ աւելի կայր յառաջ և յետոյ մեծի հայրա-
 պետին: և խաչալամն առաջի գնայր ունելով՝ ի
 գլուխն զխաչ ոսկեփայլեալ լուսոյ նման: և
 այնպէս շքեղիւք փառօք եմուտ ի քաղաքն
 յոստան. իբրև տեսին այլասեռ բնակիչքն որք
 յոստան զխրախութին զայն՝ ի խորխոցեցան
 լէ պայծառութի և ընդ համարձակութի հայ-
 րապետին. որ ի գաւառէն տարբերունւոյ
 մինչ ի քաղաքն յոստան խաչալամով էր ե-
 կեալ՝ եպկիսօք՝ և վրդաւօք՝ և բազմօք կար
 գաւորօք և ժողովրդօք. վսորոյ ժողովեցան
 ի միասին առ իշխան քաղաքին. որ էր ազգաւ
 քուրդ. ժանտ և անագորոյն ամենեկին թշնա
 մի բրնատոնէից. և խորհեցան խորհուրդ գլխար
 զի գաղտագողի նենգեցեն հովոճապետին:
 զոր իմացեալ զչարութինց քաջ դիտապետև
 և լէ լուսանայ առաւօտուն առեալ գնք Վջն
 գնալ ի յեզր ժովուն ուր նաւահանգիստն ըն-
 նէր: Օ որ իմացեալ ամենից եկելոցն ընդ նմա.
 որք ի վանայ, և որք յայլոց գաւառացն ելին
 զհետ նր և եկին հանդէպ Վճապաս. կղզոյն
ախ

ախթամարայ մեծի բերդին մանած իրհե, որ է
 բարոտաչտ: Աւանդ զտեղի առեալ օրհնեաց
 զամեն շնորհաբաշխ սրբով աջոյն և համբխ
 րեալ զամ'ի համբոյր սրբութե. և արձակեաց
 զնն խաղաղութի և օրհնութի գնալ'ի յարկս
 իւրեանց: Աւ ինքն է առ զմբ Ա. ջն լուսաւոր
 չին և եմուտ'ի նաւ և գնաց յածաբնակ կղզին
 յաղթամար'ի հայրենի ժառանգութի իւր:
 զոր իբրև ելին'ի ցամաք ընդ առաջ ելին նմա
 ամբն բնակիչք տեղւոյն յեզր ծովուն խնկօք և
 մոմեղինօք' և բահանայիւք՝ բաղցրածայնիւք
 եղանակօք և առեալ տարան զմբ Ա. ջն' և եդին
 'ի գեղեցկայարմարնք խաչն աղթամարայ. և եր
 կրպագութի մատուցանէին սրբոյ Ա. ջոյն և հայ
 րապետին. և զօրհնութի և զփառաբանութի
 վերառաքէին հրաշագործողին Ա. յ. որ արժա
 նի անբար զամեն տեսութե շնորհաբաշխ սրբոյ
 Ա. ջոյն լուսաւորչի. եմուտ'ի յամուր կղզին
 ախթամար և հանգեաւ 'ի գմբէթայարկ նք:
 Ա. ջն'ի բուն տեղինսն իւր: 'ի թուականութես
 մերում իննհարիւր և տասն և մեկ ամին. 'ի
 սկիզբն տարւոյն. որ էր նաւասարդի ամսոյ
 տասն և վեց. յաւուր ուրբաթի նքոյ յակօբի պա
 հոցն եմուտ նք խաչն աղթամար' 'ի պահպա
 նութի մեզ ամենից հաւատացելոց. որոց եղև
 ուրախութի ամբն ոչ սակաւ: Աւ զայս լու
 եալ ամենից բնակչաց գաւառացն օրըստօրէ
 գային յերկրպագութի սրբոյ Ա. ջոյն' և յողջոյն
 մեծի հայրապետին բաղմօք ընծայիւք և պա
 տարագօք. և օրհնութի մեծաւ ուրախու
 թի գառնային յարկս իւրեանց՝ փառաւորե
 լով զամենամբ զերրորդութին. զհայր և զՍրդի
 և զմբ հոգին այժմ և միշտ և յաւիտեանս
 յաւիտենից ամէն:

Մ. րդ. այս պատմութի մինչև ցայս վայր ծա
նոյց մեզ թէ լուսաւորչի սբ Մ. Զն Տաւաս
տաւաւ և սաուգիւ դարձեալ է 'ի սրայ և
եկեալ է Մ. Զմիածին . այլև գնացեալ է յաղ
թամար : Մ. յԼ և 'ի կարգս թուականացն ևս
գրեալ կայ թէ իննհարիւր և տասնևմեկ թուին
զաբարիայ կաթուղիկոսն , էառ զլուսաւորչի
Մ. Զն ընդ իւր և տարաւ յաղթամար :

Մ. րդ. թէ պէտ գոն և այլևս այսպիսիք բանք
և պատմութիք , զորս ժողովեցաք 'ի գրոց վն
սրբոյ լուսաւորչի Մ. Զոյն թէ Տաւաստեաւ է
կեալ է Մ. Զն 'ի սբ Մ. Զմիածին . սակայն զամսն
ոչ շարագրեցաք աստ՝ զի մի գուցէ լիցի երկա
թութի բանիցն ճանճրութի ընթերցողացն .
այլ զայս քանս բաւական համարեցաք շարա
կարգել աստ . յայտ առնել անխարդախաբա
րուց և ճշմարտասիրաց արանց իմաստնոց՝ զոր
պիտութի անցունածոց ժամանակաց : Մ. յսու
հետև ժամէ մեզ պատմել վն սբոյ լուսաւորչի
Մ. Զոյն թէ ոչ դարձաւ յաղթամարայ և եկն
'ի սբ Մ. Զմիածին :

Սերճ մայրաբաղարին նախնունսւ կայ
գաւառ մի , զոր անուննն շաբունուց ճոր . և
յայսմ գաւառի կոյ գիւղ մի , զոր անուննն
օծօպի . և մերձ այսմ գեղ ջս կայ շինեալ 'ի վա
ղեմեաց ժամանակաց վանք մի յանուն սրբու
հոյ Մ. Թածնին՝ զոր անուննն օծօպու վանք :
և միաբանից այսմ վանիցս եպիկպս ոմն ժոյ
անունն էր վրթանէս եպիկպոս . այր խորագէտ
և խելամուտ 'ի գործս իւր . և ճարտարաբան
'ի խօսս . սա գնացեալ 'ի յաղթամար գողացաւ
զՄ. Զն սրբոյ լուսաւորչին և եբեր դարձեալ
'ի սուրբ Մ. Զմիածինն : զայս արար վրթանէս
եպիկպոսն խորհրդով և կամոք վրկոսացն Մ. Զ
միած

միածնի . որոց անուանքն էին սարգիս և յո
 Տաննէս : Եւ նախ գնաց վրթանէս եպիպոս
 յանժամօթ աշխարհ և անդ այլափոխեաց զա
 նուան և զգգեսան . և հարթեալ թեթեացւոյց
 զժորուան . և եղև 'ի կերպ մուղդասոյ՝ անգէտ
 գրոց և կարդալոյ : այլև իվերոյ քան զժուանին
 կնպեաց պարնաւ զբարձն և կաղացոյց զՋիւն .
 և եղև իբրև զբնական կաղ՝ որ 'ի գնալն իւր
 կաղայր : և ապա գնացեալ 'ի կղ զին աղթամն
 րայ՝ և անդ բնակեցաւ և առնէր զսպասաւո
 րութի վանացն . և օրաւուր ընդելացաւ նց
 վն բարևոք սպասաւորութեն . մինչ որ կարգե
 ցին զնա լուսարար եկեղեցւոյն . և պահօղ
 անօթոցն և սրբութե վանիցն . և մնաց նա 'ի լուս
 արարութի եկեղեցւոյն յամս եօթն : և 'ի ժա
 մանակին յայնմիկ պատահեցաւ 'ի միում աւ
 ուր . զի եկին յոլովք արք վաճառականք՝ զոր
 հայոց բառիւ փօրեղիկ ասեն՝ և այլազգեաց
 բառիւ չարչի ասեն . այս չարչիքս գրաստուք
 և իշովք չըջելով գիւղէ 'ի գիւղ եկին և հասն
 մինչ 'ի նաւահանգիստն աղթամարայ . և այնպ
 իշովքն և գրաստովքն իւրեանց մտին 'ի կղ զին
 աղթամար վաճառելով տաւ և զաստառ . զէթ
 և զալաջայ՝ և զայլ ինչ : և էին այս չարչի արքս
 'ի գիւղաքաղաքն ջուղայու . քան զի 'ի ժա
 մանակին յայնմիկ տակաւին շէն էր ջուղայ . և
 մնացին երկու և երեք օր անդէն 'ի կղ զին .
 Իսկ վրթանէս եպիպոս հերձեաց զեւոյ միոյ
 զկուրդինն , որ է պահանն . և բերեալ զլուսաւոր
 չի լ . ըն ընդ նմին և զվառն , որ է խաչալամն . և
 զուրարն . զորև իմէջ անցեալ պատմութեդ
 յիշեաց . և զայս երեքեանս եդ իմէջ իւրոյ կուր
 դնին՝ և դարձեալ կարեաց ուր և էր յառա
 ջագոյն . և զայս արար թաքունն . և անգիտելն
 յամէ

յամէ մարդկանէ. բայց միայն իշոյ տիրոջն յայտ
նէաց. որում և պատու իրեաց զի բարւօք պաշ
տու անեսցէ. զի մի մնաս ինչ պատահիցի Մ. Ջոյն.
այլ և միևս ուրեք յամեսցի. այլ փութանսկի աշ
ուեալ հասցէ 'ի ջուղայ: և զկնի գնալոյ չարքոցն
յետ աւուրց ինչ' և ինքն վրթանէս եպկպսն
պատճառանօք ինչ ելեալ 'ի կղզւոյն և գնաց
ուրեք. իբրև հեռացաւ 'ի վայրացն յանժանօթ
տեղիս. ապա արձակեալ զկապտիցն, զոր առա
ջագոյն կապեալ էր' և ուղի անկեալ գնայր բազ
մաւ ճեպով: Իսկ բնակիչք աղթամարի կըղ
զւոյն իբրև տեսին թէ անցին տայմանեալ աւ
ուրքն. և ոչ եկն լուսարարն իւրեանց. գնա
ցեալ աստ և անդ հարցին և ոչ գտին: և իբրև
ժանեան թէ ոչ է Մ. Ջն' ի տեղոջն իւրում.
յայնժամ սկսան յամեն ճանապարհս և յուղիս
կարի ստիպով հետամուտ լինիլ զի թերևս հաս
ցեն. իսկ գնացող խնդրակքն: իբրև պատա
հէին եկող ճանապարհորդաց և հարցանէին
թէ զկաղայր մի տեսիք. և եկողքն պատաս
խանէին թէ չիք մեր տեսեալ զայր կաղ. և այս
ու կերպիւ զերժաւ վրթանէս եպկպսն. և ե
կեալ է հաս 'ի գեւղաքաղաքն ջուղայ. և որոն
մամբեկել է գիտ գտուն առնն' որ էր տեր իշոյն
և բազմաւ տագնապաւ հոգայր վն Մ. Ջոյն թեր
ևս ամբողջ հասեալիցէ Մ. Ջն' ի ջուղայ. իբրև
լուաւ յառնէն' և ետես զպաղանն յորում ինքն
եղեալ էր զՄ. Ջն' զի ամբողջ կայր Մ. Ջն. յայն
ժամ մեծաւ ցնծութե և ուրախ եղև և փառս ետ
Մ. Յ: Մ. պա գնացեալ վրթանէս էպկպսն առ
առաջնորդս և առ քահանայսն ջուղայու. և
ժանոյց նոցա զարարն իւր. և նոքա զարմացան
ընդ արարեալ գործն նր. և լցան երկնայնով
խնդութե. և գնացեալ հանին զՄ. Ջն. և զխաջ
ալ

ալամմը և զուրարն՝ և բերին՝ յեկեղեցին. և վաղվաղակի առաքեցին աւետաւորս՝ ՚ի սբ աթուռն Ղջմիածին առ կթղկոսն սարգիս և յօհաննէս՝ որոց կամօք և խորհրդակցութբն գնացեալ էր վրթանէս եպկպոսն յայս գործ։ Եբրև լուան նորա ևս առաւել ցնծացեալ զուարճացան և լցան երկնայնով խնդութբ։ և վաղվաղակի եկեղեցականօք աշխարհականօք և ամենիւք երևելեօք արամբք աշխարհին աւարարու յուղի անկեալ գնացին ընդ առաջ սրբոյ Մ. Ջոյն. և գտին զՄ. Ջն՝ ՚ի նախչունան քաղաքի. զի մինչ ՚ի գալն կթղկոսացն, ջուղայեցիք և վրթանէս եպկպոսն զՄ. Ջն բերեալ էին ՚ի նախչունան քաղաք. և անդ ՚ի նախչունան քաղաքին պատուեալ փառաւորեցին զսբ Մ. Ջն լուցմամբ պայծառաց մոմեղինաց՝ և բուրմամբ անուշահոտոց խնկոց՝ և զբնմամբ խոյոց և զուճակաց. և կատարեցին անդէն զուխտս և համբուրեցին մեծատենչիւք փափագանօք զսբ Մ. Ջն. և ապա աշխարհախմբով բազմութբ առին զսբ Մ. Ջն և բերին ՚ի սբ աթուռն Ղջմիածին. և հանգուցին ՚ի սեպհական և ՚ի բնական աթուռն իւր։ Իսկ կթղկոսունքն և ամբն արք աշխարհին եկեղեցականք և աշխարհականք զբազում և զանթոճելի պարգևս բաշխեցին զվրթանէսի եպկպոսին. այլև որքան նոճէրք և աջահամբոյր, զոր նոճիրեցին ժողովուրդին սրբոյ Մ. Ջոյն՝ զայնևս զբովանդակն շնորհեցին վրթանէսի եպկպոսին։ այլև կարգեցին կաթուղիկոսունքն և ամ ժողովն՝ զե վրթանէս եպկպոսն լիցի աթուռակալ կթղկոսացն՝ որք և իցէ կթղկոս իմէջ սրբոյ աթուռոյն՝ որքան և իցէ վրթանէս եպկպոսն կենդանի. որ և արար զաթուռակալութի մինչ ՚ի ժամանակս

Ժերուէ իւրոյ : և ապա վն անկարուէ մարմնոյն
գնաց 'ի վանքն օծօպու մերձ իւրոց ազգակա
նայն վն պաշտպանելոյ իւրոյ ծերուութն . և
անդէն վախճանեցաւ և թաղեցաւ 'ի թուին
ինն հարիւր և քառասուն և երկու ունի և գրեալ
է ի վրտապանին իւրոյ . Իսկ կլթղկսունքն Ս
միածնի իբրև զհայրենապատուէր կտակ . աւ
անդու թի ունեին իմէջ իւրեանց զի յամամբ
'ի տարուջն միանգամ գնային 'ի վանքն օծօպու
մատուցանէին զպատարագ . և զպաշտմանդրմ
բաժանէին վանականոցն . և կերակրէին զաղ
քատս վն հոգւոյ վրժանէսի եպիպսին . և մինչ
'ի ժամանակս դաւթի կլթղկսին , և մէլքիսէ թի
կլթղկսին կայր այս աւանդութի որ գային կա
թուղիկոսունքն և կատարէին : Իսկ վերոյ ճա
ռեալ պատմուիս որ վն գալստեան սբյ Ս Զոյն
է որ յաղթամարոյ դարձաւ և եկն 'ի սբ Ս Ս
միածին ոչ թէ հարեանցի բանք և զրուցք են ,
այլ հաստատուն և հայրենատուր աւանդու
թք պատմի յաման գաւառս որք են շուրջ
գնախնոճան քաղաքուն , և մանաւանդ 'ի գա
տունն շահբունուց ձորու՝ և որք մերձ նմա վա
նորայք են , զի ամբնեկեղեցականք և աշխար
հականք միաբանութք պատմեն զայս պատմու
թիս՝ թէ ձեռամբ վրժանէսի եպիպսին եկն
լուսաւորչի Ս Զն յ Ս միածին , յորոց առեալ
մեր զհաւատսին գրեցաք աստ : Իւր կայր լու
սաւորչի սբ Ս Զն անդ 'ի սբ Ս միածինն մինչև
'ի ժամանակս առաջին շահբասին , որ տարաւ
'ի քաղաքն յասպահան , և 'ի ժամանակս շահ
սէֆի թգւրին գնացեալ փիլիպպոս կլթղկսն
յասպահան քաղաքին դրեաց 'ի շահսէֆի թգւ
րին , և առեալ էբերդարձեալ 'ի սբ Ս միա
ծինն 'ի սեպհական աթոռն իւր , ունի և գրեալ
նիլ կայ

Տատարութի ԼՂ ԴՆՍԱԼՈՐԷԻՆ: 417
 կայ 'ի պատմութե փիլիպպոսի կթղկսն: և
 կայ նոյն սբ ԼՂն աստէն 'ի սբ ԼՂմիածինն
 մինչև զայսօր' և պատուել ըստ արժանոյն կբոյ
 փառաւորութբ բազմաւ, 'ի փառս իւր և զօ
 ըացուցանողին զնա Վհ: Եւ այն զոր իմէջ
 անցեալ պատմութեդ յիշեաց զխաչալամն և
 զուրարն, ահաւասիկ սոբա երկորինս ընդ սրբոյ
 ԼՂոյն կան 'ի սբ ԼՂմիածինն պահեալք Տատ
 տարութե վկայք սրբոյ ԼՂոյն, և մանաւանդ
 սքանչելագործ ութեքն, որք լինին 'ի սրբոյ
 ԼՂոյն ևսառաւել վկայ:

Եւ յարդարեալ շարակարգեցաք զպատմու
 թին զայս 'ի Թուականիս մերում, հազար և հա
 ըւր և տասն և մի ամիս, յուլիոսի ամսեանն 'ի
 մէկն, 'ի սբ աթորուն ԼՂմիածին, 'ի Ժամանակս
 կաթղկսութե տեառն յակօբայ ջուղեցւոյ, և
 'ի Թղլրութե Պարսից երկրորդ շահաբասին,
 և Սամանցւոց Թղլրին սուլթան մահմատին
 որդւոյ սուլթան եբրահիմին:

Ըարագրութի կթղկոսայն մերոյ առեալ և սկսեալ 'ի
 Ներսիս կայեցւոյ, և կարգաւածեալ և հասու
 ցեալ մինչև ցժամանակս մեր:



Կ Ե Ր Գ Ս Կ Ե Թ Ո Ւ

ճիկոսացս վն այն 'ի սրբոյն գրեգորէ
 ըսաւորէն ոչ առեալ գրեցաք •
 զի 'ի բազմաց սրբոց և իմաստնոց, և հաւատար
 մաց արանց գրեալէ այն՝ ոմ և յայտե յմցւն •
 իսկ որ յետ սրբոյն ներսիսի կայեցւոյ է, ոչ
 կայ բովանդակն 'ի մի վայր գրեալ այլ մասն մի
 աստ' և մասն մի անդ, իսկ մէք զբովանդակն
 հաւաքեցաք աստ 'ի մի վայր:

Եւ զանուանս կթղկոսացս ամենեցուն յորոց

Տաւաքեցաք . եթէ գասայ կթղկացն , և թէ
զլ ջմիածնի կաթուղիկոսացն յերեց տեղեաց ,
Տաւաքեցաք , մասն մի 'ի թուճականաց , որք
նախքան զմեզ գրեալէին , որոց ինքն Քսկից
վարձահատոյց : և մասն մի 'ի կոնդակաց վա
նորեից , զոր շնորհեալէին կթղկոսուէքն իւրա
քանչիւրոց վանորէից : և մասն մի 'ի յիշատակա
րանաց գրոց , որք յիւրաքանչիւրոց կթղկաց ժա
մանակս գրեալք էին : և մեր ժողովեալ զամեն
կթղկաց անուանան , սկսաք շարադրել զնն թ
կարգի թուճականին , զի որ 'ինախկի թուճոջն
էր նախադաս կարգեցաք : և որ յերկրորդում
թուճոջն էր , երկրորդ դաս կարգեցաք : և որ
յերրորդում թուճոջն էր երրորդ դաս կարգե
ցաք : և որ 'ի չորրորդում թուճոջն էր՝ չորրորդ
դաս կարգեցաք , և այսպէս առնելով Տասու
ցաք մինչև 'ի մեր ժամանակս : Այսպիսի առնե
լոյ սկիզբն 'ի վեցհարիւրէքսան թուճէն սկսաք ,
և մինչ 'ի ութհարիւր թիւն ուզելի էր , և յետոյ
նորիկ խառնակ և շփոթեալ , և մանաւանդ զի
բազումն և յոյովն ոչ կայր , զորս բազմաւ աշ
խատութիւն շարակարգեալ Տասուցաք 'ի մեր
ժամանակս : Իսկ այնք թուճականքն որք յիւրա
ք չիւրոց կթղկաց 'ի սկիզբն գրեալ կայ , ոչ թէ
զնոցին կթղկաց նստելոյ զառաջին ամսն նշանա
կէ , այլ միայն նշանի վն կարգեցաք զի այն թու
ոյն դիւրաւ ճանաչեմք զայն կթղկոսն : այլև
թէ իցեն երկու կարուպետ կամ էրկու պօղոս
ժամանակաւ մերձակայ միմեանց՝ այնու թու
ոյն դիւրաւ բաժանեմք յիւրերաց , և ոչևս
տարակուսիմք արդեօք միեն սոքա թէ երկու :
Իսկ այնք թիւքն որք զկնի կաթուղիկոսացն
գրեալ կայ՝ որ ցուցանէ թէ այս անուն կթղկս ,
այսքան ամ յաջորդեաց : այսց թուճոցս , զբա
զումն

զումն ոչ գրեցաք, միայն զումանս, քանզի երկու և երեք օրինակ՝ Ի միասին բերեալ տեսաք զի ոչ զուգաբան ասէին, վն որոյ և ոչ գրեցաք. քայց որք զուգաբան ասացին զնոցին Թեւման գրեցաք : և այս ասացեալ երկոքն Թեւք, Եվն սօսյ կԹՂԿՈՍԱԳՆ կայ գրեալ, Իսկ Եվն ԱՅԻՆՆԱԿԱՐԱՆՆԻ կԹՂԿՈՍԱԳՆ ոչ՝ Ի սկիզբն գտաք Թեւ գրեալ և ոչ՝ Ի վերջն, քանզի ԱՅԻՆՆԱԿԱՐԱՆՆԻ կԹՂԿՈՍԱԳ զանունանն ամցւն՝ Ի յիշատակարանաց գրոց Տաւաթեցաք, որք զԿԹՂԿՈՍԱԳՆ զսկիզբն և ոչ զվախճանն ցուցին : Ա, Ե և ԱՅԻՆՆԱԿԱՐԱՆՆԻ կԹՂԿՈՍԱԳՆ՝ որ Իմէջ միոյ Թունոյ երկու և երեք և չորք կԹՂԿԱՐ ԿԱՆ գրեալք այս է՝ զի յիշատակարանք գրոցն և կարգ Թունականին այնպէս ցուցին : այլ Ի կարծիս մեր Թունեցաւ Թէ այնքան կԹՂԿԱՐ լեալեն՝ Ի միում ժամանակն, և՛ Ի միում Թունականն : այլև ոչ եղեալք Տաու Թէ որք՝ Ի նոցանէ Իցէ առաջին ամանակաւ և որք վերջին, այլև ոչ այնմ, Թէ որք Իցէ՝ Ի նոցանէ Ինքնակալ, և որք ընդ ձեռամբ, և կամ լռեալ. այլ զայս միայն ցուցին մեզ յիշատակարանք գրոցն՝ վն որոյ և մեք այն պէս կարգեցաք :

Այլ արդ՝ օժանդակութիւն Տողոյն սրբոյ լն խոստման մերում, արդէն այժմիկ սկսցուք զկարգ կԹՂԿՈՍԱԳՆ՝ Ի սրբոյն ներսիսէ կայեցւոյ կարգաւ և Տաուսցուք մինչև Ի ժամանակս մեր :

ԱժԻՄ՝ մեռաւ Վրեգորիս կԹՂԿԱՆ, և նստաւ եղբայր նորին՝ Վերսէս ամս Եօթն :

Ան՝ մեռաւ տէր Վերսէս, և նստաւ տէր Վրեգոր եղբօր որդի նր, օգոստոսի տասն և երեք, յաւուր Տինգ շաբաթի : տէր Վրեգոր քարայլէ ժն : տէր Վրեգոր ապիրատն : տէր Ինչ 2 Եօթան

Կարգ և Կաց ԿԹՂԿոսացն :

ՅոՏան մեծաբարոյն : զսա ընկեցին և փոխա նակ սորա եդին ԿԹՂԿոս զտէր Վաւիթ արքա կաղնեցին ամս երկու , մեռաւ տէր Վաւիթս և դարձեալ նստաւ ԿԹՂԿոս նոյն տէր ՅոՏանն յառաջ և յետոյ ամս տասնևՏինգ :

ՈԿԹ տէր Կոստանդին բարձր բերդցին ամս քառասունևեօթն :

ՉԺԳ տէր Յակօբ գիտնականն ամս , ԺԸ : ՉԼԳ տէր Կոստանդին պրօնգործն կեսա րացի աղթարմայ ամս երեք :

ՉԼԸ արքորեցին զԿոստանդին պրօնգործն և եդին ԿԹՂԿոս զտէր ստեփաննոս Տումայե ցին ամս չորս , զսա և զլուսաւորչի Վընգերի տարան 'ի քաղաքն մըսր :

ՉԽԲ տէր Վրիգոր անաւարդեցին ամս ԺԳ :

ՉԾԳ տէր Կոստանդին կեսարացին Տեր ձուածօղ ամս տասնևՏինգ :

ՉԿ տէր Կոստանդին լամբրօնացին ամս Գ :

ՉՏԳ տէր Յակօբ ստեցին ամս տասնև չորս . զսա ընկեցին և եդին զտէր Մխիթար 'ի Թո՛ւնն չդ : ամս տասնևչորս : մեռաւ այս Մխի Թարս ' նստաւ դարձեալ արքորեալն տէր Յակօբ սրսցին ամս չորս :

ՊԺԳ տէր Մեսրօպ ամս տասնևերեք :

ՊԽԳ տէր Կոստանդին :

ՊԼԵ տէր Պօղոս :

ՊԽԹ տէր Թէոդորոս ամս ութն :

ՊԽԳ տէր Կարապետ :

ՊԽԺ տէր Վաւիթ :

ՊԾԲ միւս տէր Կարապետ :

ՊԿԵ տէր Վրիգոր , զայս Վրիգորս որ մակ անուն խանձողատ կոչի արքորեցին , և 'ի նոյն Թո՛ւնն եդին զտէր Պօղոսն , մտորոյ վնոյն Թիւնն Եվր նոյն տէր Պօղոսին կրկին անգամ գրեմք :

ՊԿԵ

Պկէ՛ տէր Պօղոս :

~~ՊՏԹ՝ տէր կոստանդին :~~

ՊՃԿ՝ տէր Յօսէփ :

ՊՃԹ՝ տէր Վրեգոր, որ մակ անուն մուսաբէկէնց կոչի :

Մինչև ցայս վայր զորս գրեցաք կաթուղի կսունք սայ էին, որք 'ի սիս նստէին և վարէին զկաթուղիկոսութիւն, զի տակաւին ոչ էր փորոգեալ սուրբ աթոռն Նշմիածին, և յայսմ ժամանակի նորոգեցաւ. քանզի Նշսրբոյն Վրեգորի մերոյ լուսաւորէին 'ի սուրբ Նշմիածին յայտնեցաւ, վնորոյ ժողովեցան 'ի բազմաց աշխարհաց արք եշխանք և նշանաւորք, եկեղեցականք և աշխարհականք, և օրհնեցին զտէր կիրակոսն կաթուղիկոս, և հաստատեցին զկաթուղիկոսութիւն 'ի սբ Նշմիածինն, ոպ և պատմէ թօմայ վարդապետն : վնորոյ յայսմ հետէ զայնոսիկ կթղկոսունան շարագրեմք, որք 'ի սբ Նշմիածինն նստան. օրոց առաջինն տէր կիրակոս. Ն և եղև նորոգումն սրբոյ Նշմիածնի, ութհարիւր և իննսուներեւն, վնորոյ գրեմք զթուականն :

Թուականն. անդ. կթղկոս տէր կիրակոս :

Թուականն, անդք, զտէր կիրակոսն հանին 'ի կթղկոսութենէ և նստաւ մակուռեցի Վրեգորն զաբալով, այս Վրեգորս նորոգումն աւարեալ է. սրբոյ Նշմիածնի մասամբ ինչ :

Թուականն, ջր. նոյն տէր Վրեգոր այլև եղև կթղկոս տէր Նրեստակէս :

Թուականն, ջր նոյն տէր Վրեգոր և նոյն տէր Նրեստակէս, այլև եղև կթղկոս տէր Օսբարիայ :

Նյս տէր Օսբարիայ, նախ կթղկոս էր աղթամարայ, և 'ի ջր. թուին յորժամ էին

422 Կարգադրութի Կաթիղկոսաց:

Ջահանշահ փաթշահն՝ ի Թաւրիզ, տաբաղիօք ընծայեւք գնաց լաւաջ փաթշահն ի Թաւրիզ: Եւ փաթշահն ետ սմն պարգևս զկթիղկոսութիւն սբոյ | Չմիածնի և զ | Չսրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, այլև ընդ նմին զխաչալամն և զուրարն, վնորոյ զաբարիայ կթիղկոս ընդ եւր ունելով զ | Չն եկեալ ՚ի սբ | Չմիածնն նսաաւ կթիղկոս | Չմիածնի: Եւ նոյն խաչալամն և ուրարն ահաւաստիկ պահեալ խան ՚ի սբ | Չմիածնն վկայ սրբոյ | Չոյն Թէ անդէ:

Թուճական. ՉԺ: տէր Օ աբարիայ կթիղկոս առեալ ընդ եւր զ | Չսրբոյ լուսաւորչին գնաց յաղթամար. նաւասարդի տասնևւեցն. յաւուր ուրբաթի սրբոյ 3 Յակօբայ պահոցն:

Թուճական. ՉԺ: նոյն տր Գրիգոր և նոյն տր Լ՝ ըստակէս: Լ՝ յլ և եղև կթիղկո տր Երգիս:

Թուճական. Չիգ: նոյն տէր Երգիս. այլև եղև կթիղկո տէր 3 Յօհաննէս:

Թուճական. Չիե: նոյն տէր 3 Յօհաննէս. այլև եղև կթիղկո միւս այլ տէր Երգիս: Լ՝ յս 3 Յօհաննէս և Երգիս կթիղկոաց Ժամանակին լուսաւորչի Լ՝ Չն դարձեալ է յաղթամարայ՝ և եկեալ է ՚ի սբ | Չմիածնն ձեռամբ Երգասն սի եպիսկոպոսին:

Թուճական. Չիբ: նոյն տէր Երգիս՝ այլև եղև կթիղկո տէր Լ՝ ըստակէս:

Թուճական. Չիբ: նոյն տէր Երգիս. այլև եղև կթիղկո տէր Թադէոս:

Թուճական. Չիգ: նոյն տէր Երգիս՝ այլև եղև կթիղկո տէր Լ՝ զիշէ:

Թուճական. Չիե: նոյն տէր Երգիս՝ և նոյն տէր Լ՝ զիշէ՝ այլև եղև կթիղկո տէր Լ՝ երսէս:

Թուճական. Չիդ. կթիղկո տէր Օ աբարիայ Թուճական. Չիթ. կթիղկո տէր Երգիս:

Թուճ

Թուճական. Ջհբ. կթղկս նոյն տէր Սարգիս.
Թուճական. Ջձե. կթղկս տէր Վրիգոր:
Թուճական. Ջղ: նոյն տէր Վրիգոր. այլև
եղև կթղկս տէր Ստեփաննոս սալմաստեցի:
Թուճական. Ջղդ. նոյն տէր Ստեփաննոս.
այլև եղև կթղկս տէր Սեբայել:

Թուճական. Ռա: նոյն տէր Ստեփաննոս՝ և
նոյն տէր Սեբայել: այլև եղև կթղկս տէր
Քարսեղ և տէր Վրիգոր:

Թուճական. ՌԺգ: նոյն տէր Սեբայել և
նոյն տէր Քարսեղ և նոյն տէր Վրիգոր: այլև
եղև կթղկս տէր Ստեփաննոս առ ընջեցի:

Թուճական. Ռիե: նոյն տէր Վրիգոր: այլև
եղև կթղկս տէր Թադէոս՝ և տէր Մուսքեղ:

Թուճական. ՌԼե. նոյն տէր Վրիգոր և նոյն
տէր Մուսքեալ այլև եղև կթղկս տէր Վաւիթ:

Թուճական. Ռխբ: նոյն տէր Վաւիթ.
այլև կթղկս տէր Սեւքիսեթ:

Թուճական. ՌԾբ: նոյն տէր Վաւիթ և նոյն տէր
Սեւքիսեթ: այլև եղև կթղկս տէր Սրապիոն:

Թուճական. ՌՏգ: նոյն տէր Վաւիթ և նոյն
տէր Սեւքիսեթ. այլև եղև կթղկս տէր Սահակ:

Թուճական. ՌՏբ. կթղկս: նոյն տէր Վաւիթ
և նոյն տէր Սահակ այլև եղև կթղկս տէր
Սոսիս ամս երեք և կէս:

Թուճական. ՌԾբ. նոյն տէր Վաւիթ և նոյն տէր
Սահակ այլև եղև կթղկս տէր Փիլիպպոս: ամս
քսաններկու և կէս: ի սորին առ ջնեւորորդում
ամուսմեռաւ. Վաւիթ յամսեանն օգոստոսի:

Թուճական. ՌԾդ. կթղկս. տէր յակօբ
Ջուղեցի. որ կայ այժմ յաւուրս մեր. և վարե
զիշխանութի կթղկսութե:

Մտգ. ի հազար և քառասուն երկու թուին
եղեալ կթղկսութն, որքն դաւիթ և
ի 5 4 մեքի

մեւքիսէթ. այս դաւելթ և մեւքիսէթ կա
 թուղիկոսունքս են. զորս 'ի պատմագրի
 սկիզբն գրեալեմք. թէ առաքեցին առ սրա
 պիոն վարդապետն գայ և լինիլ կաթուղիկոս
 որև եկեալ եղև կաթուղիկոս սրբոյ Նշմիած
 նի 'ի հազար և յիսուններկու թուականին
 մերում, և 'ի հազար և յիսուններեք թուին
 սրապիոնս դարձաւ և գնաց յամիթ, և 'ի հա
 զար և յիսունհինգ թուին. և յապրիլի
 քսաններեքին վախճանեցաւ: Աւյետ գնա
 լոյ սրապիոնիս զիշխանութի կլթղկոսութե
 նոյն դաւելթն և նոյն մեւքիսէթն ունեին և
 վարէին. բայց նախանձ և գրգռութի և հա
 կառակութի ոչ սակաւ անկաւ իմէջ դաւելի
 և մեւքիսէթի վն կլթղկոսականի իշխանութե.
 վնորոյ մեւքիսէթն եմուտ 'ի ներքոյ ծանր դա
 բալի և իբացէհան դաւելթն և ինքն մի
 այն վարէր զկլթղկոսութին. և յաղագս ծանրու
 թե դաբալին՝ զոր ոչ կարաց վճարել ետ զկա
 թղկոսութին մեւքիսէթն իւր եղբօրորդի սա
 հակին. և ինքն փախեաւ յաշխարհն () ման
 ցւոց և գնաց 'ի լով և անդ վախճանեցաւ: և
 զիշխանութի կլթղկոսութեն վարէր սահակ
 կլթղկոս. և վն ծանրութե դաբալին. զոր ոչ կա
 բաց վճարել. նաևս փախեաւ յաշխարհն () ս
 մանցւոց: Աետ փախստեան սորին ամ ազգն
 հայոց արեւելականք և արեւմտականք միաբա
 նեցան և արարին զմօսէս վրդապետն կլթղկոս սրբոյ
 Նշմիածնի 'ի մերում թուականիս հազար և
 եօթանասունևուրթին՝ յունվարի տասներեք
 ին. և 'ի հազար և ութսունևմեկ թուին. 'ի
 մայիսի ամսոյ տասնևչորսին վախճանեցաւ. և
 'ի հազար և ութսունևերկու թուին և յուն
 վարի տասնևերեքին զփիլիպպոս վրդապետն օրհ
նեցին

նեցին կլծողս սրբոյ Եղմիածնի . որ վարեաց
ա զելչանուութի կլծողսութե 'ի ժամանակս
իւր ճոխ և փառաւոր . մինչ 'ի ժամանակ թոճա
կանին մերոյ 'ի հազար և հարիւրեչորս ամն . և
'ի նմին ամի , 'ի մարտի քսան և հնգին վախճա
նեցաւ սա : Եւ զկնի սորա յաջորդեաց զաթու
կլծողսութեն շուղեցի յակօք վրդպտն . քան
զի 'ի հազար և հարիւրեչորս թոճականին .
և յապրիլի ամսոյ ութն օրհնեցին զյակօք
վրդպտն կլծողս սրբոյ Եղմիածնի : և այժմ սա
վարե զելչանուութի կլծողսութե մինչ և յայսօր ,
որե թոճականն մեր հազար և հարիւր և տասն և
մէկ յուլիսի ամսոյ չորս . որ և հայցեմք 'ի տեառ
նէ զի երկարամօք պահեօցէ զսա յուրախութե
սրտից մերոց և 'ի փառս անուան իւրոյ . ամէն :

Կարգ վարդապետաց . սկսեալ 'ի գոչ միսթարայ դաւա
զանաւն որ իջանէ յԵղմիածնայ դասատունն :



Ե Ն Ե Ռ Ե Մ Ե Ն Ի Վ Ե Ր

դապետն միսթար որ մականուճամբ
գոչ կոչի : նորին աշակերտ յովաննէս որ
է վանական : նորին աշակերտ վարդան : նորին
աշակերտ ներսէս : նորին աշակերտ եսայի , որե
'ի նիչ գաւառէ : նորին աշակերտ յօհան որոտ
նեցին : նորին աշակերտ գրիգոր տաթեացին :
նորին աշակերտ դանիէլ ճգնաւոր : նորին աշա
կերտ յօհանէս համչէնցին : նորին աշակերտ
թորոս : նորին աշակերտ գրիգոր տարօնացի :
նորին աշակերտ յովանէս որ մականունն շիրաք
ասի : նորին աշակերտ ղուկաս կեղեցի : նո
րին աշակերտ սրապիօն ուրհայեցի : որ եղև
կլծողս սրբոյ Եղմիածնի : նորին աշակերտ գրի
գոր կեսարացի : նորին աշակերտ մօսէս սիւ
նեցի .

426 Կարգ II արդ-ապետաց .

նեցի . որ եղև կԹ՛ղկս սրբոյ Եւջմիածնի . և նորոգող նմին : նորին աշակերտ փիլիպպոս Եւթ՛ղկն սրբոյ Եւջմիածնի : նորին աշակերտ անարժան և մեղապարտ գրիչս առաքեալ : և իմ աշակերտ մակո՛ւեցի վարդան :

Այլևս կարգ Վարդապետաց .

Եւյսոքեկ են կարգ վրդ-պտոցն մերոց ոչ առաջնոցն այլ վերջնոցն : Կախ գրիգոր տաթևացին : և նորին աշակերտն գանիէլ : նորին յովան նէս համէնցին : նորին գրիգոր յարձիշոյ . որ մականունն չորթան ասի : և միւս աշակերտն Թորոս վրդ-պտն : Իսկ չորթանի աշակերտն ներսէս . որ մատաղն ասի : նորին ներսէս բաղիշեցին : նորին ներսէս ամկեցին : նորին աշակերտք երկու . յօհաննէս ոստանցին՝ ի գեղջէն վառնուշատայ . և ազարիա՝ ի հայոց մեծաց՝ ի գեղջէն շահկերտոյ , որ է մերձ քաղաքին նախչո՛ւանու : Իսկ աշակերտքն յօհաննէս ոստանցուն սիմէօն ապարանցին , և բարսեղ գաւառցին . սիմօնի աշակերտն կարապետ կալօն : և նորին միւս փոքր սիմէօն ձգնազգեացն . և բարսղի աշակերտքն . բուժիկ յօհաննէս բաղիշեցին . և այլք բազումք : և յովանիսիա աշակերտ խաչատուր բաղիշեցին : և այլ արևելեանքս ամէն՝ ի չորթանէն սերեցան :

Իարձեալ նոր սկսայց ՚ի յովաննէ համէնցւոյն . նորին միւս աշակերտն Թորոս , որ ՚ի վերոյ ասացաւ : Թորոսի աշակերտ գրիգոր տաթօնեցին . նորին յովանէս շիրաքն . նորին զուհաս . որ էր ՚ի խորձունեաց գաւառէն , որ է կեղի : նորին պետրոս կարկռցին : և սրապիտն ուրհայեցին՝ որ եղև կԹ՛ղկս սրբոյ ամուսնոյն . Եւջմիածնի տարի մի և վեց ամիս . և փոխեցաւ .

զաւ առ Յս: Եւ յիւստիսն աշակերտքն բար
ձեռք որ է ՚ի սասնոյ ՚ի նճոյ գաւառէն ՚ի գեղ
ջէն որ ասի մարման: և յովսէփ Տղո՛ւնցին: և ետ
նունատ կարապետ բանի սպանաւոր բաղիշե
ցի ՚ի գեղջէն փարխնդոյ: զորս լուճաք ՚ի պատմա
գրացս. և զոր աջօք մերովք տեսաք. զի չէին
ինչ պակաս յառաջնոց վրդպտացն ուսմամբ
և գործովք այլևս գերագոյն:

Թէ վս որոյ պատճառի զհայտուն քրիստոնեայս հանին
՚ի քաղաքամիջէն Սպահանու. և տարեալ յեզր քա
ղաքին յայնկոյս գետոյն բնակեցուցին:

Ե Գ:



Թ Ե Մ Ե Լ Ե Ս Թ Ե Գ Ե Ի Ո

րուծէ երկրորդ շահաբասին. որ ունէր
զգահոյս Թգլրուծէ Եւրոյ ՚ի մեծաճան
դէս քաղաքն ասպահան:

Եւ եղև այս շահաբաս Թգրիս Ելանելի քա
ղաքէն ասպահանու ամենիւք զօրօքն Եւրովք
և գնալ ՚ի քաղաքն զաղբին. և կարգեաց զվերա
կացուս և զիշխանս զոմանս յերևելի արանցիվք
քաղաքին ասպահանու զի հովո՛ւնեցեն զքա
ղաքն ը պայմանի քաղաքականաց կարգաց: Եւ
Ը բազմաց պատու՛հրանացն. առաւել և կարև
որ քան զամենեսին զայս պատու՛հրեալ հրամայ
եացնց. զի արգելումն և խափանումն արասցեն
գինւոյ զի բնաւ մի երևեցցի ՚ի քաղաքին գինի.
մի բնաւ որ ճմլեցցէ զխաղող և արասցէ զգինի.
և մի որ վաճառեցցէ զգինի. և մի որ արբցէ զգի
նի. և բնաւ մի երևեցցի նշան կամ հոտ գինւոյ:
որչ առ ուսմիկս և ոչ առ իշխանս. կամ սպայս
զօրս հեծելոց. և Թէ առ որ գտցի՝ Թէ առ վա
ճառօղս՝ և Թէ առ գնօղս. խրատեցեն զայն
պիսիսն տուգանաւ. և հատցեն զունչսն և զա
կանջան.

428. Հարցումն Ահտիմալդօլվաթին :

կանջան . և թէ յևս յանզգամու թիս գտցեն
յաճախեալ զայնպիսիսն գլխովին սպանցեն ,
զորովայնն պատառելով՝ և զգլուխն կտրելով .
և այլևս ազգի ազգի տեսակս տանջանաց իվր
ածելով : քան զամբան զայս առաւել կտրեոր
պատուիրեալ շահին իւրոց կարգեալ քաղա
քապետացն . և ինքն ելեալ յասպահանու
գնաց 'ի զազբին :

Եւ յետ ամսոց ինչ անցանելոյ եպարքոսի թա
գաւորին . զոր ինքեանք է հտիմալդօլվաթ ա
սեն . որում անուննէր մահմաթէկ . էր 'ի
զազբին քաղաքին 'ի սպասու թգլրին . հար
ցանէր յեկողացն յասպահանայ վասն որպիսու
թեքաղաքին . և վն պիտակիսեաց ընչից իրաց՝ և
մանաւանդ վն գինւոյ : և քանիցս որ է հարց 'ի
սմանէ և 'ի նման է . ամենեքեան միապէս ասա
ցին թէ ոչ հաստատեցաւ արգելումն գինւոյ
զի հանապաղ շրջին արբեալք արք գինւով 'ի
հրապարակս և 'ի փողոցս և յաման տեղիս : Իսկ
է հտիմալդօլվաթն յոյժ հոգալով հարցանէր 'ի
սմանէ և 'ի նմանէ . թէ ընդէր ոչ հաստատի ար
գելումն գինւոյ 'ի յասպահան քաղաքի . և ամ
ոք ըստ իւրում կարծեացն առնէր զպատասխա
նի : Իայց ոմանք՝ որք զոխս ունէին ընդ ասպա
հանայ քաղաքի տարուղին , զմնասն իվր նր
բարդելով ասացին . թէ գուցէ տարուղէն
թոյլ տայ վն շահու իւրոյ՝ որպէս զի ինքն կա
լեալ զվաճառօղսն և զգնօղսն տուգանեսցէ .
և զկաշառս առցէ . և յոլով գանձս շահեսցի
'ի նոցանէ :

Իսկ է հտիմալդօլվաթն զայս բանս լէ այլոց
ևս բանից , զոր լուեալ էր 'ի պատմողաց ծանոց
թգլրին . և իմէջ զրուցաց թգլրն և է հտիմալ
դօլվաթն , որ ընդ միմեանս . ասաց է հտիմալ
դօլվաթն

Կօրվածն ընդ ԹԳԼրին . եթէ հրամայեացէ արքայ . զոմն հաւատարիմ՝ ՚ի ծառայից ԹԳԼո շին առաքեսցուք ՚ի քաղաքն ասպահան . զի վերստին մուսնեդիկ բարձու աղաղակաւ չըջեցուցէ իմէջ քաղաքին՝ և արասցէ զարգելումն գինւոյ . և ինքն անդէն կացեալ ծածկապէս զննեալ դիտեսցէ Թէ ստոյգք են բանքն . որք վստարուղին ասացան : և առ այս բան հաւանեալ ԹԳԼրին հրամայեաց է հտիմալդօրվա Թին՝ Թէ արասցես ըստ ասացելումդ : Իսկ է հտիմալդօրվածն ընտրեաց ՚ի Թագաւորա կանաց ծառայից զոմն յառաջակայից սպասաւորաց Թագաւորին՝ այր զգաստ և փոյթ՝ ՚ի գործս իւր ՚ի տիս երիտասարդութե՝ որոյ անունն էր նաջաֆղուլիբէկ . և պատուհիրեաց նմա գնալ ՚ի քաղաքն ասպահան՝ զի վերստին արգելումն արասցէ գինւոյ՝ ուղ զի բնաւ մի երևեսցի գինի ՚ի քաղաքն ասպահան . այլ ծածկաբար քննեալ տեղեկացի ամենից բանից որք վստարուղին ասացան :

Իսկ նաջաֆղուլիբէկս պատուհիրանաւ է հտիմալդօրվա Թին փքացելովք մտօք և գոռօ զացելով սրտիւ ելեալ ՚ի զազբինու և եկեալ է մուտ յասպահան քաղաք . և սաստկաւ տաղնապաւ . և բազմաւ սպառնալեաւ . և ահարկուաւ բանիւ զարհուրեցուցանելով զամենեսեան զարգելումն արար գինւոյն : և է հան յամ հրապարակս մզնեդիկ , որ է ջառչի , որք ելեալք քարոզեցին բարձու աղաղակաւ Թէ հրամանաւ ԹԳԼրին արգելեալ է գինին . և առ ով և գտցի Թշնամի է ԹԳԼրին և մահապարտ . ան պատճառ զայնպիսին սպանանեն : Ի յլէ ինքն նաջաֆղուլիբէկն պատրաստեաց զարօ բազումս . պատուհիրեալ և զհնարաւոր գործս ցուցեալ

ցեալնց առաքեաց յամսն տեղիս քաղաքին . և ուր և կարծիս ունէին լինիլ գինւոյ . զի արքն այնոքեկ անդ յակճիւս կացեալ զցայդ և գրբեկ զննեալ դիտեսցեն զամ երթեկս : և այսպ առնելով յոլովից արբելոց արանց արար զխրատս : տուգանելով՝ և զունչս և զականջս՝ և զձեռս և զոտս հատանելով . սակայն և այնու ևս ոչ կարաց խափանու մնառնել գինւոյ : Իւ վն բազմից և զանազանից հնարագործութեց 'ի վարանս խորհրդոց մտանէր . նակ հարցանէր 'ի սմանէ և 'ի նմանէ թէ ոպ պարտի լինիլ կատարու մն գործոյն :

Յայսմ վայրի ոմանք երեւելիք արք 'ի թգլրի ծառայիցն , որք նախածանօթք էին այս նա ջաֆղուլիբէկիս . յաւուր միում հրաւիրեցին զնա 'ի տունս իւրց 'ի պատիւ սիրոյ աղագաւ . այլ երեւելիք արք բազումք կային յայսմ խրախտութե : Ի նդ որս էր և իշխան ոմն՝ որ էր գրապան թգլրականաց գրեանց . զի ամքն գրեանք տան թգլրին նմա յանձնեալէ զի պահեսցէ . ում և պիտոյատցի տացէ և առցէ : և իմէջ հանդիսին այնմիկ ընդ բազմաց խօսիցն եկեալ խառնեցաւ և զրոյց գինւոյն . որոյ վն բանս հարցողականս առաջարկեալ նա ջաֆղուլիբէկս թէ զարմանամ զի ընդէր ոչ հաստատի արգելումն գինւոյ . զոր այսքան հրամայէ թգլրն . և մեք ևս զայսքան չարչարանս և զպատիժս իվերայ ածեմք . և տակաւին ոչ կարեմք խափանու մնառնել գինւոյ . և նստեալ արքն ամ որ ըստ իւրոց կարծեացն խօսէր և առնէր զպատասխանի :

Իսկ գրապան իշխանն արար զպատասխանի նա ջաֆղուլիբէկին՝ թէ 'ի զուր է աշխատանքն ձեր . և ոչ հաստատի արգելումն գինւոյ .

Ինչպիսիք պատճառք բազումք գոն . և մանաւանդ այս՝ զի ամազգ իմիասին խառն 'ի խուռն ընդ միմեանս բնակեալ են . մասմետականք , որք ոչ ըմպեն զգինի : և այլևս ազգք , որք ըմպեն զգինի՝ այսինքն Ֆուանկք՝ Հայք՝ և Ս հուտք : Մորդ՝ դուք եթէ ըմբռնէք զոմն , որ ունի ընդ ինքեան զգինի . և 'ի հարցանելն ձեր թէ ուստի բերեա՞ և ուր տանիդ , նա պատճառէ յայն ոմն հայոյ տանէ յայն ոմն հայոյ տուն տանիմ . յայնժամ խափանի հրամանն ձեր՝ և արգելումն գինույ . այլև ամքն արք մասմետականք որոց և յօժարի կամքն զգինի ըմպելոյ՝ մտանէ 'ի տունս նց և ըմպէ զգինի . նաև 'ի նոցունց գնէ յոլովիւ գնով՝ և տանի յայլ ուր և ըմպէ . և այս ամպատճառ է խառնիխուռն բնակիլն ազգացդ : Մորդ եթէ հաւաստեալ կամիցի թգլըն զի վերասցի գինըմպութի՝ ի քաղաքէս . բաժանեալ տրոհեցէ զազգս զայսոսիկ՝ ի միմեանց . զմահ մետականսն անխառն յայլոց ազգաց բնակեցուցէ 'ի քաղաքամիջի աստ . և զայլ միւս ազգան զհայս և զՍ հուտս հանեալ՝ ի քաղաքէն տարեալ յեզր քաղաքին 'ի պատշաճաւոր տեղիս բնակեցուցէ . և իւրաքանչիւրոց ազգաց ըստ իւրում պատշաճին զկարգս և զսահմանս կարգեցէ՝ և նոցին զվերակացուս կարգեցէ . ապա յայնժամ զորինչ և հրամայեցէ թգլըն և իշխանքն իւր անխափան կատարի ամ :

Եւ զբանս այս՝ զոր խօսեցաւ գրապան իշխանն , հաճոյ թուեցաւ բազմականացն ամենեցուն . և ևս նաջափղուլիբէկին . զորև ամփոփեալ պարուրեաց 'ի պահարանս մտացիւրոց . և խորհէր թէ 'ի պատշաճի ժամու ծա նուցից է հտիմալդօլլաթին : բայց ինքն բազմաւ հոգաբարձութիւն փոյթ յանձին կալեալ

Չանայր կատարել զհրաման Թգլրին և արդե
 Լել զգինին :

Իսկ յաղագս բանին, զոր խօսեցաւ գրապան
 իշխանն 'ի հանդիսին յայն . առացին ոմանք
 ոչ յիւրոց մտաց յառաջարկեալ . այլ յայլոց
 յառաջարկութենէ . որ է այսպէս :

Ս նզի ոպ սովորութի է Թգլրաց ունել զներ
 քինն 'ի տան իւրեանց 'ի սպասաւորութիւն
 ինքեանց և կանանաց իւրց . զայս կարգս այս
 երկրորդ շահաբաս Թգլրս յոյժ առաւել բազ
 մացոյց . քանզի զբազում կանայս ժողովեաց
 յամենեց աղգաց . ըստ այսմ և զբազում ներ
 քինիս ստացաւ իւր : և 'ի բազմութենէ ներքի
 նեացն, զոմանս 'ի նոցանէ վն ծերութե . և
 զոմանս վն անհաճելութե . և զոմանս յայլ ինչ
 պատճառէ հանեալ 'ի տանէ Թագաւորին
 իբացարձակէին՝ գնալ յայլ ուրեք ինքեան
 զատ առանձին կեալ :

Իւր այսորիկ ներքինիքս, որք հանեալք լի
 նէին 'ի տանէ Թգլրին . եկեալ բնակէին
 իմէջ քաղաքին . 'ի շամչապատ անուանեալ
 Թաղն վն այսց պատճառաց :

Իսխ զի այս Թաղս մերձէ տան Թգլրին .
 զի եթէ ինքեանք կամեցին գնալ 'ի տուն
 Թգլրին . և թէ յրնկերաց իւրեանց 'ի տանէ
 Թագաւորին կամեցին դալ առ սոսա . դիւ
 րին լինի և փոյթ վն մօտակայութե :

Իրկրորդ՝ սոյնպէս և շուկային և վաճառ
 նոցին մօտակայ է Թաղն այն :

Իրրորդ՝ և մանաւանդ վն ջրոյն, որ 'ի բոլոր
 տարին անպակաս է ջուր տեղւոյն այնմիկ՝ քան
 զի մեծ առումի ջուր, սակաւ ինչ փոքր քան
 զգետ գայ յայն Թաղն և գնայ 'ի չարբաղն, որ է
 Թգլրական այգի : և անտի գնայ 'ի տուն Թա
 րին

Դաւորին՝ որ ամ գործ և կարիք նոցա այսու-
Չրովսկատարի՝ մարդոց և անասնոց՝ այդեստա
նաց և ծաղկոցաց՝ և այլոց գործոց : Մորդ՝
այսորիկ այսպէս :

Մյլև զայս ևս պարտէ գիտել զի մեծ և
առաջին շահաբասն պւերոջն հայաստանի աշ-
խարհին և կործանողն հայոց ազգին . 'ի ժամա
նակին յորում զողգն հայոց քչէր և տանէր
'ի պարսկաստան . 'ի հայոց ազգէն բաժին մի
քրիստոնեայք՝ զոր դաշտեցիք անուանեն .
վն լինելոյ նոցին՝ 'ի դաշտ անուանեալ գիւղէն՝
որ է 'ի գաւառին գողթան՝ բերեալ բնակե-
ցոյց յայսմ տեղւոջ 'ի շամշապատ կոչեցեալ
Թաղս իմէջ մահմետականաց : Մլ վն լաւութե
տեղւոյն յայլոց տեղեաց քաղաքին՝ մահմետա
կանք բազումք եկեալ 'ի Թաղս այս բնակեցան :
Սոյնպէս և 'ի Թգրի տանէն ելեալ ներքինիքն ,
եկեալ աստէն բնակեցան : Մլ յամենից տե-
ղեաց աստի և անտի անդր ժողովելոյ մարդ-
կան . ոչ բաւէր տեղին տանիլ զմմին . այլ
զնեղութիս յոլովս կրէին վն տեղւոյ : վն որոյ
միաբանեալ միւս մահմետականացն ընդ ներքի
նեաց Թգրին՝ սկսան հարստահարել զդաշտե-
ցի քրիստոնեայսն զի արտաքսէսցեն զնս՝ 'ի տե-
ղւոջէն . ոս զի ինքեանց ընդարձակութի լիցի :
Մլ յայսմանէ պատճառէ զբազում բանս ան
բաստանութե ասէին նոքա հայոցն դաշտե-
ցւոց՝ զորս 'ի զուր՝ և զորս իրաւ :

Մլ բանզի հրաման Թգրին վն արգելման գի
նւոյ էր . և այժմ ևս Վարսիկք յայսմանէ կող-
մանէ սկսան զամբաստանութի առնել զքրիս-
տոնէից . եթէ նոքա գինարբու ազգք են և հա-
նապաղ գինեաւ պղծ են զջուրն . զի յորժամ
զնաաղողն ճմլեն զբաղցուն գինի առնեն և
28 ԵՂ զկնձեռն

434 . Բանք Չարախօսութե՛ն 'ի Հայոց օ

զինճեուն վաթեն՛ի ջուրն՝ որով պղծի ջուրն .
և յորժամ քաշեն զարաղ , զմնացեալ մրուրն վջ
թեն , 'ի ջուրն՝ որով պղծի ջուրն : և յորժամ
կամին լուանալ զկարաս գինւոյն , բերեալ դնեն
իմէջ առ ուրն մէկեւերկու օր՝ 'ի թրջոց . և ասա
լուանան . և լուացունք ջուրցն դարձեալ թա
փի յառուն իմէջ ջրոյն՝ որով պղծի ջուրն :

Ըրդ՝ զայսպիսի ամբաստանութե՛ն բանս՝
և զայն բանն ևս՝ զոր գրապան իշխանն ասաց
նաջափղուլիբէկին՝ և զայլ բազում բանս զորս
'ի զուրև զորս իրաւ աստ՝ 'ի շամչապատ թաղն
եկօղ և աստէն բնակօղ ներքինիքն ասացեալ
էին գրապան իշխանին . զոր յայնմ ժամու գրա
պանն ասաց նաջափղուլիբէկին .

Եւ յորժամ շահն և էհտիմալդօլվաթն
դարձան 'ի զաղբինու և եկին յասպահան .
հարցումն արարին վս՝ գինւոյ արգելման՝ կա
տարեցաւ թէ ոչ . յայնժամ նաջափղուլիբէկին
վշտագնեցելով սրտիւ ասաց . թէ որքան ու
նէպք զկար՝ ջանացաք՝ և ոչ եղև խափսուումն գին
ըմպութե՛ն . և 'ի բազում վարանս խորհրդոց
մտայոյզ լինէր էհտիմալդօլվաթն սակս ար
գելման գինւոյ . քանզի ըստ օրինաց իւրեանց
և ը առասպելութեանից գրեանց իւրց՝ անսք հա
մարին զգինին և ինքեանց մեղք զըմպելն նորին :

Իսկ նաջափղուլիբէկն 'ի դիպօղ ժամու
զգրապան իշխանի բանն խօսեցաւ առաջի էհ
տիմալդօլվաթին . և բանն հաճոյ թուեցաւ
նմա՝ և այլոց և սբաղմականաց . և էհտիմալդօլ
վաթն՝ 'ի պատշաճի ժամու զխօսեցեալ բանն
գրապան իշխանին խօսեցաւ առաջի թգլրին :
Ոչ միայն 'ի միում աւուր . այլ յամի դիպօղ
ժամու էհտիմալդօլվաթն և այլք նախարարքն՝
որք խօսօղք էին առաջի շահին հանապազ
այնու

Ենու կերպիւ խօսէին առաջի Թագաւորին. ինչի է հտիմարդօլլաթն և այլ նախարարք զբազում փոյթ ունէին հանելոյ զքրիստոնէայնս 'ի քաղաքամիջէն: և այնքան խօսեցան մինչև հաւանեցուցին զկանս Թգրին. որ գրով զհրաման արար. Թէ ովոք գինարբու ազգք են եւ յեալք բաժանեցին 'ի մահմետականաց. և գնացեալ յեզր քաղաքին որիչ բնակեցին:

Եւ ետ ընդունելոյ զայս հրամանս 'ի Թգրէն է հտիմարդօլլաթին. կոչեաց զդաշտեցիսն առաջի իւր, և ծանոյց նց զհրամանս Թգրին. և հրամայեաց նոցա ելանել 'ի քաղաքամիջէն և գնալ յեզր քաղաքին. և Թէպէտ նց դժուրին էր ելանել 'ի բնակութէց իւրեանց՝ յաղաքս որոյ գնացին 'ի դրունս մեծամեծաց և յոլովս աղաչեցին՝ զի գուցէ մնայցեն 'ի տեղիս իւրց՝ և ոչոք լուաւ բանիցնց. զի իչ խանքն՝ որք էին մահմետականք՝ ամենեցուն կամք և դիտաւորութիք միաբան էին առ 'ի հանել զնս: Ի՞րդ այսպիսեալ կերպիւ. եթէ 'ի հրամանէ Թգրին. եթէ 'ի բռնութէ իչխանացն. եթէ 'ի հարստահարութէ մերձակայ մահմետականացն. անճար մնացին դաշտեցի հայքն ելին 'ի տանց և 'ի բնակութէց իւրեանց. և գնացեալ ոմանք 'ի ջուղայ. և ոմանք 'ի դաւրապատ գտուն վարձեցին. և անդէն հովանաւորեցան ընչիւք և ընտանեօք իւրեանց:

Իբրև եղև որ զդաշտեցի ժողովուրդսն ի բաց հանին մահմետականքն՝ այնուհետև սկսան զմիւս այլ ժողովուրդսն հայոց հանել 'ի քաղաքէն: Իւր էին սոքա յազգէն հայոց ժողովածու ժողովուրդք. որք յիւրաքանչիւրոց աշխարհաց վտարանդիք եղեալէին և եկեալք ատրպատականի աշխարհի բնակեալք:

որք էին 'ի համ'թայ' 'ի գազկոյ' 'ի բաղիչոյ'
 'ի մշոյ' և 'ի բերկրոյ' յարձիչոյ' 'ի վանայ'
 յարձկոյ' յերզնկոյ' 'ի դերջանայ' 'ի բաբեր
 դոյ' յարզրումայ' 'ի սպերոյ' 'ի բասենոյ' 'ի
 կաղզվանայ' 'ի շիրակվանայ' յարարատեայ'
 մասնաւորաց գաւառացն յամենեցունց՝ յաշ
 կերտոյ' 'ի մակունայ' 'ի խոյեայ' 'ի սալմա
 տայ' յորմոյ' և այլևս իւրաքանչիւրոց աշխար
 հաց : Որոց վն հրամայեաց առաջին շահաբան
 զմասն ժողովել և վարել յաշխարհն Պարսից
 զորև բերեալ յասպաճան քաղաք . և իմէջ
 քաղաքին բնակեցուցին 'ի Թաղն որոց Թօրոս
 կան, և շխապանայ ասէն զանունն : Ամասո
 ցին հրամայեաց նոյն մեծ շահաբան, որ զերևա
 նայ քաղաքի բնական տեղացի հայքն հանին
 յերևանայ և վարեալ տարան յասպաճան քա
 ղաք՝ և բնակեցուցին իմէջ քաղաքին խառնի
 խուռն ընդ մահմետականացն 'ի Թաղն՝ զոր
 Թաղ'Թիղարաջայ' և բաղաթ կոչեն :

Եւ 'ի Ժամանակիս յայսմիկ 'ի Թիւրութե
 այս երկրորդ շահաբասիս . յետ հանելոյ զգալ
 տեցւոց ժողովուրդսն . սկսան զերևանցւոց և
 զշխապանցւոց ժողովուրդսն ևս հանել : քան
 զի կոչեաց էհտիմալդօլվաթն առաջի իւր
 զաւագն երևանցւոց՝ որոյ անունն էր խօջայ
 յակօբճան ընդ այլոց ևս արանց՝ և ծանոց նց
 զհրաման Թիւրին . Թէ պարտիք ելալել ի
 քաղաքամիջէ աստի և գնալ յեզր քաղաքին
 բնակիլ : Եւ զբազում բարութիս խոստացա
 առնելնց . քանզի կարի քաղցրութի խօսեցաւ
 ընդ երևանցւոց : Իսկ ժողովուրդքն Հայոց
 Թէպէտ ոմանք հաւանեցան, այլ ոմանք ոչ
 հաւանեցան . սոպու և բիրտ ազգս Հայոց
 և սկսան դժկամակ և դիմադարձ լինիլ . և
 զաղա

յղադակս և զշփոթս և զխառովութիս յարուցնել՝ որոյ կատարումն եղև մնաս ինքեանց: քանզի ամենեքեան իմիասին եկեալ ժողովեցան յանցս գնացից թգլւրին՝ և 'ի մերձիլ առ նն թգլւրին սկսան ամենեքեան զբողոք բառնալ առ թգլւրին. որոյ այնպէս առնելն յոյժ դժուարին և ծանր թուեցաւ թգլւրին. վնորոյ ցասեալ զայրացմամբ թգլւրն իվերայ ժողովրդեանն Հայոց: և 'ի պատճառէս յայսմանէ որ ցասեալ թգլւրն իվր Հայոց քաջալերու թի ընկալեալ և զօրացեալ առ իւծացան այլազգիքն իվերայ Հայոց. և սկսան բռնութի վարել զնս. քան զհկարգեաց է հտիմալդօլվաթն զիշխանս հան գերձ զօրականօք իվր ժողովրդեանն Հայոց զի միևս տացեն նց զներումն ժամանակի՝ որ օր առ օր կամկար ելանիցեն. այլ փութանակի առանց ներելոյ ժամանակի ուժգին բռնութի հանցեն 'ի քաղաքամիջէն:

Եւ յայսմ վայրի անճար մնացին ժողովուրդքն Հայոց. զի յամենից կողմանց հատաւ տեղի յուսոյ և ապաստանի նց թէ 'ի թգլւրէն և թէ յիշխանացն. զի զամենեսեան ցասուցին իվր ինքեանց. և նոցին իվր կարգեալ իշխանքն և զօրականքն յոյժ նեղու թի ստիպէին զնոսա ելանել ի քաղաքէն: Եւ որ յորժամ յաճախեցաւ բիրն իվր գլխոցն Հայոց՝ ապա թողին զբնական գոռոզութիս իւրեանց՝ զոր 'ի բնէ բնաւ քրեպլ ունկն յինքեանս. և զխելս և զգօնութիս յինքեանս բերեալ սկսան յողոք անկանիլ առ իշխանսն. քանզի գրեցին զարգայ՝ և հասուցին 'ի ձեռն է հտիմալթօլվաթին՝ ոպ զի միևս նեղեսցեն զինքեանս. այլ զներումն և զժամանակ տացեն՝ զի կամկար ելանիցեն. և այսմ բանի հպմանեցաւ է հտիմալթօլվաթն և հրամայեաց

այնպէս լինելու և ապա 'ի բացկացին 'ի նոցա՝
 Հանողք զօրականքն :

Ո կնի այսոցիկ շահն և էհտիմալդօրվաթն
 և այլք նախարարքն խորհուրդ արարեալ հա
 ճեցան տալ նոցա զտեղիս բնակութի յայնկոյս
 գետոյն մերձ առ ջուղայեցւոց : Բանգի
 տունձք քաղաքին ասպահանու այնպէս է զի
 մեծ գետն որդայ և մտանէ 'ի քաղաքն ասպահա
 նու՝ յարեմտից գայ , և գնայ 'ի կողմն արեւելից
 իսկ քաղաքն և ամբն մահմետականքն և տուն
 թգրին , և վաճառանոցքն . և այլ ամինչ և իցն՝
 որ առ քաղաք վերաբերի՝ սորա ամենեքեան
 'ի հիւսիսային կողմն գետոյն են : Իսկ ջուղայե
 ցիք 'ի հարաւային կողմն յայնկոյս գետոյն են
 տեղաւորեալք զատ և ուրոյն յայլոց ազգաց . և
 այժմ՝ զանգին՝ զոր կամեցան տալ այսմ 'ի քա
 ղաքէ հանեալ ժողովուրդեանս . այլունի մերձ ջու
 ղայեցւոց հաճեցան տալ մերձ և հուպ և կից
 ջուղայեցւոց առ եզերք գետոյն : և այսմ խոր
 հրդոյ ամբն հաւանեցան՝ թգրն և իշխանքն
 և Հայոց ժողովուրդքն . և այլք ամենեքեան
 որք լուան : Եւ ապա հրամանաւ թգրին
 էհտիմալդօրվաթն առաքեաց զարս երկրաչա
 փըս՝ որ զնշանակեալ տեղին չափեցին և ետուն
 ժողովուրդեանն . և ժողովուրդքն բաժանե
 ցին յինքեանս իւրաքանչիւրոց ըստ իւրում սպ
 կի : և սկսան շինել զտունս և զտեղիս բնակու
 թի ինքեանց՝ եթէ երևանցիք՝ եթէ գաղ
 աթցիք . եթէ միւս այլ խառնիճադանձ ժո
 ղովեալ ժողովուրդքն . ամենեքեան իմիասին
 յայսմ տեղուջ զտեղեալ բնակեցան : Ի որ
 պատճառ հանելոյ բրիստոնէ իցն 'ի քաղաքամի
 ջեն ասպահանու արբուին գինւոյ եղև , ըստ
 այսմ օրինակի ոնց և պատմեցաք :

Բայց Ժողովուրդքն քրիստոնէից զառաջինն՝ ի հանելն զինքեանս՝ ի քաղաքէն դժուարեին. զի ծանր թուէր ինքեանց ելանելն ՚ի բնակութեց իւրեանց. բայց այժմ՝ յոյժ դիւրասիրտք են և գոհանան զՄ. Ե. զի խնամարարութիւն Մ. Ե. եղեալ կատարեցաւ այս գործս իվերայ քրիստոնէից: և է գոհանալն քրիստոնէից մն բազմաց պատճառաց: Նախ զի անդէն իմէջ քաղաքին քրիստոնէայքն և մահմետականքն խառնի խուռն ընդ միմեանս բնակեալք էին. և ոմանք ոմանք՝ ի թերահաւատ արանց քրիստոնէից հանապազօր տեսանելով զդիւր և զվայրասահ և զմարմնապաշտ օրէնս մահմետականաց՝ և միշտ զբարոզս և զպատմութիւն օրինաց նց լսելով թերանային ՚ի քրիստոնէականաց հաւատոցս. մինչև իսպառ վերջացեալ դառնային ՚ի քրիստոնէութէ ՚ի կրօնս մահմետականս՝ և լինէին մահմետականք: Նրկորդ՝ եթէ ուստերք քրիստոնէից հաճէին դստերաց մահմետականաց՝ կամ թէ ուստերք մահմետականաց հաճէին դստերաց քրիստոնէից՝ այնքան ՚ի ծածուկ և ՚ի գաղտնի հնարէին և խօսէին մահմետականքն ընդ քրիստոնէից ուստերացն և դստերացն մինչ զի զկամս նց և զյօժարութի ինքեանց հաւանեցուցեալ դարձուցանէին ՚ի կրօնս մահմետի. և զայսպիսիս բազումս տեսաք մերովք աջօք, որք գնացեալ անպիսն ՚ի Կրունս մահմետականաց. և թէ պէտ զբազումս ջանային քրիստոնէայք հանել զնս անտի ոչ լինէր՝ այլ ուրանային: Նրբորդ՝ զի անդէն ՚ի քաղաքամիջին տեղիք քրիստոնէիցն նեղէր և անձուկ՝ և սակաւաջուր, որ վն ջրոյ սղութիս յօլովս կրէին. և աստէն ՚ի նորումս թեղուջ ընկալան զտեղի լայն և ընդարձակ.

յորում զտունս մեծածախս և զվայելու չսւլայ
 և ընդարձակ զանազանիւք յորինուածովք .
 վերամբարձուք յարկօք՝ և ամարանօք հովա
 նոցօք՝ որոց առաջի տեղիք զբօսանաց՝ պար
 տեզք՝ և ծաղիկք՝ և ծառք մրգաբերք :

Սորորդ՝ զի անջատեալ տրոհեցան յօձաբաշխ
 ազգէն մահմետականաց . որ հանապազօր իս
 ծատեալ նենգէին և զղուհին զբրիստոնեայն .
 և այժմ ամբն քրիստոնեայք՝ ի միում տեղու
 գումարեալ կան և ուրախութիւն գոհանան զՏէ
 Մորում փառք յաւտնս յաւիտենից ամէն :

Վիտելի է՝ զի յորժամ զսկիզբն արարին ի
 հանել զքրիստոնեայն ՚ի քաղաքէն : Թուա
 կանն մեր էր հազար և հարիւրն չորս յորժամ
 հանին զգաշտեցիսն : և ՚ի հազար և հարիւրն
 հինգ թուին հանին զերեւանցիսն : և այժմ
 որ զպատմութիւս գրեցաք՝ է թուականն մեր
 հազար և հարիւրն ութն . որք ելին ՚ի քաղա
 քամիջէն և ժողովեցան ՚ի նոր տեղին ուր շի
 նեցին զյարկ բնակութե . և ոչ մնաց ՚ի քաղա
 քին ՚ի ժողովրդէնէն քրիստոնէից . այլ ամբն
 ժողովեցան ՚ի նոր տունեալ տեղին :

Ս յլևս պատմութի ըստ յեղանակի անցելոց
 պատմութեց : զի ույ յոլով տեղիս պատ
 մեայեմք եթէ մեծ և առաջին շահաբասն . ոչ
 թէ երկիցս և երկցս վարեաց զազգս հայոց յա
 րապատականէ աշխարհէ՝ ի պարսկաստանս յայլ
 յոլովանգամ՝ այսն և այժմ : Օ ի յորժամ էր
 թուականն մեր հազար և վաթսուներեօթն .
 միւսանգամ հրամայեաց վերոյ ասացեալ թիւ
 որն առաջին շահաբաս վն ազգին հայոց ար
 տասահման առնել զամեն յարապատականէ
 աշխարհէն և վարել յաշխարհն Պարսից :

Որոյ հրամանէ ելեալ գնացին նորին իշխանքն բազմօք զօրօք՝ ի քաղաքն Երևան և ՚ի գաւառս նր, ՚ի գանձայ և ՚ի գաւառս նր, ՚ի թաւրէզ և ՚ի գաւառս նր յարտաւել և ՚ի գաւառս նր, և սկսան զքննութի և զորոնումն առ իմէջ ազգին հայոց՝ թէ որոք իցէ բնիկ բնական ՚ի հարց և ՚ի հաւուց տեղական, և որոք ոչ, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու: զբնիկսն թողին, և զեկամտացն ամցեն զանունսն գրեցին ՚ի քարտիսի, և կացուցին ի վր նց յազգէն հայոց պետս և վերակացուս՝ և անունեցին զնն մէլիք: և նոցա յանձնեալ ականդեցին զամսն ժողովուրդսն, զի թէ որ պակասեցի ՚ի գրեցելոց ժողովրդոցն փախստեամբ կամ այլով կերպիւ, նոքա գտեալ ամցեն ՚ի գումարս ժողովրդոցն: և թէ ոչ գտցեն ինքեանք լիցին պարտաւորք թգւրին, և արժանիս սպանանելոյ: Մըդ՝ այսպիսեալ օրինակաւ զամսն հանին ՚ի բնակեալ տեղեացն և վաբեալ տարան ՚ի պարսկաստան:

Եւ քաժանեալ տրոհեցին ՚ի նոցունց զքարագործ արունեստաւորսն զամսն, և տարան ՚ի քաղաքն ասպահան վնարունեստին, որ պիտոյանայր անդ ՚ի գործս շինութեց տան թգւրին, և համօրէն ազգին Վարսից: և անդ յասպահան բնակեցուցին:

Իւ զայլսն զամսն վարեցին և տարան ՚ի քաղաքն Փահլապատ, և անդէն զոմանս ՚ի քաղաքին, և զոմանս ՚ի գեղորայսն բնակեցուցին: որք ոչ մնացին, և ոչ աճեցան, այլ օր աւուր պակասեալ և վատնեալ սպառեցան, վնդաժանի և մգաահոտոյ և փրասակարի օդոյն, որում ոչ էին ընդելք: և թէ պէտք աղումք կամեցան փխչիլ ոչ կարացին: քանզի պատուէր ունէին ՚ի թգւ

'ի ԹԳԼրէն ճանապարհի պահօղքն, զորս ուսչ դար կոչէն, Թէ որք գան և մտանէն յաշխարհն Ֆասրապատու Թողուլ՝ և որք ելանել և գնալ կամին յաշխարհէն ոչ Թողուլ : և Թէ գտանիցեն զոր Թաքուն գնացեալ ըմբռնեալ սպանցեն, վնորոյ ոչոր կարաց փախչիլ, և անդէմ մնացեալ վատնեցան մահո՛ւամբ և կտորմամբ զի առաւել քան զտասն հազար տուն հայք՝ գնացեալք էին . և այժմ՝ չորսհարիւր տուն հազիւ Թէ մնացեալք են : Եւ այժմու ժամանակիս եթէ պատահի ումեք քրիստոնէի գործինչ կարևոր ճանապարհորդութե՛ կամ այլ ինչ իրաց, պարտի գնալ առ քաղաքապետն և խնդրել զԹուղթեհրամանի և նշանի առ ուսչ դարմն զի մի արգելցեն՝ և մի դարձուցեն զնա, և քաղաքապետն նախ առնու՝ 'ի գնացողէն փոխանակ անձին նորա զայլոք յերաշխի, և ապա տայ նմա զԹուղթ, և ապա ճանապարհորդն գնայ զճանապարհս իւր :

Իսկ զքարահատ արուճեստաւորսն՝ զորս բերին 'ի քաղաքն ասպահան, 'ի հարաւային կողմն քաղաքին յայնկոյս գետոյն բնակեցուցին, 'ի տեղին ուր զգաւրի ազգն էին բնակեցուցեալ խառն ընդ նոսին բնակեցուցին զքարահատ հայսն :

Եւ այժմ՝ 'ի Թոճականիս հայոց, հազարև հարիւրևութին՝ յամենանն մայիսի տասնվեցին հրամայեցաւ՝ 'ի ԹԳԼրէն յերկրորդ շահաբաժէն, զի այս հայոց ժողովուրդքս՝ և ընդ սոսա ևս ազգն գաւրի ելանիցեն յայսմանէ տեղւոջէ և գնացեն 'ի տեղին ուր երևանցիք՝ և շխշաբանցիք՝ և դաշտեցիք բնակեցան, սորա ևս անդ բնակեցին : զի ամենայն այլասեռ և այլ թհաւատ ազգ որոշեցին՝ 'ի մահմետականացի

զի մահմտականք անխառն՝ ի նոցունց բնակե
լովսք գտանեցին, վն որոյ և ազգն Տայոց և
ազգն գաւրաց ելեալ գնացին՝ և մերձ վերոյ
ասացեալ քրիստոնէիցն բնակեցան :

Իսկ թէ որ հարցումն արացե վասն ազգին
Վգաւրի այս է : Օ ի մեծ և առաջին շահաբասն
անվժար նենգախոհն, ոն զազգն Տայոց յատր
պատականէ աշխարհէն վարեալ էաժ՝ ի Պարս
կաստան, սոյնպէս և զազգն գաւրաց արտա
սահման արարեալ յիւրեանց բնիկ աշխարհէն
'ի քիրմանայ՝ և յեզդայ՝ և ՚ի շիրազայ՝ և յայլոց
տեղեաց իւրեանց և բերեալ էաժ յասպահան,
և նորօք լցուցեալ շինեաց և մարդաշատ արար
զասպահան : Իւ այս գաւրերս այսպէս եկեալ
էին յասպահան և անդ բնակեալ, և այժմ զնս
ևս հանեալ յայնմանէ տեղւոջ տարան մերձ
Տայոց ազգին՝ ի կողմն ինչ՝ և անդ բնակեցուցին :

Պատմութի վն ազգին Եբրայեցւոց բնակեցոյն յասպահան
քաղաքի : և այլոց ևս Եբրայեցի ազգին՝ որք են բնա
կեալ ընդ իշխանութի թիւրուծէն Պարսից,
թէ վն որոյ պատճառի դարձուցին յիւ
բեանց օրինացն ՚ի կրօնս մահմետի :

Ի Բ :
ՅԵՏՏԸՆԵՆԱՅԸՆՕԳԻՆ
Տայոց՝ ի քաղաքամիջէն ասպահանու՝
սկիզբն արարին և զազգն Եբրայեցւոց
հանել : Եւ ասն զի ՚ի ժամանակս թիւրուծէ
գծերկրորդ շահաբասիս, և ՚ի թուականու
թէս Տայոց, հազար և հարիւրւվեց՝ յառուր մի
ու մոր էր ուրբաթ օրն այն ընդ մերձենալ երե
կոյին՝ որ լուսանայր ՚ի վաղուճեան օրն շաբաթ.
նոյն է հտիմալդօլվաթն՝ որոյ անունն էր մահ
մատբէկ, որ և զազգն Տայոց է հան ՚ի քաղա
քամիջէն ասպահանու, և այժմ կամի զի և
զազգն

զազգն Աբրայեցւոց հանել: վնորոյ պատրաստեաց զգորականս և առաքեաց ի վնորն Աբրայեցւոց, որք են ջնուտ ազգն, թէ դուք ամ ազգդ Աբրայեցւոց պարտիք ելանել 'ի քաղաքամիջէ աստի և գնալ արտաքոյ քաղաքին 'ի մի ում յեզերաց քաղաքիս բնակիլ: զի որովհետեւ ոչ էք հաւատովն մահմետի անսք ազգ էք, ելէք 'ի քաղաքէս, և արտաքոյ քաղաքիս բնակեօջեք, քանզի այսպէս հրամայեցաւ վն ձեր 'ի թագաւորէն:

Առ որս զաղերս արկեալ Աբրայեցւոց ասելով: որովհետեւ այսպէս հրամայեցաւ վն մեր 'ի թագաւորէն հրաման թգւրին ի վն գլխոյ մերոց՝ կատարեմք անոպակաս զհրաման թագաւորին. բայց խնդրեմք 'ի ձէնջ զներուսն յաւուրս երիս՝ զի ուստերօք և դաստերօք և ամենիւք ընչիւք և ստացունածովք մերովք ելեալք գնասցուք: և մանաւանդ տեսանէք իսկ զի օրս տարաժամեալէ: այլ և հիւանդք և ցաւազարք, ծերք և մատաղ մանկտիք յոլովք գոն, որք ոչ կարեն այժմ զգիշերայն գնալ, վասնորոյ խնդրեմք 'ի ձէնջ զներուսն զերիս աւուրս:

Իսկ եկեալ զօրականքն ոչ տային զթոյլ և զներուսն կելոյ մինչ 'ի վաղուեան օրն, այլ ստիպէին տագնապաւ և փութով ելանել յայնմ երեկոյի. քանզի այնպէս էր հրամայեալ նց Եհտիմայ դօլ վաթն, ոչ ներել և ոչ թողացուցանել մինչև ցառաւօտն, այլ 'ի նոյնում երեկոյի և 'ի նոյնում գիշերի հանել զնս զամսին ամենիւք ընտանեօք իւրց: և թէ որ մնասցէ 'ի վաղուեան օրն, զգանս, և զբանստս, և զտան ջանս ածցեն ի վերայ այնպիսւոյ առնն, զի ոչ հնազանդեցաւ հրամանաց Եհտիմայ դօլ վաթն և ոչ գնաց:

Օ այս արար է հստիմալդօլ վաթնառ եբրայեցիսն, ուն զի նովաւ Եբրայեցիք լուծօղք և անցաւ որք գտանիցին շաբաթուն իւրեանց՝ զոր դատարկացեալք պահեն :

Եւ զօրականքն է հստիմալդօլ վաթին, որք եկեալին ՚ի հանել զէբրայեցիսն տանջելով և հարկանելով, և սրօք և բրօք և վիրաւորելով բոնութք արտաքս վարեցին զամնս Եբրայեցիսն յիւրաքանչիւր բնակութեց, զկահ և զկարասիսնց ցրոճեցին, և զդրունսն խորտակեցին : Եւ Եբրայեցիքն զձիչ և զկական բարձեալ աղաղակաւ լալով և ողբալով, իւրաքանչիւրք կալեալ զձեռանէ ուստերաց և դաստերաց իւրեանց, և զանկողինս և զձորձս բարձեալ յողն իւրեանց ելին ՚ի տանց իւրեանց ՚ի գիշերի ՚ի տարադէսլ ժամու, և շրջէին ՚ի դրունս մահմետականաց ՚ի փողոցս և ՚ի պողոտայս՝ և ոչոք էր՝ որ գթայր ՚ի նոսա :

Եւ պա ելեալ Եբրայեցւոցն ՚ի քաղաքէն և գնացեալ իմէջ ջուղայու և գաւրապատու, և անդէն ևս ոչ գտին զտեղի կելոյ, քանզի եկին զօրականք ոմանք ուն թէ յէ հստիմալդօլ վաթէն առաքեալք՝ և պատոճիրեցին ջուղեցւոց և գաւրապատուոց մի՛ տալնց զտեղի՝ վնորոյ և ոչ ետուն. և մնացին արտաքոյ յարկաց ամենայն ազգն Եբրայեցւոց :

Եւ եկն իվերայ նոցա վտանկ և վիշտ մեծ. քան զի ժամանակն էր ցուրտ աշունն և ըսկիզբն ձմռան. և ցուրտն կարի վշտացուցեալ վտանկէր զնոսա. զի արտաքոյ յարկաց բացօթեայք կային. և բազումք կային իմէջ նոցա արք և կանայք ողորմելիք : Եւ և մահմետականք որք հանդիպեին. հայհոյեին՝ անարգեին՝ զզոճէին՝ հարկանէին՝ և զբազում ներութիս

զուծիս հասուցանելին ողորմելեացն այնոցնիկ:
 Օ կնի այսորիկ եբրե ետես է հտիմալդօլ
 վաթն թէ անհնար է նց կամաւ գալ'ի տաճ
 կուծի, խորհեցաւ բռնուծք ածել'ի տաճ
 կուծի: քանզի հրամայեաց ազգին մահմետա
 կանաց' և մանաւանդ արանց զինուորաց • զի
 ուրե գտցեն զայր Երբայեցի կալեալ բերցեն
 'ի դուռն է հտիմալդօլ վաթնն • վասնորոյ ամբն
 արք մահմետականաց ուրե գտանէին զայր
 Երբայեցի • կալեալ կասեալ ած էին առաջի
 է հտիմալդօլ վաթնն: Եւ նա զառաջինն մեղ
 մով խօսէր ընդ նոսա և ասէր՝ եկայք դուք
 մարդիկ քարաձարուք յունայն օրինաց ձերոց •
 և ծաներուք զարարիչն և զՏր Մ'ծն երկնի և
 երկրի' և լերուք մեզ եղբարք:

Իսկ Երբայեցիք պատասխանեալ ասէին •
 զՏրն և զՄ'ծն երկնի և երկրի ճանաչեմք' և պաշ
 տեմք • բայց ձեզ եղբայր լինիլ ոչ կամիմք • և յօ
 ըինաց մերոց ոչ դաւնամք • զի օրէնքն մեր ճշմա
 ըրտէ և Մ'ծատուր զի ձեռամբ մօսէսի մարդա
 ըէին ետ Մ'ծ' որում դու իսկ գիտակ ես:

Իսաց է հտիմալդօլ վաթն • եթէ գայցէք
 'ի հաւատս մեր' լինիք մեզ եղբարք սերելիք •
 այլ և զբազում գանձս և զպարգևս և զմեծու
 թիս տամք ձեզ:

Իւ այս բան' ոմն այր Երբայեցի' որոյ ա
 նուններ յօսէփ պատասխանեալ ասաց • որ
 ժամաչխարհիս հողագործաց արանցն որ գայ
 առ մեզ'ի գնել զաղբ մարդոյ վն պարտիզաց •
 մեք նախ զգինն աղբին առնումք և սպա տամք
 զաղբն նոցա • իսկ դուք զգանձս և զպարգևս
 եդեալ իվր ձերդ հաւատոյ ձգէք իվր մեր:
 զայս ասաց այրն յօսէփ զի թերևս առ այն բան
 զայրօսցի է հտիմալդօլ վաթն իվր նք և սպա

ցէ զնա : Սոյնս և ամբն հրէայքն սակին սպան
զմեզ գտմենեսեան . զի լաւ է մեզ ամենեցուն
մեռանիլ քան թէ յօրէնս ձեր մտանել :

• Եւ է հտիմալդօրվաթն ասաց՝ գիտե՞մ զի
զայդպեսի զայրոցուցիչ բանսդ այնու աղագաւ
անէք՝ զի ես զայրացեալ ի վրձեր սպանից զձեզ .
բայց այնպէս գիտակ լերուք զի բնաւ ոչ զոք՝ ՚ի
ձէնջ սպանանեմ . այլ մեղմագոյն և երկար չար
չարանօք այնքան տանջեմ զձեզ՝ մինչ զի յամե
նից կողմանց վհատելք դառնայք յօրէնս մեր :

Իսկ արքն Լբերայեցիք համախորհուրդք
եղեալ զբանս աղաչանաց մատուցին առ էհտի
մալդօրվաթն խնդրելով զտեղի բնակութե՛ք և
ասացին : Սոյն զազգն հայոց հանեալ՝ ՚ի քաղա
քամիջէ աստի և յայլուր ետուր նց զտեղի բնա
կութե : սոյնպէս և մեզ տուր զտեղի բնակու
թե կարոյ՝ ՚ի վայրի ուրեք յեղերս քաղաքիս , զի
առ սակաւ սակաւ շինեսցուք մեք իւրաքանչ
իւրոք մեզ գտուն բնակութե , և ելեալք՝ ՚ի քա
ղաքէս անդ գումարեալ բնակիցուք :

Իսկ է հտիմալդօրվաթն համախորհուրդ
եղեալ ը այլոց ևս իշխանացն Պարսից՝ ցուցին
նց զտեղի ուրեք հեռի՝ ՚ի քաղաքէն . և զանուն
տեղւոյն գօզալդարայ կոչեն՝ որ է մերձ մոլաս
լաս իմամին . և տեղիս այս էր անպատեհ և ան
ձեռնտու : նախ՝ զի կարի հեռի էր՝ ՚ի քաղաքէն :
Իջ երկրորդ՝ առանց ջրոյ էր . և թէ՛ ՚ի հե
ռմուսս ջուր բերէին ոչգայր , և ոչ հասանէր՝
վս վայրացն հեռաւորութե . և թէ՛ ՚ի տեղին
ջրհոր փորէին ոչ բղխիւր ջուր զի լեռնական և
վիմային էր տեղին : () այս անպատշաճ տեղիս
յայն սակս ցուցին զի այսու ևս յանձար և՛ ՚ի տա
րակուսի մնայցեն Լբերայեցիքն . վերջև Լբերայե
քն ոչ կարացին գնալ ՚ի տեղին յայն . այլ մնա
ցին արապոյ և բացօթեայք :

Յայս

Յայսմ Տետէ մտախոՏեղեալ է Տտիմալդօլ վաթին առ սակաւ սակաւ 'ի տանջանս մատնել զԵբրայեցիսն : Վլ 'ի վաղուց և 'ի Տնոց ժամանակաց 'ի միում տեղւոջ յեզերս քաղաքին արտաքոյ շինուածեց և բնակուածեց 'ի վայրի ուրեք՝ կայր տեղի ինչ բաձր պարսպեալ և գունն ի վերայ . բայց 'ի ներքս 'ի պարսպին տուն կամ բնակուածի բնաւին ոչ գոյր . այլ լոկ միայն պարսպ շուրջանակի բոլորեալ :

Նրամայեաց է Տտիմալդօլ վաթն պարսիկ զօրականացն . զի երկու եբրայեցի առն մէկ զօրական կացցէ ի վր չարչարիչ . և զամ ըմբռնեալ և առ ձեռն գտեալ եբրայեցիսն կապանօք տանիլ և ընուլ իմէջ պարսպին այն , և զըւոր ցանել յատակս նր ի վր երեսաց երկրի . և մերկ մարնով նստուցանել ի վր երկրի : Վլ էր ժամանակն ցուրտ աշունն գր 'ի ցանիլ ջրոյն զերեսօք երկրի տամկանայր երես երկրի և մանաւանդ թէ սառնոյր . և զերիս տիւս և զերիս գիշերս այնպ մնացին եբրայեցիքն անօթի և անսունաղ զի ոչոք տայր նոցա զկերակուր . և ազգականք Վերայեցւոցն եկեալ արտաքոյ կացեալ յետ ուստկուսէ պարսպին բերեալ զՏաց ձգէին իմէջ պարսպին առի լինիլ կերակուր Վերայեցւոցն . և զայն ևս զինունորացն յափշտակեալ ուտէին՝ և ոչ տային Վերայեցւոցն : զկնի Տրամայեաց է Տտիմալդօլ վաթն՝ որ հանեալ պտտի բերին 'ի քաղաքն և արկին 'ի բանն :

Յարագս Վերայեցւոց հարցումն արար է Տտիմալդօլ վաթն ընդ առաջնորդն և գլուխն օրինաց իւրեանց , զոր սադր ասեն ինքեանք . թէ սոքա կամաւ ոչ գան 'ի հաւատս մեր՝ զինչ արասցուք . մարթէ բռնութիւն դարձուցանել թէ ոչ . պատասխանի արար սադրն . ոչ գոյ

ման յօրինաց մերոց զոր բռնութիւնք դարձուցանել : Արկին է հարց է հտիմալդօլվաթն . ապա զինչ արասցուք . ասաց սատրն , ինձ ոչ է մոյթ' դու գիտես :

Վարձեալ կոչեաց է հտիմալդօլվաթն զԱրք ընթեցինն առաջի իւր և ասաց գայ'ի հնազանդութի' և մտանել յօրէնս մահմետի . զի ովոր գայ յօրէնս մեր տամք նմա զպտրգևս երկու թուամն' և նա ազատի 'ի ասնջանաց և նստի հանդարտութի'ի ասն իւրում . և ովոր յառաջագոյն գայցի 'ի հաւատս' տամք նմա զպետութի' և զիշխանութի' :

Եւ յոր ոմն յայնցանէ որոյ անունն էր աւատիայ . նախ քան զամենս սա եկեալ է կաց առաջի է հտիմալդօլվաթին' և յօժարութիւն յանձնէ առ ուրանալ զհրէութի' և դաւանել զտաճկութե' հաւատն : Արոյ բանից վր յոյժ ուրախացեալ բերկրեցաւ է հտիմալդօլվաթն . և անտի գլխով յարգեալ գովեաց և սիրեաց զնա . և կոչեաց զնա իւր եղբայրագիր . և զամ ըզզգեաս անձին իւրոյ' զոր զգեցեալ էր հանեալ զգեցոյց նմա . և մինչև ցմատանիս մատանցն հանեալ եղ . 'ի մատունս նր' . և այլևս զինչս յուրովս պարգևեաց նմա և յինքն յանկոյց զմիտսնց :

Եւ այս ուրացող այրս աւատիայ . եղև հնարացոյց իշխանացն Վարսից . քանզի ասաց զարս լեզայեցիս զբազումս իմիասին մի պահէք . և կամ թէ զչորս և զհինգս իմիասին յատեան մի բերէք . զի քաջալերեալ հաստատեն զսիրտս իրերաց . այլ երկու և երեք միայն բերէք . և բռնութիւնք դարձուցէք' զի նորս կամաւ ոչ դառնան : Եւ յլև նախ կալարուք զքահանայն նց' զոր խախտմ ասեն . և ի վր նր բազմաւ ջանիւ շնացէք . խոստմամբ պարգևաց և սպառնա

լեօք տանջանաց • Թերևս դարձուցանիցէք զնա • զի Թէ նա դարձաւ ամբն դառնան : ըսալ այսմ օրինակի յոլով Տնարօ Էցոյց Պարսից այն աւատիայն : Արոյ խրատովն ստէպ յուզմամբ որոնեալ Պարսիցն գտին զխախամն որոյ առնունէր սայիտ՝ և բերեալ կացուցին առաջին Էհտիմալդօզ վաթին : առ որ առաց հաւանեաց բանից իմոց և կատարեա զհրամանս թիբրին • Եկ դարձիր յօրէնս մեր մահմետականս • և առ յինէն զպարգևս և զբարու թնս յոլովս • իսկ խախամն ոչ էր յանձին կալեալ այլ հրաժարեալէր : և այլևս զբանս բազումն խօսեցան ի իշխանքն լիխախամին՝ և նա ոչ հաւանեցաւ • այլ խնդրեաց զհրաման գնալոյ՝ ի տուն իւր, և ի իշխանքն ետուն նմա զհրաման գնալոյ : և անդէն առժամայն ուրացօղն աւատիայ աղդեալ ի իշխանացն ոչ Թողուլ զնա գնալ ի տուն իւր • այլ առ ինքեանս պահել • և այնպէս արարին ի իշխանքն : Եւ ի վաղիւն դարձեալ կացուցին յատենի • և զնոյն բան հրամայեցին դառնալ յօրէնս մահմետի • և յայնմ ևս նունագի ոչ հաւանեցաւ խախամն : Եւ յերրորդումն աւուր ևս այսպի կատարեցաւ գործն : Իսկ յաւուրն չորրորդի յետ բազմաց բանից, զոր խօսեցան լիխախամին, հատին ի վր նր զվճիռ զի Թէ ոչ դառնայ յօրէնս մահմետի պատառեցեն զորովայնս և կախեցեն յուղտէ և շրջեցուցեն իմէջ քարս քին • և զինչսն և զբնաանիսն առցեն յարարի : Օ այս վճիռ հատին • և զուղտն բերեալ առժամայն նստուցին անդէն • և եկեալ դահճացն բացին զորովայնս • և հանեալ զսուրն իւրեանց հարկէին զխախամն կամ ուրանալ կամ զորովայնս պատառել : և խախամն յահէ սպանմանս • այլև առ ի գուծս ընտանեացն թիբրին •

Լացաւ •

ըստաւ . վնորոյ դաւանեցուցին նմա զդաւա
նութի հաւատոյն իւրեանց՝ և դարձուցին յօ
րէնս մահմետի . և ուրախացան ի վր նր անպատ
մաւ ուրախութբ :

Յետ այսորիկ որ զխախամն դարձուցին 'ի
հաւատս իւրոյ . յարանցն Վերայեցուոց ածէին
յատեան մի և երկու և ասէին ցնոսա զինչ ևս
ուշիք ասել զի ահա խախամն ևս եկն 'ի հաւ
ատս և դուք զի ևս յամառեալ դիմադարձիք .
և Վերայեցիքն ոչ հաւանէին : վնորոյ հրա
մայէին իշխանքն զօրականացն տանիլ զՎե
րայեցիսն 'ի բանտն . և նոյնժամայն միւսան
գամ բերել . և այնպէս բազում մանգամ տա
նէին և բերէին : և 'ի տանիլն և 'ի բերելն՝ զօրա
կանք և ծառայք և սպասաւորք իշխանացն , որք
կային 'ի տեղեան . թքանէին՝ հայհոյէին՝ հար
կանէին՝ ապտակէին՝ զարկուցանէին զգետնի .
և ընդբարչս տանէին . և բերեալ կացուցա
նէին առաջի իշխանացն և էհտիմալդօլվա
թին : և բռնութբ դաւանեցուցանէին զդաւա
նութի հաւատոյն մահմետի . և Վերայեցիքն
առ վտանկի տանջանացն ականայիւք կամօք
դաւանէին : և յետ դաւանելոյն բերէին
Պարսիկքն ագուցանէին դաւանողաց զնոր
կապայ . և տային նց զպարզ ևս յարքունականէ
գանձէ իւրաքանչիւր առնն զերկու թուման
դրամ . և թողունին գնալ 'ի տունս իւրեանց :
և որք ոչ ուրանային դարձուցեալ 'ի բանտն
պահէին . և ապա կրկին և երէքկին և բազմա
կի բերեալ յառաջ կացուցանէին և հարկէին
ուրանալ : և այնպէս առնելով զթմ կալեալ
արսն դարձուցին 'ի կրօնս մահմետի . և ամաս
չափի միոյ աւուրս զերիս հարիւրս և զյիսուն
ձր դարձուցին յօրէնս մահմետի :

Եւ յուհեաւ Եբրայեցիքն տկարացան առ աջի Պարսից. զի կէս մասն՝ի նոցունց դարձան յօրէնս Պարսից. և Պարսիկքն զօրացան ի վր յԵբրայեցւոց. և այլ ոչ ևս անսացին նց կալ այլ բռնութի կալեալ զԵբրայեցիսն օր աւուրած էին առ աջի էհտիմարդօր վաթին՝ և բռնութի դարձուցանէին ՚ի կրօնս մահմետի:

Եւ այնքան հետեւեցան Պարսիկք և բռնացան ի վր Եբրայեցւոց առ ՚ի դարձուցանել զնոսա. և ոչ արարին ներումն և ոչ սակաւ մի. մինչև զամ ազգն Տրեից զբնակեալսն իմէջ քաղաքին ասպահանու դարձուցին ՚ի կրօնս մահմետի. վնդի սակաւք էին ազգն Տրեից բնակեալք յասպահան քաղաքի. իբրև երեք հարիւր տուն՝ պակաս և ոչ աւելի:

Եւ ՚ի զրաւել ամցեն կարգեցին ի վրնց մահմետական մօլլայ, որ ուսուցէ նց զօրէնսն մահմետի, և հանապազ տարցի յաղօթանոցն Պարսից, զի Պարսկօրէն աղօթեցեն. և մանկանց նց ուսուցէ զգիրս և զաւանդութիս մահմետականս: այլև օրինադրեցին Տրեից զի զդրս տերս իւրեանց տացեն մահմետականաց, և ՚ի դատերաց նց ինքեանք առցեն: այլև մարասցեն զենումն կենդանեաց ոնյ յառաջն առնէին, այլ ՚ի շուկայէն ՚ի մահմետականաց զենողաց առցեն զմիս: և այլևս այսպիսի օրինադրութիս բազումն կարգեցին Պարսիկք ի վր Եբրայեցւոց:

Իսկ օրք Տրեայքն էին ոչ գնային ՚ի մօլլայ Պարսից. նաև ոչ բնաւ մօտանային նց. և ոչ գնէին զմիս ՚ի շուկայէն. այլ ծածուկ ՚ի տունս իւրեանց զենուին ոչխարս. և կամ թէ առանց մտոյ անցուցանէին աւուրս բազումս: Եւ լինեբ զի երբեմն երբեմն վն ահիւ երկիւղի մատնողացն և Պարսիցն գնային Եբրայեցիքն ՚ի շուկայս:

շուկայն՝ և գնէին զզենեալ միս՝ ի Պարսիկ վէնս զաց . և սկներև բաց համարձակ առաջի ամենեցուն բերէին ՚ի տունս իւրեանց ուր թէ իւրեանց ուտելոյ վասն՝ և ոչ ուտէին . այլ ՚ի ծածուկ ձգէին առաջի շանց՝ և շուկքն ուտէին . և զայլ բազում այսպիսի գործս ունէին ազգն Վերայեցւոց՝ որովք յայսնեալ ստուգեցաւ թէ ոչ կամին թողուլ զօրէնս Հրեութիւն :

Իայց աւատիայ՝ և իւր գործակից չար ընկերքն՝ որք ընդ նմա ուրացան . սորբա յոյժ ուրախ և հաստատ էին ի վր իւրեանց նորագիւտ հաւատոյն կրօնիցն մահմետի՝ վասնորոյ շրջագայեալ իմէջ Վերայեցւոց յուզէին, զննէին, տեղեկանային, թէ որոք կամակար մտօք իցէ հաւանեալ օրինացն մահմետի՝ և որոք ոչ . այլ տակաւին ունի ՚ի ծածուկ զօրէնս Հրեութիւն : Եւ յայսմ պատճառէ բազում նեղութիւնս հասուցանէին ազգին Հրեից՝ զորս իբաւ և զորս անիրաւ . քանզի կալեալ զոմանս ՚ի Հրեից հարստահարեալ և բանավէճ լեալ դատա փետ առնէին . և ասէին, ընդէր դու ոչ գնաս ՚ի մահիթն յաղօթել՝ այլ գնաս ՚ի ժողովարանն Հրեից : և ոմանց թէ զորդին քո յաւ խախտան առաքես յուսանել՝ և ոչ առ մօլայն : և ոմանց թէ միս ոչ առնուս ՚ի շուկայէն այլ ՚ի տանքում զենուամն առնես : և այլ այսպիսի գործս բազումս առնէին ընդ Հրեից ուրացողքն ՚ի նոյքանց . և Վերայեցիքն վն երկիւղին Պարսից բազում աղաչանս արարեալ նց և կաշառս տուեալ . հազիւ ուրեմն կարէին զերծանիլ ՚ի ձեռաց նոցա :

Եւ ազգն Հրեից յոյժ վշտացեալ ՚ի սիրտ և յոգի խոցեցան ի վր արարմանց ուրացողացն . և Վերայեցիքն սրտմտութե և նախանձու լցեալք եղին .

454 Խոկումն Սպանման Լաւոեայ .

եղեն . և եղին Տաստատութի միտս իւրց սպանանել զուրացողսն . նախ զաւտիայ զինա կարի չարագոյն եր :

Իւր այր ոմն յազգէն Տրեխց յոյժ վրէժխնդիր օրինացն Տրեութե՝ որոյ անունն եր վին Տաս . սանախանձախնդիր գոլով օրինացն Տայրենի եւայր՝ ի սիրաց և յոգի սպանանել զաւտիայ : և Տանձարեալ Տնարիւք է գիտ զայլևս արս երես յազգէն Տրեխց խորհրդակից և ընկեր ինքեան՝ վն սպանման պղծոյն աւատիայի . անուն միոյն իսահակ՝ և երկրորդին մասի՛ իրրորդին յուրայ . սոքա չորեքեանս միաբանեալ և Տաստատութի պայմանեցին ՚ի միջի իւրեանց ՚ի դէպ ժամու սպանանել զաւտիայ՝ զորև սպանին :

Օ կնի սատակման պղծոյն աւատիայի խորհեցան չորեքին արքն կորուսանել զպիղծ գէշնր . և թէպէտ բազմաւ կերպիւ խօսեցան՝ ոչ կայացաւ խորհուրդն յն . այլ Տաւանութի չորիցն այսպէս արարին , զև եբրև է Տաս գիշերն և իմէջ գիշերին բարձեալ զդի պղծոյն աւտիայի տարեալ Տեւացուցին ՚ի տանց իւրց՝ և իմէջ պողոտային ՚ի կողմն ինչ ընկեցին զնա . և ինքեանք աներևութացան :

Իւր այնուհետև ազգն Պարսից , ոչինչ խօսեցան և կամարարին ընդ աղգին Տրեխց , ոչ պատանջէին ՚ի նոցունց զՏարկս արքունի , և ոչ ինչ ծառայութիս իշխանական , այլ եբրև զազգն Պարսից Տամարեալ ունէին զնոսա և մտեալ յօրէնս մահմետի , քանզև թողին զնս՝ ՚ի կամս իւրց կեալ . թէպէտ և գիտէին Պարսիկք՝ զեոչ են մտեալ Տրեայք յօրէնս մահմետի , այլ առ ժամանակաւն այնպէս թողին :
Իւր Տրեայք ՚ի ժողովս և յազգս իւրեանց զօրէնս

զօրէնս և զաւանդութիս Հրէականս կատարէին և ոչ զմահմետականս : Եւ և ասէին թէ մէք զամենայն ամի հարկն զոր տալոցեմք արքունի ամյամէ որոշեալ զատեմք և արկանեմք ՚ի գանձանակ և պահեմք՝ զի յորժամ խնդրեսցեն վաղվաղակի տամք և զերժանիմք : այլ և ասէին զայն երկու թուճմանն, որ յաւուրն ուրացութե ետուն մեզ զպարգևս՝ զայնևս պահեալ եմք. և հանապազ զիւրաքանչիւր տարւոյ շահն ընումք ի վր. զի յորժամ խնդրեսցեն տուեալ զերժանիմք ՚ի նոցանէ : Եւ մինչև ցամս այս որում զպատմուիս շարագրեցաք՝ որ է թուճական մեր հազար և հարիւրէկինն. և մարտի ամսոյ տասն այսն ըստ ասացելումս կան պարսիկք և Հրէայք՝ և ասպագայն Վ. Ե. գիտելի :

Եւ այսևս գիտելի է՝ զի յաւուրնս յորում զՀրէայնս՝ որք էին յաճպահան քաղաքի զամսն թէ կամաւ թէ յակամայ դարձուցին յօրէնս մահմետի՝ այնուհետև է հտիմալդօզ վաթն զհրովարտակ հանեալ ՚ի թգրէն առաքեաց ամսն աշխարհս տերութե Վարսից առ իշխանս աշխարհաց. զի ուրեկցեն ազգք և ժողովուրդք Հրէից թէ ՚ի գեւզս և թէ ՚ի քաղաքս ամենեքեան թողցեն զօրէնս Հրէութե, և ստացին զօրէնս մահմետի, որք կամաւ հնազանդեսցին բարւոք է՝ և որք ընդդիմացին՝ բարս թէ և տանջանօք ամցեն իշխանքն զայն պիսիսն և հաւատն մահմետի : Եւ եբրև հասանէր հրամանն արքունի ՚ի տեղիսն առժամացն ուն հուր բորբոքեալ ընդ եղէգն գումարէին զամենայն Հրէայնս. և հարկէին կատարել զհրամանս թգրին : և ամազգն Հրէից որև կային ոչ կամէին մտանել յօրէնս մահմետի :

տի. այլ ոմանք կաշառօք՝ և ոմանք փախտեամբ. և ոմանք այլինչ հնարիւք զերծանէին. Իսկ որք յանհնարս մնային յակամայ կամօք և առ եղեստ կեղծաւորութի մտանէին յորէնս մահմետի, և թէպէտ առաջ Պարսից ձեռնային մահմետական գող՝ այլ ոչ էին. այլ հրեութե օրինօքն կային ամբն՝ ի ծածուկ:

Եւ ի ժողովրդականացն հրեից՝ որք յիւրաքանչիւր քաղաքս Պարսից բնակեալք էին անհնարք լեալք յակամակամօք և առ երեստ մտին յորէնս Պարսից՝ այսոքիկ են. որք՝ ի քաջան, ի դում, ի թաւրէզ, յարտաւել ի դազբին, ի լառ, ի շիրազ, ի բանտարի քում: Եւ որք կաշառօք, և փախտեամբ, և կամ յայտնի լռիմա կայելով ոչ մտին յորէնս Պարսից՝ այսոքիկ են, որք՝ ի գուլփէքան, ի խունսար, ի բանտար, ի շուշտար, ի համադան, յեզդ, ի բրման, ի խորասան, ի դումմուանդ, յաստարապատ, յեքէիրն գիլանու, ի գեղորայան Փահրապատու:

Իսկ ի Փահրապատ քաղաքի բնակեալ հրեայքն յայտ յանդիման կացեալ ընդդիմացան հրամանաց արքունի՝ և ոչ մտին յորէնս մահմետի. և նց վերակացու իշխանն՝ որոյ անունն էր միրզասատղ, իբրև լուաութի զհրեայան, որք յասպահան քաղաքին էին, ածին յորէնս մահմետի, այն իշխանն ևս սկսաւ ձեռնարկանէ ի Փահրապատ քաղաքի բնակեալ հրեայանքունութի ածել ի տաճկութի: և զպատարար իշխանն նախքան զգալն թիբրակաճի հրովարտակին. և հրեիցն վշտացեալ ի նորին բունութեն խօսեցան առ երեստ իշխանին՝ թէ ոչ է հրամայեալ քեզ ի թիբրէն վն այդպիսի երաց. և զհարդ ընդ վայր տանջես զմեզ. և յայամ բանէ սակաւինչ թուլացոյց իշխանն զբունութի:

Աւրացողաց Նրէից՝ Երեսնիս : 457
Քայց յոյժ յինկալ եղև՝ Եսրտի Եւրում և Տամ
բերցորժամ եկն Տրովարտակն արբունի : այ
նուհետև կոչեաց իշխանն զՆրէայսն և սոաց՝
զինչևս ունիք ասել զի ասաւասիկ Տրովար
տակ Տրամանաց Թգրին : արդ եկեալ կատա
րեցէք զՏրամանս Թգրին՝ և կալարուք յանձն
զօրէնս մահմետի :

Եւ Նրէայքն յայտնի և Տամարձակ կացին
ընդդէմ ասելով . ոչ ընդ ունիմք զօրէնս մահ
մետի՝ և ոչ Թողումք զՏայրենի օրէնս մեր՝ և
դու զօրինչ կամիս արա ընդ մեզ :

Իսկ իշխանն զբազում չարչարանս էած իվր
նոցա . բազում մանգամ՝ Ի կախաղանի կախեալ
բրած էծ առնէր զնն այնքան մինչև անհնչա
նալ նց : և բազում մանգամ՝ Ի ջուր լճին Տեղ
ձամղձուկ առնելով . և Տանեալ դարձեալ
բրած էծ առնէր . այլև զօրականս՝ Ի տունս նց
առաքէր առ՝ Ի զինչս նց յաւարել և զկանայս
նոցա խայտառակել՝ որք և կարի առաւել և ան
պատկառաբար արարին զայս գործ Եւ Նրէից
կանանցն ուստերաց և դստերաց : և Նրէայքս
այսոքիկ Տարուստք և ընչեղք էին՝ որք յոյովք՝ Ի
սոցանէ ունիին իմէջ շուկային զխանութս որ է
դուքան յորում վաճառէին պատուական կու
մուշս և արծաթեղէն անթա . որոց վն Տրա
մայեաց իշխանն ազգին մահմետականի զի
զքմ . Ինչս խանութացն Նրէից յաւար Տար
ցին . որ և առ ժամայն կողոպտեցին :

Եւ Նրէից արանցն կալանաւորք էին ըմ
բունեալք քան զՏարիւր արս աւելի . որոց ամե
նեցուն պարանոցն արկեալ շղթայս երկթեայ
ժանր և երկայն . և զամենեւեան այնու շղթայ
Իւն կապեալ զինի միմեանց շարեւշար . քան
զի մի էր շղթայն . և Տանապազօր բերէին՝ Ի
Թ 5 . դուռն

գուռն իշխանին 'ի դատել' և տանելն 'ի բան' արն 'ի պահել :

Իւ երկարեցաւ գործս այս մինչև յերես և 'ի չորն ամիս . և 'ի բաղմաց չարչարանացն , զոր էած իվ ը նց իշխանն ինքնևս ձանձրացաւ : ապա հրամայեաց նց Թէ որովհետև ոչ կամէք մեկնել 'ի Տրեու Թէ առ էք իվ ը ձեր զնշան ինչ յայտնի որով ամքն տեսողք ծանհցեն զձեզ Թէ Տրեայք էք : և զայս հրաման յանձին կալան Տրեայք մեծաւ յօժարու Թէ :

Իւ այլևս զնեղու Թին և զտանջանս բազումս կրեցին Տրեայք . այնքան մինչ զի նեղիչք նց Պարսիկք ձանձրացան 'ի նեղել զնս' և յետս կացին , և եբացլբին զՏրեայսն 'ի չարչարելոյ . և նորա այսպէս ազատեալք եղին 'ի ձեռացն Պարսից . և տակաւին կան 'ի հայրենի հաւատն իւրեանց Տրեական . իսկ յապագայն Մ. Ե. է գիտելի . որում փառք յաւիտեանս ամէն :

Այ շարժման մեծի քաղաքին Թաւրիզու :

Լ. Ե. :



Թ. ՈՒ. Ե. Կ. Ը. Ե. ՈՒ. Թ. Ե. Ը. Ն. Ս

Հայոց հազար և իննսուուն' փետրվարի ամսոյ 'ի հինգն յաւուր ուրբաթու' 'ի քաղաքն Թաւրէզ , և 'ի շրջակայ գաւառսն իւր , եղև յանկարծակի և յեղակարծում ժամում ահագին գետնաշարժ ուժ գնակիւ բախ մամբ , զի հաստակառոյց Թանձրու Թիւրքի զողայր ուն զտերևինս՝ զոր ունելով զք' ի ձեռնն խաղացուցէ , կամ զջուրնն յամանի այսր և անդր տարաբերիցէ : քանզի ահագին որոտ մամբ Թնդաց երկիր գոռալով 'ի սանգարամե տէ անդնդոց՝ և զկնի եղև շարժն և արար զկոր ծանուամն և զտապալումն և զբայքայումն ամէննն :

նից շինու՛ած ողբաղաքին : Օ ի մեծ ամեծ և լայն
նանիստ և բարձրաբերձ և զարմանատես շինու՛
ած, որ կայր իմէջ քաղաքին, որ 'ի հնոց ժամս
նակաց և 'ի ԹԳ՛րց մնացեալէր ուր որ տեսողացն
յայտէ՝ զբազուսն 'ի նոցանէ 'ի վայրկեան ժա
մու՛ վիշուզեալ հողաբլուր առնէր :

Որպէս և անու՛անի շինու՛ած սն՝ զորս ուստա
շագրտ ասէին այսու շարժմամբս բլաւ, և զբա
զում ուղտս և այլ անասունս 'ի ներքոյ իւր
էադ՝ որք 'ի ցրտոյ և 'ի ձիւնոյ ձմերանն հովա
նաւորեալք էին իմէջ նորա :

Ի՛յլ և բարձրաբերձ յօրինեալ եղջիւրք և
մնիրայք մաշիթաց 'ի բարձրադիտակէ և յեր
կնաբերձէ բարձու՛է բարձանցն խորտակեալ
բեկեալ տրամատեալ զառ՝ 'ի ստորև սորեալ 'ի
վայր դիմեալ, և զարկուցեալ յերկիր իբաց
ցնդէին :

Ի՛ս և անու՛անի և լայնանիստ և բարձրա
բերձ և հոյակապ և հռչակաւոր շինու՛ածն
որում շամղազան ասեն՝ որ է 'ի քաղաքն սա
կաւ ինչ հեռի 'ի կողմն շօր գետոյն, սորա առաւ
տաղն ամփլաւ, և մնացին շուրջանակի որ
մու՛նքն, և այն ևս 'ի հիմանցն խախտեցաւ, և 'ի չո
րից կողմանց պատառեցաւ : և բաժանեցաւ
'ի չորս մասունս՝ որ կայ այնպէս մինչև ցայսօր :

Իսկ վստանց և ապարանից՝ բաղանեաց և
փութկայից, որ է քարվանսարայ, ով կարէ
թու՛նէ ռոց հիմն իվերտապալեցան, և բա
զումք կենդանիք մարդք և անասունք, կահք
և կարասիք, գանձք և ստացու՛ածք մնացին 'ի
ներքոյ հողոյ, որոց խոյզ արարեալ աւուրս
քսան, կամ երեսուն, պեղեալ զհող և զբար
հազիւ կարէին գտանել զվեռեալս և զինչս :

Ի՛նչ պէտեղև վնաս բազում քաղաքին Թաւ
րիզու

րիզու շարժմամբս այսու, այլ առաւելապա
տիկ մնաս շրջակայ գաւառին եղև, ուն խորով
չայ, և ուսկու՝ կօչեցեալ գաւառացն, և դու
խուրհան գեղջն, քանդումն և տապալումն, և
մարդոց և անասնոց կորնչումն:

Եւ 'ի սաստիկ և յուժգնակի շարժմանէ
պատառեցաւ հաստակաւոյց թանձրութի եր
կրի, և ելին սեաւ ջուրք բղխեալք իբրև զաղ
բիւրս՝ և գնայր ջուրն զգնացս իւր: և յետ երկ
աւուրց դարձեալ եղև շարժ ուժգնակի, և
կորեան աղբիւրքն: և յայլ տեղիս երևեցան
այլք աղբիւրք մանունք, և ժողովք ջրոց ու
զառաջին սեաւ ջուրն, և որքան ժամանակի
կայր շարժն, կային և աղբիւրք սեաւ ջուրցն,
և յետ դադարման շարժին կորեան և նորա:

Վ. յլև ասացին ոմանք թէ խաշնարած ոմն
հովիւ, որոյ առաջի հօտք ոչխարաց արած էին
'ի վայրի ուրեմն, և յաւուր միում ընդ լինիլ
շարժին՝ իսկոյն պատառեցաւ թանձրութի եր
կրի՝ և բացաւ խորութի անդնդոց յորում սու
ղեալ ընկրմեցաւ հովիւն, և մասն ինչ յոչխա
րացն, և կենդանոյն կլեալք յերկրէ, և ոչ ևս
երևեցան:

Վ. աև գիւղ մի ողջոյն՝ որ շինեալ կայր 'ի ներ
քոյ բարանձաւ լեռան միոյ, և յորժամ եղև
շարժն, պատառեալ բաժանեաց զկարծրու
թի վիմաց լեռանն, և խորտակեալ քայքայեաց
զնա՝ և իբրև զհողաբլուր սորեալ խճով քա
րով ի վր գեղջն և ծածկեալ զգեղն ողջոյն.
և կորուսեալ անյայտարար բնաւին:

Եւ ժամանակ շարժմանս այսորիկ, եր ժա
մանակ ձմեռան և օսաստիկ ցուրտ՝ քանզի ձիւնս
մեծ եղև ձմեռնայն՝ և ոչ թէ միանգամ կամ
երկիցս և երկիցս շարժեցաւ և դադարեցաւ,
այլ

այլ երկարեցաւ շարժումն մինչև 'ի վեց ամիս : Բայց մինչ յերկուս ամիսս ստեպ ստեպ լինէր շարժն . քանզի լինէր՝ որ 'ի միում աւուր ընդ տիւ և ընդ գեշեր , հինգանգամ և վեցանգամ շարժ լինէր . և էր , որ աւելի և պակաս լինէր : և մինչև յերկուս ամիսս այսպէս լինէր յամաւ ուր , և զկնի երկու ամսոյն , 'ի տասն աւուրն միանգամ , և 'ի քսան աւուրն , և յերեսուն աւուրն միանգամ գայր շարժն :

Եւ յայսմանէ պատճառէ ահաբեկ քե սրտս մեռք և խելաթափք էին լեալ ամբն յահէ շարժին՝ որ յանկարծակի գայր . և թէպէտ բազումք փախստեամբ ճողոպրեալք ելանէին 'ի տանց՝ նորա զերծանէին 'ի փլմանէն և 'ի մեռանելոյն , այլ յոլովք մնային՝ ի ներքոյ փլուզեալ յարկացն և հեղձամղձուկք լեալք սատակեին : վն որոյ ոչ կարէին հանդուրժել և լ յարկաւ բնակել , այլ ելեալք Եւրաքանչիւրոք՝ 'ի բացեայ արտաքոյ յարկաց , ոմանք աւ գուրս տանց , և ոմանք յայգիս , և 'ի բուրաստանս , և ոմանք յայլ պատշաճաւոր տեղիս վրանօք և տաղաւարօք կացին զձմեռն զայն , մինչև ցանս ցանել բարկութե Տն : քանզի յայտնի եղև բնակցաց աշխարհին , նաև ամենից տիեզերաց , թէ ոչ էր այն ըստկարդի սովորականի շարժման , այլ յայտնի պատիժ պատուհասի բարկութե Տն հասեալէր իվր՝ նոցա ըստ նմանութեն նինուէացւոց :

Իսկ բնակիչք քաղաքին և գաւառացն , իբրև տեսանէին զինքեանս պատժապարտս առաջի Տն , զի հանապազօր խրատէր զնոսա գաւառականաւ բարկութե , և նորա եկեալ 'ի միտս մշտապաղատ աղօթիւք և խնդրուա ծջլք , ուխտիւք և պատարագօք , դիմեալ կար

կարդային առ այն՝ որ կարողն էր ապրեցուցն
 նել զնս՝ ի վտանկէն, զի թէ պէտ վս պարտեաց
 մեղաց բարկութիւն խրատեաց և սրտամուրթյան
 դիմանեաց այլ արարչականաւ գթութիւն և նա
 խախնամականաւ ողորմութիւն ողորմեցաւ նց
 որոյ բնութիւն և ողորմիլն արարած ոց իւրոց
 ըստ մարդարեին բանի, գթած ողորմած է
 Տ՞ր երկայնամիտ և բազումողորմ: Արև ոչ
 իսպառ մնաց ՚ի բարկութիւն և ոչ յաւիտեան
 պահեց զոխս. այլ հեռի արար ՚ի սոցանէ զմեղս
 նց ըստ բացատրութիւն երկնի և երկրի, և գթա
 ցաւ ՚ի ստեղծուածս իւր ուն զհայր և զմայր
 իվր զաւակաց, վս զի յիշեաց թէ մարդիկք են
 և բաղկացեալք ՚ի հողոյ: Սիտեալ տարա
 ծեաց իվր նոցա զգութ և զողորմութիւն իւր,
 և է բարձ ՚ի նոցանէ զպատուհասն և ետ հաս
 տատութի երկրի՝ և Հանդարտութի աշխար
 հին, և զխաղաղութի մարդկան, որք կեան գոհա
 նալով զնմանէ յամենայնում ժամում, զի թէ
 պէտ խրատելով խրատեաց այլ ՚ի մահ ոչ մատ
 նեաց: Արովք յայտնեալ ցուցաւ ամենակարող
 զօրութիւն անմահի թգլրութե նց, և գութ,
 և ողորմութի մարդասէր կամաց նորա :

Պատմութի վս գերեզմանէն և ոսկերացն վարդապարկայ :

Լ. Ծ. :

Որ Պ Լ Ս Գ Բ Ե Լ Լ Ե Ի
 պատմութիս վարդապարկայ, որ նեն
 գութեամբ և հնարիւք ետ կոտորել
 զազգն հռոմոց Պարսից ազգին. և զայս նա
 խանձս և ռխս տակաւին ունին ՚ի մտի ազգն հ
 ոմոց. և մինչև ցայսօր հնարին վրէժխնդիր
 լնիլ նախանձուն այնմիկ: և ամաց յամս գ
 Եր

Վարդիկք՝ ի հռոմոց ազգէն առ ՚ի գողանալ զոսկերս վարդպատրկայ. զի տարեալ իմէջ իւրեանց կատարեսցեն ի վրձնը զչարկամս իւրեանց ույ և յօժարի սիրաք իւրեանց :

Եւ եղև զի յամս և ՚ի ժամանակս յետինս ՚ի Թաւականիս հայոց հազար և տասն և երեքին. դարձեալ եկին յազգէն հռոմոց արք երկու գողանալ զոսկերս վարդպատրկայ՝ որ Թաղեալ կայ իմէջ եկեղեցւոյն ՚ի գիւղն խորգում՝ ՚ի հայ ու ձոր կոչեցեալ գաւառին ՚ի վասպուրականի աշխարհին : Եւ զոսկերսն վարդպատրկայ Թաղեալն իմէջ եկեղեցւոյն՝ որ նախկի շինեալ է ի վրձն երեսոց երկրի ի վրձն բնականի գետնոյ . և ապա հողով ծածկեալն զայն եկեղեցին և կուտեալն զհող բազում ի վրձնը՝ որ եղեալ է մեծ բլուր . որ կարծի ՚ի տեսողացն Թէ ՚ի սկզբանէ յաւիտենից Վճաստեղծ բլուր է և ոչ շինովի . և հողն ծածկեալ է զեկեղեցին և առաւելս բարձրացեալ . և ապա յետոյ ՚ի գլուխ բլրին միւսանգամ նոր եկեղեցի են շինեալ ի վրձն գագաթան ներքնոյ եկեղեցւոյն . և յայտմ եկեղեցւոյ կատարեն քահանայքն զժամակարգութիւն և զեօթն խորհուրդս եկեղեցւոյ . նաև գիւղականքն անդ գան և աղօթեն և գիւղն ոչ է շուրջ բլուրիւ զեկեղեցեալն՝ այլ յարևելից կողմն եկեղեցւոյն ՚ի սիրտ բլրին . և յարևմտից կուսէ եկեղեցւոյն և բլրին ծովն է՝ զորվանայ ծով կոչեն ի բրև քսան կանգուն հեռի յեկեղեցւոյն՝ այլ և գետ ջրոյ ՚ի յարևելից կողմանէ գեղջն և եկեղեցւոյն գայ . և ՚ի հարաւայնոյ կողմանէ նոցին անցանէ և խառնի ՚ի ծովն : Եւ եկեալ երկոքին հռոմիքն նախ ձեացուցեալն զինքեանս ի բր զայր առաքինի և հաւատարիմ և հրաժարեալք յաշխարհականց իրաց .

այնքան մինչ որ քահանայքն և ժողովուրդն
 հաւատացեալեն նց և զբանալին եկեղեցւոյն՝
 նոսա տուեալ և զնս լուսարար եկեղեցւոյն և
 ժամկոչ են կարգեալ: և նորա թէ յետ յոր
 վից և թէ յետ սակաւուց ժամանակաց. ՚ի դի
 պօղ ժամանակի յարեւմտից կուսէ եկեղեցւոյն
 իբրև տասն և հինգ կնգնաւ հետի եկեղեցւոյն
 ծակեալեն զգետինն փորեալեն նաղմ: և այնպ
 նաղմ փորելով յառաջ գնացեալեն զի թերև
 մտցեն ՚ի ներքին եկեղեցին յորում ոսկերքն
 վարդապատրկայ թաղեալ կայ և զփորեալ հողն
 նաղմին բերեալեն ՚ի ծոցն թափեալ ՚ի գլխոյ
 փլին. քանզի եզր ծովուն փուլ է՝ զոր ալիք ծո
 վուն արարեալ է: և որով հետև գիւղն ՚ի յարև
 ելից կողմն բլրին էր՝ և արեւմտից կողմն անբնակ
 էր յայտմանէ պտառաւ և անքոյթ էր ՚ի մարդկա
 նէ տեղին. վսայսորիկ արքն վստահացեալ զայս
 գործէին: Մըդ ՚ի թափեալ հողոյն և ՚ի հարե
 լոյ ալեաց ծովուն՝ պղտորեալեն ջուրքն և պղ
 տորու թի ջուրցն խառնեալէ լը ջուրս գետոյն
 և զառ ի վեր ընդ գետն գնացեալ. քանզի ջուրք
 գետոյն ուռկան տուեալ կանգնեալ կան յեզր
 ծովուն: Իսկ գեղականքն տեսանէին զի ջուրն
 որ հանապազօր պարզ և յտակ էր այժմ պղ
 տորէ. ասէին անձրև ոչ է եկեալ և հեղեղ ոչ
 է իջեալ և վն էր են ջուրքս պղտոր. ասէին ք
 միմեանս և հիանային և խնդրէին զպտառառն
 և շրջելով և որոնելով պատահեալեն թի
 փած հողին. և ապա գտեալեն զծակն և
 զնաղմն. ապա կալեալեն զարսն զայնոսիկ և ՚ի
 ծածուկ և ՚ի ներսագոյն տան արգելեալ. և
 այնքան հնարեալեն գեղականքն մինչ արքն պ
 նոքիկ զստոյգն ասացեալեն. թէ եկեալեմք զի
 զոսկերան վարդապատրկայ հանցուք՝ և տարցուք

պ'ի գեղականացն. որք խորհրդականքն են
լեալ թաքուն'ի խառնաճաղանճ արանց'ի գի
շերի միում գերկոսին զարսն զայնոսիկ եդեալ
են ի վր տփի և հանեալ ի վր ծովուն և յանաջ
խաղացուցեալ տարեալ իմէջ ծովուն և կա
պծալ են քար'ի պարանոցս նց' և այնպէս թո
ղեալեն'ի խորս ջուրց ծովուն: Մ. րդ' կատա
րումն գործոյս այսպէս եղեալ է: զոր ծերք
և վաղեմիք մարդիկք պատմեցին. իսկ գեղա
կանքն այնուհետև առաւել զգուշութի պա
հեն զեկեղեցին զայն'ի հասապազորդեան ժա
մանակի. իբր զաւանդութի ստացեալ յորդիս
'ի հարց' ի փառս Մ. Յ: և այս ևս այսպէս:

Յաղագս շարժին որ եղև'ի վան քաղաքին. և իւրում
շրջակայ երկրին:

Մ. Ե. Դ. Թ. ՈՒ. Ը. Կ. Ը. Ն. ՈՒ.
Թես հայոց հազրուինն սունկեթին.

Սպարիլ ամսոյ յերկունսն. յաւագ
ուրբաթու գիշերն' որ լուսանայր'ի լոյս աւ
ագ շաբաթ աւուրն. անցեալ հասարակ գի
շերոյն և ժամանեալ ժամ առաւօտուն որև
զառաւօտու աղօթսն կատարեին: եղև յան
կարծակի թնդիւն և գողումն որոյ զկնի շարժ
ահագին. որ'ի բնակ չաց այնքան գաւառացն
ոչոր էր տեսեալ այնպէս ահագին շարժ:

Յոյմէ շարժմանէ բլաւ ներքին բերդի պա
րիսպն վանայ քաղաքին'ի թաւրիզու դարգա
հեն մինչ'ի զանի բուրջն. և այլևս այսր և
անգր բազումք տեղիք'ի պարսպէն փլուզան
և բլան. և որք ոչ բլան խախտեցան՝ զորս յե
սոյ քակեցին զամ և նոր շինեցին:

Եւ եկեղեցիքն վանայ քաղաքին ոմանք խախ
տեցան.

466 **Նորոգութիւն** անայ **Եկեղեցեաց** տեցան. և ոմանք աւերեցան. սք սահակ ա նոճամբ եկեղեցին բնաւին աւերեցաւ. զոր յետոյ խօջայ ախիջանն շինեաց: **Եւ Եղմիա** ծին անոճամբ եկեղեցին խախտեցաւ. զոր սոյն խօջայ ախիջանս զայն և ս նորոգեաց առաւել քան զառաջինն: **Եւ** օրբոց առաքելոց եկեղեցին 'ի ներսնոյ կողմանէն առաստաղն բլաւ. զոր խօջայ ատոմեանք նորոգեցին: **Եւ** սք պօղոս եկեղեցւոյ կաթուղիկէն բլաւ. զոր գերաքենց զիրաքն շինեաց:

Եւ 'ի մաջիթացն, միայն մուստաֆայ փաշի մաջիթն մնաց և սորա մնիրէն. իսկ այլ մաջիթքն և իւրեանց մնիրէքն ամէն փլան: և վերին բերդի մաջիթի մնիրայն և ս փլաւ:

Եւ բազումք տունք և ապարանք և շինոճածք փլան. և ներքոյ իւրց առին զբազում մարդիկս և զանասուն. և այնքան բազումքէին մեռեալքն որ սայլիւ բարձեալ տանէին արտաքս 'ի բաղաքէն: և 'ի Թաղելն ոչ բաւէին հատանել զգերեզման. այլ պատառեալ զերկիր վե՛հ մեծ առնէին և 'ի մեռելոցն զու՛թն և զտասն պատեալ կտաւով դնէին 'ի վիհն և հողով ծածկէին:

Եւ յաւուրս ու՛թն անդադար 'ի շարժման եկաց երկիրն, որք ոչ կարէին 'ի տունս բնակիլ այլ 'ի բացեայ վայրե վրանով կային. զի յայն ու՛թն օրն անդադար 'ի շարժման եկաց երկիրն ուն զնաւ ի վր երեսաց ջրոյ: և զլնի այնօրիկ սակաւ ինչ հանդարտեցաւ. որ 'ի չորս օրն, և 'ի հինգ օրն, և 'ի տասն օրն միանգամ շարժիւր. և այնն մնաց մինչ որ յունիս ամիսն լմնցաւ. և սպա հաստատեցաւ երկիր ողորմութիւն **ԼՄ:**

Եւ զկնի առաջնոյ շարժին իւրաքանչիւրք. որք

որք զերծան 'ի մեռանելոյ. եկին 'ի տունս
 իւրեանց սկսան պեղել զհողն. և 'ի ներքոյ հո
 ղոյն հանէին զինչս և զմարդս՝ որք 'ի ներքոյ
 հողոյն մնացեալք էին: Թէպէտ մեռեալքն
 անթիւք էին. այլ քաղումք ևս կային՝ որք
 խնամօքն Մ. Մ կային կենդանիք, զորս հանին 'ի
 ներքոյ հողոյն. վն զի յետ տասնևհինգ արուր
 կենդանի մարդ հանին 'ի հողոյ:

Մ. յլև յաւուրս այսմ շարժմանս եղև գործ
 ինչ յորոյ վերայ քաղումք զարմանային. այր ոմն
 աղքատ և չքաւոր. աղգաւ հայ և հաւատով
 քրիստոնեայ՝ 'ի նոյն քաղաքէն վանայ: այրս
 այս նախքան զշարժումն ելեալ 'ի քաղաքէն
 գնաց 'ի քարափոս անուանեալ գիւղն վն մու
 րանալոյ: և կային այսմ առն երկու որդիք
 փոքր եբրև տասն ամաց աւելի կամ պակաս.
 և այսօքիկ երկու տղայքս մնացին 'ի տունս իւրոյ
 և հասեալք 'ի յերեկոյն ըստ հանապազորդեան
 սովորու թե ննջեցին. և 'ի գիշերին յորում
 շարժն եղև՝ սոցա տունն ևս բլաւ. և 'ի ներքոյ
 մնացին մանկուսքն. յլև սոցա հայրն՝ որ գնա
 ցեալ էր 'ի քարափոս գիւղն. ննջեալ էր 'ի տան
 ուրումն. և 'ի լինիլն շարժին անկեալէր գերան
 տանն և խորտակեալ զոտս առնն. և յայսմանէ
 պատճառէ մնաց այրս այս 'ի գիւղն քարափոս
 մինչի համբարձումն, որ ողջացան բեկեալ ոտք
 նր: ապա ելեալ եկն 'ի քաղաքն և ետես փու
 ղեալ զմուսն իւր. և համարէր ինքն և այլք
 ամբն թէ մանկուսքն 'ի ներքոյ տանն մնացեալ
 մեռան: և ապա ժողովեալ զարս ոմանս հբեր
 անդր՝ որք պեղեցին զհողն ամ. տեսին զման
 կունսն կենդանի 'ի ներքոյ հողոյն. և հիա
 ցեալ զփառս մատուցին Մ. Մ վն զի էր անցեալ
 պուրք քառասուն և չորք զկնի շարժին՝ որք
 մնացին

մնացին մանկուհիքն ինեւքոյ հողոյ . և շնորհօք
 և ողորմութիւն Մ.Յ կենդանի արտաքս եկին
 մանկուհիքն : և որք լուան և տեսին հիացեալ
 զարմանային . որոյ լուրն է հաս մինչև 'ի փա
 շէն քաղաքին . և տարեալ փաշէն զմանկուհան
 առաջի իւր և հարցեալ ստուգեաց զամ' . և
 գրեալ 'ի քարտիսի զայս գործ' որ կատարեցաւ
 ի վր' մանկանցն . և պահեաց առ իւր 'ի յիշ
 տակ սքանչելեացն Մ.Յ : Մ.Յ և հարցին ցման
 կուսան վս կերակրոց , թէ զինչ ուտէիք . և
 նորա ցուցին սակաւ փշրանս հացի թէ զայս
 ուտէաք երբեմն երբեմն . և վս ջրոյ ցուցին
 աման ինչ յորում կայր բազկի թթու . որ 'ի
 ծարաւ ինչ զայն ուտէաք և զովանայաք . բայց
 զտիւ և զգիշեր ոչ գիտէաք : Եւ մանկուհիքն
 այնոքիկ կան ցարդ ևս կենդանի շնորհօք ամե
 նակարողին Մ.Յ :

Մ.Յ և ամբն վանորայք երկրին վանայ փլու
 զեալք աւերեցան . վերին վարագ' և ներքին
 վարագ . և եկեղեցի օրբոյ հօրն թողկայ . և
 մեծ եկեղեցին սալնապատայ վանիցն . շուշա
 նից վանքն . զուռուպաշայ վանքն . խէքուց
 վանքն . երմէրայ վանքն . սրխու վանքն . բեր
 դակու վանքն . կենդանանից վանքն . կուսկու
 վանքն . անգուսներու վանքն . ալերու վանքն .
 արջակու վանքն : Եւ յայս ասացեալ վանո
 րէիցս : երկու վարագ' և կոնկու վանքն' և
 խէքուց վանքն միայն շինեցան' իսկ այլքն մնա
 ցին աւերակ : Եւ գեղորայք' որք 'ի վանայ
 բողորն կային ամենեցուն շինուածքն բլան .
 և նոցին եկեղեցիքն ևս ընդ նոսին աւերե
 ցան : Իսկ նորագեղի եկեղեցին մէկ արտա
 չափ 'ի յիւրտեղոյն իբացոստեալ հեռացաւ
 և ապա բլաւ :

Ալւայսմանէ շարժմանէս բազումք աղբիւրք որք յաւիտեանից ժամանակաց բռնեին ցամաքեցան՝ ուր և եղնաբերդի աղբիւրքն՝ որք վեց ջրաղաց բանեցնէին ամբն ցամաքեցան . որ ըզբերդն անտի փոխեցին վն չգոլոյ ջուրց՝ և տարեալ՝ ի ղասրիկ շինեցին : Այնպէս և զներքին փագախ անուանեալ գիւղն՝ որոյ աղբիւրքն ցամաքեցան՝ և առ ի չգոյէ ջուրց տարան զայս ևս՝ ի ղասրիկ շինեցին : Ալ աղբիւրք աւանայ գեղջն՝ որք էին աղբիւրք երկոտասանք ամբն ցամաքեցան . որք ոչ երևին այժմ :

Ալ ի ձորն մեծափառ ի ուխտին հոգւոց վանից կայր լեառն մի մերձ վանիցն . որ և զանուն լերինն աբեղներ կոչէին . ի գիշերին՝ յորում շարժն եղև՝ հաստակառոյց արարչակերտ կար ծրագոյն վիմական լեառնն այն՝ յահագին շարժմանէն խախտեալ բեկբեկեալ քայքայեալ զառխատորև սորեալ՝ ի ձոր անդր փուզեալ զձորն ամբնոյր և երիս արս՝ ի ներքոյ իւր առեալ էօզան . և զճանապարհն խափանեաց . որ յայլմէ կողմանէ արտին զճանապարհ . և զջրղացն խափանեաց որ յայլում տեղւոջ շինեցին . զձորն լցեալ զբազում աւուրս արգել զգնացն ջուրց գետոյն . որ յեաոյ զկնի բազմաց աւուրց առ սակաւ սակաւ . ապա արար ջուրն ինքեան գնալոյ զճանապարհ՝ և գնա զգնացս իւր : Ալ ի գաւառն հաւու ձորոյ մերձ ի վանըն երմէրու արթաչափ տեղմի գետինն սուզեալ յերկիր կլաւ և եղև խոր և ահագին փոս մինչև յանդունդս . և ի միջոյ փոսոյն ի յանդունդոց ելեալ սեաւ ջուր և ծովացաւ անդէն իմէջ փոսին . և կայ այնպէս մինչև ցայսօր :

Ալ վանայ քաղաքի փաշէն և այլք ի շխանքն . զամեն եղեալ գործս զայսոսիկ գրով շարագրեալ :

470 **Շինութի Վանայ Աործանեցելն.**
 գրեալ առաքեցին ՚ի քաղաքն կոստանդնուպօ
 լիս. և ծանուցին Թիւրին սուլթան իբրս
 Տիմխոնդ-քարին. Թէ այսքան շինուածոց քա
 ղաքաց և գեղորէից. մաչիթաց և եկեղեցեաց
 աւերուան եղև: **Վ**յլև վանայ քաղաքի խօ
 ջեքն առաքեցին առ խօջայ ոօՏիջանն՝ որ յաւ
 ուրան յայնոսիկ ՚ի կոստանդնուպօլիս էր՝ հրա
 ման առնուլ ՚ի Թիւրէն վն վերստին շինութե
 աւերեալ վանորէիցն և եկեղեցեացն. որ և
 խօջայ ոօՏիջանն առեալ զհրաման ՚ի Թիւրէն
 առաքեաց ՚ի վան առ խօջայնս. և նորա
 սկսան շինել զեկեղեցիսն քաղաքին՝ ուն նախ
 պատմեցաք և զվարագայ վանից: **Վ**լև նախ
 կիրակոս վրդայտն, որ էր առաջնորդ վարագայ
 վանիցն յանձնէառ շինել զժամատունն՝ զոր
 և շինեալ կատարեաց: և խօջայ ամիրխանն զսբ
 խաչի եկեղեցին: և մարխասչալապին զածածնի
 եկեղեցին: և խօջայ դիլանչին զսբ սիօնի եկե
 ղեցին: և խօջայ յովանէսն զսբ նշանի եկեղե
 ցին: զայսոսիկ եկեղեցիսս շինեցին: և մնաց բեր
 դով եկեղեցին. և քառասուն աբեղայից եկե
 ղեցին. և զվանից պարիսպն ևս շինեցին շուրջա
 նակի բովանդակ: **Վ**լև կատարեցաւ շինումն
 ներքին վարագայ վանիցն՝ և այլ վանորէից
 և եկեղեցեաց. և կան իւրաքանչիւրօք ՚ի տե
 ղիս իւրեանց ողորմութիւն **Վ**յլ՝ որում վառք
 յաւխտեանս:

Չատմութիւն և պատճառք կողոպտելոյ զանուանի վանքն Վարադ
կոչեցեալ. և տանելոյ զաւագ նր Ղաւանն 'ի բերդն խօ
շաբայ. և դարձուցանելոյ անտի 'ի Վան քաղաք :

Լ Ր :

Տ Լ Ր Վ Խ Օ Շ Լ Բ Ը Յ
բերդին որում սուլէյմանբէկ ասէին .
եղև երբեմն զի զճանապարհորդ կարաւ
անսն'որք 'ի վանայ գնացին' ի Թաւրէզ և
'ի Թաւրիզու 'ի վան' սա զկարաւանաց բեռինսն
բռնութիւն բանայր' և որինչ երաց և հաւանե՛ր'
սուղինչ գին ձգէր ի վր տիրոջն և կորդեալ
'ի տիրոջն յինքն առնոյր զինչսն . և պատճա
ռէր Թէ գնով գնեցի :

Իսլէ 'ի սոյն Ժամանակի էր իշխան և հրա
մանատու վանայ քաղաքին ոմն մեծագոյն իշ
խան, զոր հուսէյնաղայ ասէին . որ էր 'ի նոյն
քաղաքէն վանայ. առ որ մատուցեալ արանցն ,
որոց զինչսն և զսպրանսն յախշտակեալէր սու
լէյմանբէկն . արարին զբազում անբատանու
Թիւն զսուլէյմանբէկէն : Իսկ հուսէյնա
ղէն զարարեալն սուլէյմանբէկին ծանոյց 'ի
դուռն Թագաւորին յստամբօլ . վն որոյ հրա
ման եղև 'ի Թագրէն առ հուսէյնաղէն վն սուլէյ
մանբէկին . Թէ զառեալ զինչսն դարձուսցէ
առ տեարսն' և սուլէյմանբէկն ոչ դարձոյց :
վն որոյ և հուսէյնաղայն առեալ զամեն զօրսն
վանայ. այլ և Ժողովեալ զամ շրջակայ զիշխանսն
ազգին մարաց . ընդ որս էր և մեծ իշխանն մա
րաց եզդիշէր , որ էր տէր ջուլամերկայ' և շա
տախայ . և այլոց բազմաց գաւառաց և բերդո
րէից . և նոքօք գնացեալ նստաւ ի վր խօշաբայ
բերդին' յորում ամրացեալ նստէր սուլէյման
բէկն . և յերիտ ամիսս նստեալ մնացին' և զեր
կիրն ամ աւերեցին . վն որոյ սուլէյմանբէկն

անճար և 'ի տարակուսի լեալ անհնար մնաց .
 զբազում կաշառս ոսկւոյ և արծաթոյ տունեալ
 եզդիչէր մեծի պարոնին . զի թերևս զհոսէյն
 աղէն և զայլն զաման առեալ իբացգնացէ .
 որև կաաարումն գործոյն եղև այնպէս . զի
 առին զինչս բազումն 'ի սուլէյմանբէկէն և ի
 բաց գնացեալ ցրունեցան յիւրաքչիւր տեղիս :

() կնի գնալոյնց իբրև սակաւ ինչ առուրբ
 իվերայ անցին . յայնժամ եկն առ սուլէյման
 բէկն այր ոմն գոռոզ արիւնարբու և արին
 ահեղ . յաղթող պատերազմող և անպարտելի
 ախոյեան՝ որոյ զանուէն չամար ասէին : իրում
 պարգևեալ էր խոնդքար թգւրն () սմանցւոց
 զպատիւ և զիշխանութի փաշայութե՛ և առա
 բեալ էր երկիցս և երիցս 'ի քաղաքս և յաշ
 խարհս իշխել նց ի կարգի օրինացն () սման
 ցւոց . բայց սա 'ի գնացեալ տեղիսն կարի բըռ
 նութի և անիրաւութի վարեալ էր զիշխանու
 թի . կեղեքելով՝ կողոպտելով՝ յափշտակելով .
 և ի ամենեստան անիրաւութի վարելով . եթէ
 ընդ սպայից եթէ ընդ ուամկաց : և ուրև գնա
 ցեալէր յամենից տեղեաց համբաւ անիրաւ
 ութե և ամբաստանութե եկեալ էր առ թգւրն
 և առ վէզիրն : վսորոյ յորժամ լուծեալ 'ի
 փաշայութե քաղաքաց՝ և եկն 'ի դուռն թգւրին
 ոչևս յաւելին տալ նմա զիշխանութի և զփա
 շայութի : Եւ այս գործս յոյժ ծանր և
 վշտագին երևեցաւ չամարին . վաննորոյ անս
 տամբեալ 'ի կողմանէ թգւրին ել 'ի կոստան
 գնուպօլսէ . և եկեալ 'ի կողմանս բուրայու
 և անկիւրիոյ : առ որս յարեցան արբ սրիկայք
 և ելուզակք . որք էին ամենեքեան գողք և
 աւազակք . 'և աշխարհաւերք և նմանողք
 նմին չարագործութի . և նոքօք բնակէր 'ի լե
 ղին .

րինս և յանապատս՝ և այնպէս անցուցանէր զկէանս իւր : Եւ յորժամ՝ յօժարէր կամք իւր նորումբք իջանէր 'ի լեռնէն՝ և դարանամուտ լինէր ի վր ճանապարհաց՝ և երթ և եկ կարաւանաց ի վերայբաղխեալ՝ զորս կոտորէր՝ և զորս փախատական տունէր . և զոսկի և զարծաթ և այլ զորինչ և կամէր առեալ գնայր : և ոչ թէ 'ի սակաւ աւուրս և 'ի ծածուկ զայս առնէր . այլ յայտնի և համարձակ և 'ի բազում աւուրս . այնքան մինչ զի երթեւեկութի ճանապարհաց խափանեցաւ՝ որոյ համբաւն գնաց 'ի կոստանդնուպօլիս և է հաս առ թգլըն : վն որոյ հրաման ել 'ի թգլըն կարգել զզորագլուխ բազմօք զօրօք և գնալ պատերազմիլ լէ նմա և սպանանել . և կարգեալ զօրագլուխն յոլովիւք զօրօք եկեալ պատերազմեցաւ լէ նմա . ոչ կարացին սպանանել սակայն փախուցին 'ի տեղւորէն : Եւ չօմարն ուրև գնայր վնոյն գործ գործէր : վնորոյ հրաման եղև 'ի թգլըն առ իշխանս և զօրագլուխս ամենից աշխարհաց զի ուրև գնացէ չօմարն . այնորիկ աշխարհի իշխանքն և զօրքն մարտուցեալ պատերազմեցին ընդ չօմարին՝ և սպանցեն : և թէ իցէ որ՝ որ բերցէ զգլուխն և զնշանն չօմարին՝ զբազում պարգևս և զմեծ ութիս առնլոց է 'ի թգլըն . քանզի աջոյ ձեռաց ծկիկ մատն իմէջ ձեռաց ամին մածեալ կպած էր անմեկնելի՝ սորին՝ վն ասացին զնշանն բերցէ : և յաղագս այսպիսեաց հրամանաց թգլին՝ ուրև գնաց չօմարն ամբն զօրք և իշխանք աշխարհացն հալածական արարին զչօմարն . և յոչ գտանելն զտեղի դադար ման 'ի հալածելն իւրում չօմար՝ և գալով եկն և է հաս մինչի սուլէյմանբէկն : և յաղագս առիւծասիրտ արիութե նր և յաղթականի

կանի պատերազմին ընկալաւ զնա սուրէյման բէկն՝ և ասաց, եղիցուք երկոքեանս եղբարք՝ և պահեսցուք զհայրենի զիշխանութիս մեր՝ և խմիտսին վայելեցուք :

Դարձեալ այլևս պատմութի որ պիտոյէ՝ և մէջ այսմ պատմութես : Ըն վերոյ ասացեալ հուսէյնաղէն՝ ՚ի պատճառէ իմէքէ արար ըզ սէր և զմիաբանութիւն մեծի իշխանին մարաց եզդիշէրին՝ զի զդուսար եղբօր իւրոյ ետ՝ և կնութի եղբօր եզդիշէրին • որոյ անունն էր խոսրով փաշայ • և սոքա երկոքեանս եզդիշէրս և հուսէյնաղայս կարիսիրով միաբանեցան և եղեն խնամիք և բարեկամք :

Դարձեալ այլևս պատմութի : Ընս հուսէյն աղայս • յոյժ զօրացաւ և մեծացաւ ՚ի մէջ քաղաքին վանայ • այնքան, զի սորին հրամա նաւն էին փաշայն և դադին՝ և, ենկիցար աղասին՝ և զուլար աղասին՝ և այլքն ամբն • և սպան յիշխանաց քաղաքին տասն իշխան՝ ընդ որս էր և զուլար աղասին : Իսկ այլ իշխանքն փախստականք եղեն յահէ սորա :

Ընլ պատահեցաւ դործ ինչ այսպիսի : Ըն սովորութիէ (Սամանցւոց ազգին որ զհին փաշայն մանզուլ աւանէն և՛ ի տեղինը՝ ՚ի դրանէ թգլրին սոր փաշայ առաքեն , այսպմ և զվանայ քաղաքի հին փաշէն մանզուլ արարին՝ և նոր փաշայի մուսալիմ ուղարկեցին ՚ի վան՝ ՚ի դրանէ թգլրին : Իսկ հուսէյնաղէն և հին փաշէն միաբանեալ ոչ ընկալան զեկեալ մուսալիմն սոր փաշային՝ այլ յետս դարձուցին յըստամբօր : Իսկ վանայ քաղաքի պարոնայքն , որք վշտացեալք էին ՚ի հուսէյնաղայէն , գաղտ ՚ի նմանէ և ՚ի ծածուկ յոլով բանս ամբաստա քուլթէ գրեցին զնմանէ՝ և ընդ դարձուցեալ մուսալ

մուսալիմին ուղարկեցին 'ի դուռն Թգւրին :

Եւ յետ սուղինչ աւուրց 'ի դրանէ Թգւո
րին եկն սինան անուամբ ի շխան ոմն Ենկեցարն
աղասի 'ի քաղաքն վան . Եմուտ 'ի բերդն , և ախ
րեաց վերին բերդին՝ և ամենից ենկեցարեացն .
և յետ սղից աւուրց այս նոր եկեալ սինան աս
ղայս , որ Ենկեցար աղասի էր՝ 'ի վերին բերդէն .
սկսաւ Թօփ ձգել ի վր ապարանից փաշային
ասելով . Թէ հրաման է Թգւրին ի վր քովս
լոյ : վն որոյ ելեալ գնասցես 'ի քաղաքես , այլ
ձգել Թօփ ի վր տան հուսէյն աղային և առա
քէր զպատգամն առ նա՝ Թէ մի պահեր զփաշէն
այլ ուղևորես : Իսկ հուսէյն աղէն և փաշէն եր
կուցեալք 'ի Թօփէն ելեալ գնացին 'ի ներքնոյ
բերդի հիւսիսային կողմն մերձ Թաւրիզու
դրանն , և մտին 'ի տեղին , զոր ասեն պալ Թե
տունք՝ և անդ ամբացան զի Թօփն որ գայ 'ի վե
րին բերդէն ոչ պատահի այնմ տեղւոջ՝ զի քա
րափ լերինն 'ի վերուստ հովանի է ի վրնր , իսկ
վանայդուրն Թէ պէտ և Թնամիք էին հուսէյն
աղային՝ և ատէին զնա . այլ զի կարն երկնչէն
'ի նմանէ , վն որոյ ժողովեցան և նոքա անգ
հուսէյն աղայն :

Իսկ Ենկեցար աղասին առաքեաց զարս 'ի
բերդն խօշաբայ և զեկոյց սուլէյմանբէկին զե
կեալ հրաման Թգւրին՝ և զղօղէլն հուսէյն
աղային և զփաշային , իսկ սուլէյմանբէկն վն
անցելոյ քինուն՝ և նախանձուն վրէժխնդրու
Թե՝ բաքմաւ ցանկու Թք ցանկայր այնպիսւոյ
լոյ , ոչինչ դանդաղեալ՝ այլ շէշտակի յարու
ցեալ ինքն յովիւք զորօք , առեալ ընդ եւր և
զջամարն՝ զոր յառաջդ յիշեցաք՝ և գնացեալ
հասին 'ի վան քաղաք : և 'ի շրջակայ գեղորայս
քաղաքին այսր և անդր շրջէն հանապազ

զի գուցէ 'ի ձեռս ամցեն զհուսէյն աղէն , որև շրջելով գնացին 'ի գիւղն արջակ , և անտի 'ի գիւղն խառակունիս , և գիւղս այս հուսէյն աղայինէր ' և առ 'ի վրէժխնդրութի քնու հուսէյն աղային զգեղի տանուտերն 'ի ձող բարձրացուցեալ հոպան սուլէյմանբէկն : .

Իւ անտի ելին սուլէյմանբէկն և չամարն զօրօքն իւրեանց՝ գնացին 'ի վարագայ վանքն . և զորինչ համբաւ յառաջմէ լուեալէին զմեծահանդիսէ ուխտէն վարագայ՝ այժմ՝ աջօք տեսեալ և մտօք նկատեալ զննէին զամ . և մտախոհ եղեալ խոկային թէ այսպիսեաց հոյակապից և հռչակաւորաց մեծաշինից վանից , գոն բազ մատամանակեայ մթերեալ ինչք և ստացունածք , կահք և կարասիք պղնձեղինաց , արծաթեղինաց , և ոսկեղինաց . և արդ՝ ժամ է մեզ զի 'ի ձեռս մեր գրաւեսցուք զամն : Իւ յայս մանէ պատճառէ յանկարծակի կալան զաման բնակիչս վանացն՝ կապեցին և պահէին 'ի կալանս , և մի մի բերեալ առաջի իւրեանց հարցանէին վն ստացունածոց վանացն՝ և խնդրէին 'ի նոցանէ . և նոքա որինչ յայտէր ցուցանէին , և վն այլոցն ասէին թէ 'ի բաղաքն են տարեալ զամենայն և անդ՝ պահեն , զի վն ասի գողոց և աւազակաց աստէն ինչ ոչ թողուն :

Իսկ 'ի բնակչաց վանիցն , թէպէտ չարքարեցին զոմանս առտուել և զոմանս սակաւ , այլ զնս զաման թողին , և 'ի նոցանէ ովքք եգիտ հնար փախչելոյ փախեաւ անդ առնաղի , բայց երէք արեղայք ծերք 'ի միաբանից վանացն , որոց անունսն էին տէր յօհաննէս , և տէր սահակ , և տէր մօսէս . զսոսա կալան և պահէին կապանօք և բազմաւ զգուշութի , և ասէին . այլք բնակչքն մանկագոյնք են՝ ոչ են տեղեակք
պահա

առհարանաց վանիցս, սոքա հինաուուրքք և ծերքեն սոքա գիտակք են ամցւն : Եւ բերեալ առաջի նախ հաւանականիւք բանիւք, և ապա սպառնալեօք խնդրէին ցուցանել նց զպահարանս վանիցն, և աբեղայքն ասէին մէք բնաւ ոչ՝ եմք գիտակք յորոց գուրդ ասէք, քանզի կամօք և յօժարութք սրտի յանձին կալան զմահ և մեռանիլ և ոչ ցուցանել :

Եւ յետ բազմի հարցման և պատասխանւոյ սկսան չարչարել զնս. և նոխ կախեցին զնս յոտից նց և խստագոյն հարին բրօք կարի անողորմ և անչափ :

Եւ ապա իւրաքանչիւր աբեղայից զերկոսին ձեռան տարան յեասկոյս, և զերկու բոյժս ձեռացն կապեցին ի վր իրերաց, և արկին պարանս իմէջ երկուց ձեռաց նց, և՛ ի բարձր տեղուց կախեցին զնս, և բերեալ զճանր վէմս եղին ի վր թիկանց նց : և թողին այնպէս ՚ի կախաղանին, որք մնացին մինչև ցերեկոյ, որով քակեցան օդուճաճք երկոցունց ձեռաց նց, և աբեղայքն ողբալով աղաղակէին թի ոչ գիտեմք զխնդրելին ձեր՝ և անօրէնքն ոչ անսային :

Յետայսորիկ արկին գալարան չուան ՚ի գլուխս աբեղայիցն, որ է այսպէս. զի զպարանս կանթեղին որ բարակ է և պինտ : կապեցին և արկին ՚ի գլուխս աբեղայիցն բոլոր իբրև զօղ, և անցուցին փայտ իմէջ պարանին, և սկսան մանել զփայտն, և ՚ի մանել փայտին պարանն ևս ոլորեալ և մանեալ եղև՝ սաստկիւ պնտութք, և թողեցաւ իմէջ մտոյ և մորթոյ գլխոյ աբեղայիցն : և իբրև ՚ի մամուլս պնտեալ սեղմեալ եղև գլուխս նոցա, և ամբն միսք և մորթք և երակք գլխոցն և պարանոցացն այտուցեալ արիւնաուշտք եղեն, և երկոցունց աչաց նոցա համա

Համարեին 'ի բաց ոստել 'ի տեղեացն , և արեղայիցն անշնչացեալ և ուշագնաց եղեալ իբրև զմեռեալ անկանեին 'ի գետնի :

Եւ ապա բերին զպարանս բարակ և տինտ' և կապեցին յերանս արեղայիցն , և քարչեալ 'ի վեր կախեցին 'ի բարձր տեղեաց զԼուրաքանչ Լուրսն' և շուրջ զնորօք բոլորեալ անօրէնքն և զօրքն Եւրջ հայհոյեին , Թքանեին , այպանեին ասելով , զայդ քան չարչարանսդ կրէք' և ընդէր ոչ ցուցմնէք զգարանսն վանացն , և արեղայքն ոչ ցուցանեին վնդի զմահ յանձ առեալ էին :

Օ կնի սորս եկեալ չօմարն ինքն եբաց զԾածուկ մարմինս արեղայիցն , և էարկ դաստառակ իվր' առնացի անդամոցնց , և ինքն 'ի բերան իւր առեալ ատամամբն ծամէր զայն , յորմէ յոյժ վշտացան արեղայքն և անշնչացեալ անկան իբրև զմեռեալս :

Արդ զայսքան սարսուելի տանջանս կրեցին ողորմելիք արեղայքն , և դրեթէ յԼուրաքանչ Եւրչարչարանս յատուկ յատուկ մեռանեին և կենդանանային , և մանաւանդ 'ի վերջին չարչարանս յայս' որ կարի սարսուելի տանջանք էր և 'ի բազմաց տանջանացն ճնշեալ մաշեալ և վտտեալք եղեն մարմնով' որք ոչ զօրէին իվր' ոտից կանգնել : Օ այսքան չարչարանս զորս յանուանե յիշեցաք երևելիք և յայտնիքն էին , զորս 'ի շարագրութիս բանի բերեալ գրեցաք . Եսկ որք փոքրագոյնքէին' զորս մէք Թողաք դուրայն մտօք քովք իմասցիս . և զայս ամենայն հնարեալ ներգործէր անիծեալ և անուղորմ' , ան Աճ և մարդադէմ գազանն այն չօմարն :

Եւ յետ այսքանեաց վշտաց և նեղուեց իբրև գիտաց չօմարն Թէ արեղայքն ոչ ցուցանեւ զգ

զդարանան՝ ինքնին իսկ յարուցեալ՝ ի խնդիր որոնել և յուզել զդարանս վանիցն, քանզի էաւ ՚ի ձեռն իւր զմուրճ, որ է քլունկ և սկաւ չրջագայիլ իմէջ վանիցն յեկեղեցիսն և ՚ի տունն և յամսն տեղիս, կանգնէր և հայեր, և դիտեալ նկատէր զամսն տեղիս, ապա ուր և համարէր գոլ կարծիք և նմանութի դարասնի, մրձովն այնմիկ՝ զոր ՚ի ձեռին ունէր՝ բաղխէր զտեղիսն : Եւ այսպէս չրջագայելով եկին և մտին ՚ի մի յեկեղեցեացն՝ և յորժամ է հարզկարծեցեալ տեղին, նոյն ժամայն ել ձայն թնդման, վնորոյ վաղվաղակի քակեցին զտեղին և գտին զխոր մի լի պղնձեղինօք, վասնզի զամսն պղնձեղէն անօթս վանիցն անդ լցեալ թաքուցեալէին, զորս զամենայն արտաքս բերեալ ժողովեցին ՚ի մի վայր : և ՚ի գտանելն այնմիկ առաւել յորդորեցն՝ և բաղմաց այնպիսեաց գոլ զկարծիս տարան, և կարի որոնմամբ սկսան հարկանել զամենայն տեղիսն : Եւ անտի գնացին յայլ եկեղեցի, և ՚ի բախելն թրն դաց տեղին, և վաղվաղակի քակեցին, և գտին զդարան մի դատարկ զի ոչինչ գոյր ՚ի նմա :

Եւ թողեալ զայն գնացին ՚ի միւս այլ եկեղեցին, և ՚ի բաղխելն պատհեցաւ տեղին ուր էր մեծ դարանն՝ յորում պահեալէին զաւագ սքնշանն և զամենայն անօթս եկեղեցեացն . և վաղվաղակի քակեցին և գտին զգուռն դարասնին, և մտեալ ՚ի ներքս տեսին լի գանձիւ, և զաւագ սքնշանն բազմօք դաստառակօք պատեալ և իմէջ գեղեցկաշէն յարկեղ եդեալ, և ՚ի վերոյ քան զամենեսեան անօթսն բազմեցուցեալ, զոր սուրէյմանբէկն ինքնին ՚ի գիրկն իւր առեալ զսքնշանն և էբեր արտաքս : Եւ ապա արտաքս բերին զայլևս անօթսն, որէր բազում արծաթ

480. Լ՛արումն ընչիցն Վ արագայ .

արծաթեղէնք էին՝ սկիհք, և խաչք, և խաչ մի
մարդաչափ որոյ կշիւն էր մէկ խոնդքարի
չիտր, և եւթ իւր գրեալ ունէր գաւթի խաչ :
բազումք ոսկեառւփ և արծաթապատ աւետա
րանք, և այլք գրեանք : և արծաթեղէնք քոյք
և բուրվառք և կանթեղք : և պատուականք և
մեծագինք շուրջառք, և վարագոյրք, և բեմի
ծածկոցք, և այլևս կահք և կարասիք՝ բա
զումք, զորս անդէն պահեալէին, զամ հանեալ
բերին արտաքս : որինչ արծաթեղէնք երբ էին
եղին իմէջ մնդկի, և որինչ պղնձեղէն էր խոր
տակեցին, և այլ զորինչ և գտին բարձին ձիոց,
նաև զսք նշանն իւրով զարդուքն : և կալեալ
էրէցմի բերին և կարգեցին գնալ լսրբոյ նշա
նին վս սպասաւորելոյ նմա : և սուրէյմանք էկն
և չամարն զօրօքն իւրեանց առեալ զայն ճամ
գնացեալ հասին՝ ի խոշաբ : Լ՛րդ՝ ամենքեանք
անօթքն և ինչքն վարագայ ոյսպիսեալ կեր
պիւ գնաց՝ ի խոշաբ : յորում ժամանակի էր
թուականն մեր հազարևհարիւր :

Իսկ երէքին աբեղայքն՝ որք այնքան տանջե
ցան, թէպէտ և տեւալ ապրեցան զամ մի՝ այլ
իբրև զմեռեալ զեռուն, զի ճլլամահօք կեւօք
կային և ըղձային մահու, որ և զկնի ամի միոյ
հասեալ իվ ընոցա մահն հանգոյց զնս՝ ի տա
ռապանաց իւրեանց :

Վան գնալոյ հուսէյնաղային ի ջուրամերկ :



ՍԻ ՀՈՒՍԻՅՆԵՂԷՆ
և փաշէն՝ որք ՚ի օղակթի տունսն մտեալ
էին և շողեալ, մնացին անդէն այնպիսի
մինչև յերկու ամիս, և թօփն ՚ի վերին բերդէն
հանապազ գնեւքին բերդն և զքաղաքն ծե

Թէր և աւերէր : Ղպա հուսէյնաղայն նկատեալ խորհրդով գիտաց զի ոչ ուստեքէ գոյ նմա փրկութի եթէ ոչ 'ի խնամոյն իւրոյ յեզդիշէրէ մեծ պարոնէն . վսորոյ յիւրոց հաւատարմաց զոմանս թարց բնաւին ումէք գիտելոյ առաքեաց առ եզդիշէր ասելով . յայտ է քեզ զի իշխանքն վանայ և սուլէյմանբէկն իմ թշնամիք են . արդ ոչ ուստեքէ գոյ ինձ հնար փրկութե , եթէ ոչ 'ի քէն . վսորոյ վաղվաղակի պարտիս հասանիլ ինձ յօգնութի : Իսկ մեծ իշխանն եզդիշէր զհրաման արար իւրոյ իշխանի ումեմն որոյ անուան էր միրաբէկ՝ առնուլ զզօրս և գնալ . և նա առեալ ընդ իւր զզօրս հազար և հինգ հարիւր . պատրաստութի յոլովից զինուց և մանաւանդ թփօնբաց : որոց փութանակի հատեալ յերկիրն վանայ 'ի պատհաւոր տեղիս 'ի մերձակայս քաղաքին շրջէն . զի թերևս զհուսէյնաղէն 'ի ձեռս ածեալ առեալ գնասցեն :

Իբրև զայս ետես փաշէն թէ զօրքն եզդիշէրին եկին 'ի տանել զհուսէյնաղէն . խորհեալ 'ի միտս իւր գիտաց զի յետ գնալոյ նորա ինքն միայն մնայ . վսորոյ փութացաւ ինքն և յառաջքան զհուսէյնաղէն ելեալ 'ի վանայ քաղաքէն իւրովք պաշտօնէիւք գնաց՝ յո և վա մեցաւ :

Իայց թօփն հանապազ 'ի վերին բերդէն ծեծէր զնեքքին քաղաքն և աւերէր , զի յառաջն շաբաթու աղուհացիցն սկիզբն արարին թփօնբերոյ և մինչև 'ի հոգւոյ գալուստն ձգեցին , որոյ վն ձանձրացան ամբն քաղաքացիքն իշխանք և սպայք և ուամիկք : խորհուրդ արարին մեծամեծքն և զուլլար աղասիքն , թէ վսորոյ ընդէր է զայսքան չարչարանս կրել

482 Ղանալն հուսէյնաղ առ Յեզդելէրն .
 մեզ, կալցուք զհուսէյնաղէն՝ և տացուք ՚ի
 ձեռք իւրոց խնդրողացն : և ոմանք զայս խոր
 հուրդ ծանուցին հուսէյնաղային , և նա կամե
 ցաւ զի զգլխաւորս այնմ խարհրդեանն՝ որք էին
 զուլլար աղասիբն , հնարիւք մն սպանանել : և
 այս խորհուրդ ևս յայտնեցաւ զուլլարապա
 սոցն և այլոց գլխաւորացն : վն որոյլ լուսանալ
 առաւօտուն , զուլլարաղասիբն և այլք գլխա
 որքն իւրաքանչիւրոք առեալ զդրօշ նշանաց ի
 բեանց գնացին ՚ի ներքին բերդի յայն դուռն
 զոր իսկալի դուռն ասեն , անկեցին զդրօշն ի վի
 պարսպին և աղաղակեցին թէ զուլլարաձաւ
 զուլլարաձաւ , իբրև զայն լուսն սպայազօրքն ,
 ամբն առեալ զգէնս իւրց ընթացան ՚ի ներքոյ
 դրօշին իւրց : և մնաց հուսէյն աղէն ինքն միայն
 և որդիք և ծառայք իւր , որք երկուցեալ հու
 սէյնաղայն՝ զի միգուցէ ըմբռեցեն զինքն , յայն
 ժամ ծառայքն հուսէյնաղային պարանաւ կա
 խեցին զնա ՚ի ներքին բերդի պարսպէն , որ
 էջեալ գնացեալ խառնեցաւ ՚ի զօրս եզդելէ
 րնն , և զօրքն եզդելէրնն առեալ զհուսէյն
 աղայն գնացին ՚ի շադաղ և անտի ՚ի ջուլամերի
 առ եզդելէր : և այս ևս այսպէս :

Պատմութի վրաստակման պիղծ ջամարին :

Ի :
ՅՈՐԺԱՍ՝ ՍՈՒՂԷՅՍԻՆ
 բէկն և ջամարն աւարեալ կողոպտեցին
 զվանքն վարագայ՝ և առեալ գնացին
 ՚ի խօշաբ , անդէն մնացին մինչև յայտնու
 յինանակն , ապա եկեալ լրտեսացն պատմեցին
 նց , թէ ահա անիկ հուսէյնաղէն յայս նիշ
 աւուր ելանի ՚ի ջուլամերիկայ և գնայ առ
 խոնդքար թգւրն : յայն ժամ կամօք և խորհ
 դա :

դեակցուծք սուրէյմանբէկին առեալ չօմարն զՏարիւր այր և եիվ ըբերկրուոյ և արձիշու գնաց 'ի պահել զճանապարհն հուսէյնաղային զի թերևս սպանցէ զնա :

Իսկ այն հրամանն թգլրին, որ 'ի վաղուց ժամանակաց ելեալէր վն չօմարին, թէ ուր և երեւեցի չօմարն այնմ աշխարհի զօրապետքն զօրօքն իւրց մարտիցեն ընդ նմա, և սպանցեն որոյ սահս և փաշայն արդրումայ 'ի լսելն իւր զգալն չօմարին, զոմն իշխան չորս հարիւր արամբք առաքեաց զկնի չօմարին : որոց եկեալ հանդիպեցան չօմարին 'ի գաւառին կեղուոյ ուրև մարտուցեալ կռուեցան ընդ չօմարին և յաղթեցին նմա՝ քանզի զօրքն չօմարին հարիւր էին և նք չորս հարիւր, վն որոյ զզօրսն չօմարին զոմանս սպանին և զոմանս փախուցին : և ինքն չօմարն ուծն միայն արամբք ելեալ 'ի կողմն ինչ և զերծ առ 'ի նոցունց, և կամեցաւ դառնալ և գնալ 'ի խօշաբ առ սուրէյմանբէկն և յուղի անկեալ եկեալ մինչ էհաս 'ի կապն ոստանայ :

Իսկ բաջ առօրն ոստանայ, որ զճանապարհն պահէ, և զբաջն առնու 'ի ճանապարհորդաց, ետես զչօմարն 'ի հեռաստանէ՝ և իմացաւ, որ չօմարն է, և վաղվաղակի ինքն զխանջալն իւր 'ի բաց ձգեաց յինքենէ, և սկսաւ այսր և անդր որոնելով շրջագայիլ՝ զայս արար պատճառա նօք զի միգիտասցեն զնա ոստանցի գոյ և սպանցեն : Իսկ չօմարն ևս ետես զայրն 'ի հեռաստանէ և ասաց իւրոց արանցն՝ մեզ թէ վնաս ինչ հասանէ, յառնէ սյայսմանէ հասանէ, վն որոյ 'ի հասանելն ձեր առնա սպանէք զնա՝ և մի թողուք : Իբրև եկեալ հասին առ այրն չօմարն և արքն իւր, հարցին ցայրն թէ զի շրջիս, և նա խաբեաց զնոսա և ասաց ճանապարհորդ-

եմ՝ և աստ եկեալ կորուսի զխանջալն իմ, և շրջելով որոնեմ զե գուցէ գտայց զնա: և՛ ի լսելն զայս յառնէն սկսան ինքեանք ևս շրջագայել առ ի իմանալ զստոյգն: և փոքրինչ շրջեալ այսր և անդր գտին զխանջալն, և այնուհամարեցան իրաւացի ճանապարհորդ գող զայրն, վն որոյ ոչ սպանին այլ թողին՝ ի գնալ: և այրն քանզի հմուտ էր վայրացն, ընդ թաքնագնայ ձորակ ինչ, նախ քան զանցանելն չումարին զկապն, փոռ թանակի է հաս ՚ի գիւղն. զեկոյց զօրականացն թէ ահաւանիկ չումարն եկեալ է՝ կապն, և այս համբաւ վաղվաղակի հոգեկեցաւ առ ամենեւեմ զօրականս, որոց ամցւն չեղտակի ձիարչաւ ընթացմամբ գնացին՝ ոմանք դէպ՝ ի կապն, և ոմանք դէպ՝ ի վերին ճանապարհն. և զերկոսին ճանապարհսն կալան: Իսկ չումար ոչ գնաց ընդ վերին ճանապարհն, այլ ընդ ճանապարհս կապին եկեալ էմուտ ՚ի կապն՝ և ընդ այն կամէր անցանել:

Եւ է կապս այս այսպիսի իմն. զի է քարանձաւ բարձրագոյն, և՛ ի ներքոյ քարանձաւին ժողն ժովացեալ է անհնով խորութիւն, զոր Վճ միայն է գիտելի որ քանութի խորութե նորա բայց ՚ի հնոց և՛ ի վաղեմեաց ժամանակաց զսիրտ քարանձաւին իմաստութե և բազմաւ ալ խատուութե քարահատիւք արուեստաւորօք հատեալէն զքարն և արարեալէն զճանապարհն որ ուղևորք գնան, բայց ոչ թէ լայն՝ այլ այն քան որ միայն մի բեռնատար գնայ՝ և ոչ երկու:

Իսկ չումարն որ ճանապարհաւ կապին մտեալէր և գնայր, ոչ գիտէր թէ ժողովեալ են անդ մարդիկ ք վն ինքեան՝ և պահեն զբերան կապին՝ վն որոյ և անհոգ գայր, և յորժամ է հաս յայս կոյս յեզր կապին իմացաւ զայն և

յանհնարին վտանկս աղէտից և տարակուսա
 նաց ժմբռնեցեալ եղև, զի յառաջ ընդդէմնց
 գնալ երկնչէր՝ թէ միգուցէ թՊանքաւ հա
 րեալ սպանցեն, և յետոդ առնալ ընդ որ էկեալն
 էր ոչ կարէր, զի յոյժ նեղ էր տեղին, վն որոյ յա
 մեծից կողմանց անճար լեալ մնաց յանհնարինս :
 Եւ հայեցեալ չամարն տեսանէ մերձ կնքեան
 փոքրինչ զառիվայր տեղի՝ և սորք վիմաց իբր
 զսուղինչ ձորակ իջեալ յեզր ծովուն, և թէ
 պէտդ ժողարին էր. այլ ՚ի տագնապէ սպան
 մանն, չամար իջեալ իվայր ՚ի ձիոյն կալաւ զպա
 խուցն և ընդ այն ինքն և ձին իջին յեզր ծովուն :
 ապա հեծաւ իվր ձիոյն և կալեալ զպախոնց
 երիվարին, քաջագոյն պատրաստութիւն զսս
 պեաց զինքն՝ և ուղղեալ վարեաց զերիվարն
 իմէջ ծովուն, և յորժամ վարեաց զերիվարն
 իմէջ ծովուն զառաջինն խորասուզեալ ընկ
 դմեցաւ, և գրեթէ էհաս մինչև յատակս ծո
 վուն՝ քանզի զբազում ժամս անյայտ լեալ ոչ
 երևեցաւ : և երբև անցին իվր պահք ինչ տե
 սին արքն, որք զբերան կապին պահէին, զի
 ՚ի հեռու վայրի ելին յերեսս ջրոյն երիվարն,
 և չամարն, և յայնքան հեռի վայրի ելին և երևե
 ցան մինչ զի թՊանք ոչ հասանէր, քանզի կա
 մեցան ձգել զթՊանք և սպանանել զնա, և զի
 ոչ հասանէր, վն որոյ և ոչ ձգեցին : Եւ բազ
 մաց գովութեց արժանին այն երիվար, բար
 ձեալ զվերջեալն իւր և տանէր՝ ոչ թէ եբրև
 զՉամարային կենդանի՝ այլ եբրև զՋրային կեն
 ձանի գնայր լողալով շնչէր, փնչէր, փռն
 դայր. զանբաւ խորութի ջուրց ծովուն յուղ
 մամբ հատանէր, և գնայր լողալով և եկեալ է
 հաս յեզր ծովուն և ել ՚ի ցամաք ՚ի կողմանս
 ոստանայ :

Եւ յորժամ ել չամարն 'ի ցամաք, ոչ գիտէր զսահմանս և զճանապարհս, կամ զցամաքային և զտղմային տեղիս վայրացն՝ և 'ի տագնապէ երկիւղին, վարեաց զերեւմարն Տանդէպ երեսացն և գնայր, ոչ թէ ելն էրկրի այլ ելն օդոյորև՝ 'ի գնալն Տանդիպեցաւ յոժ սաստկի տղմային տեղում որում լայնութիւն և խորութիւն բազում էր: այլ և գիտէր ինքն չամարնակ տեսանէր իսկ, զի բազումնութիւնք զօրաց գաւառին գրոհ տունեալ ընթանալով միտեն զինի ինքեան, և թէ դարձեալ գնայ ընդ ցամաքային վայրս՝ երկնչի անկանիլ 'ի ձեռս նոցա: վստորոյ անդրէն ևս մտրակեալ զերեւմարն վարեաց իմէջ տղմոյն, և թէ պէտ 'ի սակաւ ինչ տեղի գնաց, այլ յորովութի տղմոյն արգել զնա իմէջ իւր զբազում ժամս, և բազմաւ ջանիւ և աշխատութիւնք այսր և անդր տարաբերելով Տաղիւ ուրեմն ել 'ի տղմոյն երեւմարն և ընդ իւրէ Տան զչամարն: Եւ յորժամ ել 'ի տղմոյն չամարն միւսանգամ վարեաց զերեւմարն Տանդէպ երեսացն առ 'ի վախչիլ, և ունի սասցաք անհմուտ էր որպիսութի վայրացն, ոչ գնաց 'ի կողմն ճանապարհին և կամրջին, որև մօտ իսկ էր նաև զերծ անիւր իսկ, թէ գնացեալէր, այլ գնաց Տանդէպ երեսաց իւրոց: և 'ի գնալն իւրում պատասեցաւ շամիրամայ առունին որում ոչ գոյ հնար անցանելոյ բաց 'ի կամրջէն, զի յոժ լայն է և խոր՝ և երկունջ կողմանց թմբերն բարձր՝ ընդ որ մարդ և ձի ոչ կարէ իջանել և ելանել, և առ եզերք այս առում գնաց չամարն սակաւ ինչ զառի վեր և դարձաւ և եկն 'ի գիւղն կեմ կոչեցեալ:

Սնչ այսոքիկ ամբն անցք անցին ը չամարին, զօրք երկրին, որք գրոհ տունեալ շեշտակի ընթանալն:

Թանային զկնի չամարին, եկեալ Տասին յառու՛ն շամիրամայ . և փուլ-թացեալ կալան զանցս կա մրջին՝ քանզի Տմուտէին վայրացն : Աւ ոմանք՝ ՚ինոցանէ եկին ՚ի գիւղն կեմ՝ և գտին անդ զչօ մարն՝ որ իջեալէր՝ ՚ի ձիոյն և յանդաստանի ու կրեքդողեալ՝ որք և շուրջանակի պատեալ պա՛ շարեցին զնա : և չամարն ունէր ընդ ինքեանս զչորս տապանչայ Թֆանք՝ զորս ուղղեցից՝ ՚ի ձգել և ոչ էառ Տուր՝ քանզի բարուԹն Թրջեալէր իմէջ շուրջ ծովուն և տղմոյն , և կայր ՚ի տարա կուսի զի. քաղէին ոգիք նր : և զորք երկրին՝ որք շուրջ զնովու պատեալք կային , ոմն ՚ի նոցա նէ՝ որոյ անունէր շեխուբէկ քաջուԹք աճա պարեալ ուղղեաց զԹֆանքն Տանդէպ չամարին և ձգեալ է Տար զգլուխն՝ և անդէն սատա կեաց զչարն և զանիծեալն զայն չամար : Աւ նոյն ժամայն կտրեցին զգլուխն և զաջոյ ձեռն՝ առին և զձին , և սարան առ եզդ-իշէր պարոնն իւրեանց : և եզդ-իշէրն զձին պահեաց առ ինքն , և զգլուխն չամարին և զաջոյ ձեռն նշան ընդ նմին առաքեաց ՚ի կոստանդնու պոլիս առ Թգրն : Աւ Թգրն տեսեալ զգլուխն՝ և լու՛եալ զորպիսուԹի սպանմանն , և ուրախացեալ լայն պարզեւեաց զբազում պարզէս պատուականս եզդ-իշէրին , այլև զերկիրն սղերտու նմա ինամ ետ , զորև արդէն իսկ եզդ-իշէրն տիրէ երկրին սղերտու , և որքան ինքն կենդանի է տիրէ :

Վայց էր ձին Տսկայաձև՝ բարձրասասակ՝ Տաստաբազուկ՝ լայնալանջ՝ երկայնավիզ՝ կա կաւտագոյն՝ գեղեցկատես՝ սեգաձեմ՝ և եբր զբանաւոր ընտրող ժամանակին , և դիպու՛ աճոյն . և Քանաչօղ տեսաւն իւրոյ : և կայ նա այժմ առ եզդ-իշէր պարոնն . և ստացեալ են ՚ի նմանէ Տինգ. բուռակ :

Արդ սատակումն պղծոյն չօմարին այսպէս, եղև ոնկ և պատմեցաք • Ժամ է մեզ այուհետև զսատակումն սուլէյմանբէկին • և զդարձումն սրբոյն Նշանին պատմել՝ ի վանայ քաղաքն • քոն զի և պատմութիս մեր վն սրբոյն Նշանին է • և ոչ վն ամբարշտաց արանց •

Պատմութի վն սատակման սուլէյմանբէկին •



ԽԼ: Պ Պ Ե Ս Պ Ե Տ Ս Ե Յ Լ Վ

յառաջդ • Թէ սուլէյմանբէկն կողոպտեաց զվանքն վարագայ • առեալ զամանանօթսն և զաւագ սբ Նշանն և տարաւ ի բերդն խօշաբայ՝ և անդ պահէր •

Այլ զի հոգւոց վանքն՝ որ յիշի իմէջ պատմութե վերափոխման սրբուհւոյ Մծածնին • զոր ՚ի սրբոյ առաքելոյն բարդուղիմէոսէ շինեալ է • և անդ ամփոփեալ է կենդանակիր պատկեր սրբուհւոյ Մծածնին • այս վանքս յերկիրն խօշաբայ է ընդ իշխանութեն սուլէյմանբէկին • Սորին վն յորժամ եկն սուլէյմանբէկն ՚ի խօշաբ • կոչեաց առ ինքն զառաջնորդն հոգւոց վանից զտեր պեծորոս եպիսկոս • և իբրև երախտաւոր ձևանալով նմա ուրախութե ասէր՝ բերի ՚ի վարագայ զձեր մեծ սուրբ Նշանն • Արդ՝ տամզնաքեզ զի տարեալդ կցես ՚ի վանքն մեր՝ զի անդ կացցէ • իսկ եպիսկոսին նկատեալ մտօք՝ և խորհեալ թէ ոչ է մնալոյ այն իւրցն վնորոյ պատասխանեալ էր ոչ գոյ հնար այդ սրբոյն Նշանիդ առ մեզ մնալոյ՝ զի ՚ի բնէ հարց և՛ ՚ի հաւուցնոցա է այդ ստացունած՝ և ոչ մեր • և ոչ էք տարեալ պետրոս եպիսկոսն զսուրբ Նշանն ՚ի հոգւոց վանքն թէպէտ սուլէյմանբէկն

բէկն քաղուժ անգամ ասացեալ էր : Եւ և
ասացեալ էր սուլէյմանբէկն թէ դու ոչ տա
նիս . ես այլոց քահանայից տամ , և առաքեմ
'ի վանքն . ոչառասխանեալ էր եպիկոսն յորժամ
դու զսք նշանն առաքես 'ի վանքն . ես զմիտ
բազնս իմ առեալ ելանեմ անտի և գնամ . դու
գիտես և քո վանքն : ապա սուլէյմանբէկն
թոյլ էր տոճեալ և ոչ էր առաքեալ :

Իսկ հայազուն քրիստոնեայքն՝ որք 'ի վան
քաղաքի և 'ի գաւառս նր էին՝ միահաղոյն
սրտաբեկ և միջակոտոր՝ արտմաթախիծ ան
մխիթար լեալք զսուգ զգեցան վս կողոպտե
լոյն վարագայ՝ և մանաւանդ վասն սրբոյ նշա
նին . և հանապազօր հաշէին , մաշէին , հե
ծէին , և հառաչէին , թէ զեարդ արդեօք եցե
հնար փրկու թէ սրբոյ նշանին : Հորոյ այր ոմն
երևելի և բարեպաշտօն քրիստոնեայ 'ի խօ
ջայից քաղաքին վանայ . որ էր սա ինքն խա
նենց խօջայ թումայի որդին . որոյ անունն էր
մարխաս չալապի : այս մարխաս չալապիս ա
ռեալ զբազում աղերս և եկեալ 'ի խօշաբ առ
սուլէյմանբէկն . մատոյց զաղերսն , և զբա
զում աւուրս կացեալ անդէն . նա և զբազում
արս միջնորդս արկեալ աղաչէին զսուլէյման
բէկն վս փրկու թէ սրբոյ նշանին . և նա ոչ
հաւանեցաւ զի տացէ : Եւ 'ի հազար զուռու
շէն սկիզբն արար մարխաս չալապին տալով և
հհաս մինչ 'ի եօթնհազար զուռուշն զի տա
ցէ զսք նշանն . և սուլէյմանբէկն ոչ ետ : և
Ստյոյլովից աւուրց անդէն կելոյ մարխաս չալա
պուն . իբրև ոչ ետուն զսք նշանն , ելեալ 'ի խօ
շաբայ արտմեցելով և թախծեցելով սրտիւ
գնաց 'ի վան քաղաք :

Եւ ոմն ասէ մարգարէն . թէ զայր մեղաւոր :

չարիք իւր որսան 'ի կորուստ. սոյնպէս և չարիք սուլէյմանբէկիս որսացին զինքն 'ի կորուստ՝ այսպիսեալ կերպիւ: քանզի իշխանքն սուլէյմանբէկին արք տասն կամ ևս աւելի. խորհեցան 'ի միասին սպանանել զսուլէյմանբէկն. զի ասէին թէ, որքան սուլէյմանբէկն պարոն եղեալէ՝ երկիր և աշխարհ մեր բնաւին աւերեցան. զի ոչ երբէք դադարեցաւ հեծել շարժութի՝ և հինասարութի՝ և աւար՝ և կռիւ՝ և վրդովութի՝ և որքան սա կենդանի է՝ գիտեմք զի ոչ լինի խաղաղութի. վստորոյ սպանցուք զսա՝ զի խաղաղացի խռովութի աշխարհիս մերոյ:

Օ այս խորհուրդս արք ոմանք իմացեալ զգացուցին սուլէյմանբէկին. թէ երբքին փառաւորք իշխանքն քո՝ որ է մայայ դասում՝ և մուստաֆայբէկ՝ և իբրահիմբէկ՝ գլուխ եղեալ են և այլովք ևս իշխանովք խորհեալեն առ 'ի սպանանել զքեզ: և սուլէյմանբէկն կալեալ զերեսին զիշխանսն զայնոսիկ էարկ 'ի բանտ կապեալ երկաթի շղթայիւք. և ըմբռնումն երկոց իշխանացս եղև յառաջին շաբաթին աղուհացից: Իսկ կապեալ իշխանքս թող թով և միջնորդով՝ բազմաւ կերպիւ զաղաչանս և զհանդրուածս արարին առ սուլէյմանբէկն զի արձակեսցէ զինքեանս, և նա ոչ արձակեաց:

Իբրև գիտացին իշխանքն թէ ոչ արձակէ՝ այլ սպանանէ. խորհեցան զայլևս հնարս զի բերին առ ինքեանս զաներն սուլէյմանբէկին որոյ անունն ևս մուստաֆայբէկ էր. և 'ի բազում աւուրս յորովիւ կերպիւ խօսեցան ընդ նմա՝ զի թերևս կարացէ զհնար ինչ գտանել վն փրկութե նց: և 'ի խորհին և 'ի խօսին, ասացին իշխանքն ընդ աներոջ սուլէյմանբէկն

կին. Թէ կարէիր դու փրկել զմեզ՝ մէք զքեզ
իշխան և պարոն կարդէաք մեզ ՚ի տեղի սուլէյ
մանբէկին. քանզի և որդի իշխանի ես դու ։
և արդարև որդի իշխանի էր այս մուստաֆայ
բէկս ։ արդ. եթէ դու սպանցես զսուլէյման
բէկն անպատճառ զքեզ կացուցանեմք իշխան
՚ի տեղի սուլէյմանբէկին. և յոչ հաւատալն
աներոջն բազմաւ երդմամբ և պէսպիսով բա
նիւ զուխտ հաստատեցին. այնքն մինչ որ հաւա
նեցաւ բանից իշխանացն . քանզի ոչ էր այր խո
րագէտ՝ այլ պարզամիտ՝ վն որոյ հաւանեցաւ ։

Օ կնի սորին հնարեցին զգործ այսպիսի . զի
երից իշխանացս այսոցիկ կապելոցս՝ ումեմն որ
դին և երկոցունցն երկու ծառայք . Թաքու
ցին զսուրս ՚ի ներքոյ հանդերձից իւրեանց .
և յարտաբուստ զգեցան զզգեստ կանացի՝ և
ածին սաւանս իվր իւրեանց . և ձեացան ուր
զհաւաստի կանայք ։

Ի յօրքիկ երէքին արքս՝ որք և կերպացան
կանայք և սուլէյմանբէկի աներ մուստաֆայ
բէկն . յաւուր միում ընդ ծագել լուսոյ աւ
ուրն ելին և ուղղեցան՝ և գնացին ՚ի բերդն ։
եկին և հասին յառաջին դուռն բերդին . և
դռնապանքն բերդին և այլ արքն տեսանէին
զի սուլէյմանբէկի աներն գնայ՝ և ունի առա
ջի իւր զփոքրիկ մատող մանուկ որդին իւր՝ և
երէք կանայք զկնի նր ։ Ի բրև եկեալ հասին ՚ի
դուռն բերդին՝ յայնժամ դռնապանքն հար
ջումն արնրին ՚ի մուստաֆայբէկէն վասն կա
մանցն . և նա սաց, Թէ կանայք կապելոց իշ
խանացն են. երթան առ կինն սուլէյմանբէկին
աղաչել զնա՝ զի և նա բարեխօս լիցի առ սուլէյ
մանբէկն վասն արանց սոցա . զայս բան իբրև
լուսն դռնապանքն Թոյլ ետուն ՚ի գնալ և

նորա անցանելով ընդ ամենայն դրունս բերդին հասին մինչև 'ի վերին դուռն. և անդևս հարցումն արարին դռնապանքն. և մուտա ֆայբէկն սոցին ևս արար զպատասխանի ըստ առաջնոյ կերպին վնորոյ դռնապանքն թոյլ ետուն քանզի ովորք և տեսանէր զմուսաֆայբէկն՝ և առաջինը զտղայն: և ըսէին զպատասխանին, աներկբայ հաւատային. զի համարէին թէ ույ յերեկն և յեռանդն գնայ և գայ մուսաֆայբէկն առ սուլէյմանբէկն՝ սոյնպէս և այժմ՝ վնորոյ թողուն 'ի գնալ:

Եւ նորա անցանելով զամենեսեան դրունս եկեալ հասին յապարանս սուլէյմանբէկին. և եկեալ կացին 'ի դուռն տանն՝ յորում սուլէյմանբէկն ննջէր 'ի գիշերի. որև յայնմ ժամու տակաւին իմէջ անկողնոյն կայր՝ բայց էր աքթուն: և կինն սուլէյմանբէկին և երկու աղախիքն ևս 'ի տան անդր: Եւ նախեմուտ 'ի ներքս 'ի տունն մուստաֆայբէկն. եբաց սուլէյմանբէկն զերեսն և ետես զաներն իւր 'ի տանն՝ և երէք կանայք արտաքոյ դրան տանն՝ և դարձեալ ծածկեաց զերեսն անկողնաւն. զի համարեցաւ զկերպացեալ կանայսն ստուգիլ կին գոլ. և կարծեաց թէ վն կապելոց իշխանացն բարեխօսելոյ գան. վնորոյ ծածկեաց զերեսն իւր: Եւ առ ժամայն շեշտակի ընթացեալ կերպացեալ կանանցն և անկան իվր սուլէյմանբէկին. և սրովն իւրեանց ծակտեալ խողխողեցին և սպանին. և սատակումն սուլէյմանբէկին եղև յաղուհացից հինգերորդ դում շաբաթու յուրբաթօրն. վնզի յորում աւուր սուլէյմանբէկն զվարագ կրողպտեաց 'ի բողրբէլ տարւոյն 'ի նոյնում աւուր և ինքն սպանաւ:

Ետ սպանման սուլէյմանբէկին. եկին երեքին արքն սպանողք սուլէյմանբէկին. փութանակի բացին զդուռն բանտին. և հանին 'ի կապանաց և 'ի բանտէ զերեսին կապեալ եշխանան: որոց ելեալ 'ի բանտէն եկին 'ի դուռն Կերդին. եկին և ժողովեցան առ նոսա և այլ ևս ուխտադիրք ընկերքն իւրեանց. և այլևս արք յօլովք' և աղմկեալ խօսեին: Իսկ երեքին սպանողք արքն դարձեալ մտին 'ի բերդն. և գնացին 'ի տունն՝ յորում սպանին զսուլէյմանբէկն. և առին զդի մարմնոյնը՝ պատեցին ձոր ձովինչ. և բերին արտաքս 'ի դուռն. բերդին իմէջ անբոխեալ արանցն. Թէ տեսէք ձերովք աչօք և հաւատացէք. զի անկարծիք և ստուգիւ սպանաւ սուլէյմանբէկն: Իբրև արկին զգէշն իմէջ 'նց' նոյնժամայն նք երեքին սպանողքն և աներն սուլէյմանբէկին, փութանակի դարձան և մտին 'ի բերդն' և փակեցին զդուռն բերդին' և յինքեանս կալան ըզբերդն. այնու մտօք Թէ մէք սպանաք զսուլէյմանբէկն. վնորոյ մէք լինելոցեմք իշխան 'ի տեղի նորա:

Իսկ կինն սուլէյմանբէկին ելեալ 'ի գլուխ պարսպի բերդին բազում աղաղակեաց դէպ 'ի քաղաքն' և յաղագս բարձրութեն ոչօք լուռ: Իբրև ետես կինն Թէ ոչ եղև լուռեալ ձայն նր 'ի քաղաքին. էառ զգլխոյ ղաւուխն սուլէյմանբէկին, և զքիշմիրի շալն նր. զի յորժամ սպանին զնա 'ի գլուխն էր' և էր արիւնաթաթիս պատեաց զղաւուխն շալոյն և ձգեաց իմէջ քաղաքին. և ղաւուխն գնացեալ անկաւառաջի տան ումեմն հայոյ քրիստոնէի՝ որոյ անունն էր խօճայվասոյ, որ 'ի տեսանելն ծանեալ զի պարոնի ղաւուխն էր. բայց վն արևւնաթաթա

Թախ դուրն երկիւղակարծ եղև Թէ մի գուցէ,
սպանեալ իցեն զպարոնն: որք և լաւ ամայն
փութացեալ հասին 'ի դուռն բերդին, և
տեսին զի հաւատեալ սպանեալ էր սուլէյ
մանբէկն:

Իս խօջայ վասոյ ասացեալս. վնդի բարե՛
կամ էր սուլէյմանբէկին զի զսիրալի խնամն
և զայցելութիս բազումն տեսանէր 'ի նմանէ,
ոս ծածկաբար առաքեաց զարս՝ և զեկոյց եղ
բարց սուլէյմանբէկին. որոց անուններն էին
աւագին իբրահիմբէկ. և կրտերոյն էվլիայ
բէկ. քանզի նոքա իւրաքանչիւրք յիւրեանց
բերդօջն կային. որք և ոչ կարի հեռիք էին 'ի
խօջաբայ՝ որոց 'ի լսելն փութանակի զօրակա
նօք հասին 'ի խօջաբ: Իբրև եկին 'ի դուռն
բերդին՝ ոչ բացին նոցա զդուռն սպանօղք
արքն՝ որք մտեալ էին իմէջ բերդին. և 'ի սա
կաւաւուրս մնացին այսպիսեալ աղմկաւ ամբն
արք: և յաւուր միում աղմկեալ ժամու եղ
բայրն սուլէյմանբէկին էվլիայբէկ. Եհար
սուսերբ զմալաղասումն և սպան զնա. քին
ախնդիր լեալ արեան սուլէյմանբէկին:

Իպա զկնի անցելոցս այսօցիկ. կինն սուլէյ
մանբէկին՝ որ տակաւին իմէջ բերդին էր. 'ի
միում գիշերի Թարց բնաւին ումեք գիտելոյ
ինքն միայն կանխեաց զպարան 'ի բերդէն և 'ի
վերքարչեաց զայր մի յարանցն իբրահիմ բէ
կին 'ի վեր 'ի բերդ անդր. և նոքա քարչեցին
'ի վեր զայլևս տասն այր՝ ընդ որս և զԻբրահիմ
բէկն: ապա այս իբրահիմբէկս և արքն
հետամուտ եղին սպանօղ արանցն սուլէյման
բէկին՝ որք անդ 'ի բերդին էին. և նոքա փա
խուցեալ մտին 'ի Չաբախանէն. և իբրահիմ
բէկն հուր էարկ 'ի Չաբախանէն յորմէ հոյ
հոյ Եհար Եհար

Տրդեհեալ բարութն 'ի վեր էառ զտունն' ը նմին և զբարն . և ընդ յողոցընդեաց' որք և փերթ փերթ եղեալ հոռեալ 'ի վայր իջանէին :

Ի յսուհետև իբրահիմբէկն տիրացաւ բերդին և ամենայնի երկրին . և սորին եղբայր էվլեայբէկն գնաց 'ի տեղի իւր յառաջին բերդն ուրև նախ բնակէր' որոյ զանունն ապաղայասէին . Ի որդ զսատակումն սուլէյմանբէկին պատմեցաւք . այսուհետև պատմեսցուք զպարոնութն իբրահիմբէկին և զդարձն սրբոյ նշանին 'ի վան քաղաք :

Պատմութն վն պարոնութե իբրահիմբէկին . և դարձի սրբոյ 'նշանին' 'ի վան քաղաք :



ԽԻ :

ՐԻ Դ ՉՐԱԵԱՅՍՄ

Իմի' որ էվլեայբէկն դարձաւ և գնաց յառաջին բերդն իւր' յապաղայ կոչեցեալն . և իբրահիմբէկն էմուտ 'ի բերդն խօշաբայ . և ընդ իւրով իջնանութի նունաճեաց զբերդն և զաման գաւառսն . և յաւուրց յաւուրսս առ սակաւ սակաւ հարցեալ տեղեկացաւ ամենից թշնամեաց իւրց . նաև այնոցիկ որք 'ի սպանումն սուլէյմանբէկին համախոհք էին : և որ աւուր սակաւ սակաւ զաման զնոսա կոտորեաց' և ոչումբ խնայեաց . այլէ կալաւ զկինն և զբոյրն սուլէյմանբէկին և եդ 'իբանտի . և բազմակերպիւք չարքանօք չարչարեաց զնն' զի ցուցանիցեն ըզմնացունաժս գանձուց սուլէյմանբէկին . իբրև էառ զօրինջ էդիա' և յետոյ զնոսին և սպան :

Սոյն այս իբրահիմբէկս վերստին կոչեաց առ 'ինքն զառաջնորդն հոգւոց վանից զպետ

496 Պատուհասք՝ որք վստրեոյ՝ Վշանին.

բոս եպկնսն. և ասաց տամ՝ ի բեզ զնք նշանն
տար՝ ի վանքն մեր՝ և անդ պահեա զհանդ
կացցէ. և պետրոս եպկնսն սմին և սարարդպա
տասխոնի ույ և արար սուլէյմանբէ կին. և ոչ
տարաւ զնք նշանն՝ ի վանքն. այլ մնաց ի բերդն
խօշաբայ:

Իւր յորէ յորմէ հետէ սուլէյմանբէ կն զնք
նշանն հանեալ ՝ ի վարագայ էբեր ՝ ի խօշաբ.
գրեթէ ցատումն և պատուհաս տեղացեալ
լցաւ յերկիրն խօշաբայ. զի երկիրն ոչ տայր
զպտուղ և թէ լինէր՝ հաղիւ զսերմն առնուին
և հեծել շարժութի և խռովութի և լցաւ գաւ
առն: այլ և կենդանիքն ոչ աճէին այլ տակաւ
ին պակասէին: այլ և յաւուրս ամուսն ՝ ի նք
գրիգորի պահոցն սաստիկ և անչափ ձիւնեկն՝
որք բազումք ասէին թէ երկու կանգուն նս
տաւ ձև անասունք նմքն առանց արօտի մնացին
վս ձեանն յոլովութի. և այնու պատճառաւ
անասունք յոլովք սովամահք եղէն: Օ կնի
այսոցեկ անկաւ մահ անասնոց յերկիր նոցա. և
որում գոյր հազար գլուխ ոչխար. հարիւր
գլուխ ուրեմն մնաց: վս որոյ բնակիչք երկրին
խօշաբայ ժողովեցան առ իբրահիմբէ կն և ծա
նուցին զաւերումն աշխարհին. և աղաչէին
դարձուցանել զնք նշանն ՝ ի տեղի իւր՝ զի վե
րացի պատուհասն ՝ ի նոցանէ: Եւ յլէ ինքն ի
բրահիմբէ կն գողեցաւ. զի ցաւ գողութի
յայտնեցաւ ՝ ի մարմինն: այլ և ցաւ իմն ույ թէ
բամի գոյացաւ ՝ ի նա՝ որ կալաւ զմէջսն և որ
բարձան և զսրուսն և հանապազ տանջէր զն
այլ և կինն իբրահիմբէ կին հանապազ թախան
ձէր զնա. և պէսպիսովք բանիւք խօսէր ընդ
նմա. զի դարձուցէ զնք նշանն ՝ ի տեղի իւր. և
վս վերոյ ասացեալ պատճառացդ. հաճեցաւ

Իբրաճիմբէկն զի դարձուսցէ զսբ նշանն 'ի տեղեւոր :

Որև աղդեցաւ այս վանայ քաղաքի ժողովոցոցն : և նորա լցան երկնայնով խնդուութբ . և նոյնժամայն վերոյ ասացեալ մարխաա չալապին առեալ ընդ իւր զովմանս 'ի ժողովորդականացն . և փութանակի հասին 'ի բերդն խոշաբայ . մատեան առաջի Իբրաճիմբէկն խօսեցան առ նա բանիւք աղաչանաց . և եդին առաջինք ըզդրամս երկու հազար ղուռուշս նաղտ , և առին զսբ նշանն և զմնացորդս անօթոցն՝ եթէ վսաջ և եթէ զայլ ինչ՝ եկին 'ի վան քաղաք . վնորոյ գրոհ տունեալ ամենից բնույ չաց գաւառին քրիստոնէից գային յերկրպագութի սրբոյ նշանին՝ և արտասուօք գոհանային զՄ. Ե. որ է բեր զսբ նշանն միւսանգամ առ նս : իսկ 'ի շուրջառացն զերկուսն առեալ էր չօմարն՝ և վն իւրն կարեալէր զչնթիան և զգեցեալ : Իսկ զսբ նշանն ոչ ևս տարան 'ի վանքն վարագայ . զկասկած և զերկիւղ կրեալ . մտածելով զանցեալ արհաւիրան . այլ պահեցին 'ի վան քաղաքին 'ի տիրա մայր անուանեալ եկեղեցին : Իւր եղև դարձ սրբոյ նշանին 'ի վան քաղաք հազար և հարիւր և չորս թուականիս մերոյ . շնորհօք Տն մերոյ Յի Բի որում փառք յաւիտեանս ամէն :

Պատմութի վն նշխարաց սրբոյն Յովհաննու կարապետին , որ յայտնեցաւ 'ի ժամանակս յեփնս , զոր 'ի հին ջուղաջ պահեալ կայր 'ի յաղուց ժամանակաց :

ԽԳ .



ԲԴ Դ ԺԵՄԵՆԵԼԻՆ
յորում թգլւրն Պարսից շահաբաս կոչեցեալն՝ մեծն և առաջինն էհանս զժողովուրդսն ջուղայեցւոց 'ի հին

Չուղայոյ, և վարեալ տարաւ զնս յերկիրն Պարսից 'ի քաղաքն ասպահան: Իսկ ժողովուրդն Չուղայեցոց ոչ կարացին զինչս և զստացուն ամս Եւրեանց զամսն բառնալ և տանիլ ընդինքեանս. քանզի հրաման թգրին սաստիկ էր ել յիշխանացն, որք որով փութացուցանէին զնս ճեպով ելանել 'ի տեղւոյն և գնալ վս որոյ ոչ կարացին առնուլ ընդ ինքեանս զինչս Եւրեանց, այլ Եւրաքանչիւրք պահելովք զթաքուստ և զգաղուստ արարեալ 'ի յարկս, և 'ի խորս, և 'ի վիհս, և 'ի պատշաճաւոր տեղիս, և այնպէս թողեալ գնացին: Իսկ շրջակայ գեղորէից բնակիչքն և գաւառականքն, որք մերձ էին հին Չուղայոյ. գետէին զպահուսան, զոր Չուղայեցիքն արարին. վսորոյ գային նորա յարաժամ և յուզէին. որոնէին, և պեղէին զհող և զքար յաղագս գիւտի ընչից. և բազումք զբազում ինչս գտանէին:

Եւ եղև զի այրումն այլազգի և կրօնիւքն մահ մետական. 'ի գեղջէն որոյ զանունն ասեն մէհրամ. եկեալ 'ի հին Չուղայ 'ի յորոնումն և 'ի յուզումն ընչից: և եկեալ յեկեղեցին՝ զոր վերին կաթան ասեն. անդ յորոնէն Եւրում 'ի յարեւելեան որմն աւագ խորանին. Էգիտ զաման ինչ խեցեղէն եդեալ և իմջ ամանոյն զփայտեղէն արկղ մի փոքրեկ՝ որ է զութի: Եբրե Էհան զարկղն փայտեայ 'ի միջոյ խեցեղինի ամանոյն՝ և էբաց զփայտեայ արկղն. իսկոյն բուրեաց նմա յորդագոյն անուշահոտութիւն և այնու զգաց 'ի յոգի Եւր այրն այլազգի թշնչխարք սրբոց է այն. և էր իմջ արկեղն մասունք ոսկերաց մանր և մեծ. և ընդ նոսա կտոր մի մագաղաթ և ի վերայ գիր ինչ գրեալ: Եւ առեալ այրն զարկղն զայն ոսկերբն և մագաղաթիւ

Թիւն տարաւ 'ի տուն իւր, տեսանել Թէ զինչ պարտ է լնոր Տիւ վն 'նորա. և մնաց նշխարն 'ի տաննր աւուրս բազումն: և սկսաւ ինչք և ստացուածք նր օր աւուր նուճազիլ. և կենդանիքն և անասունքն մեռանիլ. և ամբն ինչք նր ջնջեցան մինչև որդիքն և սմբան: Աւեկեալ այրն 'ի միտս իւր գիտաց' Թէ 'ի նշխարացն է պատաստու մն այն' որ դիպեցաւ նմա. վնորոյ հանեալ զնշխարսն 'ի տանէ իւրմէ այնուհետև տարեալ 'ի վայրի և 'ի բացեայ տեղիս իմէջ քարակուտաց ինչ պահեաց զնա՝ զի Թերևս վերասցի ցատումն Տն 'ի տանէ նր. և ոչ եղև վերացեալ:

Քեռայտորիկ եկեալ այլազգի այրս այս. 'ի հռչակաւոր ուխտն 'ի վանք սրբոյ նախավկային, որ 'ի դարաշամբ կոչեցեալ գեղ ջն է. և անդ յայտնեաց զամենայն որպիսու թին եպկպոսի ումեմն. որոյ անունն էր շմաւօն. որ էր նախածանօթ այլազգւոյն այնորիկ 'ի վաղուց ժամանակաց. իսկ եպկպոսն պատուհրեաց բերել զայն առ ինքն: և իբրև եբեր այլազգին զարկոյն և ետ ցեպկպոսն. և 'ի բանալն աւժամայն բուրեցաւ հոտ անոյշ և էլից զտունն. և ետես զմասունս նշխարացն. և առեալ զկտոր մագաղաթն և ընթերցաւ. և էր գրեալ ի վր նորա այս ինչ:

Մյս է մասն նշխարաց սրբոյն յովհաննուկարպետին. զոր գրեգոր լուսաւորիէն էբեր հայս. և եդ 'ի քաղաքն խրամ. իսկ 'ի յաւրման խրամ քաղաքին. չորս հարիւր և քսան և մէկ թուին հայոց բերին 'ի ջուղայ: Մյս քան քանքս գրեալ էին ի վր մագաղաթին. և եպիսկոպոսն շմաւօն գոհացեալ զՄյ ընդգիտ նշխարաց սրբոյն յօհաննուկ, և լցեալ

ուրախութիւն մեծաւ, և հաճեալ զմիտս այլ ազգւոյն տունեալ նմա զինչս, և առեալ զԲշխարսն՝ ի նմանէ : և այրն գնաց՝ ի տեղի իւր :

Եւ յետ աւուրց ինչ յայտնի եղև այս ժողովրդականացն ջուղայեցւոց գնացելոցն յասպահան՝ որոց պետ և գլուխ էր խօջայնազարն, ոչ միայն ջուղայեցւոց այլև ամենայն հայազունքրիստոնէից բնակելոցն ընդ Թիւրութիւն Պարսից, քանզի յոյժ հզօր և երևելի էր խօջայնազարս, նա և սիրելի Թիւրին Պարսից շահաբասին : Եւ այս խօջայնազարս առաքեաց զարս ոմանս՝ ի ջուղայեցւոց առ եպիպան շմաւօն՝ և խնդրեաց ի նմանէ զմասն նշխարոցն, այլև զբանս սպառնալիանս և երկեղալիս : և առաքեալքն՝ ի խօջայնազարէն եկեալ ասպահան ջիւն յեպիպանէն զմասն նշխարացն, յորոյ երկեղէ զանգիտեալ եպիպանին, ոչ կարաց թաքուցանել կամ զերծանիլ ի ջուղայեցւոց, խորհեցաւ տալ ի նոսա զնշխարսն : Բայց ի մաստնցն զմեծկտորն պահեաց առ ինքն Թաքնաբար, որ էր գլուխ Թիակին՝ որ էր տեղի բոլոր ոսկերն, որ է իվր ուսին, իսկ զայլ ևս մասունսն և զմագաղաթն գրեալ եղին ի նոյն յարկեղն, և ետուն ջուղեցւոց․ որք տարան յասպահան քաղաք առ խօջայնազարն :

Իսկ եպիպան շմաւօն պահեաց զնշխարսն այն առ ինքն մինչ ի ժամանակս յայտն յորում է թունկանն հայոցս հազար և հարիւր երեք, և ի սոյն ժամանակի մեծ վրդպտն յակօբ, որ էր և զջուղայեցի, նորոգ էր զնոյն վանքն սրբոյն ստեփաննոսի նախավկային, բազմօք և անթունօք ծախիւք և մեծաւ աշխատութիւն : սկիզբն արար եկեղեցւոյն ի հիմանէ մինչև ցկատարումն կոսիոնաժողովք վեմօք, այլև զպարիսպն արև և զաման

Խորհուրդ Շմաւոնի Ապկպսին: 501
 զաման շինուածսն, որք 'ի նմա, զաման 'ի Տիմա
 նէ ճեւարկեալ վերտին նորոգեաց: Աւ
 եպկպսն շմաւօն եկեալ առ մեծ վրդպան յա
 կօք ծանոյց նմա վն նշխարացն. և առայ թէ
 կամիմ զխաչ շինել յաղագս իմոյ յիշատակե' և
 'անդ Տանգուցանել զնշխարն զայն, իսկ վարդա
 պետն ծանոյց եպկպսին, թէ ոչ գոյ Տրաման
 'ի կանօնաց դնել զնշխարս սրբոց իմէջ խաչի,
 այլ յայլ արկեղ: վնորոյ կազմեցին վն նշխա
 րացն զայլիմն արկղ արծաթեայ աղիւսապէս, և
 արարեալ զոսկեօծ և ընդելուզեալ ակամբք
 պատուականօք, և անդ Տանգուցին զնշխար
 սրբոյն յօհաննու կարապետին: Աւ գրեցին
 ի վն պահարանին համառօտիւ բանիւ զաման
 անցուածս պատահմանցս այսոցիկ, և եդին 'ի
 նոյն վանս սրբոյն յախավ կային Ը այլոց բազմա
 հաւաքից սրբուէցն՝ որք կան անդէն: որք են
 բարեխօս վն ամենից քրիստոնէից՝ մանաւանդ
 պահապան և պարծանք աշխարհիս հայոց,
 որք կատարեն զամենեսեան բժշկութիւն առ
 ձման նեղեալս, որք դիմեն առ նոսա, որովք
 փառաւորի անուն Տն մերոյ: Եւ Քի օրհնե
 լոյն յաւիտեանս ամէն:

Պատու թէնահատակութե անմեղ մանկանն Նիկողայոսին:

ԽԻ:
Յ Ս Ե Ր Ը Ն Ե Լ Ի
 Տահատակա Նիկողայոս էր 'ի քաղա
 քէն տիգրանակերտու, որ այժմ
 ասի յամիթ, ծնեալ և սնեալ 'ի նոյն քաղաքին՝
 և էր մանուկ տիօք իբրև տասնևհինգ ամաց,
 տեսեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուց,
 զպատկ քրիստոնէից, և ազգաւ 'ի հայոց:
 Ը 3

Եւ յաւուր մեռամ մինչ դեռ շրջէր՝ Վեկոյնի յայտ իմէջ շուկային ըստ հաննապանութեան սովորութեան եւրոյ; յայնժամ այր ոմն հաւատովն մասմետական՝ որոյ այլեւանունն մասմետ էր, մերձեալ առ Վեկոյնի ձեռն ածէր զերեսօքն՝ և փարէր ախտաւորիւ ցանկութե՛ք՝ ուն հասապագ տեսանի ունակացեալ առ մասմետականս • Իսկ Վեկոյնի սաստիկութեք քարկութեք դժուարացեալ ընդ այն իբաց վարէր յինքննէ • Եր այլոմն այր, որ նա և անուամբն մասմետ էր և հաւատովն մասմետական • այս մասմետ, որ այժմ խաղայր ընդ Վեկոյնիսիս, ասաց նմա վնայնմ մասմետի, թէ զհարդէ՛ զի ընդ այն մասմետին առնես զսէր և զյարակ ցութի, և ընդ իս ոչ առնես, և Վեկոյնի սասց, զքո մայրն և զնր մայրն և ս այսպէս առնես: և նոյնժամայն այս մասմետ ասաց մերձակայից արանցն, և խանութպանացն • վն Վ. Ե վկայք ըրուք՝ զի դուք ձեզէն լուայք, որ հայհոյեաց զօրէնսդ իրն մեր զմարդարէն մասմետ: և ժողովեցան բազումք մասմետականք իբրև զշուն կատաղիք անդր իվր նորա, և յափշտակեցին զՎեկոյնիս և տարան ՚ի դատարանն առ դատաւորն, և ՚ի նոցանէ լինելն ոմանք դատախազք՝ և ոմանք վկայք՝ և ոմանք վրէժ խնդիք՝ և դատապարտէին ՚ի մասմէ զՎեկոյնիս: •

 որդի էր. քանզի սորա հայրն անգաւակ էր՝ և
 մայրն ծնաւ զաղ ջիկ մի. և ջհուտ կին մի ծնաւ
 զտղայ. և գանձիւք Թագուհին հաւանեցոյց
 զջհուտն՝ և փոխեաց զաղ ջիկն ընդ տղային. և
 անուանեցին ի սելիմ. այս է սորա պատճառն :
 Եւ յետ սորա որդին իւր մուրատ. որ զսև
 գդակն հագոյց քրիստոնէից ազգին : Եւ
 յետ սորա որդին իւր միւս այլ մուհամատ :
 Եւ յետ սորա որդին իւր ահմատ : Եւ յետ
 սորա Թգլրեցուցին զիւր եղբայրն զմուստա
 Փայն

Փայն երիս ամիսս . և յետ երից ամիսց մանզուլ
արարին իշխանքն զմուստաֆայն՝ և թգլրեցու
ցին զահմատի որդին : Եւ յետ չորս տարւոյ են
կիջարիքն սպանին զօսմանն . և թգլրեցուցին
միւսանգամ զմուստաֆայն՝ զոր ասէին թէ պա
կասախելք էր : Եւ թուականիս մերում հազար
և եօթանասունեւեկին . թգլրեացմէկ տարի և
վեց ամիս՝ և բարձին : Եւ թգլրեցուցին զօսմա
նի որդին զմուրատն՝ ի թուին հազար և եօթա
նասունեւերկսին . ի սորա ժամանակին և ի սոյն
ամին կարմիր գդակքն՝ որք են զվլպաչքն , ա
ռին զբաղդատ : Եւ յս սուլթան մուրատիս
հայրն սուլթան օսմանն հանապազ թադբիր
սուրաթ եղեալ շրջէր իմէջ քաղաքին ստամբօ
լայ ի զահմատիսանէքն և ի մէյխանէքն և յայլ
տեղիս . լսէր և տեսանէր զոնկարգութիս և
զանիրաւութիս ենկիջարոցն և սպահոցն . և ան
խնայ կտորէր զնն զմեծօ և զփոքունս . վն որոյ
միաբանեցան դապք ենկիջարոցն և սպանին
զսուլթան օսման թգլրն : Եւ ի նմին ժամանա
կի էր ի յարզրում քաղաքին ապազափաշայն յոյժ
արի և քաջ պատերազմօղ՝ և բազմահեծել . սա
վն թգլրի արեան վրէժխնդրութե սկսաւ կո
տորել զենկիջարիսն . և յարզրումայ սկսեալ
յամ քաղաքս և ի գաւառս կտորելով գնաց
մինչ ի յանկիւրիայ . և յոյժ անխնայ և սաստիօք
չարչարանօք սպանանէր՝ մինչև սպուռել ամե
նից ենկիջարոց : յանկիւրիոյ դարձաւ և եկն
դարձեալ յարզրում , զբերդն ամրացոյց՝ և նրս
տաւ ի միջին : Եւ յլև զկարաւանն , որք յարևե
լեց և յարևմտից գային յարզրում և գնային . ար
գել զաման հնարիւք և խաբէութի մինչ որ բա
զումք կարաւանք ժողովեցան . ապա յաւուր մի
ում զամցւն զպատգունածան յափտաշկեաց եթէ

նաղտ և եթէ վէճ: և յետոյ ապստամբեցաւ 'ի
 թգրէն' և եղև ջալալի. այլև կամեցաւ միաբա
 նիլը Վարսից. զի քեռորդին իւր բազմօք զօ
 քք առաքեաց առ շահաբատ թգլրն Վարսից.
 Իսկ սուլթան մուրատ թգրն առաքեց ի վրայս
 ապաղայփաշայիս զիւր վէզեր խոսրով փաշայն.
 որ եկեալ է առ զբերդն արզրումայ և զապա
 զայփաշայն կալեալ տարաւ յըստմբօլ: 'ի Տաղար
 և եօթանասուն և եօթն թուին մերում թգրն
 եդ զապաղայն 'ի բանտի' և յետոյ սպան. 'ի
 Տաղար և ութսուն և երեք թուին յօգոստոսի
 ամսոյն: Մյս սուլթան մուրատս առաքեաց
 զիւր վէզերն զխոսրով փաշայն գնալ ի վրբաղ
 դատայ և առնուլ զնա. և խոսրով փաշայն գնա
 ցեալ եմուտ յերկերն Վարսից 'ի կողմն Տամա
 դանայ' և էհաս մինչև 'ի քաղաքն դարգազին.
 քանզի զբաբիդօն ոչ կարաց առնուլ զի ձմեռն
 և ցուրտն էհաս ի վր. դարձաւ և եկն 'ի թօ
 ղաթ. վսորոյ թգլրն սուլթան մուրատս առա
 քեաց զմուրթուղափաշայն սպանանել զխոս
 րով փաշայն. և նա եկեալ 'ի թօղաթ սպան
 զխոսրով փաշայն' Տաղար և եօթասուն և եօթն
 թուին. այս այն սուլթան մուրատն է' և վէ
 զեր խոսրով փաշայն է. զոր իսահակ կթիկսի
 ներհակութե ճառին յիշեալեմք: Թուին Տա
 ղար և ութսուն և երկու օգոստոսի ամսոյն. սուլ
 թան մուրատն սաստիկ եասախարար զթու
 թունն ընդ ամնն աշխարհս տէրութե իւրոյ.
 զամ զահվախսէք' որք յամնն քաղաքս կային.
 քանիեալ աւերեաց և խափանեաց. վասն զի 'ի
 ժամանակին յորում ենկիչարիքն զսուլթան
 օսմանն սպանին, 'ի զափախանայսն նստեալ
 զսպանման խօսնն խօսէին խմելով զղահվայն
 և քաշելով զթութունն: Թուին Տաղար և ութ
 սունն

սունկերէք, սուլթանմուրատն գնց իվ իլէհայ
 'ի պատերազմ, և լէհացիք հնազանդեալք նմա
 դարձուցին յինքեանց: Թուռին հազարևութ
 սունկերէք 'ի ժամանակս այս սուլթան մուրա
 տիս ծռազատիկ արարին ազգն յունաց . յո
 ղում ժամանակի էր վէզեր բայրամ փաշայն
 որ էր ինքն յազգէն յունաց, վն որոյ արարերես
 պաշտուլթի ազգին յունաց՝ և զազգն հայոց
 Թիւր ծանոյց Թգւրին, որոյ վն բարկացաւ
 Թգւրն և սպան 'ի հայոց մէկ քահանայ և երկու
 աշխարհական: Թուռին հազար և ութսուն
 չորս՝ յամսեանն մարտի՝ ել սուլթան մուրատն
 'ի ստամբօլու և գնաց իվ ի երևանայ 'ի պատե
 րազմ՝ յամսեանն օգոստոսի էհաս անդ . և ու
 նէր ընդ իւր եօթնհարիւր հազար պատերազ
 մօղ հեծեալ՝ Թող զծառայականս և զբեռնա
 կիրս: և մեծաւ զօրութիւն ծեծեաց զբերդն .
 որ 'ի մէկ օրն ընդ աիւ և ընդ գիշեր վեցհարիւր
 և այլ աւելի Թօփ հարին բերդին, վն որոյ
 յինն օրն հառ զբերդն: և զիշխան բերդին՝
 զորդին ամիրգունայ խանին զԹահմազդուլի
 խանն իւրովք իշխանօքն առաքեաց յըտտամ
 բօլայնքն պահեաց՝ որ անդէն մեռան: այսպն
 Թահմազդուլին է՝ որ զ] ջմիածնի քարերն ա
 ռաքեաց յասպահան: Եւս սուլթան մու
 րատն զմուրթուզափաշայն տասնևհինգ հա
 զարքաջ պատերազմօղիւք զօրօք եդ իմէջ բեր
 դին երևանու՝ և ինքն անցեալ գնաց մինչ 'ի Թաւ
 րէզ, ձմեռն և ցուրտն էհաս իվ ի, այլև համ
 բաւեին 'ի ստամբօլայ, վն որոյ ննտի դարձաւ
 իվ ի վանայ և գնաց 'ի ստամբօլ: Թուռին հազար
 և ութսունևհինգ, յամսեանն դեկտեմբերի
 'ի ժամանակս այս սուլթան մուրատիս, Թգւրն
 Պարսից շահաէֆի եկեալ պատեաց զբերդն
 34° ԷԴ երևա

Երկանայ և ունէր լիւր զ զօրս պատերազմօղս
 Տարիւր Տաղար Թող զբեռնակիրս և զայս,
 երէք ամիս նստաւ ի վր ըբերդին՝ և բազմօք
 ջանիւք և չարչարանօք Տաղիւ կարաց առնուլ
 զբերդն. և 'ի զօրացն () ամանցւոց կարի զբա
 զումն կոտորեաց, և յինքն կալաւ զաշխարհն
 ամենայն, և յ () ամանցւոցն զերիս փաշայս և
 զայլ նշանաւոր 'ի շխանս լիւր տարաւ յասպա
 Տան՝ որք և անդէն մեռան: Թառնին Տաղար և
 ութսունեութն ապրիլի քսանևութն նոյն
 սուլթան մուրատն գնաց ի վր բաղդատայ, և
 'ի նոյեմբերի վեցն էՏաս 'ի բաղդատ, և
 ծեծեաց զբերդն Տօրղօրութք երեսունև
 ութն օր, և գեկտեմբերի չորսն էառ զբերդն.
 և զզօրսն Պարսից, որք անդ էին խալաւ կոտո
 րեաց զքինախնդրութի արարեալ վն իւրոց
 զօրացն, զորս կոտորեցին Պարսիկք յերկան:
 և զփառաւոր իշխանն Պարսից, որ էր իմէջ բեր
 դին, որոյ անունն էր խալաֆբէկ բազմօք շի
 խանօք աւաբեաց յըստամբօլ՝ և անդ մեռան:
 Ի յիւրոց իշխանացն կարգեաց զիշխան 'ի բաղ
 ատ՝ և զամենայն աշխարհն յանձն արարնմա
 պա դարձաւ 'ի բաղդատայ՝ և գնացեալ է
 ուտ 'ի ստամբօլ մեծաւ փառօք՝ 'ի Թառնին
 Տաղար և ութսունևութն յունիսի ամսոյ յեր
 ոսին: Թառնին Տաղար և ութսուն ևնին եղև
 աշտութի իմէջ երկուց ազգացն և Թաղարցն
 ամանցւոց և Պարսից, զի Թաղարն Պարսից
 Տաղի Գի զերկան էառ, և Թաղարն () աման
 ցւոց սուլթանն մուրատն զբաղդատ էառ, յետ
 առ յիւր զբաղարսս զայսոսիկ միաբանեցան եր
 կոքն Թաղարքն և արարին զՏաշտութի, պայ
 ման էգեալ, մինչև ցերեսուն տարիս պահել
 զՏաշտութին, վն որոյ ամբ աշխարհք արևե
 լի

լեայք և արևմտայք օրհնեն և զորորմի տան՝
 երկուց Թղթորացն, զի կան 'ի խաղաղութե : զի
 նախքան զբարեշուութին 'ի փախստեան և 'ի
 Թաքստեան կային , յափշտակութե և յաւարդ
 ոութե , 'ի գերութե և 'ի սպանութե , 'ի սով
 և 'ի սուր, և մանաւ անդ որորմելի ազգս Հայոց :
 Մյս սուլ Թան մուրատ Թղթրս կարի առաւե
 լաւ արիութե և քաջութե և սրտեղութե և
 խելօք . և յոյժ հնազանդեցոյց զ(Ծամանցին ,
 որ 'ի յիշել զանունն սարսեին , զի Թադպիբ
 սուրաթ եղեալ հանապազ շրջեր իմէջ քա
 դաքաց և իմէջ քանակի զօրացն , և իմէջ ենկիցա
 րոցն և սպահոցն . և տեսանէր , և լսէր զչարու
 Թիան և զանիրաւութիս նց , այլև իմէջ գուեհ
 կաց շինականաց շրջեալ հարցանէր ' և տեղե
 կանայր 'ի նոցանէ զանիրաւութիս և զյափշ
 տակութիս փաշայից և ի շխանաց , և 'ի վաղուէն
 աւուրն առ ժամայն չարամահ արարեալ սատա
 կէր : և զբազում զօրեղ և զնշանաւոր փաշայս և
 զիշխանս , և զշեխս և զղաղիս և զմութիս
 կոտորեաց , և անխնայ կոտորէր իբրև զոչխար՝
 վս որոյ ամբն սարսեալ դողային 'ի սմանէ : Մյև
 և որ զիւրև շրջակայ ազգք և Թղթրք կային սար
 սեալ դողային 'ի սմանէ , զի ուր զառիւծ յար
 Թող և զօրեղ էր ի վր ամցեն : և այսպէս մեծաւ
 փառօք և յաղ Թողիւ զօրութե վարեաց սա
 զԹղթրութի 'ի կեանս իւր : Իսկ 'ի Թուին հա
 զար և ութսունեւընին 'ի սրբոյ սարգսի շաքա
 Թուհինգ շաքաթաւուրն մեռած այս սուլ
 Թան մուրատ Թղթրս և ամենայն աշխարհկսկ
 ծացը մեռանսին նր . և մինչ տակաւին յոգւոյ
 կայր սուլ Թան մուրատս էած առաջի իւր զե
 դբայքն իւր՝ որոյ անունն էր սուլ Թան իբրա
 հիմ , և կացոյց զնա Թղթր 'ի տեղի իւր՝ և ինքն
 մեղաւ

մեռաւ ՚ի նոյնում աւուր : Թուին հազար և ութ
սունկընին նստաւ Թգւր սուլթան ի բրահիմն
և ոչ արար զգործ ինչ արժանի յիշատակի՝ ոչ
կարիութի և ոչ զուղղութի : Բայց ՚ի սորա ժա
մանակն ազգն () սմանցւոց կազմեցին զբազում
նաւա՝ և լցին պատերազմողիւք արամբք՝ և համ
բաւեցին թէ գնամք ի վրճ մալթայու կղզոյն՝ և
խաբտոճեալ գնացին ի վրճ կրիտոյ կղզոյն , որ
էր ՚ի ձեռն վէնէտիկցւոց , և դիւրաւ առին
զնա՝ զի բնակիչք կղզոյն յօժարէին յառնուին
() սմանցւոց : և առին () սմանցիք զկրիտէ կրղ
զին ՚ի վէնէտիկցւոց , ՚ի Թուին հազար և հինսուն
սունկ հնգին : Բայ սուլթան ի բրահիմն հետե
կցաւ զորովայնս և զախտս բուժանել՝ քանզի
խոտորեցաւ յախտս ի գամբլութի կարի առաւ
ել , զի Թող զկանայս և զհարձս իւր՝ զբողս և
պահէր առ ինքն : այլ զկանայս և զդասերս իշ
խանաց բռնութիւք ամեալ կատարէր զկամն
իւր յայտնի և համարձակ . վս որոյ վշտացանս
ազգն և իշխանքն իւր՝ և միաբանեալ զորդին
նր որոյ անունն էր սուլթան մուհամատ եդին
՚ի տեղին որա Թգւր , և ապա զսուլթան ի բրա
հիմն սպանին , ՚ի Թուին հազար և հինսուն
եօթնին : Թուին հազար և հինսուն և եօթնին ,
յուլիսի ամսոյ քանկեօթն նստաւ սուլթան
մուհամատն Թգւր և ոչ արար զգործ ինչ ար
ժանի յիշելոյ՝ զի տկար է զորութիւք այլ և մար
մնով , նաև հասակաւ տղայ՝ և հազիւ թէ զաշ
խարհ տէրութի իւրոյ նոճաճեալ պահէ , և
այնպէս կայ մինչև ցայսօր՝ յորում է Թուա
կանն մեր հազար և հարիւր և տասն և մէկ . և
ապագայն Տն Վճ է գիտելի՝ որում փառք
յաւիտեանս ամէն :

Յորժամ լանկթամուրն եկեալ է, իւրում /
 պայազիթն՝ է բուրսայ եղեալէ զաթոռն՝
 որ է թախթն . Յետոյ որդի նր սուլթան մու
 բասն առեալ է զատրանայ : Յետոյ սուլթան
 մուհամմատն առեալ զբասամբօլ՝ է թուին
 հայոց իննհարիւր երկու : է առ զկաթայն, և
 զաղ բռնան, և զտրապիզոն, և զբազում քաղաքս
 և զգաւառս անցեալ սուլթան մուհամմատն :
 Ի սուլթան պայազիթն հասեալ՝ է սուլթան
 սելիմն՝ թուին իննհարիւր վաթսուներեք
 սուլթան սելիմն յորժամ թգրեաց՝ էլ բազ
 մօք զօրօք գնաց ի վր շահիսայիլին և պատերեզ
 մեցաւ՝ է չալարան՝ և ոչ կարաց առնուլ զնա :
 դարձաւ յետ՝ և է առ զկամախ իննհարիւր և
 վաթսուն և չորս թուին : իննհարիւր և վաթ
 սուն և հինգ թուին է առ զաթիթ : Իւր յետոյ
 իննհարիւր և վաթսուն և վեց թուին է առ
 զմար բաղմաւ ջանիւ : իննհարիւր և վաթսուն
 և եօթն թուին առին այլազգիքն՝ է յաթիթ
 զվեժ կաթուղիկէն զուրբն թէ ոգորոս՝ է
 հայոց՝ և արարին իւրց աղօթանոց : իննհար
 իւր և եօթանասուն թուին մեռաւ սուլթան
 սելիմն նատաւ սուլթան սուրէյմանն : իննհար
 իւր և ութսուն և չորս թուին սուլթան սէ
 մանն բազմօք զօրօք էլ և գնաց ի վր շահթան
 մազին՝ է թաւրեզ՝ և ոչ կարաց յաղթել նմա .
 դարձաւ և է առ զբարեկուն, որ է բաղդատ :
 Ի այց՝ է ճանապարհին զբազում նեղութիւն
 կրեաց . քանզի հանդիպեալ զեղն ահագին
 մեծի գետի միջոյ, որ թուրքի բառիւ ասողու
 օլումասի՝ որ է ինն ճիւղ : և տարեալէ զբա
 զում մարդս՝ և զբազում գանձս գետան այն :
 հաղար և հինգ թուին բացին զնոր գուռն ամ
 թայ, որ հայի ընդ արևելս . զի առաջին շինողն
 չորս

Շորս դրուես էր բացեալ և անցեալ էր բազում
 Ժամանակ իվր. և յետ Ժմնկց էառ թուրքե
 թգրն զամիթ. ետես, որ մէկ դուռն իմէջ բեր
 գին էր ել և մուտն՝ խցին զնա. որ անուռնսն ջրը
 դուռն հրամանաւ թգրին. Տաղար թուռնսն
 ըոգեցաւ յամիթ սբ կիրակոս: Իննհարիւր և
 իննսուռն և ինն թուռն սուլթան սուլէյմանն կըր
 կին ել բազմօք զօրօք՝ և գնաց իվր շահթամա
 զին՝ ի թաւրէզ և ոչ կարաց առնուր: դարձեալ
 իվր շամիրամայ կերտին, որ է վան. և էառ զնա:
 Յետոյ մեռաւ սուլթան սուլէյմանն. նստաւ որ
 դինսր սուլթան սէլիմն: Ի Տաղար և տասն և ինն
 թուռն սուլթան սէլիմն զբիւլմ զօրս առաքեաց
 իվր կիպրոսի կղզոյն. երկու ամ տաշարեաց
 զնա՝ և էառ. և զբիւլմ քրիստոնէացս կոտորեաց՝
 այս թգրս ութ ամ թգրեաց: Յետոյ որդե
 սորա թգրեաց սուլթան մուրադն. Ի Տաղար և
 քսան և ինն թուռն նեղացաւ թգրն ի հրէից
 համարձակութէն. և վերացոյց զփակեղն ի
 դիւոց հրէիցն և քրիստոնէիցն նմ: բայց ի սե
 ղիս տեղիս կաշառ ետուռն և առին զհրաման, ե
 դին զփակեղ յետ տասն և ութն ամի. տպա կոս
 տանդնուպօլիս և այլ բազում քաղաք քմնացին
 գգակով: Եւ այս թգրս սուլթան մուրադոս
 առաքեաց զբազում զօրս իվր Պարսից աշխար
 հին՝ և էառ զթաւրէզ՝ և զերեւան՝ և զգան
 ջայ՝ և զարաշ՝ և զշամահի մինչև ի դուռն աշա
 նաց: երեսուռն աուր ճանապարհ զայսուրթի
 և զերկայծութի տիրեաց աշխարհացն. տասն
 և հինգ ամ հեռակոխ եղեալ ի սովէ և ի
 սրոյ բազումք մեռան. և բազումք երկիրք աւե
 րեցան. յետոյ սահաւ մի խաղաղութի եղև:
 Եւր մեռանելոյ սուլթան մուրադին նստաւ
 որդինսր սուլթան մուհամադն ի թուռն Տայոց

Տաղար և քառասուն և չորս. և ոչ արար զխաղա
դութի: Ի սորա ժամանակն բաղում քաղաք
և երկիր աւերեցաւ՝ զի ոչ կարէր վարել զթա
գաւորութիւն. ծառայքն և պարոնայքն ամբն
ապստամբեցան, և զերեսդարձուցին՝ ի նմանէն
քանզի ինքն միայն ոչ էր իշխանաւոր. յորժամ
տայր զքաղաք մի փաշայի միոյ՝ կամ պարոնի
միոյ. յետ տասն աւուր՝ կամ քսան աւուր՝
մայրն կամ քոյրն՝ կամ եւր կինն. կամ վէզերն
տային այլոյ փաշայի. և առնուին զբազում կար
միր դահեկան: Օտիգրանակերտն զամիթ
՝ի վեց ամիսն ինն փաշայի ետուն. կայր զի փա
շայն գայր. կայր զի փաշայի վաքինն գայր. նորա
երբ գային, գիտէին զի բանի յետքն փուչ է,
նորա այլ սկսանէին ՚ի կողոպտել և ՚ի թալա
նել զքաղաքն և զերկիրն: Օ ինչ երկարեմ, զի
գրով ոչ կարեմ պատմել՝ ՚ի յամիթ աստ և անտ
շինութի կայր, ապա յամթոյ կէսաւուր հո
ղէն, որ ՚ի դուրս ելանեա, մինչ ՚ի մեծ քաղաքն
ստամբօլ աւերութի էր, ուր ուրեք գտանիւր
շինութի: Ի յայտ սուլթան մուհամատի ժամա
նակն ՚ի չօռում գիւղաքաղաքին յայտնեցաւ
եազիչի անուն, և ունէր զեղբայր մի հասան
անուն, ոչ ՚ի թգրկանէ տոհմէ էր՝ և ոչ ՚ի մեծ է
ազգէ այլ գոեհեկ և ոչինչ քան զամ մարդիկ.
զբազում աւերութի արար՝ և զհարկադա
հանջութի ձգեաց ՚ի գիւղ և ՚ի քաղաք մինչ
՚ի դուռն բեւզանդիոյ քաղաքին: Երողովե
ցան գանգատաւորք՝ գնացին ՚ի սուլթան մու
համատն թէ երկիրք և քաղաք ամբն աւերե
ցան յոչինչ ումէքէ. թգւրն զհրաման արար,
ժողովեցան յամիթ քաղաքին, յետուն հազար
մարդ աւելի և ոչ պակաս, զօրագլխաւն իւ
րեանց գնացին ի վրնր և ոչ կարացին յաղթել,

այլ ինքեանք յաղթեցան : Ի յուրհայ էր
 հարլեալ, և զուրհայոյ բերդի մեծաւորն՝ ի
 բերդէն ձգեաց, և տիրեաց բերդին և քաղա
 քին : և գլուխ քահանայ մի և տանուտէր մի նա
 հատակեաց, վնդանձ ժողովելոյ՝ և մեծամեծս
 ՚ի տաճկաց շատ սպան, և շատ մնասարար ուր
 հայ քաղաքին՝ ի պատմել չի գալ, երէք ամ ի վր
 գնացին և յաղթեցան զօրագլխաւն իւրոց և ոչ ըն
 չացան : Վէտոյ նեղացաւ թգրն և հնարք ի մա
 ցաւ, առաքեաց զբաղում գանձս և զխիլայս և
 կոչեաց զնա՝ և անցոյց զմեծ ծոփն և արար զօրա
 գլուխ զօրացն իւրոց ընդդէմ Փռանկին և մա
 ճառին : այնքան տկարացաւ այս թգրս՝ որ ոչ
 կարաց յաղթել, այլ զհնարս ի մացաւ և արար
 զայս : ինն տարի թգրու թի արարսա, ՚ի սորա
 ժամանակն խանդարեցաւ (Սաման օղլու թա
 գաւորութին : Ի հազար և յիսուն և երէք թու
 ին մեռաւ սուլթան մուհամատն՝ նստաւ որ
 դին սուլթան ահմատ ջհանգիրն տղայ հա
 սակաւ : թուին հազար և վաթսուն և եօթն մե
 ռաւ սուլթան ահմատն և թգրեաց եղբայր
 նորին սուլթան մուստաֆայն, արարին բէզա
 մայ՝ կեցեալ չորս ամիս թգր, և հարկիւ նս
 տուցին ՚ի վայր, և թգրեցուցին զեղբօր որդի
 նորա զսուլթան օսման տղայ հասակաւ, տասն
 և չորս ամեայ : և յայսմ ամի թուին հազար
 և եօթանասուն գնաց ի վր լէհայ ՚ի պատե
 րազմ սուլթան օսմանն հանդերձ թաթար
 խանին, և դարձան բազմօք գերեօք, և բե
 զպմայ արարին քամենայն երկիր նորա : Ի յայսմ
 ամի Վճ հառ զվրէժ գերեացն ՚ի սուլթան
 օսմանէն : յարեան զօրքն ի վր իւր և սպանին : և
 թգրեցուցին զսուլթան մուստաֆայն զհօր
 եղբայրն նորին հանեալ ՚ի յարգելանոցէն :

1. յԼԵՍ Բանևկարգ (Սամանցւոց Թգլւրոյն :

117բ. Թգլւրեաց օսման յազգէ տաճկաց ամն . ծր. որոյ անուամբն օսմանլու կոչեցան :

118. մեռաւ սուլթան օսմանն և Թգլւրեաց օրխան որդի նր ամն . ԻԹ :

119կ. Էառ սուլթանն օրխանն զաւորանայ :

120թ. Թգլւրեաց մուրատ ամն . ծԹ :

121է. Թգլւրեաց պայազիթ ամն . ԺԴ :

122ծ. մեռաւ պայազիթն և Թգլւրեաց մահմետ որդի նր ամն . ԺԹ :

123ծ. Թգլւրեաց մահմետ ամն . ԺԹ :

124հ. Թգլւրեաց մուրատ ամն . ԻԹ :

125թ. Թգլւրեաց մահմետ ամն . Նա :

126բ. Էառ սուլթանն մահմետն զբիւզան դիայ :

127լ. մեռաւ սուլթանն մահմետն . և Թա գաւորեաց պայազիթ որդի նր :

128լ. Թգլւրեաց պայազիթ ամն . լւն :

129կ. Թգլւրեաց սէլիմ ամն . Թ :

Օ ի սէլիմ սպան զՏայրն իւր զսուլթանն պայազիթն և ինքն Թգլւրեաց . վն որոյ եղև խռո վուծի իմէջ երկուց եղբարցն սուլթանն սէ լիմին և ահմատին . և եղև սուլթանն ահմատի որդի մուրատն սօֆի :

130կբ. առուճաւ սուլթանն ահմատն որդւ ուլբ և դստերօք իւրօւլբ . և փախստականք եղեն զօրք նր :

131կբ. սուլթանն սէլիմն կոտորեաց զզօրս շահիսմայիլին :

132կգ. կամ . կդ . սուլթանն սէլիմն գնաց իվր շահիսմայիլին . և պատերազմեցան ՚ի չալտ րան և ոչ կարաց առնուլ զնա :

133կդ. Էառ սուլթանն սէլիմն զկամաթ :

134կե. Էառ զամիթ :

135կզ.

Պ կդ. հառ զշամ՝ և զմերը:

Պ կը. չարացաւ սէլիմն և արար զառաջին տղայ ժողովն՝ ի Վրիստոնէից:

Պ հ. մեռաւ սէլիմն և թգլրեաց սուլէյ ման որդի նորա ամս. ին:

Պ հե. գնաց սուլթան սուլէյմանն՝ ի պու տուն՝ ի թախտն ընկուզաց և հառ զնա:

Պ ճդ. հառ սուլթան սուլէյմանն զբողոքատ:

Պ ղբ. մաղաքեայ վարդապետն դերջնցե գնաց առ սուլթան սուլէյմանն և վերացոյց զտղայ ժողովէն հրամանաւ նորին՝ ի դերջանայ՝ և ի բաբերդու:

Ռ ժե. գնաց սուլթան սուլէյմանն իվն փեջայ և անդ մեռաւ ի սէյիթվար: և թգլրեաց սէլիմ որդի նորա ամս. թ:

Ռ ժդ. թագաւորեաց սուլթան սէլիմն:

Ռ իդ. մեռաւ սուլթան սէլիմն և թգլրեաց մուրատ որդի նր ամս. ի:

Ռ իսդ. յուսվարի վեցն մեռաւ սուլթան մուրատն՝ և թագաւորեաց մահմետ որդի նր յուսվարի. իբ. ամս. ժբ: սա հառ զերկուս բերդս ի մաճարէն:

Ռ իսդ. դեկտեմբերի. լւ, մեռաւ սուլթան մուրատն. և թգլրեաց մահմետ որդի նր յուսվարի. ժե:

Ռ ծդ. մեռաւ մահմետ՝ և թգլրեաց ահմատ որդի նր ամս. ժդ:

Ռ կե. առաքեաց սուլթան ահմատն զթաթարխանն և զխալիլիաշայն իվն շահաբասին և ոչ կորացին առնուլ զնա. այլ աւերեալ զթաւրէզ և զշրջակայս նր դարձան յետս: Եւ յայսմ ամի մեռաւ սուլթան ահմատն՝ և թգլրեաց մուստաֆայ եղբայր նր. նոյեմբերի ժթ. օրն չորեք շաբաթի ամիսս երիս:

Եւ 'ի սոյն ամի ընկեցին իշխանքն զսուլտան մուստաֆայն . և Թգրեցուցին զօսման որդի սուլտան ահմատին փետրվարի . Ժգ . օրն երկու շաբաթի , որ Թգրեաց ամս . դ :

Ուկէ . Թգրեաց մուստաֆայ ամիսս . գ . և 'ի սոյն ամի Թգրեաց օսմանն ամս . դ : Ժգ . ամաց փետրվարի Ժգ . օրն երկու շաբաթի :

Ուհտ . սպանաւ սուլտան օսմանն 'ի զօրաց իւրոց . և հանեալ 'ի բանտէն զսուլտան մուստաֆայն զեղբայր սուլտան ահմատին վերստին Թգրեցուցին մայիսի . Ժբ :

Ուհբ . ընկեցին զսուլտան մուստաֆայն և Թգրեցուցուցին զսուլտան մուրատն . յօգոստոսի ամսոյն . լւ . յաւուր կիրակէի :

Ազգաբանութի Պարսից Թագաւորացն :

ՆՈՒՅՆ :



ՆԻՉՅՆՆ ԸԼԽԱՄՔԻՆ Ե՛ , որ էր իշխան արտաւիլու . որոյ որդի է շէխ հայդար . այս հայդարս էաւ իւր կին զքոյր եաղուբ Թգրին Թաւրիլոյ . որ էր Թոռն ջահնջայ Թգրին : և 'ի շէխ հայդարէն և 'ի քուներէն եաղուբ Թգրին . ծնանի որդի' և անուանի իսմայէլ : այս հայդարս և իւր կինն խորհին սպանանել զեղով զեաղուբ Թգրն . զի ինքեանք առնիցեն զԹգրուԹին : և սիրոյ պատճառանօք կոչեն զեաղուբ Թագաւորն 'ի ճաշ . և տան ուտել նմա զգեղեար կերակուրն . և յտ ուտելոյն զգաց Թէ դեղեալ է կերակուրն . և բռնու Թբ նոցունց և ստայ ուտել 'ի կերակրէն : և սոքա երեքեանս մեռան 'ի միասին եաղուբ Թգրն և քոյրն իւր և շէխ հայդարն . և այպա անտի

անտիրանայ աշխարհն. և լինին խռովութիւնք
 և պատերազմութիւնք: և զմանուկն իսմայել փա
 խուցանեն ՚ի կղզին ասթամար՝ և անդ սնանի
 և հասանէ յարբունս հասակի. յայնժամ ա
 ռեալ զնա ազգականաց իւրոց բերեալ յայտ
 նեն ամենց՝ թէ պատէ երկուց կողմանց ժա
 ուանդն. քանզի որդի է շէխ հայդարին և քուէր
 որդի էաղուբ թգլրին. վսորոյ ամբն հաւա
 նեալ կացուցանեն զնա թգլր՝ ի տեղի եաղուբ
 թգլրին: և այս իսմայել ծնանի զշահ թաս
 մազն. և նա զերկրորդ շահ իսմայելն. և զշահ
 խուդաբանդէն: զկնի շահ թահմազին թգլրէ
 երկրորդ շահ իսմայելն. զկնի այս իսմայելս
 շահ խուդաբանտէն. զկնի սորա թգլրէ որ
 դի սորա ադաջին շահաբասն. զկնի սորա թգլ
 րէ թոռն սորա շահ սեֆի. զկնի սորա թգլրէ
 որդի սորա երկրորդ շահաբասն. որ էր կարե
 քրեստոնէասէր և ուղղադատ: զկնի սորա
 թգլրէ որդի սորին շահ սեֆի անուճամբ. զկնի
 սորա թգլրէ եղբայր սորին շահ իսմայելն:

Վասն անուանց և որպիսութեց պատուականաց Ականց:

ԾՊԻ
ԱՅՆ՝ ՈՐԷ՝ ԵՒՂ ՈՒԹՆ
 բարքն այն է, որ թէ մարդ ՚ի բերանն
 առնու զծարաւն կարէ. և թէ զոսկին
 հալէս և զեաղութն ՚ի մէջ հալած ոսկւոյն
 ձգես. ոչ այրի՝ և ոչ գոյնն աւերի՝ և ոչ պայ
 ծառութիւն. յլլ և ասացեալէն թէ ովոր լինի
 հետն պահէ՝ նա մօտ մարդկան ընդունելի է
 և զարկուճի լաւ է:

Սարդիոնն, որ է սէյլանն, արիւն որ եր
 թայ յինքէնէ. ՚ի բթէն կամ յայլ տեղեաց որ
 երկաթի

երկաթի կամ քարիխոց չլինի • զգեյլանն 'ի Տեան պատճեն զորիւնն կտրէ : և ներ կրակում ոչ այրի ույ զեաղութն՝ ույ որ 'ի կրակն մտանէ նոյնու ելանէ • և ոչ գոյնն աւերի և ոչ ճիւղն : Գոյնպէս և դեղին սեյլանն , որ է թիւրյ և պի ճատի և տալազիօն ասեն :

(1) մրուխթին ըզյիտին եթէ օձին դեմ բռնեն • 'ի տեսանելն օձի աչացն ջուր իջանէ՝ և կուրանայ օձն • և բազումք են վկայեալք այս բանիս փորձելով բազումմանգամ : և թէ զաֆորանաւ իվն ամադի քարի լաւ լուես և 'ի աչքն քաշես՝ զաչաց լոյսն աւելցնէ : և թէ զմրուխթն 'ի մատն լինի կամ 'ի Տեան նա վնասակարք թուճաւորք չմերձենան 'ի նա : այլև սեաւ հազ ասեն • որ այլ 'ի յայն հազալուն մարդ չի ազատիլ՝ և արիւն ձգելոյ փորցաւութե լաւ է՝ և փորձած է :

(2) Կասպիս , որ է զտպարճատ • կանայց դեղնա գոյն է սակաւ մի • իտասիաթն այն է , որ 'ի յինքն շատ հայիլն զաչաց լոյսն աւելցնէ • և կամ թէ սղկեն 'ի յաչքն քաշեն զաչաց բորն տանի՝ և գոթութե լաւ է :

(3) Իգրոն , որ է ալմազ՝ որ հին և նոր լինի • հինն լաւ է՝ և զամ քար ուտէ՝ և կտրէ՝ և ոչ մաշի : և եաղութի և սեյլանիպէս ոչ կրանայ • 'ի կրակն ույ մտանէ՝ նոյնպէս և ելանէ 'ի կրակէն : և թէ կտրեն զինքն • թէ մեծ կտրի թէ փոքր նա եռանկիւնի կտոր լինի • կամ քառանկիւնի • կամ վեց անկիւնի • և սեր թեզ փերթիզ • այսինքն գլուխս սուր և թևն սուր : և արձձով կտրի • զի նօսրացնեն զարձիճն և դնեն զալմասն 'ի մէջ արձձին • և պատատեն և դնեն իվն երկաթի օսրին • և երկաթի կռանով հարկանեն իվերոյ արձձին

որ

որ արմասն՝ի մէջն է. կտորի արմասն և մնայ՝ի մէջ արձձին. և չեռփախլ այսինքն տաղմիշ լինիլ. արձձի գիջու թին զինքն ժողով պահէ ։ յետոյ բանան զարձիձն և Տանեն զհամորեալ արմասն և ՚ի բան տանին . և թէ արձիձ ոչ գտանի . դնեն իմէջ մեղրե մովի . և տասնեւերկու տակ թղթով պատատեն և Տարուն կռանով ՚ի պատատեալ թղթին վերայ, ուր է արմասն . ի մէջն կտրատի արմասն ։ ձգեն զթուղթն մոմովն իմէջ եռացեալ ջրոյ . Տալի մոմն և թուղթըն յերեսն ելանէ . և մնայ կտրած արմասն ՚ի ջրոյ տակն . յետոյ Տանեն և ծեծեն ՚ի պողպատ արմաստի Տաննն՝ և ՚ի բան տանին ։ զի այս լոսած արմասովն զվեժագին արմասն տաշեն Տագագներն ։ և ի Տեապահէն զուրախու թի բերէ ։ այլ և ասացեալ են ՚ի բարոյից գերքն թէ երկու պատերազմողաց՝ յոր կողմն որ աւելակչիտ արմաս լինի . այն կողմն յաղթող լինի . և զսոյգն Բճ գիտէ ։ և թէ կինն որ ՚ի ծնունդն յամենայ . զարմաս քարն ՚ի բազուկն կապեն արձակի Բճ ։ Եւ զայս գործս ունի անգամանդեայ քարն՝ զոր ՚ի ձախձեուն բռնէ ծնող կինն . և բազումանգամ փոր ձեալ են զայս ։

ԲԿասն, որի յէյնըՏոր . զինչ որ ՚ի յեաղու թն բարք կայ ամենն յակատն կայ . զի ՚ի Տեա վերցնողն գարչ գորու թի և քոր և այլ այսպես բք չի լինիր ։ մալն և շորՏքն չի պակասիր . և մօտ մարդկան ինքն և խօսքն ընդու ների լինի և կսեւաց շահ ունի ։ և որչափ գինի խմէ նա խելքն զինքն չի թողուք, ասացեալ են . և ես չեմ Տաւատար զի գինին առիւծոյ կաթն է . ոյոր ըմպէ ագահութի ՚ի փառաց ՚ի խելաց՝ և յապրանաց թափի ։

Բնութիւտոս, որ է լաւն . բնութիւն այն է, որ թէ 'ի բերանդ առնուա նա զծարաւն տանի . ուր յետադու թն ունի զայս : և 'ի յուրախ արար մտջուան թէ ծեծեն և խառնեն . որք տին ուրախութիւն է . և զհոգն և զցնորքն տանի 'ի սրտէն : և թէ յաչաց դեղսն խառնեն , աչաց լուսոյն լաւ է' և սրատես առնէ :

Ոսկէ քարն՝ որ է թիւլայ : բնութիւն այն է՝ որ թէ բարակ շորով փաթաթես և կայծ դնես ի վր ոչ այրի շորն : և ովոր որ 'ի հետն վերցնէ գիշերաւախ և յերազոյ անհոգ կենայ և 'ի չար պատահմանէ ազատի Բիւ :

Բիւրեղն՝ որ է պիւլորն՝ բնութիւն այն է՝ թէ որ ծեծեն և հին խոց լինի ցանեն ի վր ողջանայ : և թէ դակուան սրբեն՝ ակուին զժանկն տանի : և 'ի հետ պահելն վատերազ և գիշերախաբ չի լինի : և ներկոճի կարմիր՝ և կանաչ և դեղին՝ և զամ գոյն ընդունի : և 'ի կրակն կրանայ՝ և չի դադարիր . և կրացեալն յաչաց դեղսն մտանէ :

Բոճազմն՝ որ է լազուարտ՝ երկնից գունովն է կապոյտ . և լաւն այն է՝ որ տամարոտ և սպիտակ չլինի : և 'ի կրակն զգոյնն չփոխէ՝ և ոսկի նօղտաներ ունենայ . և թէ 'ի թիզապի ջուրն ձգես զլազուարտն 'ի նոյն ժամն սպիտակի և լինի ուր զծիւն : և 'ի Ֆուանկն մաղպուլ է : և մեծամեծ կտոր լինի . և հազար դրամ կտոր տեսի : և վեց հարիւր դրամն ի հազար և հարիւր թունին ծախեցաւ 'ի հայապ տանն և հինգ ուիալ . և յառաջմէ քառասուն ուիալ էր ծախուէր՝ յողբէկէն կուգայ :

Սարգարիտն յայտնի է՝ և երկու ցեղ է . մէկ ցեղն փուրթալ . և մէկ ցեղն հարմուղի : և հարմուղի մարգարտին, շիրին ասեն . բոլոր

լինի և դեւր և փայլուն և ծակն փոքր այդ է մարգարտին լաւն, հարմուզին այսինքն շերին. և փուրթգալն դուր չի լինիր և փայլուն չէ՝ ուր զշերինին. և փուրթգալն շերին մարգարտին ուուպ գինն աժէ. այրի՛ի կրակն և կրանայ :

Սարջան. զոր հայերէն բուստ ասեն, լաւն խորու կարմիրն է. և լինի բաց կարմիր. և լինի սպիտակ. և ծառիպէս ՚ի ծոնն բուսնի : և փայտիպէս ցեցկերոճի՛ և որդնտի՛ և ծակ ծակի : և թէ՛ ի թթուն ձգեն սպիտակի : և ՚ի կրակն կրանայ և սպիտակի :

Յեամանի՛ լաւն սեւալին է՝ այսինքն որ թա փանացնի. խորու կարմիր է՝ և միջակ կարմիր՝ և բաց կարմիր լինի և քառասուն դրամէն աւել մարդ չէ տեսեալ և ասեն թէ տուն փլելոյ կամ պատ անկանելոյ լաւ է՝ որ չէ տեսեալ յեմանի հազնօղն ՚ի տան ներքև կամ պատի ներքև մնացեալ : և մօտ () սմանցիք և Պարսիկ ք և յամ՝ ուումիք մախպուլ է այս քարս. զի զանունն գրեն իվր՝ և ՚ի մատնին դնեն : բայց լինի սպի տակ գոյն՝ և դեղին՝ և մաւի այլ լինի. բայց խորու կարմիրն՝ որ միագոյն լինի և առանց տա մարի այն լաւ է. և մատնու քարն՝ որ լաւ լինի երկու ուիւլ կամ երեք արժէ :

Ղեղն կարմիր լինի՝ բաց կարմիր, և ալ լինի. լաւն մէկ գոյն լինի և առանց տամարի. գինն յեամէնուն ուուպ գինն աժէ :

() ձի քարն չորս ցեղ է՝ սև և դեղին և կար մրագոյն է և այլ գոյնք : լինի որ բոլոր բոլոր վարդ լինի և լինի որ նողտայ լինի. և լինի որ երկայն երկայն և նաղաչ լինի. և ամ ցեղն ՚ի յօձու խորիս նմանի. և ամ ցեղ օձու քար թէ որ ՚ի դուր քարի վերայ քացախ կամ լէյ մունի ջուր դնես. և զայս քարն իվր քացախն դնես

գնես և երկու քարք լինին օձու քարքն. յայ կեն
դանիք շարժին՝ և գան ողջունեն զմիմեանս և
հետանան՝ ի միմեանց: և խասիաթն այն է,
զի թէ օձ թունէ զմարդ ի վր լեսանին սրբէն,
պուտ մի արբուցանեն և քսեն ի վր թունին.
Ինոյն օրն ազատի Մ. Ժ. և հնդիքն խիտխիտ
խնդրեն զայս քարս, և գնով առնուն. և իւ
րեանց թգւրն՝ ի թագն և ի մատն զայս քարս
դնէ, և մէկ մսխալն երկու ոսկի աժէ:

Եւ է քարմի, զոր օձի քար ասեն և թուրք
էրէն խորելիազ աղչասի ասեն. բոլոր և
սպիտակ լինի ի ստաֆի ջընսէն է. մէկ
երեսն զուպայ է և մէկել երեսն դուր. և
ի դուր երեսն ունի մարդուրայ բարակ սե
թել, և է յայ զօձ կուտապեալ, քարք սո
րա այն է, որ թէ ուռպ, որ է պէգմազով ի վր
օձիկ ցաւոյն կարմիր տեղին դնես. նա կպի
ի վր կարմիր տեղին. և ութն օր չի փրթիք
ի վրայէն մինչև որ ողջանայ Մ. Ժ.

Եւ ար՝ որ է գոյնն կանաչ փերփերի գոյն,
և կայ ի յինքն կարմիր կետեր շատ և մօտ
Ֆաանկն մախարու է, և պինտ է ի բանին, և
շատ է ամէն տեղ կայ:

Եւ ամահի՛ որ է երկաթ չինի, որ է սանկ հա
տիտ՝ և հայերէն սղուն քար ասեն, և ծիրանի
գոյն է ամէնն: և երբ որ ի լեսանն սրբես նա
կարմիր լինի, և կայ որ ալ լինի սրբածն, և
կայ որ մօռ լինի, որ է ծիրանին, և դեղին լինի,
և սպիտակ լինի, բայց կարմիրն որ ի սրբածէն
ելանէ ուռուցի լաւ է, թէ փորդի ջրով
ի լեսանն սրբես և զսրբածն ի վր ամենայն
ցեղ ուռուցին քսես նա օգտէ Մ. Ժ.

Ղահ՝ որ թուրքաց բառով պապաղորի
ասէ յամենից գուսից շողկապեալ է յինքն, և

յեմանու երկրէն ելանէ ։ և 'ի Ֆռանին մախ
պուլ է և մեծամեծ լինի' և չոր է և պինտ ։

Սինադիս' Թուրքերէն Սիլատուզ' հայե
րէն Միգմանու' սեւագոյն է, և յայանի է Թե
որ 'ի հեան պահեն նա ջրացաւին լաւ է ։ և
այլ զբեւեռցուցին զխաղիչն այսով առնեն .
և Թուրք զպայնու մայի ասէ' որ է հարաւա
ցոյց . և զերկաթն յինքն քարչէ և անշարժ հո
գի են սասցեալ այս միկ . և Թեոր մէկ գեղեր
գնեօ զայս քարս և զԹուրն կամ զգմնական 'ի
մէկ տեղ' նա վաղիւն այն Թուրն և գանական զեր
կաթն յինքն քարչէ . և արժան է ամէն տեղ ։

Յեալմ . ամէն շեղուաւ յեալմ ասեն շաւն
ապիտակ Թղթոյ գոյն է . և այլ ցածն ւզալրա
մին' և ախմարաց փերփերի գոյնն' և ճիթապտ
ղի գոյն' և այլ ցածքս սկն' և տամարտան
ամէն գոյն լաւ է . և լինի, որ երէք հազար
դրամ և այլ աւելի լինի մէկ կտորն ։ և մօտ
Թուրքն մախպուլ է' և ապիտակն 'ի Պարսիկն
Մախպուլ է . և ապիտակին խաթայի ասեն 'ի
յաշդարու հնդկաց երկրէն գոց ։ և ասեն Թե
կայծակի լաւ է' որ տեղոր լինի կայծակ չի ըն
կնիր . ապիտակին սափն' որ հարիւր դրամ լինի .
չորս ուիալ աժէ . և այլքն ցած գին աժեն ։

Միլում . յարապի Ֆրհամ ասեն . լաւն սա
Փի է, լուրջ գոյն ունի' և 'ի Թափանցնի' և 'ի
լուրջ եաղութ նմանի . բայց ջուրն չի խաղալ
զերդ . եաղութ . և յեծ երկու և երէք մախալ
այլ կու լինի' և արժան է ։

Սեյմանի է սոսկտակ . մէկ տանն սպի
տակ և մէկ տակն սե . և մաւին և սպիտակն
լաւ է . և խիստ պինտ է 'ի բանինն . և մօտ 'ի
Ֆռանիկ պատուականն է այս քարս ։

Սեպառ . և է սե քար և Թեթե և խիստ խո

բու սև է գոյնն, և թէ՛ ՚ի ջուրն ձգես նա՛ ՚ի ջրին երեսն ելնէ: և եւր խասիածն այն է՛ որ թէ՛ ՚ի փոքր տղեկան աչաց դէմն կախեն՛ ՚ի օրանն, նա զփոքր տղեկան զլուրջ աչքն սևացնէ, փորձած է՛ և հայիլն՛ ՚ի յայս քարս զաչաց լոյսն աւելցնէ:

Տէ՛հնէ՛Քուանկի, որ արապի տէ՛հնէ՛ճ ասեն, թէ՛ քացխով կամ լիմոնի ջրով ելլի ջր հարդար դանակին սրբես՛ նա ոսկէ գոյն կամ արծաթի գոյն ելնէ՛ ՚ի դանակն, ինքն քար է կանաչ և Փսթուղի գոյն, նօղդա մի Փստուխի գոյն, նօղտա մի կանաչ, և ոսկէ գոյնն որ ելանէ՛ ՚ի սրբածն՛ լաւն այն է, և՛ ՚ի աչաց դեղսն մտա նէ, մէկ մաղալն, երեք ուիալ, և չորս ուիալ արժէ՛ և՛ ՚ի կրակն չեմ՛ փորձեր:

Փիրօղայ, երեք ցեղէ՛ իսհաղի, նշապուրի, և շպապէքի՛ լաւն սափն է՛ որ առանց տամարի լինի, և գունով իսհաղին է, և այլ բացագոյն նշապուրին է, և շպապէքին սպիտակգոյն շուտ ծերանայ և կանաչի: և ասացեալք են մն փիրօղային՝ թէ ովոր՛ ՚ի մատն հագնի՛ ՚ի դրամէ պակասութի չքաշէ, և խօսքն ընդ ունեւի լինի, և չէ պարտ հագնողին որ անպատէ՛հ խօսք խօսի, և մտած է թէ փիրօղայ եմ՛ հագեր խօսքս ընդ ունեւի է, և կու այրի՛ ՚ի կրակն: և իսհաղին՛ որ թէ միջակ բակլայի չափ լինի, յիսուն ուիալ աժէ, և նշապուրին կէս գինն աժէ, և շպապէքին երկու դրամ արծաթ աժէ:

Սնազ-իսֆղայ՝ որ է արծաթի քաշող, որ զարծաթն՛ ՚ի յինքն քարշէ, թէ՛ հանցոր ոսկւոյ և երկաթի և պղնձի և այլ խարտուք որ՛ ՚ի մէկ տեղ լինի, այս քարս զարծաթն ըմբունէ ուր մղլադ ուղն զերկաթն: և ժանկառի գոյն է այս քարս, և թափանցնի, և սուղ է, և՛ ՚ի հապա

Ինու երկրէն ոգայ. ապա հնդիքն խիստ կու
զեն զայս, և ասէն մղնադ-իսֆղայ, որ է արծա
Թի անդամանդ, և զարծաթն քարչէ յինքն ուղ
զագահ մարդ, որ միշտ արծաթասէր և ար
ծաթ քարչող է:

Օ այսոսիկ բանաս, որք վն ականց են՝ զորս և
ահաւասիկ գրեցաք այժմու ժամանակիս, ժա
մանեալ ոմն քահնայ սարգ-իս անունամբ՝ ՚ի մերս
ազգէ, հմուտ և տեղեակ բանից գրոց, որ
բնակէր ՚ի քաղաքն բերիայ՝ որ այժմ ասի հա
լապ: Եւ էր կարի վարժ՝ ՚ի լեզուն արապի, և
օսմանցու, և ֆուանկի: այլև ծանօթ հոռոմի
լեզունն և ջհտի լեզունն: և էր ինքն արունես
տիւ ակնագործ՝ որ զպատունական ակունս հար
թէ և շինէ, այլև գնօղ և վաճառօղ սոցին: և
եղև ՚ի գնալն մեր յեհմ՝ յորժամ հասաք ՚ի հա
լապ՝ պատահեցաք այսմիկ սարգսի քահնայի,
որ ՚ի կարգս զրուցաց հանապազ խօսէր ընդ
մեզ զորպիսութենէ ականց՝ և բանք նր եբր
զհաւաստի թունելով ՚ի միտս մեր. աղաչեցաք
զնա թէ զայրօսիկ զորբանիւ ասես, գրով շա
րադեալ տուր մեզ վն օրինակի: և նա վն մերոյ
խնդրոյ գրեալ ետ, և մեք վասն հասարակաց
օգտի իմէջ այս պատմագրիս շարակարգեալ
գրեցաք: Մախ զի մեր է խնդրեալ: և Երկ
րորդ զի նորագիւտ է բանս: և ՚ի ձէնջ պա
տահողացդ խնդրեմք, նախ մի առնել մեզ
բամահանս, և երկրորդ, ասել ՄԾ ողորմի
տեառն սարգավոն այնմ, և մեզ. ասեմք և մեք
և ձեզ ամէն:

Իսկ որք զինի գրեալ բանքս են՝ որ վն ականց,
հառաջնոց ժամանակաց կայր օրինակն, զայն
ևս ՚ի տյն կարգ գասեալ գրեցաք վն օգտի ըն
թերցողաց, ՚ի փառս ՄԵ:

Աստ գիրք Ջոհարացն՝ որք կանխկերպ ստեարհի թէ յոր տեղաց հասկու լինի : Կտի և առաջին ալմաստն :

Բլմաստն, տամսկերկու ազգք էն՝ յերկուց ատեղաց էլանեն, ղատիմին՝ ի գուլումաթէն է : Բսացին թէ աղէքսանդր գնաց՝ ի գուլումաթն ի լեռան մի տակ հասաւ յանկարծ ձիոյն նաջն զըլգաւ, հարցաւ թէ ղինչ լինի այս . իմաստունքն, որք կային ի հետն՝ ասացին թէ այմաստ է, յերկնից ցողէն հասլ լինի . աճամն խուդայի կասէ գորա : ասացին աղէք սանդրի՝ թէ այս լեռան յետեն աւազուտ գաշտէ, ամէնն ալմաստ է և անմարդաբնակ է, և թռչնոց ի զատայլ երք չկայ՝ ի հոն : աղէք սանդր ուզեց՝ ի յայն ալմաստէն . ասացին թէ հեծեալքն թող ի լեռան գլուխն ելնին՝ և ի լեռան գլուխն անասնոց լաշ ձգեն . ի հոն մեծք թռչունք կան, ալմաստն կու կանայ՝ ի լաշերն . կառնուն թռչունքն ու կելնան՝ ի լեռան գլուխն նստին ուտեն, նա հեծեալքն երթան թռուցանեն՝ ինչ որ կպեր է ի լաշերն ամէն ի հոն կու մնայ, և այնպէս արարին որչափ կարացին : այն ալմաստն խիստ ղեմաթով է, և այլ մարդ ի հոն չէ գնացեր, ու այժմուս ժամանակիս ինչոր հին ալմաստ կայ յայն ալմաստէն է : Դ հնգկաց երկիրն կասեն թէ խիստ ղեմաթունի, ապա ի ամէն աշխարհ ղեմաթ չունի մօտ՝ ի Ջոհարջիք : կրակէն կու ելնայ քան զնորն աղէկէ, ու վեց թարկէ յոգ կողմն չըլես երեք թարկ կու երկնայ : Ջոհարջիքն ասացին թէ քան զտասնևմէկ ղերատն վեր չի լինիր, շատ սուտ է, քանսկերեսուն էլ կու լինի՝ չեն տեսեր Ջոհարջիքն հին ալմաստ : Բպա նոր ալմաստն ի կուճրաթ, ի տաքան, ի քալբար կայ, իմէջ մահուոյ տելիպէջանայ կարու ձանի :

Ճաննի փոռայ կե լնայ , երեսուն ու քառասուն
 ղիրաթ կե լնայ , կու փորեն քանց խոր , ու տա
 մար ունի իմէ ջ տամարին կու լինի՝ կու հանեն
 լուճանն՝ ի հողի միջէն կու ե լնայ . եթէն ըւանկ
 կու լինի՝ հինգ ցորենն մէկ մանձաղի կասեն :
 կու ե լնայ նաբաթի՝ զէյթի՝ ֆատղի , պիլօրի՝
 դեղին , կարմիր , սև : քանց ամէն աղէկ նաբա
 թին է , ու պիլօրին , յետև նորա զէյթին , ու
 ֆատղին , այլ պաղիքն քան զէսոնք չեն : ալ
 մաստին ղիրաթն հինգ ցորեն է՝ ճոհարներուն
 թգւրն ալմաստն է , երկու ղիրաթ նաբաթի
 կամ պիլօրի աղէկ ջրով՝ որ լաբա չի լինի՝ ի քալ
 պար կայ , երկու ֆլօրի առնուլ կու լինի . ու
 ֆուանկին քառասուն ֆլօրի ծախել կու լինի .
 թէ մուշտարի լինայ այլ աւելի . թրաշէն ե լնու
 ծակելն զատ ի ֆուանկն էլ մարդ չի գեանար :
 թրաշեղածն՝ չորս ղիրաթն տասնհազար օթ
 մանի ծախել կու պիտի : ֆուանկն ի հալապ
 կարջի ճոհարներու թգւրն է ալմաստն՝ ամա
 առանց թրաշի երբ մի չէ՝ էնոր համար որ ի
 քաներն խառնակ շատ կե լնայ , հաղի թրաշ
 չեղնայ մալում չի լինար : ինչ խասիաթն հար
 ցանես՝ նամարդ որ ըւանկն մաստնայ լինին ա
 ալմաստն տանի ու թգւրաց քողցր երևնայ , ու
 խօսքն դաբուլ լինի , ի չարէ չլախենայ , փոր
 ցաւու թիչ քաշէ՝ կամ քերջալիաթի մոռացկոտ
 չ լինի , տայիմ ֆաուահ կենայ , թէ ուղեն որ
 մանրեն իվր ալի ոյ տան մարդոյ մահադեղէ :

Եւ ղու թի ղիրաթն չորս ցորենն է , եւ
 ղու թի յերկու երաց հասլ կու լինի . ղադի
 մի , սէյլան հանլ կու լինի , կղզի մի է չորս
 ֆարօանկ լայնքն է , չորս հարիւր ֆարսանք
 երկայնքն է , այն լեռանն սալանդիր տաղի
 կասեն , ադամ ի յայն լեռուն կասեն ի գրախ

տէն իջաւ, ասեն այնչնոր հիւն եաղութն եղաւ, այն լեռնէն 'ի զատ այլ տեղ չի լինիր: Տանց իմացիր որ չորս գոյն ունի, կարմիր ու լուրջ գեղին ու սպիտակ: կարմիրն եօթն գոյն է, ծովագոյն, նռնագոյն, արղաւանի, տուրտի, խրմբի, քացխի գոյն՝ պալխի: Ու լուրջն հինգ գոյն է՝ երկնեց գոյն է, լեղկի կանաչ կուզար կէ: գեղինն չորս գոյն է՝ մոմի, թուրնձի, յերգե պլօրի, այսոնք շատ հասլ կու լինի, ապա ղի մաթ չունին, էնոր որ դեռ խամ է: ծովագոյն կարմիրն թամամ այտրն ջրոյն որ քսան ղերաթ լինի երկու հազար Փլօրի արժ է: զատ զսէյլա նայ մադանէն այլ տեղ չկայ՝ և ոչ 'ի խորասան: եաղութ լուրջ գոյն թաւուսի ունի ու ամա նի 'ի հնդասան ղիմաթ ունի. զէրայ հնդեքն թագպանտի գլուխն կապեն. ու գեղինն 'ի շրվան գին ունի խուշակի, խիստ աղէկ է՝ ու գեղին ճանաչելն դժար է. զէրայ ֆռանկն զպլօրն կու ներկէ որ եաղութն չի ճանչլիր. աղէկ մարդպիտի որ ճանչնայ: Տանց իմացիր յայնլը հըրն իւր ջէնս եաղութն հասլ կու լինի: ու 'ի թերմիլ կանաչ կարմիր հասլ կու լինի, կասեն թէ զապրաձաթն այլ յիւրմէն հասլ կու լինի. այն տեղն՝ որ եաղութն հասլ կու լինի ջրոտ տեղ մի է. մարդեք քանց խոր փորեն աւազուտ տեղ մի է կու լուճանան. կահկահ քար կու ել նայ՝ որ կնաջ ու սպիտակ թէ լերես տամար կու լինի փայլուն իմացիր այն հըւր. մէկ մարդ զու նար կանաչ ջրով որ ամէն դեպքէն Տանց կա սեն որ ամէնդեհաց ջուր կու է թէ նր գինն, երեք հարիւր Փլօրի է՝ միջու սէյլանի մատա նէն հասլ կու լինի ղիմաթ չունի, տան ֆլօրի 'ի յարապատան գին ունի: Ապա եաղութի նոր մադանն մօտ 'ի պանտարն պանկալայի ծովէ:

Ժողեղերն հասլ կու լինի, պանկուկուսան
ճղերայ մի է, եաղութն որ աղէկ ջրովն կանաջ
գոյն ու նուան գոյն է, 'ի յայն ճղերայն հասլ
կու լինի մանշուր է բրքնակի որ քարպի կա
կուղ է, 'ի կրակէ 'ի դուրս չի ելնար, սեյլանն
քանց այն այլ աղէկ է, մօտ 'ի ֆուանկն պինտոն
ու կակուղն մէկ է, համան լու ուանկ թող
լինի ղիմաթունի, գեաղութն ջրով ու նուան
գոյն կուղեն 'ի կակուղն չեն հայիր:

Եւ այն՝ իմացիր որ յառաջ ժամանակն լալ
չկայր, թիւր մի ջէմէտանուն՝ 'ի նորա ժամա
նակն ժաժք եղաւ որ շատ մարդիք մեռան՝
մօտ 'ի պալաշխան բարձր լեառն մի կայր, 'ի
ժաժքէն պատառեցաւ այն լեառն՝ Մ. յ սքան
չելեօքն լալն 'ի հօն երեւեցաւ այս աղէկ լալերս
որք կան 'ի մարդիք 'ի մօտ, 'ի յայն լեռնէն
այլ տեղ չկայ այնպէս, որ ամէն երեք հար
իւր տարի ապա մէկանգամ 'ի դուրս կուգայ:
ապա լայն եօթն գոյն ունի, ասֆուռի, ու
մանի, աթաշի, յունանի, խըմրի, աղրապի,
պասալի: գիտացիր, որ տասնեւմէկ ղերաթ
թամամ այար լինի, քառասուն ֆլօրի աժէ.
ապա թէ երեք կամ չորս ղերաթ թամամ այար
այս վառան լինի, փաք ղերաթն հինգ ֆլօրի
աժէ, ուամանին ու աթաշին 'ի դորա կէս
գինն աժէ, ու պասալին էլ: գիտացիր, որ լալի
խասիաթն տաք է ու չոր. ասացած են իմաս
տունքն՝ թէ ոլոր 'ի հետն լալ պահէ ամէն մա
րաղի աղէկ է միջացաւ լաւ է՝ մարդկան
աչաց աղէկ երկնայ, վատ երազ չօեմնու, տղայ
ոց հետ պահելն չէ լաւ, դիւաց այլ աղէկ է,
'ի մաջուն խառնէն ուրախ առնէ, երեսի գոյնն
կարմիր լինի մատայ բանայ:

Օ միութան, երեք ցորենն մէկը թլէ, ընթ

լայ կու ճախուճի, իմացիր որ յառաջ քան հազարև հինգ հարիւր տարի, յերկու բանից հասլ լինէր, և իւր մատանն մարաւօտն է, էն զմրուղ թի, գինն, հինգ հարիւր և տասնեւեց ըսիթլ լինի ֆլորի է, ապա այս զմրուղ թս որ 'ի մարդկաց ձեռն է 'ի ֆռանկատան հասիլ կու լինի այլ ատեղ չկայ. երեք գոյն է, ըռզիանի ռեհանի, բանջարի: ռեհանին ու բանջարին աւելի գին չունին. ապա ըռզիանին մէկ մթղայն 'ի հնդստան, երկու հարիւր ֆլորի գին ունի, աւանինն այլ է այն գինն է: հանց ասացին թէ զմրուղ թի թապիթն պող է և չոր, և այլ քասացին թէ պղէկ է՝ ովոր 'ի հեան պիտէ աչաց ցաւ չտեսանէ, լոյսն աւելնայ, երկարա ժամանակ լինի: հաւ կոյր չլինի: Մսացին թէ զմրուղ թն վայիգահարն քանց ամէն զահր է, մարդոյ որ զահր տուճած լինի, երկու դիւրթուա մանկ ուղտի կաթնով տան նա ազատուճի Միջ, բրտունքն 'ի դուրս ձգէ՝ և թէ վիշապօճ տեսնու 'ի դիմացն բռնէ աչքերն պատուի. կարծ կամ օճ խայթէ վարդեջրով հմայեն իվր քսեն ողջանայ, ցնոր չբաշէ կամ հոգայ:

Իմացիր որ Մարդարիտն, յերեց բանից 'ի դուրս չէ 'ի պահրե դատիֆ հասլ եղաւ, ճը դրայ մէլ կայ դեսիմալարան մօտ 'ի դատիֆ լաւ մարդարիտն 'ի յայն ճգիրայն է: մէկայլ գահ թեռեհ մօտ 'ի պանկալայ քապուլ մանշուր է 'ի հոն շատ հասլ կու լինի, ապա մէկ սողալ կամ կէս մողալ պիկաա կու գտուճի, ապա մանր շատ կու գտուճի մէկայլ 'ի մըրայմօտն կայ շաման ծովկայ բոլորն բանտարներն շատ կու բերեն: իմացիր որ դորա ջանավարն քանց հաւ է՝ ու զսերմն քանց ձկան կու ձգէ 'ի ծովն, սա դափն 'ի նորա սերմանէն հասլ կու լինի՝ երբ

անձրեւն գայ 'ի մայիս ամիսն լինի, ելլան 'ի
 ծովու երեւն տաքնան ու գոյանան, և գեղերն
 երթան 'ի ծով, մինչ 'ի քառասուն օրն հանց
 առնեն ապա գոյանան. խաղակն ու գեղինն 'ի
 տարէն եղանակէն է' գիտացիր, որ ութն ղի
 րաթ դումաշ լինի' աժէ ութսուն Փլօրի. Թէ
 մէկ մ'թղալ լինի սպիտակ քափուրի, հազարե
 հինգ հարիւր Փլօրի աժէ' չորս ղերաթ'ն վաթ
 սուն աժէ' երկու ղիրաթ սպիտակ քափուրին
 քառասուն աժէ : ղեղին գոյնն մոմին գոյնն
 գին չունին . Թէ հարցանեն այս ծանրութե
 մարգարիան ինչ աժէ, հարի չտեմնուս գին
 չդնես : խասիաթն սուր է ու թաց է . շաքուին
 աղէկ է' աչից եռալուն . Թէ ալաջայ լինի
 մարդ, սղկեն ու քացախով քսեն . ողջանայ Վի :

'ի մացիր' որ փերուզայն . 'ի չորս իրաց գուրս
 չէ իւր մադանն 'ի նշաւուր է . աղէկն ու ղեմա
 թովն 'ի հոն կու լինի : երկու մատանն 'ի խո
 ճանտ է . այն էլ հանցոր հինգ Փլօրին պակաս
 չի լինիր : երեք քանն 'ի քերման 'ի գեղն շա
 հաւաք է' քանց առաջինքն չեն արմուխ ամէն :
 չորս քանն 'ի սպիր է ղեմաթ չունի' քանց
 նշաւուր այլ աղէկչայ : սղէկ սափին' քան
 ղիրաթն չորս հարիւր Փլօրի աժէ : ու սափի
 աղէկն' մէկ ղերաթն մէկ Փլօրի աժէ : ապա
 զաւալն 'ի մէկէն է 'ի թացէն 'ի կրակէն 'ի
 քաւուրէն : Թէ պահէն իւր գոյն չի երթայր ջո
 հարջիքասացին' Թէ քանց ամէն քարեր աղէկ
 է : շատ խասի' Թ ունի' ուր հետպահէ խլմն
 Թգւրց չտեսու . վաղ վնէքն 'ի նա հայի հոգ
 չի քաշէ . աչից շաւի աղէկ է . Ժամանակ եր
 կայն' պարաքաթի մալի . վատ երազ չի տեսնու :
 Փազահր 'ի հետ պահէն շնորհաւոր է . մա
 թօլի հայաթ կասեն . որ շաքաթն վեց ղիրաթ

Տարնէ իվր քարին ուտէ իւր Ժամանակն
 Տարիւրեքսան տարւոյ լինի ցաւ չտեսնու. ով
 ուտէ կամ 'ի Տետ պահէ սրտով լինի. վատ
 աչք չթանի. օձ կամ իժ չխայթէ. ուտողն
 վարդի ջրով Տարնէ ուտէ. էլմով ուտէ որ 'ի
 յակուան չի Տաննի զարար է. Թէ ասես ուտի
 Տապ կու լինի. նա լեռնաթի կայ շիրազայ մօտն՝
 շապան քար կասեն այն լեռանն որձ եղան
 կու լինի. մեծ կոտոջներ ունի այլ խոտ չի ու
 տեր՝ շապան քար կասեն այն խոտէն 'ի զատ
 այլ խոտ չի ուտեր. էն ունի զփայզահրն 'ի
 փորն: Կաս մոմիայն այլ յայն լեռն կու լինի՝
 խորու ձոր մի կայ յայն քարերուն կու կաթէ.
 տարին Տազար մխալ անձախ Տասիլ կու լինի.
 խասլիաթն այն է՝ որ բարձր տեղաց անկեալ լի
 նի ուխուրտ՝ նա կէս մխալ խմյնեն որջ լինի:
 Լեւոն տեղն Թիւրական է. Տարիւր դօշէն ապա
 մէկ դօշ Տապ կու լինի. այն որ ունի լաղար է
 ումեծ կօտոջնի ունի՝ և իմէջ ճրօրվին կու լի
 նի ուկակուղ է երբ 'ի բերան դնեն քար կու
 դառնայ. Թէ տանս մ'Թղալ լինի երկու Տա
 րիւր Փլօրի աժէ. և Թէ երկու կամ երեք
 մ'Թղալ լինի տանս Տինգ փլօրի աժէ: շատ
 կան որ ամալի կանեն. կամիս որ գիտնաս՝ Տա
 րէ իվր քարի՝ Թէ սպիտակ ելնայ՝ ամալի է. Թէ
 այլ գուն ելնայ. նա Տաւան է: Փայազահրի
 տեղն առ նավէ տաճրի պն կրով բօտ 'ի ձեռնդ
 դեղինն աղէկ է. կրակն Թէ ծուխ եղաւ՝ ի
 տեղն իրբ չմնաց աղէկ է. Թէ Տաւանաց վատ է:

Այլ ևս բան վասն փանդահրին.

ազարը լԹէս՝ որ է փանդահրն և Տայք Թու
 նադեղ ասեն. և այսոր բնութիւնն դաւադ
 Թրիաքի

Վ Իրատ և Որպեսութի Փանդահերն: 572

Թրիաքի բնութիւնն ունի. և կերպն նման է կաղ
 նոյ պտղի. և երկայնուկ և բոլոր լինի մէկ
 մէկին երբ և տակ վի տակ է. մէջն ույ կուտէ. և
 գոյնն այս քարիս հողի գոյն է՝ և ՚ի սեուծի
 զարնէ և քիչ ՚ի կարմրութի. լաւն այն է՝ յոր
 ժամ կաթնով ի վր քարին քսեն կարմրագոյն
 լինի. և այն որ լաւ չէ երբ որ տրորեն գոյնն կա
 նաչ կու լինի. և զինքն ՚ի վայրի քօշի փորն կու
 գտնուեն. ՚ի շիրվանու դեհն կու լինի. և
 բժշկապետերն խօսք շատ են ասեր. և հաքի
 մարանիս շինողն ասերէ թէ այն եղին կերա
 կուրն քան զօձ քան զմուղալ ասեն՝ այլ կերա
 կուր չուենի. և այս պատճառաւս այս քարս կու
 կապ վի յեղին փորն. և այնոր համար թրիաք
 ֆառուխ կասեն. և այս քարիս հարելոյ գոյն
 շատ կու լինի չէ լաւ. ապա լաւն այն է՝ որ հա
 րեն կարմրախառն սեւագոյն զարնէ. և ՚ի շամ
 գերդ գայդ փանդահրդ կուզուգեն հանց որ
 մէկմէկից բուանց կուճանչ վի. և իւր փորձելն
 այն է որ զասեղն ՚ի կրակն դնեն որ կարմրի ապա
 կոխեն ի վր այն քարին թէ շինուած ու է՝ սեւա
 ծուխ ելանէ՝ թէ ստոյգ փանդահր է դե
 ղին ծուխ ելանէ: զինքն ըուաղիանի ջրով
 տրորեն և օձ են օձահարի օգտէ. և յայն պահն
 զցաւն խաղաղցնէ. և օգտէ նմ գազանահարի
 և զարուծիւն խաւիանէ: և թէ տասն և երկու
 գարի քաշ տան օգտէ սրտին վատուծութե և
 անձինն ուժ տալ լաւ. և իւր առնելուն չափն
 կէս դանկէ ուլ ամէն օր ասկից կէս դանկ
 ուտէ խլսից նմ հար վտանկէ՝ և յամ մահացու
 գեղոց. և տեք շնութե էլ օգտէ. այն պատ
 ճառովն որ այս խասիաթն կու գործէ զբանն
 ոչ բնութենովն և այս դեղիս բնութիւնն խիստ
 յոաք է՝ գիտացիր:

Հանց

Հանց իմացիք որ անդարն 'ի Ըօճարի կարգ չէ • ապա 'ի Ըօճարի կարգ բան աժի • յեամա նի ծովերեսն կու լինի զուրումաթն քանի մի կղզի 'ի հոն ծառեր կան • յայն ծառերուն քանց տրիս քանց մեղր իջնու • խիստ շատ ճանձ իջնու 'ի վրան • իջնու 'ի ծառերուն շատ որ քանց առու ելնայ երթայ 'ի ծովն 'ի ծովու երեսն քան զմով բանէ ' յեզր զարկէ մարդիք 'ի շուռ գան 'ի ծովեզերն' ու ժողովեն հինգ լիտր ու տասն • անգամ մի պագրկաներն քանց քար մի գտան որ մարդ չէր հանդիպէր 'ի վրան • քան զքարէրդ արձեր • Վիտացիք' որ ամպարն չորս աղգ է • շամամի' ու խաշխաշի' ու Թափաղի • և Փստղի շամամին բոլոր կու լինի' երբ կտտ բեն ի վր նա քանց խաշխաշ լինի խաշխաշին էլ այնպէ Թափաղին էլ սպիտակ է մէջն ու ամուր է : Փստղին կակուղ է : զշամամին իմանամք տասն մ'Թղալ հինգ Փլօրի առնուք կու պիտի • և յայլ տեղ ծախես նա տասն և հինգ' և այլ աւելի կու բերէ : խաշխաշին չորս Փլօրի առնուս տասն և երկու կու ծախուի • Թափաղին ու Փստղին երկու Փլօրի գնես վեց աժի • յայլ տեղ ամպարն անոյշ հոտ ունի' զմարդոյ տամաղն անուշ պահէ • սաւ դան տանի • աչից աղէկ է • բերի, գլխացաւի աղէկ է :

Վաջվարդի քանն 'ի պալաշխանն է • 'ի բոլ էլ կու լինի' ամայ ամալի է • ինչ որ 'ի տներն կու բանին քաշի է 'ի շամիշաղ սեւագոյն քան մի կայ սղկեն ու բերեն ծախեն, 'ի դուլէն' ի դուրս չէլնայ • պալաշխին տասն օր 'ի կրպն կենայ չի աւիբի' զէրայ Ըօճար է • հանց իմացիք' որ աղէկն քանց հաւկիթ զկեղև ունի սպիտակ ու կա կուղ • հարիւր մ'Թղալն քսան և հինգ Փլօրի աժի • խամն էլ վասլայ վասլայ կու լինի հա
բիւր

ըիւր մթղալ լուանան քանեւ Տինգ մթղալ կենայ. ով գիտէ լուանալ շատ շահ ունի. ան լուայն քանց քաշի է: ամալին ու պալաշին կրակն գիտէ. աչաց աղէկ է քանց ծարիր քա շէն յիստակ պահէ. ճինար ցաւի աղէկ է. մի ջացաւի՝ ի թարքիոյ ձգէ:

Մարջանն յերիս տեղիս կու լինի՝ ի քաղաքն թուսէ՝ ի մղրիպոյ գեհն է. այլու՝ ի ծովէն կու հանեն քանց մարգարիտ. քանի որ ի ծովն է կակուղ է՝ երբ հանեն ի դուրս ամբանայ. քաղաք մի էլ կայ՝ ի Ֆռանկատան քիսոյ կասենս՝ ի հոն էլ կու լինի: ի հրմզայ պանաարներն էլ կու ելնայ սև կու ելնայ. ուտր կասենս՝ նր սպի տակն իրք մի չէ. կարմիրն նաթրաշն ի կու ճրաթ գին ունի. թրաշեղածն ի յարեւելք արծաթի հետ բարաբար առնուն. խասլիաթն մոռացկոտին աղէկ է. գլուխն չժածի՝ սրտի ուժայ՝ թութիայն խառնեն աչաց աղէկ է:

Մզեղն երիս տեղիս կու լինի՝ յեաման՝ եր կու ի կու ճրաթ՝ պարվաճ շատ հատ կու լինի՝ երեք ի քալպարկայ. քանց եաման ինչ են. եամանի խասլիաթն յինքն հայիլն չարկամին աղէկ է. տղացկանի հետն աղէկ է:

Յեաշմ իմէջ խաթայու և չինայ գետ մի կայ իւր քարերն յեաշմ է՝ հինգ գոյն ունի. սպի տակ գէյթի՝ կանաչ՝ սև՝ բլղիանի: գէյթին քանց ամեն աղէկ է՝ ջոհար է. յայնտեղն ովոր մի հետ չի պահե նր է հտիպար չեն էնէր. աս ըին հենց զար Փլորի հասիլ կու լինի. ով հետ պահե լաժք չի լինի. մարդոյ սիրտ չի թռնայ կայծակ աղէկ է:

ԾԻՒ



ՍԻՆՔԻՒՅՆՏ ԵՐԿՈՏԵՍՆ

ամի կենաց իմոց նուաւստ յօհաննիսի՝ որ ծա
նեայ զիս . բայց վնջ ինձ զի զպատուիրա
նաւն Մ. յոջ գնացի : Եւ 'ի մերս հայոց թուա
կանի հազար և քսանւմէկ . էր ոմն թագաւոր
ատրպատականի 'ի յայլազգեաց դահման ա
նուն շահ կոչեցեալ 'ի կարմիր գլխաց . յոյժ
խաղաղասէր և անագահ մինչ ասիւր 'ի ծերս
գունից թէ զհնգետասան ամի հարկն ոչ է
առեալ յերկրէ իւրմէ : այլև զբաջ վաճառա
կանաց՝ և զմաքս՝ զոր վն իւր 'ի գանձի իւրում
ժողովեալ լինիւր . էբարձ յաշխարհէ տերուե
իւրոյ : Եւ կանայք լիտիք՝ որք 'ի բողաբին
նստեին և հրապարակայայտ զբազումս խոտո
րեցուցանէին՝ և զհարկս տային յարքունիս : և
զանասելի օձրագործութի սողումականաց ախ
տիցն բնաւորեալ 'ի պարսիկս՝ զայն ամենայն
վճուի հրամանաւ խափանեաց՝ և ուր ուրէք
թէ երևէր չարացար տանջանօք սպանանել
հրամայէր : և 'ի մերում թուիս հազար և
քսանւցորս մեռաւ ասացեալ շահն թագաւո
րեալ ամս յիսունւմէկ :

Եւ ոմն 'ի յորդուոց նր իսմայէլ անուն զոր
յառաջագոյն 'ի հօրէ իւրմէ արգելեալ կայ
'ի կլայ վն իրաց ինչ յանդգնութե և այժմ
ելեալ թգլրեաց 'ի տեղի հօր իւրոյ և սուր 'ի
գործ արկեալ սպան զեղբար իւր հորազատ
թուով եօթնս . և սկսեալ զնախարարս զօրաց
իւրոց սպանանել զոմն յայտնի և զոմն գաղտնի .
մինչ գրեթէ սպառել ջանայր զամ ազգն Պար

սից
ԻՆ

սից. և զայս ծանուցեալ տիրատեաց Պարսիցն
 Թէ հասեալ է կորուստ անձանց իւրեանց :
 Իմն ամիրխան անուռն իշխան Թաւրիզու . և
 մահմետ ոմն իշխան արարադեան գաւառին ,
 մականուճամբ Թօխմախ կոչեցեալ . և այլք
 ոմանք՝ զորոց ոչ գիտեմ հաւաստեալ զանուճ
 անս նոցա . միաբանեալ ընդ արբանեկաց իս
 մայիլի սոյանին զնա՝ ՚ի գաղտնի . ոչ գիտե
 լով զօրաց նորա զմահ նորին իսմայելի : և ՚ի
 դիւան դատատանի յոչ նստիլն ասացեալ լին
 նիւր յոմանց Թէ ՚ի լրտեսու Թիւն գնացեալ է
 յայլոց Թագաւորաց վիճակ՝ և դառնալոց է
 մինչև ՚ի յամ մի . զայս կարծեցեալ լինիւր . և
 յետոյ ստուգիւ իմացեալ ամենեցուն զկո
 րուստ նորին :

Իւր դարձեալ ամբն միաբանեալ գնացին ՚ի
 խորասան՝ և բերին զոմն խուդաբանդայ կոչե
 ցեալ՝ շէխ գոլով եղբայր իսմայելին . և որդի
 նոյն Թահմազ շահին կարգեալ ՚ի հօրէն իւր
 մէ տէր աշխարհին խորասանայ . զնա Թագաւո
 րեցուցին ՚ի տեղի իսմայելին : բայց անարի և
 վատթար ՚ի գործ Թագաւորու Թէ և սակա
 սեալ ՚ի լուսոյ ևս :

Ի սորա յերկու ամի իշխանու Թէ Թգւրն
 բիւզանդիոյ ազգաւ օթմանցի մուրատ անուռն
 որն խոնդքար ասի . զհրոման էհան զօրաց
 իւրոյ գալ իվր աշխարհիս կարմրագլխոյն . և
 ելեալ ոմն զօրագլուխ լալայ կոչեցեալ բաղմօք
 զօրօք եկն ի ՚ի հաս յերկիրն արարադեան . և
 գերեաց ընդ հայ և ընդ տաճիկ Թուճով վաթ
 սուռն հազար . և արեալ խաղացոյց յերկիրն
 հոռոմոց : և ՚ի միւս ամին դարձեալ շարժեալ
 խաղաց իվր վրաց և հասեալ ՚ի փայտակարան
 քաղաք որ է տիխիս . և շինեաց բերդս ՚ի նմա
 և

եւ ամբացոյց եւ եգ անդ արս քազուսն պատե
 ըարմոզաց : Եւ զոմն քազրատունի թգր վրաց
 սիմոն կոչեցեալ որ երբեմն վն անհնազան
 դուէ ըմբուեալ էր 'ի յառաջասացեալ թա՛հ
 մազ շահեն' եւ տկարացեալ 'ի հաւատոցն . եւ
 կայր առ նա ընդ ձեռամբ : Իսկ 'ի թգրելն
 համայիկն շխորհեաց զհայրենի իշխանութիւն
 եւ զտեղիսն սիմոնն գնալ իշխել իւրոցն . եւ
 օրինօքն մնալ մահմետի : եւ նա գնացեալ 'ի տեղի
 իւր 'ի տփխիս յանդիմանեալ եղև յառաջնոր
 դաց եւ 'ի քահանայից իւրոց . մանաւանդ 'ի
 կնոջէն եւ յընտանեաց իւրոց . ուրացօղ եւ ապե
 ըախտ կոչելով զնա' եւ ոչ հաղորդելով լնմա : 'ի
 յայսմանէ ստըջացեալ նր զղջացաւ 'ի տաճկու
 թէ եւ դաւանեաց վերստին զխաջն Վի երկը
 պագելի . եւ զխաջեալն Վն' Վճ ամի . եւ լուր
 եղև համբաւս այս առ Պարսիկան . եւ զի մե
 աւալէր իմայէլն' եւ այլքն ոչինչ կարելով առ
 նել նմա . շխորհուկս եղեն կալ 'ի բրիտաննեու
 թե' գոնեաց միայն հաւատարմութի եւ մտեր
 մութի արասցէ ընդ տանն շահին : Եւ այժմ
 լալայն փախոյց զսիմոնն զոյն . եւ շինեաց յեր
 կիր նր զբազում բերդս' զոր ոչ գիտեմ' զոճն
 գրել վն անտես լինելոյն մեր 'ի տեղեացն . սա
 կայն լուաք թէ 'ի տփխիս' 'ի դումանիս' 'ի
 գօրի' 'ի լուի' եւ յայլ տեղիս շինեաց բերդս
 եւ եթող 'նմա զօրս . եւ ինքն անցեալ 'ի յրթանս
 գնաց 'ի դուռն երկաթի . եւ շինեաց անդեա
 բերդս' եւ ասի դամուր դափի եւ ի զօրս 'ի նմա
 բազում . եւ զօրագլուխ ոմն օսմանն նուէն յոյժ
 հնարաւոր եւ անողորմ . եւ թքնդարձաւ առ
 թգրն իւր' եւ սատակեցաւ 'ի նմանէ 'ի խօսս
 քսուաց . բայց վրէժխնդրութի ՎՅ ոչ էա
 նմա կեալ վն արեանց անմեղաց :

Իսկ 'ի Թոճին Տաղար քաանուութն եղև սաստիկ և մեծ փարածամ մահ 'ի յատրպատա փան և յամենեսեան աղոճանս . և կոտորէր զբա յունս յամենից ազգաց մինչ բազումք աունք անտերունչք . և բազումք հարք և մարք ան զաւակք մնացին . և երկիրս աղոճանից իմէջ այսպիսուոյ վտանկի գոյով զմեռեալսն սգալով և զկենդանի զանկեայսն և զինքեանս ևս հոգա լով մտածմամբ ասին՝ ո՛հ Թէ զերծանիմք 'ի տարածամէ մահոճանէս՝ Թէ ոչ: Ի յայս յեղա կարծ ժամուս յանկարծակի եկն և էհաս վի բարն և զօրմահուն մոռացեալ օսմանն այն . զոր յառաջագոյն ձեռնարկեալ առ Թաթարսն՝ որ զայթաղ ասի . և զամենայն կովկասային լեռ նական լակզիսն ժողովեալ առ ինքն 'ի դամուր զափի . բազմօք և անթոճօք արեանարբուօք հե ծելովք . և նորօք էլ և եկն յայսկոյս կուր գետոյն . և զիշխանսն գանջայոյ և պարտաւոյ փախստա կան արարին . և ինքեանք սփուեալ ընդ դաշտս և ընդ լեռինս . զգանջայ և զպարտաւ . զճա րաբերդ՝ և զխաչէն՝ զվարանդայ՝ և զդիզակ՝ 'ի չարեքի կոչեցեալ գետոյն մինչև 'ի գետն երասխ . 'ի միում աւուր յաւարի հարեալ գե րեցին՝ և զանհաճոյսն սրով սպաննին . և զկնի չո րից և հնգից աւուրց դարձան՝ 'ի տեղեո իւրոյ :

Իսկ ձեալ 'ի սոյն ամի լէ երկուց պատժոցս մահոճո՛ւ և սրոյն . եղև ահագին և անասելի սով սաստիկ . այնքան մինչ զի մարդէք գազանա ցիս անկան զամակերութի . վն որբ մնալոյն 'ի մահուն՝ և նն անինչք և անյարկք շրջելոյն՝ 'ի գերջացն . բանզի աճն գաւառք հայոց՝ որք լէ իշխանութի կարմրագլխոյն կային . բակեալք յաւերեցան . և Թէ ուրեք յանկեան մնացեալ լինէր շինութի զետեղէին տնանկք՝ և մերկք՝

արք և կանայք . ծերք և երիտասարդք . տղայք
 և աղջկունք . և առանց օթեկանի արտասուճա
 լցութք դիմօք շրջէին՝ ի դրուսս օտարաց՝ և յերդա
 այրոց առ՝ ի խնդրել զկերպարան ձանց իւրոյ :
 Եւ յոչ բաւելն կերակրոց . ու ժեղքն՝ ի նո
 ցանէ մտանէին գաղտ՝ ի փարախս խաշանց և
 ՚ի գոմն արջառոց . և յոչ կարելն զենուլ զմե
 ծամեծան յանասնոց առ՝ ի չունելոյ զսուր ընդ
 ինքեանս . և յուժ անձանց ըմբռնէին զօրթս
 դիեցիկս և զգառինս մատաղս և զուլունս . և
 պատառէին զկողանց և հանեալ զսիրտ և զփորո
 տինց ուտէին հումս և ելեալք գաղտ գնային .
 և ոչոք կարծիս ունելով այս ՚ի նոցանէ լինիլ :
 մինչ տեսեալ ոմանց զնն յայնպիսիս գործս՝ և
 հաւաստեալ գիտացին զայս : Իսկ անցօրքն
 ՚ի նոցանէ ՚ի կոյտս աղբից անասնոց և ձիոց՝
 որոնեալ գտանէին զհատս գարւոյ և ուտէին :
 Եւ ոչ գիտելով զսրբոյ և զանսրբոյ ՚ի
 հերունհետէ և ՚ի վաղէ ժամանակէ ՚ի փո
 դոցի անկեալք ոսկերք՝ վեր առեալ ՚ի քարի
 եդեալ և քարիւ զփոշի առնէին և ՚ի բերանս
 իւրեանց արկանէին և յոգւոց հանեալ մռն
 չէին : Եւ զհնացեալ փոկ կաշեոյ . և զմա
 շեալ արեխ ՚ի բեկոր ինչ խեցւոյ ՚ի յեփոցի
 եդեալ և առեալ ուտէին : Եւ այ տեսողու
 թես եղբարք : Եւ իբրև եղև գարունն՝ ստե
 ցան աղբաօքն յերեսս դաշտաց . սևացելով մար
 մնով ուն զերամակս այժեաց . և իբրև զլիւրս
